



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am



«ԳԱՆՁԱՍԱՐ»
ՄԱՏԵՆԱՇԱՐ

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԳԱՆՈՒՍՏԵԱՆ

ՀԱՄԱԲՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՍՈՒՐԲԵՐ

ԵՐՐՈՐԷ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



ԳԱՆՉԱՍԱՐ
ԱՄՈՒՍՄԱՐՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Երեւան 1997

ԴՏՀ 23/28
ԳՄԴ 86-37
Շ 757

Նուիրում է Հայաստանում
քրիստոնեությունը պետական կրօն
հռչակելու 1700-ամեակին

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ Ա

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Շնորհք արքեպիսկոպոս Գալուստեան

Շ 757 Համաքրիստոնէական Սուրբեր. – Եր. –: Գանձասար, 1997. –
317 էջ:

Քրիստոնէական եկեղեցու եւ մասնաւորապէս Հայ եկեղեցու պատմութեան մէջ ուրոյն տեղ ունեն սուրբերի կեանքն ու գործունէութիւնը, եւ վարքագրական գրականութիւնը եկեղեցու հոգեւոր ժառանգութեան կարեւորագոյն մասերից մէկն է:

Շնորհք արքեպիսկոպոս Գալուստեանի «Համաքրիստոնէական սուրբեր» ռառամասիրութիւնը ներկայացնում է բոլոր եկեղեցիների կողմից սօսելի սուրբերի վարքերի ու վկայաբանութիւնների այն պատկերը, որն ընդհանրացած է Հայ եկեղեցու աւանդութեան մէջ:

ՀՐԱՄԱՆԱԲ

Տ. ՊԱՐԳԵԻԻ

ՍՐԲԱԶՆԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԿԱՅ

Շ $\frac{0403000000}{846(01) - 97}$ 97

ԳՄԴ 86-37

ՄՈՒՏՔ

Մենք ասկէ առաջ գրեցինք Աստուածաշնչակաճ սուրբերու մասին: Այժմ կը ձեռնարկենք ներկայացնելու անոնց անմիջական շարունակութիւնը կազմող Քրիստոնէական Եկեղեցիի սուրբերը, որոնք կը տօնախմբուին Հայց. Եկեղեցիի կողմէ: Այս Հատորով կ'անդրադառնանք ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՍՈՒՐԲԵՐՈՒ մասին: Յաջորդ Հատորը կը նուիրուի ՀԱՅԱԶԳԻ ՍՈՒՐԲԵՐՈՒՆ:

Նախքան մտնելը իւրաքանչիւր սուրբի կեանքէն ներս, անհրաժեշտ կը նկատենք տալ հետեւեալ քանի մը ընդհանուր ծանօթութիւնները:

Ա. Հակառակ այն իրողութեան, որ այժմ մեր ներկայացնելիք սուրբերը կու գան զանազան ազգերէ, մենք չուզեցինք կոչել զանոնք «Օտարազգի Սուրբեր», այլ նախընտրեցինք անուանել զանոնք «Համաքրիստոնէական Սուրբեր»: Նախ՝ անոր համար, որ անոնք մեզի համար երբեք «օտար» չեն, այլ ընտանի եւ հարազատ. Բարսեղ Հայրապետ մը, Յակոբ Մծբնացի մը կամ Սարգիս Զօրավար մը մեզի համար այնքան հարազատ եղած են, որքան մեր արիւնէն սերած սուրբերը: Երկրորդ՝ այս սուրբերուն մեծագոյն մասը արդարեւ «Համաքրիստոնէական» հանգամանք ունին, քանի որ ընդունուած են որպէս սուրբ եւ կը տօնուին հաւասարապէս՝ պատմական ու առաքելական բոլոր հին Եկեղեցիներէն: Օրինակ Իգնատիոս Անտիօքի Հայրապետը, Եփրեմ Խուրի Ասորին, Սեղբեստրոս Հռովմայ Հայրապետը եւ Կապադովկիացի Գրիգորները, Եգիպտացի Անտոններն ու Աթանասները տօնելի սուրբեր են Արեւելքի եւ Արեւմուտքի բոլոր հին Եկեղեցիներէն:

Բ. Այս սուրբերը կու գան հին աշխարհի երեք երկրամասերէն՝ Ասիայէն, Ափրիկէէն եւ Եւրոպայէն: Բոլոր հին ու պատմական Եկեղեցիներն ունին իրենց ներկայացուցիչները անոնց մէջ: Մեզի հարաւէն դրացի Ասորա-Սուրիական Եկեղեցին, Անտիօքը եւ Կիլիկիան ալ ներառեալ, մեզի տուած են 37 սուրբեր: Արեւելքէն մեզի դրացի Պարսկական Եկեղեցիէն ունինք 26 վկաներ (Պարսկական պետութիւնը երբեք քրիստոնեայ չէ եղած, բայց գոյութիւն ունեցած է Պարսիկներէ կազմուած պատմական ու առաքելական Եկեղեցի): Երուսաղէմէն

ուևինք 6 Հոգի, Կիպրոսէն՝ մէկ հատ, Եգիպտոսէն՝ 37 Հոգի, Եթովպիայէն՝ մէկ անուն սուրբերու հսկայ խումբ մը, Հռովմէն՝ 15 անձեր եւ Յունաստանէն՝ 5 Հոգի: Մեծադոյն մասը սակայն այս «համաքրիստոնէական» սուրբերուն՝ կու գայ արեւմուտքէն մեզի դրացի Փոքր Ասիոյ յունախոս զանազան շրջաններէն՝ աւելի քան 90 անուն սուրբեր կամ սուրբերու խումբեր: Ընդամէնը՝ աւելի քան երկու հարիւր անհատ կամ խմբական միջազգային վկաներ:

Գ. Ոմանք կ'առարկեն, թէ ինչո՞ւ այսքան շատ թիւով «օտարազգի» սուրբեր հիւրընկալուած են մեր տօնացոյցին մէջ՝ աւելի քան երկու երրորդը մեր Եկեղեցիի տօնելի սուրբերուն: Պատճառը պատմական է: Հայ Եկեղեցին, երբ վերակազմակերպուեցաւ եւ լեզուապէս հայացաւ Ե. դարուն, գրեթէ նոյնութեամբ որդեգրեց իր դրացի Եկեղեցիներու մէջ տօնուած սուրբերը՝ իբրեւ անբաժանելի մասնիկը Ընդհանրական Եկեղեցիին: Արդ, Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցիի «ընդհանրականութեան» գլխաւոր փաստերէն մէկն է իր ընդունած եւ յիշատակած Համաքրիստոնէական Եկեղեցիի յատուկ այս սուրբերը:

Դ. Սուրբերը առհասարակ կը տօնուէին իրենց նահատակութեան կամ մահուան օրը: Հետեւաբար տրամաբանական պիտի ըլլար, որ ամէն սուրբ անփոփոխ կերպով իր օրը ունենար՝ այսինչ ամսուան այսինչ օրը: Այդպէս է արդարեւ պարագան Յոյն եւ Լատին Եկեղեցիներու համար: Ամէն սուրբի տօնակատարութիւնը անփոփոխ կերպով կապուած է ամսաթիւի մը, հոգ չէ թէ շաբթուան որ օրը հանդիպի այդ կրնայ հանդիպիլ պահոց օր մը կամ Կիրակի մը: Այդպէս չէ սակայն մեր մէջ: Նախ իբրեւ սկզբունք ընդունած ենք, որ պահոց եւ տէրունի օրեր սրբոց տօն չ'կատարուիր: Երկրորդ՝ մեր մէջ սրբոց տօները կապուած են ոչ թէ ամսաթիւի, այլ որոշ շաբթուան մը որոշ օրուան: Օրինակ՝ Ս. Սարգիսի տօնը անխափան կը կատարուի Առաջաւորաց Պահքի յաջորդող Եաբաթ օրը, որ կրնայ հանդիպիլ Յունուար 19էն Փետր. 20ի միջեւ ինկող օրերէն ունէ մէկին: Վարդանանց տօնը կը կատարուի Մեծ Բարեկենդանի նախընթաց Հինգշաբթի օրը, ամսաթիւի նոյն փոփոխութիւններով: Զատիկին կանուխ կամ ուշ գալով՝ կարգ մը տօներ առաջ կամ ետ կը տարուին եւ իրենց տեղերը կը փոխեն տարւոյն մէջ. բայց շաբթուան մէջ իրենց գրաւած օրերը

գրեթէ չեն փոխեր, բացի այն պարագային, երբ անփոփոխ տէրունի տօն մը իրենց օրը գրաւէ: Օրինակ վերեւ յիշուած Ս. Սարգիսի եւ Վարդանանց տօները երբ գրաւուին Տեսուչնդառաջէն, որ միշտ Փետր. 14ին կը կատարուի, իրենց նախորդ կամ յաջորդող Երկուշաբթիին կը փոխադրուին: Տակաւին կան ուրիշ տօնացուցական մանր գիտելիքներ, որոնց մանրամասնութեան մտնել աւելորդ կը նկատենք:

Ե. Քանի մը խօսք ալ այս գործի պատրաստութեան ընթացքին գործածուած աղբիւրներու մասին: Թէեւ բառին բուն առումով քննական ուսումնասիրութիւն մը չէ մեր պատրաստածը, բայց սուրբերու դիմագիծերը յստակելու համար անհրաժեշտ տեսանք օգտագործել ինչ ինչ հայ եւ օտար աղբիւրներ: Նախ՝ մեր ձեռքին տակ ունեցանք հետեւեալ հայերէն աղբիւրները.

1.- ԳԻՐՔ, ՈՐ ԿՈՉԻ ԱՅՍՄԱՒՈՒՐՔ: Զանգուածեղ Վարք Սրբոց մը՝ բաղկացած 723 երկսիւնակ մեծ էջերէ: Գրքին անուան կը յաջորդէ գրաբար ծանօթագրութիւն մը, զոր թարգմանաբար յառաջ կը բերենք:

«Որ իր մէջ կը բովանդակէ սրբոց կեանքի վերաբերեալ ճառերը, ինչպէս նաեւ Քրիստոս Աստուծոյ վկաներու եւ երանելի մարտիրոսներու նահատակութեան պատմութիւնները, զորս կարգեցին մեր նախնի Հայրերը՝ կարգացուելու համար ամէն օր Հայց. եկեղեցիներու մէջ իւրաքանչիւր ամսուան պատշաճ օրը, ամբողջ տարին, ի յիշատակ սուրբերու եւ յօգուտ ջերմեռանդ լսողներու, ամէնքը՝ ի փառս Աստուծոյ: Տպագրուիլ սկսուեցաւ ի Հայրապետութեան Աբրահամ Կաթողիկոսի եւ ի պատրիարքութեան Ս. Երուսաղէմի եւ Կոստանդնուպոլսոյ Տեսուչ Գրիգոր եւ Յովհաննէս աստուածաբան վարդապետներու՝ աշակերտներու Բաղիշեցի Տէր Վարդան տաճարաշէն Վարդապետի: Ի թուին 1730, ի տպարանի Գրիգոր Դպիր Մարգուանցիի»:

2.- ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ, որու մասին ալ անուանաթերթին վրայ կայ սա ծանօթութիւնը.

«Ըստ ընտրելագոյն օրինակի Տ. Իսրայէլի Յայսմաւուրքին, ուր կը գտնուին երկնակրօն վարքը եւ ճգնութիւնը աստուածահաճոյ սուրբերուն, որոնք ընտրուած են աշխարհի սկիզբէն զանազան ազգերէն եւ լեզուներէն: Եւ վկայաբանութիւններն ու մահը ՅԱՂԹՈՂ

նահատակներուն, որոնք կը տօնուին եւ կը յիշատակուին Հայց-Նահապետներու, Մարգարէներու եւ Առաքելներու վարքերը՝ եկեղեցիին մէջ, ըստ բարեկարգ սահմանադրութեան մեր սուրբ եւ երանելի Հայրապետներուն, բաժնուած իւրաքանչիւր ամսուան օրերուն վրայ: Կամքովը եւ հաւանութեամբը Ազգային ժողովին: Նոր Սեպտեմբեր ամսուան առաջին օրէն, քանի որ Հռոմայեցի սրբազրութեամբ եւ զգուշաւոր տպագրութեամբ ի լոյս ընծայեալ՝ հրամանովը Ամենապատիւ եւ Վեհափառ Պատրիարքին՝ Տեառն Ստեփանոս սրբակրօն Արքեպիսկոպոսի: Ի Կ. Պոլիս, Օրթոգրիկ, Պօղոս Արապեան Ապուշեխցի տպարանին մէջ, 1834ին»:

Այս ալ խնամուած տպագրութեամբ Յայամաւորք մըն է, որուն «ՅԱՌԱՋԱՐԱՆԸ» գրած է Գրիգոր Դպիր Փեշտիմալեանը, ուր կարելոր եւ հետաքրքրական տեղեկութիւններ կու տայ մեր Յայամաւորքներու կազմութեան մասին: Թարգմանաբար յառաջ կը բերենք կարեւորագոյն մասերը:

«Մեր սուրբ եւ հոգելից թարգմանիչները, հինգերորդ դարուն, շատ մը ուրիշ ազգօգուտ գործերու կարգին, որոնցմով մեր ազգը ճոխացաւ հոգևոր իմաստութեամբ եւ գիտութեամբ, թարգմանեցին նաեւ կարգ մը սուրբերու վարքերը, ինչպէս կ'երեւի անոնց գրութեան վսեմ ոճէն: Ապա՝ իններորդ դարուն, ԳԱԳԻԿ Վարդապետ Ատոմայ վանքի, շատ մը սրբոց վարքեր թարգմանեց յունարէնէն, որուն կազմած գիրքը կոչուեցաւ ԱՏՈՄԱԳԻՐ: Հուսկ ապա մեր սուրբ եւ երանելի ԳԻԻԳՈՐ ՎԿԱՅԱՍԷՐ Հայրապետը՝ որդի իմաստուն մեծ իշխան Գրիգոր Մագիստրոսի, Ս. Լուսաւորչի գարմէն, տասնըմէկերորդ դարուն, շրջելով արեւելեան ու արեւմտեան վանքեր ու մենաստաններ, պրպտեց վկայաբանութիւնները եւ սրբոց վարքերը եւ ինչ որ գտաւ յունական ընտիր մատեաններուն մէջ՝ Հայերէնի թարգմանեց: Ժողովեց նաեւ շատ ճառեր սուրբերու մասին, զորս կարգի դրաւ եւ կազմեց մեծ գիրք մը, որ յետոյ կոչուեցաւ ՃԱՌԸՆՏԻՐ: Ու հրահանգեց, որ կարդացուին անոնք եկեղեցիներու եւ վանքերու մէջ, ըստ պատշաճի իւրաքանչիւր օրուան» (տնօրինութիւն՝ որ մինչեւ այսօր կը պահուի միայն Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ): «Ասկէ յետոյ Տ. ԻՍՐԱԵԷԼ՝ բանիբուն անձ մը, տասնըրեքերորդ դարու սկիզբները, ՃԱՌԸՆՏԻՐԻՆ մէջ եղած սրբոց վարքերը, վկայաբանութիւնները եւ ճառերը դասաւորեց ու բաժնեց իւրաքանչիւր ամսուան օրերուն վրայ՝ անոնց վրայ աւելցնելով Ս.

եւ ապա կը հաստատէ Փեշտիմալեան, թէ իլաթեցիին կազմածը մէկ երկու անգամ տպագրուեցաւ Պոլսոյ մէջ «յաւելմամբ վրիպակաց տպագրողաց» եւ գործածութեան մտաւ մեր եկեղեցիներու մէջ՝ փոխան Տէր Իսրայէլի եւ կամ Կիրակոս Վարդապետի ընտիր Յայամաւորքներուն: Սակայն, կը յարէ Փեշտիմալեան, «անոր մէջ մուտք գործած բազմաթիւ այլալուծներու պատճառով խոտան կը համարուի ոչ միայն յաչս իմաստուն քննողներու, այլ մինչեւ իսկ մեր հասարակութենէն շատերուն»:

Ուստի փափաք յայտնուած է շատերուն կողմէ ունենալ նոր տպագրութիւն մը Տէր Իսրայէլի պատրաստած Յայամաւորքին՝ քաջ գիտնալով որ, կ'ըսէ Փեշտիմալեան, «յստակ է ջուր յակն քան ի վտակ»: Ի վերջոյ Կիլիկիոյ Տ. Կիրակոս Կաթողիկոսը, Կ. Պոլսէն կատարուած խնդրանքին վրայ, կը ղրկէ ընտիր օրինակ մը Տ. Իսրայէլի Յայամաւորքէն՝ գրուած 1309ին: Այս օրինակէն կը տպուի Փեշտիմալեանի պատրաստած Յայամաւորքը 1834ին: Կ'երեւի գիրքը տանելի դարձնելու համար բաժնած են զայն երկու հատորի: Առաջինը կը պարունակէ Յունուարէն Յունիս ամիսներուն մէջ տօնելի սուրբերու վարքերը, իսկ երկրորդը՝ Յուլիսէն Դեկտեմբեր:

Վերջաւորութեան ունի 55 էջնոց յաւելեալ ՃԱՌԵՐ: Երեք մասերը միասին 666 էջնոց մեծկակ գիրք մըն է:

3.- Թորգոմ Պատրիարք Գուշակեանի «ՍՈՒՐԲԻ ԵՒ ՏՕՆՔ», Երուսաղէմ, 1939:

4.- «ԼԻԱԿԱՏԱՐ ՎԱՐՔ ԵՒ ՎԿԱՅԱՐԱՆՈՒԹԻՒՆ ՍՐՐՈՑ» մեծահատոր եւ պատկառելի գործը՝ տպուած Վենետիկ 1810ին. քչիկ մը ուշ անցաւ մեր ձեռքը:

5.- ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՆԱԽՆԵԱՑ, Վենետիկ, 1889:

Յոյն Եկեղեցւոյ տօնելի սուրբերը ստուգելու համար ձեռքի տակ ունեցանք.

1.- ԱԳԻԼՈԳԻՈՆ ՏԻՍ ՕՐԹՈԴՈՔՍՈՒ ԵԿԿԼԵՍԻԱՄ* Վարք Սրբոց Օրթոդոքս Եկեղեցւոյ՝ հաւանաբար տպուած 1935ին, ուր այբուբենական կարգով եւ անհրաժեշտ ծանօթութիւններով տրուած են Յոյն Եկեղեցիի տօնելի սուրբերու անունները:

2.- ՄԻԿՐՕՆ ԵՒ ԲՈՂՈԳԻՈՆ* Փոքր Աղօթագիրք, որուն վերջաւորութեան եւս դրուած է ցանկը Օրթոտոքս Եկեղեցւոյ տօնելի սուրբերուն՝ իրենց տօնակատարութեանց ամսաթիւերով:

3.- ՏԻՎԱՅՆ ԲՐԷԸՐՁ ԷՆՏ ՍԸՐՎԻՍԻՁ ՕՎ ՏԸ ԳԷԹԸԼԻԳ ՕՐԹԸՏՈՔՍ ՉԸՐՁ ՕՎ ՔՐԱՅՍԹ՝ Աստուածային աղօթք եւ պաշտամունք՝ Բրիստոսի կաթողիկոս-Օրթոտոքս Եկեղեցւոյ, Նիւ Եորք, 1961: Սոյն ժամագրքին մէջ ալ կայ Սրբոց Տօնակատարութեան բաժին մը, ուր իւրաքանչիւր ամսուան տօնելի սուրբերը մի առ մի նշանակուած են իրենց օրին:

Իսկ Լատին կամ Հռովմէական Եկեղեցիի տօնելի սուրբերուն համար օգտագործեցինք.

1- ՄԱՐԴԻՐՈԼՕԿԻՈՒՄ ՌՕՄԱՆՈՒՄ՝ Վկայաբանութիւն Հռովմէական Եկեղեցւոյ, 1914, որուն վերջաւորութեան կայ համապարփակ այբուբենական ցանկը տօնելի բոլոր սուրբերուն հինէն ու նորէն՝ իրենց համապատասխան տօնակատարութեան ամսաթիւերով:

* Տառադարձութիւնը կատարուած է դասական Ռայտեմի օրէնքով:

2.- ԼԱ ՎԻ ՏԷ ՍԷՆ՝ Վարք Սրբոց, Փարիզ, 1890՝ չորս հատորներէ բաղկացեալ եւ պահպանողական ոգւով պատրաստուած ընտիր գործ մը:

Իսկ ընդհանուր օգտագործումի համար ձեռքի տակ ունեցանք.

1.- ԿԱԹՈՂԻԿ ՀԱՄԱՅՆԱԳԻՏԱՐԱՆը, անգլերէն, 16 հատոր, 1907.

2.- ՕՔՍՅՈՐՏԵԱՆ ԲԱՌԱՐԱՆ Բրիստոնէական Եկեղեցիի, անգլերէն, 1957.

3.- ԲԱՌԱՐԱՆ ՍՐՐՈՑ, անգլերէն, պատրաստուած Տոնալտ Աստուատորի կողմէ, 1965:

Տրուած ըլլալով, որ Հայ Եկեղեցին պատմական սերտ կապեր ունեցած է նաեւ մեզի մշտական դրացի Ասորի Եկեղեցիին հետ՝ ուզեցինք գաղափար մը կազմել նաեւ անոնց տօնելի սուրբերու մասին: Սակայն հակառակ մեր բոլոր ջանքերուն՝ անոնց տօնացոյցի վերաբերեալ գիրք մը կարելի չեղաւ ձեռք ձգել: Իսթանպուլի Ասորի քահանաները եւս չի կրցան մեզի օգտակար ըլլալ, բացի իրենց 1975 տարուան առձեռն թրքերէն օրացոյցը մեզի տրամադրելէ, որուն մէջ սակայն քիչ է յիշատակուած սուրբերու թիւը՝ լման քառասուն անուն ամբողջ տարուան մէջ: Որով չի կրցանք յիշատակել իւրաքանչիւր սուրբի՝ նաեւ Ասորի Եկեղեցիի մէջ տօնակատարութեան օրը, հակառակ մեր փափաքին:

Զ. Պէտք է հաստատենք, որ այս գործի պատրաստութեան ընթացքին պրպտումի կարեւոր աշխատանքներ կատարուած ըլլալով հանդերձ՝ չենք նկատեր զայն քննական ուսումնասիրութիւն եւ ոչ ալ՝ վերլուծական երկասիրութիւն. կատարուածը ուրիշ բան չէ, եթէ ոչ համադրեալ նոր կառուցում մը՝ շինանիւթերը եւ բաղկացուցիչ տարրերը ընտրովի վերցնելով վերոյիշեալ աղբիւրներէն: Գործիս մասնայատկութիւնը, բացի բնականաբար նիւթին մօտեցումի մեզի յատուկ կերպէն, որ կը հետապնդէ հիմնականը եւ յատկանշականը իւրաքանչիւր սուրբի կեանքին մէջ, դասաւորման ու ներկայացման նոր ձեւն է: Համաքրիստոնէական այս սուրբերը մենք դասաւորեցինք համաձայն այն ասպարէզին կամ ընկերային դասին, որուն մէջ տուեալ դէմքը արժեցուցած է ինքզինքը իբրեւ սուրբ կամ նահատակ,

այսինքն ներկայացուցած ենք զանոնք Հետեւեալ մեծ խումբերով.
ա) Հոգեւորականներ. բ) Ճգնաւորներ. գ) Պետական դէմքեր եւ
Զօրականներ. դ) Կոյսեր. ե) Մնացեալ Մարտիրոսներ՝ կեանքի այլ
ասպարէզներէ:

Ներկայացուած են աւելի քան 200 սրբազան դէմքեր եւ հաւատքի
նահատակներ. հետեւաբար պարտաւորուած էինք հնարաւորութեան
սահմաններուն մէջ համառօտ բռնել իւրաքանչիւր սուրբի մասին
ըստեւելիքը. իսկ ոմանց վարքին առնչուած հրաշապատումը Յայսմա-
ւորքներուն մէջ ձգելէ յետոյ, մէջտեղ հազիւ թէ նահատակուած
անուն մը կը մնայ՝ յաճախ դժուար ըլլալով ճշդիւ մինչեւ իսկ
նահատակութեան վայրը եւ թուականը, մինչ իսկ՝ դարաշրջանը:

Այս բոլորով հանդերձ՝ կ'ուզենք հաստատել նաեւ, որ յետագայ
էջերը կը պարունակեն իրենց մէջ անունները կարգ մը մեծ հոգի-
ներու, տաղանդաւոր միտքերու, ինչպէս նաեւ հասարակ հաւատա-
ցեալներու՝ կեանքի բոլոր ասպարէզներէն ու ընկերային բոլոր
խաւերէն, որոնք եղան իրական հետեւորդներ Քրիստոսի, հերոսները
մեր սուրբ հաւատքին եւ տարածիչները մեր կրօնքին ի սփիւռս
աշխարհի՝ իրենց խօսքով, կեանքով եւ արիւնով. ատով իսկ դարձան
պարծանքները Մի, Ընդհանրական, Առաքելական ու Սուրբ Եկեղե-
ցիին: Անոնցմէ ոմանք դրած են իրենց անջնջելի կնիքը որքան Քրիս-
տոնէական Եկեղեցիի, նոյնքան նաեւ մարդկային ազգի պատմութեան
վրայ՝ նոր ուղղութիւն տալով պատմութեան գնացքին, նոր հեռա-
նկարներ բանալով անոնց մտքի եւ հոգիի աչքերուն դիմաց ու նոր եւ
վսեմ բարոյական գաղափարներ ներշնչելով անոնց: Արժան եւ իրաւ
է, որ խոնարհինք անոնց անմեռ յիշատակին առջեւ խոր յարգանքով,
մեծ երախտիքով եւ անխառն սիրով:

Շնորհք Արքեպսկ. Գալուստեան

21.8.1977

Ի տօնի Սրբոցն Կոստանդիանոսի Թագաւորին
եւ մօրն նորա Հեղինեայ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ

Պէտք է հաստատենք ի յառաջագունէ, թէ կարգ մը քրիստոնեա-
ներու համար տարեկան յիշատակութիւն կատարելու սովորութիւնը
սկսուած է անոնց նախատակութեամբ մահացած ըլլալուն պատճա-
ռով: Եւ տրուած ըլլալով, որ համաքրիստոնէական սուրբերու մեծա-
գոյն մասը իրենց կեանքը կնքած են նահատակուելով հալածանք-
ներու ընթացքին՝ ուստի պատշաճ կը նկատենք նախ անդրադառնալ
այս ՀԱԼ ԱԾԱՆՔՆԵՐՈՒ մասին, որոնք կարեւոր գլուխներէն մէկը կը
կազմեն Քրիստոնէական Եկեղեցիի պատմութեան:

Հալածանքը գրեթէ բնական երեւոյթ մըն է բոլոր կրօնքներու
պարագային, ինչպէս նաեւ գրեթէ ընկերային բոլոր նոր շարժում-
ներու համար: Հին կրօնքը կամ հին ընկերութիւնը, որքան ատեն որ
դեռ կացութեան տէրն է, թոյլ չի տար, որ նորը դիւրին դիւրին իր
տեղը գրաւէ ընկերութեան մէջ: Առաւել կամ նուազ սաստկութեամբ
հալածանք կրած են, օրինակ, Պուտոյականութիւնը, Մովսիսակա-
նութիւնը եւ Մահմետականութիւնը, որոնք շատոնց գրեթէ այլեւս
դադրած են հալածուելէ զուտ կրօնական պատճառներով: Բայց
բացառիկ երեւոյթ եղած է հալածանքը Քրիստոնէական Եկեղեցիին
համար: Սկսուած է հալածանքը իր Հիմնադիրով, տեւած է առաւել
կամ նուազ լայն տարածանքի վրայ գրեթէ բոլոր դարերու ընթացքին
եւ կը շարունակուի նաեւ ներկայիս՝ «լուսաւորեալ» կոչուած
քսաներորդ դարուն մէջ, այս կամ այն ձեւի տակ: Սկսինք ուրեմն իր
Հիմնադրին կրած հալածանքներով:

Ա.

ՀՐԷԱԿԱՆ ԻԾԽԱՆՈՒԹԵԱՆՑ
Ի ԳՈՐԾ ԴՐԱԾ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ

Երբ Յիսուս ձեռնարկեց իր Հանրային գործունէութեան եւ իր Համբար կարճ ժամանակի մէջ տարածուեցաւ ամէնուրեք, իբրեւ հզօր գործիչ եւ քաջ քարոզիչ՝ օրուան հրեայ կրօնական իշխանութեան նախանձը շարժեց. ուստի իշխանաւորներ մասնաւոր կերպով հետապնդեցին զԱյն՝ Անոր խօսքերուն կամ գործերուն մէջ սխալներ կամ իրենց կրօնքին հակասող կէտեր բռնելու դիտաւորութեամբ: Յիսուսի քարոզութեանց մէջ իսկապէս դատապարտելի ոչինչ գտնելով՝ դիմեցին բժախնդրութեան. սկսան զրպարտել, չարախօսել ու դատապարտել զԱյն՝ ըսելով, որ Հրէական օրէնքի դէմ կը խօսի եւ կը գործէ: Արդարեւ Յիսուս իր հակառակորդներու ներկայութեան, Շաբաթ օր մը, ձեռքը գօսացած մարդ մը բժշկած էր՝ Հաստատելու Համար, որ Շաբաթ օրով բարիք գործելը արգիւրած չէր: Հրեաներ կը հաւատային, որ Շաբաթ օրը կատարուած ամէն գործ՝ բարի կամ չար, մեղք էր: Ասիկա պատճառ եւ սկզբնաւորութիւնը եղաւ, որ կրօնական ու աշխարհիկ իշխանութիւնները՝ «Փարիսեցիք Հերովդիանոսօքն Հանդերձ», միանան ընդդէմ Յիսուսի եւ «խորհրդակցութիւն կատարեն, թէ ինչպէս մէջտեղէն վերցնեն զայն» (Մրկ. Գ. 6):

Այս միջադէպը եղաւ այն խորհրդանշական կադապարը, որուն մէջ թափուեցան գրեթէ բոլոր հալածանքները բոլոր դարու ընթացքին նոյն շարժառիթով եւ նոյն նպատակով: Քրիստոնէական հալածանքներու շարժառիթը խորքին մէջ առհասարակ նախանձը եղած է, նպատակը՝ բնաջնջում: Մարդիկ գիտակցաբար կամ անգիտակցաբար վերահասու եղան, թէ նոր կրօնքը իրենց մինչեւ այդ ժամանակները ունեցած կրօնքներէն ոչ միայն հիմնովին տարբեր էր, այլ նաեւ բացայայտօրէն բարձր էր: Ու այս բարձրութեան Հասած էին պարզ մարդեր, Հասարակ մահկանացուներ՝ Պօղոս Առաքեալի բառերով՝ ըստ աշխարհի «յիմար, տկար, անտոհմ, ոչինչ» կարծուած մարդեր, որոնք արդարեւ մարդկային չափանիշներով ոչ մտքի բարձր զարգացում ունէին, ոչ ընկերային բարձր դիրք, ոչ ալ հաշուի առնուելիք

հարստութիւն կամ նիւթական ունէ ոյժ: Հակառակ այս բոլորին սակայն՝ շրջապատի մարդիկը կը զգային ու կը տեսնէին -գիտակցաբար կամ անգիտակցաբար- թէ այս կրօնքի պատկանողները ոչ ոքէ կը վախնային եւ ոչ ոքէ կախեալ կը զգային իրենքզիրենք, ոչ իսկ պետութիւններէ եւ իշխանութիւններէ: Այլ իրենքզիրենք անխղիժ կերպով կապուած կը նկատէին գերբնական ոյժի մը, որուն Համար պատրաստ էին զոհելու ամէն բան՝ ներառեալ ամէնէն անսակարկելին՝ իրենց կեանքը: Ուստի օրուան իշխանութիւնները եւ ընկերութիւնը որոշեցին բնաջնջել այս «օտար» տարրը իրենց մէջէն: Սակայն ինչ որ պատահեցաւ Քրիստոսի՝ նոյնը կրկնուեցաւ Եկեղեցիին վրայ. երկուքն ալ թէեւ հալածուեցան, թէեւ ձերբակալուեցան, չարչարուեցան, խաչուեցան ու մեռան, բայց չբնաջնջուեցան: Ընդհակառակը՝ Հիմնադիրը յարութիւն առաւ, իսկ Եկեղեցին աւելի զօրացաւ եւ աւելի աճեցաւ:

Այս իրողութիւնը կրկնուած կը տեսնենք ամէնէն առաջ Երուսաղէմի նորածին Եկեղեցիին վրայ: Առաքեալներ ծնծուեցան ու բանտարկուեցան (Գործ. Ե. 8): Սպաննուեցաւ առաջին առթիւ նոր կրօնքի ամէնէն խիզախ քարոզիչներէն ու գործիչներէն մէկը՝ Ստեփանոս (Գործ. Է. 57): Անոր սպաննութեան յաջորդեց «մեծ հալածանք», որուն առաջին զոհը եղաւ Յակոբոս Զբեղեան Առաքեալը (Գործ. ԺԲ. 1-3): Զերբակալուեցաւ ու բանտարկուեցաւ նոր շարժումին խօսնակը եւ պարագլուխը՝ Պետրոս Առաքեալը, եւ պիտի սպաննուէր նաեւ ան, եթէ Աստուծոյ նախախնամութիւնը մասնաւոր միջամտութեամբ չազատէր զայն բանտէն (Գործ. ԺԲ. 4-19): Ի վերջոյ Առաքեալները մէկիկ մէկիկ զոհ գացին զանազան հալածանքներու, զանազան երկիրներու մէջ: Բայց Քրիստոնէական Եկեղեցին շարունակեց աճել թէ՛ Երուսաղէմի մէջ եւ թէ՛ ի Հրէաստան ու Սամարիա:

Նոր կրօնքը Յունա-Հռոմէական աշխարհին տանող ուսմիտան Պօղոս Առաքեալ, ենթակայ եղաւ մշտական հալածանքներու թէ՛ Հրեաներէն, թէ՛ Հեթանոսներէն եւ թէ՛ «սուտ եղբայրներէն», այսինքն Քրիստոնէութեան մասին իրմէ տարբեր մտածող Հաւատակիցներու կողմէ (Բ. Տիմ. Գ. 11): Հակառակ այս բոլորին՝ Աւետարանը տարածեց ու քարոզեց եւ Եկեղեցիներ Հաստատեց Փոքր Ասիոյ եւ Հարաւային Եւրոպայի ամբողջ տարածքին վրայ:

Երբ դուրս կու գանք Նոր Կտակարանի էջերէն, Հայածանքը նոյն կաղապարով, նոյն սաստկութեամբ եւ նոյն մոլեռանդութեամբ կը շարունակուի: Ու որքան կը մեծնայ Եկեղեցին, նոյն Համեմատութեամբ կը մեծնան Հայածանքները եւ կը ստանան պետական ու պաշտօնական հանդամանք:

Բ.

ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ

Քրիստոնէութիւնը ծնած էր Հռովմէական Կայսրութեան սահմաններուն մէջ եւ կը տարածուէր արագ թափով նոյն կայսրութեան մաս կազմող երկիրներու մէջ՝ Թափանցելով նոյնինքն պետութեան մայրաքաղաքը: Սկզբնական շրջանին գրեթէ ոչինչով կը տարբերէր Քրիստոնէութիւնը Հրէութենէն յաջա Հռովմէական պետութեան, քանի որ անոր քարոզիչները եւ առաջին հետեւողները մեծագոյն մասով Հրեաներ էին, եւ երկրորդ՝ երկուքն ալ՝ Հրէութիւնը եւ Քրիստոնէութիւնը, ձեւապէս նոյն հասարակաց ըմբռնումը ունէին կրօնքի եւ Աստուծոյ մասին, այսինքն կուտք չէին պաշտեր ու կրօնքին մէջ շեշտը կը դնէին աղօթքի եւ բարոյական սկզբունքներուն վրայ: Հետեւաբար Քրիստոնէական Եկեղեցիի սկզբնական շրջանին՝ այն ակամայ Հանդուրժողութեան ոգին, որ ուղղակի կամ անուղղակի կերպով ցոյց կը տրուէր Հրէութեան նկատմամբ Հռովմէական Կայսրութեան կողմէ, տարածուեցաւ նաեւ քրիստոնեաներու վրայ:

Սակայն Հրեաներ բացայայտօրէն մերժեցին իրենցմէ նկատել քրիստոնեանները եւ իրենց սկսած Հայածանքը տարածեցին նաեւ Հրէաստանի սահմաններէն դուրս եւ ըստ այնմ սկսան տեղեակ պահել պետական շրջանակները այս մասին՝ ակնյցնելով իրենց տեղեկատուութեանց վրայ այն բոլոր սուտ ու սխալ նախապաշարումները, զորս ունէին քրիստոնեաններու նկատմամբ: Այնպէս որ առաջին դարու կէսերուն գրեթէ ամէն ոք այլեւ գիտէր, թէ Քրիստոնէութիւնը նոր ու տարբեր կրօնք մըն էր՝ ակելի «մոլեռանդ», այսինքն ակելի ամուր իր տեսակէտներուն վրայ, քան Հրէութիւնը եւ այդ իսկ պատճառով ակելի ատելի հեթանոսներու Համար, քան Հրէութիւնը:

Հռովմէական Կայսրութիւնը առհասարակ հանդուրժող եւ թոյլատու եղած է բոլոր կրօնքներու հանդէպ: Աշխարհածանօթ Հոյակապ տաճար մը կար Հռովմի մէջ՝ «Բան-Թէոն» կոչուած, զոր կրնանք թարգմանել «Համաստուածարան», ուր կայսրութեան գրեթէ բոլոր երկիրներու գլխաւոր աստուածները տեղ ունէին: Սակայն կարուտը միջադէպ մը պատճառ հանդիսացաւ եւ սկզբնաւորութիւնը եղաւ, որ կայսրութիւնը փոխէր իր այս հանդուրժողութիւնը առնուազն քրիստոնէից հանդէպ եւ շղթայագերծէր երկարատեւ Հայածանքի շրջան մը, որ պիտի վերջանար Քրիստոնէութեան յաղթանակով: Պատմութիւնը կը թուէ անոնցմէ տասը հատ. մենք պիտի անդրադառնանք սաստկագոյններուն:

Ա. ՆԵՐՈՆԻ (64-68)* ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ.- Երբ Ներոն Հռովմի կայսր եղաւ, շինարարական կամ յիմարական մոլուցքէ մը տարուած՝ իր առաջին գործերէն մէկն ըրաւ կրակի տալ Հռովմի աղքատ եւ խճողուած թաղերը: Ու ասիկա պատճառ դարձաւ, որ ինք թիրախ դառնար ժողովրդային ատելութեան: Ներոն իր վրայէն նետելու համար հանրային այս հակակրանքը՝ Հռովմի այրումին յանցանքը քրիստոնեաներուն վրայ բարդեց. ու խօսքէն գործի անցնելով՝ սաստիկ Հայածանքի ենթարկեց զանոնք: Միւս կողմէն՝ Հռովմի անպատասպար մնացած ժողովուրդը սիրաշահելու համար ոչ միայն պարէն կը բաշխէր անոնց, այլ նաեւ զանոնք զբօսցնելու նպատակով կրկէսային խաղեր սարքել կու տար, որոնց ընթացքին վայրի գազաններու առջեւ կը նետուէին հարիւրաւոր քրիստոնեաներ: Նոյն ատեն խաչել կը հրամայէր շարան շարան հաւատացեալներ, զորս ողջ ողջ այրել կու տար՝ «իշերային այս բարբարոս խաղերը անոնցմով լուսաւորելու համար:

Ներոնեան այս Հայածանքները շարունակուեցան անոր չորս տարուան իշխանութեան ամբողջ տեւողութեան, որոնց զոհ գացին նաեւ Պետրոս ու Պողոս գլխաւոր Առաքեալները 67 թուականին: Սակայն ժողովրդային գայրոյթը այնքան զօրացաւ այս բռնակալ եւ հտպիտ կայսեր դէմ՝ որ ինքզինքը իբրև «արթիսթ» ալ կ'ուզէր ծախել՝ որ ի

* Կայսեր անուցին յաջորդող թուանշանները անոր իշխանութեան շրջանը միայն կը ցուցնեն եւ ո'չ անպատճառ հալածանքի տեւողութիւնը, ոչ ալ՝ կայսեր կեանքի տեւողութիւնը:

վերջոյ բանակը ուրիշ մէկը կայսր Հռչակեց եւ Ներոն իր կեանքին վերջ տուաւ անձնասպանութեամբ:

Ներոնի մահով Հալածանքը թէեւ մեղմացաւ, բայց չվերջացաւ, այլ ընդհատներով եւ առաւել կամ նուազ սաստկութեամբ շարունակուեցաւ լման երկու հարիւր յիսուն տարիներ:

Բ. ԴՈՄԵՏԻԱՆՈՍԻ (81-96) ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ.- Սա եղաւ առաջին կայսրը, որ ինքզինքը աստուածացուց իր կենդանութեան՝ ինքն իրեն տալով «տէր եւ աստուած» տիտղոսը: Ու հրամայեց, որ կայսրութեան բոլոր սահմաններուն մէջ պաշտամունք մատուցուի իր արձանին առջեւ: Կայսերական պաշտամունքին չմասնակցիլը կը նշանակէր «անաստուածութիւն» եւ ըմբոստութիւն պետութեան դէմ: Բնականաբար քրիստոնեաներ եղան ամէնէն առաջ եւ ամէնէն աւելի «ըմբոստացողները» կայսերական այս հրահանգին դէմ, ու հարիւրաւորներ ենթարկուեցան չարչարանքի, բանտի, աքսորի ու մահուան: Նահատակուողներուն մէջ են նաեւ կայսեր երկու ազնուական զարմիկները: Յայտնութեան գիրքը, որ այս շրջանին գրուեցաւ, ունի բազմաթիւ այլաբանական ակնարկութիւններ այս Հալածանքներու մասին: «Մեծ Բաբելոնը -այսինքն Հռովմը- արբեցաւ սուրբերու եւ Յիսուսի վկաներու արիւնէն» (Յայտ. Ժէ. 5-6. բղղ. նաեւ Բ. 10, 13, Զ. 11, ԺԳ. 15 եւլն.): Բոլոր անոնք, որ կայսեր «պատկերին» երկրպագութիւն չէին ընել, կը սպաննուէին անխնայ: Այս արիւնարբու կայսեր ալ կեանքին վերջ տրուեցաւ պալատական դաւադրութեամբ մը, որուն մէջ բաժին ունեցած է նաեւ իր կինը:

Գ. ՏՐԱՅԱՆՈՍԻ (98-117) ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ.- Այս Հալածանքներու մասին յատկապէս կը խօսուի այն թղթակցութեանց մէջ, որ կատարուած են կայսեր եւ Պիլմիոս Կրտսերի միջեւ, որ կուսակալն էր Փոքր Ասիոյ ամբողջ Սեւ Մովեան նահանգներուն, այժմու Իզմիտէն մինչեւ Տրապիզոն: Այս շրջաններուն շատ բազմացել էին քրիստոնեաները: Կուսակալը կայսեր հրահանգը կ'ողջէ ունենալ, թէ ինչ պիտի ըլլար իր դիրքը ասոնց նկատմամբ: Տրայանոս իր պատասխան հրահանգին մէջ կը հաստատէ, որ քրիստոնեաներ մահուամբ պատժելի մարդիկ են, քանի որ չեն մասնակցիր կայսեր պաշտամունքին: Ուստի անոնք, որ յայտնի համարձակ քրիստոնեայ են եւ իր դատատանին կը մատնուին, թող յորդորուին կայսրութեան աստուածներուն

յարգանք ընծայել. եթէ մերժեն՝ մահուան դատապարտել զանոնք: Միաժամանակ կայսրը կը յորդորէ, որ ինք քրիստոնեաները փնտրելու հետամուտ չըլլայ, ուրիշ խօսքով՝ յատուկ Հալածանք ու հետապնդում չկատարէ: Տրայանոսի այս տնօրէնութիւնը օրէնքի ոյժ ունեցաւ կայսրութեան «խաղաղ» շրջաններուն, երբ մասնաւոր Հալածանք չկար քրիստոնեաներու հանդէպ: Տրայանոսի օրով տեղի ունեցած Հալածանքներու ընթացքին նահատակուեցան նաեւ Շմաւոն՝ Երուսաղէմի եպիսկոպոսը՝ «Տեառնեղբայրներու» սերունդէն վերջինը, եւ Իգնատիոս Անտիոքի մեծ Հայրապետը:

Դ. ՄԱՐԿՈՍ ԱԻՐԵԼԻԱՆՈՍԻ (161-180) ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ.- Կայսերներուն մէջ ամէնէն կատարեալ եւ ամէնէն մտաւորական նկատուած Ստոյիկեան Փիլիսոփայ այս կայսեր օրով ալ Հալածանք Հանուած է ընդդէմ քրիստոնէից, որոնց ուսուցման եւ բարոյականին ամէնէն մօտը եղած է ան իր բարոյական եւ իմաստասիրական տեսութիւններով: Ինք ալ հետեւած է Տրայանոսի տնօրէնութեան, այսինքն մասնաւոր կերպով չփնտել քրիստոնեաները, բայց երբ այս կամ այն պատճառով մէջտեղ ելլէ անոնց ինքնութիւնը եւ չհրաժարին իրենց կրօնքէն, մահուան մատնել զանոնք: Իր օրով բաւական խիստ Հալածանք եղած է առնուազն հարաւային Ֆրանսայի՝ Լիոնի շրջանին մէջ, ուր քրիստոնէութիւնը զգալիօրէն բազմացած էր: Քրիստոնեայ արիւնը Հոսած է նաեւ Փոքր Ասիոյ եւ Սուրիոյ մէջ: Կ'ենթադրուի սակայն, որ կայսրութեան կեդրոնէն հեռու այս Հալածանքները աւելի արդիւնք են տեղական կուսակալներու նախաձեռնութեան, քան կայսերական յատուկ հրահանգի:

Այս շրջանին մէջտեղ կ'իլլեն նաեւ գրական ու մտաւորական Ռալաժամընը, այսինքն Քրիստոնէական կրօնը հեգնելու եւ հերքելու գրաւոր փորձեր, ինչ որ նշան մըն էր, թէ քրիստոնէութիւնը արդարեւ սկսած էր լուրջ վտանգ մը դառնալ նաեւ հեթանոս կրօնքի եւ իմաստասիրութեան: Այս իմացական յարձակումներուն մէջ ամէնէն նշանաւորն է Կելսոս կոչուած իմաստասէրի գիրքը, որ արդարեւ կարելի է նկատել ամէնէն լուրջ յարձակումներէն մէկը ընդդէմ քրիստոնէից իր ժամանակին եւ գրեթէ բոլոր ժամանակներուն: Կելսոսի գլխաւոր մեղադրանքն այն էր, որ քրիստոնեաներ իրենքզիրենք «կ'անջատեն ու կը մեկուսացնեն» հեթանոս ընկերութենէն, որպէս թէ

աւելի բարձր ճշմարտութեան մը տիրացած ըլլալին եւ որպէս թէ բարոյապէս աւելի բարձր եղած ըլլալին քան Հեթանոս ընկերութիւնը: Մինչդեռ, կը փորձէ Հաստատել Կելսոս, յոյն իմաստասէրներու բարոյական սկզբունքները ոչինչով վար կը մնան քրիստոնէականէն եւ շատ անգամ կը գերազանցեն զայն: Հոգեւոր կեանքի եւ անգե- նական աշխարհի մասին անոնց տեսութիւնները գրեթէ նոյն են քրիստոնէականին հետ եւ նոյնիսկ կը գերազանցեն զայն: Խեղճ Կել- սոսը սակայն չէր անդրադառնար, թէ ինչո՞ւ Հեթանոս ընկերութիւնը չէր կիրարկեր այդ բարձրագոյն իմաստասիրական եւ բարոյական սկզբունքները, երբ իր ժամանակի քրիստոնեաները կը կիրարկէին իրենցինքն: Կամ քանի՞ Հեթանոս յանձն կ'առնէր աշխարհէ աշխարհ շրջիլ քարոզելու համար Սոկրատի, Պլատոնի եւ Արիստոտէլի «բարձ- րագոյն» բարոյական ու ընկերային տեսութիւնները: Ո՞ւր էր գաղտ- նիքը եւ ոյժը քրիստոնէութեան, որ համեմատաբար կարճ ժամանակի մը մէջ գրեթէ ամբողջ աշխարհ տարածուած էր՝ սպառնալիք մը նկա- տուելու աստիճան Հռովմէական Կայսրութեան եւ յունական իմաստասիրութեան: 250ական թուականներուն, քրիստոնեայ իմաստասէր մը՝ նոյնքան եւ աւելի մեծ մտաւորական մը եւ աստուածաբան մը՝ Որոզիճէս, Հանգամանորէն Հերքեց Կելսոսի գործը, որ թէեւ կորսուած է ներկայիս, բայց իր գաղափարները մեծագոյն մասով մեզի փոխանցուած են Որոզիճէսի մէջբերումներով:

Ե. ՍԵԻՆՐՈՍ ԿԱՅՍԵՐ (193-211) ՀԱԼԱՄԱՆՔՆԵՐԸ.- Իր մասնա- տը տնօրէնութիւնը այն եղաւ, որ արգիլեց «քրիստոնեայ ըլլալը»: Ուրիշ խօսքով՝ գոյութիւն ունեցող քրիստոնեաներու համար ի զօրու կը մնար Տրայանոս Կայսեր տնօրէնութիւնը՝ չփնտռել, չհետապնդել քրիստոնեաները, բայց երբ մէջտեղ ելլեն՝ պատժել զանոնք: Իսկ նորադարձները պիտի փնտռուէին եւ ուրացումի պիտի հրաւիրուէին: Եթէ չհրաժարէին՝ պիտի սպանուէին:

Զ. ԴԵԿՈՍԻ (249-251) ՀԱԼԱՄԱՆՔՆԵՐԸ.- Հակառակ իր կարճա- տեւ իշխանութեան՝ ամենախիստ Հայածանքներէն մէկը այս կայսեր օրով տեղի ունեցաւ: Հրահանգ Հանեց, որ կայսրութեան բոլոր քաղաքացիները իրենց հաւատարմութեան փաստը տալին՝ պետական աստուածներուն զոհ մատուցանելով: Զոհ չմատուցանողը պիտի սպանուէր: Սա որքան նենգ, նոյնքան ալ օրինական կերպ մըն էր

քրիստոնեաները մէջտեղ Հանելու: Տառապէս Հազարներով քրիստո- նեաները նահատակուեցան այս շրջանին: Այս Հալածանքը կանխող քառասուն տարիները համեմատաբար «խաղաղ» շրջաններ եղած էին քրիստոնեաներու համար. Հալածանքի պակասը կարծես տկարացու- ցած էր ոմանց հաւատքի ամրութիւնը: Այս իսկ պատճառով, դժբախ- տաբար, այս շրջանին մեծ թիւով ուրացողներ ալ եղան: Հարուածը ծանր իջաւ յատկապէս Հոգեւորական դասուն վրայ, որոնք երբեմն առանց Հարցուփորձի տեղնուտեղը մահուան կը դատապարտուէին: Ուրացողներուն յատուկ տոմսակ կը տրուէր, որ երկրորդ անգամ չհետապնդուէին: Զուրացողները կ'ամ կը նահատակուէին, եւ կամ անդարձ աքսորի կը դատապարտուէին ամայի եւ անբաղձալի վայրեր, եւ կամ պետական Հանքերու մէջ ցմահ տաժանագին աշխատանքի կը մատնուէին: Քրիստոնէից գոյքերը յարքունիս կը գրաւուէին: Իբրեւ կեկեղեցի գործածուող շէնքերը կը քանդուէին, բոլոր պաշտամունք- ները եւ աղօթատեղիները խստիւ արգիլուած էին:

Նահատակութեամբ կորսուողներու չափ մեծ եղաւ Եկեղեցիին կորուստը նաեւ ուրացողներու բազմութեամբ: Բարեբախտաբար այս ահաւոր Հալածանքը շատ երկար չտեւեց: Ի վերջոյ Դեկոս երբ պար- տուեցաւ Գոթերէ, իր իսկ զօրավարները վերջ տուին անոր կեանքին այնպիսի խժեժութեամբ, որ անոր մարմինն անգամ մէջտեղէն անյայ- տացաւ: Դեկոսի մահով Հալածանքը վերջ գտաւ, բայց վերջ չգտան Եկեղեցիի վէրքերը եւ խնդիրները: Ուրացողներէն շատերը ուզեցին վերադառնալ Եկեղեցիի ծոցը. մեծ խնդիր ու վէճ եղաւ Եկեղեցիի մէջ, թէ պէ՞տք էր ասոնք վերընդունիլ, երբ վճռական վայրկեանին ուրա- ցած էին իրենց Տէրը եւ կրօնքը՝ փրկելու համար իրենց Ֆիզիքական կեանքը: Շատեր բացարձակապէս կը մերժէին վերընդունիլ ասոնք Եկեղեցիի ծոցը, իսկ ուրիշներ աւելի թոյլատու եւ ներողամիտ ոգւով մօտեցան Հարցին եւ ուզեցին վերընդունիլ զանոնք որոշ ապաշխա- րանքի շրջանէ մը յետոյ: Այս իսկ պատճառով Եկեղեցին երկուքի բաժնուելու վտանգ անցուց՝ առաջին անգամ ըլլալով: Ներողամտու- թեան տեսակէտը ի վերջոյ յաղթանակեց Եկեղեցիի մէջ, թէեւ առա- ջին տեսակէտի պաշտպանները երկար ժամանակ ընդդիմացան, մին- չեւ իսկ ատեն մը ուրոյն Եկեղեցի կազմեցին:

է. ՎԱՂԵՐԻԱՆՈՍԻ (257-261) ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ.- Եկեղեցիի դեռ բոլորովին չէր հաւաքած ինքզինքը Դեկոսի խիստ հալածանքներէն, երբ դէմ-յանդիման գտնուեցաւ նոր հալածանքի մը: Վաղերիանոս Կայսեր հրովարտակը յատկապէս թիրախ ընտրած էր հոգեւորական դասը՝ եպիսկոպոսները, քահանաները եւ սարկաւագները: Մահուան սպառնալիքով կը պահանջուէր անոնցմէ զոհել կուռքերուն: Հարիւրներով նահատակուեցան կամ աքսորուեցան: Քրիստոնէական պաշտամունքները մահուան սպառնալիքներով արգելուեցան: Ի վերջոյ Վաղերիանոս ալ գերի բռնուելով Պարսիկներէն՝ հալածանքը դադարեցաւ աստե՛ն մը՝ անշուշտ միշտ ի գորու մնալով Տրայանոսի սկզբունքը:

Ը. ԴԻՈՎՂԵՏԻԱՆՈՍԻ (284-305) ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ.- Վերջինը, բայց միեւնոյն ժամանակ ամենախիստը, ամէնէն արիւնարբուն եւ ամէնէն երկարը Հռովմէական Կայսրութեան հալածանքներուն, որոնց եւս հազարաւոր քրիստոնեաներ զոհ գացին: Դիոկղետիանոս կը գտնուէր Նիկոմիդիա՝ այժմ Իզմիտ, երբ 303ին հանեց առաջին հրովարտակը հալածանքի: Ըստ այս հրահանգին կ'արգելուէին բոլոր քրիստոնէական հաւաքոյթները: Այն շէնքերը, որոնք իբրեւ եկեղեցի կը գործածուէին, կա՛մ պիտի գրաւուէին և կա՛մ պիտի կործանուէին: Բոլոր սրբազան գիրքերը՝ Սուրբ Գիրքերը եւ եկեղեցական մատեանները, պիտի փճացուէին, եւ բոլոր քրիստոնեաները պիտի հրաւիրուէին ուրանալու իրենց կրօնքը:

Այս հրահանգները մերժողներուն հետեւեալ պատիժները սահմանուած էին: Եթէ բարձր դասու կը պատկանէին ենթակաները, իրենց բոլոր ինչքերէն եւ դիրքերէն պիտի զրկուէին, նուաստացումի պիտի ենթարկուէին եւ բարոյական մահուան պիտի դատապարտուէին աքսորով եւ զրկանքներով: Եթէ ազատազրուած գերիներ էին, վերստին գերութեան վիճակին պիտի մատնուէին, եթէ հասարակ քաղաքացիներ էին, անոնք ալ ստրուկներու վիճակին պիտի իջնէին: Եկեղեցականները պիտի բանտարկուէին, աստուածներուն զոհ մատուցանողները ազատ պիտի արձակուէին, իսկ չմատուցանողները մահուան պիտի մատնուէին: Երկու տարուան մէջ՝ 303-305, չորս արքայական հրահանգներ ելած էին՝ հետզհետէ խստացնելով քրիստոնէից պատիժները: Ասիկա Հռովմէական Կայսրութեան վերջին եւ վճռական փորձն

էր քրիստոնէութիւնը բնաջնջելու՝ առնուազն կայսրութեան սահմաններուն մէջ:

305 թուին Դիոկղետիանոս հրաժարեցաւ եւ կայսրութիւնը բաժնուեցաւ հետեւեալ երեք հոգիներու միջեւ: Կոստանդիանոս ժառանգեց արեւմուտքը եւ երեք չհալածեց քրիստոնեաները: Գաղերիոս, որ սկիզբէն ի վեր գործակիցն էր Դիոկղետիանոսի եւ հալածանքի քաղաքականութեան կողմնակից, անուանապէս յաջորդեց անոր՝ արեւելքի մէջ՝ կեդրոն ունենալով Նիկոմիդիան՝ Իզմիտը: Գաղերիոսի կը վերագրուի մինչեւ իսկ դրոյնը զ'Դիոկղետիանոս, որ հալածանքի ձեռնամուխ ըլլայ: Եարունակեց բնականաբար սկսուած հալածանքը. սակայն իր վերջին տարին՝ 311ին, չարաչար հիւանդանալով դադարեցուց հալածանքը՝ մինչեւ իսկ քրիստոնեաներու աղօթքը խնդրելով իր առողջութեան համար: Իսկ միւս բռնակալը՝ Մաքսիմիանոս Տայա կամ Դաժ, շատ քրիստոնեաներու արիւն հոսեցուց, սակայն ի վերջոյ պարտուելով իր մրցակիցներէն՝ դադարեցուց հալածանքը: Իր կեանքը վերջացուց չարաչար մահուամբ՝ «սպառեալ աստուածային կրակէ»:

Այս արիւնահոսութիւնները ոչ միայն իրենց նպատակին չծառայեցին, այլ ընդհակառակը՝ ժողովրդային ընդհանուր ընդվզում եւ զայրոյթ յառաջացուցին, որուն հետեւանքով կայսրութեան նոր պատասխանատուները Կոստանդիանոս եւ Լիկիմոս համաձայնեցան դադարեցնել հալածանքը եւ 312 թուականին հրատարակեցին հրովարտակ մը, որ ծանօթ է «Միլանի Հրովարտակը» անունով. ընդհանուր կրօնական ազատութիւն հռչակեցին ամբողջ կայսրութեան սահմաններուն մէջ: Իսկ Կոստանդիանոսի առանձինն կայսրութեան օրերուն, 320ական թուականներէն սկսեալ, քրիստոնէութիւնը կայսեր մասնաւոր հովանաւորութիւնը եւ պաշտպանութիւնը վայելեց, առանց պետական կրօնք յայտարարուելու: Այդ պաշտօնական գործողութիւնը տեղի ունեցաւ Մեծն Թէոդոսի (379-395) օրերուն, երբ քրիստոնէութիւնը պաշտօնապէս դարձաւ կայսրութեան պետական կրօնքը, իսկ հեթանոսութիւնը իսպառ արգելուեցաւ պետական օրէնքով:

Ըստ Բ. դարուն ապրած Յուստինոս «Մարտիրոսի» վկայութեան, «թէեւ քրիստոնեաներ խաչուեցան, վայրի դազաններուն առջեւ նետուեցան, շղթաներու զարնուեցան, այրուեցան, տանջուեցան, իրենց ստացուածքներէն ու դիրքերէն զրկուեցան, բայց չհրաժարեցան

իրենց կրօնքէն: Ընդհակառակը՝ որքան շատցան չարչարանքները, այնքան բազմացան քրիստոնեանները...»: Անթիւ, անհամար այրի, կիներ ու մինչեւ իսկ մանուկներ կորսուեցան այդ հալածանքներու ընթացքին. բայց անոնց տեղ նորիւ անուշաբերած քաջութենէն: Քրիստոնեաներ նախընտրեցին զոհել իրենց ինչքերը, մարդկային բոլոր իրաւունքները եւ իրենց կեանքերը, այն համոզումով, թէ անոնց լաւագոյններուն պիտի տիրանա յին յաւիտենականութեան մէջ:

Գ.

ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐՈՒ ԾԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Ինչպէս ակնարկեցինք, այն մարտիրոսները, որոնք տակաւ առ տակաւ պիտի ներկայացնենք, թէեւ մեծագոյն մասով նահատակուած, աքսորուած կամ չարչարանքներու ենթարկուած են մեր վերեւ յիշած Հռովմէական հալածանքներու ընթացքին, բայց պիտի հանդիպինք նաեւ ուրիշ մարտիրոսներու, որոնք իրենց արիւնը թափած են Քրիստոսի համար, կամ չարչարուած են Անոր սիրոյն, Եկեղեցիի յաղթանակէն յետոյ կատարուած զանազան հալածանքներու ընթացքին, որոնց պատմութիւնն ալ երկար է. բայց մենք պիտի աշխատինք ներկայացնել զանոնք իրենց կարելի համառօտ գիծերուն մէջ:

1. ԱՐԻՈՍԱԿԱՆ ՆԵՐՈՒ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ

Կոստանդիանոս Կայսեր 312ին հանած ազատութեան հրովարտակին բարիքները Եկեղեցին հագիւ 15 տարիներ միայն կրցաւ վայելել: 320ական թուականներուն մէջ տեղ ելաւ Արիոսական հերձուածքը, որ թէեւ դատապարտուեցաւ 325ին Նիկիոյ մէջ գումարուած Առաջին Տիեզերական ժողովով, բայց չբնաջնջուեցաւ ընդհակառակը՝ պատմութեան տարօրինակ մէկ դարձուածքով կայսրութեան տէր եղաւ: Սկիզբները Կոստանդիանոս Կայսրը ջերմ պաշտպան եղաւ իր հրաւերով եւ ջանքերով գումարուած Նիկիոյ ժողովի որոշումներուն եւ հաւատոյ հանգանակին: Աքսորեց հերետիկոսապետ Արիոսը եւ իր բոլոր համախոհները, որոնց մէջ էր անոր աջ բազուկը հանդիսացող

Եւեբրիոս Նիկոմիդիոյ (Իզմիտի) Եպիսկոպոսը: Սակայն 328 թուականին սկսեալ կայսրը դիւրքը փոխեց՝ թելադրուելով հաւանաբար իր քրոջմէն, որ Արիոսականներու ազդեցութեան ներքեւ ինկած էր: Արտօնեց, որ աքսորեալները վերադառնան, որոնցմէ Արիոսական Եւեբրիոս Նիկոմիդացիին իր անմիջական խորհրդականը եղաւ կրօնական գործերու մասին: Փոխարէն աքսորեց ուղղափառներէն շատեր, որոնց մէջ էին Աղեքսանդրիոյ Պատրիարք Աթանասը եւ Անտիոքի Պատրիարք Եւսեբիոսը: Մինչեւ իսկ որոշած էր Արիոսը արդարացնել «տիեզերական» ժողովով մը, երբ վերջինս յանկարծամահ եղաւ, ինչ որ արգելք հանդիսացաւ իր մտադրութեան իրականացման: Տարի մը վերջն ալ ինք Կոստանդիանոսը մեռաւ 337ին եւ իրեն յաջորդեցին իր երկու որդիները՝ Կոստանդ, որ ուղղափառ էր, արեւմուտքի մէջ, եւ Կոստանդիոս, որ Արիոսական էր, արեւելքի մէջ: Աթանաս եւ ընկերները, որոնք ինքնաբերաբար վերադարձեր էին աքսորէն Կոստանդիանոսի մահէն յետոյ, տարի մը վերջ կրկին աքսորուեցան նոր կայսեր հրահանգով: 350ին արեւմուտքի ուղղափառ Կոստանդ Կայսեր մահով արեւելքի Արիոսական Կոստանդիոսը ամբողջ կայսրութեան տէր եղաւ: Եւ Յերոնիմոս գրեց. «Աշխարհ զարմանքով անդրադարձաւ, որ ամբողջ կայսրութիւնը Արիոսական եղած է»: Աքսորուեցան նաեւ Հռովմի Լիբերիոս Պապը եւ իր նշանաւոր եպիսկոպոսներէն Հիլարիոս Բուաթիեցին՝ «Արեւմուտքի Աթանասը»:

Յուլիանոս Կայսեր մահէն յետոյ, որուն պիտի անդրադառնանք, յաջորդեց Վաղէս Կայսրը, որ թէեւ Հեթանոս էր գահակալած ատեն, բայց 367ին Արիոսական մկրտուեցաւ եւ շարունակեց իր նախորդներուն հալածանքները: Ասոնց մէջ ամէնէն անգութն է նահատակութիւնը 80 հոգեւորականներու, որոնք եկած էին Կ. Պոլիս 370ին՝ խնդրելու, որ ուղղափառներու պաշտամունքի ազատութիւն շնորհուի: Կայսրը զանոնք նաւ դրաւ դէպի Բիւթանիա. երբ ցամաքը երեւցաւ, նաւաստիներ նաւը կրակի տուին եւ իրենք փոքր նաւակը մտնելով՝ ցամաք ելան, իսկ նաւին մէջիները այրեցան: Կապադովկիոյ մէջ ալ ճամբորդութեան մը ընթացքին հանդիպեցաւ Կեսարիա Ս. Բարսեղ Հայրապետին եւ մտադրած էր աքսորել նաեւ զայն. բայց իր որդին ծանրապէս հիւանդացաւ ու մեռաւ, որուն վրայ Վաղէս հրաժարեցաւ Բարսեղը աքսորելու իր մտադրութենէն: 378ին բարբարոսներու ար-

շաւանքի մը ընթացքին սպաննուեցաւ Վաղէս: Իրեն յաջորդեց Մեծ Թէոդոս ուղղափառ Կայսրը (379-395), որ միանգամ ընդմիշտ վեր տուաւ Արիոսական տիրակալութեան, գէթ արեւելքի մէջ, իր գոտաւրած Երկրորդ Տիեզերական ժողովով, 381ին Կ. Պոլսոյ մէջ, Նիկիական հաւատքը եւ հանգանակն ալ վերջնականօրէն վերահաստատուեցաւ արեւելքի մէջ:

2. ՅՈՒԼԻԱՆՈՍ ՈՒՐԱՑՈՂԻ (361-363) ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ

Յուլիանոս, որ Մեծն Կոստանդիանոսի եղբորորդին էր, թէեւ քրիստոնեայ մկրտուած էր, բայց երբ իր ընտանիքը սուրէ անցուեցաւ իր զարմիկին՝ Կոստանդիոս արիոսական Կայսեր կողմէ, ներքնապէս ատելութեամբ լեցուեցաւ քրիստոնէից նկատմամբ: Այնպէս որ երբ գրեթէ բախտի բերումով կայսր եղաւ 361ին՝ յաջորդելով նոյնինքն իր գերդաստանը բնաջնջողին, իր առաջին գործը եղաւ յայտարարել, որ ինք պաշտպանեալը եւ պաշտողը եղած է Ջեւս աստուածին, ու ձեւնարկեց վերահաստատելու հեթանոսութիւնը ամբողջ կայսրութեան մէջ: Իր այս հաւատափոխութեան համար ժառանգեց «Ուրացող» մակդիրը: Նախ արտօնեց, որ բոլոր աքսորեալ քրիստոնեայ առաջնորդները վերադառնան, որպէսզի շարունակուին Եկեղեցիին մէջ սկսուած վէճը, բաժանումը եւ երկուութիւնը: Քաշեց պետական պաշտպանութիւնը Եկեղեցիի վրայէն եւ կեդրոնացուց զայն հեթանոս հաստատութեանց վրայ: Վերստին յարքունիս գրաւեց պետութեանէն Եկեղեցիին շնորհուած բոլոր կալուածները եւ վերագանձեց տրուած նպաստները: Ամէն միջոց գործածեց Եկեղեցին նուաստացնելու եւ տկարացնելու, առանց պաշտօնական հալածանք հանելու: Բայց երբ այս կամ այն պատճառով դատուելու համար քրիստոնեաներ հանուեցան իր առջեւ, պատժեց զանոնք անգթաբար: 363ին Պարսից դէմ կատարած արշաւանքի մը ընթացքին նետահար սպաննուեցաւ: Իրեն վերագրուած վերջին խօսքը եղաւ «Յաղթեցի՛ր, ո՛վ Գալիլեացի»:

3. ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐ

Հազիւ վերջացած էին Հռովմէական հեթանոս կայսրերու հալածանքները Դ. դարուն սկիզբները, սկսան Պարսկականները: Այս հալածանքներուն նախաձեռնողը եղաւ Պարսից Շապուհ «Երկայնա-

կեաց» Շահը, որ պատմութեան հաւանաբար ամէնէն երկար իշխանութեան զլուխը մնացող անձը եղաւ՝ թագաւորած ըլլալով 310-380: Խստագոյն հալածանքները սկսան 340ին, երբ քրիստոնէական աղօթավայրեր քանդուեցան կամ յարքունիս գրաւուեցան, բազմաթիւ քրիստոնեաներ, յատկապէս հոգեւորականներ, սպաննուեցան: Պատքրիստոնեաներ, յատկապէս հոգեւորականներ, սպաննուեցան: Պատմիչ մը սպաննուածներուն թիւը կը նկատէ 16 հազար, իսկ Օրմանեան կը հաստատէ «այն սոսկալի հալածանքը, զոր Շապուհ պաշտօնապէս կը հրատարակած էր Քրիստոնէութեան դէմ, եւ որ տարիներէ ի վեր սաստկութեամբ կը շարունակուէր, եւ որ մինչեւ երկու հարիւր հազար քրիստոնէից նահատակուելուն պատճառ եղած է կ'ըսուի, նոյնիսկ Պարսիկ պատմագրի մը վկայութեամբ» (Ազգ. Ա., էջ 200): Այս հալածանքներու զոհ գացին Հայոց Եկեղեցիէն Վաչէեանք եւ բազմաթիւ ուրիշներ: «Չամենայն կարգ քրիստոնէից ջանայր խափանել», կ'ըսէ Խորենացին: «Որով հազարք հազարաց եւ բիւրք բիւրուց» նահատակներ եղած ըլլալը կը հաստատէ մեր Փ. Բիւզանդ պատմագիրը, որոնցմէ անունով կը յիշուին Չուրթա քահանան եւ Համագասպուհի ազնուական հայ տիկինը: Նման խիստ հալածանք մը հանեց իր յաջորդներէն Վահրամ Ե. (420-438): Իսկ Յագեկերտ Բ.ի (438-457) հալածանքները աւելի ծանօթ են մեր մէջ, եւ որուն զոհ գացին Վարդանանց 1036 նահատակները եւ բազմաթիւ ուրիշ հաւատացեալներ դրացի երկիրներէն: Պարսկական վերջին հալածանքը եղաւ Խոսրով Բ.ի (590-628) օրով, որ գրեթէ գրաւեց ամբողջ Փոքր Ասիան, Սուրիան, Պաղեստինը եւ Եգիպտոսը, կործանեց Երուսաղէմի Ս. Յարութեան Տաճարը եւ այլ սրբատեղիները, Խաչը գերի տարաւ Պարսկաստան եւ նահատակել տուաւ 17,000 քրիստոնեաներ, գերի տարաւ շուրջ 35,000 հոգիներ: Արաբները վերջ տուին Պարսկական Կայսրութեան եւ հալածանքին եւ իրենք անցան անոնց տեղը:

4. ԳՈԹԱԿԱՆ ԵՒ ՎԱՆՏԱԼԱԿԱՆ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐ

Երբ արեւելեան քրիստոնէութիւնը կ'ենթարկուէր Պարսկական հալածանքներու, գրեթէ նոյն ժամանակներուն արեւմտեան քրիստոնէութիւնը նշաւակ կը դառնար բարբարոս ժողովուրդներու յարձակումներուն, թալանին եւ հալածանքներուն: Գոթեր, Վանտալներ եւ Լոմպարտացիներ թէեւ քրիստոնեայ եղած էին, բայց Արիոսական

աղանդով վարակուած ու մակերեսային էին իրենց հաւատքին մէջ: Ուր որ արշաւեցին ասոնք, առհասարակ թալանեցին եկեղեցիները կամ քանդեցին. հալածեցին կամ աքսորեցին հոգեւորականները եւ բռնադատեցին գրեթէ ամբողջ արեւմտեան քրիստոնեաները, որ Արիոսական դառնան. մերժողներէն շատեր նահատակուեցան կամ չարչարանքի ենթարկուեցան: Ասոնց տիրակալութիւնը եւ հալածանքներն ալ վերջ գտան Զ եւ է դարերուն, երբ տակաւ առ տակաւ ձուլուեցան տեղական տարրերուն մէջ եւ կաթոլիկ եղան, երբ արդէն զօրացած էին ֆրանքները, որոնք ուղղափառ քրիստոնեայ դարձան եւ եղան պաշտպանները Արեւմտեան եկեղեցիին:

5. ՄԱՀՄԵՏԱԿԱՆ ՀԱԼԱՍՄԱՆՔՆԵՐ

Երբ Արաբներ տիրապետեցին Միջին Արեւելքի գրեթէ բոլոր երկիրներուն եւ Հիւսիսային Աֆրիկէին, այդ աշխարհամասերը գրեթէ ամբողջութեամբ քրիստոնեայ եղած էին արդէն: Արաբներ սուրով եւ բռնութեամբ բերաւտրներ իսլամացուցին. անոնք որ մերժեցին՝ ընդունեցին մարտիրոսութեան պսակը: Քրիստոնեաներ երբ քաղաքական մեծ ոյժ մը ներկայացնելէ դադրեցան, խալիֆաներ ակիթ թոյլատու ընթացք մը բռնեցին եւ քրիստոնեաներէ գլխահարկ մը առնելով գոհացան: Սակայն քրիստոնեաներ միշտ ալ մնացին անոնց քմայքէն կախեալ. կարգ մը իսլամ իշխաններ թոյլատու եւ խաղաղասէր էին, ուրիշներ՝ մոլեոանդ եւ բիրտ՝ հանդէպ քրիստոնէից: Ասոնց ի գործ դրած պարբերական հալածանքները ծնունդ տուին խաչակրական արշաւանքներուն արեւմուտքէն արեւելք, որոնք սակայն հազիւ հարիւր տարիներ միայն կրցան քէիկ մը մեղմել իսլամական ճնշումը՝ իրենց կարգին յաճախ հալածելով ոչ միայն իսլամները, այլ նեղելով նաեւ արեւելեան քրիստոնեաները, Յոյները, Հայերը, Ասորիները եւ այլն՝ դառնութիւն ստեղծելով անոնց մէջ արեւմտեան քրիստոնէութեան նկատմամբ և պատճառ դառնալով Արեւմտեան եւ Արեւելեան եկեղեցիներու վերջնական բաժանումին:

Դարերու ընթացքին, Սուրիոյ, Եգիպտոսի, Պաղեստինի, Փոքր Ասիոյ, Լիբիոյ, Թունուզի եւ Ալճերիոյ ծաղկեալ քրիստոնէութիւնը ընկղմեցաւ իսլամական ովկիանոսին մէջ՝ ետին ձգելով քրիստոնէական փոքր կղզեխումբեր:

6. ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ ՓՈՒՍԱԴԱՐՁ ՀԱԼԱՍՄԱՆՔՆԵՐԸ

Բողոքականութեան ծագումով քրիստոնեաներ սկսան այս անգամ իրար հալածել, կաթոլիկներ՝ բողոքականները, եւ փոխադարձաբար: Եւստ քրիստոնեայ արիւն թափուեցաւ քրիստոնեաներու ձեռքով: Մտածումի ազատութեան եւ քաղաքային իրաւունքներու կաշկանդումներու ենթարկեցին զիրար 16րդ դարէն մինչեւ 19րդ դար: Նոյն ժամանակներուն կաթոլիկներ եւ օրթոտոքսներ ալ սկսան զիրար հալածել եւ բռնի նորադարձներ կորզել իրարմէ: Ըստ այսմ Ռուսիոյ կատարինէ թագուհին (1762-1796) հազարաւոր կաթոլիկներ բռնի օրթոտոքս դարձուց Լեհաստանի մէջ: Այս քաղաքականութիւնը շարունակեցին անոր յաջորդները մինչեւ ԺԹ դարու վերջերը: Իսկ ուր որ կաթոլիկներ զօրաւոր էին, օրթոտոքսները բռնի միջոցներով կաթոլիկ դարձուցին եւ կազմեցին այսպէս ամէն մէկ օրթոտոքս եկեղեցիի կողքին «Միացեալ-Ունիտա» Հռովմէական կաթոլիկ եկեղեցիներ: Այս մտայնութեան եւ բռնի միջոցներուն զոհ եղաւ նաեւ Լեհաստանի ծաղկեալ հայ գաղութը, որ ամբողջութեամբ բռնի կաթոլիկացաւ: Ուրբանացիներէ, Ռուսացիներէ, Սերպերէ եւ այլ օրթոտոքս եկեղեցիներէ «Ունիտաներ» կազմուեցան: Նոյնը պատահեցաւ արեւելեան մանր եկեղեցիներուն, որոնք հերոսական ճիգով եւ իրենց արեան գինով Քրիստոնէութեան առկայծ ճրագը վառ պահած էին իսլամութեան դարաւոր փոթորիկներուն դիմաց. ասոնցմէ ալ զանազան ճնշումներով կազմուեցան Եգիպտական, Հայկական, Ասորական, Արաբական, Յունական կաթոլիկ «Ունիտաներ»: Կ. Պոլսոյ մէջ յատկապէս, կաթոլիկ դեսպաններու դրդումով եւ Հռովմի քարոզիչներու ճնշումներով եւ խռովարարութեամբ, վէճեր յարուցուեցան հայ համայնքի մէջ. շատեր կաթոլիկութեան յարեցան, որոնք հալածանքի ենթարկուեցան Հայոց Պատրիարքարանի կողմէ, եւ փոխադարձաբար հայոց պատրիարքներէն մէկը առեւանգուելով արեւմուտք փախցուեցաւ կաթոլիկ գործակալներու մեքենայութեամբ: Այնպէս որ այն, ինչ որ պատահած էր Եւրոպայի մէջ կաթոլիկներու եւ բողոքականներու միջեւ, կրկնուեցաւ մանրանկարային ձեւի տակ Կ. Պոլսոյ մէջ Հայերու եւ կաթոլիկներու միջեւ: Զիրար ամբաստանեցին, հալածեցին, բանտարկել կամ աքսորել տուին, մինչեւ որ Հայ եկեղեցիի մայր զան-

գուածէն կտորներ փրթան՝ կազմելու համար Հայ Կաթոլիկ եւ Հոյ Բողոքական համայնքները 19րդ դարու առաջին կէսին:

7. ԱՆԿՐՕՆՆԵՐՈՒ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ

Արեւմուտքի մէջ կաթոլիկներու եւ բողոքականներու փոխադարձ պայքարներու զուգահեռ յառաջ եկան նոր ընկերային եւ իմացական շարժումներ, որոնք ռիսերիմ հակառակորդները դարձան կրօնքի ընդհանրապէս եւ Քրիստոնէութեան մասնաւորաբար: Այդ շարժումները առհասարակ անաստուածութեան, կամ աւելի մեղմ բացատրութեամբ՝ «ազատականութեան» անուններով ծանօթ են, որոնց ծագումը կ'երթայ կապուելի 14-15րդ դարերու այսպէս կոչուած «Վերածնունդին», որ եթէ Եկեղեցին հալածող հոսանք մը է՛ր, գէթ անտարբեր եւ արհամարհական դիրք ունէր անոր հանդէպ: Ազատական այս շարժումները ի վերջոյ նախ վերածուեցան Ֆրանսական Յեղափոխութեան, որ բացայայտօրէն հակակրօն եւ հակակղեր շարժում մըն է՛ր՝ զուտ ընկերային ու քաղաքական նոր հոսանք մը ըլլալով հանդերձ: 1791 թուին Ֆրանսայի մէջ սպաննուեցան 600 հոգեւորականներ, 1795ին Փարիզին մէջ անգլիաբար գլխատուեցան 300 եկեղեցականներ, որոնց մէջ երեք արքեպիսկոպոսներ կային: Եւրոպայի զանազան երկիրներու մէջ վանքեր քանդուեցան ու վանական կարգեր հալածուեցան ու քայքայուեցան: Կրօնքը արգիլուեցաւ կարգ մը դպրոցներէ եւ համարսարաններէ: Ուժեղ շարժում մը յառաջ եկաւ կրօնքը բաժնելու պետութենէն՝ միշտ ի վնաս առաջինին:

Հակակրօն ու հակաեկեղեցական այս շարժումները իրենց լրումին յանդեցան համայնավարութեան հրապարակ իջնելով: Ուր որ ասոնք պետութեան ղեկը իրենց ձեռքն առին, կատաղի պայքար բացին կրօնքի դէմ ընդհանրապէս եւ Եկեղեցիի դէմ յատկապէս: Բիւրաւորներ մեռան քրիստոնեայ եղած ըլլալուն համար: Գրաւուեցան եկեղեցական բոլոր կալուածները եւ գրեթէ բոլոր աղօթավայրերը, որոնցմէ շատեր քանդուեցան, ուրիշներ տարբեր նպատակներու յատկացուեցան, ոմանք ալ պահուեցան իբրեւ պատմական յուշարձաններ միայն: Համայնավար երկիրներու մէջ Եկեղեցին իսկապէս ապրեցաւ իր երկարատեւ պատմութեան ամէնէն ահաւոր եւ ամէնէն արմատական հալածանքներէն մէկը. նուազեցաւ, աղքատացաւ, անարգուեցաւ

բայց արմատախիլ չեղաւ: Երկրորդ Աշխարհամարտէն ասդին մեղմացած է այդ հալածանքը, առնուազն Սովետ Միութեան մէջ, բայց նոյն ուժեղութեամբ եւ այլամերժութեամբ կը շարունակուի այսօր համայնավար Ձինաստանի մէջ եւ փոքր չափով մը նաեւ Ափրիկէի եւ Ասիոյ նորաստեղծ երկիրներէն ոմանց մէջ:

Երբ այսպէս կը թուենք մի առ մի Եկեղեցիին՝ դարերու ընթացքին կրած հալածանքները, չենք կրնար սակայն անտեսել այն հալածանքները, զորս Եկեղեցին ինք ի գործ դրաւ Հերետիկոսներու, Հրեաներու եւ Հեթանոսներու դէմ: Հրեաներու հանդէպ յատկապէս՝ Եկեղեցիի բռնած հալածական ընթացքը խարան մըն է, զոր կարելի պիտի չըլլայ ջնջել իր ճակատէն: Հասկնալի եւ անհրաժեշտ էին հակաճառութիւնները եւ հերքումները ընդդէմ հրէից, հեթանոսաց եւ Հերետիկոսներու սխալ դադափարներուն, բայց Ֆիզիքական հալածանքը հակառակ է Աւետարանի սիրոյ եւ եղբայրութեան սկզբունքին: Իրաց այս լոյսին տակ ամօթալի եւ անջնջելի արատ մը պիտի մնայ Կաթոլիկ Եկեղեցիի հաստատքնութիւնը, որ հազարներու մահուան պատճառ եղաւ, տասնեակ հազարներ բանտարկեց, աքսորեց ու հալածեց: Սակայն չկրցաւ առաջն առնել Հերետիկոսութեան եւ անաստուածութեան, որոնք ի վերջոյ ուժեղ պայթում ունեցան 16րդ դարուն: Ստոյգ է, եկեղեցական իշխանութեան պարտականութիւնն է խրատել, լուսաբանել, համոզել, ի հարկին սաստել, յանդիմանել եւ ի կարգ հրաւիրել անուղղանները, սակայն երբ ասոնք եկեղեցական իշխանութեան չեն անսար եւ հոգեպէս կամ Ֆիզիքապէս կ'անջատուին Եկեղեցիէն, անոնք այլեւ աւետարանական բացատրութեամբ «հեթանոսի պէս» կ'ըլլան, որոնց վրայ այլեւ ուե՛է իշխանութիւն չունի Եկեղեցին եւ հետեւաբար իրաւունք ալ չունի հալածելու: Այնուհետեւ իր պարտքն է, հերքել յետոյ անոնց մոլորութիւնները, զգուշացնել հաւատացեալները անոնց սուտ ու սխալ ուսուցումներէն:

Որքան ալ անիրաւ եւ դատապարտելի եղած ըլլան քրիստոնէութեան դէմ գործադրուած հալածանքները առհասարակ, սակայն միւս կողմէն պէտք է ընդունել, որ երբեմն ալ Եկեղեցին ինք հրաւիրած է հալածանքները իր վրայ արդարապէս. որովհետեւ յաճախ շեղած է Աւետարանի թէ՛ւ արքունական, բայց նեղ ճանապարհէն: Այսպէս՝ նախամիջնադարերուն, Արեւելեան Եկեղեցին փոխանակ իր ոյժերը

գործածելու Աւետարանի տարածման իր առաջնահերթ պարտաւորութեան, ինչպէս կ'ընէր արդարեւ Արեւմտեան Եկեղեցին, ընդհակառակը կը վատնէր զանոնք յաճախ ամուլ եւ անիմաստ աստուածաբանական վէճերուն մէջ: Մահմետականութեան մտրակն անգամ չկրցաւ զգաստացնել զայն: Իսկ Արեւմտեան Եկեղեցին, ուշ միջնադարերուն, դարձած էր շատ նիւթապաշտ եւ իշխանապաշտ: Բողոքականութիւնը, Յեղափոխութիւնը եւ ընկերվարական շարժումները շատ բան խլեցին իր նիւթական հարստութենէն եւ աշխարհիկ իշխանութենէն՝ յօգուտ՝ իրեն: Ռուսոյ երբեմնի փառաւոր ու ճգնազգեաց Եկեղեցիին նուիրապետութիւնը 19րդ դարէն մինչեւ քսաներորդ սկիզբները իշխանավայել կեանք ապրելու միայն տուած էր ինքզինքը եւ շատ քիչ կը մտածէր ուրիշ կենսական ու կրօնական հարցերու մասին: Միջակորեայրը մակերեսային ու ձեւապաշտ դարձեր էր: Համայնավարութեան փոթորիկը եկաւ ցնցել եւ տապալել այդ փառաւոր զարդածառերը, որոնք սակայն դադրած էին բարի պտուղ տալէ: «Ես եմ ճշմարիտ որթատունկը», ըսաւ Քրիստոս, «եւ Հայրս մշակ է. իմ վրաս հաստատուած ամէն ճիւղ, որ պտուղ չի տար, կը կտրէ զայն Հայրս, իսկ այն ճիւղը, որ պտուղ կու տայ, կը սրբէ զայն, որպէսզի աւելի պտղաբեր դառնայ» (Յովհ. ԺԵ. 1-3): Հալածանքները երբեմն կտրատումի եւ երբեմն ալ սրբացումի դերը կատարած են:

Դ.

ՀԱԼԱԾԱՆՔԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ

ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ

Քրիստոնեայ ըլլալը գրեթէ համազօր է Հալածանքի յանձնառութեան ենթարկել ինքզինքը: Այս մասին Աւետարանը տարակոյս չէ ձգած մտքերու մէջ. «Եթէ Ձիս Հալածեցին, ձեզ ալ պիտի հալածեն», ըսաւ մեր Տէրը իր աշակերտներուն (Յովհ. ԺԵ. 20): «Այս աշխարհի վրայ նեղութիւն պիտի ունենաք», եզրակացուց Յիսուս իր Վերջին Կտակի խօսքերը (Յովհ. ԺԶ. 33): Այո՛, քրիստոնեաներ շատ մը շնորհներու պիտի արժանանային, բայց «Հալածանք հանդերձ» (Մրկ. Ժ. 30), այսինքն իրենց վայելած բոլոր բարիքներէն անպակաս պիտի ըլլար նաեւ հալածանքի «պարզեւր»: Եւ տակաւին կան նման ուրիշ

բազմաթիւ ակնարկութիւններ Աւետարաններուն մէջ, որոնք կը հաստատեն, թէ Հալածանքը անբաժանելի մասը պիտի կազմէր քրիստոնէական կեանքին: «Ձեռք պիտի զարնեն ձեզի եւ պիտի հալածեն ձեզ» (Ղուկ. ԻԱ. 12): «Պիտի հալածուիք քաղաքէ քաղաք» (Մտթ. ԻԳ. 34): Այն աստիճան անհրաժեշտ կը նկատուի Հալածանքը կատարեալ քրիստոնեայ լինելու համար, որ եթէ անոնք պակսին, կասկածելի կրնայ նկատուիլ մէկու մը քրիստոնեայ ըլլալը: Ինչո՞ւ:

Կարելի՞ է երեւակայել մեր աշխարհը առանց քամիի եւ փոթորիկի, առանց ձիւնի եւ ձմեռի: Բոյսերու աճման ու յատկապէս ամրացման մէջ կարեւոր դեր ունին անոնք: Մառ մը որքան շատ շարժի, այնքան հակամէտ է իր արմատները աւելի խորացնելու որքան ցուրտի ենթակայ ըլլայ, այնքան կը կարծրանայ փայտը: Ամէնէն ամուրտի ենթակայ ըլլայ, այնքան կը կարծրանայ փայտը: Ամէնէն ամուրտի փայտերը կու դան հիւսիսային գօտիներէ եւ բարձրաբերձ լեռներէ: Հալածանքն ալ կը ծառայէ ամրացնելու հաւատքը, եթէ արմատ բռնած է այն:

Ընդհակառակը՝ Հալածանքը կը քանդէ այն հաւատքը, որ արմատ չէ նետած մարդուն հողի խորքերուն մէջ: Քրիստոնեայ լինելը լուրջ եւ պատասխանատու գործ է, թեթեւութիւն եւ տկարութիւն չի ճանչնար. ով որ բարոյապէս թեթեւ է ու տկար, չի կրնար տեղ դրաւել Աստուծոյ արքայութեան մէջ: Հալածանքը արմատախիլ կ'ընէ մակերեսային հաւատքը, կը մաքրէ Եկեղեցիի ծառը իր չոր ու աւելորդ ճիւղերէն: Աստուած տուած է անհրաժեշտ ոյժը բոլոր քրիստոնեաներուն դիմանալու ամէն տեսակ Հալածանքի, տառապանքի եւ փորձութեանց: Երբ չենք դիմանար ասոնց, այդ կը նշանակէ, որ կամ չենք գործածեր Աստուծոյ մեզի շնորհուած այդ զօրութիւնը, եւ կամ բոլորովին զուրկ ենք անկէ, ինչ որ համազօր է ըսելու, թէ Հոգեպէս քրիստոնեայ չենք եւ Հետեւաբար չենք ստացած այդ անհրաժեշտ զօրութիւնը:

Քրիստոնէութեան էութեան մէջ է ինքն իր վրայ Հալածանք հրաւիրելը. որովհետեւ նախ ընկերութիւնը, որուն մէջ կ'ապրինք, չար է եւ նախանձոտ, ինկած է ու այլասերած: Մարդկային բնութեան մէջ է՝ կամ նախանձիլ ու հակառակիլ իրմէ առաւելութիւն ունեցողներուն, եւ կամ հիանալ ու Հետեւիլ անոնց: Հեթանոս աշխարհը տեսաւ, կամ զգաց, որ քրիստոնեաներ տէր էին բանի մը, որմէ զուրկ էին իրենք:

օրինակ՝ քրիստոնեաներ եղբայրական սէր ունէին իրարու հանդէպ հակառակ աշխարհիկ հաճոյքներէ հրաժարած ըլլալուն՝ երջանկութիւնը կը ճառագայթէր իրենց դէմքերէն, հակառակ մեծ մասով ընկերութեան վարի խաւերէն եկած ըլլալուն՝ գոհունակութիւնը կը կարդացուէր իրենց ամբողջ կերպարանքին վրայ: Ազնուական դաս պատկանող քրիստոնեաներ վեհանձն ու խոնարհ էին ամէն մարդու հանդէպ, յատկապէս իրենց տան մէջ գործող սարուկներու նկատմամբ, որոնց հետ ազօթաժողովներուն մասնակցելը հակառակ չէին նկատեր իրենց դիրքին, ինչպէս կը նկատէր հեթանոս ազնուական դասակարգը: Եւ վերջապէս դեռ կային բազմաթիւ ուրիշ երեւոյթիկ քրիստոնեաներու ընկերային ու անհատական կեանքին մէջ, որոնք աչքի զարնելու չափ կը տարբերէին զանոնք հեթանոս ընկերութենէն: Ունէին անդենական կեանքի ամուր յոյս եւ հաւատք եւ հետեւաբար մահէն չէին վախնար: Այս բոլորը պատճառներ էին, որ գիտակից կամ անգիտակից նախանձ եւ ատելութիւն ծնէր սրտերուն մէջ անոնց, որոնք զուրկ էին այս բաղձալի վիճակներէն: Ու ատելութիւնը անխուսափելիօրէն կ'առաջնորդէ ուղղակի կամ անուղղակի հալածանքի, ու որ կարելիութիւն կայ այդ մասին:

Բաց աստի, քրիստոնէութիւնը կրաւորական վիճակ մը չէր անջիղ բարութիւն մը չէր, որ չարիք չընելով միայն գոհանար: Քրիստոնէութիւնը դրական ու գործնական բարութիւն մըն է: Նախ իր այոն այո է, ոչը՝ ոչ: Շիտակին շիտակ կ'ըսէ, սխալին՝ սխալ, թէ իսկ անհաճոյ ըլլայ այդ՝ մարդոց: Տեղին համաձայն կրնայ ցնցել իր ցուցամատը անիրաւին, անարդարին եւ կեղծաւորին դէմ: Այս բոլորը իր վրայ կը հրաւիրեն բնականօրէն զայրոյթը ըստ աշխարհի հզօրներուն, հպարտներուն, հարուստներուն, ընկերութիւնը կեղեքողներուն եւ կրօնքը շահագործողներուն:

Վերջապէս քրիստոնեայ ըլլալ կը նշանակէ ցոյց տալ խօսքով ու գործով յիմարութիւնը կուսպաշտութեան, որուն մէջ թաղուած էր ամբողջ հեթանոս աշխարհը: Ու երբ իրենց Աստուծոյն եւ կուռքերու միջեւ ընտրութիւն մը ընելու հարկին տակ գտնուէին, քրիստոնեաներ տարակոյս չունէին այլեւ իրենց նախընտրութեան մէջ: Սա կը հրահրէր զայրոյթը հեթանոս քուրմերու եւ իբրեւ աստուած պաշտուող կայսրերուն, որոնց ձեռքին մէջ ամփոփուած էր ամբողջ պե-

տական ոյժը: Եթէ ճնշում ու պարտադրանք ի գործ դրուէր քրիստոնեաներու վրայ, որ ետ՝ հեթանոսութեան դառնան, կամ կտրուկ ձեւով կ'ըսէին. «Քրիստոնեայ եմք եւ զՔրիստոս ոչ ուրանամք», եւ կամ՝ եթէ դիմացինը հասկցող մէկն էր, կրնային ըսել. «Մեր ներքին երջանկութիւնը եւ հոգեկան խաղաղութիւնը չենք կրնար փոխանակել կուռքերուն եւ մարդկային կամքերուն հետ, որոնք մեզի նուաստացումէ եւ կեղծիքէ զատ ոչինչ կրնան տալ»: Ահաւաստիկ այն գլխաւոր ցումէ եւ կեղծիքէ զատ ոչինչ կրնան տալ»: Ահաւաստիկ այն գլխաւոր պատճառները, որոնք բնական կը դարձնէին, եւ մինչեւ օրս ալ բնական կը դարձնեն, հալածանքը հանդէպ հարազատ քրիստոնեաներու:

Սակայն իբրեւ ազդարարութիւն աւելցնենք, որ ամէն հալածանք կրողը անպատճառ քրիստոնեայ չէ. մարդ երբեմն իր յիմարութեանց հետեւանքով կամ տիրող մեծամասնութենէն տարբեր ազգի մը պատկանած ըլլալուն համար ալ հալածանքի ենթակայ կրնայ ըլլալ: Բայց ամէն հարազատ քրիստոնեայ ի վերջոյ այս կամ այն ձեւի տակ հալածանք պիտի կրէ: Հետեւաբար շատ կարեւոր է գիտնալ, թէ յանուն ինչի՞ կամ ի՞նչ պատճառով կը հալածուի մէկը: Ու հալածանք ըստածը միշտ ալ իր բիրտ ու բացայայտ ձեւին տակ չէ, որ կ'արտայայտուի կան հալածանքներ, որոնք կը կատարուին գաղտնի ու սմսեղուկ եղանակով, մինչեւ իսկ երբեմն յանուն օրէնքի եւ արդարութեան, որ յաճախ տարբեր իմաստ եւ կիրարկում ունի քրիստոնեայի եւ ոչ-քրիստոնեայի համար:

Ամէն պարագային իրականութիւնը այն է, որ քրիստոնէութիւնը, հակառակ ճիւղակոտոր ըլլալուն, աւելի աճած, զօրացած ու ամրապնդուած դուրս եկած է հալածանքներէն: Մանօթ է եկեղեցական հայրերէն մէկին ասութիւնը. «Արիւն մարտիրոսաց՝ սերմն Եկեղեցւոյ»: Ամէն արիւնի կաթիլ, որ կը թափուէր յանուն Յիսուսի, կարծես նոր սերմեր էին՝ նետուած մարդկային անդաստանին մէջ, որոնցմէ նոր քրիստոնեաներ կը բուսնէին: Ամէն արիւնահոսութիւն կարծես ջրտուք մըն էր Քրիստոնէական Եկեղեցիի արտին եւ այգիին, որմէ յետոյ պարարտ հասկեր ու առատ պտուղ կը քաղէր Եկեղեցին: Ընդհակառակը՝ տեսնուած է, որ խաղաղութեան շրջաններ թուլութիւն յառաջացուցած են քրիստոնէական շարքերուն մէջ, առիթ տուած են, որ ճարպիկ բայց անարժան մարդեր առաջնորդութիւն ստանձնեն Եկեղեցիի մէջ, ի վնաս քրիստոնէական դատին: Խաղաղ շրջաններ

տկարացուցած են Հասարակ Հաւատացեալներու մէջ փորձութեանց եւ անիրաւութեանց առջեւ դիմադրական ոգի ցոյց տալու արիւթիւնը որ յատկանշական գիծը պիտի կազմէր ամէն Հաւատացեալ քրիստոնեայի: Մինչդեռ Հալածանքները ցնցած ու մաքրազարդած են Եկեղեցին իր աւելորդ եւ չոր ճիւղերէն, մարդած են Հաւատացեալներու կամքը եւ աճեցուցած՝ անոնց դիմադրական կարողութիւնը:

Յիսուս ոչ միայն նախատեսեց Հալածանքը իր Հետեւորդներուն համար, այլ նաեւ երանի կարգաց Հալածանքի ենթարկուողներուն.

«Երանի՛ անոնց, որոնք կը հալածուին արդարութեան համար, վասնզի անոնց է երկինքի արքայութիւնը»։ ու խօսքն ուղղելով իր անմիջական շրջապատին՝ իր աշակերտներուն՝ եզրակացուց Յիսուս երանիներու ոսկի շարքը.

«Երանի՛ ձեզի, երբ կը նախատեն եւ կը հալածեն ձեզ ու ստաբար կ'ըսեն ձեր մասին ամէն տեսակ չար բաներ իմ պատճառովս - այսինքն ինծի Հաւատացած ըլլալնուդ համար: - Յնծացէ՛ք եւ ուրախ եղէ՛ք, վասնզի այսպէս հալածեցին ձեզմէ առաջ ապրած մարգարէները» (Մտթ. Ե. 10-12): Ու կը համադրէ Պօղոս Առաքեալ մեր այս բոլոր ըսածները Հետեւեալ նախադասութեան մէջ. «Բոլոր անոնք, որ իբրեւ քրիստոնեայ աստուածապաշտութեամբ կ'ուզեն ապրիլ, հալածանքի ենթակայ պիտի ըլլան» (Բ. Տիմ. Գ. 12):

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ

Աստուածաշունչի արդարները ներկայացնելու ատեն մենք Հետեւած էինք գրեթէ ժամանակագրական կարգի՝ Ադամէն մինչեւ Պօղոս Առաքեալի աշակերտները, որոնց յիշատակութեամբ կը գոցուէր Նոր Կտակարանի վարագոյրը: Ասոնցմէ ոմանք դեռ պատմութեան բեմին վրայ են, երբ կը բացուի եկեղեցական պատմութեան վարագոյրը արտաքոյ Նոր Կտակարանի: Այնպէս որ մեր ընելիքը պիտի լինի գրեթէ առանց ընդմիջումի շարունակել սկսուած շարքը՝ այս պարագային Ս. Գիրքէն դուրս աղբիւրներէ քաղելով մեր տեղեկութիւնները, այսինքն եկեղեցական պատմութենէն կամ «Վարք Սրբոց» կոչուած գիրքերէն:

Այս անգամ սակայն մենք պիտի չհետեւինք ժամանակագրական կարգի, այլ որոշ դասաւորումի ենթարկելով մեր տօնելի սուրբերը՝ խումբերով պիտի ներկայացնենք զանոնք: Ըստ այսմ նախ երկու մեծ խումբերու կը բաժնենք անոնց ամբողջութիւնը, ինչպէս ըսինք ասկէ առաջ:

Ա. ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՍՈՒՐԲԵՐ

Բ. ՀԱՅԱԶԳԻ ՍՈՒՐԲԵՐ

Ապա վերոյիշեալ իւրաքանչիւր խումբը պիտի ներկայացնենք Հետեւեալ հինգ բաժանումներով.

1. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ.
2. ԺԳՆԱԻՈՐԵՆԵՐ ԿԱՄ ԱՆԱՊԱՏԱԿԱՆՆԵՐ.
3. ՊԵՏԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ ԵՒ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆՆԵՐ.
4. ԿՈՑՍԵՐ ԿԱՄ ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ՍՈՒՐԲԵՐ.
5. ԱՅԼ ՄԱՐՏԻՐՈՍՆԵՐ ԿԱՄ ՆԱՀԱՏԱԿՆԵՐ:

Ասոնցմէ իւրաքանչիւրն ալ իր ստորաբաժանումները պիտի ունենայ: Մենք առաջին խումբը՝ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴԷՄՔԵՐԸ կը բաժնենք բնական ու ծանօթ երեք կրօնական կարգերու՝ ա) Հայրապետ-

Անր կամ Եպիսկոպոսներ. բ) Քահանաներ. գ) Սարկաւագներ: Իւր-
քանչիւր խումբի պատկանող դէմքերը պիտի ներկայացնենք ժամ-
նակագրական կարգով, որքան որ Հնարաւոր է այդ:

Ա. ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐ ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ

Այս խումբին մէջ կ'առնենք սովորական քահանայական կարգի
վեր բոլոր եկեղեցական առաջնորդները՝ պատրիարքները, եպիսկո-
պոսները եւ վարդապետները: Այս վերջինները՝ վարդապետները, մի
եկեղեցիին մէջ միայն առանձին կարգ կը կազմեն. Ընդհանրակա-
ն եկեղեցիի մէջ գրեթէ նոյն են եկեղեցիի Հայրապետներուն ու եպի-
սկոպոսներուն հետ, որոնք միշտ կազմած են եկեղեցիի ուսուցանող-
կան դասակարգը, այսինքն վարդապետները: Բաց աստի, ՊԱՏՐԻԱՐԿ
եւ ՊԱՊ մակղորները, իրենց այսօրուան իմաստով, ետքի ժամանակնե-
րու ծնունդ են. հետեւաբար մենք հետեւողականօրէն չենք գործածել
այդ բառերը առաջին երեք դարերու Հայրապետներուն համար:

1,2. ՌԵԹԷՆՈՍ ԱԹԵՆԱՑԻ ԵՒ ԴԻՈՆԵՍԻՈՍ ԱՐԻՍՊՈՒԳԱՅԱՑԻ

Ասոնք գլուխը կը կենան այն նշանաւոր եկեղեցական հայրերու
խումբին, որոնք կը տօնուին մեր մէջ «Երկրտասան Վարդապետք»
անուան տակ, Հոկտեմբերի վերջերը՝ Խաչի եօթներորդ Կիրակի՝
Գիւտ Խաչի նախորդ Շաբաթ օրը: Անբաժան են այս երկուքը իրարմէ,
որովհետեւ առաջինը երկրորդին իբրեւ ուսուցիչը կը ներկայացով
վերջնայն անունով ծանօթ գիրքերու մէջ, որոնց պիտի անդրադա-
նանք:

Դիոնեսիոս օղակ մըն է աւետարանական սուրբերը եւ եկեղեցա-
կան պատմութեան սուրբերը իրարու կապող, որովհետեւ յիշուած է
«Գործք Առաքելոցի» մէջ իբրեւ գլխաւոր պտուղը Պօղոս Առաքելի՝
Աթէնքի մէջ կատարած քարոզութեան: Երբ Պօղոս Առաքելը աւար-
տեց իր քարոզը Աթէնքի Արիսպագոս կոչուած ակադեմիական գերա-
գոյն ժողովին առջեւ, «Գործք Առաքելոց» գրքին հեղինակը կ'եզրա-
կացնէ. «Ու Պօղոս ելաւ հեռացաւ անոնց մէջէն: Կարգ մը մարդիկ յա-
րեցան իրեն եւ հաւատքի եկան, որոնց մէջն էր Դիոնեսիոս Արիսպա-
գացին» (Գործ. Ժէ. 32-34):

«Արիսպագոս» յունարէն լեզուով կը նշանակէ «Արէսի բլուրը»:
Այս անունը տուած էին Աթէնքի բլուրներէն մէկին, ուր կը գու-
մարուէր Հինէն ի վեր քաղաքին ազնուապետական դատական ժողովը,
որ կը գրադուէր նաեւ կրօնական հարցերով: «Արիսպագոս» անունը
բլուրէն անցաւ անոր վրայ գումարուած ժողովին, որ այդ անունով
ծանօթ էր, եթէ մինչեւ իսկ այդ բլուրին վրայ չգումարէր իր ժողով-
ները: Այս պարագային, ուրեմն, «Արիսպագացի» ոչ թէ այդ անու-
նով ծանօթ բլուրին վրայ ծնած կամ բնակող կը նշանակէ, այլ՝ այդ
անունով ճանչցուած հաւաքականութեան անդամ, ինչպէս է պարա-
զան Փարիսեցի կամ Սաղոնկեցի անուններու համար, որոնք կը նշա-
նակեն այդ անուններով ծանօթ խմբակներու պատկանող:

«Գործք Առաքելոցի» յիշատակութենէն դուրս Դիոնեսիոսի
մասին մեր ունեցած միակ ծանօթութիւնը կու գայ չորրորդ դարու
պատմիչ Եւսեբիոսի «Եկեղեցական պատմութենէն», ուր կը հաստա-
տուի, թէ Դիոնեսիոս եղած է Աթէնքի առաջին եպիսկոպոսը՝ ձեռնա-
դրուելով Պօղոս Առաքելուն:

Սակայն անոր համբաւը եւ եկեղեցիի մէջ վայելած մեծ հեղինա-
կութիւնը եւ դիրքը՝ իբրեւ վարդապետ եկեղեցւոյ, կը հիմնուի կարգ
մը կարեւոր գիրքերու վրայ, որոնք իրեն վերագրուած են եւ որոնք
բարձր հեղինակութիւն վայելած են միջին դարերուն եւ մեծապէս
ազդած են այդ եւ յաջորդ դարերու աստուածաբաններու մտածողու-
թեան վրայ թէ՛ Արեւելքի եւ թէ՛ Արեւմուտքի մէջ: Այդ գիրքերն են.

1.-Յաղագս Երկնային Քահանայապետութեան հրեշտակներու
զանազան դասակարգութեան մասին.

2.-Յաղագս Երկրային Քահանայապետութեան ի մասին եկե-
ղեցական նուիրապետութեան, որ կը ներկայացուի որպէս կրկնակը
կամ նմանակը երկրի վրայ՝ երկնային քահանայապետութեան.

3.-Յաղագս Աստուածային Անուանց. Աստուծոյ ստորագելիներ-
ու կամ յատկութեանց մասին.

4.-Միաթիք Աստուածաբանութիւն. քրիստոնէական հոգեւոր
կեանքի կատարելութեան մասին:

Դիոնեսիոսի վերագրուած այս գործերը թարգմանուած են նաև Հայերէնի նախ Ստեփանոս Սիւնեցի մատենագրի կողմէ՝ 8րդ դարու եւ ապա Ստեփանոս Լեւնացիի կողմէ՝ 17րդ դարուն:

Թէեւ Աստուածաբանութեան տեսակէտէ շատ կարեւոր գործեր են վերոյիշեալները, սակայն այսօր Հաստատուած է, որ այս գիրքերը առաջին դարուն ապրող Դիոնեսիոսի գործերը չեն, այլ Հինգերորդ դարու վերջերը կամ վեցերորդին սկիզբները ապրող մեծ մտաւորականի մը, որ գրած է զանոնք յանուն Արիսպագացիի: Այնպէս որ, երբ ընդունինք, որ այս գիրքերը Պօղոս Առաքեալի աշակերտ Աթենացի Դիոնեսիոսինը չեն, այն ատեն ինքնին մէջտեղէն կը վերնայ անոր «Եկեղեցւոյ վարդապետներէն» մէկը լինելու հանգամանքը, եւ կը վերածուի Աթէնքի առաջին եպիսկոպոսի սովորական դիրքին, եւ մեր տօնացոյցին մէջ իր միակ եւ շիտակ տեղը կը մնայ Խաչի Ե. Կիրակիին յաջորդող Հինգշաբթի օրը, ուր արդարեւ կը տօնուի ան Պօղոս Առաքեալի երկու կարեւորագոյն աշակերտներուն՝ Տիմոթէոսի եւ Տիտոսի հետ:

Արեւմտեան ականդութիւնը կը տանի Դիոնեսիոսը մինչեւ Փարիզ՝ ընելու համար զայն Ֆրանսայի առաջին լուսաւորիչներէն մէկը եւ Փարիզի առաջին եպիսկոպոսը: Կը ձերբակալուի եւ կը գլխատուի տեղ մը, որ մինչեւ այսօր կը կոչուի «Մօնմարթըր»՝ Մարտիրոսաց Բլուր: Ու տակաւին կ'աւանդուի, որ գլխատեալ մարմինը ոտքի կ'ելլէ, կ'առնէ իր գլուխը ձեռքերուն մէջ ու կը քալէ մինչեւ տեղ մը, որ այսօր կը կոչուի իր անունով Սէն-Տընի, ուր ապա շինուած է փառաւոր տաճար մը եւ ուր թաղուած են Ֆրանսայի թագաւորներէն եւ իշխաններէն շատեր, որոնց կարգին նաեւ մեր տարաբախտ Լեւոն Զ. Թագաւորը Կիլիկիոյ:

Ներկայ տեսակէտը սակայն այն է, որ Փարիզի այս եպիսկոպոսը բոլորովին տարբեր մէկն է եւ կը գործէ Գ. դարու կէսերուն եւ նահա տակուած է արդարեւ Փարիզի մէջ 258ին եւ շփոթուած է Առաքելական դարու Դիոնեսիոսին հետ, հաւանաբար նոյն անունը ունեցած ըլլալուն համար:

Յոյնք կը տօնեն Դիոնեսիոսը Հոկտ. 3ին, Լատինք՝ Հոկտ. 9ին:

Իսկ Ռեթէոսի (կամ Յերեթիոսի, որմէ՝ Յերեթիկ փաղաքշական անունը) պատմականութիւնը կը դառնայ կասկածելի. որովհետեւ ան կը ներկայանայ Դիոնեսիոսի գործերուն մէջ միայն՝ իբրեւ անոր ուսուցիչը եւ առաջնորդը: Այս գիրքերէն դուրս՝ ուրիշ ոչ մէկ տեղ յիշուած կը գտնենք Ռեթէոս Աթենացի անունով մեծ միտք մը կամ սուրբ մը, որ արժանի եղած ըլլայ գլխաւորելու Եկեղեցիի «Երկոտասան վարդապետներուն» այլապէս պանծալի փաղանգը: Յոյնք եւ Լատինք կը յիշատակեն զայն Հոկտ. 4ին:

3. ԲԱԳԱՐԱՏ ՏՕՌՈՄԵՆՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Բագարատ կը ներկայացուի իբրեւ առաջին եպիսկոպոսը Սիկիլիա կղզիի Տօռոմէն նշանաւոր քաղաքին, որուն լատինական ձեւն է Տաւրոմենիոն կամ Տաօրմինա: Իսկ սուրբին անունը լատինական ձեւով Բաւնգրատիոս է, որ Բաւնգրատ ձեւով ալ կը գործածուի: Ծնած կը նկատուի Անտիոքի մէջ եւ աշակերտած Պետրոս Առաքեալի, որուն կողմէ ձեռնադրուելով կը ղրկուի Սիկիլիա, որուն առաջին լուսաւորիչը կը ճանչցուի ան: Դէպի Սիկիլիա ճամբորդութեան ընթացքին քրիստոնեայ կը դարձնէ իր ճամբորդած նաւին նաւապետը եւ ղեկավարը: Երբ կը հասնի կղզի, տեսնելով այնտեղ տիրող կռապաշտութիւնը՝ առաջին գործը կ'ըլլայ «ձեռքերը վեր բարձրացնելով աղօթել Աստուծոյ՝ մոլորած ժողովուրդին համար... եւ ապա կը սկսի երանելին Բագարատ քարոզել, սորվեցնել եւ մեծամեծ սքանչելիքներ գործել»:

Նախ Տօրոմենայի քաղաքապետը դարձի բերաւ եւ որուն գործակցութեամբ կործանեց քաղաքին գլխաւոր կուռքերը: Մեր Յայսմաւորքին մէջ շատ ընդարձակ կերպով հինգ-վեց երկսիւնակ մեծկակ էջերով եւ հեքեաթախառն ձեւով կը պատմուի քաղաքի կուռքերու կործանման պատմութիւնը եւ բնակչութեան դարձի գալը: «Հրամայեց ժողովուրդին եօթը օրուան սրբապահութիւն, ապա երախայացուց զանոնք (այսինքն մկրտութեան համար պատրաստեց) եւ սորվեցուց ճշմարտութեան խօսքը»՝ Աւետարանը: Հուսկ ապա պատուիրեց, որ ամէն ոք նոր եւ մաքուր սպիտակ զգեստ հագնի... տարաւ զանոնք գետ եւ մկրտեց ու հաղորդեց»: Ու Յայսմաւորքը կ'եզրակացնէ. «Դարձի բերաւ Սիկիլիա կղզիի բոլոր քաղաքներէն եւ գիւղերէն

անթիւ անհամար բնակիչներ... Տօռոմէն քաղաքէն մկրտեց աւելի քան քառասուն հազար հոգի, իսկ միւս քաղաքներէն եւ գիւղերէն՝ հինգ հարիւր հազար»:

Հակառակ մեր Յայսմաւուրքներու մէջ այսքան ընդարձակ տեղ տրուելուն «Սիկիլիոյ Լուսատրչին»՝ լատին վկայաբանութիւններ չափազանց ժլատ են իր մասին: Կաթոլիկ Համայնագիտարանին մէջ տեղ չէ գրաւած իր անունը: Ներկայիս ալ տեղ չունի լատին օրացոյցի մէջ, ուր տեղ գրաւած է ուրիշ Բանգրատիոս մը, որ նահատակուած է 304 թուին Դիոկղետիանոսի Հալածանքներու ժամանակ:

Մեր Յայսմաւուրքը իր նահատակութիւնը կը ներկայացնէ այսպէս: Տօռոմէն քաղաքի մեծատուններէն մէկը, որ սրտով դարձի չէր եկած, այլ ծածկապէս կը շարունակէր իր կուսապաշտութիւնը, յարմար առիթի մը կը սպասէր մէջտեղէն վերցնելու Համար Բագարատ Եպիսկոպոսը: Օրին մէկը առանձին գտնելով զայն աղօթքի վրայ՝ սուրը կը խրէ անոր կունակին եւ կը փախչի: Սակայն քաղաքին դարձի եկած քաղաքապետը իմանալով այս չարագործութիւնը՝ իր կարգին չարաչար սպաննել կու տայ անօրէնը: Իսկ Բագարատի մարմինը մեծ յարգանքով կ'ամփոփէ տապանի մէջ. «Եւ է բարեխօս եւ օգնական ոչ միայն Սիկիլիա կղզոյն, այլեւ ամենեցուն, որք կատարեն գիշատակ նորա»:

Յոյնք կը տօնեն Յուլիս 9ին, Լատինք տօնած են ժամանակին Ապրիլ 3ին, մենք՝ Յիսնակաց Ա. Կիրակիի յաջորդ Հինգշաբթին՝ Կղեմէս Հայրապետի հետ:

4. ԿՂԵՄԷՍ ՀՌՈՎՄԻ ՀԱՅՐԱՊԵՏ

Երրորդ կամ չորրորդ յաջորդը Պետրոս Առաքեալի՝ իբրեւ եպիսկոպոս Հռովմի: Կղեմէս Հայրապետ նշանաւոր է եկեղեցական պատմութեան մէջ իբրեւ առաջինը «Առաքելական հայրեր» անունով ծանօթ մատենագիրներու փաղանգին, որոնց գրութիւնները մեծ լոյս կը սփռեն առաջին երկու դարերու քրիստոնէական սովորութեանց, կենցաղի ու մանաւանդ աստուածաբանութեան ու եկեղեցական պատմութեան վրայ:

Ոմանք կը նոյնացնեն զայն Պօղոս Առաքեալի կողմէ յիշուած «Կղեմէսին» հետ, իբրեւ մէկը իր գործակիցներէն, «որք յաւատարանին նահատակեցան ընդ իս Կղեմաւ Հանդերձ» (Փիլ. Դ. 3): «Նահատակեցան» այստեղ չի նշանակեր մարտիրոսացան, այլ՝ առաջ նետուեցան եւ արիաբար աշխատեցան Աւետարանի տարածման համար:

Կղեմէս Հայրապետին կը վերագրուին բազմաթիւ գրութիւններ, որոնց մեծ մասին կեղծ ըլլալը հաստատուած է այսօր: Իր միակ եւ անվիճելի գործը կը նկատուի Կորնթոսի Եկեղեցիին 96 թուին գրած կարեւոր մէկ նամակը՝ անոնց մէջ ծագած ինչ ինչ վէճեր հարթելու համար:

Մեր Յայսմաւուրքը կը ներկայացնէ զայն իբրեւ մէկը, որ խորապէս հմուտ էր «հելլենական դպրութեան»: Եւ կը պատմէ, որ Կղեմէս նաւաբեկութենէ մը ազատելէ յետոյ կը հանդիպի Հռովմի մէջ Պետրոս Առաքեալի, անկէ դարձի կու գայ եւ կը ստանայ ձեռնադրութիւն եւ կ'ըլլայ Աւետարանի մեծ քարոզիչ, ինչպէս նաեւ՝ դարձեալ Յայսմաւուրքի բառերով՝ «գրող Հրամանադրութեան կանոնաց Արքոց Առաքելոց»: Այս խօսքը ակնարկութիւն է Ընդհանրական Եկեղեցոյ կանոնադրութեան մէջ կարեւոր տեղ գրաւող 85 կանոններու խումբի մը, որ թէեւ կը կոչուի որպէս «Բ. Առաքելական կանոններ», եւ որ սակայն ծանօթ է նաեւ «Կաճնճը Կղեմայ» անունով, եւ որ մաս կը կազմէ նաեւ Հայց. Եկեղեցոյ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԻՆ (տես ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ, աշխտ. Վազգէն Յակոբեանի, 1964, էջ 67):

Ըստ մեր Յայսմաւուրքին, որ բաղդատմամբ Տօռոմենոյ գրեթէ առասպելական եպիսկոպոսին՝ շատ ժուժկալ է պատմական այս անձի մասին, հանուած է Դոմետիանոս Հալածիչ կայսեր առջեւ, ուր քաջաբար խոստովանած է «Քրիստոսի աստուածութիւնը» եւ այդ իսկ պատճառով ենթարկուած է ծանր տանջանքներու: Ի վերջոյ ծովամոյն մահուամբ վերջ տրուած է իր կեանքին Հաւանաբար 98 թուականին:

Մեր Եկեղեցին Կղեմէսի յիշատակը կը կատարէ վերոյիշեալ Բագարատ Եպիսկոպոսի հետ Յիսնակաց Ա. Կիրակիի յաջորդող Հինգշաբթի օրը, իսկ Յոյնք եւ Լատինք կը տօնեն զայն Նոյ. 23ին: Ոչ մէկ հետքի հանդիպեցանք, որ իր գործերը, առնուազն «Առ Կորնթացիս» թուղթը, հայերէնի թարգմանուած ըլլայ:

5. Ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Ա Ն Տ Ի Ո Ք Ի Հ Ա Յ Ր Ա Պ Ե Տ

Ի գնատիրոս՝ երկրորդ եպիսկոպոսը Անտիոքի, Ջմիւռնիոյ Պողիկարպոս Հայրապետին հետ աշակերտած կը նկատուի Յովհաննէս Աւետարանիչին, հաւանաբար Եփեսոսի մէջ: Կոչուած է «Աստուածազգեաց», որմէ ծագում առած կ'երեւի այն աւանդութիւնը, թէ Ի գնատիրոս այն մանուկն էր, զոր Յիսուս իբրեւ օրինակ խոնարհութեան «առաւ ու կեցուց իր աշակերտներուն մէջ եւ ապա իր գիրկը առնելով» օրհնեց զայն (Մրկ. Թ. 35): Եթէ ընդունինք, որ 5-6 տարեկան էր Յիսուսի գրկած ատեն, այն ատեն աւելի քան 80 տարեկան եղած կ'ըլլայ 115ին իր նահատակութեան տարին, երբ կատարեց երկար ճամբորդութիւն մը Անտիոքէն Հռոմ, ինչ որ դժուար պիտի ըլլար այդ տարիքի ծերունիի մը համար (ոմանք իր նահատակութիւնը կը դնեն 107ին): Հետեւաբար ըստ մեզի՝ այդ տիտղոսը պէտք է առնել իր հոգեւոր իմաստով՝ իբրեւ մէկը, որ արդարեւ եւ իրաւամբ իր վրայ «հազած» էր Քրիստոսը, ինչպէս կը պատուիրէ Պօղոս Առաքեալ. «Զգեցարուք զՏէր Յիսուս Քրիստոս» (Հռմ. ԺԳ. 14), կամ՝ «ԶՔրիստոս զգեցեալ էք» (Գղտ. Գ. 27): Արդարեւ Ի գնատիրոս Հայրապետի մասին մեր գիտցածները եւ իր գրական գործերը կը հաստատեն, որ ամբողջութեամբ եւ հոգեւին Աստուծոյ նուիրուած անձ մըն էր ան՝ իտէպլ Հովիւ մը եւ Քրիստոսի քաջ զինուոր մը: Այնպէս որ, երբ Դոմետիանոսի հալածանքները պայթեցան նաեւ Անտիոքի մէջ 95ական թուականներուն, երբ ինք Անտիոքի եպիսկոպոսն էր արդէն, գրեթէ ամէն տեղ կը հասնէր՝ յոյս եւ քաջութիւն ներշնչելով իր հօտին եւ զօրացնելով տկարանալու հակամէտ եղողները:

Ի գնատիրոսի կենանքին մեզի ծանօթ գլխաւոր գրուագն է Անտիոքէն Հռոմ իր երկար ճամբորդութիւնը, որ պահուած է «Մարտիրոսութիւն Ի գնատիրոսի» անուն գրութեան մէջ, որ կարծես թէ պատրաստուած է ականատեսի մը կողմէ՝ հաւանաբար գրուած իրեն ընկերացողներէն մէկին կողմէ:

Երբ Տրայանոս Կայսր (98-117) դէպի արեւելք կատարելիք արշաւանքի մը ընթացքին Անտիոք կը գտնուէր, անոր ներկայութեան հանուեցաւ Ի գնատիրոս՝ թէ իբրեւ անաստող կայսերական հրովարտականներուն եւ թէ ուրիշները խրախուսող, որ չհպատակին այդ հրովարտականներուն, որոնք կը հրաւիրէին ամէնքը պաշտամունք մատուցանել

պետական աստուածներուն: Ի գնատիրոս քաջաբար պաշտպանեց Քրիստոնէութիւնը եւ հերքեց կռապաշտութիւնը հիանալի պերճախօսութեամբ մը: Կայսրը չկարենալով տեղւոյն վրայ որոշում տալ՝ հրամայեց շղթայակապ Հռոմ դրկել զայն:

Ճամբորդութեան տաժանքներու մասին գաղափար մը կը կազմենք իր առ Հռոմ մայրցիս գրած թուղթէն, ուր կը հաստատէ թէ՛ «Սուրբալէն Հռոմ ամբողջ ճամբորդութեան ընթացքին պայքարեցայ վայրի գազաններու հետ»՝ ականարկելով իրեն ընկերացող տասը զինուորներու: «Գիշեր եւ ցերեկ կապուած մնացի տասը ընձառիւծներու մէջ, որոնք աւելի կը կատղէին, երբ իրենց հանդէպ ագնիւ վերաբերմունք ցոյց կը տրուէր»: Հակառակ իր տառապանքներուն եւ հակառակ իբրեւ ամբաստանեալ եւ ձերբակալեալ տարուելուն՝ իր ճամբորդութիւնը սակայն կարծես յաղթական գնացք մը եղաւ, որովհետեւ իր ժամանումը ամէնուրեք կանխօրօք արդէն իսկ տարածուած կ'ըլլար, եւ քրիստոնեայ ժողովուրդի բազմութիւններ կը դիմաւորէին զայն մեծ յարգանքով: Ի վերջոյ հասաւ Ջմիւռնիա՝ Ի գմիր, որուն եպիսկոպոսն էր իր աշակերտակիցը Պողիկարպոս: Աստուծոյ նախախնամութեամբ պէտք եղաւ երկար մնալ Ջմիւռնիա, ինչ որ ոչ միայն առիթ մը եղաւ չարչարուած Հայրապետին քչիկ մը շունչ առնելու, այլ նաեւ երջանիկ պատեհութիւն մը՝ որ շրջակայ քաղաքներու քրիստոնեաներ ալ այցելեն իրեն եւ լսեն բացառիկ շնորհներով օժտուած Եկեղեցիի այս պատկառելի հովիւր: Ինք ալ օգտուելով այս դադարէն՝ զանազան նամակներ գրեց շրջակայ քաղաքներու քրիստոնեաներուն՝ յորդորելով, որ հպատակ մնան իրենց եպիսկոպոսներուն եւ զգոյշ ըլլան եւ չվարակուին այն օրերուն տարածուած ինչ ինչ հերետիկոսական գաղափարներէն: Այս նամակները լեցուն են քրիստոնէական սիրոյ ագնիւ ոգիով, հովուական հոգածութեամբ եւ առաքելական նախանձայուզութեամբ: Գրեց նաեւ Հռոմի Եկեղեցիին, ուր ի միջի այլոց կը զգուշացնէր զանոնք, որ չմիջամտեն իր ազատութեան համար եւ չզրկեն զինք մարտիրոսական պսակէն: Ի վերջոյ ծովի եւ ցամաքի երկար ճամբորդութեամբ հասաւ Հռոմ, ուր արդարեւ իրականացաւ յանուն Քրիստոսի մարտիրոսանալու իր մեծ փափաքը: Նետուեցաւ գազաններուն առջեւ Կոլոսիումի ամփիթատրոնին մէջ եւ բզբտուեցաւ առիւծներէ:

Եւրոպացի հեղինակ մը իր մասին հետեւեալ խորհրդածութիւնը կ'ընէ. «Իրեն տրուած երեք տիտղոսները՝ Առաքեալ, Եպիսկոպոս (վերակացու) եւ Մարտիրոս, լիովին արդարացուց Իգնատիոս իր առաքելատիպ ուժեղ քարոզութեամբ ու գործունէութեամբը եւ անսեղիտալի արիւթեամբը: Իր գլխաւոր յատկանիշներն էին պարտակա-նութեան խանդավառ նուիրում, զոհողութեան հզօր ոգի եւ անսահման համարձակութիւն Քրիստոնէական կրօնքի պաշտպանութեան մէջ: Իր հոգատարութեան յանձնուածներու հոգեւոր բարիքին համար ցոյց տուած իր խանդը կը ճառագայթէ իր նամակներու ամէն մէկ տողին մէջէն: Շատ արթուն էր, որ չըլլայ թէ հաւատացեալներ վարակուին այդ օրերուն իրենց գլուխը ցցող հերետիկոսութիւններէն. կ'աղօթէ անոնց համար, որպէսզի անոնց հաւատքը եւ քաջութիւնը չպակսին հալածանքներու ու փորձութեան ժամերուն. շարունակ կը յորդորէ, որ անայլալլ հնազանդութիւն ցուցաբերեն իրենց եպիսկոպոսներուն հանդէպ. մեծ փափաքով կը ցանկայ մարտիրոսութեան պսակին, որ-պէսզի իր արիւնը առաւել շնորհներ պտղաբերէ իր ժողովուրդի սիր-տերուն մէջ: Այս բոլորով կը մարմնացնէ Իգնատիոս հոգիներու քաջ ու հարագատ հովիւր, որ ինքզինքը կը զոհէ ոչխարներուն համար»:

Իր նամակները, որոնցմէ առնուազն եօթը հատ հասած են մեզի, անհատնում հանք են առաքելական դարու Քրիստոնէութեան ուսուց-ման եւ սովորութեանց մասին: Իգնատիոսն ալ, ըլլալով երկրորդը «Առաքելական հայրերուն», ամէնէն կարեւոր օղակներէն մէկն է այս խումբին եւ Եկեղեցիի մեծ հայրերուն միջեւ: Ապրած ու գործած ըլլալով այն քաղաքը՝ Անտիոք, որ Երուսաղէմէն յետոյ առաջին կա-րեւորագոյն կեդրոնը եղաւ քրիստոնէութեան, լսած ըլլալով անձամբ Առաքեալներէն կարեւորագոյնները՝ Պետրոսը, Պողոսը եւ Յովհան-նէսը՝ իր վկայութիւնները քրիստոնէական ճշմարտութեանց մասին պէտք է ունենան իրենց կարեւորագոյն կշիւր: Կարեւոր է գիտնալ թէ՛ Եկեղեցիի հիմնական բոլոր ուսուցումները, որոնցմէ ոմանք ետքի ժամանակներու յաւելում կը կարծեն բողոքական կամ արմատական քննադատները, գրեթէ ամբողջութեամբ, առնուազն իրենց ընդհանուր գիծերուն մէջ, կը գտնուին իր եօթը թուղթերուն մէջ, որոնց հարա-գատութեան մասին ոչ մէկ տարակոյս յարուցուած է: Կրնանք թուել անոնցմէ քանի մը հատը.

1.- Եկեղեցին աստուածային տեսանելի հաստատութիւն մըն է, որուն նպատակն է հոգիներու փրկութիւնը. բոլոր անոնք, որ կը բաժ-նուին անկէ, կը խզեն իրենց կապը Աստուծմէ: Եկեղեցին սուրբ է, մէկ է, ընդհանրական է, անսխալական է:

2.- Եկեղեցիի նուիրապետութիւնը հաստատուած է Քրիստոսի կողմէ եւ ունի եռեակ նկարագիր՝ վարչական, սրբագործական ու ծա-ռայական, որոնց համապատասխան կարգերն են եպիսկոպոսութիւն, քահանայութիւն եւ սարկաւազութիւն: Բնականօրէն ասոնց մէջ բարձրագոյնն է -աստուածային տնօրէնութեամբ- եպիսկոպոսութիւ-նը, որմէ կը ծագի կարեւորութիւնը եպիսկոպոսութեան՝ իբրեւ Եկեղեցիի միութեան կեդրոնը եւ մարմնացումը:

3.- Կուսակրօնութեան առաքինութիւնը եւ ուխտը գերազանց է սովորական կենցաղէն:

4.- Ամուսնութիւնը կրօնական նկարագիր ունի:

5.- Միացեալ աղօթքը մեծ արժէք կը ներկայացնէ:

6.- Հերետիկոսութիւնը Եկեղեցիին մեծագոյն վտանգն է:

Ու տակաւին ուրիշ բազմաթիւ վարդապետական ու գործնական կէտեր, որոնք կը հաստատեն, թէ Եկեղեցին հիմնականին նոյն եղած է, որքան իր ժամանակին՝ առաջին դարուն, նոյնքան՝ յաջորդող դարերուն:

Իգնատիոսի գրեթէ բոլոր թուղթերը՝ վաւերականներն ու անվաւեր նկատուածները՝ թիւով տասներեք հատ, թարգմանուած են հայերէնի եւ դարուն, տպագրուած 1783ին Ի Վ. Պոլիս:

Մենք կը տօնենք զայն Յիսնակաց Դ. Կիրակիին յաջորդող Երկու-շաբթին, Դեկտ.ի կէսերուն. նոյն է պարագան գրեթէ բոլոր միւս Եկե-ղեցիներու մէջ. Լատինք եւ Ասորիք՝ Դեկտ. 17ին, Յոյնք՝ Դեկտ. 20ին:

6. ՊՈՂԻԿԱՐՊՈՍ* ՋՄԻԻՌՆԻՈՅ ՀԱՅՐԱՊԵՏ

Պողիկարպոս կը նշանակէ յունարէն բազմապատուող եւ արդարեւ նախնական եկեղեցիի բազմարդիւն հայրապետներէն մէկն է: Ծնած կը նկատուի 70 թուականին եւ աշակերտած՝ Յովհաննէս Աւետարան-չի, որ այդ թուականներուն եւ անկէ յետոյ երկար տարիներ կը գտնուէր Եփեսոս, եւ անկէ ձեռնադրուած կը նկատուի իբրեւ եպիսկոպոս Ջմիւռնիոյ: Այդ դիրքի վրայ՝ դարձաւ օրուան ամէնէն հեղինակաւոր դէմքը ոչ միայն Եգէականի շրջանի մէջ, այլ նաեւ իր ժամանակակից Քրիստոնէական եկեղեցիի մէջ: Իր կեանքին ու կորովին կարեւոր մէկ մասը յատկացուց պայքարելով ընդդէմ ժամանակակից հերետիկոսներու:

Պողիկարպոսն ալ, Իգնատիոսի պէս, ճամբորդութիւն մը ունեցաւ դէպի Հռովմ, որուն նպատակն էր հասկացողութեան մը գալ Հռովմի Անիկտոս Եպիսկոպոսին հետ Ջատիկի տօնակատարութեան միօրինակութեան մասին: Որովհետեւ Եգէականի շրջանին մէջ սովորութիւն եղած էր Ջատիկը տօնել Նիսան ամսուան 14ին, հոգ չէ թէ շաբթուան որ օրը հանդիպէր այդ ուրիշ խօսքով՝ Ջատիկը կը կատարէին հրէից հետ, Պասքի տօնին, մինչդեռ միւս քրիստոնեաներ՝ յաջորդ Կիրակիին: Պողիկարպոս՝ իբրեւ Եգէականցիներու կամ «Ջորեքտասանականներու» ներկայացուցիչ, փորձեց համոզել Հռովմի եպիսկոպոսը, որ իրենց հետ կատարեն Ջատիկը: Անիկտոս մերժեց: Բայց որովհետեւ երկուստեք ալ բարի տրամադրութիւն կար եւ քրիստոնէական նոյն ոգին դեռ տիրապետող էր, ուստի համաձայնեցան, որ իւրաքանչիւր եկեղեցի ընթանայ ըստ իր նախկին սովորութեան:

Վերադարձին կայսերական հալածանքի հրաման մը ելած էր արդէն. ուստի ձերբակալուեցաւ եւ հրաւիրուեցաւ ուրանալ Քրիստոսը. պատասխանեց պատկառելի հայրապետը. «Տճ տարիներէ ի վեր կը ծառայեմ Քրիստոսի, ոչ միայն վնաս մը չեմ տեսած Անկէ, այլ շատ մը բարիքներու արժանացած եմ. ես ի՞նչ պէս կրնամ ուրանալ իմ Թագաւորս եւ Փրկիչս»: Դատաւորը հրամայեց կրակով այրել զայն: Կպեցին ձեռքերը եւ ոտքերը, եւ ինք աչքերը երկինք բարձրացուցած՝

* Պողիկարպոս անունը Պօղոս անուան նմանութեամբ օ տառով գրելը (Պօղիկարպոս) սովորական դարձած սխալ մըն է, գոր հոս կը շտկեմք: իսմք.

կ'աղօթէր: Երբ կրակին մէջ նետեցին զայն, «բոցը բարձրացաւ նաւի առագաստի մը պէս, որ կ'ուռի հովէն, եւ կամար մը շինեց անոր վրայ. եւ սուրբը կարծես վրանի մը ներքեւ էր եւ այդ վիճակի մէջ հոգին աւանդեց: Դահիճներ երբ տեսան, որ չայրեցաւ անոր մարմինը, կարծեցին, թէ դեռ ողջ է, եւ սուրով խոցեցին զայն եւ ապա կրկին կրակ արծարծելով՝ այրեցին անշունչ մարմինը 155ին»: Իսկ հաւատացեալներ հաւաքեցին մնացեալ ոսկորները եւ պատուով թաղեցին: Պողիկարպոսէն մնացած է թուղթ մը՝ առ Փիլիպեցիս, որուն հայերէնի թարգմանուած ըլլալու հետք մը չգտանք:

Մենք կը տօնենք զայն Յիսնակաց Բ. Կիրակիի յաջորդ երկուշաբթին, Դեկտ.ի սկիզբները, Յոյնք եւ Ասորիք՝ Փետր. 23ին, Լատինք՝ Յուն. 26ին:

Իբրեւ ծանօթութիւն կ'աւելցնենք, որ Ջմիւռնիոյ եկեղեցին գրեց երկար նամակ մը, ուր կը նկարագրուէր Պողիկարպոսի մարտիրոսութիւնը, Փոքր Ասիոյ ներքին նահանգներէն Պիսիդիոյ Փիլոմելիում քաղաքի եկեղեցիին: Այս նամակը պահուած է մինչեւ այսօր եւ իբրեւ այդ՝ քրիստոնէական մարտիրոսագրութեան առաջին գրաւոր վաւերագիրն է: Այդ վաւերագրին մէջ կը հաստատուի, որ Պողիկարպոս արժանացած է տարեկան յիշատակութեան, որով ան կը հանդիսանայ առաջին մարտիրոսը, որուն տարեկան յիշատակութիւնը կամ տօնակատարութիւնը կը հաստատուի պատմական ու գրաւոր վաւերագրով մը, որ կու գայ Բ. դարու կէսերէն: Յիշատակութիւնը մը՝ որ ցայսօր կը շարունակուի Քրիստոնէական հին ու պատմական բոլոր եկեղեցիներու կողմէ:

7. ԵՐԱՆՈՍ (ԿԱՄԻՐԵՆԻՈՍ) ԵՊԻՍԿՈՊՈՍ ԼԻՈՆԻ

Իր մանկութեան տեսած եւ ունկնդրած է Պողիկարպոս Հայրապետը, որմէ կը հետեւցուի, որ ծնած է Իզմիր կամ Եգէականի շրջանի ուրիշ վայր մը, շուրջ 130ին: Ուսմունքը ստացած է Հռովմի մէջ. երէց ձեռնադրուած է Լիոն քաղաքի եւ ապա յաջորդած իր եպիսկոպոսին, երբ սա մարտիրոսացաւ 177ին:

Մեր Յայսմաւորքը կը կոչէ զայն «մեծ սիւն աստուածաշտուութեան հաւատոց, Աստուածազգեաց հայրապետ եւ վարդապետ Եկեղեցւոյ, ախոյեան ճշմարտութեան եւ յաղթահարիչ հերետիկոսաց»:

Այս բոլորը եղած է արդարեւ Իրենիոս իր առաքելական ու աւետարանչական գործունէութեամբ՝ դարձի բերելով հեթանոսներէ շատ շատեր, ու մանաւանդ իր գրական գործերով, որոնցմով լուսաւորեց եւ ճոխացուց ուղղափառ Եկեղեցին: Շատ գիրքեր գրած է, որոնցմէ սակայն մնացած է լոկ «Ընդդէմ հերետիկոսաց» իր կարեւոր գործը լատիներէն թարգմանութեամբ: Իսկ ուրիշ մը՝ «Ապացոյցք Առաքելական քարոզութեան», կորուստէ փրկուած է լոկ հայերէն թարգմանութեամբ, որ եւրոպական լեզուներու թարգմանուելով՝ ծանօթացուած է այլ գիտական ու կրօնական շրջանակներու միւս բազմաթիւ գործերէն լոկ հատուկտորներ յիշուած են ուրիշ մատենագիրներու կողմէ:

Իրենիոս վերջին օղակն է, որ Առաքելական շրջանի հայերը կը կապէ յետագայ մեծ հայրերու: Օղակ է միաժամանակ Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ: Մտունդով ու մտայնութեամբ արեւելքցի, իսկ ուսմամբ եւ գործունէութեամբ արեւմուտքցի՝ իր երկերը գրած է յունարէն լեզուով: Երկիցս միջնորդած է ի նպաստ արեւելքցիներու՝ Հռովմի Աթոռին մօտ, երբ վերջինս խիստ վարուած է Արեւելքի մէջ իրմէ տարբեր մտածողներու հանդէպ: Արեւմուտքի առաջին մեծ աստուածաբանն է Իրենիոս:

Իր վախճանի մասին Արեւմուտքի մէջ գրեթէ ոչինչ գիտեն. իսկ մեր Յայսմաւուրքը կը հաստատէ, որ վկայական մահուամբ կնքած է իր կեանքը: Երբ «կը քաջալերէր Քրիստոսի խոստովանողները, որ պիտո՞ղ կենան իրենց հաւատքին մէջ եւ արիւրաբար դիմաւորեն մահը, ինք ալ ձերբակալուեցաւ ու բանտարկուեցաւ: Երբ հանուեցաւ դատաւորի ներկայութեան, համարձակ վկայեց Քրիստոսի աստուածութեան մասին, որուն համար զանազան տանջանքներու ենթարկուեցաւ. երբ չուրացաւ Քրիստոսը եւ չգոհեց կուռքերուն՝ սուրով սպաննեցին զայն» 202ին:

Մենք կը տօնենք զայն Խաչի Դ. Կիրակիի յաջորդող Բշին, Լատինք կը տօնեն Յուլիս 28ին, Յոյնք՝ Օգոստոս 23ին:

8. ՓՈԿԱՍ ՀԱՅՐԱՊԵՏ

Եպիսկոպոս Սեւ Մովի եզերքի Սինոպ քաղաքին: Զաւակն է մեծահարուստ նաւագործի կամ նաւապետի մը: Աստուծմէ շնորհ գտաւ տղայ տարիքէն եւ աղօթքով ու պահքով շարունակ ինքզինքը զօրա-

ցուցած կը պահէր ամէն տեսակ փորձութեանց դէմ: Մինչեւ իսկ հրաշագործի անուն հանեց այդ մատաղ տարիքին: Երբ չափահաս եղաւ, ինքզինք նուիրեց բարեգործութեան եւ քարոզութեան, «դեւեր կը հալածէր, կոյրեր կը լուսաւորէր, իր ինչքը աղքատներուն կը բաշխէր»: Երբ Սինոպի եպիսկոպոս եղաւ, հանուեցաւ Տրայիանոս Կայսեր առջեւ Ամասիոյ մէջ: Երբ չուրացաւ զՔրիստոս, հրամայեց կայսրը սրամահ ընել զայն, 117 թուին:

Արեւմուտքի մէջ մեծ ժողովրդականութիւն կը վայելէ ծովայիններու մօտ՝ իբրեւ նաւագործի զաւակ կամ իր անունը նոյն ըլլալով այն ծովային կենդանիին հետ, որ Յունաց եւ մեր մէջ փոկ անունով ծանօթ է, որ երբեմն ծովահորթ ալ կը կոչուի:

Մենք կը տօնենք Խաչի Դ. Կիրակիին յաջորդող Բշին, Երանոս Հայրապետին հետ, Յոյնք՝ Սեպտ. 22ին, Լատինք՝ Յուլիս 14ին:

9. ՄԻԻՌՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՐԵՏԷԻ

Մնած է Կրետէ կղզիի Ռաւիիա քաղաքը, մերձ այսօրուան Հիրակլիոն քաղաքին, երրորդ դարու կէսերուն: Պատուական ու մեծահարուստ քրիստոնեայի զաւակ: Մտաւ ամուսնական կեանք: Առատաձեռն էր եւ բարեգործ, զոր հաստատելու համար գողտր մանրավէպեր կը պատմուին իր մասին: Անգամ մը իր սխեռի արտը գողեր մտան, սակայն փուշերու մէջ ինկան եւ չկրցան ելնել. առաւօտուն ինք եկաւ, ազատեց զանոնք եւ սխեռով բեռնաւոր տուն դրկեց գողերը: Ուրիշ գողեր ալ իր կալը մտան, սակայն իրենց պարկերը չկրցան վերցնել: Առաւօտուն ինք եկաւ տուաւ անոնց կոնակը եւ ճամբեց՝ պատուիրելով, որ այլեւս գողութիւն չընեն: Հրաշագործութիւններ ալ կատարած է: Ահ ու սարսափ սփոռող վիշապ մը աղօթքով փչացուց: Ստիպողական գործի մը երթալու ատեն հանդիպեցաւ գետի մը, որ անցնելու ծանծաղ տեղ չուներ, խաչակնքեց եւ քշեց երկվարը. գետը երկուքի բաժնուեցաւ, եւ ինք անցաւ մէջէն:

Երբ իր ժամանակակից անուանի քրիստոնեաներ կը նահատակուէին, կը սպասէր, որ կարգը իրեն գար: Մարտիրոսանալու իր փափաքին չհասաւ հալածանքին դադրելովը: Ի վերջոյ իր քաղաքին եպիսկոպոսը եղաւ եւ սքանչելագործութեամբ հասաւ մինչեւ խորին

ծերուժիւն՝ հարիւր տարիքը, եւ խաղաղութեամբ կնքեց իր բարեպաշտ կեանքը:

Հայք կը տօնեն Խնաչի ժ. Կիրակիին յաջորդող Շաբաթ օրը, միւս երկու սքանչելագործ հայրապետներու՝ Գրիգորի եւ Նիկողայոսի հետ, Յոյնք եւ Լատինք՝ Օգոստոս 9ին:

10. ԲԱԲԵԼԱՍ ՀԱՅՐԱՊԵՏ ԱՆՏԻՈՔԻ

Թէ՛ն եւրոպական աղբիւրներ կը հաստատեն, որ Բաբելաս Անտիօքի եպիսկոպոս եղած է Գորդիանոս (238-244) Կայսեր օրով, սակայն Յունական աղբիւրներ եւ մեր Յայսմաւուրքը կ'ըսեն, որ «Նումերիանոս անօրէն արքայի օրերուն սուրբն Բաբելաս Անտիօք քաղաքի հայրապետն էր»։ Իսկ Նումերիանոս Կայսրը իշխած է 283-284:

Երբ Նումերիանոս Անտիօք կը գտնուէր, նախ «կուռքերու մեհնանները մտաւ եւ անոնց զոհեր մատոյց: Ապա ուզեց Աստուծոյ եկեղեցին ալ մտնել՝ արհամարհելու համար քրիստոնէական սուրբ պաշտամունքը»: Հաւատացեալներ երբ իմացան, որ կայսրը իրենց եկեղեցին կու գայ, շփոթի մատնուեցան եւ ուզեցին փախուստ տալ: Իսկ Բաբելաս զանոնք հանդարտութեան հրաւիրեց եւ ոչ ոքի արտօնեց, որ եկեղեցիէն ելլէ: Ինք առաջացաւ դէպի եկեղեցիի դուռը եւ արգիլեց կայսեր եկեղեցի մուտքը՝ ըսելով. «Արժանի չես պիղծ ձեռքերովդ, որոնք շաղախուած են կուռքերու զոհին արիւնով, Աստուծոյ եկեղեցին մտնել»: Կայսրը զայրացած հրամայեց վզին եւ ոտքերուն շղթայ զարնելով՝ քաշկռուել զայն քաղաքին մէջ եւ բանտ նետել:

Բանտին մէջ իրեն այցելեցին իր երեք մատաղ աշակերտները, զորս աստուածապաշտութեան մէջ կը դաստիարակէր սուրբ հայրապետը, եւ չէին ուզեր իրմէ բաժնուիլ: Նումերիանոս լսելով ասիկա՝ իր ներկայութեան հանել հրամայեց մանուկները եւ անոնց մայրը: Ուզեց ողորել զանոնք եւ տարհանողել, որ վերադառնան կուսապաշտութեան: Թելադրեց, որ նոյնը ընէ նաեւ մայրը՝ խոստանալով այս մանուկները իր անձնական հոգածութեան ներքեւ առնել: Թէ՛ տղաք եւ Թէ՛ մայրը, ընդհակառակը, իրենց կրօնքին եւ հայրապետին կապուած ըլլալը հաստատեցին վճռականօրէն: Այն ատեն կայսրը զայրանալով հրամա-

յեց, որ իւրաքանչիւր տղայ մտրակեն իր տարիքի թիւին համաձայն: Այս ալ անօգուտ անցաւ զանոնք տարհանողելու:

Ի վերջոյ իր ներկայութեան հանեց Բաբելասը եւ փորձեց ստիպել զայն, որ զոհէ կուռքերուն՝ սպառնալով, որ այլապէս պիտի ենթարկէր զայն աւելի ահաւոր չարչարանքներու եւ ի հարկին մահուան: Բաբելաս համարձակ յայտարարեց իր հաւատքը Քրիստոսի վրայ եւ վար զարկաւ կուսապաշտութեան սնտոսի կրօնքը: Չորսն ալ երկար տանջեցին: Ի վերջոյ գլխատմամբ նահատակուեցան Բաբելաս եւ իր երեք աշակերտները:

Մենք կը տօնենք Հոգեգալստեան Գ. Կիրակիի յաջորդող Երկուշաբթին, Լատինք՝ Յնվր. 24ին, Յոյնք՝ Սեպտ. 4ին:

11. ՍՏԵՓԱՆՈՍ ՀՌՈՎՄԱՅ ՀԱՅՐԱՊԵՏ

Ծնած է Հռոմ, որուն եպիսկոպոսը եղաւ 254ին եւ նահատակուեցաւ 257ին: Պատմականօրէն իր մասին մեր գիտցածը գլխաւորաբար իր վէճն է Կիպրիանոս Եպիսկոպոսի հետ, որ անվաւեր կը նկատէր հերետիկոսներու մկրտութիւնը, իսկ Ստեփանոս՝ վաւերական:

Իսկ մեր Յայսմաւուրքը կը ներկայացնէ զայն իբրեւ քաջ ու գործունեայ հայրապետ մը, որ հալածանքներու ատեն կը սրտապնդէր եւ կը քաջալերէր իր հօտը, որ ամուր կենան իրենց հաւատքին վրայ: Հեթանոսներէն շատ շատերը քրիստոնեայ դարձուց, որոնց կարգին նաեւ Նեմեսիոս անուն իշխան մը եւ իր դուստրը, որ կոյր էր: Երբ մկրտեց զանոնք, աղջկան աչքերը բացուեցան, որուն վրայ իշխանը յանձն առաւ սարկաւազ ձեռնադրուիլ: Կայսրը լսելով իշխանին քրիստոնեայ լինելը՝ նախ հրաւիրեց կուռքերու զոհել. երբ մերժեց՝ տանջանքներու ենթարկեց. երբ ամուր մնաց՝ նահատակել տուաւ իշխանը եւ իր դուստրը: Ասոնց հետ նահատակուեցաւ նաեւ ուրիշ իշխանաւոր մը Ոլոմպիոս անունով: Ապա նահատակուեցան այս երկուքին մատակարարները, որոնք եւս քրիստոնեայ եղած էին եւ իրենց տէրերուն ինչքերը աղքատներուն բաժնած էին: Ու կ'աւելցնէ Յայսմաւուրքը. «Ապա բռնեցին տասնըերկու հոգի եկեղեցականներէն, զորս չարաչար սպաննեցին»: Անուններն ալ կը տրուի ասոնց, որոնց յիշատակն է, որ տօնացոյցը միացուցած է Ստեփանոս Հայրապետին՝ «քահանայիցն եւ սարկաւազացն եւ ժողովրդոցն» յաւելումով:

Օրին մէկը երբ Ա. Պատարագ կը մատուցանէր, զինուորներ պաշարեցին եկեղեցին ահագին աղմուկով եւ կ'աշխատէին խորտակել ղուռը, որ փակուած էր: Հագիւ թէ հաղորդած էր ներկաները եւ ինք ալ ճաշակած էր Ա. Հաղորդութենէն, երբ դռները խորտակեցին եւ ներս խուժեցին զինուորները եւ տեղւոյն վրայ սպաննեցին սուրբ հայրապետը: «Խառնուեցաւ իր արիւնը Քրիստոսի արեան հետ (այսինքն Ա. Հաղորդութեան հետ) իբրեւ առհասարակ յաւիտենապէս մասնակից դառնալու Քրիստոսի արքայութեան»: Հաւատացեալներ պատուով թաղեցին անոր մարմինը, որ Ը դարու կէսերուն փոխադրուեցաւ վանք մը, որ շինուած էր յանուն եւ ի պատիւ իրեն:

Հռովմէական Եկեղեցւոյ մէջ Ստեփանոս Հայրապետի կը վերագրուի այն տնօրէնութիւնը, որով կ'արգիլուի Ա. Խորհուրդներու ընթացքին գործածուած զգեստները գործածել առօրեայ կենցաղի ընթացքին, ինչ որ կը հաստատէ, որ մինչեւ Գ դարու կէսերը Ա. Պատարագը եւ այլ խորհուրդները կը կատարուէին սովորական զգեստներով:

12. ԳՐԻԳՈՐ ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾ

Մնած է ազնուական ընտանիքէ շուրջ 213ին, Պոնտոսի կամ Սեբաստիոյ շրջանին Նէոկեսարիա քաղաքը, որ հիմա Նիքար կը կոչուի: Կը ստանայ բարձր ուսմունք եւ մտադիր էր մասնագիտանալ օրէնսգիտութեան եւ հոետորութեան մէջ, սակայն Աստուծոյ նախախնամութիւնը իրեն համար տարբեր ասպարէզ մը տնօրինած էր: Իր քրոջ ամուսինը նշանակուեցաւ կուսակալ Պաղեստինի: Գրիգոր եւ իր եղբայրը ընկերացան իրենց քրոջ դէպի Պաղեստին, որուն վարչական կեդրոնն ալ կը կոչուէր Կեսարիա, որ զանազանելու համար միւս բազմաթիւ համանուններէն՝ կը կոչուէր Պաղեստինեան Կեսարիա: Որոգինէս՝ այդ դարուն ամէնէն հեղինակաւոր քրիստոնեայ մտաւորականը, Աղեքսանդրիոյ նշանաւոր քրիստոնէական բարձրագոյն վարժարանը փոխադրած էր այստեղ: Երկու եղբայրներ, պարզ հետաքրքրութենէ տարուած, ուզեցին ճանչնալ զայն: Այնքան դրականօրէն տպաւորուեցան Որոգինէսի խոր հմտութենէն եւ ուսուցանելու գրաւիչ մեթոտէն, որ որոշեցին իրենց ուսմունքը կատարելագործել իր մօտ, երբ Գրիգոր դեռ 20 տարեկան էր: Որոգինէս ազատաբար ու անկաշկանդ կ'ուսու-

ցանէր նաեւ Յունական բարձր իմաստասիրութիւնը եւ հոետորութիւնը: Ի վերջոյ յաջողեցաւ քրիստոնեայ դարձնել այս ուշիմ եւ լաւ նկարագրի տէր երկու եղբայրները, որոնք իր մօտ մնացին շուրջ 6-7 տարի եւ տիրացան իր ուսուցման եւ սորվեցնելու մեթոտին:

Նէոկեսարիա դառնալէ յետոյ ատեն մը եւս շարունակեց աշակերտել Կապադոկիան Կեսարիոյ Փիրմիլիանոս Եպիսկոպոսին, որմէ «ուսու զամենայն կարգ եւ զվարդապետութիւն եկեղեցականաց սահմանադրութեան»: Ամասիոյ մետրոպոլիտը Եպիսկոպոս ձեռնադրեց զայն իր քաղաքին՝ Նէոկեսարիոյ վրայ, ուր, կ'ըսէ պատմական աւանդութիւնը, հագիւ 17 քրիստոնեայ կար եւ իր մահուան ատեն հագիւ 17 հեթանոս մնացած էր: Իր անուան շուրջ հիւսուած են բազմաթիւ հրաշքեր, որոնցմէ շատեր պատմուած են Յայսմաւուրքի մէջ, որուն համար կոչուած է «ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾ», ինչ որ հաւաստիք մըն է իր բացառիկ անձնաւորութեան եւ ժողովրդականութեան:

264ին մասնակցեցաւ Անտիոքի ժողովին, որ գումարուած էր դատելու համար Պողոս Սամոսատցի հերետիկոսը: Հակառակ իր բարձր ուսմունքին՝ եղաւ աւելի գործնամիտ առաջնորդ մը Եկեղեցիին, քան աստուածաբան: Ձգած է բազմաթիւ գրական երկեր, որոնց առաջինն է Չատագովութիւն մը Որոգինէսի մասին, զոր կարգաց ի ներկայութեան մեծ իմաստասէր-աստուածաբանին, երբ պիտի բաժնուէր անկէ: Ունի նաեւ քրիստոնէական հիմնական ուսուցումները պարունակող գիրք մը՝ անհրաժեշտ՝ նորագարձ քրիստոնէից համար: Իր «Թուղթ Կանոնականը» լայն տեղեկութիւններ կը պարունակէ նախնական եկեղեցիի սովորութեանց մասին: Ունի վերջապէս «ԺՈՂՈՎՈՂ» գրքի մեկնաբանութիւն մը եւ Թէոպոմպոս Եպիսկոպոսի ուղղեալ նամակը մը, որ իմաստասիրական խօսակցութիւն մըն է Աստուծոյ բնութեան մասին: Գրիգոր Նիւսացիի գրած է անոր կենսագրութիւնը: Վախճանեցաւ խաղաղ մահուամբ 270ին: Իր գործերէն 10-12 կտոր թարգմանուած են դասական Հայերէնի:

Յոյնք եւ Լատինք կը տօնեն Նոյ. 17ին, մենք՝ Խաչի Ժ. Կիրակիի յաջորդող Շք. օրը:

13. ԵՐԱՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐՄԻՆԱՅԻ

Սերմինա կամ Սիրմիում քաղաքը Սլաօնիոյ, այսինքն ներկայ Եուկո-Սլափոյ, Հին քաղաքներէն և քրիստոնէական կեդրոններէն մէկն է: Դ. դարու սկիզբները՝ Դիոկղետիանոսի եւ Մաքսիմիանոսի հալածանքներու շրջանին, անոր եպիսկոպոսն է Երանոս կամ Իրի-նիոս: Չերբակալուեցաւ եւ հանուեցաւ երկրի կուսակալին առջեւ, ուր «կը խոստովանէր եւ համարձակ կը քարոզէր ճշմարիտ հաւատքը Յիսուս Քրիստոսի մասին»: Ուժգին չարչարանքներու ենթարկեցին ու բանտարկեցին: Ի վերջոյ երբ հաստատ մնաց իր կրօնքին վրայ, առաջնորդեցին քաղաքին կամուրջին վրայ, ուր աղօթելէ յետոյ գլխատուեցաւ:

Յոյնք կը տօնեն Նոյ. 6ին, Իսկ Լատինք՝ Օգոստ. 23ին, մենք՝ Խաչի Բ. Կիրակիի յաջորդ եջ.:

14. ԱՆԹԻՄՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԻԿՈՄԻԴԻՈՅ

Մաքսիմիանոս «ամբարիշտ արքայի» ժամանակ Նիկոմիդիոյ, այսինքն Իգմիտի եպիսկոպոս էր Դ. դարու սկիզբները: Իր մանկութե- նէն ի վեր կրթուած էր առաքինութեան մէջ, կուսակրօն եւ հուսկեր էր, եփուած ըլլալով գարեղէն հաց միայն կը գործածէր: Շատեր դարձի բերած էր հեթանոսներէ: Հալածանքներու պատճառով իր հաւատացեալներու հետ լիւս քաշուած էր: Կայսրը մարդ ղրկեց ձեր- բակալելու համար զայն. եկողները նախ հիւրասիրեց եւ ապա յայտ- նեց, որ ինքն է իրենց փնտռածը: Մարդիկ այնքան համակրած էին Անթիմոսին, որ խորհուրդ տուին չընկերանալ իրենց՝ «մենք կ'ըսենք, որ չգտանք զայն» ըսելով: Սակայն սուրբը յանձն չառաւ, այլ յօժա- րակամ գնաց անոնց հետ, ճամբան աւետարանեց զինուորներուն եւ դարձի բերաւ զանոնք: Հարցաքննութեան ենթարկուեցաւ համարձակ պատասխաններ տուաւ ենթարկուեցաւ անտանելի չարչարանքներու: Նետուեցաւ բանտ, ուր քարոզեց բանտարկեալներուն եւ շատեր դար- ձի բերաւ: Ի վերջոյ գլխատմամբ նահատակուեցաւ:

Յոյնք կը տօնեն Սեպտեմբեր 3ին, Լատինք՝ Ապրիլ 27ին, մենք՝ վերինին՝ Երանոսին հետ:

15. ԹԷՆՈՊՈՄՊՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ԹԷՆՎՆԱՍ ՎԿԱՅ

Յայտնի չէ մինչեւ Իսկ. թէ ո՛ր քաղաքի եպիսկոպոս է: Կ'ապրի Դիոկղետիանոսի ժամանակ: Երբ սա հրամայեց իր քաղաքի ժողո- վուրդին երկրպագել կուռքերուն, Թէոպոմպոս չկրցաւ հանդուրժել, այլ առաջ անցաւ ու մատնանշեց կուսակալութեան անմտութիւնը: Երբ թագաւորը կը հարցնէ, թէ ո՛վ է սա, կը պատասխանեն. «Սա է վարդապետն քրիստոնէից եւ է եպիսկոպոս»: Երբ թագաւորը զայրա- ցած կը հարցնէ. «Ի՞նչպէս համարձակեցար այս խօսքերը ըսել իմ ներկայութեան», Թէոպոմպոս պատասխանեց սաղմոսի խօսքով. «Վկայութիւն կու տամ Քրիստոսի մասին «առաջի թագաւորաց եւ ոչ ամաչեմ»»: Ասոր վրայ վառուած հնոցի մէջ նետեցին զայն, ուր անի- կա երեք մանուկներու օրհնութիւնը կ'երգէր: Իր չայրիլը կախարդու- թեան վերագրեցին եւ բանտ նետեցին, ուր քսան օր անսուաղ մնաց: Դարձեալ ելաւ թագաւորին առջեւ եւ անոր հարցումին պատասխա- նեց՝ ըսելով. «Իմ յոյսս հաստատուն է իմ խաչուած Աստուծոյս վրայ, սակայն քեզի յաւիտենական տանջանք կը սպասէ»: Աչքերը հանեցին եւ բանտ նետեցին, ուր շարունակեց անսուաղ մնալ: Ապա կանչեցին Թէոմիաս կախարդը, որուն մեծագումար ոսկի տալ խոստացան, եթէ յաղթահարէ Թէոպոմպոսի: Սակայն իր կախարդութիւնները ոչ մէկ վնաս հասցուցին սուրբին. ասոր վրայ Թէոմիաս յայտարարեց. «Մեծ է Աստուածն քրիստոնէից. եւ յաղթող է Անոր զօրութիւնը. կը հաւա- տամ Խաչեալ Յիսուս Աստուծոյ»: Թէոպոմպոս տակաւին շատ ուրիշ չարչարանքներու ենթարկուելէ յետոյ գլխատուեցաւ: Իսկ Թէոմիաս երբ ամուր մնաց իր հաւատքին վրայ, ողջ ողջ թաղելով նահատակե- ցին զայն:

Յոյնք կը տօնեն Յունուար 5ին, Լատինք՝ Մայիս 21ին, մենք՝ Յիսնակաց Դ. Կիրակիի յաջորդող Երկուշաբթին:

16. ԳԵՆԱՐԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Անունին լատինական ձևն է Եանուարիոս, Իսկ իտալականը՝ Կեն- ցարո: Մնած կը նկատուի Գ. դարու սկիզբները մեծահարուստ ծնող- քէ: Եպիսկոպոս եղաւ հարաւ՝ Իտալիոյ Բենեվենտ քաղաքի: Դիոկղե- տիանոսի հալածանքներու ընթացքին ձերբակալուեցաւ ու նահատա- կուեցաւ 305ին: Իր մարմինը բերուեցաւ Նաբոլի, որմէ յետոյ կղաւ

քաղաքին նշանաւոր պաշտպան սուրբը: Անոր արիւնը ցարդ կը պահուի այս եկեղեցիին մէջ յատուկ փոքր սրուակի մը մէջ, եւ որուն ամէն տարի Հազարաւորներ կու գան ուխտի կամ Հետաքրքրութեան Համար, վասնզի այս արիւնը, որ սովորաբար լերդացած, թանձրացած կը մնայ, սուրբի տօնական օրերուն անբացատրելիօրէն կը դառնայ «Հեղուկ եւ պղպջակներ կ'արձակէ, որպէս թէ թարմ արիւն եղած ըլլար»: Այս արիւնն է, որ Հանրահռչակ դարձուցած է Գենարիօսը Իտալիոյ եւ ամբողջ Կաթոլիկ աշխարհին մէջ:

Լատինք կը տօնեն Սեպտ. 19ին, Յոյնք՝ Ապրիլ 16ին, մենք՝ Յիսնակաց Բ. Կիրակիի յաջորդ երկուշաբթին:

17. ՊԱՐՍԱՄ ԿԱՄ ԲԱՐՍԻՄԷՆՈՍ ԵՊՍ. ԵԴԵՍԻՈՅ

Պարսամ անունով սուրբ մը կայ մեր տօնացոյցի մէջ, որ կը յիշատակուի Վարդավառի Դ. Կիրակիի եշ. օրը ՃԳՆԱԻՈՐՆԵՐՈՒ Հետ եւ իբրեւ ճգնաւոր: Նոյն է պարագան Ս. Պատարագի ընթացքին, ուր ան կը յիշատակուի «միանձնացելոց սրբոց առաքինասէր կրօնաւորաց» կարգին: Սակայն այդ անունով սուրբի մը յիշատակի Հետքին չկրցանք Հանդիպիլ մեր Յայսմաւուրքներու, ոչ ալ Լատին եւ Յոյն եկեղեցիներու օրացոյցներուն մէջ: Ատոր փոխարէն վերոյիշեալ երեք տեղերուն մէջ ալ կը գտնուի Բարսիմէոս Եպիսկոպոսի մը յիշատակութիւնը: Յոյնք եւ Լատինք կը տօնեն զայն Յնվր. 29ին կամ 30ին: Իսկ մեր Յայսմաւուրքի մէջ անոր յիշատակութիւնը դրուած է Դեկտ. 9ին բաւական ընդարձակ վարքագրութեամբ մը: Համաձայն այդ «վկայութեան»՝ Սուրբ Բարսիմէոս Եդեսիոյ եպիսկոպոս է եւ կ'ապրի Տրայանոս Կայսեր օրով, այսինքն Բ. դարու սկիզբները: Դարձի բերած բազմաթիւ հեթանոսներու կարգին են նաեւ իր քաղաքի քուրմը եւ անոր քոյրը, որոնք ի վերջոյ իբրեւ քրիստոնեայ նահատակուեցան: Ինք ալ ձերբակալուեցաւ եւ ծանր չարչարանքներու ենթարկուեցաւ եւ մահուամբ պիտի կնքէր իր կեանքը, «երբ նոյն ժամուն Հրովարտակ Հասաւ մեծ կարգութեան... թէ Հրաման ելած է կայսրէն ազատել քրիստոնեաները, որոնք տանջանքի եւ բանտի մատնուած են»: Այս կերպով ազատուեցաւ սուրբ եպիսկոպոսը իր կապանքներէն եւ «բարի վարքով եւ առաքինութեամբ ապրելով... խաղաղութեամբ վերջացուց իր կեանքը»:

18. ԿԻՊՐՈՒԱՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Երկու նշանաւոր Կիպրիանոսներ կան եկեղեցական պատմութեան մէջ. մէկը, եւ աւելի նշանաւորը ու պատմականը, արեւմուտքի՝ Ափրիկեցի մըն է, միւսը, եւ մասամբ առասպելականը, արեւելքի մըն է: Առաջինը Արեւմուտքի մեծագոյն եկեղեցական Հայրերէն մէկն է եւ կ'ապրի Գ. դարու առաջին կէսին, շուրջ 200-258, որ 45 տարեկանին դարձի գալով Հեթանոսութենէ՝ կարճ ժամանակի մէջ եղաւ եպիսկոպոսը իր քաղաքին՝ Կարթագինէի, որ այժմու Թունուզի նշանաւոր Հին քաղաքներէն մէկն էր եւ կեդրոնը Արեւմտեան Ափրիկեան Քրիստոնէութեան: Երկրորդը՝ Արեւելքի ժողովրդական սուրբերէն մէկը, որ կ'ապրի Գ. դարու վերջին կէսին եւ եպիսկոպոս եղած է Սուրիոյ մէջ, առանց յստակ ըլլալու թէ Անտիոքի, թէ շրջակայ քաղաքներէն մէկին: Այս երկուքը յաճախ շփոթուած են իրարու հետ, յատկապէս մեր մէջ:

Լատիններ երկու անջատ տօներ ունին Ափրիկեցի եւ Անտիոքի Կիպրիանոսներու Համար. իսկ մենք եւ Յոյներ մէկ տօնախմբութիւն մը ունինք, առանց յստակելու, թէ ո՞ր մէկին ի պատիւ: Տրուած ըլլալով, որ մեր եւ Յունաց տօնացոյցի մէջ նշանակուած Կիպրիանոսի յիշատակին կցուած է նաեւ անունը Յուստիանիա Կոյսին, բացայայտ կը դառնայ, որ մեր յիշատակածը արեւելքիցն է. քանի որ Յուստիանիա Կոյսի պատմութիւնը կապուած է Անտիոքի Կիպրիանոսի հետ: Յոյնք ալ միասնաբար կը տօնեն կոյսը եւ Կիպրիանոսը Հոկտ. 2ին, ինչպէս կ'ընէ նաեւ մեր Յայսմաւուրքը, իսկ Լատինք՝ Սեպտ. 26ին: Բայց մեր եկեղեցին կը յիշատակէ զանոնք Վարդավառի Բ. Կիրակիի յաջորդող երկուշաբթին: Ափրիկեցի Կիպրիանոսը կը տօնուի լոկ Լատինաց կողմէ Սեպտ. 16ին:

Հետեւաբար մենք պիտի ներկայացնենք արեւելքի Կիպրիանոսը:

Մեր Յայսմաւուրքի Համաձայն՝ Կիպրիանոս Անտիոք քաղաքի մէջ «մեծագգի, ազնուական եւ մեծահարուստ մարդ մըն էր՝ տիրացած ամէն տեսակ իմաստութեան, եւ Հմուտ էր մոգութեան արուեստին»: Նոյն քաղաքին մէջ կ'ապրի նաեւ Յուստիանիա անունով քուրմի աղջիկ մը, որ քրիստոնեայ դառնալով՝ կը յաջողի ճշմարիտ Հաւատքի բերել նաեւ իր ծնողքը: Հեթանոս իշխան մը կ'առաջարկէ ամուսնա-

նալ Յուստինիանյի Հետ: Վերջինս կը մերժէ զայն՝ ըսելով, որ ինք արդէն իսկ Հարսնացած է Քրիստոսի: Իշխանը ճարահատ կը դիմէ Կիպրիանոս մոգին եւ մեծագումար ոսկի կը խոստանայ անոր, եթէ կարենայ իր կախարդութեամբը Յուստինիան իրեն կապել: Դէպքերը սակայն այնպէս կը բերեն, որ մոգը ինք կը կախարդուի Յուստինիանի ցուցաբերած գերբնական զօրութենէն եւ քրիստոնեայ կը մկրտուի ու կարճ ժամանակին մէջ եկեղեցական բոլոր աստիճաններէն բարձրանալով՝ կը ձեռնադրուի եպիսկոպոս եւ կը նուիրուի քարոզչական հրաշագործ առաքելութեան: «Արեւելից կոմսը» իմանալով անոր այս «հակապետական» գործունէութիւնը՝ իր ներկայութեան հանել կու տայ զայն եւ ահաբեկ չարաքանքներու կ'ենթարկէ: Այդ բոլորին մէջէն Կիպրիանոս Քրիստոսի զօրութեամբ ողջ դուրս կու գայ: Ի վերջոյ կը զրկուի Նիկոմիդիա՝ Իզմիտ, ուր Դիոկղետիանոս Կայսեր հրամանով կը գլխատուի:

Կիպրիանոսի համբաւը իրրեւ հրաշագործ սուրբ, առնուազն մեր մէջ, կը հիմնուի իր անունով ծանօթ աղօթագիրքին վրայ, որ Երուսաղէմի գրատունէն ամէնէն շատ սպառում ունեցած գրքոյկն է: Այս աղօթագիրքին սկիզբը դրուած են Աստուծոյ աւելի քան 400 անունները, որոնք իրարու ետեւէ կը թուուին՝ ըսելու համար անոր վերջաւորութեան՝ «Քո սուրբ եւ ահեղ անուանցդ զօրութեամբ եղիցիս պահպան ծառայիս»: Այս գրքոյկին մէջ կայ նաեւ գլուխ մը «Դարձ Կիպրիանոս Հայրապետի» մակագրութեամբ, ուր որպէս թէ սուրբը իր կեանքը կը ներկայացնէ արեւելեան չափազանցութեամբ:

19. ԱԹԱՆԱԳԻՆԷՆՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Անունին յունական ձեւն է ԱԹԵՆՕԳԵՆԷՍ: Քրիստոնեայ ծնողքի գաւակ, որ կ'ապրէր Դիոկղետիանոս Կայսեր օրով՝ Սեբաստիա: Ամուսնացած էր եւ ունէր զաւակներ, քահանայ ձեռնադրուած՝ եւ ապա քորեպիսկոպոս եղած իր քաղաքին մէջ: Ասոր քրոջ՝ Մարիամին Հետ ամուսնացած էր Ս. Գր. Լուսաւորիչ իր երիտասարդութեան՝ նախքան Տրդատի ծառայութեան մէջ մտնելը: Սարսափ սփռող վիշապ մը իր աղօթքով եւ գաւազանով փճացուցած ըլլալուն ի վարձատրութիւն՝ Սեբաստիոյ մետրոպոլիտը զինք եպիսկոպոս ձեռնադրեց Պիտակտո քաղաքի վրայ: Շրջանի դատաւորը իր ատեանը հանել տուաւ

զայն, ուր ներկայացաւ իր տասը աշակերտներով: Երբ չզոհեցին կռոց, ամէնքը միասին նահատակուեցան գլխատուութեամբ: Ասոր նշխարները, Ս. Յովհ. Մկրտչի նշխարաց Հետ, Հայաստան բերաւ Ս. Գր. Լուսաւորիչ եւ դրաւ Տարօն գաւառի Գլակայ վանքը:

Մենք երկիցս կը տօնենք զայն. մին Յարութեան Ա. Կիրակիի յաջորդող Եշ.՝ Ս. Յովհ. Մկրտչի Հետ՝ ի յիշատակ երկուքին նշխարաց Հայաստան փոխադրուելուն, միւսը՝ Վարդավառի Բ. Կիրակիի Երեքշաբթի օրը՝ իր տասը աշակերտներով: Յոյնք եւ Լատինք՝ Յուլիս 16: Մեր Եկեղեցոյ երկրորդ տօնակատարութիւնն ալ այս թուականին կը համապատասխանէ՝ շաբաթական դրութեան վերածուած:

20. ՎԼԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Անունին յունական եւ լատինական ձեւն է Բլասիոս, իսկ Ֆրանսականը՝ Բլէզ (Պլէզ Հնչմամբ): Սեբաստիոյ եպիսկոպոս: Իր կեանքին մաքրութիւնը, բարքին քաղցրութիւնը, իր համեստութիւնը եւ իմաստութիւնը ու մանաւանդ իր բարեպաշտութիւնը ամէնքին սիրելի ընծայած են զայն: Հետեւեցաւ փիլիսոփայութեան եւ բժշկութեան, զորս ի սպառ դրաւ քրիստոնէական դատին: Նուիրուեցաւ ամբողջապէս բարեպաշտական կեանքի եւ երբ մտադիր էր առանձնական ճշնողութեան նուիրուելու, վախճանեցաւ Սեբաստիոյ եպիսկոպոսը եւ ամէնքի համաձայնութեամբ ինք ընտրուեցաւ յաջորդը: Իր ժողովուրդը կ'առաջնորդէր ու կը դատարարակէր որքան իր խօսքով, նոյնքան եւ աւելի՝ իր բարի օրինակով:

Հալածանքներու սաստկութեան միջոցին յանձնարարեց հաւատացեալներուն, որ ժամանակ մը շատ մէջտեղ չբերէին, մինչեւ իսկ քաշուին լեռները: Նոյնը ըրաւ նաեւ ինք ալ՝ Արգէոս լեռը (էրճիաս տաղ) քաշուելով, ուր սակայն հալածիչ կուսակալի զինուորները գտան զայն եւ քաղաք բերին: Հագիւ Սեբաստիա մտած էր, երբ մայր մը լալահառաչ ինկաւ իր ոտքերուն՝ խնդրելով իր նոր մեռած գաւիին վերակենդանութիւնը: Գթալով մօր արցունքներուն՝ սուրբը ամէնքի ներկայութեան աչքերը վեր առաւ ու աղօթեց. «Լսէ՛, Հայր գթութեանց եւ Աստուած ամենայն մխիթարութեանց, ծառայիդ աղօթքին եւ վերադարձո՛ւր այս մանկան կեանքը, որպէսզի ամէնքը ճանչնան, թէ Դուն ես կեանքի եւ մահուան տէրը»: Հագիւ աղօթքը ըսուած էր,

մանուկը վերակենդանացաւ իր մօր գրկին մէջ (այս մանկան կոկորդը ձկան փուշ խրած ըլլալով մեռած էր. անոր համար Ս. Վլասի բարեխօսութիւնը կը փնտուռի կոկորդի հիւանդութեանց համար):

Կուսակալը հրամայեց սուրբին, որ զոհէ «անմահ աստուածներուն»:

- Անմահ աստուածներուն,- բացականչեց սուրբը.- ի՞նչ անուն է որ կու տաք դուք դեւերուն, որոնք ձեզի վնաս հասցնելէ զատ ոչինչ կրնան ընել: Գիտցէք, որ մէկ անմահ Աստուած կայ՝ ամենակալ եւ յաւիտենական. ես ա՛յդ է որ կը պաշտեմ:

Դատաւորը այս պատասխանէն զայրացած՝ հրամայեց ձաղկել զայն այնքան անգութ եւ այնքան բրտօրէն, որ ոչ ոք խորհեցաւ թէ ոեւէ մէկը կրնար այլեւ ողջ մնալ այդ ձաղանքէն յետոյ: Սակայն կը ջանկուցիւնը, որ կը ճառագայթէր անոր դէմքէն, ամէնքին հասկցնել տուաւ, որ գերբնական ոյժ մը կը զօրացնէր զայն: Բանտ նետուեցաւ: Ջարչարանքները շարունակուեցան բանտին մէջ եւ հրապարակաւ: Եօթը կիներ անոր մարմինէն հոսած արիւնով կ'օծէին իրենք զիրենք հոգւոյ եւ մարմնոյ բժշկութիւն գտնելու հաւատքով: Ասոնք ալ մարտիրոսացան իրենցմէ ոմանց մանուկներովը: Ի վերջոյ գլխատուեցաւ Ս. Վլաս, որ ամէնէն ժողովրդական սուրբերէն եղած է Միջին դարուն:

Յոյնք կը տօնեն Փետ. 11ին, Լատինք՝ Փետ. 3ին, մենք՝ Ութօրէքի կամ Վարդափառի յաջորդ առաջին սրբոց օրը, նայած թէ Ջատիկը ուշ թէ կանուխ կու գայ:

21. ՊԵՏՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ

Եպիսկոպոս եղած է Աղեքսանդրիոյ 300ին: Յիշուած է Եւսեբիոս եկեղեցական պատմիչէն իբրեւ «տիպար եպիսկոպոս մը՝ նշանաւոր որքան իր առաքինի կեանքով, նոյնքան նաեւ Սուրբ Գրոց իր հմտութեամբ»: Դիոկղետիանոսի հալածանքներէն ազատուեցաւ եւ ինք է, որ սահմանեց այն կանոնները, որոնց հետեւողութեամբ հալածանքներու ատեն տկարացողները եւ ապա զղջացողները կրնային վերընդունուիլ եկեղեցիի ծոցը: Երբ հալածանքը վերանորոգուեցաւ 306ին, Պետրոս Եպիսկոպոս հեռացաւ Աթոռէն եւ

պահուեցաւ վերադարձաւ, երբ հալածանքները մեղմացան. բայց ի վերջոյ գլխատուեցաւ 311ին, Մաքսիմիանոսի վերսկսած հալածանքի ընթացքին:

Լատինք՝ Նոյ. 26ին, Յոյնք՝ Նոյ. 24ին, Հայք՝ Ութօրէքի յաջորդող եշ. օրը:

22. ՄԵՏՐՈՓԱՆԷՍ ՀԱՅՐԱՊԵՏ Կ. ՊՈԼՍՈՅ

Կ. Պոլսոյ գրեթէ առաջին պատմական եպիսկոպոսն է՝ գահակալած 306-325: Բախտաւոր եղաւ, որ իր օրով նախկին Բիւզանդիոնը վերածուեցաւ մայրաքաղաքին, վերաշինուեցաւ եւ կոչուեցաւ Կոստանդինի քաղաք, որմէ յետոյ այս քաղաքի եպիսկոպոսին դիրքն ալ տակաւ առ տակաւ բարձրացաւ վերածուելու համար պատրիարքական Աթոռի մը: 325 թուականին արդէն իսկ շատ ձեռացած լինելով՝ չկրցաւ մասնակցիլ Նիկիոյ ժողովին, այլ զրկեց իր աւագերէցը՝ Աղեքսանդրոսը, որ ապա իր յաջորդը եղաւ: Աւանդութիւնը կ'ըսէ, որ Նիկիոյ ժողովէն յետոյ Կոստանդիանոս իր նոր քաղաքը հրաւիրեց ժողովական հայրերը՝ կատարելու համար իր քաղաքին նաւակատիքը՝ պաշտօնական բացումը: Այդ առթիւ կայսրը եւ ժողովականներ այցելեցին նաեւ ձերու նազարդ հայրապետին եւ իրենց յարգանքը մատուցին: Այլոց օժանդակութեամբ կատարեց Ս. Հաղորդութեան Խորհուրդը, որմէ հաղորդուեցան բոլոր ժողովականները, ապա բոլորին ներկայութեան իր վախճանը եկած յայտարարեց ու նշանակելէ յետոյ իր յաջորդը՝ վախճանեցաւ խաղաղ մահով:

Յոյնք՝ Յնս. 4, Հայք՝ Խաչի Ը. Կիրակիի յաջորդող եշ., Լատինք ըստ երեւոյթին չեն տօներ զայն:

23. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՀԱՅՐԱՊԵՏ ՄԻԻՌԱՅ

Առհասարակ շատ ժողովրդական սուրբերու կեանքը այնքան կը խճողուի հրաշալի դէպքերով, որ երբեմն պատմական դէպքեր ու թուականներ բոլորովին կ'անտեսուին, ու անձնաւորութիւնը կը վերածուի գրեթէ առասպելական դէմքի մը: Ասոնցմէ է նաեւ Ս. Նիկողայոս Հայրապետը:

Մեր սոնացոյցը ունի նիկողայոսներ, որոնք կը սոնախմբուին Դեկտեմբերի սկիզբները՝ մէկը միւսէն երկու շաբաթով բաժնուած. երբեմն ալ կը միանան, երբ իրենցմէ մէկին տեղը գրաւուի Ս. Աստուածածանի Յղուքեան տօնով, որ անշարժ կերպով միշտ կը կատարուի Դեկտ. 9ին. այսպէս պատահած է օրինակ 1972ին, ուր երկու նիկողայոսներ միասնաբար կը յիշատակուին Նոյ. 25ին:

Յոյն եւ Լատին Եկեղեցիները մէկ Ս. Նիկողայոս Հայրապետ ունին, այդ ալ ՄԻԻՌԱՅ եպիսկոպոսն է. «Զմիւռնիոյ Հայրապետ» Նիկողոս մը չունին անոնք, ինչպէս չունի մեր Յայսմաւուրքը: Այնպէս որ մէջտեղ կայ լոկ Միւռայ Հայրապետ Ս. Նիկողայոսը, որուն մասին պիտի խօսինք նաեւ մենք:

Մնած է Փոքր Ասիոյ Լիկիա կոչուած հին գաւառի Բաթարա քաղաքը, որ շատ հեռի չէ ներկայ Անթալիա քաղաքէն: Մեծահարուստ, բայց միաժամանակ շատ բարեպաշտ եւ բարեգործ հօր մը գաւազ. իր մայրը նիկողայոս Երէց կոչուած եպիսկոպոսին քոյրն էր: Փոքր տարիքէն կորսնցուց իր ծնողքը եւ մեծցաւ բարեպաշտութեամբ իր մօրեղբոր խնամքին ներքեւ: Աւետարանի հետեւեալ պատգամը իրեն ուղղուած նկատեց. «Եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ, գնա ծախէ ամբողջ ունեցածդ եւ տուր աղքատներուն», ուստի սկսաւ ծախել իր հօրմէն ու մօրմէն իրեն մնացած հարստութիւնը՝ տալու համար աղքատներուն: Իմանալով, որ հայր մը չի կրնար հայթայթել իր երեք աղջիկներուն ամուսնական օժիտը՝ գիշերանց գաղտնի երեք քսակներ կը նետէ անոնց տունը եւ այսպէս կը փրկէ ընտանիք մը դժուար կացութենէ: Քահանայ կը ձեռնադրուի իր մօրեղբորմէն: Ս. Երկիր ուխտի երթալու ատեն ահաւոր ալէկոծութեան մը կը բռնուի նաւը. նիկողայոսի աղօթքով ծովը կը հանդարտի:

Միւռա քաղաքի եպիսկոպոս կը ձեռնադրուի սոյն քաղաքի առաջնորդի մահէն յետոյ: Մեծ եռանդով կը նուիրուի իր պաշտօնին. յատկապէս իր խնամքին առարկայ կը դարձնէ աղքատները, հիւանդները, բանտարկեալները, այրիները եւ որբերը: Երբ Լիկիանոս վերանորոգեց Դիոկղետիանոսի հալածանքները, ձերբակալուեցաւ եւ աքսորուեցաւ: Աքսորի ընթացքին ալ չդադրեցաւ Աւետարանի քարոզութենէն: Խաղաղութիւնը վերահաստատուելուն իր Աթոռը վերադար-

ձաւ: Ներկայ եղաւ Նիկիոյ Ժողովին 325ին: Յաջորդ տարին կնքեց իր կեանքը խաղաղ ու երջանիկ մահուամբ:

Կը նկատուի պաշտպան սուրբը ոչ միայն նաւաստիներու, այլ նաեւ մանկանց, որոնց հանդէպ մասնաւոր հոգածութիւն ցոյց տուած է միշտ: Ամերիկեան շրջանակներու մէջ ընդհանրացած «Սանթա Գրոզ» բացատրութիւնը, որ մեր Կաղանդ Պապուկին կը համապատասխանէ, աղաւաղումն է «Սանթա Նիգոլազի»: Կը նկատուէր պաշտպան սուրբը համայն Ռուսիոյ: Իր ժողովրդականութիւնը արեւմուտքի մէջ կը տարածուի, երբ իր նշխարները կը փոխադրուին 1087ին Իտալիոյ Պարի քաղաքը, ուր յանուն իրեն կառուցուած է փառաւոր տաճար մը:

Յոյնք եւ Լատինք՝ Դեկտ. 6ին, Հայք՝ Խաչի Ժ. Կիրակիի յաջորդող Շաբաթ օրը:

24. ՍԵՂԲԵՍՏՐՈՍ ՀՌՈՎՄԱՅ ՀԱՅՐԱՊԵՏ

Սեղբեստրոս եղաւ այն բախտաւոր քահանայապետը, որ ողջունեց Քրիստոնէական Եկեղեցիի ազատագրումը հալածանքներէ՝ գահակալած ըլլալով Կոստանդիանոս Կայսեր օրով՝ 314-335: Նիկիոյ Ժողովը թէեւ իր քահանայապետութեան շրջանին գումարուեցաւ, բայց ինք ներկայ չեղաւ, այլ զրկեց երկու ներկայացուցիչներ: Սեղբեստրոսի պաշտօնավարութեան շրջանին սկսուած են շինուիլ այն մեծամեծ եկեղեցիները, որոնցմով նշանաւոր եղած է Հռովմ այն օրէն ասդին. օրինակ Ս. Պետրոսը՝ Վատիկանի մէջ, Լաթերանի Պաղիլիքան, որ Հռովմի մայր եկեղեցին եղած է իր օրով: Մեռաւ խաղաղութեամբ ու թաղուեցաւ Հռովմի մէջ:

Մեր սոնացոյցին մէջ անցած ու երկիցս յիշատակուելու արժանացած է Սեղբեստրոս՝ այն առասպելին վրայ, թէ Ս. Գր. Լուսաւորիչ Հռովմ այցելած ու յատուկ դաշինք կնքած է անոր հետ: Պատմական չ'թուիր նաեւ այն աւանդութիւնը, թէ Սեղբեստրոս մկրտած ըլլայ Կոստանդիանոս Թագաւորը, որովհետեւ պատմական իրողութիւն է, որ Կոստանդիանոս մկրտուած է իր մահուան անկողնին մէջ 337ին. երբ Սեղբեստրոս վախճանած էր արդէն: Եղած է Հռովմէական Եկեղեցիի կազմակերպիչներէն ու բարեգորդիչներէն մէկը ծիսական. վարչական եւ այլ բոլոր մարզերու մէջ:

Լատինք՝ Դեկտ. 31ին, Յոյնք՝ Յնվր. 2ին, Հայք՝ երկիրցս. մին Մենդեան տօնը կանխող Շաբաթը օրը՝ Ս. Բարսեղի եւ անոր ընկերներուն հետ, իսկ միւրը Երկոտասան Վարդապետաց հետ՝ Հոկտ.ի վերջին Շաբաթ օրը:

25. ԱՂԵՔՍԱՆԴՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏ Կ. ՊՈԼՍՈՅ

Երկրորդ պատմական արքեպիսկոպոսը Կ. Պոլսոյ եւ յաջորդը Մետրոփանէսի: Ըստ աւանդութեան եպիսկոպոս ձեռնադրուած է Նիկիոյ ժողովի հայրերէն, երբ անոնցմէ ոմանք Կ. Պոլիս եկած էին Կոստանդիանոս Կայսեր հրաւէրով եւ ներկայ եղած էին իր նախորդին յուղարկաւորութեան: Մասնակցեցաւ Նիկիոյ ժողովին իբրեւ ներկայացուցիչը իր ձերունագարդ նախորդին: Առատաձեռն, պերճախօս, արդար եւ Աստուածասէր հովուապետ մը եղաւ բարեպաշտ եւ խիստ պահեցող իր պահեցողութիւնը երբեք չէր աւրեր նախքան արեւամուտը: Իր եւ Ս. Յակոբ Մծբնացիի աղօթքին կը վերագրուի Արիոս հերետիկոսապետին յանկարծական եւ չարաչար մահը: Մեռած է խաղաղական մահով 340ին:

Յոյնք՝ Օգոստ. 30, Լատինք՝ Օգոստ. 28, Հայք՝ Խաչի Ը. Կիրակիի յաջորդ եջ. օրը:

26. ՊՕՂՈՍ ԽՈՍՏՈՎԱՆՈՂ ՊԱՏՐԻԱՐԺ Կ. ՊՈԼՍՈՅ

Երրորդ պատրիարք Կ. Պոլսոյ 340-350, ծնած է Սելանիկ: Եղած է «այր բարեպաշտ եւ երկիւղած յԱստուծոյ եւ հմուտ Ս. Գրոց»: Հազիւ ընտրուած էր արքեպիսկոպոս Կ. Պոլսոյ, երբ Կոստանդիոս արիոսական Կայսրը գահընկէց ըրաւ զայն եւ տեղը նշանակեց Եւսեբիոս Արիոսականը: Վերջնոյս մահուան վրայ նորէն տիրացաւ Պողոս իր Աթոռին, բայց կրկին աքսորուեցաւ, եւ տեղը դրուեցաւ Մակեդոն «հոգեմարտը», որ կ'ուրանար Ս. Հոգիի աստուածութիւնը: Արեւմտեան կայսեր՝ Կոստանդի թելադրութեանց վրայ Արեւելքի Կայսրը Կոստանդիոս վերահաստատեց Պողոսը իր Աթոռին վրայ 348ին: Երբ Կոստանդ մեռաւ, Պողոս կրկին աքսորուեցաւ այս անգամ Կոկիսոն, ուր կ'ըսուի թէ կայսեր ներկայացուցիչը խեղդած է զայն անոր եմիփորոնով: 381ի Երկրորդ Տիեզերական ժողովէն յետոյ Կ. Պոլիս բերին Պողոսի նշխարները եւ թաղեցին իբրեւ սուրբ եւ խոստովանող

վկայ: Եղած է մեծ ախոյեան ուղղափառութեան եւ բարեկամ Աթանասի եւ Յուլիանոս Պապի:

Յոյնք՝ Նոյ. 6, Լատինք՝ Յնս. 7, Հայք՝ Ը. Խաչ. եջ.:

27. ՅՈՒԴԱ ԿԻՒՐԵՂ

Յոյներ եւ Լատիններ կը յիշատակեն զայն ԿԻՐԱԿՈՍ անուան տակ. Յոյնք՝ Հոկտ. 18ին, իսկ Լատինք՝ Մայիս 4ին: Մեր ձեռքին տակ եղած երկու Յայսմաւուրքներէն Փեշտիմալճեանի կողմէ տպուածին մէջ չկրցանք հանդիպել նման սուրբի մը յիշատակութեան, իսկ Մարգուանցիի հրատարակածին մէջ շատ ընդարձակ կերպով կը ներկայացուի այս սուրբին եւ իր մօր Աննայի նահատակութիւնը:

Ըստ Յայսմաւուրքի տուեալներուն՝ Երուսաղէմ բնակող Հրեայ մըն է ան՝ Յուդա անունով: Երբ Հեղինէ Երուսաղէմ կու գայ Քրիստոսի Խաչափայտը գտնելու նպատակով, հարցապնդումներ կ'ընէ այս մասին Հրէից մօտ: Անոնք կը մատնանշեն Յուդան իբրեւ ամէնէն իրազեկը այս հարցերու մասին: Սկիզբէն թէ եւ դժկամակութիւն կը յայտնէ, սակայն կատարուած սպառնալիքի վրայ՝ կը խոստովանի Խաչին ուր թաղուած ըլլալը: Ականատես ըլլալէ յետոյ Խաչի գիւտին յաջորդող հրաշալի նշաններուն՝ քրիստոնեայ կ'ըլլայ իր մօրը հետ եւ կը կոչուի Կիւրեղ: Ապա եպիսկոպոս կը ձեռնադրուի եւ ատեն մը տեղակալութիւն կ'ընէ Երուսաղէմի Կիւրեղ Պատրիարքի աքսորուած միջոցին: Երբ Յուլիանոս Ուրացող Երուսաղէմ եկաւ, սաստիկ չարչարանքներու ենթարկեց զայն եւ իր մայրը: Ի վերջոյ նիզակահար սպաննուեցաւ սուրբ եպիսկոպոսը 360ական թուականներուն:

Կը յիշատակուի Մեծ Պահքի երկրորդ Շաբաթ օրը իր մօրը եւ Կիւրեղ Երուսաղէմացի Հայրապետին հետ:

28. ՅԱԿՈԲ ՄԾԲՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏ

Սիրելի ու ծանօթ սուրբ մըն է որքան Ասորւոց, նոյնքան ալ Հայոց մէջ: Մնած, սնած, գործած ու վախճանած է Մծբնի քաղաքին մէջ, որ այսօր ծանօթ է Նուէլյալին անունով, Թուրքիոյ հարաւ արեւելեան սահմանին վրայ: Իր առաջին տարիները անցուցած է ուսմունք

քով եւ հոգեւոր կրթանքով: Երիտասարդութեան քաշուած է անապատ՝ տալու համար ինքզինքը ճգնողական եւ աղօթական կեանքին:

Երբ իր ժամանակի Մծբինի եպիսկոպոսը վախճանեցաւ, ժողովուրդի երկու գլխաւոր հակահոսանքներու կողմէ ներկայացուեցան երկու թեկնածուներ: Մարուգէ ձգնաւորի թելադրանքով սակայն ամէնքը ի վերջոյ միացան Յակոբ ճգնաւորի վրայ եւ անապատէն բերել տալով՝ եպիսկոպոս ձեռնադրեցին 320ական թուականներուն՝ Ամիրայի մէջ:

Ս. Յակոբի կեանքը լեցուն է հրաշագործ դրուագներով, որոնք պարզապէս կը վկայեն, թէ որ աստիճանի ժողովրդականութիւն շահած հոգեւոր գործիչ մըն էր: Իր ուսուցիչը եղած է Մարուգէ ձգնաւորը, իսկ ինք ուսուցիչ եղած է Եփրեմ Խուրի Ասորի մեծ մատենագրին: Ներկայ եղաւ 325ին Նիկիոյ ժողովին, ուր ըստ աւանդութեան մեծ յարգ վայելեց Կոստանդիանոս Կայսեր եւ ժողովականներու կողմէ: Արդարեւ եղաւ մեծ ախոյաններէն մէկը Քրիստոնէական եկեղեցիի ուղղափառութեան՝ ընդդէմ Արիոսի եւ Արիոսականութեան, որոնք դատապարտուած էին Նիկիոյ ժողովէն: Մինչեւ իսկ աւանդութիւն մը կ'ըսէ, որ Արիոս չարաչար մեռած է իր աղօթքով կամ անէծքով: Երկիցս կամ երիցս ազատագրած է իր քաղաքը պարսկական պաշարումէ՝ աղօթքով, հնարամտութեամբ եւ սիրտ տալով իր ժողովուրդին: Եղած է իրապէս անձնդիր հովիւ իր ժողովուրդին եւ հոգեշահ քարոզիչ, ինչպէս նաեւ մեծ գրող մը որքան աստուածաբանական հարցերու մասին, նոյնքան ալ կեանքի հետ սերտ կապ ունեցող կրօնաբարոյական գործնական խնդիրներու շուրջ: Թէեւ հալածանքի ու չարչարանքի ենթարկուած կը նկատուի նախքան եկեղեցականալը՝ Մաքսիմիոս Դաժի հանած հալածանքներու ընթացքին, սակայն իր կեանքը կնքեց խաղաղական մահով 338ին: Իր նշխարները, որոնցմէ շատ կան մեր եկեղեցիներու մէջ, փոխադրուած են նաեւ Կ. Պոլիս 970 թուականին եւ մեծ յարգանքի առարկայ եղած են նաեւ կայսրութեան մայրաքաղաքին մէջ:

Յոյնք՝ Հոկտ. 31, Ասորիք՝ Յնվր. 13, Լատինք՝ Յուլիս 15, Հայք՝ Յիսնակի Գ. Կիրակիի յաջորդող Շաբաթ օրը:

29. ՄԵԼԻՏՈՍ ԿԱՄՄ ՄԵԼԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Մեր սոճացոյցին մէջ ունինք երկու Մելիտոսներ. մին Անտիոքի Հայրապետ, իսկ միւսը Յակոբ Մծբնայ Հայրապետին հետ կը յիշուի միշտ: Մեր Յայտնաւորքներու մէջ Մելիտոս անունով սուրբի յիշատակութիւն չկայ: Կայ միայն Մելի կամ Մելէս եպիսկոպոսի մը յիշատակը Նոյ. 22ին: Մենք վերոյիշեալ վերջին Մելիտոսը պիտի նոյնացնենք Յայտնաւորքի Մելէսի հետ ու նախ պիտի անդրադառնանք իր մասին եւ քիչ մը անդին՝ Անտիոքի Մելիտոսի մասին:

Համաձայն Յայտնաւորքի տուեալներուն՝ ազգով Պարսիկ է Մելէս: Նախապէս եղած է քրիստոնեայ գօրական մը պարսկական բանակին մէջ: Հրաժարելով զինուորական կեանքէն՝ ինքզինքը նուիրած է հոգեւորական կեանքի: Ապա եպիսկոպոս ձեռնադրուած է Բիթրագան քաղաքի: Սակայն տրուած ըլլալով, որ քաղաքը առաւելապէս արեւապաշտներէ բնակուած էր՝ ասոնք հալածեցին զայն այդ քաղաքէն: Ասոր վրայ ձեռնարկեց երկար ճամբորդութեան մը դէպի Երուսաղէմ եւ Աղեքսանդրիա, ուր հանդիպեցաւ Մեծն Անտոնի: Վերջինս թելադրեց իրեն վերադառնալ Պարսկաստան եւ այնտեղ շարունակել իր քարոզութիւնը:

Վերադարձի ճամբուն վրայ հանդիպեցաւ Յակոբ Մծբնացիին: Իր աւետարանչական գործունէութիւնը տարածեց մինչեւ Տիգրոն՝ Պարսից այդ օրուան մայրաքաղաքը: Քրիստոնէից մէջ եղած վէճերը աշխատեցաւ հարթել եւ հեթանոսներէն շատեր քրիստոնեայ դարձուց: Տեղւոյն իշխանաւորը բանտարկեց զայն եւ կը ստիպէր արեգակին երկրպագել: Երանելին կը կշտամբէր զայն այս յիմար առաջարկին համար, որմէ զայրացած՝ իշխանը իր իսկ սուրով սպաննեց զայն:

Յոյնք՝ Նոյ. 10, Լատինք՝ Ապրիլ 22ին, Հայք՝ Յիսն. Դ. Կիրակիի նախորդ Շաբաթ օրը:

30. ՄԱՐԿՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԻԹՈՒՍԱՅ

Սուրբոյ Արիթուսա քաղաքին եպիսկոպոս եղաւ Դ. դարու կէսերուն: Ներկայ եղած է զանազան տեղական ժողովներուն, ուր իբրեւ բարեկամ Կիսարիոսականներուն՝ աշխատած է մօտեցնել զանոնք ուղղափառութեան: Իրեն կը վերագրուի «Որդին յամենայնի նման է

Հորն» բանաձևը, որ կրնար ընդունելի ըլլալ թէ ուղղափառներուն եւ թէ Կիսարիոսականներուն:

Ժամանակին քանդած էր Հեթանոսական տաճար մը, գոր վերաշինել հրամայեց Յուլիանոս Ուրացոյ Կայսրը: Այս հրահանգը չգործադրելու համար Մարկոս Եպիսկոպոս աներեւոյթ եղաւ: Յուլիանոս սկսաւ նեղել տեղւոյն քրիստոնեաները: Իր ժողովուրդին նեղութեան պատճառ չըլլալու համար ներկայացաւ կայսեր եւ ենթարկուեցաւ ամենածանր չարչարանքներու, որոնց տոկաց հրաշալի համբերութեամբ: Ի վերջոյ աքսորուեցաւ Հեռաւոր վայր մը, ուր եւս նուիրուեցաւ Հեթանոսները քրիստոնեայ դարձնելու սրբազան գործին: Վախճանեցաւ աքսորի մէջ:

Յոյնք՝ Մարտ 29ին, Լատինք չունին, Հայք՝ Ղեւոնդեանց տօնի նախորդ Բշ. օրը:

31. ԱԿԻՓՍԻՄՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ազգով Պարսիկ. կ'ապրի Դ. դարուն Պարսից Շապուհ (310-380) Թագաւորին օրով: Յայտնի է, թէ որ քաղաքի եպիսկոպոս էր: Մերութեան տարիքին կանչուեցաւ մոգպետէն եւ հրահանգուեցաւ երկրպագել արեգակի եւ կրակի: Մերժեց բնականաբար: Ենթարկուեցաւ ծանր չարչարանքներու եւ բանտ նետուեցաւ, ուր մնաց չարչարալից պայմաններու տակ երեք տարիներ: Երբ իրեն ըսուեցաւ, որ ընէ վերջին տնօրէնութիւնները իր ինչքերու եւ տան մասին, ըսաւ «Այս երկրի վրայ ոչ ինչք եւ ոչ ալ տուն ունիմ. իմ ամբողջ ինչքս եւ տունս Քրիստոս է»: Ի վերջոյ հանուեցաւ բանտէն եւ առաջարկուեցաւ ուրանալ Քրիստոսը. «Քրիստոնեայ եղած եմ եւ քրիստոնեայ կ'ուզեմ մեռնիլ» ըսաւ: Ենթարկուեցաւ բրածեծութեան, որուն տակ աւանդեց իր հոգին:

Յոյնք եւ Ասորիք՝ Նոյ. 3ին, Լատինք՝ Ապրիլ 22ին, Հայք՝ Ը. Խաչի Գշ.:

32. ԵՓՐԵՄ ԽՈՒՐԻ

Մեծ մատենագիր եւ սրբակենցաղ անձ մը, որ մեծապէս յարգուած է թէ՛ Արեւելեան եւ թէ՛ Արեւմտեան Եկեղեցիներէն: Թէեւ աստիճա-

նով սարկաւազութենէ աւելի վեր չէ ուզած բարձրանալ, բայց մենք կը դասնք զայն Եկեղեցիի մեծ վարդապետներու շարքին, ինչպէս ըրած է Հայց. Եկեղեցին՝ երկիցս տօն սահմանելով անոր՝ Եկեղեցւոյ մեծ հայրապետներու հետ միասնաբար՝ Յունուարի առաջին Շաբաթ օրը Կապադոկիեան Հայրերու հետ, երկրորդը՝ 12 Վարդապետաց հետ՝ Հոկտեմբերի վերջին կամ վերջընթեր Շաբաթ օրը:

Ծնած է Մծբին 306ին: Աշակերտած է Յակոբ Մծբնացիին եւ անոր հետ ալ մասնակցած կը նկատուի Նիկիոյ ժողովին: Սարկաւազ ձեռնադրուած կը կարծուի Բարսեղ Հայրապետէն՝ վերջինիս տուած իր մէկ այցելութեան ընթացքին: 363ին, երբ Մծբին Բիւզանդական Կայսրութենէն անցաւ Պարսկական տիրապետութեան, Եփրեմ փոխադրուեցաւ Եդեսիա եւ այնտեղ ստեղծեց իր մատենագրական վաստակին մեծ մասը եւ այնտեղ ալ վախճանեցաւ 373ին:

Նշանաւոր եղաւ Եփրեմ որքան իր խստակենցաղ սրբութեամբ, նոյնքան եւ աւելի իր խոր հմտութեամբ կրօնական գրեթէ բոլոր գիտելեաց մէջ: Եղած է բանաստեղծ եւ իր երկերը գրած է գրեթէ ամբողջութեամբ տաղաչափեալ: Սերտ նմանութիւն կայ իր եւ մեր Շնորհալի Հայրապետին միջեւ, յատկապէս գրական մարզի մէջ: Ինչպէս Շնորհալին, նոյնպէս Եփրեմ Խուրի արժեցուցած է ինքզինքը գրեթէ գրական բոլոր ճիւղերու մէջ՝ Ս. Գրոց մեկնաբանութիւն, Աստուածաբանութիւն, հակաճառութիւններ, ներբողեաններ, քարոզներ եւլն.: Յատկապէս փայլած է շարականագրութեան մէջ: Գրած է ընդդէմ Մարկիոնի, Բարթաժանի, Մանիի, Անոմեաններու եւ այլ բազմաթիւ հերետիկոսներու եւ աղանդներու: Իր գրական սիրելի նիւթերէն մէկը եղած է վերջին դատաստանը, զոր նկարագրած է սարսափազու եղանակով, ինչպէս ըրած է Շնորհալին իր «Յիսուս Որդի» աղօթագրքին մէջ: Իր շարականները՝ յատկապէս Ս. Կոյսի եւ բոլոր սուրբերուն ձօնուած՝ գովերգներ են, որոնցմէ ոմանք գրուած են այբուբենական կարգով, իսկ ուրիշներ՝ իր անուան տառերով: Իր գործերը գրեթէ ամբողջութեամբ թարգմանուած են հայերէնի, շուրջ 100 կտոր, որոնցմէ ոմանց բնագիրը եւ յունարէն թարգմանութիւնը կորսուած ըլլալով՝ պահուած են հայերէն թարգմանութեամբ:

1920 թուին Լատին Եկեղեցին ալ յայտարարեց զայն իբրեւ իր Եկեղեցիին մեծ վարդապետներէն մէկը եւ անոր տօնը փոխադրեց

Փետ. 1 էն 18 Յունիսին: Կոչուած է «Արեգակ Ասորւոց», «Միւն Եկեղեցւոյ», «Քնար Ս. Լոգւոյն»: Մեր Յայտմաւորքը հրաշալի գնահատականով մը կը վերջացնէ անոր վարքը, զոր կը նշանակէ Յունուար 28ին, որ Յոյն եւ Ասորի Եկեղեցիներու տօնախմբութեան օրն է: Յայտմաւորքի այդ վերջաւորութիւնը յառաջ կը բերենք թարգմանաբար:

«Եփրեմ Աստուծմէ երկիւղած մարդ մըն էր՝ համբրող, հեգ հանդարտ, խոնարհ, չբարկացող, անխարդախ, ճգնագգեաց, զղջական, լուսկեաց: Անձ մը, որուն հետ տեսնուիլը միայն մարդը դարձի կը բերէր: Իր միտքը երբեք չէր ցրուեր աղօթքի կամ աշխատանքի պահուն. անընդհատ կ'աղօթէր, շարունակ տքնութեանց եւ ճգնութեանց մէջ էր, մարմինին հանգիստ չէր տար: Պահքի մէջ չափ ու սահման չէր դնէր. անձանձրոյթ սորվեցնող էր, կանոններ եւ օրէնքներ սահմանեց առ այն, թէ վանահայրը եւ վանականները ինչպէս պարտ էին ապրիլ վանքերու մէջ: Եւ դեռ շատ գրաւոր եւ անգիր յիշատակ թողուց երկրի վրայ: Նախապէս գիտցաւ իր կեանքին վախճանը: Կանչեց հոգեւորական եղբայրները, ողջունեց զանոնք եւ խաղաղութեամբ հանգեաւ ի Քրիստոս»:

Իրեն կը վերագրուին աւելի քան «հազար» ճառեր ու ներբողներ: Իսկ արտաքին տեսքի մասին Յայտմաւորքը կ'ըսէ. «Թխամորթ, քարձ (կարճահասակ կամ «քէօսէ») եւ ալեւոր, խնդումներս եւ Աստուծոյ շնորհքով լեցուն»:

33. ԱԹԱՆԱՍ ՀԱՅՐԱՊԵՏ

Մեծագոյն դէմքերէն մէկը Քրիստոնէական Եկեղեցիի: Ծնած է Աղեքսանդրիա 296ին: Իր բարձրագոյն ուսմունքը ստացաւ իր քաղաքի հանրահոչակ աստուածաբանական ճեմարանի մէջ: Սարկաւազ ձեռնադրուեցաւ իր քաղաքի Աղեքսանդր Պատրիարքէն եւ իբրեւ անոր անձնական քարտուղարը ներկայ եղաւ Նիկիոյ ժողովին եւ անոր յաջորդեց իբրեւ Պատրիարք Աղեքսանդրիոյ 328ին, երբ հազիւ 33 տարեկան էր: Գրեթէ ամբողջ իր կեանքը անցուց պայքարով ընդդէմ Արիոսականութեան, որ իր շրջանին վարակած էր գրեթէ ամբողջ Եկեղեցին, յատկապէս Բիւզանդիոնը, ամբողջ Փոքր Ասիան, Սուրիան եւ Եգիպտոսը: Բազմիցս աքսորուեցաւ արիոսական կայսրերու կողմէ, սկսեալ Մեծն Կոստանդիանոսէն, որ զինք աքսորեց

336ին: Վերադարձաւ անոր մահէն յետոյ: 339ին պարտաւորուեցաւ Հռոմ վախճիլ իր զօրաւոր արիոսական հակառակորդներու երեսէն: Արեւմուտքի մէջ սերտ կապ հաստատեց Հռոմի Եկեղեցիին հետ, որ իրեն նեցուկ կանգնեցաւ Արիոսականութեան դէմ իր պայքարի ընթացքին, երբ Արեւելեան Եկեղեցին գրեթէ ամբողջութեամբ ինկած էր ձեռքը Կիսարիոսականներուն, որոնք շարունակ կը հալածէին ուղղափառութեան այս մեծ ախոյեանը: 346ին վերահաստատուեցաւ իր պաշտօնին մէջ, զոր ուրիշներ գրաւած էին: 356ին նորէն վտարուեցաւ Աթոռէն, սակայն ի թաքստեան մնաց Աղեքսանդրիոյ շրջակայքը եւ վերադարձաւ մահէն յետոյ այն կայսեր, որ աքսորած էր զայն: Անոր յաջորդը սակայն՝ Յուլիանոս Ուրացող, կրկին աքսորեց զայն 362ին: Վերադարձաւ յաջորդ տարին՝ վերջնոյս մահէն յետոյ: Հինգերորդ անգամ ըլլալով՝ 365ին կարճ աքսորէ մը յետոյ վերատիրացաւ իր Աթոռին եւ կեանքին մնացեալ 7-8 տարիները նուիրեց վերակազմելու եւ զօրացնելու Քրիստոնէական Եկեղեցիին մէջ Նիկիական Հանգանակին հաւատարիմ հատուածը: Իր գերմարդկային ճիգերը իրենց բարի պտուղը տուին իր մահէն 7-8 տարիներ յետոյ, երբ 381ին Կ. Պոլսոյ Տիեզերական ժողովին մէջ վերջնականօրէն յաղթանակեց Աթանասի տեսակէտը, այսինքն Նիկիական Հանգանակը. իսկ Արիոսականութիւնը խառնուեցաւ պատմութեան՝ աւելի քան կէս դար խանգարելէ յետոյ Եկեղեցիին խաղաղութիւնը Արեւելքի մէջ:

Անդրդուելի անձ մըն էր Աթանաս. մազի չափ տեղի չտուաւ Կիսարիոսականներու ճնշումներուն եւ հալածանքներուն: Եղաւ աստեւ մը, որ ամբողջ Քրիստոնէական Եկեղեցիի հոգեւորականութեան մէջ լոկ Աթանաս եւ իր քանի մը մտերիմ բարեկամները հաւատարիմ կը մնային Նիկիական Հաւատամքին: Շարունակ գրեց ի պաշտպանութիւն Նիկիական Հանգանակին եւ ի հերքումն Արիոսականութեան՝ ցոյց տալով այն վտանգը, որուն մէջ կ'առաջնորդէին Եկեղեցին կիսարիոսական բարեմիտ կամ չարամիտ եպիսկոպոսները: Յատկապէս 360էն սկսեալ մինչեւ իր մահը 373ին, ոգի ի բռին աշխատեցաւ լուսաբանել, համոզել եւ սիրաշահիլ դէպի Արիոսականութիւն հակած եպիսկոպոսները: Կը պաշտպանէր միաժամանակ Ս. Լոգիի Աստուածութիւնը ընդդէմ Մակեդոն աղանդաւոր Պատրիարքին Կ. Պոլսոյ եւ Քրիստոսի կատարեալ մարդկութիւնը ընդդէմ իր բարեկամ Ապողի-

նարի, որ կ'ըսէր՝ թէ եւ Քրիստոս առած էր «գմարմին եւ զհոգի», բայց ո՛չ «գմիտ», որուն տեղը գրաւած էր Աստուծոյ «Բանը՝ Լոգոսը»:

Զարկ տուաւ վանականութեան, գրեց Ս. Անտոնի վարքը: Ինք եղաւ ներմուծողը վանականութեան գաղափարին Արեւմուտքի մէջ, ուր պիտի հասնէր իր կատարելութեան Հռովմէական Եկեղեցիի հոյակապ ու բազմատեսակ վանական միաբանութեանց մէջ: Իր վճռակալութեան եւ ուժեղ նկարագրին կը միացնէր անսպառ կորով աշխատանքի եւ գործունէութեան: Իր գրական երկերը գրեթէ ամէնքն ալ աստուածաբանական, ջատագովական ու հակաճառական նկարագիր ունին, կարեւոր չափով թարգմանուած են հայերէնի՝ Ոսկեդարէն սկսեալ՝ աւելի քան 40 կտորներ: Իր գրութիւնները մաս կը կազմեն Քրիստոնէական Եկեղեցիի ամէնէն արժէքաւոր ժառանգութեան: Վախճանեցաւ խաղաղ պայմաններու տակ 373 թուին:

Լատինք՝ Մայիս 2ին, Յունք՝ Յնվր. 18ին եւ Մայիս 2ին, Հայք՝ Դ. Վրդվո. Շք. եւ Երկրտասան Վարդապետաց հետ Հոկտ.ի վերջին կամ վերջընթեր Շաբաթ օրը:

34. ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՍԻ ՀԱՅՐԱՊԵՏ

Բարսեղ Հայրապետ եւ իր եղբայրը Գր. Նիւսացի եւ իրենց ընկերը Գր. Նազիանզացի ծանօթ են Կապադոկիանա Հայրեր Հաւաքական անունով եւ կը կազմեն փառքը Արեւելեան Եկեղեցիին՝ որքան իրենց սրբութեամբ, նոյնքան եւ աւելի իրենց մատենագրական բարձր վաստակով, իբրեւ աստուածաբան մեծ մատենագիրներ եւ ուղղափառութեան ախոյաններ Աթանասի եւ Կիւրեղ Աղեքսանդրացիի հետ: Անոնք Եկեղեցիի մեծ վարդապետներ են թէ՛ Արեւելեան եւ թէ՛ Արեւմտեան Եկեղեցիներուն համար հաւասարապէս:

Բարսեղ ծնած է 330ին Կեսարիոյ մէջ հինէն ի վեր քրիստոնեայ շատ պատուական ընտանիքի մը մէջ: Իր ուսմունքը առած է Կեսարիա ու Կ. Պոլիս եւ կատարելագործած է, վերոյիշեալ իր երկու ընկերներուն հետ, Աթէնքի մէջ, ուր իրենց դասընկեր ունեցած են նաեւ արքայական տոհմէ Յովիանոսը՝ ապագայ Ուրացող կայսրը, եւ իբրեւ ուսուցիչ՝ ի միջի այլոց՝ Պարոյր Հայկազն մեծ հոետորը, որուն համար Հռովմ քաղաքը մեծարանքի արձան մը կանգնած էր: Ստա-

նալ յետոյ բարձրագոյն ուսմունքը, զոր Քրիստոնէական եւ Յունա-Հռովմէական մշակոյթը կրնային տալ իր օրերուն, վերադարձաւ իր հայրենիքը եւ ինքզինքը նուիրեց վանական կեանքի: Ատեն մը այցելելէ յետոյ Սուրիոյ եւ Եգիպտոսի վանական շրջանակները եւ Ս. Երկրի սրբավայրերը, վերջնականապէս հաստատուեցաւ Նէօ-Կեսարիայի՝ Նիքսարի շրջակայքը իբրեւ մենակեաց՝ 358ին: Սարկաւագ ձեռնադրուեցաւ Անտիոքի Մելիտոս Պատրիարքէն: Նազիանզացի Գրիգորին հետ նուիրուեցան առաքելական քարոզութեան Պոնտոսի եւ Կապադոկիոյ գաւառներուն մէջ: Ընդառաջելով իր քաղաքի եպիսկոպոս Եւսեբիոսի կոչին՝ 364ին ձգեց իր ճգնարանը՝ պայքարելու համար Արիոսականութեան դէմ՝ իբրեւ օգնականը իր մետրոպոլիտին:

370ին երբ վախճանեցաւ Եւսեբիոս, Բարսեղ յաջորդեց անոր իբրեւ արքեպիսկոպոս Կեսարիոյ եւ արդիւնաւոր մեծ գործունէութիւն ցոյց տուաւ: Վախճանեցաւ 379ին: Պերճախօս քարոզիչ, հմուտ հոգեւորական եւ խստաբեր բարեկարգիչ եւ խստակենցաղ հոգեւորական մըն էր Բարսեղ: Պայքարներ շատ ունեցաւ, Աթանասի պէս, ոչ միայն ընդդէմ հերետիկոսներու եւ արիոսական կամ ուրացող կայսրերու դէմ, այլ նաեւ մինչեւ իսկ Հռովմի, Աղեքսանդրիոյ եւ Հայոց Աթոռներուն հետ: Բացառիկ կազմակերպչական յատկութեամբ օժտուած էր, իր այդ հանգամանքով եղաւ գրեթէ հիմնադիրը արեւելեան վանականութեան, ուր գէթ տեսականօրէն դեռ կը կիրարկեն Բարսեղեան կարգերը եւ կանոնները: Բացի վանքերէ հաստատած է բազմաթիւ բարեգործական հաստատութիւններ՝ աղքատներու եւ հիւանդներու համար, դպրոցներ եւ որբանոցներ՝ տղաքներու համար:

Իր մատենագրական գործերէն նշանաւոր են իր գրած Ս. Պատարագը, որմէ շատ տարրեր ունի նաեւ մերինը, «ՎԵՅՑՐԵՔԻ», որ ստեղծագործութեան վեց օրերու մասին բացատրական ինն ճառեր են: Երկուքն ալ, ինչպէս նաեւ իր գործերէն գրեթէ ամէնքը, թարգմանուած են հայերէնի՝ սկսեալ Ոսկեդարէն՝ շուրջ 60 կտորներ: Ծանօթ են իր մեծ աղօթքները, որոնցմէ ոմանք մինչեւ օրս ալ կը կարդացուին մեր եկեղեցիներու մէջ մեծ տօներուն:

Յունք՝ Յունուար 1ին եւ 30ին, մենք՝ Յնվր. 1ի մերձակայ Շաբաթ օրը եւ 12 Վարդապետաց հետ, Լատինք՝ Յունիս 14ին:

35. ԳՐԻԳՈՐ ՆԻՒՍԱՅԻ

Կրտսեր եղբայրը Բարսեղի՝ ծնած 335ին: Ուսմունքը իր եղբոր Հետ առաւ: Նախ ամուսնացաւ, յետոյ սակայն փոխադարձ Համաձայնութեամբ կինը մտաւ կուսանոց, իսկ ինք՝ իր եղբորը Հաստատած վանքերէն մէկը: Եպիսկոպոսացաւ իր եղբոր կողմէ 371ին Նիւսա քաղաքի վրայ: Ատեն մը յետոյ վար առնուեցաւ իր Աթոռէն եւ աքսորուեցաւ Արիոսականներու կողմէ, մինչեւ Վաղէս արիոսական Կայսեր մահը 378ին, երբ վերադարձաւ իր Աթոռը: 379ին ընտրուեցաւ Սեբաստիոյ մետրոպոլիտ, բայց չուզեց ձգել իր սիրելի աւելի փոքր թեմը: 381ին ներկայ եղաւ Կ. Պոլսոյ Տիեզերական Ժողովին եւ ուժեղ ախոյեանը Հանդիսացաւ Նիկիական Հաւատոյ, որ վերջնականապէս Հաստատուեցաւ Եկեղեցիի մէջ՝ աւելի քան կէս դար կուռախնձոր ըլլալէ յետոյ Արիոսականներու եւ Ուղղափառներու միջեւ: Վախճանեցաւ 395ին:

Մեծ մատենագիր է նաեւ Նիւսացին. ունի աստուածաբանական, մեկնողական, Հակաճառական բազմաթիւ գործեր: Ունի նաեւ կրօնաբարոյական եւ ճգնողական կեանքի վերաբերեալ ճառեր: Գրած է նաեւ ներբողեան մը ի մասին իր քրոջ Մաքրինայի, որ երկու եղբայրներուն պէս ընտրած էր կուսական կեանքը: Սքանչելի օրինակ մըն է Բարսեղի ընտանիքը ամբողջական նուիրումի, որուն մէկ Համանմանն է մեր մէջ Նարեկացիի ընտանիքը. ուր երեք եղբայրներ եւ իրենց Հայրը ամբողջութեամբ նուիրուած են Հոգեւորական ասպարէզի իրենց մօրեղբորը Հետ: Բարսեղին մեծ մայրն ալ կոչուած է Մաքրինա եւ եղած է շատ առաքինի մայր մը, որ վստահ ենք, թէ իր բարերար դերը ունեցած է իր թոռներու Հոգեւոր կրթանքին եւ կրօնական ասպարէզի նուիրուելուն մէջ, երբ անոնք ունէին իրենց առջեւ փայլուն ապագայ խոստացող ասպարէզներ Հետորութեան, ուսուցչութեան, փիլիսոփայութեան կամ օրէնսգիտութեան: Բոյր Մաքրինա իր ընտանեկան կալուածին վրայ կառուցանել տուած էր կուսանոց մը՝ ոչ միայն ս. կենցաղ մը ապրելու Համար, այլ նաեւ աղջկանց ուսման եւ դաստիարակութեան Համար: Մեծ մայր եւ թոռնուհի երկու Մաքրինաներն ալ տօնացոյցի անցած են թէ՛ Արեւելեան եւ թէ՛ Արեւմտեան Եկեղեցիներու մէջ 19 Յուլիսին, իսկ մեր Յայսմաւուրքին մէջ յիշուած են 5 Յուլիսին, բայց տօնացոյցի չեն անցած:

Նիւսացիին գործերն ալ թարգմանուած են Հայերէնի՝ աւելի քան 55 կտոր:

Նիւսացին կը տօնուի Յունաց մէջ Յնվր. 10ին, Լատինաց մօտ՝ Մրտ. 9ին, մեր մէջ երկիցս՝ Յնվր. 1ի մերձակայ Շաբաթ օրը եւ Երկոտասան Վարդապետաց Հետ Հոկտ.ի վերջին կամ վերջընթեր Շաբաթ օրը:

36. ԳՐԻԳՈՐ ՆԱԶԻԱՆՉԱՅԻ (ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ)

Զաւակն է Նազիանդ քաղաքի եպիսկոպոսին՝ ծնած 329ին եւ դասընկեր եղած վերոյիշեալ երկու եղբայրներուն: Ինք ալ անոնց պէս ինքզինքը նուիրեց երիտասարդ տարիքին ճգնողական կեանքին, գորշատ յարմար կը գտնէր իր քաշուող եւ աղօթասէր բնաւորութեան: Սակայն Հայրը, Հակառակ իր որդիի կամքին, իր Եպիսկոպոսարանը հրաւիրեց, կուսակրօն քահանայ ձեռնադրեց 362ին եւ իրեն օգնական կարգեց: Տասը տարի վերջը եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Սասիմա փոքր քաղաքին, ուր սակայն երթալու երբեք ժամանակ չունեցաւ, քանի որ ծերացած հօրը բոլոր գործերը իր վրայ ծանրացած էին: Իր հօրը մահէն յետոյ՝ 374ին, կրկին քաշուեցաւ ճգնողական կեանք վարելու՝ այս անգամ Ի Կիլիկիա: 379ին Կ. Պոլիս կանչուեցաւ, ուր իր հիւթեղ քարոզներով ամէնքը սիրաշահեցաւ եւ մեծապէս նպաստեց Նիկիոյ ոգիին եւ Հանգանակի յաղթանակին: 381ին ընտրուեցաւ պատրիարք Կ. Պոլսոյ եւ Անտիօքի Պատրիարք Մելիտոսի մահէն յետոյ նախագահեց Պոլսոյ Տիեզերական Ժողովին: Սակայն վարչական գործերը Հակառակ եւ տաղտկալի գտնելով իր Հայեցողական խառնուածքին՝ տարի մը յետոյ հրաժարեցաւ եւ քաշուեցաւ իր ծննդավայրը՝ Նազիանդայի մէջ ունեցած իր հօրեանական կալուածը, եւ ինքզինքը նուիրեց Հայեցողական կեանքի եւ գրական աշխատանքի եւ այնտեղ ալ վախճանեցաւ 389ին:

Զգած է մատենագրական մեծ վաստակ, որոնք իրեն շահեցուցած են «Աստուածաբան» տիտղոսը: Եղած է նաեւ Հոգեւից քարոզիչ եւ բանաստեղծ՝ Եկեղեցիին ժառանգ ձգած է բազմաթիւ քարոզներ եւ Հոգեւոր բանաստեղծութիւններ: Իր գործերն ալ, իր երկու ընկերներուն պէս, կանուխէն թարգմանուած են Հայերէնի՝ աւելի քան 40 կտոր:

Յունաց մէջ երկիցս կը տօնուի՝ Յնվր. 25ին առանձինն, իսկ 30ին՝ Բարսեղի եւ Ոսկեբերանի հետ: Լատինք՝ 9 Մալխին, Հայք՝ երկիցս՝ Վարդավառի Դ. Կիրակիի յաջորդող Շաբաթ օրը Աթանասի եւ Կիրեղի հետ եւ Հոկտ.ի վերջին կամ վերջընթեր Եբ. օրը Երկոտասան Վարդապետաց հետ:

37. ԿԻՒՐԵՂ ԵՐՈՒՍԱՂԷՄԱՅԻ

Հակառակ Եկեղեցիի նշանաւոր հայրերէն մէկը լինելուն՝ քիչ բան գիտենք իր մասին: Ծնած կը նկատուի 315ին: Երուսաղէմի եպս. եղած է 349ին: Աքսորուած է 357ին Արիոսականներու կողմէ: Վերադարձաւ երկու տարի յետոյ: Երկու անգամ եւս աքսորուեցաւ, բայց վերջնականօրէն վերահաստատուեցաւ իր Աթոռին վրայ 378ին: Գրիգոր Նիւսացի՝ Անտիոքի մէջ գումարուած ժողովականներու կողմէ Երուսաղէմ դրկուեցաւ 380ին՝ ստուգելու թէ որչափով ուղղափառ էին Կիրեղի տեսութիւնները: Նիւսացին թէեւ տեղւոյն քրիստոնեաները պառակտուած տեսաւ եւ անբարոյութիւնը տարածուած քաղաքին մէջ, բայց Կիրեղի հաւատքը ուղղափառ գտաւ: 381ին մասնակցեցաւ Կ. Պոլսոյ Տրեզորական ժողովին: Վախճանեցաւ խաղաղ՝ 386ին:

Կիրեղի գլխաւոր գործը, որով կարեւոր դերք կը գրաւէ Եկեղեցիի աստուածաբան հայրերուն մէջ, իր «ԿՈՉՈՒՄԸ ԸՆԾԱՅՈՒԹԵԱՆ» գիրքն է՝ գրուած նախքան պատրիարք ըլլալը, այսինքն 347ին, որ 18 ճառերու համադրութիւն մըն է, որոնցմով մկրտութեան կը պատրաստէ չափահաս երախաները, որոնք սովորաբար Զատիկ ձրագալոյցին կը ստանային Ս. Մկրտութեան կնիքը: Ամէն ինչ, որ անհրաժեշտ է որ գիտնայ քրիստոնեայ մը, կը սորվեցնէ Կիրեղի Հայրապետ իր այս կարեւոր գործով, որ հայերէնի ալ թարգմանուած է Ե. գարուն: Այս գործի յունարէն բնագրին մէջ կան նաեւ հինգ ճառեր, որոնք կը վերաբերէին միայն մկրտուածներուն, որոնք սակայն չեն երեւիր հայերէն թարգմանութեան մէջ:

Ծանօթ է նաեւ Կիրեղի Հայրապետի թուղթը առ Կոստանդիոս Կայսր՝ Ս. Խաչի՝ Երուսաղէմի երկնակամարին վրայ երեւման առիթով, եւ որ մինչեւ օրս կը կարդացուի մեր եկեղեցիներու մէջ Երեւման Խաչի տօնին օրը: Ունի նաեւ գանազան ճառեր, որոնցմէ հայերէնի թարգմանուած են Տեսանընդառաջի, Համբարձման, Ս. Հոգիի, Եկեղե-

ցիի Նաւակատիքի, Ս. Խաչի մասին եղածները, ինչպէս նաեւ Հատուած մը Եսայիի մարգարէութեան մեկնութենէն եւ աղօթք մը:

Յոյնք եւ Լատինք կը տօնեն 18 Մարտին, Հայք՝ երկիցս՝ Մեծ Պահքի երկրորդ Եբ. օրը եւ Երկոտասան Վարդապետաց հետ Հոկտ.ի վերջին Շաբաթ օրը:

38. ՄԵԼԻՏՈՍ ՀԱՅՐԱՊԵՏ ԱՆՏԻՈՔԻ

Հետաքրքրական դէմք է Մելիտոս Հայրապետ մէկէ աւելի պատճառներով: Իր անունը գրեթէ յակամայս խառնուեցաւ իր ժամանակի վէճերուն եւ կրօնական հոսանքներուն այն աստիճան, որ շրջանի վէճերը եւ խնդիրները ծանօթ են իր անունով: Ապրեցաւ Արեւելեան Եկեղեցիի մեծագոյն հայրապետներու շրջանին, որոնց բոլորին հետ շփում ունեցաւ, որոնցմէ ոմանք իրեն կողմնակից եղան, իսկ ուրիշներ հակառակ դիրքաւորուած ունեցան: Մելիտոս կը կազմէ իր ժամանակի մեծ եկեղեցականներու միջինը. թէեւ չունի անոնց մեծութիւնը խօսքի, գործի եւ գրչի, բայց գերծ է նաեւ անոնցմէ ոմանց յայտնաբերած կրքոտութենէ եւ կողմնակցութենէ: Հետաքրքրական է նաեւ այնու, որ թերեւ միակ Հայաստանցի համաքրիստոնէական հայրապետն է եւ անհաւանական չէ ենթադրել, որ ազգով ալ Հայ եղած ըլլայ, քանի որ այնքան «հայկական» են իր գործունէութիւնը, մտայնութիւնը եւ նկարագիրը:

Ծնած է Փոքր Հայքի Մելիտինէ՝ Մալաթիա, քաղաքը: Եղած է նախ Առաջին Հայքի մայրաքաղաք Սեբաստիոյ եպիսկոպոս 358ին: Երկու տարի յետոյ կամովին հրաժարած է: Անտիոքի Աթոռը այս շրջանին բուռն վէճերու կեդրոն էր ընդմէջ Ուղղափառներու եւ Արիոսականներու վերջինները 30 տարիէ ի վեր տէր էին Աթոռին եւ կացութեան: 360ին օրուան Եւդոքսիոս արիոսական Պատրիարքը Կ. Պոլսոյ աթոռակալ ընտրուելով՝ Անտիոքի Աթոռը թափուր մնացած էր: Մարդիկ յոգնած էին կրօնական այս ամուլ վէճերէն եւ աւելի խաղաղասէր եւ երկու կողմին ալ ընդունելի թեկնածու մը կը փնտռէին: Համաձայնեցան Մելիտոսի վրայ: Ըստ երեւոյթին Մելիտոս ոչ բացայայտ նիկիական էր եւ ոչ ալ՝ վճռական արիոսական: Իր հիմնական ուղղութիւնը եղած էր հեռու կենալ անճկելի տեսակէտներէ: Վարքով սրբակենցաղ էր, վարուեցողութեամբ՝ քաղցրաբարոյ, բարե-

պաշտութեան մէջ՝ անկեղծ: Կարեւորութիւն տուող չէր մեթաֆիզիք նրբաբանութեանց, որոնք արդարեւ բաժան բաժան ըրած էին Եկեղեցին իր օրերուն: Այնպէս որ, ամէն ոք կը յուսար, որ Մելիտոս պիտի յաջողէր վերահաստատել խաղաղութիւնը կրօնական վէճերով պառակտուած այս մեծ քաղաքին մէջ:

Անտիոք Հասնելուն դիմաւորուեցաւ հսկայ բազմութեամբ, քանի որ կողմերը միացած էին իր անձին վրայ: Եւ արդարեւ սկիզբէն յաջողեցաւ սիրաշահել անհանդարտ այս քաղաքի բնակչութիւնը. որովհետեւ հեռու մնաց աստուածաբանական վիճելի հարցերու մասին խօսելէ, բաւականացաւ բարոյական եւ գործնական քարոզներով, աշխատեցաւ բարեկարգել աչքի զարնող ինչ ինչ անկարգութիւններ: Ծահեցաւ նաեւ յարգանքն ու համակրանքը օրուան ծանօթ եւ մեծ դէմքերուն, յատկապէս Կապադովկեան Հայրերու եւ Ոսկեբերանի, մինչև իսկ իրեն հակառակ դիրք բռնած Եպիփան Կիպրացիին: Գր. Նագիանգացի կը հաստատէ, որ արդարեւ շատ բարեպաշտ, պարզ, աննենգ եւ աստուածասէր անձ մըն էր. խաղաղութիւնը կը ճառագայթէր իր դէմքէն. զինք տեսնողները կը վստահէին իրեն եւ կը յարգէին զայն: Վերջապէս, կ'եզրակացնէ ան, իր անունը (որ մեղր կը նշանակէ յունարէնով) նոյնացած էր իր անձին եւ բարքին հետ: Յատկապէս Ուղղափառները խանդավառ էին իրմով, Արիոսականներ սպասման դիրքի մէջ էին. թէ եւ իրենց հակառակ ոչինչ ըսած էր, բայց միւս կողմէն ոչինչ կրնային բռնել իր խօսքերէն, որ իրենց ի նպաստ ըլլար:

Ի վերջոյ օրուան կայսրը Կոստանդինոս, որ Արիոսական մըն էր, Անտիոքի մէջ ժողով մը կազմակերպեց, որուն նպատակն էր մէջտեղ հանել Մելիտոսի իսկական կրօնական համոզումները: Կայսրը շատ մը եպիսկոպոսներ ալ հրաւիրեց այս ժողովին եւ պահանջեց, որ ներկաներէն իւրաքանչիւրը խօսի այն ծանօթ բնաբանի վրայ, որ վիճաբանութեան գլխաւոր նիւթն էր Արիոսական հակաճառութիւններու ընթացքին. այսինքն Առակաց Գրքի Ը. 22 համարի մասին, ուր Աստուծոյ «Իմաստութիւնը», այսինքն «Բանը», կ'ըսէ ինքզինքին համար. «Տէր ստացաւ զիս ի սկիզբն ճանապարհաց Իւրոց...»: Երկու կողմերն ալ համաձայն էին, որ այդ խօսքերը Քրիստոսի նախագոյութեան կը վերաբերէին. միայն թէ Արիոսականներ այդ խօսքերէն

այն հետեւութիւնը կը հանէին, որ Աստուծոյ Որդին «սկիզբ» մը ունէր եւ հետեւաբար «արարած» էր, ինչպէս կ'ըսեն այսօրուան Եհովայականները. իսկ Ուղղափառներ կը մեկնէին այդ խօսքը սա իմաստով. «Աստուած երբ «սկիզբէն» ձեռնարկեց իր արարչագործութեան, արդէն իսկ զիս իր հետ ունէր», եւ հետեւաբար Որդին «անսկիզբ» էր եւ «ո՛չ արարած»: Մելիտոս Հայրապետ խօսեցաւ երկար, որու ընթացքին արդարեւ յայտնաբերեց Ս. Գրոց լայն ծանօթութիւն եւ եզրակացուց.

«Հաւատալ Քրիստոսի՝ կը նշանակէ հաւատալ, որ Որդին նման է Հօրը. Անոր պատկերն է, որ ամէն բանի մէջն է, ամէն բանի արարիչն է: Որդին Հօր պատկերն է ոչ թէ անկատար ձեւով, այլ կատարեալ կերպով. ինչպէս արդիւնքը համապատասխան կ'ըլլայ պատճառի, այնպէս ալ Որդին համապատասխան է Հօրը: Միածին Որդիին ծնունդը, որ տեղի ունեցաւ «յառաջ քան զամենայն ժամանակ», իր մէջ կը պարունակէ Հօրը հետ գոյակցութեան գաղափարը»:

Ապա անդրադարձաւ բնաբանի բարոյական թելադրանքներուն: Գրեթէ ամէն մարդ գոհացուցած էր խուսափելով մասնագիտական լեզու գործածելէ՝ հնարաւորութեան սահմաններուն մէջ: Բայց ամէն մարդ կրցաւ կուսակցական այն քանի մը վարդապետական ու աստուածաբանական խօսքերէն, թէ ո՛ր կողմը հակած էր Մելիտոս: Ուղղափառներ մեծապէս գոհ մնացած էին: Արիոսականներ կարծես թէ բամպակի մէջ փաթաթուած հարուած մը կերած էին: Բարսեղ Հայրապետ, որ այս հաւաքոյթին ներկայ եղած է, գրեց Մելիտոսի ուղղափառութեան մասին դեռ տարակուսող Եպիփան Կիպրացիին. «Մելիտոս եղաւ առաջինը, որ ազատ համարձակ խօսեցաւ ճշմարտութեան ի նպաստ»:

Մելիտոս երբ վերջացուց իր ճառը, ներկաները խնդրեցին, որ իր ուսուցման համառօտագոյն մէկ բանաձեւը տար: Այն ատեն Մելիտոս անխօս կերպով բարձրացուց իր երեք մատները ի տես ներկաներուն, ապա գոցեց երկուքը եւ ձգեց մէկը ու աւելցուց. «Աստուածութիւնը թէ եւ իբրեւ երեք Անձինք կը ներկայանայ մարդկային միտքին, բայց մենք խօսեցանք որպէս թէ մէկ եղած ըլլար»: Իր այս ծեստը որդեգրուեցաւ իր կողմնակիցներէն իբրեւ իրենց խորհրդանշանը:

Այս քարոզը սակայն Մելիտոսին արժեց իր Աթոռը: Արիոսականներ զանազան անհիմն պատրուակներով դրդեցին կայսրը, որ պաշտօ-

նանկ ընէ գայն ու աքսորէ. այդպէս ալ եղաւ, երբ ան Հագիւ քանի մը ամիսներ միայն պաշտօնավարած էր: Իր հեռացումէն յետոյ Աթոռը բնականօրէն անցաւ Արիոսականներուն ձեռքը: Կացութիւնը աւելի վատթարացաւ, երբ Ուղղափառներ երկուքի բաժնուեցան իր մեկնելէն յետոյ. մէկ մասը ինքզինքը կոչեց «Եւատաթէականներ»՝ անունովը Անտիոքի Նիկիական նախկին ուղղափառ մէկ Հայրապետին (324-330), իսկ միւսը՝ «Մելիտոնականներ» կամ «Մելիտեաններ»: Պաշտի նոս անունով մէկը առաջնորդն էր առաջին խմբակին, իսկ Դիոդորոս ոմն՝ Մելիտեաններուն:

Կոստանդինոս մեռաւ 360ին, եւ իրեն յաջորդեց Յուլիանոս, որ յետս կոչեց իր նախորդին աքսորման հրահանգները: Մելիտոս թէեւ վերադարձաւ աքսորէն, բայց իր դիրքը խախտած գտաւ. չկրցաւ ամբողջապէս տիրանալ Աթոռին՝ թէ Արիոսականներուն եւ թէ Պաշտի նոսի ցոյց տուած հակառակութեան պատճառով: Այդ օրերուն Աթանաս ալ Անտիոք եկաւ եւ ուզեց ի հաղորդութեան ըլլալ Մելիտոսի հետ: Վերջինս սակայն անսալով սխալ թելադրութեան մը՝ ուշացուց իր հաւանութիւնը յայտնել այս շատ բարեմիտ եւ օգտակար առաջարկին: Աթանաս հեռացաւ քաղաքէն՝ յայտարարելով որ ինք ի հաղորդութեան է Մելիտոսի հակառակորդ Պաշտի նոսի հետ, ինչ որ ստեղծուած կացութիւնը աւելի կնճռուեց:

Երբ Վաղէս Արիոսականը կայսր եղաւ 365ին, Մելիտոս կրկին աքսորուեցաւ իր բնիկ երկիրը Հայաստան: Սակայն երկու տարի յետոյ մի կերպ կրկին վերադարձաւ եւ տէր եղաւ Աթոռին: Երրորդ անգամ ըլլալով աքսորուեցաւ 371ին: Այս միջոցին ալ Ուղղափառներու մէջ երրորդ խմբակ մը մէջտեղ ելաւ Անտիոքի մէջ, որ ինքզինքը ի հաղորդութեան կը յայտարարէր Աթանասի եւ Հռոմի Աթոռին հետ: Վաղէսի մահէն յետոյ յաջորդ կայսրը՝ Թէոդոս, յետս կոչեց նախորդին աքսորման հրահանգները, եւ Մելիտոս Անտիոք վերադարձաւ 378ին: Առաջին գործը եղաւ 150 եպիսկոպոսներով ժողով մը գումարել եւ հրատարակեց հաւատոյ հանգանակ մը, որ ի վերջոյ արժանացաւ Կ. Պոլսոյ Տիեզերական ժողովի հաւանութեան:

381ին Թէոդոս Կայսրը Արեւելեան եպիսկոպոսները Կ. Պոլիս ժողովի հրաւիրեց՝ նախ ընտրելու Կ. Պոլսոյ նոր պատրիարքը եւ ապա զբաղուելու այլ եկեղեցական հարցերով: Նկատի ունենալով, որ

Աղեքսանդրիոյ Հայրապետը չկրցաւ գալ՝ ժողովին նախագահեց Մելիտոս Պատրիարքը, որ իբրեւ այդ՝ արժանացաւ Թէոդոս Կայսեր յատուկ յարգանքին: Կ. Պոլսոյ պատրիարք ընտրուեցաւ Գր. Նագիանդացի, զոր իր գահին վրայ հաստատեց Մելիտոս Պատրիարք: Ժողովը անցաւ Նիկիոյ Հանգանակին վերանկատուման կամ վերահաստատման օրակարգին: Այս նիստին մէջ յանակնկալս վախճանեցաւ Մելիտոս Հայրապետ: Արժանացաւ մեծ դամբանականներու: Կայսրը ներկայ եղաւ իր թաղման կարգին: Մարմինը Կ. Պոլսէն փոխադրուեցաւ եւ թաղուեցաւ Անտիոք:

Յոյնք եւ Լատինք՝ Փետ. 12ին, Հայք՝ Թ. Խաչի Բշին:

39. ԵՊԻՓԱՆ ԿԻՊՐԱՅԻ

Մնած է Պաղեստին 315 թուին, հաւանաբար Հրեայ ծնողքէ: Երկար ատեն մնացած է Ս. Երկիրը իբրեւ եռանդուն գործիչներէն մէկը վանական շարժումին: Ինքն ալ հաստատեց իր վանքը Երեսթերոպոլիսի մէջ, որ հաւանաբար իր ծննդավայրն էր: Իբրեւ կազմակերպիչ եւ խղճամիտ հոգեւորական իր համբաւը այնքան լայնօրէն տարածուած էր, որ երբ 367ին Կիպրոսի եպիսկոպոսները ժողով գումարած էին ընտրելու համար իրենց եպիսկոպոսապետը, ամէնքին ձայնները միացան Եպիփանի վրայ:

Ամբողջ իր կեանքի ընթացքին եղաւ զօրաւոր ախոյեան Նիկիական Հանգանակի եւ հետեւաբար կատաղի հակառակորդը Արիոսականներուն եւ բոլոր հերետիկոսներուն եւ հերձուածողներուն: Այս իսկ պատճառով իր մատենագրական գլխաւոր երկն է «Հերքումն ամենայն հերետիկոսութեանց»: Այդ գրքին մէջ մի առ մի կը յիշուին ու կը հերքուին Քրիստոնէական եկեղեցիի ծոցին մէջ ծնած բոլոր ծանօթ աղանդները սկիզբէն մինչեւ իր օրերը:

Իր կեանքի վերջաւորութեան մեծ գործունէութիւն ցոյց տուաւ ուղղափառ ճակատին մէջ ծնունդ առած «Ապողինարեան» եւ «Մելիտեան» հակաճառութեանց ընթացքին: Առաջինը Քրիստոսի մասին մանր հերետիկոսութիւն մըն էր՝ հակաբիոսական Ապողինարի (310-390) կողմէ. կ'ըսէր ան. մարդ բաղկացած է մարմինէ, հոգիէ եւ միտքէ. Քրիստոս մարդեղութեան ատեն այս երեքէն առաջին երկուքը առաւ, իսկ մարդկային միտքին տեղը գրաւեց Բանը՝ Լոգոսը, որով

Քրիստոս թէեւ կատարեալ Աստուած էր, բայց լրիւ մարդ եղած չէր կրնար ըլլալ: Իսկ «Մեկիտեանները» տեսանք Մեկիտոս Հայրապետի մասին խօսուած ատեն: Եպիփան հակառակ դիրք բռնած էր ասոնց դէմ իբրեւ ոչ ամբողջական Նիկիականներ:

391ին Յերոնիմոսի հանդիպելով Հռովմի մէջ՝ իրարու միացան մերժելու համար Որոգինէս մեծ Վարդապետի ինչ ինչ տեսութիւնները: օրինակ մերժեցին անոր հետեւեալ ուսուցումները. 1.- թէ Հոգիները նախագոյ են, պղատոնական «իտէ»ներու պէս. 2.- թէ մեր մահականացու կամ երկրի վրայ մեր ունեցած մարմիններէն բոլորովին տարբեր են յետ յարութեան մեր առնելիք մարմինները. 3.- թէ Ս. Գրքը պէտք է մեկնել ու հասկնալ լոկ այլաբանօրէն: Հռովմէն յետոյ այցելեց նաեւ Երուսաղէմ և Կ. Պոլիս հերետիկոսամիտներու դէմ պայքարելու նպատակով: Երբ Կ. Պոլիսէն կը վերադառնար իր Աթոռը՝ Սաղամիս (Կիպրոս), ճամբան նաւուն մէջ վախճանեցաւ 403ին:

Բացի վերոյիշեալ «Հերքումն հերետիկոսաց» գործէն, Եպիփան գրած է նաեւ բազմաթիւ ճառեր և մեկնողական գրութիւններ, որոնց մեծ մասը թարգմանուած են հայերէնի. իր անունով ծանօթ կամ իրեն վերագրուած 85 կտորներ կը յիշուին հայերէնի թարգմանուած, որոնց կարեւոր մէկ տոկոսը անհարազատ կը նկատուին: Եպիփան նկարագրով եղած է անճկելի, մոլեռանդ ըլլալու աստիճան պաշտպան Նիկիական Հաւատքին և անհանդուրժող՝ բոլոր աղանդաւորներու նկատմամբ:

Յոյնք և Լատինք՝ Մայիս 12, Հայք՝ Գ. Հոգ. Բշ.ին և Հոկտ. Կերջին կամ վերջընթեր Շաբաթ օրը Երկոտասան Վարդապետաց հետ:

40. ՅՈՎՀԱՆ ՆԷՍՏՈՍԿԵՐԵՐԱՆ

Եկեղեցիի ամէնէն նշանաւոր և շնորհաշատ Հայրապետներէն մէկը: Ծնաւ 347ին իբրեւ միամօր զաւակը Հռովմէական բանակի մէջ ծառայող զօրավարի մը, որ վաղամեռ եղաւ: Իր այրիացեալ մայրը թէեւ մեծցուց զայն քրիստոնէական հաւատքի մէջ, սակայն մկրտուեցաւ ան իր չափահաս տարիքին: Իր ուսմունքը ստացաւ Անտիոքի մէջ: Նախ օրէնսգիտութիւն և հոնտորութիւն կարդաց Լիբանոս կոչուած մեծ հոնտորի մօտ, Անտիոքի մէջ, իսկ աստուածաբանութիւնը՝ Դիոգոր Տարսոնացիի մօտ, որ Անտիոքեան դպրոցի մեծագոյն ներ-

կայացուցիչն էր այդ օրերուն: Ինչպէս իր ժամանակի գրեթէ բոլոր մեծ եկեղեցական դէմքերը, այնպէս ալ ինք երիտասարդ տարիքին նուիրուեցաւ ճգնողական կեանքին նախ իր տան մէջ, քանի որ իր այրիացեալ ծերունազարդ և առաքինի մօր՝ Անթուայի խնամք տանիլը իր վրայ կը ծանրանար: Մօրը մահէն յետոյ քաշուեցաւ անապատ 373-381ին և ապրեցաւ այնպիսի խստակեցութեամբ, որ խանգարուեցաւ իր առողջութիւնը: 381ին սարկաւազ ձեռնադրուեցաւ ու ծառայեց Անտիոքի մէջ: 386ին ձեռնադրուեցաւ քահանայ և իր հրաշալի ու պերճ քարոզութեամբ շահեցաւ «Ոսկեբերան» ժողովրդական տիտղոսը, որ իր վրայ մնաց իբրեւ մականուն: Երբ իր հոնտորական մեծ քարոզութիւնը ի սպաս կը դնէր անուանապէս միայն քրիստոնէայ մնացած այս անկարգ քաղաքի բարեկարգութեան համար, միաժամանակ զբաղուած էր Ս. Գրոց մեկնաբանութեամբ, զոր կը կատարէր այնպիսի վայելչութեամբ և յստակութեամբ, որ ճանչցուեցաւ հին ժամանակներու Աստուածաշունչի ամէնէն կարող մեկնիչը:

398ին Կ. Պոլսոյ պատրիարք ընտրուեցաւ հակառակ իր կամքին: Նոյն կորովով ձեռնարկեց նաեւ այս մայրաքաղաքի բարեկարգութեան, որ վէճերով ու անբարոյ կեանքով շատ բան կորսնցուցած էր քրիստոնէական կենցաղէն: Յատկապէս ապականութիւնը և կրօնական անտարբերութիւնը բոյն դրած էին որքան արքունիքին և հոգևորականութեան, նոյնքան ալ քաղաքի բնակչութեան մէջ: Իր ուղղամտութեան և սրբակենցաղ բարեպաշտութեան կողքին Ոսկեբերան ունէր անկաշկանդ համարձակութիւն կշտամբելու համար ամէն տեսակ անբարոյութիւն, հոգ չէ թէ սրբան բարձրագոյն դիրքերու վրայ գործուած ըլլար այդ: Այս պատճառով իր վրայ հրաւիրեց գայրոյթը օրուան Եւդոքսիա կայսրուհիին, զոր չէր քաշուեր յանդիմանել իր անբարոյ վարքին համար: Իր դէմ միացաւ նաեւ Աղեքսանդրիոյ Թէոփիլոս Պատրիարքը, որ կը փափաքէր Կ. Պոլսոյ պատրիարք ըլլալ: 403 թուին եկեղեցական ժողովի մը կողմէ դատապարտուեցաւ 29 ամբաստանութիւններով, բոլորն ալ անհիմն և անհեթեթ, բացի մէկէն, որ էր կայսրուհիին հանդէպ իր ունեցած անպատշաճ ակնարկութիւնները: Այս ժողովին կր նախագահէր իր նախանձորդը՝ Թէոփիլոս Պատրիարք: Աքսորման հրահանգ հանուեցաւ իր դէմ. սակայն իր մեկնումի գիշերը այնպիսի զարհուրելի երկրաշարժ և հրդեհներ

պատահեցան Պոլսոյ մէջ, որ կայսրուհին ետ կանչել տուաւ զայն իր Աթոռը: Սակայն աքսորի հրահանգը դաս մը չէր եղած Ոսկեբերանին: Շարունակեց նոյն խստութեամբ քարոզել արքունիքի գեղիւթեանց դէմ: Ժողովրդային համակրանքը եւ Արեւմտեան Եկեղեցիին պաշտպանութիւնը սակայն չկրցան արգելել, որ օրուան թուլամորթ Արկադիոս Կայսրը եւ իր կամօշտ կիներ Եւրոքսիան երկրորդ անգամ աքսորի հրահանգ չտային երանելի պատրիարքին դէմ: Նախ աքսորուեցաւ Անտիոքի կողմերը. սակայն երբ նկատուեցաւ, որ հակառակ իր խանգարուած առողջութեան շուտով մեռնելիք չէր այն կողմերու մեղմ կլիմային տակ, աքսորեցին զայն Կոկիտոն, ապա Պոնտոս: Մեծ Հայրապետը տառապէս նահատակուեցաւ, երբ բռնադատուեցաւ ոտքով քայլել այդ երկար ճամբան, հիւանդ վիճակին մէջ եւ կլիմայական ու աշխարհագրական ամէնէն աննպաստ պայմաններու տակ: Մեռաւ Կոմանա քաղաքի մէջ 407ին: Իր վերջին բառերը եղան. «Փառք Աստուծոյ յաղագս ամենայնի»: 438ին իր մարմինը բերուեցաւ մեծ հանդէսով Կ. Պոլիս եւ թաղուեցաւ Ս. Առաքելոց եկեղեցւոյ մէջ, ուր թաղուած էր նաեւ իր ոխերիմ հակառակորդը՝ Եւրոքսիա Թագուհին, 404 թուականին:

Մեծ եղաւ Ոսկեբերան ոգիով, քաջութեամբ, քարոզութեամբ եւ մանաւանդ գրական արդիւնքով, որ դարեր շարունակ իբրեւ հիւթեղ հոգեւոր սնունդ մատակարարուեցաւ համայն Քրիստոնէական Եկեղեցիին եւ որ իր արժէքը կը պահէ նաեւ այսօր: Իր գործերուն մէջ նշանաւոր է իր գրած Ս. Պատարագը, որմէ շատ տարր կայ նաեւ մեր Ս. Պատարագին մէջ: Բազանայութեան վրայ գրած ճառը, բազմաթիւ քարոզները եւ Ս. Գրոց մեկնաբանութիւնները մեծ մասով թարգմանուած են հայերէնի Ե. դարուն, ընտիր գրաբարով, եւ մաս մըն այժմ տքի դարերուն մէջ: Գրած է նաեւ մեծ աղօթքներ տօնական մեծ առիթներով, որոնցմէ ոմանք մինչեւ օրս կը կարդացուին մեր եկեղեցիներու մէջ:

Յոյնք՝ Նոյ. 13, Յնվր. 27 եւ Յնվր. 30, Լատինք՝ Յնվր. 27, Հայք՝ Ե. Խաչ. Եջ. եւ Հոկտ.ի վերջին Շք. 12 Վարդապետաց հետ:

41. ՅՈՎՀԱՆ ՆԷՍ ՀԱՅՐԱՊԵՏ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Յաջորդած է Կիւրեղ Երուսաղէմացիի 386ին: Եղած է պերճախօս եւ ազդու քարոզիչ. «Ահարկու՛ հանդէպ յանցապարտներուն եւ գորովական՛ գղջացողներու խիստ՛ ստահակներու հանդէպ եւ Հայրազու՛թ՛ հլու հնազանդներու: Առիւծի պէս վեհանձն եւ անձամբ փառաւոր եւ շքեղ մարդ»: միաժամանակ ճոխացած՝ գիտութեամբ եւ առաքինութեամբ՝ այն աստիճան, որ ոմանք կոչած են զայն «սուրբ եւ սքանչելի Հայրապետ»: Յարաբերութեան մէջ եղած է իր ժամանակի բոլոր եկեղեցական մեծ դէմքերուն եւ Աթոռներու գահակալներուն հետ:

Յովհաննէս սքանչացող մըն էր Որոգիինէս մեծ մտաւորականին եւ աստուածաբանին (185-254), որ Աղեքսանդրիացի ըլլալով հանդերձ՝ այդ քաղաքի աստուածաբանական բարձրագոյն վարժարանը փոխադրած էր Պաղեստինեան Կեսարիա: Եպիփան Կիպրացի, ընդհակառակը, բացայայտօրէն քննադատող մըն էր Որոգիինէսի ուղղափառութեան եւ կը նկատէր զայն «նախահայր եւ ծնող Արիոսի եւ այլ աղանդոց»: Եպիփան գգուչացուց Յովհաննէսը այս մասին, մինչեւ իսկ իր քարոզներուն մէջ Յովհաննէսը ներկայացուց իբրեւ Որոգիինէսեան: Այս պատճառով գծտութիւն ինկաւ երկուքին մէջ. որուն արծագանգը կը հանդիսանայ Փեշտիմալճեանի Յայսմաւուրքը, ուր երկարօրէն պատմուած է, որ Յովհաննէս որպէս թէ արծաթասէր էր եւ թանկարժէք սեղանի սպասներ ունէր, զորս Եպիփան խորամանկութեամբ ձեռք ձգեց ու ծախեց եւ դրամը աղքատներուն բաժնեց, որուն վրայ սաստիկ կը գայրանայ Յովհաննէս եւ կ'անարգէ Եպիփանը եւ ջղայնութենէն աչքերը կը կուրծնան: Եպիփան կ'աղօթէ եւ աչքերէն մէկը կը բացուի, բայց միւսը կոշոր կը մնայ ի յիշատակ Հարստութեանց շատ կապուելուն: Սակայն Վենետիկի «Լիակատար վարք սրբոցը» կը մերժէ նման պատմութիւն մը իբրեւ «յօրինեալ»:

Մինչեւ վերջը մնաց բարեկամ Ոսկեբերանի, որ իր վերջին թուղթերէն մէկը Կոկիտոնի աքսորավայրէն գրեց Յովհաննէսին՝ ըսելով՝ թէ եւ «Աթոռէն աքսորուեցանք, բայց քու սէրէդ տարագիր չեղանք»: Առաջ սերտ բարեկամ էր Աղեքսանդրիոյ Պատրիարք Թէոփիլոսի հետ, բայց վերջինս իմանալով իր սրտագին բարեկամութիւնը Ոսկեբերանին հետ, որուն հակառակորդներէն էր Թէոփիլոս՝ խզեց իր յարաբերութիւնը Յովհաննէսին հետ: Բարեկամական ու եղբայրական հա-

ղորդակցութեան մէջ էր Հռովմի Անաստաս Հայրապետին հետ, որ իրեն գրած թուղթին մէջ զայն կը նկատէ «գերագանց ամենից» եւ «առաքելութեամբ լեցուած»:

Բարեկամութիւն հաստատեց Ափրիկէի մեծանուն եպիսկոպոս Օգոստինոսին հետ, Պեղագեան խնդիրներու կապակցութեամբ: Բրիտանացի Պեղագոս՝ Դ. դարու վերջին քառորդին եւ Ե. դարու առաջին քառորդին ապրած եւ գործած, կ'ըսէր, թէ Ադամի մեղքը չէր տարածուած անոր սերունդին վրայ եւ թէ փրկուելու համար անհրաժեշտ չէր աստուածային շնորհը. մարդ իր ազատ կամքով կատարեալ կ'ըլլայ եւ փրկութեան կ'արժանանայ: Օգոստինոս Հայրապետ ամէնէն կատաղի հակառակորդը եղաւ այս տեսութեան: Ու երբ Պեղագոս ատեն մը Հռովմ այցելելէ յետոյ 410ին Ափրիկէ անցաւ եւ անկէ Պաղեստին, Օգոստինոս գրեց Յովհաննէս Պատրիարքի անոր հերետիկոսութեանց մասին: Յովհաննէս երկիցս ժողով գումարեց, ուր դատաւարտուեցան Պեղագոսի վերագրուած տեսութիւնները, սակայն Պեղագոս ճարտար դարձուածքներով իր անձը ազատեց դատաւարտութենէ: Յովհաննէս վախճանեցաւ բարի եւ խաղաղ մահուամբ 417ին:

Յոյնք կը յիշատակեն Մարտ 30ին, մենք՝ Մեծ Պահքի երրորդ Շաբաթ օրը, իսկ Լատինք չեն յիշատակեր:

42. ՄԱՐՈՒԹԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ազգով Ասորի է, մօր կողմէ՝ Հայազգի: Եպիսկոպոս ընտրուած է Հայոց Միջագետքի կամ Չորրորդ Հայքի նփրկերտ քաղաքին, որ այսօր կը կոչուի Չարդին Մատենի, ոչ շատ հեռի Տիարպաքըրէն: Այս քաղաքը թէեւ աննշան էր, բայց նշանաւոր դարձաւ շնորհիւ Մարութա եպիսկոպոսին, որ այնտեղ հաւաքեց բազմաթիւ սուրբերու մարմինները եւ մասունքները, եւ այդ պատճառով ալ քաղաքը կոչուեցաւ նաեւ Մարտիրոպոլիս՝ քաղաք մարտիրոսաց:

Մարութա եպիսկոպոս յատուկ յարգանք վայելած է թէ՛ Պարսկական եւ թէ՛ Բիւզանդական արքունիքներու մօտ եւ իր այդ հանգամանքով բանագնաց եղած է բազմիցս Կ. Պոլսոյ եւ Տիգրանի միջեւ թէ՛ պետական գործերով եւ թէ՛ մանաւանդ ի խնդիր իր Եկեղեցիի կրօնական ազատութեան, որմէ զրկուած էր Շապուհ Բ. (310-380) Երկաթակեաց Թագաւորի օրով: Բիւզանդիոնի արքունիքը սակայն այնքան

զբաղուած էր իր ներքին վէճերով, որ դժբախտաբար առհասարակ անտարբեր գտնուած է Արեւելեան Եկեղեցիներու տառապանքներուն եւ հալածանքներուն հանդէպ, ինչպէս պիտի ըլլար քանի մը տասնեակ տարիներ յետոյ Վարդանանց շարժումի ընթացքին: Այս պարագային ալ օրուան Արկադիոս Կայսրը այնքան զբաղուած էր Ոսկեբերանի բերանը գոցելու եւ զայն աքսորելու հարցերով, որ ժամանակ չունեցաւ Մարութայի յարուցած հարցով զբաղուելու: Ի վերջոյ պատուական եպիսկոպոսը Արեւմուտքէն յուսահատած՝ անձամբ դիմեց Պարսից արքունիքը եւ ի հեճուելս մոգերու կատաղի հակառակութեան եւ սաղրանքներուն՝ յաջողեցաւ սիրաշահիլ Յազկերտ Ա. ի (399-420) բարեացակամութիւնը իր քաղցր վարուեցողութեամբ, խոհական իմաստութեամբ եւ բժշկական օգտակարութեամբ, ձեռք ձգեց իր հօտի հալածանքին դադարման հրահանգը:

Ներկայ եղաւ Կ. Պոլսոյ Տիեզերական Ժողովին 381ին: Պարսկական Եկեղեցիի բարեկարգութեան եւ զօրացման համար երկու ժողովներ գումարեց Տիգրանի մէջ: Ունեցած է նաեւ մատենագրական վաստակ, որոնցմէ 4-5 կտորներ թարգմանուած են հայերէնի: Իր զլխաւոր գործերը կը նկատուին. 1.- Գործք Մարտիրոսացն Պարսից, 2.- Պատմութիւն Ժողովոյն Նիկիոյ, 3.- Գործք Ժողովոյն Տիգրանի: Գրած է նաեւ շարականներ Ասորական Պատարագի համար եւ սուրբերու ձօնուած: Կը յարգուի իբրեւ սուրբ Արեւելեան եւ Արեւմտեան բոլոր Եկեղեցիներէ: Վախճանած է 420ական թուականներուն:

Յոյնք՝ Փետրուար 16, Լատինք՝ Դեկտ. 4, Հայք՝ Դ. Յիս. Բշին:

43. ԿԻԻՐԵՂ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ ՀԱՅՐԱՊԵՏ

Վերջին համաքրիստոնէական Հայրապետը, որ անցած է մեր տօնացոյցին: Ամէնէն կորովի եւ ամէնէն նշանաւոր եկեղեցական գործիչներէն մին եղաւ: Մնաւ Աղեքսանդրիոյ մէջ 380ին՝ իբրեւ եղբորորդին Թէոփիլոս Պատրիարքի, որուն հետ ներկայ եղած կը նկատուի երիտասարդ տարիքին այն ժողովին, որ գահընկէց ըրաւ Ոսկեբերանը 403ին: Յաջորդեց իր հօրեղբօրը 412ին: Առաջին գործերէն մէկը եղաւ կատաղի պայքար բանալ Նովատեան հերձուածողներուն դէմ, որոնց եկեղեցիները փակեց, Հրէից դէմ, որոնք խառնակութիւն կը հանէին Աղեքսանդրիոյ մէջ ընդդէմ քրիստոնէից, եւ զորս մեծ մասով վտա-

րեց Աղեքսանդրիայէն: Ինչպէս նաև պայքար բացաւ քաղաքի կառավարիչին՝ Ովրեստէսի դէմ, որ կը պաշտպանէր Հրեաները եւ կը նախանձէր իր Հնդկահայութեան. որ կը գերազանցէր իրենինը:

Իր անունը յատկապէս կապուած է Ս. Կոյսի «Աստուածածին» մակդիրի դէմ բացուած պայքարներուն: Կ. Պոլսոյ Նեստոր Պատրիարքը դէմ արտայայտուեցաւ այս մակդիրի գործածութեան եւ փոխարէն ջատագովեց «Քրիստոսածին» մակդիրը, քանի որ Ս. Կոյսը լոկ մարդ-Քրիստոսի ծնունդ տուած էր, կ'ըսէր: Աղեքսանդրիոյ եւ Կ. Պոլսոյ Աթոռներու միջև ծայր տուած մրցակցութիւնը, Աղեքսանդրեան աստուածաբանութեան Հակակրանքը Անտիոքեան աստուածաբանութեան (Նեստոր իր ուսմունքը ստացած էր Անտիոքի մէջ) ու վերջապէս Կիւրեղի պայքարասէր բնաւորութիւնը իրարու միացան մարտահրաւէր կարգալու Նեստորին: 429ի հրատարակած իր «Զատկական պատգամ» նամակին մէջ Կիւրեղ պաշտպանեց «Աստուածածին» բառը: Աղեքսանդրիոյ մէջ իր եպիսկոպոսներով ժողով գումարեց եւ դատապարտեց Նեստորը: Նոյնը ընել թելադրեց Հռոմի Կեղեստինոս Պապին 430ին: Երկու ժողովներուն որոշումները, իր կողմէ անելցուած 12 կէտերէ բաղկացեալ նզովքներով, ղրկեց Նեստորին, յարակից նամակով մը, ուր կը թելադրուէր Նեստորին ընդունիլ երկու ժողովներուն որոշումները եւ ստորագրել առաջարկուած նզովքները: Կիւրեղ այս պարագան տեղեկացուց նաև Անտիոքի Յովհաննէս Պատրիարքին. որ Նեստորի բարեկամն էր:

Նեստոր բնականօրէն մերժեց Կիւրեղի թելադրանքները եւ հրապարակաւ քարոզեց ընդդէմ Կիւրեղի՝ իբրև զրպարտիչ. բայց միաժամանակ պատրաստակամութիւն յայտնեց գործածելու «Աստուածածին» բառը, որ ժողովրդականացած էր արդէն: Իր այս քարոզները իր կարգին ղրկեց Անտիոքի Յովհաննէս Պատրիարքին, որ նախընտրեց ասոնք ընդունիլ. քան Կիւրեղի նզովքները:

Մինչ այդ խնդիրը անելի պաշտօնական գետնի վրայ կարգադրելու համար, թելադրուեցաւ օրուան կայսեր՝ Թէոդոս Բ. Կրտսերի, որ տիեզերական ժողովի հրաւիրէ բոլոր եպիսկոպոսները Եփեսոսի մէջ: Հռոմի Պապն այ համաձայն եղաւ նման ժողովի մը՝ յուսալով որ խաղաղութիւնը պիտի վերահաստատուէր նման Հաւաքոյթի մը միջոցաւ: Ժողովը գումարուեցաւ 431ին: Երբ Նեստորիոս Եփեսոս հասաւ

կայսեր ներկայացուցչին հետ, բոլոր եկեղեցիները իր առջև փակուած գտաւ որովհետև Եփեսոսի եպիսկոպոսը Կիւրեղի կողմնակից էր: Կիւրեղ եկած էր 50 եպիսկոպոսներով: Պարեաստինի, ամբողջ Փոքր Ասիոյ եւ Յունաստանի եպիսկոպոսները իրեն կողմնակից էին: Անտիոքի Յովհաննէս Պատրիարքը եւ իր եպիսկոպոսները ուշացան: Կիւրեղ ենթադրելով, որ անոնք ժողովի պիտի չգան՝ բացաւ ժողովը Յունիս 22ին, հակառակ որ 68 եպիսկոպոսներ խնդրեցին ժողովի բացումը յետաձգել մինչև յստակ լուրի մը առնուելը Անտիոքցիներէն: Ձէին հասած նաև Պապի ներկայացուցիչները: Կիւրեղ սակայն պնդեց, որ ժողովը շարունակէ իր ընթացքը: Ինք ըլլալով բարձրագոյն աստիճան ունեցող հոգևորականը՝ նախագահեց ժողովին: Նեստոր կանչուեցաւ ժողովին ինքզինքը արդարացնելու համար: Սակայն ան մերժեց ընդունիլ հրաւիրակ եկող չորս եպիսկոպոսները: Ուստի ժողովը դատապարտեց զայն իբրև հերետիկոս եւ պաշտօնանկ ըրաւ իր Աթոռէն: Կիւրեղի նամակը առ Նեստոր, ուր կը համադրէր իր հաւատոյ տեսակէտները, պաշտօնապէս ընդունուեցաւ ժողովի կողմէ: Երբ Անտիոքի եպիսկոպոսները հասան, շաբաթ մը վերջը, իրենց կարգին առանձին ժողով մը գումարեցին 43 եպիսկոպոսներով եւ դատապարտեցին ու պաշտօնանկ հռչակեցին Կիւրեղը: Կայսրը ի վերջոյ հաստատեց Կիւրեղի գումարած ժողովի որոշումները, ինչպէս ըրին Պապի պատուիրակները, որոնք հասան ամիս մը վերջը:

Հակառակ իր բուռն բնաւորութեան՝ Կիւրեղ կը մնայ Քրիստոնէական Եկեղեցիի ամէնէն տիրական աստուածաբաններէն մէկը: Ամէնէն փայլուն ներկայացուցիչն է Աղեքսանդրեան դպրոցին, որ շեշտը կը դնէր Յիսուսի աստուածութեան վրայ, առանց մերժելու կամ նուազեցնելու կարևորութիւնը անոր մարդկութեան: Ու հիմնուելով Աթանասի եւ Կապադովկեան Հայրերու տեսութեանց վրայ՝ համադրեց եւ սիսթեմաթիք դրութեան մը վերածեց Ս. Երրորդութեան, Քրիստոսի մարդկութեան եւ բնութեան վարդապետութիւնները: Կիւրեղի նշանաւոր բանաձևը՝ «Մի բնութիւն Բանին մարմնացելոյ», եղած է Հայաստանեայց Եկեղեցւոյ՝ Քրիստոսի բնութեան վարդապետութեան հիմնաքարը, որով կը շեշտուի Քրիստոսի մարդկային եւ աստուածային բնութեանց ՄԻՈՒԹԻՒՆԸ՝ ընդդէմ Նեստորի երկու բնութեանց անջատման վարդապետութեան: Արևելքի մէջ

ճանչցուած է ան իբրև «կնիք եկեղեցական Հայրերու»: Ու իր Համադրող վերոյիշեալ բանաձեւը ընդունուած եւ որդեգրուած է Երրորդ Տիեզերական Ժողովէն, որուն վրայ դեռ միացած կը մնան Հակաքաղկեդոնական ու Քաղկեդոնական Եկեղեցիները: Զգած է ճառեր, մեկնութիւններ եւլն, որոնք եւս կարեւոր չափով թարգմանուած են Հայերէնի, մեծ մասամբ Ը. դարուն Ստեփանոս Սիւնեցիի ձեռքով: Վախճանեցաւ 444ին:

Յոյնք՝ 9 Յունիս եւ 18 Յունուար, Լատինք՝ 9 Փետր. եւ 28 Յունուար, Հայք՝ Դ Վրդվո. Շբ. եւ Հոկտ.ի վերջին Շբ. 12 Վարդապետաց Հետ:

Բ. ՔԱՀԱՆԱՅՔ

1. ՂՈՒԿԻԱՆՈՍ ՔԱՀԱՆԱՅ ԱՆՏԻՈՔԻ

Երկու Ղուկիանոս քահանաներ կան մեր տօնացոյցին մէջ, թէ եւ անոնցմէ մէկը Ղուկիանոս գրուած: Մին կը տօնուի Ե. Հոգ. Բշ. միւսը՝ Ա. Յիս. Գշ.: Յայսմաւուրքը մէկ Ղուկիանոս Քահանայ կը ճանչնայ, Թորգոմ Պատրիարք մէկ Ղուկիանոս Քահանայի մասին միայն գրած է իր «Սուրբք եւ Տօնք» գրքոյկին մէջ: Յոյն տօնացոյցին մէջ մէկ Ղուկիանոս Քահանայ կայ: Լատին տօնացոյցին մէջ թէ եւ երկու Ղուկիանոս Քահանաներ կան, բայց մէկը այնքան աննշան է եւ նահատակուած Գաղղիոյ մէջ, որ չենք կարծեր, որ արձագանգ գտած ըլլայ մեր մէջ, ինչպէս չէ գտած Յունաց մէջ: Որով մենք ալ կը ճանչնանք մէկ Ղուկիանոս Քահանայ, որուն երկու տօնակատարութիւն չենք խորհիր որ տնօրինուած ըլլայ, որով անոնցմէ մին պէտք է վերցուի տօնացոյցէն:

Մանօթ ու պատմական Ղուկիանոս Քահանան ծնած կը նկատուի Սամոսատի մէջ: Կը ծաղկի եւ կը գործէ Գ. դարուն վերջերը եւ Դ. դարուն սկիզբները: Գլուխն է իր ժամանակի Անտիոքի աստուածաբանական դպրոցին, որուն աշակերտած են նաեւ Արիոս եւ Եւսեբիոս Նիկոմիդացի՝ նոյնպէս Արիոսական: Այնպէս որ, շիտակ կամ սխալ, Ղուկիանոս կը նկատուի նախահայրը այն աստուածաբանական տեսակէտներու, որոնք իրմէ յետոյ դրսևորուեցան Արիոսականութեան մէջ:

Հակառակ սակայն իրեն վերագրուած այս տեսակէտներուն, որոնք յետոյ դատապարտուեցան Նիկիոյ Ժողովին մէջ յանձին Արիոսի՝ եղած է առաքինի անձ մը եւ սրբակենցաղ հոգևւորական մը: Յայսմաւուրքը կ'ըսէ իր մասին. «Մնած ու վարժուած էր ճգնութեամբ եւ աստուածահաճոյ վարքով: Իր ծնողքի մահէն յետոյ իր ամբողջ ունեցածը բաշխեց աղքատներուն եւ Ս. Գրքի մեծ ուսումնասէր մը եղաւ»: Հակառակ լոկ քահանայական կարգ ունենալուն՝ «կատարեալ վարդապետ մը եղաւ իր եպիսկոպոսին հրամանով»: Մաքսիմիանոս Դաժի Հալածանքներու ատեն ձերբակալուեցաւ եւ զրկուեցաւ Նիկոմիդիա, ուր 9 տարի բանտարկուեցաւ ու ենթարկուեցաւ շատ

չարչարանքներու եւ ի պաշտպանութիւն իր հաւատքին հրաշալի ճառ մը արտասանելէն յետոյ գլխատուեցաւ 312ին:

Ղուկիանոս յիշատակելի է նաեւ այն իրողութեամբ, որ կը հաւատար Ս. Գրքի տառական ու պատմական մեկնաբանութեան եւ ոչ՝ այլաբանական մեկնաբանութեան, ինչպէս կը հաւատային Աղեքսանդրեան դպրոցի հետեւողները: Այս իսկ պատճառով շեշտը կը դնէր Ս. Գրքի բնագրային ճշգրտութեան վրայ: Ուստի ձեռնարկեց Եօթանասնից թարգմանութիւնը սրբագրելու աշխատանքին, երբայական բնագրին վրայէն: Այս սրբագրութիւնը լայն գործածութիւն գտաւ Դ. դարուն: Քերականորէն մանր սրբագրութիւններ կատարած է նաեւ Նոր Կտակարանի վրայ՝ յատկելով անորոշութիւնները եւ յղկելով լեզուն. կը կարծուի, որ այսօրուան գործածական Նոր Կտակարանը իր սրբագրածն է: Յերոնիմոս կը գովէ եւ կը գնահատէ այս սրբագրութիւնը, իսկ Ոսկեբերան՝ Ղուկիանոսի գիտնական ու առաքինի անձը:

Յոյնք՝ Հոկտ. 15, Լատինք՝ Յնվր. 7:

2, 3. ԳՈՒՐԻԱՍ ԵՒ ՍԱՄՈՆԱՍ ԲԱՀԱՆԱՆԵՐ

Ըստ Յայսմաւուրքի տուեալներուն՝ Եդեսիացի երկու քահանաներ են ասոնք Դիոկղետիանոս Կայսեր օրով: Իբրեւ քրիստոնեաներ ձերբակալուեցան եւ հանուեցան իրենց քաղաքի դատաւորին առջեւ, որ հրամայեց անոնց խուսել ծխել կուռքերուն առջեւ եւ երկրպագել կայսեր պատկերին: Երբ մերժեցին, կախեցին զանոնք իրենց մէկ ձեռքերէն: Երբ անոնց յօդերը խախտեցան, կրկին հարցուցին, թէ պիտի կատարե՞ն իրենց հրամայուածը: Երբ ժխտական պատասխան ստացան, ձեռքերը եւ ոտքերը կապուած խոր վիրապ նետեցին զանոնք եւ երեք օր անօթի ու ծարաւ պահեցին: Ապա հանելով այս անգամ կախեցին իրենց մէկ ոտքերէն: Այդ ալ անօգուտ անցնելով՝ գլխատեցին, Դ. դարու սկիզբը:

Յոյնք եւ Լատինք՝ Նոյ. 15, Հայք՝ Թ. Խաչ. Եշ.:

4. ԳՂԵՐԻԿՈՍ ԵՐԷՑ

Անուան ճշգրիտ ձեւն է, ըստ յունականին, Գղիկերիոս: Այս կամ վերի անունով սուրբի մը չենք հանդիպիր մեր Յայսմաւուրքին մէջ: Ըստ Լատին Յայսմաւուրքի՝ կ'ապրի Դիոկղետիանոսի եւ Գաղերիոսի հալածանքներու ժամանակ: Վերջինս այդ օրերուն Նիկոմիդիա կը գտնուէր: Գաղերիոս օրին մէկը իր զօրականները եկեղեցիի մուտքին ձգելէ յետոյ մտաւ եկեղեցի եւ խօսքը ներկաներուն ուղղելով՝ նախ մեղմ եւ համոզիչ խօսքերով կոչ ուղղեց անոնց, որ ձգեն իրենց «սխալ կրօնքը» եւ դառնան իրենց հայրենի աստուածներուն: Դարձողներուն խոստացաւ պատիւ, հարստութիւն եւ դիրք: Ապա եզրակացուց կայսրը խստութեամբ. «Այլապէս ամենախիստ պատիժներու պիտի ենթարկուիք: Կը տեսնէ՞ք այս շէնքը – ակնարկելով եկեղեցիին – գոր այնքան ամուր կը կարծէք. ի հարկին կ'այրեմ զայն ու ձեզ ալ միասին»:

Տիրեց խոր լուսթիւն: Այն ատեն առաջ անցաւ եկեղեցիի քահանան՝ Գղիկերիոս, ու այսպէս խօսեցաւ. «Ո՛վ թագաւոր, մենք պէտք չունինք քու խոստումներուդ եւ ոչ ալ՝ պարգեւներուդ. իսկ սպառնալիքներդ մեզ չեն վախցներ: Ի՞նչպէս կրնաս վախցնել կամ հրապուրել այս մարդերը, որոնք աշխարհի բոլոր բարիքները վաղանցիկ կը նկատեն եւ ոչինչ այնքան կը բաղձան, որքան տառապիլ կամ մեռնիլ Յիսուս Քրիստոսի համար: Գիտցած եղիր, թէ մեր Աստուծոյն զօրութիւնը գերազանց է քու աստուածներէդ... Եթէ այսօր դուն զինած ես այդ զինուորները, մեր Թագաւորն ալ տուած է մեզի զէնքեր, որոնցմով մենք ալ պիտի պայքարինք քու դէմդ եւ հրաշալի յաղթանակ պիտի շահինք: Որովհետեւ մենք պարտութեան կը մատնենք հակառակորդը՝ հարուածներ ընդունելով, ու յաղթութիւնը կ'ապահովենք՝ մեռնելով մեր Աստուծոյն համար»:

Կայսրը չհամարձակեցաւ ի գործ դնել իր սպառնալիքը. քաշեց զինուորները եւ հեռացաւ զայրոյթով: Հաւատացեալներ շարունակեցին աստուածային պաշտամունքը: Քիչ վերջ սակայն, Գղիկերիոս ձերբակալուեցաւ եւ տարուեցաւ կայսեր առջեւ, որ նախ ենթարկեց զայն ծանր ձաղանքի արջառաջիլով, մինչեւ որ իր մորթը գրեթէ քերծուեցաւ: Երբ տակաւին ամուր մնաց հաւատքին վրայ, ողջ ողջ այրուեցաւ եւ շահեցաւ մարտիրոսութեան փառապսակը 303ին:

Լատինք՝ Դեկտ. 21, Յոյնք՝ Դեկտ. 28, Հայք՝ Դ. Յիս. Եշ.:

5. ՄՈՎԿԻՄՈՍ ՔԱՀԱՆԱՅ

Այս անուան յունական ձևն է Մովկիոս, իսկ լատինականը՝ Մուլիոս: Ծնունդով Բիւզանդացի, որդի բարձրաստիճան քրիստոնեայ գինուորականի: Ստացաւ քրիստոնէական ամուր դաստիարակութիւն: Քահանայ ձեռնադրուեցաւ Մակեդոնիոյ Ամփիպոլիս քաղաքին եւ «էր վարդապետ ճշմարտութեան» եւ նուիրուած՝ քրիստոնէական կրօնքի քարոզութեան՝ յատկապէս շնչտելով կոնապաշտութեան յիմարութիւնը: Այս իսկ պատճառով ուշադրութիւն գրաւեց եւ հանուեցաւ քաղաքի կուսակալին ներկայութեան: Երբ համարձակ խոստովանեցաւ իր քրիստոնեայ ըլլալը, ենթարկուեցաւ խիստ չարչարանքներու եւ բանտ դրուեցաւ: Ի վերջոյ զրկեցին զայն Բիւզանդիոն՝ այնտեղ դատուելու համար, ուր արդարեւ գլխատման վճիռ տրուեցաւ ու նահատակուեցաւ քաջարի այս քահանան: Կոստանդիանոս մեծ եկեղեցի շինեց անոր տապանին վրայ:

Յոյնք՝ Մայիս 11, Լատինք՝ Մայիս 13, Հայք՝ Բ. Հոգ. Բշ.:

6. ՅՈՎՍԷՓ ՔԱՀԱՆԱՅ

Ազգով Պարսիկ: Ակիփսիմոս Եպիսկոպոսին եւ Այիթալա Սարկաւազին հետ դատուեցան Պարսից արքունիքին առջեւ՝ երեքն ալ իրենց յառաջացեալ տարիքներուն մէջ: Յովսէփ աւելի քան 70 տարեկան էր ձերբակալուած ատեն: Երբ մերժեց երկրպագել արեւին եւ կրակին, չարաչար խոշտանգեցին զայն եւ բանտարկեցին երեք տարիներ: Երբ կրկին մերժեց ուրանալ իր հաւատքը, նոր չարչարանքներու ենթարկեցին, որոնց ներքեւ գրեթէ կիսամահ եղաւ ձերունի քահանան: Փոխադրեցին ուրիշ քաղաք եւ վեց ամիս եւս բանտարկեցին: Ի վերջոյ բռնադատեցին քաղաքին քրիստոնեաները, որ քարկոծեն զայն. քարերու տարափին տակ մեռաւ ձերունազարդ քահանան՝ աղօթելով Աստուծոյ, որ քարկոծողներուն մեղք չհամարէ, քանի որ բռնութեան ներքեւ կ'ընէին զայն: Ժամանակ մը յիտոյ իր եւ վերոյիշեալ երկու վկաներուն նշխարներն ալ Բիւզանդիոն տարուեցան եւ մեծ յարգանքի արժանացան:

Յոյնք եւ Ասորիք՝ Նոյ. 3, Լատինք՝ Ապրիլ 22, Հայք՝ Ը. Խաչ. Գշ.:

7. ԹԷՈՂԻՏՈՆ ԿԱՄ ԹԷՈՂԻՈՐԻՏՈՍ ՔԱՀԱՆԱՅ

Մեր տօնացոյցին մէջ Թէոդոտոն անունով քահանայ մը կայ, սակայն ոչ մեր Յայսմաւուրքներուն եւ ոչ ալ յոյն եւ լատին տօնացոյցներուն մէջ նման անունի մը հանդիպեցանք: Փոխարէն կայ ԹէՈՂԻՈՐԻՏՈՍ անունով քահանայ մը, զոր Թորգոմ Պատրիարք Նոյնացուցած կ'երեւի մեր Թէոդոտոնի հետ: Նոյնը կ'ընենք նաեւ մենք: Այսուհանդերձ փոքր դժուարութիւն մը եւս կը ստեղծուի այն իրողութեամբ, որ լատին տօնացոյցին մէջ կը յիշուին երկու Թէոդորիտոս քահանաներ, երկուքն ալ Անտիոքցի. մին կը տօնուի Հոկտ. 23ին, եւ միւրը՝ յաջորդ օրը: Երկուքն ալ նահատակուած 362ին Յուլիանոս Ուրացողի օրով: Մենք կ'որդեգրենք Հոկտ. 24ին տօնուածը:

Ըստ այսմ՝ այս Թէոդորիտոս Քահանան աւագերէցն է Անտիոքի մեծ եկեղեցիին: Յուլիանոս Կոմսը, որ հօրեղբայրը կը ներկայացուի Ուրացողին եւ կառավարիչը Արեւելեան նահանգներուն, հրաման կը հանէ, որ բոլոր եկեղեցականներ աքսորուին, որպէսզի աւելի դիւրութեամբ կողոպտէ անոնց եկեղեցիներու գանձերը: Թէոդորիտոս, որ պատասխանատուն էր միաժամանակ Անտիոքի մեծ եկեղեցիի սպասներուն եւ անօթներուն, կը մերժէ հեռանալ եկեղեցիէն կամ յանձնել եկեղեցական սպասները եւ կը շարունակէ սովորական աստուածային պաշտամունքները եւ քարոզութիւնը: Յուլիանոս Կոմս կը հրամայէ ձերբակալել եւ իր ատեանը հանել զայն: Ըստ սովորականին կ'ենթարկուի նախ սոսկալի չարչարանքներու:

- Հակառակ այս բոլորին՝ ես պարտութեան պիտի մատնեմ թշնամին,- ըսաւ երանելի քահանան:

- Եւ ո՞վ է այդ թշնամին,- հարցուց բռնակալը:

- Դեւն է, որուն կը ծառայէք դուք եւ որուն համար կը պայքարիք: Յիսուս Քրիստոս՝ աշխարհի Փրկիչը, Նա է, որ պիտի պարգեւէ ինձի այդ յաղթանակը. իսկ դուն պիտի մեռնիս ահաւոր չարչարանքներու ենթարկուելով: Քու տէրդ ալ (ակնարկելով Յուլիանոս Ուրացողին) պիտի պարտուի. անձանօթ ձեռք մը պիտի սպաննէ զայն:

Ասոր վրայ գլխատման վճիռ հանուեցաւ, եւ տեղւոյն վրայ նահատակուեցաւ եւ ստացաւ մարտիրոսութեան պսակը: Իսկ իր նախատեսութիւնները տառապէս իրականացան: Յուլիանոս Կոմսը կարճ

ժամանակի մէջ անձանթ Հիւանդութեամբ մը բռնուելով չարաչար մեռաւ, իսկ Ուրացողը Պարսից դէմ իր կազմակերպած պատերազմի ընթացքին անձանթ նետէ մը խոցուելով՝ մահացաւ:

Յոյնք՝ Մարտ 3, Հայք՝ 2. Խաչ. Գշ., Լատինք՝ տես վերը:

8, 9. ՄԱԿԱՐԻՈՍ ԵՒ ԵՒԳԻՆԷՈՍ ՔԱՀԱՆԱՆԵՐ

Այս անուններով երկու քահանաներ յիշուած են Թորգոմ Պատրիարքի «Սուրբք եւ Տօնք»ին մէջ, որոնք որպէս թէ կը յիշատակուին Դեկտ. 24ին եւ Հոկտ. 19ին: Նման միացեալ յիշատակութիւն մը չգտանք մեր տօնացոյցին մէջ, ուր բացի ճգնաւոր ծանօթ Մակարէն, ունինք ուրիշ Մակար մը, որ կը յիշատակուի վերոյիշեալ Թէոդոտոսի Հետ, առանց սակայն մասնաւորելու, որ քահանայ մըն է ինք այլ: Ունինք նաեւ Եւգինէոս մը, որ կը յիշատակուի Գ. Յիս. Եշ., որուն եւ քահանայական Հանգամանք մը չէ տրուած: Որով մեզ Համար գրեթէ անկարելի է ճշդել, թէ ովքեր են մեր օրացոյցի վերոյիշեալ Մակարը եւ Եւգինէոսը, քանի որ յոյն եւ լատին տօնացոյցները բազում Մակարներ եւ Եւգինէոսներ ունին: Մակարներէն մին ըստ յոյն տօնացոյցի կը յիշատակուի Եւրոքսիոսի Հետ Սեպտ. 6ին: Մեր Մակարին Հետ ալ կը յիշուի այս սուրբը ուրիշ երեք ընկերներով, որոնք կը պակսին սակայն յոյն կամ լատին տօնացոյցներուն մէջ: Ուրիշ Մակարիոս մը կը յիշուի Յունաց մօտ Ապրիլ 10ին, Զենոնի Հետ, որ նոյնպէս կը յիշուի մեր Մակարին Հետ: Ուստի կը դժուարանանք ճշդել, թէ ո՞ր Մակարն է մերինը:

Իսկ յոյն եւ լատին օրացոյցները արդարեւ ունին Մակարիոս եւ Եւգինէոս քահանաներ, որոնք միշտ միասնաբար կը տօնուին: Թորգոմ Պատրիարք ասոնք է որ կը նոյնացնէ մեր մօտ զատ զատ յիշատակուող Մակարի եւ Եւգինէոսի Հետ, որոնց քահանայ ըլլալը, ինչպէս ըսինք, չէ ճշդուած մեր օրացոյցին մէջ: Մեր Յայսմաւուրքներու մէջ ալ ասոնք միասնաբար յիշուած են, Փեշտիմալճեանի Հրատարակածին մէջ Դեկտ. 19ին, իսկ Մարգուանցիին տպագրածին մէջ՝ Դեկտ. 24ին:

Ըստ լատին վկայաբանութեան՝ երկու քահանաներ են ասոնք, որ կ'ապրին Յուլիանոս Ուրացողի ժամանակ եւ զոր յանդիմանած ըլլալուն Համար մատնուած են ծանր չարչարանքներու եւ ապա աքսո-

րուած Արաբիոյ անապատները, ինչ որ աւելի հաւանական կը թուի, եթէ իրենց կեդրոնը Անտիօք նկատենք. քան Մարիտանիա աքսորուած ըլլալը, ինչպէս կը հաստատեն մեր Յայսմաւուրքները, ըստ որոնց կը շարունակեն իրենց աւետարանչութիւնը այնտեղ եւս ու կը վախճանին խաղաղ մահով, իսկ ըստ լատին վկայաբանութեան՝ գլխատմամբ կը ստանան իրենց մարտիրոսութեան պսակը 362ին:

Յոյնք՝ Փետ. 19, Լատինք՝ Դեկտ. 20, Հայք՝ տես վերը:

10. ԲԱՍԻԼԻՍԿՈՍ ԿԱՄ ԲԱՍԻԼԻՈՍ ՔԱՀԱՆԱՅ

Մեր տօնացոյցին անցած է Բասիլիսկոս Քահանայ անուան տակ: Յոյն եւ լատին տօնացոյցները ունին 2-3 Բասիլիսկոսներ, սակայն ոչ մէկը քահանայ է: Մեր Յայսմաւուրքներուն մէջ ալ չկայ Բասիլիսկոս Քահանայի մը յիշատակութիւնը: Որով ուրիշ ճար չունինք, բացի նոյնացնելէ զայն յոյն եւ լատին տօնացոյցներու մէջ յիշուած Բասիլիոս Երէցին Հետ, ինչպէս ըրած է Թորգոմ Պատրիարք: Ըստ այսմ՝ Անկիրիոյ երէցներէն մէկն է Բասիլիոս, որ կը սրտապնդէր իր եւ շրջակայ քաղաքներու հաւատացեալները քաջաբար տոկալու Յուլիանոսի Հալածանքներուն եւ չտկարանալու: Զերբակալուեցաւ ու հանուեցաւ կայսեր առջեւ, ուր քաջաբար պաշտպանեց Քրիստոնէական հաւատքը, որուն Համար ենթարկուեցաւ տառապէս անտանելի չարչարանքներու, որոնց ներքեւ աւանդեց իր Հոգին:

Յոյնք եւ Լատինք՝ Մարտ 22, Հայք՝ Թ. Խաչ. Գշ.:

11. ԲՈՒՐԱՍ ՔԱՀԱՆԱՅ

Աշակերտը եւ քահանան էր Մելէս Եպիսկոպոսին Պարսից: Քրիկոմմամբ նահատակուեցաւ Պարսկաստանի մէջ՝ արեւի եւ կրակի երկրպագութիւն ըրած չըլլալուն Համար:

Յոյնք եւ Լատինք չունին, Հայք՝ Թ. Խաչ. Բշ.:

12. ԱՆԱՍՏԱՍ ՔԱՀԱՆԱՅ

Ազգով Պարսիկ, նախկին անունը եղած է Մակունդատ: Երբ 614ին Պարսիկները գրաւեցին Երուսաղէմը եւ Քրիստոսի Խաչը Պարսկաստան գերի տարին, Մակունդատ գիտուող մըն էր պարսկական բանակին մէջ եւ մեծապէս հետաքրքրուեցաւ խաչով եւ «իր սիրտին մէջ

սէր մը արթնցաւ Քրիստոնէութեան մասին եւ սկսաւ անոնցմէ սորվիլ Աստուծոյ ճշմարիտ խօսքը»: Ի վերջոյ Երուսաղէմ գնաց եւ այնտեղ քրիստոնեայ մկրտուեցաւ եւ կոչուեցաւ Անաստաս. ու Սաբայի վանքը երթալով կրօնաւոր դարձաւ ու աւելի հիմնաւոր ձեւով սորվեցաւ իր նոր կրօնքը: Քարոզչական գործով զրկուեցաւ Պաղեստինեան Կեսարիա, որ այն ատեն Պարսից ձեռքն էր, եւ այնտեղ Պարսիկ մոգեր տեսնելով՝ ուզեց զանոնք քրիստոնեայ դարձնել: Անոնք ալ զայն լրտեսի տեղ դնելով իրենց իշխանին առջեւ հանեցին եւ ենթարկեցին սաստիկ տանջանքներու եւ բանտ նետեցին: Ատեն մը յետոյ ետ Պարսկաստան զրկուեցաւ, ուր եւս մոգերը ի զուր աշխատեցան դարձի բերել զայն: Բանտի մէջ ուժգին ճաղանքներու ենթարկուեցաւ ի վերջոյ գլխատմամբ ընդունեց մարտիրոսական պսակը: Կ'ըսուի, որ իր նշխարները ապա փոխադրուած են Հռովմ եւ դրուած եկեղեցի մը, որ ցայսօր իր անունը կը կրէ:

Յոյնք եւ Լատինք՝ Յնվր. 22, Հայք՝ Է. Խաչ. Բշ.:

13. ԵՐՄՈՂԱՅՈՍ ՔԱՀԱՆԱՅ

Ինչպէս պիտի ակնարկուի Պանտալէոն Բժշկի պատմութեան մէջ, Երմողայոս ծերունի քահանայ մըն էր, որուն ազդեցութեան ներքեւ Պանտալէոն «Ֆիզիքական բժշկութեան արուեստը թողլով՝ Հոգեւոր բժշկութեան կոչում զգացեր էր իր մէջ»: Մաքսիմինոս Կայսեր կողմէ նահատակուեցաւ ուրիշ ընկերներու հետ:

Յոյնք եւ Լատինք՝ 27 Յուլիս, Հայք՝ Դ. Խաչ. Եշ.:

14. ՊԻՈՆ ՔԱՀԱՆԱՅ

Թորգոմ Պատրիարք Գուշակեան հետեւեալ համառօտ տեղեկութիւնը կու տայ Պիոն Քահանային մասին. «Քահանայ եւ վկայ Զմիւռնիացի, որ քրիստոնէութեան դարձուց բազմաթիւ հեթանոսներ եւ ամրացուց հաւատացեալներ, որոնք հայածանքներուն պատճառաւ խախտած էին իրենց կրօնական զգացումներուն մէջ: Երբ ատեան տարուեցաւ քննութեան համար, հոն ալ քրիստոնէութիւնը ընդունելու համար սրտագին յորդորներ ուղղեց հեթանոսներուն եւ Հրեաներուն: Զանազան տանջանքներէ վերջ ողջ ողջ այրուեցաւ»:

Յոյնք եւ Լատինք՝ 1 Փետր., Հայք՝ Գ. Ծննդ. Բշ.:

Գ. ՍԱՐԿԱԻԱ ԳՈՒՆՔ

1. ԹԷՈՓԻԼՈՍ ՍԱՐԿԱԻԱԳ

Թէոփիլոս Սարկաւագ Լիբիացի էր եւ կ'ապրէր Մաքսիմինոս կուսակաշտ Կայսեր օրով, այսինքն Գ. դարու վերջերը եւ Դ.ի սկիզբները: Հմուտ էր Ս. Գրոց եւ համարձակ կերպով գՔրիստոս կը քարոզէր, իր նախատիպար Ս. Ստեփանոսի պէս: Հանուեցաւ իր երկրի կուսակալին առջեւ եւ սոսկալի չարչարանքներու ներքեւ աւանդեց իր հոգին առ Աստուած:

Յոյնք եւ Լատինք՝ Յունուար 8, Հայք՝ Դ. Հոգ. Բշ.:

2. ԱԲԻՍՈՂՈՄ ՍԱՐԿԱԻԱԳ

Սարկաւագը կը նկատուի Աղեքսանդրիոյ Պետրոս Պատրիարքին (300-311). անոր նման հոգեւրից ծերունի մըն էր եւ անոր պէս ալ նահատակութեամբ կնքեց իր կեանքը:

Յոյնք եւ Լատինք չունին, Հայք՝ Ութօրէքի յաջորդ Եշ.:

3. ԱԲԻԲԱՍ ՍԱՐԿԱԻԱԳ

Սարկաւագը Եգիպտոյ Եկեղեցիին, Դ. դարու սկիզբները: Հալածանքներու ժամանակ կը շրջէր գիւղերը, թէ՛ Աստուծոյ խօսքը կը կարդար քրիստոնէից եւ թէ՛ կը քաջալերէր զանոնք, որ չվախնան տանջանքներէ: Երբ Լիկիանոս Կայսրը իմացաւ իր գործունէութեան մասին, ձերբակալման հրաման հանեց, սակայն չկրցաւ զայն ձեռք ձգել: Բանտարկեցին անոր մայրը եւ ազգականները: Այս երբ իմացաւ Աբիբաս, յանձնուեցաւ իշխանութեան: Դատաւորը չկրցաւ համոզել զայն, որ ուրանայ Քրիստոսը: Կրակով այրելու որոշումը տրուեցաւ: Երբ այրուելու կ'երթար, իր մայրը եւ ազգականները անոր կը հետեւէին սպիտակ զգեստ հագած, ուրախ տրամադրութեամբ, որ իրենց հարազատը մարտիրոսութեան պսակ պիտի ստանար: Նախ աղօթեց եւ ապա ինքզինքը նետեց կրակին մէջ եւ հոգին աւանդեց առ Աստուած 312ին: Թաղեցին զայն այն տապանին մէջ, ուր թաղուած էին նոյն քաղաքի նոյն օրերուն նահատակուած Գուրիաս եւ Սամոնաս քահանաները, որոնց հետ միասնաբար կը տօնուի ան:

Յոյնք՝ Դեկտ. 2, Լատինք՝ Նոյ. 15, Հայք՝ Թ. Խաչ. Եշ.:

4. ԿԻՒՐԵՂ ՍԱՐԿԱԽԱԳ

Սարկաւազն է Լիբանանի Հելիոպոլիս քաղաքին, ուր Կոստանդիանոսի օրով կարգ մը կոստուններ կործանած էր. այս մեղքը քաւելու համար հանուեցաւ Յուլիանոս Կայսեր առջեւ, որ վերահաստատած էր կոսապաշտութիւնը: Յանձնուեցաւ քուրմերու վրէժխնդրութեան 362ին, որոնք վայրենաբար յօշոտեցին զայն եւ լեարդը հանելով, ըստ Յայսմաւուրքի, կերան, որուն վրայ չարաչար մեռան նաեւ իրենք:

Յոյնք եւ Լատինք՝ Մարտ 29, Հայք՝ Գ. Մենդ. Բշ.:

5. ԸԸՆ ԿԱՄ ԾԻՆՈՒ ՍԱՐԿԱԽԱԳ

Սարկաւազն է Մելէս Եպիսկոպոսի, որուն եւ Բուբաս Քահանայի հետ նահատակուեցաւ Պարսից Շապուհ Երկայնակեաց Թագաւորի օրով Պարսկաստանի մէջ: Ազգով հաւանաբար Պարսիկ էր:

Յոյնք եւ Լատինք չունին, Հայք՝ Թ. Խաչ. Բշ.:

6. ԱՅԻԹԱԼԱ ՍԱՐԿԱԽԱԳ

Սարկաւազն է Ակիսիսիոս Եպիսկոպոսին, որուն եւ Յովսէփ Քահանայի հետ մարտիրոսացաւ 340-380ի միջեւ Պարսից Շապուհ Երկայնակեաց Թագաւորի օրով: Այիթալան ալ հաւանաբար ազգով Պարսիկ էր:

Յոյնք՝ Նոյ. 3, Լատինք՝ Ապրիլ 22, Հայք՝ Ը. Խաչ. Գշ.:

7. ԲԵՆԻԱՄԻՆ ՍԱՐԿԱԽԱԳ

Կ'ապրի եւ կը գործէ Թէոդոս Բ. Կայսեր (408-450) եւ Պարսից Յազկերտ Ա.ի (399-420) օրով: Ձերբակալուեցաւ Պարսից Թագաւորին հրամանով եւ բանտարկուեցաւ քրիստոնէութիւնը քարոզելու յանցանքով: Երկու տարի մնաց բանտի մէջ: Թէոդոս Կայսր միջնորդեց անոր ազատութեան համար: Պարսից Թագաւորը խոստացաւ արձակել զայն պայմանով, որ դադրի քրիստոնէութիւնը քարոզելէ: Սարկաւազը մերժեց այս պայմանը՝ ըսելով, որ անհնարին է արգիլել

Աստուծոյ շնորհը մարդոցմէ: Ի վերջոյ սակայն ազատուեցաւ բանտէն ու շարունակեց իր աւետարանչութիւնը եւ նորագործներ մկրտելը, ֆիլիպպոս Սարկաւազին պէս (Գործ. Ը. գլուխ) կրկին ձերբակալուեցաւ եւ ահաւոր չարչարանքներէ յետոյ հոգին աւանդեց 418ին՝ Աստուծոյ գոհութիւն եւ փառաբանութիւն տալով:

Յոյնք եւ Լատինք՝ Մարտ 31, Հայք՝ Գ. Մենդ. Բշ.:

8. ՌՈՄԱՆՈՍ ԵՐԳԵՑՈՂ ՍԱՐԿԱԽԱԳ

Մնած է Սուրբոյ Հոմա քաղաքը եւ սարկաւազը եղած է Պէյրութ քաղաքի: Ջարգացած եւ առաքինի անձ մըն էր: Անաստաս Կայսեր օրով (491-518) Կ. Պոլիս գնաց եւ պաշտօնավարեց քաղաքի Ս. Աստուածածին եկեղեցիին մէջ: Տեսիլքով մը իրեն տրուեցաւ հոգեւոր երգեցողութեան եւ երաժշտական արուեստի բացառիկ պարգեւը, որուն շնորհիւ գրեց «հազարամէկ» տաղեր ու շարականներ, որոնք մինչեւ այսօր կը գործածուին Յունական եկեղեցիի մէջ: Իր վրայ մականուն մնաց «երգեցող» մակդիրը՝ իբրեւ մեծագոյնը Յոյն շարականագիրներու եւ հոգեւոր երաժիշտներու:

Յոյնք՝ Հոկտ. 1, Լատինք չունին, Հայք՝ Բ. Խաչ. Շք.:

ԾԳՆԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Նախքան ճգնաւորները ներկայացնելը ընդհանուր ակնարկ մը նետենք ճգնաւորութեան վրայ:

Հոգեւոր կատարելութեան կարեւոր ու կենսական շարժում մը եղաւ ճգնաւորութիւնը Քրիստոնէական Եկեղեցիի պատմութեան մէջ: Ծնունդ առաւ Գ. դարու վերջերը եւ ապրեցաւ իր ոսկեդարը Դ. եւ Ե. հարիւրամեակներու ամբողջ տեւողութեան, յատկապէս Արեւելքի մէջ:

Արդի ժամանակներու մէջ, ուր աշխարհայնութիւնը եւ բարքերու թուլութիւնը տիրապետող դարձած են ամէնուրեք, արհամարհանքով կը նայուի ճգնաւորութեան վրայ: Բայց պէտք է գիտնալ, թէ ասիկա իր ժամանակին ամէնէն տրամաբանական հոգեւոր ուղին եւ բարոյապէս ու ֆիզիքապէս ամէնէն առողջ կենցաղային դրութիւնն էր: Ծգնաւորներ առհասարակ երկարակեաց եղած են, խաղաղ, բարի, երջանիկ եւ օգտակար մարդիկ: Ծգնաւորական այս կենցաղին մէջ թրժուեցան Դ. եւ յաջորդ դարերու մեծագոյն տիտանները Քրիստոնէական Եկեղեցիին. Անտոններ, Աթանասներ, Բարսեղներ, Գրիգորներ, Եփրեմներ, Յակոբներ, Ոսկեբերաններ, Մեսրոպներ, Նարեկացիներ, Սիւնեցիներ, Շնորհալիներ, Տաթեւացիներ այս դպրոցէն անցան նախքան Եկեղեցիի մեծագոյն գործիչները եւ առաջնորդները լինելը: Ծգնաւորութենէն ծնունդ առաւ վանական դրութիւնը, որ անոր նպատակ դրած անհատական կատարելութեան իտէալը սկսաւ իրագործել հաւաքական եւ կազմակերպեալ կենցաղին մէջ:

Ըսինք, որ ճգնաւորութիւնը իր ժամանակին կենցաղային ամէնէն տրամաբանական եւ լաւագոյն հոգեւոր ուղին էր: Ասիկա հաստատուելու համար ընդհանուր ակնարկ մը նետենք այն ժամանակներու վրայ, երբ ծնունդ առաւ ճգնաւորութիւնը:

Փրկչական Ա.- Գ. դարերը եղած էին Քրիստոնէութեան եւ Հեթանոսութեան բարտումի եւ պայքարի շրջանը: Մօտաւորապէս երկու հա-

րիւր եւ յիսուն տարիներ՝ Հեթանոս պետութեան եւ կռապաշտ ընկերութեան մուրճին եւ սալին միջեւ ծեծուող երկաթը եղած էր քրիստոնէութիւնը: Ու երբ 313 թուականին Կոստանդիանոս Կայսրը եւ իր պաշտօնակիցները «Միլանի Հրովարտակ» անունով ծանօթ թոյլտուութեան հրամանագիրը հանեցին, Եկեղեցին ազատուեցաւ հալածանքներից եւ ամէն տեսակ կաշկանդումներից, ինչ որ առիթ մը եղաւ, որ քրիստոնէութիւնը արձանագրէ աննախընթաց պոռթկում եւ աճում: Այս աճումի ընթացքին «բարի բարիներուն» Հետ «խոտան» մարդեր ալ սկսան մուտք գործել Եկեղեցիէն ներս, քանի որ այլեւս մասնաւոր քաջութիւն չէր պահանջեր քրիստոնեայ ըլլալը, ինչպէս արդարեւ կը պահանջէր հալածանքներու շրջանին: Այս ազատութիւնը որքան ալ բաղձալի էր Եկեղեցիի բարգաւաճումին եւ տարածման տեսակէտէ, նոյնքան ալ ճակատագրական սկզբնաւորութիւնը եղաւ Եկեղեցիի վատառողջ ոււեցումին կամ գիրացումին եւ Հետեւաբար՝ մասնակի այլասերումին: Ու ասիկա զգալի դարձաւ յատկապէս երկու երեք մարզերու մէջ: Նախ տակաւ առ տակաւ Եկեղեցին սկսաւ դրաւել այն դիրքը եւ դերը, զոր Հեթանոսութիւնը ունէր նախապէս: Նախորդ դարերուն Հեթանոսութիւնն էր հալածողը, այժմ Եկեղեցին սկսաւ հալածել Հեթանոսութիւնը: Եթէ հալածանքը, այսինքն խաղաղ եւ անվնաս հաւաքականութիւններ զրկելը իրենց կեանքի ապահովութենէն, սխալ մըն էր նախորդ դարերուն, սխալ պիտի ըլլար նաեւ յաջորդ դարերուն: Եկեղեցին իր դատապարտածը ինք սկսաւ ի գործ դնել:

Բաց աստի, Եկեղեցին, յատկապէս անոր արեւելեան աւելի ծաղկեալ թեւը, փոխանակ իր ամբողջ ոյժերը լարելու եւ Աւետարանի քարոզութեան ու Քրիստոնէական կրօնքի տարածման նուիրելու, մխրճուեցաւ աստուածաբանական անհատնում վէճերու ճախճախոտքին մէջ եւ մտաւ յունական միտքի ստեղծած նրբաբանութեանց լաբիրինթոսներուն մէջ, ուրկէ գրեթէ անգամ մըն ալ չկրցաւ դուրս գալ: Ու փոխանակ մշակելու, արծարծելու եւ զօրացնելու քրիստոնէական մաքուր կենցաղը եւ զարկ տալու ընկերային բարեկարգութիւններու, ստեղծեց ու մշակեց պաշտամունքային բարդ ու ծաղկեալ դրութիւն մը, որ որքան ալ մարդկային զգայարաններուն համար զբաւեչ էր եւ գեղարուեստական մեծ արժէք ունէր, Հետզհետէ

վերածուեցաւ սակայն աւելի ձեւականութեան եւ արուեստականութեան, քան թէ Քրիստոսի պահանջած «Հոգւով եւ ճշմարտութեամբ» պաշտամունքին. դրութիւն մը, որուն կաշկանդումներէն եւ կանոնական կապանքներէն չի կրնար ազատիլ Արեւելեան Եկեղեցին մինչեւ օրս: Միայ չէին այս բոլորը. բայց աւետարանական սկզբունքով նախապատուութիւն պէտք էր ընծայել կարեւորներուն՝ բարոյական եւ Հոգեւոր կեանքին, քարոզութեան եւ վկայութեան: Դ., Ե. եւ Զ. դարերը, մեծ եւ կարեւոր կրօնական իրագործումներու կողքին, դժբախտաբար դարերն են առաւելաբար կրօնական վէճերու եւ ժողովներու, որոնց ընթացքին մէկ Հատուած կը բանադէ եւ կը նզովէ իր հակառակորդ Հատուածը: Այս վիճաբանութիւնները քամեցին յատկապէս Արեւելեան Եկեղեցիի կենսունակութիւնը եւ ի վերջոյ արժեցին իր կեանքը եւ գոյութիւնը: Վրայ Հասաւ Իսլամութիւնը եւ գրեթէ հաշուեյարդարի ենթարկեց ինքնավատնուով սպառած արեւելեան քրիստոնէութիւնը՝ կրօնական կղզեակներ միայն ձգելով իր կազմած ովկիանոսին մէջ, ուր նախապէս կը ծաղկէին Քրիստոնէական Եկեղեցիի բարգաւաճ դաշտերը:

Երբ խաղաղութիւն եւ ազատութիւն տիրեց քրիստոնէութեան մէջ, անոնց Հետ միասին Հեթանոս բարքեր ալ սկսան մուտք գործել Եկեղեցիէն ներս, եւ ստեղծուեցաւ կենցաղային շփոթ կացութիւն մը, ուր այլեւս դժուար էր զանազանել իրարմէ Հեթանոսականը եւ քրիստոնէականը: Ո՞ւր կը սկսէին եւ ո՞ւր կը վերջանային մէկին կամ միւսին սահմանները՝ դժուար եղաւ գիծ մը քաշել: Ստոյգ է, երկուքն ալ կը դատապարտէին անաստուածութիւնը, մարդասպանութիւնը, գողութիւնը եւ բացայայտ անբարոյութիւնը, բայց կեանքի «անմեղ» կոչուած երեւոյթներէն, կերուխումէն, երգուպարէն, խնճոյքներէն, խաղերէն ո՞րքանը քրիստոնէական կրնային նկատուիլ եւ ո՞րքանը Հեթանոսական՝ վիճելի հարց եղած էր:

Մեծ քաղաքներու բնակչութիւնը խառն էին երկու տարրերէ՝ Հեթանոսներէ եւ քրիստոնեաներէ, եւ յաճախակի բախումներ կ'ունենային իրարու հետ: Երկու կողմերն ալ դիմացինը ճզմելու համար միջոցներու մէջ խորութիւն չէին դնել: Երկուքն ալ հաւասարապէս կը դիմէին վանտալութեան: Իրարու աղօթքի տունները կը կործանէին կամ կ'այրէին: Երկուքն ալ բարբարոսական արարքներու մէջ կը գտնուէ-

ին՝ սպաննելով իրարու առաջաւոր դէմքերը: Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքը յատկապէս, որ որքան Հեթանոս մշակոյթի կեդրոն մըն էր, նոյնքան ալ քրիստոնէական բարձրագոյն ուսման օրօրանը եղած էր, թատր դարձած էր ամբոխային պոռթկումներու՝ երկու կողմէն ալ՝ յաճախ առաջնորդուած, առնուազն հրահրուած, երկու կողմերու բռուն գլխաւորներէն: Այսպիսի պոռթկումներէն մէկի ընթացքին էր, որ Աղեքսանդրիոյ քրիստոնեայ ամբոխը անգթօրէն յօշոտեց այս քաղաքի Նոր-պղատոնական դպրոցի «փառքը» Համարուող Հեթանոս կիր-փիլիսոփայ Հիւպատիան, որ ճանչցուած էր ամէնքի կողմէ որքան մեծ մտաւորական, նոյնքան ալ առաքինի անձնաւորութիւն մը: Այնպէս որ քրիստոնէական կեանքը եւ մտայնութիւնը շատ բան կորսնցուցած էր իր մաքրութենէն, պարզութենէն եւ բարոյական բարձրութենէն: Ու շփոթութիւնը տարածուած էր որքան Հասարակ ժողովուրդին, նոյնքան ալ բարձր դասու շրջանակներուն մէջ: Կոստանդիանոս թէեւ ազատագրած ու պաշտպան հանդիսացած էր Քրիստոնէութեան, սակայն ինք դեռ չէր մկրտուած եւ պաշտօնապէս Հեթանոս կը մնար: Մկրտուեցաւ մահուան անկողինին մէջ միայն: Բայց Հռովմի մէջ ծերակոյտը իր յիշատակին կատարեց այն Հեթանոսական արարողութիւնները, զորս կը կատարէին նախորդ կայսրերուն համար: Իր զաւակներուն եւ յաջորդներուն կեանքը հեռի էր օրինակելի ըլլալէ: Գրեթէ ամէնքն ալ՝ Կոստանդիանոսէն սկսեալ, մինչեւ Մեծն Թէոդոս (379-395), յարեցան Արիոսականութեան եւ բազմաթիւ ուղղափառ եպիսկոպոսներ քսորեցին: Այս կայսրերէն մէկը՝ Յուլիանոս (360-363), պաշտօնապէս Հեթանոսութեան վերադարձաւ եւ փորձեց վերահաստատել զայն իր նախկին դիրքին եւ բարձրութեան վրայ, այդ իսկ պատճառով ժառանգեց «Ուրացող» մակդիրը քրիստոնէական շրջանակներէ:

Արդ, իրաց այս կացութեան մէջ, կարգ մը Հոգեգգօն քրիստոնեաներ, տեսնելով այս անսուրբ խառնուրդը Հեթանոսութեան եւ Քրիստոնէութեան, ընդվզեցան: Ընկերութեան մէջ մնալով չէին կրնար անաղարտ պահել իրենքզիրենք, ոչ ալ ընկերութիւնը բարեկարգել. այդ պիտի նշանակէր Հոսանքն ի վեր թիավարել: Ուստի միակ տրամաբանական ելքը տեսան ընկերութենէն Հեռանալուն եւ առանձին ապրելուն մէջ: Քաշուեցան ասոնք անաղարտ բնութեան

ծոցը՝ պահելու համար իրենց կեանքի բարոյական մաքրութիւնը՝ Աստուծոյ մշտական ներկայութեանը մէջ: Ու այդ ցանկալի ներկայութիւնը մշտապէս ապահովելու համար մէկ կողմէն իրենք զիրենք նուիրեցին աղօթքի, իսկ միւս կողմէն՝ աշխարհի մէջ իրենց գործած կամաւ կամ ակամայ, մեծ կամ պզտիկ մեղքերը քաւելու համար՝ ապաշխարանքի: Այս նպատակները իրագործելու համար ի գործ դրին գերմարդկային ճիգեր եւ այդ իսկ պատճառով կոչուեցան ճգնաւորներ:

Աշխարհքէ հրաժարելով ու անապատ քաշուելով թէեւ մարդ հեռու կը մնար քաղաքներու եւ գիւղերու բարքերու ապականութիւններէն, բայց գերծ չէր մնար մեղքի առիթներէն եւ փորձութիւններէն: «Մարդ մեղքի հակամէտ է իր մանկութենէն սկսեալ», ըսած է Աստուածաշունչը, հոգ չէ թէ ուր գտնուի ան: Անապատին մէջ ալ այս մարդիկը ենթարկուեցան զանազան փորձութիւններու, ինչպէս եղած էր նոյնինքն իրենց Տէրը: Մարմինը ունի իր բնական պահանջները, որոնց տէր կը մնայ՝ հոգ չէ թէ մարդ ինչ պայմաններու մէջ գտնուի: Ցանկութեանց սանձը եթէ թոյլ բռնուի՝ ինքնագլուխ եւ ինքնանպատակ կը դառնան: Ծգնաւորներուն գլխաւոր գործը եղաւ պայքար հռչակել մարմնի ցանկութիւններուն դէմ, ճգմել եւ մեռցնել զանոնք, առնուազն անգործութեան մատնել զանոնք: Այս կէտէն կը սկսի բուն ճգնաւորութիւնը:

Մարմինը ճնշելու եւ իր ցանկութիւնները մեռցնելու այս գաղափարը ճգնաւորութեան ստեղծումը չէր, այլ իրենց թելադրուած էր Նոր Կտակարանէն, ուր Պօղոս Առաքեալ կ'ուսուցանէր, որ «մարմին ցանկայ հակառակ հոգւոյ» (Գղտ. Ե. 17): Ու այս գաղափարը կ'ընդլայնէր այլուր ըստ հետեւեալի. «Անոնք, որ մարմնի պահանջներուն համաձայն կ'ապրին, մարմնի մասին միայն կը խորհին, իսկ անոնք, որ հոգիի պահանջներուն համաձայն կ'ապրին, հոգիի մասին կը մտածեն: Երբ միտքը կը կառավարուի մարմնի պահանջներուն համաձայն, արդիւնքը կ'ըլլայ բարոյական մահ, իսկ եթէ միտքը հոգիի ազդումներուն համաձայն կը շարժի, արդիւնքը կ'ըլլայ կեանք եւ խաղաղութիւն: Մարմնի պահանջներուն ենթարկուելով ապրիլը կը նշանակէ թշնամանալ կամ օտարանալ Աստուծոյ, որովհետեւ մարմինը չի հնազանդիր Աստուծոյ օրէնքին,

իրականութեան մէջ չի կրնար հնազանդիլ: Անոնք որ կը հնազանդին մարմնի կարիքներուն, չեն կրնար հաճոյ ըլլալ Աստուծոյ» (Հռմ. Ը. 5-8):

Այս ճշմարտութիւնը Պօղոս Առաքեալ ակելի կը յստակէ այլուր.

«Կ'ըսեմ ձեզի, հոգիի պահանջներուն համաձայն ապրեցէք եւ մարմնի ցանկութիւններուն ընթացք մի՛ տաք. վասն զի մարմինը կը ցանկայ հոգիի հակառակ բաներ, իսկ հոգին՝ մարմնի հակառակ: Անոնք իրարու հակադիր են. ուստի ձեր ցանկութիւններուն համաձայն մի՛ ապրիք: Ընդհակառակը՝ եթէ Աստուծոյ հոգիի ազդումներով շարժիք, ազատ կը մնաք մեղքի տիրակալութենէն: Մարմնի գործերը ծանօթ են ամէնքիդ. այսինքն՝ շնութիւն, պոռնկութիւն, պղծութիւն, գէշութիւն, կոպաշտութիւն, կախարդութիւն, թշնամութիւն, ատելութիւն, նախանձ, բարկութիւն, հակառակութիւններ, երկպառակութիւններ, հերձուածներ, չար նայուածքներ, սպաննութիւններ, արբեցութիւններ, անառակութիւններ եւ ինչ որ ասոնց նման է. հիմա ալ կ'ըսեմ ձեզի, ինչպէս կ'ըսէի նախապէս, թէ այսպիսի բաներ ընողներ Աստուծոյ արքայութիւնը չեն կրնար ժառանգել» (Գաղ. Ը. 16-21):

Ու կ'եզրակացնէր Առաքեալը.

«Այս բոլոր նեղութիւններուն կը տոկամ Աւետարանի սիրոյն, որպէսզի հաղորդ դառնամ անոր բարիքներուն: Ուրեմն դո՛ւք ալ այնպէս ընթացէք, որ շահի՛ք մրցանակը: Գիտէք, թէ ամէն մարդիկ ինքզինքը մարգելու ատեն կ'ենթարկուի խիստ կարգապահութեան. ասիկա կ'ընէ, որպէսզի շահի պսակ մը, որ ի վերջոյ պիտի թառամի. սակայն մենք ալ նոյնը պիտի ընենք պսակի մը համար, որ անթառամ պիտի մնայ: Ահա թէ ինչու ես ալ կը ճնշեմ մարմինս եւ կը հնազանդեցնեմ զայն, որպէսզի չըլլայ թէ ինչ որ ուրիշներուն կը քարոզեմ՝ ես ինքս պարտազանց մնամ» (Ա. Կորնթ. Թ. 23-27):

Ուրեմն հետապնդուած բուն նպատակը լոկ մարմինը ճնշել չէր, Ստոյիկեան կոչուած փիլիսոփայութեան հետեւողներուն պէս. այլ՝ հոգին կատարելագործել, միտքը լուսաւորել եւ կամքը ջրդեղել Աստուծոյ հետ հաղորդակցութեան մէջ մնալով: Այս նպատակին հասնելու մեծագոյն արգելքները մարմնի ցանկութիւններն էին, զորս պէտք էր մեռուցանել, առնուազն լուցնել: Ծգնաւորութիւնը կը սկսէր

աշխարհէ հրաժարումով եւ մարմնի կարիքներու դէմ անխնայ պայ-
քարով, կը շարունակուէր յարատեւ եւ մշտական աղօթքով, հոգեկան
վարժքերով, պահքով, զանազան ինքնազրկանքներով, Ս. Գրքի ըն-
թերցումով, խոկումով, մէկ խօսքով՝ ժուժկալութեամբ, ու կ'աւարտէր
յաղթանակով, հոգեկան հանդարտութեամբ եւ երջանկութեամբ, որ
ուրիշ բան չէր, եթէ ոչ նախաճաշակը անդենական ու յաւիտենական
երանութեան: Ի վերջոյ մարմինը կը դրուէր կամքի եւ Աստուծոյ
շնորհաց սանձին տակ՝ դառնալու համար հլու հպատակը հոգիին եւ
ծառայելու համար անձին կատարելութեան իբրեւ միջոց ու գործիք:
Պատկերալից բացատրութեամբ՝ մարմինը պիտի վերածուէր թաղարի
մը, որուն մէջ պիտի աճէր ու բացուէր հոգիի ծաղիկը՝ ի վերջոյ տալու
համար հոգիին պտուղները, որոնք էին «սէր, ուրախութիւն, խաղա-
ղութիւն, համբերութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատք, հեզու-
թիւն եւ ժուժկալութիւն» (Գղտ. Ե. 22): Ծգնաւորներ զրկեցին մարմի-
նը իր բոլոր ցանկական պահանջներէն եւ արտօնեցին անոր լոկ այն
տարրականը եւ հիմնականը, որ անհրաժեշտ էր Ֆիզիքական կեանքի
շարունակութեան համար: Իրենց կերակուրը պտուղ եւ ընդեղէն էր՝
միշտ հոռւ վիճակի մէջ եւ սակաւ, եւ վայրի ուտելի բոյսեր: Իրենց
հագածը մորթեղէն կամ այծի մազէն կամ կանեփէ շինուած կոշտ
կտորներ էին՝ քուրձ կոչուած, որուն միակ նպատակն էր մերկութիւնը
ծածկել եւ մարմինը նեղել եւ անոր փափկութիւնը կարծրացնել: Իբրեւ
բնակարան կը գործածէին առհասարակ քարայրները եւ հոս ու հոն
գոյացած բնական կամ ձեռագործ խոռոչները:

Անապատական կամ ճգնողական կեանքը սկսաւ Եգիպտոսէն, որ
ունէր արդարեւ կլիմայական եւ աշխարհագրական ամէն յարմարու-
թիւնները այս նպատակի համար: Տաք էր երկիրի կլիման մէկ ծայրէն
միւրը. գրեթէ մշտական ամառ կը տիրէր այնտեղ: Ունէր ընդարձակ
անապատային շրջաններ, որոնց մէջ տեղ տեղ կը ծաղկէին մեծ կամ
փոքր ովասիսներ, որոնց եզերքին անպատճառ իրենց հասակները կը
ցցէին քանի մը արմաւենիներ: Ասոնք բոլորը քառողական բան մը
ունէին իրենց մէջ, քաղաքներու վանողականութենէ յետոյ, միայնա-
կեցութեան սիրահար հոգիներուն համար:

Շարժումը Եգիպտոսէն տարածուեցաւ Պաղեստին, յատկապէս
Յորդանանի հովիտը, որ ունէր Եգիպտոսի հետ նոյն կլիմայական

պայմանները իր մանրանկարային ձեւին մէջ. անցաւ Սուրիա,
Միջագետք եւ Փոքր Ասիա, ուր յատկապէս Հայաստանի սահմանա-
կից Կապադովկիոյ տափաստաններու, լեռներու ու ձորերու մէջ,
Բարսեղ Հայրապետի ուժեղ կազմակերպչական հանճարին, կանոննե-
րուն եւ շունչին ու շնորհքին տակ, նոր կերպարանք ստացաւ եւ նոր
կատարելութեան բարձրացաւ: Այստեղ աւելի զարկ տրուեցաւ խմբա-
կան ճգնողութեան, որուն նպատակը ոչ միայն անձին կատարելու-
թիւնն էր, այլ նաեւ օգտակարութիւն այլոց՝ եղբայրութեամբ եւ իրար
օգնութեամբ, ինչպէս նաեւ Աւետարանի քարոզութեամբ շրջակայ
գաւառները, ուր Քրիստոնէութիւնը լիովին չէր թափանցած, եւ այլ
զանազան ծառայութեամբ Եկեղեցիին:

Ծգնողական այս շարժումը ի վերջոյ անցաւ Արեւմուտք, ուր
գտաւ ան իր գերագոյն կատարելութիւնը՝ ստեղծումով արեւմտեան
վանական դրութեան՝ սկսուած Բենեդիկտոսով (480-550) եւ իր անունը
կրող միաբանութեամբ ու տակաւ առ տակաւ աճելով եւ աւելի կատա-
րելագործուելով Մրանչիսկեան, Դոմինիկեան, Գարուչինեան, Յիսու-
սեան, Թրաբիստ եւ այլ բազմաթիւ մեծ ու փոքր միաբանական կար-
գերով, որոնք ոչ միայն կազմեցին Արեւմտեան Եկեղեցիին փառքը եւ
զօրութիւնը, այլ նաեւ ծառայեցին Համայն Քրիստոնէութեան դատին՝
տարածելով զայն աշխարհի մինչեւ Հեռաւորագոյն անկիւնները: Վա-
նականութիւնը՝ իբրեւ ուղի գիծով շարունակութիւնը եւ կատարելա-
գործումը ճգնաւորութեան, ոչ միայն պահեց եւ մշակեց անհատական
կատարելութեան իտէալը, այլ նաեւ իբրեւ քովնտի բարիք եւ ար-
դիւնք՝ մեծագոյն ծառայութիւնը մատոյց քրիստոնէական մշակոյթին՝
պահելով, արձարծելով ու տարածելով եւ յաջորդ սերունդներուն փո-
խանցելով զայն գրեթէ իր բոլոր երեսներուն մէջ՝ գրական, գեղա-
րուեստական ու գիտական: Ստեղծեց եւ ընդօրինակեց բիւրաւոր
գիրքեր ամէն նիւթի մասին եւ ծառանգ ձգեց յաջորդ սերունդներուն:
Սրբացուց աշխատանքը՝ թէ՛ ձեռքի եւ թէ՛ միտքի, «աշխատիլը պաշ-
տել է» նշանաբանով: Վերջապէս գլխաւոր գործիքը հանդիսացաւ
Քրիստոնէական կրօնքի գերագոյն նպատակի իրագործման՝ եղբայ-
րութեան, իր հաւաքական կենցաղին մէջ, ու անաղարտ եւ կենդանի
պահեց Քրիստոնէական կրօնքը թէ՛ իբրեւ կեանքի կանոն եւ թէ՛
իբրեւ ուսուցում եւ քարոզութիւն:

Իսկ ճգնաւորութեան անտեսանելի բարիքները Աստուծոյ միայն գիտելի են: Պօղոս Առաքեալէն կու գայ այն գաղափարը, թէ «մեր պատերազմը մարդու (կամ մարմինի) դէմ չէ, այլ չարին իշխանութիւններուն, պետութիւններուն եւ խաւար աշխարհի աշխարհակալներուն եւ երկինքի ներքեւ եղած չար դեւերուն հետ է» (Եփս. 2. 12): Այս գաղափարն է, որ կը շարունակուի եւ կիրարկութեան կը դրուի ճգնաւորներու կեանքին մէջ: Երբ ասոնք կը պայքարէին մարմինի եւ իր ցանկութիւններու դէմ կամ աշխարհի ապականութեանց դէմ, այն խոր համոզումը ունէին, թէ կը պայքարէին չարին զօրութեանց դէմ, Աւետարանի բառով՝ «այսերու»՝ դեւերու դէմ, քանի որ գիտէին, թէ դեւը կամ սատանան իրենց դէմ կը պայքարէր մարմինի եւ իր ցանկութիւններուն միջոցաւ: Ասոնք են ահաւաստիկ ան մարդիկը, որոնց համար յատկապէս մեր ժամագիրքը կ'ըսէ. «Որք զչարսն պարտեցին, նեղութեանցն համբերեցին, լուսեղէն եւ անթառամ պսակացն արժանի եղեն»:

Աշխարհ ոչ կրնայ տեսնել, ոչ կրնայ հասկնալ եւ ոչ ալ կրնայ գնահատել տարողութիւնը եւ կարեւորութիւնը հոգեւոր այս պայքարին, զոր այս մարդիկը մղեցին իրենց ներաշխարհին մէջ, իրենց միայն զգալի եւ Աստուծոյ միայն տեսանելի պայմաններուն ներքեւ, ոչ միայն իրենց օգտին, այլ նաեւ Եկեղեցիի եւ Համայն մարդկութեան բարիքին համար: Երբ Յիսուս Գալիլեական ծովակի փոթորիկը դադրեցուց, անկէ օգտուեցաւ ոչ միայն այն նաւը, որուն մէջ կը գտնուէին Յիսուս եւ իր աշակերտները, այլ նաեւ այն բոլոր միւս նաւերը, որոնք այդ պահուն կը գտնուէին ծովակին մէջ եւ տաքնապի մատնուած էին աշակերտներու նաւին պէս: Ու այդ տասնեակներով նաւերուն մէջ գտնուող հարիւրաւոր մարդեր երբեք չգիտցան, թէ որո՞ւն կը պարտէին այդ փոթորիկին յանկարծական դադրեցումը: Նոյնպէս՝ երբ Եւրոպա ներխուժող ասպատակիչ բանակները կասեցուեցան այս կամ այն ճակատին վրայ քաջարի քանի մը գունդերու կողմէ, իրենց հետին գտնուող բազմաթիւ երկիրներու միլիոնաւոր մարդիկը երբեք չանդրադարձան, թէ ինչ ահաւոր պատուհասներէ փրկուած եղան: Նոյն է պարագան ճգնաւորներու եւ բոլոր սուրբերու մղած հոգեւոր պատերազմին: Քիչերու այնքան շատ պարտական է Քրիստոնէական Եկեղեցին եւ իր միջոցաւ Համայն մարդկութիւնը, որքան այս անա-

նուն, եւ աշխարհէն արհամարհուած, համեստ բայց քաջարի հոգեւոր զինուորներուն, որոնք անապատներու մենութեան եւ լուութեան մէջ շարունակեցին շահիլ այն պատերազմը, զոր Յիսուս բացած էր իր իսկ անապատային փորձութեանց ընթացքին (Մտթ. Գ. 1-11): Չար ոյժերու բանակը, որ մինչեւ այդ գրեթէ տէրն էր ամբողջ մարդկութեան, Յիսուսի եւ այս մարդոց անոր դէմ շահած յաղթանակներէն յետոյ այլեւ տիրաբար չէր կրնար խաղալ մարդերու յաւիտեանական ճակատագրին հետ, եւ թէ՛ նոր Սամոններ, այսինքն Անտոններ, մէջտեղ ելած էին, որոնք կրնային պայքար բանալ առանձինն հազարներու դէմ: Ու ասոնց պիտի յաջողէին վանքային բանակներու անհատնում շարքերը: Պէտք է խոնարհինք մենք յիշատակին եւ մեծագործութեան առջեւ այս հազարաւոր խոնարհ մարդերուն, որոնք մեր շարականներուն իսկ բացատրութեամբ՝

«Որ ի Հանդէս ձեր ճգնութեան՝

Երկնային գուարթունքն նայեցեալ զարմանային՝

Ի մարմնի տեսանելով զանմարմին իւրեանց զվարս»:

«Որ գերագոյն քան զբնութիւն հողեղինաց ժուժկալեալ՝

Ձանազան տանջանաց համբերելով յաներեւոյթ թշնամւոյն»:

Սակայն մեր այս փոփոխական աշխարհի վրայ ոչինչ կը մնայ անաղարտ ու անփոփոխ: Ամէն նիւթական եւ ֆիզիքական գոյութիւն կարծես իր մէջ ունի բոլոր կարելիութիւնները, եւ տարրերը, իր իսկ քայքայման: Պէտք չունինք երթալու հին ժամանակներուն՝ մեր հաւաստումը հաստատելու համար. աչք մը նետել արդի ժամանակներու մեծ ընկերային շարժումներուն վրայ՝ բաւական է զմեզ համոզելու այս մասին: Ի՞նչ մնացած է, օրինակ, բողոքականական շարժման մաքրակրօնութենէն ու անկեղծութենէն, ինչպէս նաեւ բարոյական եւ հոգեւոր զեղծարարութեան դէմ առողջ պայքարէն: Ո՞ւր մնացին Յրանսական Յեղափոխութեան «հաւասարութեան, եղբայրութեան եւ ազատութեան» սկզբունքները: Ո՞ւր է այն երկրային դրախտը, զոր ստեղծել խոստացան՝ առանց Աստուծոյ՝ գիտութիւնը եւ «Հիւանիդմը»: Վերջապէս ո՞ւր է «մասսուներու» ազատագրումը, բռնակալութեան եւ շահագործումի վերացումը ու հաւասարութեան տիրակալութիւնը, զորս մարդկութեան բերել խոստացաւ Համայնավարութիւնը:

Դժբախտաբար բացառութիւն չի կազմեց ճգնաւորութիւնը եւ անոր յաջորդող վանականութիւնը՝ Հակառակ իրենքզիրենք բարեկարգելու վերանորոգելու բազմաթիւ եւ յաճախ յաջող փորձերու: Իրական ճգնաւորութիւնը վաղ միջնադարին մահացած էր արդէն, երբ մարդիկ աւելի նախապատուութիւն տուին աշխարհէն եւ անոր պատասխանատուութիւններէն փախչելու ցանկութեան, քան Հոգեկան կատարելութեան իտէալին. երբ անհոգ ու հանդարտ ապրի՛լը կարգախօս դարձաւ, քան պայքարիլը չարի ոյժերուն եւ մարմնական ցանկութիւններուն դէմ:

Վանականութիւնը աւելի երկար դիմացաւ ժամանակի քայքայիչ ազդակներուն դէմ: Արեւելքին մէջ սակայն, առ ի չգոյ՛է ուժեղ կարգապահութեան, ժԲ դարէն առաջ արդէն իսկ մտած էր իր այլասերումի ճամբան՝ ըստ հաւաստումին բազում այլ վկաներու կարգին նաեւ Ներսէս ԾնորՀայի Հայրապետի, իր «Ընդհանրական»ին մէջ: Արեւմուտքին մէջ բազմիցս փորձեց ինքզինքը բարեկարգել: Բայց Վերածնունդի, Բողոքականութեան, Ֆրանսական Յեղափոխութեան, աշխարհիկ մտայնութեան տուած արտաքին հարուածներէն շատ բան խախտեցաւ արդարեւ անոր հիմքերէն, ու փլաւ վանականութեան հոյակապ կառուցուածքը: Սակայն աւելի ներքին փտուութիւնները եւ իտէալի մաշումները եւ մշուշացումները, մակերեսայնութիւնը ու մանաւանդ մշակութային մտահոգութիւններու աւելի՛ կարեւորութիւն ընծայելը քան վանական իտէալներուն՝ ներքնապէս քայքայեցին վանականութիւնը: Այսօր Հայկական ու Արեւելեան վանականութիւնը բարոյապէս եւ ամբողջապէս մեռած է, թէ իսկ անուանապէս իր գոյութիւնը քաշկուտէ հոս ու հոն: Վանքերը դարձած են կամ մշակութային հաստատութիւններ, որուն համար բացարձակ անհրաժեշտութիւն չկայ կուսակրօնութեան, այսինքն կեանքի ամբողջական ողջակիզման, քանի որ աշխարհիկ մարդեր ալ նոյն պայմաններու տակ կրնան ընել նոյն գործը, եւ կամ՝ դարձած են ապաստարաններ հոգիէ պարպուած ծոյլ մարդոց, որոնք լոկ պահպանութիւնը կ'ընեն վանական այդ հաստատութեան ու կ'ապրին դարերու դիզած ժառանգութեան եւ հարստութեանց վրայ:

Կաթոլիկ Եկեղեցիին մէջ վանականութիւնը կը շարունակէ իր գոյութիւնը երբեմն հերոսաբար, երբեմն կաղնիկադ: Եթէ մինչեւ իսկ

գտնուին ձեռքի մատներուն վրայ համրուող վանքեր՝ հազարներու մէջէն, ուր Աստուծոյ միայն գիտելի թիւով Հոգիներ կը շարունակեն իրենց անհաւասար հոգեւոր պայքարը չարի ոյժերուն դէմ՝ ի խնդիր անձնական կատարելութեան եւ Եկեղեցիի օգտին, անդին կան բիւրաւորներ, որոնք լոկ ձեւապէս կրօնաւոր են եւ շատ գոհ չեն իրենց եղածէն, ու եթէ թոյլ տրուի իրենց՝ պիտի մտնեն աշխարհիկ ամուսնական կեանք՝ շարունակելու համար իրենց քահանայական ծիսական սովորական պարտականութիւնները, առանց պայքարի եւ առանց ճիգի: Ուրիշներ՝ հազարներ, առանց այդ արտօնութեան արդէն իսկ ձգած են վանականութիւնը եւ մտած են աշխարհիկ կեանք, կորսուած՝ աշխարհի մէջ եւ թերեւս ալ կորուստի դատապարտուած անոր հետ միասին: Նոր կոչումներ զգալիօրէն պակասած են. կոչուածներն ալ ընդհանրապէս միջակ մարդեր են, որոնք կը գոհանան միջակ կեանքով, վանքի մը խաղաղ եւ նիւթապէս ապահով շրջանակի մէջ, ուր, ԾնորՀայի բացատրութեամբ, «մեղքի գողութիւններ» ալ չեն պակսիր յաճախ: Ամէն պարագային, քսաներորդ դարուն վանականութիւնը իսպառ կորսնցուցած է իր թափը եւ իր հրապոյրը եւ բոլորովին դադրած է այլեւս ընկերա-կրօնական կարեւոր ազդակ մը լինելէ, ինչպէս այնքան բեղմնաւոր կերպով եղած էր ամբողջ Միջնադարին: Ու եթէ երբեք վանականութեան անցեալի այնքան պանծալի հոգեւոր եւ մշակութային արդիւնքներու քովն ի վեր գործուած են նաեւ մեծ ու փոքր մեղքեր, նման ակամայ, եւ դատապարտուած, անկատարութիւններէ զերծ որեւէ ընկերային կազմակերպութիւն կամ անհատ՝ առաջին քարը թող ի՛նք նետէ պատմական վանականութեան եւ ճգնաւորութեան վրայ: Մենք պէտք է խոնարհինք անոնց տեսանելի եւ անտեսանելի վաստակին առջեւ, որ իսկապէս անգնահատելի է, եւ յիշատակենք յաջորդ էջերու մէջ անունները գէթ քանի մը հատին միայն, որոնք անցած են մեր տօնացոյցին, իբրեւ հիմնադիրները, ռահվիրաները եւ տիրական դէմքերը շարժումին, բայց մանաւանդ իբրեւ ներկայացուցիչները իրենց հազարաւոր ընկերներուն, որոնց անունները Աստուծոյ միայն գիտելի են եւ արժանազրուած՝ կեանքի «գպրութեան գրքին» մէջ:

ԾԳՆԱԻՈՐՆԵՐ

1. ԱՆՏՈՆ ԾԳՆԱԻՈՐ

Հայրը եւ Հիմնադիրը ճգնաւորութեան, ատով նաեւ՝ վանականութեան: Իր մասին մեր ունեցած տեղեկութիւնները կը պարտինք առաւելաբար իր ժամանակակից եւ բարեկամ Աթանաս Հայրապետին, որ գրած է անոր կենսագրութիւնը:

Մնած է 251 թուականին Եգիպտոսի Կոմա գիւղին մէջ, անմիջական հարաւր Գահրիէին, բարեկեցիկ ծնողքէ: Շուրջ քսան տարեկանին, երբ արդէն ժառանգած էր իր ծնողաց հարստութիւնը, լսեց օր մը եկեղեցիին մէջ աւետարանական սա պատգամը. «Եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ, գնա՛, ծախէ՛ ունեցածդ եւ տուր աղքատներուն եւ Ինձի՛ հետեւէ»: Այս խօսքը իրեն ուղղուած նկատեց. ուստի վաճառեց ամբողջ ունեցածը եւ ինքզինքը նուիրեց ամբողջութեամբ հոգեւոր կատարելութեան կեանքի՝ աղօթքով, պահքով եւ բարեգործութեամբ ուրիշ խօսքով՝ «աշխարհէ հրաժարեցաւ»՝ ամբողջութեամբ Աստուծոյ նուիրուելու համար: Նախ իր այս հոգեւոր կեանքը կ'ապրէր իր տան մէջ: Այս միջոցին սովորութիւն ըրած էր այցելել նաեւ իրեն պէս աշխարհէ հրաժարած ուրիշ բարեպաշտ մարդերուն՝ անոնցմէ աւելին սորվելու համար հոգեւոր կեանքի մասին:

Ատեն մը յետոյ հեռացաւ իր գիւղէն եւ սկսաւ բնակիլ մօտակայ քարայրածէ գերեզմանի մը մէջ: Այստեղ է որ ունեցաւ այն ահաւոր եւ տարօրինակ պայթարները դեւերու հետ, որոնք Ֆիզիքապէս տեսանելի կ'ըլլային իրեն՝ վայրենի գազաններու ձեւին տակ, եւ որոնց հետ ահաւոր, անհաւասար ու երկար մաքառումներէ յետոյ գրեթէ սպառած եւ կիսամահ վիճակի կը մատնուէր, բայց երբեք տեղի չէր տար անոնց փորձութեանց եւ չարչարանքներուն: 15 տարի պայքարի եւ մաքառումի այս կեանքը վարելէ յետոյ, 35 տարեկանին հեռացաւ բնակութեան վայրերէն եւ բոլորովին առանձնացաւ հեռաւոր անապատի մը լքուած մէկ բերդին մէջ եւ այնտեղ ապրեցաւ քսան տարի առանց մարդու երես տեսնելու: Իր սրբութեան եւ հոգեւոր զօրութեան համբաւը սակայն անզգալի կերպով տարածուեցաւ ամէն կողմ, ծածկեալ մանիշակի բոյրին պէս, եւ բազմաթիւ ուխտաւորներ եւ հոգեւոր

կեանքի ծարաւ ունեցողներ սկսան յաճախել իր գտնուած տեղը եւ Հաստատուիլ շրջակայ քարայրներուն մէջ: Ակիզքները, հակառակ զինքը տեսնելու եւ իր աղօթքէն եւ օրինակէն օգտուելու բոլոր թախանձանքներուն, Ս. Անտոն ոչ ոքի կը բանար իր բերդին դուռը: Ի վերջոյ շրջանի մէջ բնակութիւն Հաստատած ճգնաւորներ յաճախակի ու թախանձագին խնդրեցին իրմէ, որ այլեւս դուրս գայ իր առանձնութենէն եւ Հայր ու առաջնորդ հանդիսանայ իրենց: Ի վերջոյ տեղի տուաւ անոնց խնդրանքներուն եւ 305ին, երբ արդէն իսկ 55 տարեկան հասուն մարդ մըն էր, դուրս եկաւ իր բերդէն եւ այնտեղ հաւաքուած մարդոց դաստիարակ եղաւ՝ բացատրելով անոնց ճգնողական կեանքի կանոնները, հիմքը դնելով կազմակերպեալ ճգնաւորական կեանքի եւ վանական նախնական դրութեան մը: Քանի մը տարի ասոնք դաստիարակելէ եւ որոշ կազմակերպութիւն մը տալէ յետոյ անոնց հոգեւոր կենցաղին, ինք դարձեալ հեռացաւ աւելի ներքին եւ ամայի անապատները: Այստեղ անցուց իր կեանքին մնացեալ քառասուն տարիները: Կ'ըսուի, որ երկու անգամ միայն դուրս եկաւ իր այս թաքստոցէն՝ Աղեքսանդրիա երթալու համար. նախ՝ իր առանձնացումի սկիզբները՝ սրտապնդելու եւ զօրացնելու հաւատացեալները 311 թուի ահաւոր հալածանքներու ատեն, իսկ միւսը կեանքի վերջաւորութեան՝ 350ական թուականներուն՝ դէմ արտայայտուելու համար Արիոսականութեան, որ տիրապետող դարձած էր Եկեղեցիին մէջ: Վախճանած է խաղաղ մահով 355ին, 105 տարեկանին: Իր յատուկ փափաքով գերեզմանը ծածուկ պահուած է իր երկու աշակերտներու կողմէ, որոնք թաղեցին զայն:

Պատմականորէն Ս. Անտոն առաջին ճգնաւորը չէր, ինչպէս պիտի տեսնենք ստորեւ: Այսուհանդերձ չի դադրիր հայրը եւ Հիմնադիրը հանդիսանալէ ճգնաւորութեան: Նախ անոր համար, որ ստորեւ յիշուելիք առաջին ճգնաւորին գոյութիւնը անձանօթ էր աշխարհին, երբ Ս. Անտոն արդէն իսկ անապատական ու առաջնորդ եղած էր մենակեացներու, երկրորդ՝ ոչ ոք ունեցած է ճգնաւորութեան վրայ այն անջնջելի ազդեցութիւնը, զոր ունեցած է Ս. Անտոն: Այս ազդեցութիւնը արդիւնք էր նախ այն բացառիկ սրբութեան, որուն հասած էր այն կարգաւոր կեանքին, զոր կ'ապրէր, ինչ որ ճիշդ հակապատկերն էր մէկ կողմէն իր ժամանակակից ապականած եւ անբարոյ հե-

Թանոսական կեանքին եւ միւս կողմէ օրուան Եկեղեցիի աշխարհակա-
նացած կենցաղին:

Այդ հակադրութիւնը կամ տարբերութիւնը կրնայ նշմարուիլ նաեւ
մէկ կողմէն իր խոհականութեան, լրջութեան եւ չափաւորութեան եւ
միւս կողմէն իր ժամանակակից ճգնաւորներէն ոմանց ի գործ դրած
չափազանցութիւններու միջեւ, որոնք ճգնութիւնը տակաւ առ տակաւ
կը վերածէին այսպէս ասած Հոգեւոր «ժիւտօիզմի»՝ Ֆիզիքական
վարժքերուն չափազանց կարեւորութիւն ընծայելով:

Ս. Անտոն եղած է բարձր նկարագրով լրջախոհ անձնաւորութիւն
մը՝ տիրական որքան Ֆիզիքական իր հասակով, նոյնքան եւ աւելի իր
բարոյական եւ Հոգեկան մեծութեամբ: Իր բարոյական բարձր յատկու-
թիւնները կը յայտնաբերեն թէ՛ իր ժամանակակից եւ թէ՛ ետքի ժամա-
նակներու կենսագիրները: Կ'ըսէ անոնցմէ մէկը իր մասին. «Իր ուսու-
մը եղած է մաքուր եւ անխոցելի, իր խառնուածքը՝ բարձր եւ երկնա-
յին: Չունի ոչ մէկ հետք վախկոտութեան եւ վարանումի, թախծու-
թեան ու անձկութեան, ձեւականութեան եւ յանձնապատասանութեան:
Լեցուն էր ան Աստուածային խաղաղութեամբ եւ սուրբ վստահու-
թեամբ առ Աստուած, օծուած էր Հոգեկան արիութեամբ եւ սուրբ
զուարթութեամբ: Խանդավառ էր սրբութեան եւ կատարելութեան
գաղափարականով, սակայն այդ պատճառ մը չէր մոլեռանդական
չափազանցութեան մէջ իյնալու: Իր ազնուականութիւնը եւ զգաստու-
թիւնը ի յայտ կու գան շատ մը դրուագներու մէջ, որ կը պատմուին
իր մասին»: Ս. Անտոն ըսած է. «Խոհականութիւնը ամէնէն հիմնական
առաքինութիւնն է կատարելութեան հասնելու համար»:

Ճգնողական այն կենցաղը, որ հաստատուեցաւ իր անմիջական
ազդեցութեամբ, աւելի տիրական դարձաւ ու տարածուեցաւ Հիւսիսա-
յին Եգիպտոսի մէջ: Հարաւային շրջաններուն մէջ կը կիրարկուէին
Պախոմիոսի հաստատած կանոնները: Ս. Անտոնինը տեսակ մը բարե-
խառնութիւնն էր մենակեցութեան եւ հաւաքական կենցաղի: Իր հաս-
տատած կարգով, ճգնաւորները առհասարակ կը բնակէին առանձին
խուցերու եւ քարայրներու մէջ, բայց կ'ապրէին նոյն շրջանակի մէջ
եւ կը կազմէին նոյն կանոնով վարուող ճգնաւորներու հաւաքակա-
նութեան անբաժանելի մասը եւ կը միանային առհասարակ հաւաքա-
կան պաշտամունքի ատեն: Իւրաքանչիւր անհատ ձգուած էր իր

հնարքներուն եւ իր խառնուածքին՝ ապրելու համար կարելի կատա-
րեալ կեանք մը մէկ եւ նոյն կանոններու եւ հրահանգներու լոյսին
տակ: Իր ցուցմունքով եւ իր առաջնորդութեամբ ապրողներու թիւը իր
կեանքի վերջաւորութեան հասած էր հազարաւորներու:

Իր կենսագիրներէն մէկը կ'եզրակացնէ անոր վարքը հետեւեալ
հաւաստումով.

«Քիչ անուններ այնքան խոր, մնայուն եւ բարերար
ազդեցութիւն ձգած են մարդկային ազգի վրայ, որքան Ս. Անտոն»:

Ս. Անտոնի ընծայուած շարականներու «կանոնը» կը սկսի այս
քառեակով.

«Որ գերազանցեալ գտար

Առաւել քան զընութիւն մարդկան,

Երանելիք ի հարըս Ս. Անտոն,

Առ Քրիստոս բարեխօսեա վասն անձանց մերոց». եւ կ'աւարտի
սա տողերով.

«Բաժակ Հոգեւորական՝

Լցեալ Աստուածային ուրախութեամբ,

Ո՛վ Ս. Հայր Անտոն,

Զաղաչանս մեր հանապազ մատո՛ւ Ս. Երրորդութեան»:

Յոյնք եւ Լատինք՝ Յնվր. 17, Հայք՝ Ութօրէքի յաջորդ Շք. օրը:

2. ՊՕՂՈՍ ԹԵԲԱՅԻԴՑԻ ԱՆԱՊԱՏԱԿԱՆ

Իր մասին ոչինչ պիտի գիտնայինք, եթէ Ս. Անտոն Նախախնա-
մութենէ առաջնորդուած՝ այցելած չըլլար իրեն: Կը նկատուի ճգնաւոր-
ը, որ մատաղ տարիքին հրաժարելով աշխարհէ՝ Դեկոս Կայսեր
հանած հալածանքի տարիներուն՝ 249-251, փախած է անապատ, ուր
ապրած է շուրջ հարիւր տարիներ, աղօթքով եւ ապաշխարանքով,
քարայրի մը մէջ:

Կը պատմուի, թէ Ս. Անտոն փորձութիւնը ունեցած է պարծենա-
լու, որ ինքն է առաջին քարայրաբնակ ճգնաւորը: Աստուած սակայն
տեսիլքով մը կը յայտնէ, որ ուրիշ մը կանխած է գիւնք այն մարդի
մէջ, ու այդ մարդը Պողոսն էր: Ուստի Ս. Անտոն ճամբայ կ'ելլէ

գտնելու համար այս ճգնաւորը: Երբ կը հանդիպի Պողոսին, ան արդէն 113 տարեկան էր: Ս. Անտոն հազիւ ժամանակ ունեցած էր իմանալու անոր կեանքին ամփոփ մէկ պատմութիւնը, երբ վախճանեցաւ Պողոս եւ թաղուեցաւ Ս. Անտոնի կողմէ:

Յոյնք եւ Լատինք՝ Յնվր. 15, Հայք՝ Բ. Յիս. Եշ., «Հարցն Եգիպտացւոց» խումբին հետ, ինչպէս է պարագան ստորեւ յիշուած Եգիպտացի բոլոր ճգնաւորներուն:

3. ՊՕՂ ԱՆԱՊԱՏԱԿԱՆ

Ծանօթ է նաեւ Պօղ Պարզամիտ անունով: Երկրագործ շինական մըն էր Պօղ. երբ վերահասու եղաւ, որ իր կինը ապօրէն կեանք կը վարէ ուրիշի մը հետ, ձգեց տուն եւ ընտանիք եւ միացաւ Ս. Անտոնին, երբ ակելի քան 60 տարեկան էր:

Ու այնքան առաքինացաւ եւ զօրացաւ հոգևով, որ «դեւեր կը սարսէին Պօղոսի անունէն»: Ու երբ հիւանդներ եւ դիւահարներ Ս. Անտոնին կը դիմէին, կը զրկէր զանոնք Պօղին, որ ձեռք դնելով կը բժշկէր բոլորը: Մեծ ճգնաւորութեամբ, առաքինութեամբ եւ հրաշագործութեամբ ակելի քան հարիւր տարիներ ապրելէ յետոյ վախճանեցաւ խաղաղութեամբ: Իրեն համար ըստուած է. «Մայր աստիճան խոնարհ էր, համակ հեզ, անբիծ եւ պարզամիտ էր»:

Յոյնք եւ Լատինք՝ Մարտ 7:

4. ՈՆՈՓՐԻՈՍ ԾԳՆԱԻՈՐ

Նախ Թերապիդի սովորական վանքերէն մէկին մէջ ճգնաւոր էր. ապա անդրադառնալով, որ Եղիա եւ Յովհաննէս Մկրտիչ առհասարակ մենակեաց կեանք կը վարէին՝ ինքն ալ քաշուեցաւ բնակութենէ հեռու վայրեր եւ ապրեցաւ բոլորովին առանձինն: Յայսմաւորքը կ'ըսէ. «60 տարի մարդու երես չտեսաւ»:

Պահնուտիոս անուն ուրիշ ճգնաւոր մը Ս. Հոգիի ազդեցութեամբ գնաց այն լեռը, ուր կը բնակէր սուրբը: Գտաւ զայն «ահաւոր տեսլեամբ», այսինքն մերկ, մարմինը վերէն վար խիտ մազերով ծածկուած «ծերուն թաւազուի», որ կը հանգչէր ժայռի մը շուքին ներքեւ: Շատ յառաջացաւ տարիքին եւ խիստ ճգնութեան հետեւանքով ի սպառ տկարացած էր:

- Աստուած զրկեց քեզ, որդեա՛կ, - կ'ըսէ ճգնաւորը եկուորին եւ կ'ակեցնէ. - Այսօր կը վերջանան կեանքիս օրերը. թաղէ՛ մարմինս եւ գնա պատմէ՛ եղբայրներուս, որ եթէ մէկը խուսկ ծխէ իմ յիշատակիս կամ նուէր տայ կամ աղքատներ կերակրէ իմ անունովս, ես ալ պիտի յիշեմ զայն Բրիտանոսի առջեւ: Աստուծմէ իմ վերջին խնդրանքս այս է. ով որ իր աղօթքին մէջ յիշէ նաեւ զիս, թող յիշուի եւ մեծ վարձք ստանայ Աստուծմէ:

Այս ըսելով աւանդեց իր հոգին շուրջ 400ին:

Յոյնք եւ Լատինք՝ Յունիս 12:

5.6. ՄԱԿԱՐ ԱՆԱՊԱՏԱԿԱՆ ՆԵՐ

Մեր տօնացոյցին մէջ մէկ Մակար ճգնաւոր կայ. իսկ Յոյնք եւ Լատինք երկու Մակար ճգնաւորներ ունին: Թորգոմ Պատրիարք ալ կը խօսի երկու կամ երեք Մակարներու մասին իր «Սուրբք եւ Տօնք»-ի մէջ: Գր. Դպիր Փեշոյմալճեանի խմբագրած Յայսմաւորքի մէջ քառորդ սիւնակով միայն կը ներկայացուի իր մեծութենէն բոլորովին մերկացած Մակար մը: Իսկ Գր. Դպ. Մարզուանցիի լոյս ընծայած Յայսմաւորքը 4 սիւնակներով կը խօսի Մակարի մը մասին, ուր բոլոր ծանօթ Մակարները իրարու հետ կը շփոթուին, կը միախառնուին՝ կազմելու համար բազմակողմանի Մակար մը, որուն հետ կը նոյնանայ մինչև իսկ Երուսաղէմի Պատրիարք Մակարը (324-333), որ Նիկիոյ Ժողովին ծանօթ հայրերէն մէկն էր: Մենք, հետեւելով արեւմտեան աղբիւրներուն, պիտի խօսինք երկու Մակարներու մասին՝ իբրեւ «Հարցն Եգիպտացւոց»:

Առաջին Մակարը Եգիպտացի է՝ մականուանեալ Մեծն Մակար, ծնած է վերին Եգիպտոսի մէջ 301ին եւ ապրած մինչև 391: Երիտասարդ տարիքին քաշուած է անապատ՝ ինքզինքը խոկումի եւ ճգնութեան ընծայելու համար: Ատեն մը նշաւակ կ'ըլլայ չարախօսութեան եւ զրպարտութեան, սակայն ոչինչ կ'ընէ ինքզինքը արդարացելու համար: Երբ իր անմեղութիւնը մէջտեղ կ'ելլէ, մարդիկ կը սկսին գալ իրմէ ներում խնդրելու եւ սուրբի տեղ դնելով՝ յարգանք ընծայելու իրեն: Ասկէ խուսափելու համար քաշուեցաւ ակելի ներքին ու ամայի անապատները: Տասը տարի յետոյ, այսինքն 40 տարեկանին, կուսակրօն քահանայ ձեռնադրուեցաւ: Օժտուած էր գրեթէ ամէն տեսակ

Հիւանդութիւններ բժշկելու կարողութեամբ, յատկապէս դիւահարնները: Իրեն կը վերագրուին 50 ճառեր՝ լի լաւագոյն թելադրանքներով եւ դասերով հոգեւոր կենցաղի մասին: Կը ցաւէր ու կու լար իր փոքրագոյն թերացումներուն համար: Ոչ ոք կ'արտօնէր իրեն ծառայելու, ինք մշտապատրաստ էր ամէնքին ծառայելու: 12 տարի յատկապէս աշխատեցաւ տիրանալու իսկական պարզութեան ու այս ոգիով կը դաստիարակէր իր խնամքին յանձնուածները: Ազնիւ վերաբերմունք ունէր նաեւ հեթանոսներուն հանդէպ եւ այդ իսկ պատճառով անոնցմէ շատեր դարձի բերաւ: Կը պատմուի, որ Աստուածային ձայն մը զայն խոնարհութեան մէջ պահելու համար ըսած էր իրեն. «Մակար, չկարծես, թէ կատարելութեան դաճաթը հասած ես, դուն դեռ չունիս առաքինութիւնները այն երկու կիներուն, որոնք կ'ապրին մօտակայ գիւղը»: Մակար կը ստուգէ, որ այս երկու կիները ամուսնացած են երկու եղբայրներու հետ եւ կ'ապրին ամենախաղաղ կեանք մը նոյն յարկի տակ: Ոչ մէկ վէճ եւ ոչ մէկ աշխարհիկ խօսք եւ հետաքրքրութիւն ունեցած են, այլ իրենց կեանքը կը դառնայ լոկ աղօթքի եւ աշխատանքի շրջանակին մէջ:

Միւս Մակարը ծանօթ է որպէս Աղեքսանդրացի: Եւ յարաբերաբար վերինին՝ ծանօթ է որպէս «Կրտսեր»: Կոչուած է նաեւ «պարկեշտ» կամ «քաղաքավար» իր ազնիւ բարքին համար: Ենթարկուած է ահաւոր փորձութիւններու, որոնցմէ դուրս եկած է յաղթական: Անգամ մը երկու զամբիւլներ աւազով լեցուցած կը կրէ անապատի մէջ. երբ կը հարցնեն «ի՞նչ կ'ընես», կը պատասխանէ. «Կը չարչարեմ զիս չարչարողը», այսինքն մարմինը: Իրեն ընծայուած յարգանքէն խուսափելու համար կ'երթայ ուրիշ հեռու վանք մը, ուր կը ներկայանայ իբրեւ սովորական արհեստաւոր եւ հակառակ իր ծերութեան՝ կ'ընէ վանքին ամէնէն սովորական գործերը: Մակայն ի վերջոյ ճանչցուելով՝ մարդիկ աւելի կ'օգտուին իր հոգեւոր շնորհներէն եւ կարողութիւններէն, քան «արհեստաւորի» ձեռքի գործերէն: Գրեթէ վաթսուն տարի ապրեցաւ անապատի մէջ եւ վախճանեցաւ լեցուն տարիքով եւ առաքինութեամբ Ե. դարու սկիզբները:

Յոյնք երկու Մակարները միասնաբար կը տօնեն Յնվր. 19ին, նոյնպէս նաեւ Լատինք՝ երկուքը միասին՝ Յնվր. 2ին:

7. ԵՒԱԳՐ ԾԳՆԱԽՈՐ

Այս անուն ճգնաւորի մը չհանդիպեցանք ոչ Յունաց եւ ոչ ալ Լատինաց սրբոց ցանկերուն մէջ: Զկայ նաեւ Փեշտմալճեանի խմբագրած Յայսմաւուրքի մէջ: Ուստի մեզի կը մնայ իբրեւ միակ աղբիւր՝ Մարգուանցիի Յայսմաւուրքը, ուր արդարեւ իր անունը եւ տօնը գետեղուած է Փետր. 11ին, առասպելախառն վարքագրութեամբ մը: Ըստ այն աղբիւրի՝ Եւագր նախ աշակերտած է Բարսեղ Կեսարացի Լայրապետին, որմէ սարկաւագ ձեռնադրուած է. ապա անցած է Երուսաղէմ, ուր չարաչար Հիւանդութիւն մը իրեն յիշեցնել կու տայ իր ուխտը անապատ քաշուելու, ինչ որ արդարեւ կը գործադրէ եւ շուրջ 50 տարիներ կը ճգնի եւ կը պայքարի՝ յաղթահարելու համար յատկապէս ցանկական խորհուրդները, որոնց յարձակումին ենթակայ եղած էր իր երիտասարդութենէն եւ զորս ի վերջոյ սանձահարեց եւ կեանքին վերջին երեք տարիները խաղաղեցաւ: «Սուրբ Լայրն Եւագրիտս՝ զարդն անապատի, բարի յիշատակ ձգեց մեզի իր բարի վարքը եւ հոգելից մխիթարական հարիւրաւոր գրութիւնները եւ այլ օգտակար խօսքերը՝ ի շահ ընթերցողներու եւ լսողներու»:

8. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԲԵԾԻ

Իր վարքի մասին երկու տարբերականներ կան՝ արեւմտեան եւ արեւելեան: Ըստ արեւմտեանին՝ կ'ապրի Ե. դարու երկրորդ քառորդին (426-450), Կ. Պոլսեցի է, ազնուականի զաւակ, որ ծնողքէն գաղտնի քաշուեցաւ անապատ մատաղ տարիքէն: Վեց տարի յետոյ տեսնելով որ ծնողաց կարօտով կը մաշի՝ տուն ղրկեցին զայն: Վերադարձին չյայտնեց ինքզինքը ծնողաց. այլ բնակեցաւ անոնց մօտակայքը խեղճ խրճիթի մը մէջ, որմէ Արեւմուտքի մէջ ծանօթ է որպէս «խրճիթաբնակ»: 7-8 տարի ալ այստեղ ճգնելով՝ մահուան մօտ կանչեց իր ծնողքը եւ յայտնեց ինքզինքը՝ ցոյց տալով Աւետարանը, որ իրենցմէ ստացած էր, եւ ըստ իր փափաքին թաղուեցաւ նոյն խրճիթի մէջ իր աղքատիկ հագուստներով:

Իսկ ըստ արեւելեան տարբերակին՝ Լայ կամ Ասորի է Յովհաննէս ծագումով: Ապրած է հալածանքներու վերջին շրջանին Պաղեստինեան Կեսարիոյ մէջ, իր այրիացեալ մօրը հետ: Մատաղ տարիքին մէջ քաշուեցաւ անապատ եւ ցամքած հոր մը գտնելով՝ մտաւ անոր մէջ եւ

այնտեղ ապրեցաւ տասը տարի՝ յաղթահարելով ծնողական կարօտի ցանկութեան: Այս մասին իր ներքին պայքարները հրաշապատում եւ սրտառուչ եղանակաւ նկարագրուած են իր վարքին մէջ: 24 տարեկանին մահացաւ նոյն գուրդին կամ հորին մէջ, որմէ ժառանգեց Արեւելքի մէջ Գրեցի մականունը:

Արեւելեան «Գրեցի» կը տօնուի Մայիս 23ին: Իսկ Յոյնք եւ Լատինք «Խրճթարնակ» Յովհաննէսը կը տօնեն Յնվր. 15ին: Փեշտի մալճեան իր խմբագրած Յայսմաւուրքի մէջ ներկայացուցած է արեւմտեան տարբերակը, իսկ Մարզուանցին՝ երկու տարբերակները միասնաբար, ընդարձակ եւ վիպական ձեւով:

9. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱՐՇԱՀԱՍԱԿ

Այս անունով անապատական մը կը պակսի մեր ձեռքին տակ եղած երկու Յայսմաւուրքներու մէջ: Յոյնք կը տօնեն զայն Նոյ. 9ին, իսկ լատին տօնացոյցի մէջ այս անձին մօտաւորագոյն սուրբը Մարտ 27ին նշանակուած Եգիպտացի Յովհաննէս ճգնաւորը կարելի է համարել, որուն մասին սակայն չորս տող միայն ունի մեր ձեռքին տակ եղած Փրանսերէն քառահատոր վարք Սրբոցը, ըստ որուն՝ «մեծ սրբութեան տէր անձ մըն է, որ ուրիշ արտասովոր առաքինութեանց կարգին լեցուած էր նաեւ մարգարէական շնորհով եւ նախագուշակեց Թէոդոս Կայսեր յաղթութիւնը Մաքսիմոս եւ Եւզինէոս բռնակալներու դէմ 394ին»: Կրնայ ըլլալ, որ ուրիշ Յովհաննէս մըն է սա, որուն համապատասխանին սակայն չենք հանդիպիր ոչ մեր եւ ոչ ալ Յունաց մօտ: Ուրեմն Յովհաննէս Կարճահասակի մասին մեր ունեցած տեղեկութիւնը պիտի քաղենք «Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց»էն, որմէ քաղած կ'երեւի նաեւ Թորգոմ Պատրիարք իր տեղեկութիւնը այս սուրբի մասին:

Մատաղ տարիքէն կրօնաւորական կարգ մտաւ իր երէց եղբոր հետ Եգիպտոսի մէջ. նախ ծառայեց իբրեւ փոքրաւոր՝ ծերունի կրօնաւորի մը մօտ, որ չոր ճիւղ մը տնկելով՝ հրամայեց որ ամէն օր ջուր տայ՝ փորձելու համար իր հնազանդութիւնը: Ջուր բերելու համար պէտք էր իրիկունը ճամբայ ելլել՝ յաջորդ առաւօտ տուն դառնալու համար: Եւ զրոյցը կ'ըսէ, որ երեք տարի գործադրեց այս հրահանգը, եւ ո՛վ հրաշք, օր մըն ալ դալարացաւ ճիւղը եւ պտուղ տուաւ որմէ բերաւ

ծերունին իր միաբանակից միւս եղբայրներուն՝ ըսելով. «Հրամեցէ՛ք եւ կերէ՛ք հնազանդութեան պտուղը»:

Իր մասին շատ են նման գողտրիկ դրուագներ, որոնցմէ երկուքը յիշուած է Թորգոմ Պատրիարքի «Սուրբք եւ Տօնք»ի մէջ, երրորդ մըն ալ հետեւեալն է: Օր մը կ'ըսէ իր եղբոր. «Կ'ուզեմ հրեշտակներու պէս ապրիլ՝ մեղքէ եւ անոր յարձակումներէն բոլորովին ազատ»: Եւ կրօնաւորական սովորական զգեստները հանելով՝ մազեղէն քուրճ կը հագնի եւ աւելի հեռուոր եւ ամայի վայրեր կ'առանձնանայ. երբ իր փնտռածը չի կրնար գտնել, կը վերադառնայ եղբոր մօտ եւ դուռը կը բախէ.

-Ո՞վ է,- կ'ըսէ եղբայրը ներսէն:

-Ես եմ՝ Յովհաննէսը:

-Յովհաննէսը հրեշտակ եղաւ, ալ մարդոց հետ չի բնակիր,- կ'ըսէ եղբայրը հեգնօրէն: Երբ վերջինս կը շարունակէ երկար բախել դուռը, ի վերջոյ կը բանայ եղբայրը եւ կ'ըսէ.

-Հիմա կարծեմ հասկցար, որ մարդ ես, եւ մարդուն պարտակալնութիւնն է միշտ մաքառիլ երկրի վրայ չարի ոյժերուն դէմ:

-Ներէ՛, եղբայր, սխալեցայ. կարծեցի, որ դիւրին եւ հնարաւոր էր հրեշտակներու պէս ըլլալը:

Առհասարակ երբ երկրաւոր խնդիրներու մասին խօսք բացուէր, ինք վարպետութեամբ զայն հոգեւոր նիւթերու շուրջ կը բերէր: Օրինակ, երբ ոմանք ուրախութեամբ ըսին. «Փա՛ռք Աստուծոյ, անձրեւ ունեցանք այս տարի, շատ արմաւ եւ բանջարեղէն պիտի ունենանք», Յովհաննէս պատասխանեց.

-Այսպէս կ'ըլլայ նաեւ, երբ Ս. Հոգին կ'իջնէ մարդոց սրտերուն մէջ. կը դալարանան կը նորոգուին եւ աւելի առատ պտուղ կու տան Աստուծոյ երկիւղով:

Այսպէս էին երանելիին խօսքերը՝ լի իմաստութեամբ եւ զգալի օրինակներով համեմուած, որոնք արդարեւ լսողները կը մղէին դէպի առաքինութիւն, խոնարհութիւն եւ սէր:

10. ՆԵՂՈՍ ԱԲԲԱՅ

Ծնած կը նկատուի Անգարա ազնուական ընտանիքէ մը: Ի բնէ հոգեսէր լինելով՝ աշակերտած է Յովհաննէս Ոսկեբերան Հայրապետին: Եղած է եպարքոս Կ. Պոլսոյ, Թէոդոս Կրտսեր (408-450) Կայսեր օրով: Ապա կը հրատարի աշխարհէ. իր կինը եւ աղջիկը կուսանաց վանք մը դնելով՝ ինք եւ իր որդին կը քաշուին Սինա լեռը՝ ճգնողական կեանք վարելու համար:

Անապատի լուսեան եւ հանդարտութեան մէջ աւելի ծաղկեցաւ բարձրաստիճան, գիտնական ու ազնուական այս անձնաւորութիւնը՝ դառնալու համար ընդունարանը երկնապարգեւ գիտութեան եւ հոգետես իմաստութեան: Այնպէս որ ամէն կողմ տարածուեցաւ իր հռչակը, եւ շատ շատեր իրեն կը դիմէին՝ խմելու համար իրմէ հոսող առատաբուղի հոգեւոր աղբիւրէն, ուսանելու եւ բարոյապէս կազդուրուելու քաջալերուելու եւ լեցուելու իր յստակ եւ մեկին ուսուցումներով, որոնցմէ բաժին հանած է նաեւ գալիք սերունդներուն իր բազմաթիւ հոգեշահ գրուածքներով եւ յորդորական թուղթերով, որոնց մէջ կը փայլին իր իմաստութիւնը, ուղղափառութիւնը եւ մեղրահոս ուսուցմունքները՝ ի խրատ ոչ միայն վանականներու, այլ նաեւ աշխարհականներու, որոնք կը փափաքին ճոխանալ առաքինութեանց մէջ: Ասոնցմէ ոմանք թարգմանուած են հայերէնի՝ Ոսկեդարէն սկսեալ: Կը յիշուին արդարեւ Նեղոսի վերագրուած եւ հայերէնի վերածուած 15-17 գրութիւններ զանազան նիւթերու մասին, օրինակ՝ ընդդէմ արծաթասիրութեան, բարկութեան, տրտմութեան, ճանճոյթի, սնափառութեան, պոռնկութեան եւլն, ինչպէս նաեւ բազմաթիւ հոգեշահ խրատներ՝ միանձանց, ճգնաւորներու, վերակացուներու, մանուկներու, կրօնաւորուիլ փափաքողներու ուղղեալ, ու վերջապէս նաեւ՝ յաղագս հեղութեան, աղօթքի եւ այլ նման դրական նիւթերու մասին: Վախճանած կը նկատուի 430ական թուականներուն:

Յոյնք եւ Լատինք կը տօնեն Նոյ. 12ին:

11. ՀԱՅՐ ԱՐՍԷՆ

Ազգով Հռովմայեցի. ծնած է ազնուական տոհմէ 354ին: Որքան նիւթական հարստութեամբ, նոյնքան ալ յունա-հռովմէական մշակոյթով ճոխացած անձ մըն էր Արսէն: Արտաքին այս առաւելութեանց վրայ ունէր նաեւ երկիւղած եւ բարեպաշտ բնաւորութիւն եւ առաքինի վարք:

Մեծն Թէոդոս կը կարգէ զայն դաստիարակ իր երկու զաւակներուն՝ Արկադէոսի եւ Ռնորիոսի: 394 թուականին, երբ Արսէն շուրջ 50 տարեկան էր, Պալատի մէջ շուրջ 10 տարի ծառայելէ յետոյ, իր մէջ զօրաւոր կոչուած զգաց հոգեւորական կեանքի եւ հրատարելով արքունական փառքէ եւ պատիւէ, որոնք իր հոգին դէպի կորուստ կ'առաջնորդէին՝ կրօնաւորական կարգ մտաւ Եգիպտոսի մէջ:

Նախ աշակերտեցաւ Յովհ. Կարճահասակին, որ փորձի ենթարկելու համար անոր խոնարհութիւնը եւ կրօնաւորուելու փափաքին ամբողջութիւնը՝ օր մը ճոխ սեղան մը սարքեց, որուն հետեւէն ոտքի վրայ ներկայ եղաւ Արսէն: Յովհաննէս պաքսիմատ մը նետեց անոր կողմը՝ «առ կե՛ր» ըսելով: Արսէն ծունկի եւ ձեռքերուն վրայ քալելով՝ առաւ եւ կերաւ նետուածը: Յովհաննէս այն ատեն ըսաւ շուրջիներուն. «Ներո՛ղ եղէք, եղբայրներ, ձեզի տրուած այս ճոխ սեղանին համար. մի՛ խղճահարիք այս մասին. նորեկ այս եղբայրը փորձելու համար էր. այժմ համոզուեցանք, որ կրնայ միայնակեաց ըլլալ»:

Սորվեցաւ արդարեւ Կարճահասակէն հաւատքի եւ միտքի այս հսկան՝ Արսէն, միայնակեցութեան բոլոր կարգերը եւ օրէնքները, մինչեւ որ յայտնի եղան ամէնքին իր սրբութիւնը եւ գիտութիւնը եւ ամէն ոք կ'ակնածէր իրմէ: Սակայն ինք կը փախչէր փառքէ եւ աւելի առանձնութեան կու տար ինքզինքը: Իր եղբայրներէն մին հարցուց, թէ իզուր կը հեռանար իրենցմէ, Արսէն կը պատասխանէր.

-Աստուած գիտէ, որ կը սիրեմ ձեզ. սակայն չեմ կրնար թէ՛ Աստուծոյ եւ թէ՛ մարդոց հետ ըլլալ. որովհետեւ երկինքի մէջ կան բիւրաւոր հրեշտակներ, որոնք միակամ են իրարու հետ, իսկ երկրի վրայ ամէն մարդ իր կամքն ունի, ու ես չեմ կրնար թողուլ զԱստուած՝ մարդոց հետ ըլլալու համար:

Եւ դեռ շատ դրուագներ կը պատմուին իր մասին եւ Հոգեշահ խրատներ կը վերագրուին իրեն. օրինակ.

- Եթէ փնտռենք Աստուած, պիտի յայտնուի մեզի. եթէ ընդունինք զԱյն, մեր մօտ պիտի մնայ:

- Եթէ Հնազանդութիւնը եւ խոնարհութիւնը միանան, դեւերը կը Հնազանդեցնեն:

- Խօսելուս Համար յաճախ զղջացած եմ, լռելուս Համար՝ երբեք:

- Սիրէ՛ ամէնքը, բայց հեռո՛ւ կեցիր ամէնքէ՛:

- Ինչ որ չափէն աւելի է, դիւական է:

Օր մը ըսին իրեն. «Կրօնաւոր մը եւ աշխարհական մը կային: Կրօնաւորը որոշեց աշխարհ վերադառնալ, իսկ աշխարհականը՝ կրօնաւորուիլ: Նոյն գիշերը մեռան երկուքն ալ. արդ, ասոնք իբրեւ ի՞նչ մտան անդենական»: Արսէնիոս պատասխանեց. «Կրօնաւորը՝ կրօնական եւ աշխարհականը՝ աշխարհական: Ջար մտածումը երբ կատարում է՝ գտներ, չարիք չէ. բարի մտածումն ալ երբ չ'իրագործուիր, բարիք չէ»:

Արսէնիոսի մահուան թուականը անորոշ կը մնայ. կը տարուբերուի 430-450ի միջեւ հաւանաբար վախճանած ըլլայ 445ին, գրեթէ Հարիւր տարեկան հասակին մէջ:

Յոյնք՝ Մայիս 8, Լատինք՝ Յուլիս 19:

12. ՍԻՍԻԱՆՈՍ ԾԳՆԱԻՈՐ

Այս անունով սուրբի մը չհանդիպեցանք յոյն եւ լատին տօնացոյցներու մէջ, ոչ ալ՝ մեր Յայսմաւուրքներուն մէջ: Յունաց մէջ կայ ՍԻՍՈՆԵՍ «Արդարը» Յուլիս 6ին, իսկ Յունաց եւ Լատինաց մօտ՝ քանի մը ՍԻՍԻՈՆՈՍ-ներ, որոնցմէ սակայն ոչ մէկը «Եգիպտացուց Հայրերէն» է, որոնց կարգին է մեր տօնացոյցի Սիսիանոսը:

Մենք պիտի նոյնացնենք զայն յունական տօնացոյցի ՍԻՍՈՅԻ կամ ՍԻՍՈՅԷՍԻ հետ, որ ժամանակակիցն է Հ. Անտոնի, որուն մահէն յետոյ կ'երթայ այն հեռագոյն շրջանը, ուր կ'ապրէր վերջին տարիները Հ. Անտոն, եւ ուր կը շարունակէ ապրիլ ինք 72 տարի, իբրեւ առաջնորդ Հոգիներու, որոնք կը դիմէին իրեն: Երբ վախճանելու

վրայ էր, իր երեսը ճառագայթեց եւ ըսաւ. «Ահա կը տեսնեմ Ս. Անտոնը». ապա մի առ մի սկսաւ թուել մարգարէները, որոնց յաջորդեցին առաքեալները: Քիչ յետոյ աւելի փայլեցաւ իր դէմքը եւ ըսաւ. «Ահա կը տեսնեմ Հրեշտակները, որոնք եկած են Հոգիս առնելու». հուսկ ապա մըմջեց. «Տեսէ՛ք, նոյնինքն Տէր Յիսուսը կը նշմարեմ, որ կ'ըսէ. «Բերէ՛ք Ինծի այդ անապատի ընտիր անօթը»». եւ ապա աւանդեց իր Հոգին:

13. ԴԱՆԻԷԼ ՄԵՆԱԿԵԱՑ

Փեշտիմալճեանի Յայսմաւուրքը չունի այս անունով սուրբ մը, իսկ Մարգուանցիի Հրատարակած Յայսմաւուրքի մէջ կայ վարքը Դանիէլ խստակրօն ճգնաւորի մը, որ կ'ապրի Կ. Պոլսոյ մօտ շատ նեղ խղիկի մը մէջ, ուր չի կրնար մինչեւ իսկ շարժիլ. այլ ծունկերը կրծքին՝ կոճղի մը պէս կծկտած կ'ապրի: Յոյն եւ լատին տօնացոյցները կը յիշատակեն նաեւ Դանիէլ «Սիւնակեաց» մը՝ Միջագետացի, որ ի վերջոյ Կ. Պոլիս կու գայ, որ կրնայ նոյնացուի վերոյիշեալին հետ: Իսկ Հարանց Վարքերուն մէջ կը յիշուին մէկէ աւելի Դանիէլներ, որոնցմէ մէկն է Արսէնիոսի աշակերտ Դանիէլը, որ գրած է իր վարդապետին վարքը: Ուրիշ մը՝ Պափնուտիոսի աշակերտներէն՝ Դանիէլ Սարկաւազ անունով, որ թէեւ բունադատուեցաւ ի վերջոյ քահանայանալ, սակայն խորագոյն խոնարհութեամբ մը մինչեւ վերջն ալ մնաց ու պաշտօնավարեց լոկ իբրեւ սարկաւազ:

14. ՄՐԱՊԻՈՆ ԱՆԱՊԱՏԱԿԱՆ

Չէ յիշուած Փեշտիմալճեանի կողմէ, ինչպէս առհասարակ չեն յիշուած գրեթէ բոլոր անապատականները, հաւանաբար այն ենթադրութեամբ, որ անոնց տեղը Հարանց Վարքերուն մէջ պէտք է լինի: Իսկ Մարգուանցիի Հրատարակած Յայսմաւուրքին մէջ Սրապիոն ընդարձակօրէն՝ լման եօթը սիւնակ, կը պատմէ Մարկոս Աբբայի վախճանը, զոր կը թաղէ ինք: Ոչ յոյն եւ ոչ ալ լատին տօնացոյցներ ունին այս անունով ճգնաւոր մը: Ուստի իր մասին անհրաժեշտը պիտի քաղենք Վենետիկի «Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց»էն:

Կը նկատուի ազգով Եգիպտացի եւ ժամանակակից Ս. Անտոնի եւ աշակերտ Մեծն Մակարի: Թէեւ նախապէս մեծահարուստ մըն էր,

բայց Քրիստոսի սիրոյն աղքատացաւ: Թէեւ մեծ ուսումնական մը չէր, բայց Ս. Գիրքը գրեթէ գոց գիտէր: Իր մասին շատ մը մանրաՎէպեր կը պատմուին:

Ինքզինքը իբրեւ գերի ծախեց Աղեքսանդրիոյ մէջ արծաթասէր Հեթանոսի մը, զոր ի վերջոյ յաջողեցաւ քրիստոնէայ դարձնել՝ ազատելով նախ զայն մեղքի գերութենէն եւ ապա ինքզինքը՝ անոր գերութենէն: Նոյնը ըրած կը նկատուի Յունաստանի մէջ Մանիքեցի աղանդաւորի մը, զոր յաջողած է ուղղափառութեան դարձնել:

Իր ամբողջ ունեցածը իր վրայի կրօնաւորական պարեգօտն էր եւ Աւետարան մը: Երբ Աղեքսանդրիա վերադարձաւ, տեսաւ մերկ եւ աղքատ մարդ մը, իր պարեգօտը հանեց եւ անոր տուաւ: Երբ եղբայրները հարցուցին թէ՝ «ո՞վ մերկացուց քեզ», պատասխանեց՝ Աւետարանը:

Ուրիշ անգամ մը տեսաւ պարտքի տակ ինկած մարդ մը, որ կը չարչարուի իր պարտատէրերէն: Աւետարանը ծախեց փրկելու համար խեղճ մարդը իր պարտքէն: Երբ իր աշակերտները հարցուցին. «Ո՞ւր է Աւետարանը, Հա՛յր Սուրբ», պատասխանեց. «Գործադրեցի Անոր թելադրութիւնը, որ կ'ըսէ. «Վաճառէ՛ ինչքդ եւ աղքատներուն տուր»: Ես զայն ծախեցի Իրեն»:

Անապատ բնակած է շուրջ 67 տարի: Ան է որ Ս. Հոգիի ազդումով գնաց հեռաւոր անապատը, ողջագուրուեցաւ վերջին անգամ Աբբայ Մարկոսի հետ եւ թաղեց զայն: Մեռած կը նկատուի Ե. դարու սկիզբները:

15. ՊԻՄԷՆ ԱՆԱՊԱՏԱԿԱՆ

Հակառակ անունը յունարէն լինելուն, որ հովիւ կը նշանակէ՝ չ'երեւիր Յունաց տօնացոյցին մէջ, ոչ ալ՝ մեր Յայսմաւուրքներու մէջ: Լատինք կը տօնեն Օգոստ. 27ին:

Ազգով Եգիպտացի: Մատաղ տարիքին մենակեցութեան կոչում զգաց իր մէջ: Իր հինգ եղբայրներն ալ իր օրինակէն եւ խօսքերէն վարակուելով՝ քաշուեցան անապատ: Իր բացառիկ խոնարհութեան կը միացնէր վարքի գերազանց քաղցրութիւն եւ համբերութիւն: Անգամ մը մայրը իրեն այցելութեան եկած էր. կը հարցնէ մօրը. «Ո՞րը կը

նախընտրես՝ յաւիտենապէս ինձի հետ ըլլալ երկնքի մէջ, թէ պահիկ մը զիս տեսնել երկրի վրայ»: Մայրը ուխտեց դիմադրել իր որդին տեսնելու հաճոյքին՝ անոր հետ ըլլալու համար յաւիտենականութեան մէջ: Վախճանած կը նկատուի 451ին:

Մեր տօնացոյցը կ'աւելցնէ՝ մինչեւ հիմա ներկայացուած ճգնաւորները յիշատակելէ յետոյ. «Եւ այլոց հարցն Եգիպտացոց»: Ասոնց թիւը հազարներու կը հասնի, որոնցմէ ոմանց անունները պահած է պատմութիւնը, իսկ ասոնց մեծագոյն մասին անունները Աստուծոյ միայն ծանօթ են, որոնք ծաղկեցուցին Եգիպտոսի անապատները հոգեւորական կեանքի անթիւ եւ ալյազան բարոյական ծաղիկներով, յատկապէս Դ. եւ Ե. դարերուն:

16. ԱԲԱՍ ՄԱՐԿՈՍ

Թէեւ մեր տօնացոյցին մէջ չէ յիշուած, բայց անխափան կը յիշատակուի Ս. Պատարագի ընթացքին «միանձնացելոց սրբոց»ի կարգին: Ինչպէս յիշատակեցինք, Սրապիոնն է, որ Աստուածային ներշնչումով, անապատային տաժանելի ճամբորդութեամբ մը, որ տեւեց աւելի քան երեք շաբաթ, ի վերջոյ կը հասնի իր վարդապետի ճգնարանը՝ Թարմակիա կոչուած անապատը՝ «յաշխարհն իսպիշկաց», անոր վերջին օրերուն: Երկար ու շահեկան խօսակցութիւն մը տեղի կ'ունենայ երկուքին միջեւ, որմէ յետոյ կը վախճանի Մարկոս եւ կը թաղուի իր ճգնած քարայրին մէջ Սրապիոնի կողմէ: Ապրած կը նկատուի 135 տարի՝ ըստ «Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց»ի:

Իր մասին նոյն Յայսմաւուրքը կ'աւելցնէ. «97 տարիներ մարդու երես տեսած չէ. իր ժամանակի «մոնոզոններէն» (մենակեացներէն) ոչ ոք հաւասարած է անոր ճգնութեան: 30 տարի պայքարած է սատանայական փորձութիւններուն դէմ, որմէ յետոյ, ըստ իր խոստովանութեան, «Աստուծոյ ողորմութիւնը իմ վրաս իջաւ մարմինս թաւ մազով ծածկուեցաւ. Աստուածային կերակրով սնանեցայ (Եղիային պէս). Աստուծոյ հրեշտակները եւ փառքը տեսայ. տեսայ մինչեւ իսկ... Ենովքը եւ Եղիան»:

Մտունդով եւ սննդեամբ Աթենացի է: Ատեն մը հետեւած է իր ծննդավայրին մէջ իմաստասիրական դասընթացներու: Երբ իր ծնող-

քը վախճանեցան, անցաւ եգիպտոս եւ քաշուեցաւ վերոյիշեալ Հեռաւոր եւ անմարդաբնակ վայրերը՝ այսօրուան Հիւսիսային Սուտանը, ուր ճգնեցաւ ամբողջ կեանքի ընթացքին: Սրապիտն այսպէս կը նկարագրէ անոր վախճանը. «Եւ լսեցի սոսկալի ձայն մը, որ կ'ըսէր. «Բերէ՛ք Ինծի գայն, որ արդարութիւն գործած է եւ միշտ Իմ կամքս կատարած է. բերէ՛ք Ինծի Իմ ազնիւ եւ հաւատարիմ ծառաս: Ո՛վ Մարկոս, հանգչէ՛ եւ վայելէ՛ Երանաւէտ կեանքը, զոր ստացար շնորհիւ քու ճգնութիւններուդ»: Ապա աղօթեց Մարկոս քրիստոնեաներու եւ Եկեղեցիի խաղաղութեան համար... ու ես զարմանքով տեսայ, որ անոր հոգին սպիտակ պատմուճան մը հագած՝ դէպի երկինք կը վերանար հրեշտակներու խումբի մը ընկերակցութեամբ, որոնք ի վերջոյ աներեւոյթ եղան իմ տեսողութենէս»:

17. ՍԻՄԷՈՆ ՍԻՒՆԱԿԵԱՑ

Ճգնողութիւնը իր ծայրագոյն աստիճանին հասցուցին «Սիւնակեացները», որոնցմէ շատեր կը յիշուին պատմութեան մէջ, եւ որոնց առաջինը եւ ամէնէն նշանաւորն է Սիմէոն Սուրիացին: Այս մարդը աշխարհի մէջ ապրելով հանդերձ՝ աշխարհի հետ իր շփումը խզելու դիտաւորութեամբ յղացաւ գաղափարը սիւնի մը վրայ ապրելու՝ տարիներով:

Սիմէոն ծնած կը նկատուի 390ին Կիլիկիոյ մէջ: Տղայութեան հովիւ էր Սիմէոն: Օր մը երբ եկեղեցի ներկայ եղած էր, օրուան Աւետարանը չկրցաւ հասկնալ եւ հարցուց քովի ծերունիին թէ՝ «Ինչի՞ մասին էր այսօրուան Աւետարանի հատուածը». ծերունին պատասխանեց.

- Ժուժկալութեան:
- Ի՞նչ է ժուժկալութիւնը,- հարցուց Սիմէոն:
- Ժուժկալութիւնը անձին փրկութիւնն է, որ երկինքի արքայութեան կ'առաջնորդէ:
- Մարդ ինչպէ՞ս ժուժկալ կ'ըլլայ:
- Պահճ պահելով, աղօթելով, երկիւղածութեամբ եւ պատկառանքով, անպակաս եկեղեցի գտնուելով կանոնական ժամերուն, իրեն ինչպէ՞ս պարտականութեան բաժինը լրիւ կատարելով: Բայց այս բոլորը

կը կատարուին լոկ վանքերու մէջ,- ըսաւ ծերունին,- ուր միաժամանակ մարդիկ իրենքզիրենք կ'ենթարկեն անօթութեան եւ ծարաւի, ցուրտի եւ տաքի, զրկանքի եւ ձաղանքի, ապաշխարանքի եւ անքնութեան, բայց ամէնէն աւելի՝ իրենքզիրենք կրթելու խոնարհութեան, հնազանդութեան, անընչասիրութեան եւ սակաւապետ ըլլալու մէջ, այսինքն ուտելիքի, խմելիքի, հագնելիքի եւ բնակարանի տեսակէտէն նուազագոյնով գոհանալու մէջ:

Ասոր վրայ Սիմէոն Հիւսիս-արեւմտեան Սուրիոյ՝ Հիմակուան Հաթայ նահանգին մէջ, վանք մը մտաւ եւ կրօնաւոր եղաւ ու ինքզինքը ենթարկեց խստագոյն ճգնութեանց: Ապա առանձնացաւ անմարդաբնակ վայր մը եւ խեղճագոյն խցիկ մը կազմելով՝ երեք տարի այնտեղ անցուց անհաւատալի խստութեանց մէջ՝ հետեւելով այն սկզբունքին, թէ երբ մարմինը տկարանայ, հոգին կը զօրանայ: Աստուած իրեն պարգեւեց քարոզելու եւ բժշկելու շնորհ: Իրեն կը դիմէին հազարաւորներ, որոնց կը քարոզէր եւ հիւանդները կը բժշկէր:

Տեսնելով, որ բազմութիւնը չափազանց կը նեղէ զինքը եւ ինք շարունակ աշխարհի հետ խառնուած կը մնայ՝ խորհեցաւ գոնէ մասամբ անջատուիլ իրեն եկողներու հետ անմիջական շփումէն: Ուստի նախ բարձունք մը շինեց՝ մէջը փոսով մը, ուրկէ գլուխը միայն կ'երեւէր եւ ուրկէ կը քարոզէր եւ այնտեղ կը բնակէր: Այդ բարձունքը հետզհետէ աւելի ձեւափոխեց եւ ի վերջոյ կանգնեց 60 կանգուն բարձրութեամբ սիւն մը, որուն գագաթը չորս կողմէն պաշտպանուած նեղ շրջանակ մը յարմարացուց, ուր անցուց կեանքը ոտքի կամ ծունկի, քանի որ նստելու կամ ընկողմանելու տեղ չկար: Գլխուն վերեւ ծածկոյթ չունէր, որով ենթակայ մնաց տաքի եւ պաղի, հովի եւ փոթորիկի եւ բնութեան բոլոր խստութիւններուն: Սիւնին վրայ բարձրանալու կամ իջնելու մնայուն սանդուղի մը կար: Իր սովորական սնունդն էր շաքարը անգամ մը իր ստացած Ս. Հաղորդութիւնը:

Ինչպէս ըսինք, այս սիւնին գագաթէն կը քարոզէր վաղը տարածուած հազարաւոր ժողովուրդին եւ կ'աղօթէր հիւանդներուն վրայ: Բժշկուածներուն խստիւ կը պատուիրէր. «Եթէ մէկը հարցնէ, թէ ո՞վ բժշկեց քեզ, ըսէ՛ Աստուած, ինչ որ ճշմարտութիւնն է. որովհետեւ բժշկութիւնը միշտ Աստուծմէ կու գայ. չըլլայ որ ըսէք թէ՛ Սիմէոն բժշկեց, որովհետեւ սուտ խօսած կ'ըլլաք, եւ ձեր ախարը կը վերադառ-

նայ ձեզի»։ Հազարաւոր մեղաւորներ դարձի կը բերէր իր պարզագոյն խօսքերով եւ իր սրբակենցաղ բարքով։

Պզտիկուց, առանց մօրը լուր տալու փախած էր տունէն՝ վաճառ մտնելու համար։ Երբ իր համբաւը այսպէս աշխարհի ամէն կողմերուն տարածուեցաւ, իր մայրը լսածներէն հետեւցուց, թէ նոր օրերու հրաշագործը նոյնինքն իր կորսնցուցած որդին է։ Ուխտաւորներու հետ ան ալ եկաւ տեսնելու իր որդին՝ Սիմէոնը, քսանեօթը տարիներ յետոյ։ Երբ ըսին որ՝ մայրդ եկած է եւ քեզ տեսնել կ'ուզէ, լուր դրկեց անոր՝ ըսելով. «Թող ներող ըլլայ մայրս եւ չպնդէ զիս տեսնելու թող աշխատի արժանի ըլլալ յաւիտենական կեանքին, ուր իրար պիտի տեսնենք»։

Բազմաթիւ դրուագներ պատմուած են իր հրաշագործութեանց եւ հրեշտակային կեանքի մասին։ Իր սիւնին վրայ կանգնած՝ վարի հսկայ բազմութեան կ'ըսէր.

– Դէտ կացուց զիս Աստուած այս սիւնին վրայ, որպէսզի քարոզեմ ձեզի կեանքի ապաշխարութեան մասին։ Սակայն դուք իմ խօսքերու մտիկ չէք ընենք. կապուած կը մնաք ձեր ազահութիւններուն, հաճոյքներուն եւ անօրէնութեանց։ Հետեւաբար նախընտրելի է, որ ես այլեւս Աստուծոյ հետ միայն խօսիմ, քան թէ ձեզի պէս անհաւատ ժողովուրդի մը։ Դուք Աստուած կը փնտռէք, երբ վտանգ մը կը սպառնայ ձեզի. այլապէս կը մոռնաք զԱստուած։ Անոր համար ձեր աղօթքները ընդունելի չեն ըլլար առաջի Աստուծոյ եւ ոչ ալ ուրիշներունը, որոնք կ'աղօթեն ձեզի համար։

Երբ վախճանեցաւ, մարմինը մեծ հանդէսով տարին Անտիոք, ուր իր անունով շինուեցաւ փառաւոր եկեղեցի մը, որ այնուհետեւ դարձաւ մեծ ուխտատեղի մը՝ հռչակուած իր հրաշագործութիւններով։ Ուխտատեղիի վերածուեցաւ նաեւ իր ճգնած տեղը, ուր եւս եկեղեցի շինուեցաւ։ Վախճանած կը համարուի 460ին, շուրջ 70 տարեկանին։ Իսկ իր սիւնակեցութիւնը տեւած կը կարծուի 47 տարի։

Յոյնք՝ Սեպտ. 1, Լատինք՝ Յնվր. 5, Հայք՝ Բ. Խաչ. Բշ.։

18. ՄԱՐՈՒԳԷ ԾԳՆԱԽՈՐ

Իր առանձին անունին չկրցանք հանդիպիլ ոչ մեր Յայսմաւուրքներուն, ոչ ալ Յունա-Հռովմէական կամ Ասորական սոսնացոյցներուն մէջ։ Մեր Եկեղեցիին մէջ իր անունը եւ յիշատակութիւնը անբաժան է Ս. Յակոբայ Մծբնայ Հայրապետէն, ինչպէս արդարեւ կը հաստատէ «Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց»ը՝ ասոնց ընկերակցելով նաեւ Մելէս կամ Մելիտոս Եպիսկոպոսը. «Այս երեք սուրբերը իրարու հետ իրենց ունեցած ընտանութեան համար միասին կը տօնուին, եւ այս իսկ պատճառով Մարուգէի եւ Մելիտոսի վարքերը Մեծն Յակոբայ վարքին հետ կ'աւանդուին»։

Առաջին կապն այն է, որ Մարուգէ ուսուցիչը եւ խորհրդականն է Ս. Յակոբին, որ իր երիտասարդութեան ատեն առանձինն ճգնելէ յետոյ կու գայ այն վանքը, որուն վանահայրն էր Մարուգէ։ «Հոգեւտես մարդ մըն էր եւ մարգարէութեան ոգի ունէր» Մարուգէ, որ արդարեւ մարգարէացաւ, թէ օրին մէկը այս խոնարհ երիտասարդը Մծբնի մեծանուն եպիսկոպոսը պիտի ըլլար։ Այս երկուքը՝ Մարուգէ եւ Յակոբ, «իբրեւ ամուլներ, որոնք լծուած են Քրիստոսի Խաչի լուծին, կամաց կամաց արօրադրեցին Ասորուց եւ Հայոց Միջագետքի ժողովուրդը, եւ հռչակուեցաւ անոնց սրբութեան անունը եւ ճգնողական համբաւը»։

Երբ օրին մէկը Մարուգէն ըսաւ Յակոբին, որ այստեղի ժողովուրդէն ոմանք կը կասկածին Ջրհեղեղի եւ Նոյեան տապանի պատմութեան մասին, իսկ ուրիշներ ալ երկուութեան մատնուած են, թէ ուր հանգչեցաւ տապանը՝ Հոս՝ մեզի մօտիկ Կորդուաց լեռներու վրայ, թէ Հայոց Արարատ լեռան վրայ, Յակոբ մտքին մէջ դրաւ փարատել այս տարակոյսները։ Ուստի զնաց մինչեւ Արարատ լեռ ու նախքան լեռ բարձրանալը երբ պահ մը յոգնաբեկ քնացաւ լեռան ստորոտը, Աստուծոյ հրեշտակը իր երազին մէջ ըսաւ, որ մինչեւ լեռան գագաթը բարձրանալու յոգնութիւնը յանձն առնելու պէտք չկայ, քանի որ Տապանէն կտոր մը արդէն իսկ կը գտնուէր իր գլխուն ներքեւ։ Առաւ զայն Յակոբ մեծ ուրախութեամբ եւ բերաւ Մարուգէին, որ տեսնելով զայն մեծապէս ուրախացաւ «եւ առնելով զայն աչքերուն վրայ կը դնէր եւ կը համբուրէր»։

Մծբին քաղաքի եպիսկոպոսի վախճանումէն յետոյ քաղաքի ժողովուրդը մասերու բաժնուած էր զանազան թեկնածուներու վրայ: Մարուգէ յաջողեցաւ բոլոր տեսակէտները միացնել Յակոբի վրայ: Երկուքին միասնաբար քանի մը հրաշքներ կը վերագրուին: Օրինակ՝ Մարուգէն տասնըհինգ տարուան անդամալոյժ մը տեսնելով՝ ըսաւ Յակոբին. «Եկուր աղօթենք այս մարդուն բժշկութեան համար»: Ազօթքէն յետոյ մէկը աջ թեւէն, միւսը ձախ թեւէն բռնելով՝ ոտքի կը հանեն անդամալոյժը բոլորովին բժշկուած: Երկուքը միասին բժշկեցին նաեւ Մծբին քաղաքի կառավարիչին եղբորորդին, որ պակասաւոր ծնած էր՝ երկու ոտքերը իրարու փակած ըլլալով: Մարուգէ խնդրեց Յակոբէն մկրտել երախան, որմէ յետոյ ողջանդամ դուրս եկաւ փոքրիկը Ս. Աւագանէն:

Մարուգէի եւ Յակոբի կապը յար եւ նման է Ռեթէոսի եւ Դիոնիսիոսի ունեցած անբաժան կապին, բայց Մարուգէի պատմականութիւնը եւ անձին սրբութիւնը կասկածէ վեր են:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՊԵՏԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ

Այս գլուխին տակ կ'ամփոփենք այն բոլոր տօնելի դէմքերը, որոնք իրեն թագաւոր, իշխան, արքունի պաշտօնատար, զօրավար եւ զինուոր բացառիկ ծառայութիւններ մատուցած են Եկեղեցիին եւ կամ իրենց արիւնը թափած են Քրիստոնէական դատին համար:

Ա. ԹԱԳԱԻՈՐՆԵՐ

1. ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՍ ԿԱՅՍՐ

Քիչերուն թերեւս այնքան շատ պարտական է Քրիստոնէական Եկեղեցին, որքան Կոստանդիանոս Կայսեր: Ան էր, որ ի վերջոյ պաշտօնապէս ազատեց Եկեղեցին աւելի քան 250 տարիներ տեւող հալածանքէ մը, որ իր կայսր հռչակուած օրերուն՝ 306ին, հասած էր իր սաստկագոյն աստիճանին, իր անմիջական նախորդ եւ մրցակից կայսրերու օրով: Ոչ միայն ազատեց Եկեղեցին հալածանքէ, այլ նաեւ հովանաւորեց զայն, տէր ու պաշտպան կանգնեցաւ անոր եւ անպաշտօն կերպով գրեթէ պետական կրօնքի դիրքին բարձրացուց զայն:

Անկախաբար Քրիստոնէական Եկեղեցիին մատուցած իր մեծ ծառայութենէն, Կոստանդիանոս կը ներկայանայ նաեւ իրրեւ անցեալի մեծագոյն դէմքերէն մէկը, որ պատմութեան նոր անկիւնադարձ մը տուաւ, փրկեց քայքայումէ Հռովմէական Կայսրութիւնը եւ անոր կեանքը աւելի քան հազար տարիով երկարեց՝ հիմքը դնելով Բիւզանդական նոր եւ քրիստոնեայ կայսրութեան: Կոստանդիանոս աշխարհի մեծագոյն զօրավարներէն մէկն է. գրեթէ ոչ մէկ պատերազմ կամ ճակատամարտ կորսնցուցած է: Պատմութեան կարողագոյն պետական վարիչներէն մէկն է, որ շատ բան ըրած, շատ օրէնքներ դրած է իր ժամանակի ճնշուող զանգուածներու վիճակը աւելի բարւոքելու համար: Լիովին արժանի է իր «ՄԵՄՆ» տիտղոսին:

Մնած կը նկատուի 275 թուականին այժմու եռուսուլաւիոյ Նիշ քաղաքի մէջ: Իր հայրը Կոստանդինոս* յայտնի զօրավար մըն էր Հռոմ մէական բանակին մէջ, որ ապա կ'ետար հռչակուեցաւ**։ Իր մայրը Հեղինէ, թէեւ խոնարհ ծագում ունէր, բայց բացառիկ կարողութեան տէր կ'ին մըն էր։

Երիտասարդ տարիքին զրկուեցաւ օրուան կայսեր՝ Դիոկղետիանոսի արքունիքը, Նիկոմիդիա (Իզմիտ)՝ վարժուելու համար պետական վարչական դրութեան, եւ ապա իբրեւ զօրավար զրկուեցաւ Դանուբի շրջանը ընդդէմ բարբարոսներու։ Հայրը երբ ծերացաւ, իր մօտ կանչեց Կոստանդիանոսը Անգլիա։ Տարի մը յետոյ՝ 306ին, մեռաւ հայրը, եւ իր բանակը կայսր հռչակեց զայն Անգլիոյ Եօքս քաղաքին մէջ։ Ատեն մը խաղաղօրէն կառավարեց Արեւմուտքի իր բաժինը եւ չխառնուեցաւ Արեւելքի կայսրերու ներքին պայքարներուն։ Սակայն երբ Հռոմի մէջ ինքզինք կայսր հռչակեց Մաքսենտիոս բռնակալը, Կոստանդիանոս հարկադրուեցաւ անոր վրայ քալել։ Ծամբու ընթացքին բռնակալէն զրկուած երկու բանակները ջախջախեց։ Երբ մօտեցաւ Հռոմ, ուր պիտի մղուէր վճռական ճակատամարտը, երկինքի երեսը խաչի նշան մը տեսաւ եւ լսեց սա պատգամը. «Այս նշանով պիտի յաղթես»։ Անմիջապէս հրամայեց իր դրօշներուն վրայ դնել խաչի նշանը եւ քալեց Հռոմի վրայ։ Քաղաքի «Միլանի կամուրջ» կոչուած մուտքին՝ երկու բանակները իրարու հանդիպեցան։ Մաքսենտիոսի կողմը, հակառակ իր բազմութեան, պարտութեան մատնուեցաւ, եւ բռնակալը Տիրբեր գետ իյնալով՝ կորսուեցաւ։

Կոստանդիանոս առանձին տէր մնաց կայսրութեան ամբողջ արեւմտեան բաժնին, ուր վերցուց քրիստոնեաներու հալածանքը։ Իր մօտ հրաւիրեց Արեւելքի Կայսր Լիկիանոսը, իր քոյրը անոր կնութեան տուաւ եւ խոստացաւ անոր զօրավիգ կանգնել ընդդէմ Մաքսիմիանոս

Դաժի, որ վերջնոյս հակառակորդն էր եւ քրիստոնեաներու կատաղի հալածիչ մը։ Միասնաբար հրատարակեցին «Միլանի Հրովարտակը» 312ի վերջերը կամ 313ի սկիզբները, որով վերջ կը դրուէր քրիստոնէից հալածանքներուն ամբողջ կայսրութեան մէջ։ Մաքսիմիանոս 313ին պարտուեցաւ ու մեռաւ։ Լիկիանոս սակայն երկերես դուրս եկաւ եւ սկսաւ դաւադրել Կոստանդիանոսի դէմ։ Զօրաւոր բախումէ մը եւ յաղթութենէ մը յետոյ Կոստանդիանոս ներեց իր փեսային եւ հաշտուեցաւ անոր հետ։ Սակայն շուրջ 10 տարի յետոյ՝ 322ին, Լիկիանոս կրկին սկսաւ դաւադրութիւններ լարել Կոստանդիանոսի դէմ. չեղեալ նկատեց իր ստորագրած Միլանի Հրովարտակը եւ սկսաւ վերստին հալածել քրիստոնեաները։ Կոիւր անխուսափելի դարձաւ Բախումը տեղի ունեցաւ Ադրիանապոլսոյ (Էստրնէի) մօտ։ Լիկիանոս փախաւ եւ ամրացաւ Բիւզանդիոնի մէջ։ Կոստանդիանոս նախ արեւմուտքէն պաշարեց զայն եւ ապա մարտանաւերով Տարտաննէն մտաւ եւ յարձակումի անցաւ։ Զախջախեց անոր բանակը Սկիւտարի եւ Քաղկեդոնի (Գատրգիւղի) մէջ։ Լիկիանոս Նիկոմիդիա փախաւ, բայց ի վերջոյ անձնատուր եղաւ։ Կոստանդիանոս վեհանձնօրէն ներեց անոր այս անգամ ալ։ Երբ Լիկիանոս վերսկսաւ իր նենգամիտ մեքենայութիւններուն, Հռոմի ծերակոյտը զայն մահուան դատապարտեց։ Այսպէս, 324 թուականին, Կոստանդիանոս գործնականապէս եւ պաշտօնապէս միակ պետը դարձաւ ամբողջ Հռոմէական Կայսրութեան։

Կոստանդիանոս, կայսրութիւնը մէկ մականի ներքեւ միացնելէ յետոյ, ձեռնարկեց միացնելու Եկեղեցիին։ 320ական թուականներուն, Աղեքսանդրիոյ եկեղեցիներէն մէկին երէցը՝ Արիոս (250-336, ծնունդով Լիբէացի), մեծ հռչակ հանեց իբրեւ քաջ քարոզիչ եւ իբրեւ խստակրօն հոգեւորական։ Սակայն միաժամանակ սկսաւ քարոզել Քրիստոսի բնութեան մասին Եկեղեցիին ընդունած հաւատքէն տարբեր տեսութիւն մը։ Ընդունելով հանդերձ Քրիստոսի նախագոյութիւնը եւ գերբնական անձ մը ըլլալը՝ կ'ուրանար Քրիստոսի ճշմարիտ Աստուածութիւնը։ Կ'ըսէր, որ Քրիստոս չօրը հետ յաւիտեանական եւ հաւասար չէր, որովհետեւ «արարած» էր, այսինքն ստեղծուած էր չօր Աստուծոյ կողմէ՝ իր կարգին ստեղծելու համար Տիրեղբրը։ Հետեւաբար բնութեամբ Աստուած չէր։ Աղեքսանդրիոյ օրուան պատրիարքը դատապարտեց այս տեսութիւնները։ Կոստանդիանոս, որ ոչ մէկ

* Մեծն Կոստանդիանոսի անմիջական սերունդի բոլոր անունները ԿՈՍՏԱՆԴՆՊՈԼԻՍ վերջամասնիկներ աւելցնելով կազմուած են։ Իր անդրանիկ որդին՝ Կոստանդին, երկրորդը՝ մեծօր անունով Կոստանդիոս, կրտսերը՝ Կոստանդ, քոյրը՝ Կոստանդիա։

** Այս շրջանին Հռոմէական Կայսրութիւնը կը կառավարուէր չորս բարձրագոյն իշխանատրներով. երկու բարձրագոյնները կը կոչուէին օգոստոս՝ մին՝ Արեւելքի եւ միւսը՝ Արեւմուտքի, իսկ այս երկուքին անմիջական օժանդակները՝ կեսար։

տեսակ բաժանում կ'ուզէր կայսրութեան սահմաններուն մէջ, իր խորհրդականներէն Ոսիոս Եպիսկոպոսը Աղեքսանդրիա ղրկեց խնդիրը հարթելու համար. պատրիարքը ու երէցը հաշտեցնել կարելի չեղաւ: Ասոր վրայ՝ Կոստանդիանոս Եկեղեցիի եպիսկոպոսները ընդհանուր ժողովի մը հրահրեց նիկիա քաղաքը 325ին: Ինքն ալ նախագահեց ժողովին, ուր յետ երկար վիճաբանութեանց ի վերջոյ դատարարուեցան Արիոս եւ իր տեսութիւնները: Արիոս անգիղջ մնալով աքսորուեցաւ:

Ժողովը Արիոսի «Արարած» բառին դէմ որդեգրեց «Ծնունդ» բառը՝ Հօր եւ Որդիին յարաբերութիւնը ճշդելու համար, ինչպէս կը կարդանք Հաւատամքին մէջ. «Ծնունդ եւ ոչ արարած»: Իսկ Որդիին՝ Հօրը հետ նոյն բնութիւն ունենալը բացատրելու համար ժողովը որդեգրեց «Համագոյակից» բառը կամ Հաւատամքի բառերով՝ «նոյն ինքն ի բնութենէ Հօր» բացատրութիւնը:

Կոստանդիանոս եղաւ ջերմ պաշտպանը եւ գործադրիչը նիկիոյ ժողովի որոշումներուն: Սակայն տարիներու ընթացքին երբ նշմարեց, որ Եկեղեցիին մէջ բաւական զօրացած են Արիոսականները, դարձեալ Եկեղեցին միացնելու նպատակով անոնց պաշտպան կանգնեցաւ եւ աքսորեց հակառակողները, որոնց կարգին նաեւ Աթանասը:

Հակառակ ասոր սակայն՝ միշտ պաշտպան եւ հովանի մնաց Եկեղեցիին ընդհանրապէս: Օժանդակեց մեծամեծ եկեղեցիներու շինութեան, որոնց գլուխը կը կենան Երուսաղէմի Ս. Յարութեան, Համբարձման եւ Վերնատան փառաւոր տաճարները, ինչպէս նաեւ Բեթղեհէմի Ս. Ծննդեան Պատիւի քան: Բարեկարգեց Հռովմէական օրէնքը՝ Քրիստոնէական ոգի մտցնելով անոնց մէջ: Թեթեւցուց, օրինակ գերիներու վիճակը, աղքատ եւ ընկեցիկ մանուկներու հոգատարութեան համար պետական յատկացումներ ըրաւ: Հոգեւորականները բոլորովին տուրքէ ազատ յայտարարեց: Կիրակին արձակուրդի օր սահմանեց: Այսպէս կայսրութեան քաղաքական ու տնտեսական բարեփոխման զուգահեռ աշխատեցաւ բարձրացնել նաեւ անոր բարոյական մակարդակը:

Կոստանդիանոս, թէեւ բանիւ ու գործով քրիստոնեայ եղած էր, բայց իր մկրտութիւնը յետաձգած էր այն յոյսով, որ օրին մէկը պիտի կրնար Քրիստոսի նման Յորդանան գետին մէջ մկրտուիլ. բայց

պարագաները այնպէս բերին, որ մկրտուի մահուան անկողնին մէջ 337ին:

Յոյնք՝ Մայիս 21ին: Ըստ երեւոյթին Լատինք չեն տօներ. արդեօք վերջին տարիները Արիոսականներուն կողմը անցած ըլլալուն համար: Հայք՝ Գ. Հոգ. Գշ. իր մօրը Հեղինէի հետ:

2. ԹԵՆՈՂՈՍ ԿԱՅՍՐ

Թագաւորներու ի պատիւ երգուած մեր շարականներու բացատրութեամբ ուրիշ «մեծ թագաւոր» մըն է Թէոդոս Կայսրը. ինք եւս արդարեւ եւ իրաւամբ արժեցուց իրեն եւս տրուած «Մեծն» տիտղոսը: Կոստանդիանոսէն յետոյ երկրորդ կարող կայսրը, որուն եւս շատ բան կը պարտի ուղղափառ քրիստոնէութիւնը: Մէկը, որ գրեթէ ջնջեց հեթանոսութեան հետքերը եւ վերջ տուաւ Արիոսականութեան՝ կայսրութեան սահմաններուն մէջ, եւ Քրիստոնէութիւնը պաշտօնապէս կայսրութեան կրօնքը հռչակեց: Իսկ աշխարհիկ պատմութեան մէջ եղած է Հզօր զօրավար մը, որ առաջին առաւ Գոթներու, Վանտալներու, Հոներուն եւ այլ բարբարոսներու արշաւանքներուն: Վերջին անգամ ըլլալով՝ Հռովմէական Կայսրութիւնը մէկ մականի ներքեւ միացաւ իր իշխանութեան վերջին տարիները:

Ծնած է Սպանիոյ մէջ 346ին: Իր հայրն ալ զօրավար մըն էր Հռովմէական բանակին մէջ, որուն հետեւեցաւ նաեւ ինք եւ մեծ անուն հանեց բարբարոսներու դէմ իր վարած կռիւներուն մէջ: Իր հայրը դաւադրութեան մը զոհ դառնալէ յետոյ Թէոդոս մեկուսացաւ Սպանիա, իր ընտանեկան կալուածքին մէջ: Երբ Արեւելքի կայսրը՝ Վաղէս, մեռաւ, Արեւմուտքի կայսրը՝ Կրատիանոս, Թէոդոսը նշանակեց անոր տեղ 379ին: Թէեւ Թէոդոսի հայրը եւ մայրը ուղղափառ քրիստոնեաներ էին եւ ինքն ալ իբրեւ քրիստոնեայ դաստիարակուած էր, բայց դեռ չէր մկրտուած: Նոյն տարին Սելանիկի մէջ ունեցած ծանր հիւանդութեան մը ընթացքին մկրտուեցաւ: Որմէ յետոյ գրեթէ 15 տարիներ իր գործունէութիւնը կարեւորագոյն չափով կեդրոնացուց Ուղղափառութիւնը արմատացնելու եւ Արիոսականութեան վերջ տալու աշխատանքներուն: 381ին գումարել տուաւ Կ. Պոլսոյ Տիեզերական Ժողովը, որ վերջակէտը դրաւ Արիոսականութեան եւ վճռական յաղթանակը եղաւ Ուղղափառութեան: 390ական թուական-

ներուն Սելանիկի մէջ ծագած ըմբոստութիւն մը ճգմելու ատեն պահ մը մոռցաւ Թէոդոս իր մեծութիւնը եւ 7000 քաղաքացիներ ջարդել տուաւ: Երբ Միլան եկաւ եւ ուզեց եկեղեցի մտնել, տեղւոյն եպիսկոպոսը եւ իր բարեկամը Ամբրոսիոս արգելեցին իր մուտքը եկեղեցի՝ այս ոճիրին համար: Թէոդոս գլուխ ծռեց եւ ընդունեց ութ ամսուան ապաշխարանքը, որ սահմանած էր իրեն Ամբրոսիոս: Մեռաւ 395ին Միլանի մէջ՝ արդար եւ հզօր վարիչի մը անուն ձգելով:

Յոյնք՝ Յնվր. 17, Լատինք չեն յիշատակեր, Հայք՝ իբրեւ չորրորդ սրբոց տօնակատարութիւն՝ Ութօրէքէն յետոյ. իսկ երբ տարւոյն գիրերը Ա-Ը ըլլան, իր յիշատակութիւնը կը փոխադրուի Վարդավառէն յետոյ:

Ծանօթ.: Յոյներ կը տօնեն նաեւ Թէոդոս Բ. կամ «Փոքր» կոչուած (408-450) Կայսրը: Մենք չենք տօներ զայն. բայց Ա. Պատարագի «Թագաւորաց սրբոց»ի մէջ յիշատակուած «Թէոդոսից» յոգնակի ձեւը այս երկուքին ակնարկութիւն է:

Բ. ԱԶԵՈՒԱԿԱՆՆԵՐ, ՊԱԼԱՏԱԿԱՆՆԵՐ ԵՒ ԱՅԼ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԱՏԱՐՆԵՐ

1. ՌԱՄԵԼԱՍ ՀԱԶԱՐԱՊԵՏ

Անուան Հռովմէական ձեւն է Ռոմուլոս: Կ'ապրի Բ. դարու սկիզբները Տրայանոս (98-117) Կայսեր օրով՝ իբրեւ անոր պալատան ընդհանուր վերակացուն: Մեր մօտ այս պաշտօնը առհասարակ «արքունի հազարապետ» տիտղոսով ծանօթ է: Գործով արեւելք կը ղրկուի: Այնտեղ ականատես ըլլալով քրիստոնէից քաջագործութեանց՝ ինքն ալ քրիստոնեայ կը դառնայ: Երբ Տրայանոս արեւելք կու գայ, կը ներկայանայ անոր եւ կը յայտարարէ իր քրիստոնեայ լինելը եւ կ'այպանէ կռապաշտութիւնը: Կայսրը զայրացած նախ ուժգին գանակոծութեան կ'ենթարկէ զայն եւ ապա կը հրամայէ գլխատել:

Յոյնք՝ Սեպտ. 6, Լատինք՝ Սեպտ. 5, մենք՝ Զ. Խաչ. Գշ.:

2, 3, 4. ՓԻԼԻՊՊՈՍ ԵՊԱՐՔՈՍ ԵՒ ԻՐ ԵՐԿՈՒ ՈՐԴԻՆԵՐԸ

Փիլիպպոս եւ կինը Կղոզիա ծնողքն են Եւգինէ նշանաւոր կոյսին եւ Սերգիոս եւ ԱղիՏՈՆ եղբայրներու, որոնք իրենց տան երկու ծառաներով՝ Պրոստոսի եւ Յակինթոսի հետ, բոլորը միասնաբար կը տօնուին: Ասոնց պատմութիւնները այնքան սերտօրէն իրարու հետ հիւսուած են, որ դժուար է զանոնք իրարմէ բաժնել: Մենք այստեղ պիտի ներկայացնենք հայրը եւ իր որդիները՝ միւսները ձգելով իրենց կարգին:

Փիլիպպոս ազնուական մըն է, որ կ'ապրի Բ. դարու վերջերը Հռովմի մէջ: Օրուան կայսրը Եգիպտոսի եպարքոս կը նշանակէ զայն: Փիլիպպոս կը մեկնի ամբողջ ընտանեօք: Իր աղջիկը Եւգինէ քրիստոնեայ կ'ըլլայ այնտեղ, եւ դէպքերը այնպէս կը բերեն, որ ի վերջոյ կը յաջողի ամբողջ ընտանիքը դարձի բերել: Աղեքսանդրիոյ Հեթանոս մեծամեծները կայսրը իրազեկ դարձուցին այս մասին: Կայսրը պաշտօնանկութեան հրահանգ ղրկեց: Փիլիպպոս սիրով քաշուեցաւ իր պաշտօնէն, ծախեց իր հարստութիւնը եւ աղքատներուն բաշխեց ու ամբողջ ընտանեօք մեկուսացաւ քաղաքի քրիստոնէական շրջանակին մէջ: Եւ որովհետեւ Փիլիպպոս իմաստուն եւ առաքինի մարդ մըն էր՝

օժտուած խօսելու եւ առաջնորդելու շնորհով, տեղւոյն քրիստոնեաները եպիսկոպոս ընտրեցին զայն, որով աշխարհական մեծաւորութենէ անցաւ հոգեւոր առաջնորդութեան: Մեծապէս օգտակար եղաւ իր ժողովուրդին խօսքով ու գործով, մինչեւ իսկ հիւանդներու եւ դիւահարներու բժշկութեամբ:

Կայսրը նոր եպարքոս մը դրկեց Եգիպտոս՝ պատուիրելով անոր, որ գաղտնի՝ առանց ժողովուրդին մէջ խռովութիւն ստեղծելու, մէջտեղէն վերցնել տայ Փիլիպպոսը: Նոր եպարքոսը դրկեց իր մարդերէն քանի մը հոգի, որոնք ներկայացան նոր եպիսկոպոսին իբրեւ քրիստոնեաներ: Եւ օրին մէկը պատեհ առիթ մը գտնելով՝ մահացու կերպով վիրաւորեցին Փիլիպպոսը, որ հոգին աւանդեց երեք օրեր յետոյ՝ վկայական պսակին արժանանալով:

Թէեւ Փիլիպպոսի երկու որդիները՝ Սերգիոս եւ Ապիտոն, մեր տօնացոյցին անցած են իբրեւ իրենց կեանքը բարեպաշտութեամբ կնքող անձեր, սակայն ասոնց յիշատակութեան չհանդիպեցանք յոյն եւ լատին օրացոյցներուն մէջ:

Յոյնք՝ Դեկտ. 24, Լատինք՝ Սեպտ. 13, Հայք՝ Դ. Վարդ. Գշ:

5. ՊՈՂԻԿՏՈՍ*

Մալաթիացի ազնուական զօրապետ մըն էր Դեկոս Կայսեր օրով, Հաւանաբար ազգով Հայ: Փեսայացած էր քաղաքի Հռովմայեցի կառավարիչ Փելլիքսի՝ անոր Պաւղինէ աղջկան հետ ամուսնացած ըլլալով: Կը պատկանէր այն գունդին, որ ծանօթ էր Շանթահարիչ անունով: Սերտ բարեկամութեամբ կապուած էր նոյն քաղաքին մէջ պաշտօնավարող Նէարխոն անունով ուրիշ զօրականի մը հետ, որ քրիստոնեայ էր: Անկէ սորվեցաւ անհրաժեշտը Քրիստոնէական կրօնքի մասին եւ կատարեալ համոզում գոյացուց, որ անհունօրէն աւելի բարձր էր քան իրենց ունեցած կուսապաշտութիւնը: Թէեւ դեռ չէր մկրտուած, բայց կ'ապրէր կատարեալ քրիստոնէական կեանք:

Հասաւ Դեկոս Կայսեր հալածանքի հրովարտակը նաեւ Մալաթիա: Երբ հրովարտակը կարդացուեցաւ քաղաքի հրապարակին մէջ՝ կու-

քերու առջեւ, Պողիկտոս աստուածային նախանձալուզութեամբ լեցուած՝ խից հրովարտակը ընթերցողին ձեռքէն, պատուեց զայն ու գետին նետեց եւ ապա ամէնքի երկրպագութեան համար յատկապէս հրապարակ բերուած կուռքերը կործանեց՝ գոչելով ամէնքի երեսին. «Եթէ ես՝ մահկանացու մարդս, կրնամ կործանել այս անմուռնչ աստուած կոչուածները, անոնք ի՞նչպէս մեր փրկիչները եւ բարերարները կրնան ըլլալ: Մէկ է աշխարհի բարերարը՝ ճշմարիտ Աստուածը, որ ստեղծած է երկինքը եւ երկիրը. մէկ է փրկիչը՝ նոյնինքն Յիսուս Քրիստոս, որ ամէնքիս մեղքերուն համար զոհած է իր կեանքը եւ յարութիւն առած է»: Սահմուկեցան ամէնքը. զայրացաւ Փելլիքս դատաւորը եւ ըսաւ «Քու այս ամբարիշտ արարքներդ եւ յանդուգն խօսքերդ բաւական էին, որ այս վայրկեանին մահուամբ պատժուէիր, բայց յանուն կայսեր, իմ, կնոջդ եւ զաւակներուդ՝ կոչ կ'ընեմ քեզի ետ առնել խօսքերդ եւ դառնալ Հայրերուդ կրօնքին, եւ ներումի պիտի արժանանաս»: Պողիկտոս անդրդուելի մնաց, մինչեւ իսկ իր կնոջ թախանձանքներուն, որ ծունկի եկած կ'աղաչէր, որ խնայէր այս անարգանքը իրեն եւ իր զաւակին: «Աշխարհի հետ ոչ մէկ կապ ունիմ այլեւ, ինծի համար Քրիստոս ամէն ինչ է, եւ իրեն համար մեռնիլը՝ փառք. ես երկնաւոր թագաւորին զինուորն եմ եւ պատրաստ եմ արիւնս թափելու Անոր համար»: Փելլիքս երբ կը տեսնէ, որ ամէն փորձ ապարդիւն պիտի անցնի զայն դարձի բերելու, մահուան վճիռը կ'արձակէ: Երբ գլխատուելու կը տարուէր, Նէարխոն կը մօտենայ եւ կ'ողջագուրուի իր բարեկամին հետ եւ կ'ըսէ. «Երկրի վրայ միասին էինք, անբաժան պիտի մնանք նաեւ երկինքի մէջ. պիտի հետեւիմ քեզի նահատակութեամբ, ինչպէս դուն ինծի հետեւեցար քրիստոնեայ լինելով»: Թէեւ չէր մկրտուած Պողիկտոս, բայց իր արեան հեղումը իրեն համար մկրտութիւն համարուեցաւ եւ կեանքը կնքեց գլխատուութեամբ Քրիստոսի սիրոյն եւ դարձաւ հուշակաւոր նահատակ, որուն անունով Մալաթիոյ մէջ յետոյ կառուցուած եկեղեցին վերածուեցաւ մեծ ուխտատեղիի: Ատեն մը յետոյ նահատակուեցաւ նաեւ իր սիրելի բարեկամը Նէարխոն, որ կը յիշատակուի Յունաց մէջ եւ անցած է նաեւ մեր Յայսմաւուրքի Յնվր. 9ին, Պողիկտոսի հետ: Լատինք կը յիշատակեն Պողիկտոսը Փետ. 13ին, Հայք՝ Դ. Վարդ. Բշ.: Յրանսացի մեծանուն թատրերգակ Գոռնէյ՝ Պողիկտոսի կեանքը նրւթ ըրած է գլուխգործոց տրամի մը՝ «Բոլիէօքտ» անունով:

* Պողիկտոս անունը եւ (ինչպէս Պողիկարպոս անունը) օ տառով գրելը սովորական դարձած սխալ մըն է. գոր Ռոս կը շտկենք: -խմբ.

6, 7. ՍԱՐԳԻՍ ԵՒ ԲԱԳՈՍ

Երկու բարձրաստիճան պաշտօնակալներ են Մաքսիմինոսի օրով (286-310) Հռոմի մէջական արքունիքին մէջ, որոնք գաղտնի քրիստոնեայ եղած էին: Կուսակաշտական արարողութեան մը ընթացքին աչքի զարկաւ անոնց բացակայութիւնը: Երբ կանչուեցան կայսեր ներկայութեան, խոստովանեցան, թէ քրիստոնեայ են: Կայսրը կանացի զգեստներ հագցնել տուաւ անոնց եւ պտտուց քաղաքին մէջ, ինչ որ պատճառ մը չեղաւ, որ անոնք հրաժարին իրենց կրօնքէն: Ի վերջոյ ենթարկեց զանոնք ահաւոր ձաղկանքի, որուն չդիմանալով մեռաւ Բագոս: Իսկ Սարգիս կիսամեռ բանտ նետուեցաւ: Յաջորդ օր գանակոծութեան հետքերը անհետացած էին իր վրայէն եւ առողջացած էր բոլորովին: Կայսեր ի գործ դրած ամէն սպառնալիք եւ ըրած ամէն խոստում զայն դարձի բերելու՝ անօգուտ անցան: Ներսի կողմէն ցցուած գամերով կօշիկներ հագցուցին եւ քալեցուցին ժամերով: Սարգիս ամուր մնաց իր հաւատքին վրայ: Ի վերջոյ գլխատուեցաւ 300 թուականին, Հիւսիսային Սուրիոյ մէջ: Իր նահատակուած քաղաքը յետոյ կոչուեցաւ Սարգսաքաղաք՝ Սերկիօպոլիս, եւ դարձաւ շրջանի ամէնէն մեծ ուխտավայրը:

Յոյնք եւ Լատինք՝ Հոկտ. 7, Հայք՝ Բ. Հոգ. Եշ:

8, 9, 10. ՄԻՆԱՍ, ԵՐՄՈԳԻՆԷՍ ԵՒ ԳՐԱՓՈՍ

Աթենացի էր Մինաս ազգով եւ ուսմամբ՝ եւ կ'ապրէր Մաքսիմինոս Կայսեր (286-310) ժամանակ եւ գաղտնապէս քրիստոնեայ եղած էր: Կայսրը Աղեքսանդրիա ղրկեց զայն՝ խաղաղեցնելու այս խռովայոյզ քաղաքը: Իրեն ընկերացաւ իր քարտուղարը՝ Գրափոս կամ Եւքրափոս: Իր ճարտասանութեամբ եւ իմաստութեամբ յաղողեցաւ իր առաքելութեան մէջ, որմէ գոհ մնալով՝ կայսրը կառավարիչ կարգեց զայն քաղաքին: Սակայն իր բարեգործ արարքները եւ քրիստոնէից հանդէպ ցոյց տուած բարեկամութիւնը երեւան հանեցին իր քրիստոնեայ լինելը, ինչ որ կայսեր տեղեկացուցին Աղեքսանդրիոյ հեթանոս մեծամեծները: Կայսրը զայն փոխարինելու համար ղրկեց ուրիշ Աթենացի մը՝ նոյնքան ուսեալ եւ նոյնքան ճարտար՝ Երմոգինէս կոչուած: Նախ իր ճարտասանութեամբ փորձեց դարձի բերել Մինասը, բայց յաղթահարուելով անոր իմաստուն պատասխաններէն՝ խստա-

գոյն չարչարանքներու ենթարկեց, մինչեւ իսկ կտրել տուաւ անոր լեզուն եւ աչքն ալ փորել տալով՝ բանտ նետեց: Յաջորդ օր սակայն Մինաս հրաշքով բժշկուած ներկայացաւ իրեն, որմէ խորապէս տպաւորուելով՝ Երմոգինէս ինքն ալ քրիստոնեայ եղաւ եւ մկրտուեցաւ եւ ապա եպիսկոպոս ձեռնադրուեցաւ, սկսաւ քաջաբար քարոզել Աւետարանը: Կայսրը իմանալով պատահածը՝ անձամբ Աղեքսանդրիա եկաւ: Դատեց ու ծանր չարչարանքներու ենթարկեց երկուքն ալ, որոնք երկնային զօրութեամբ գօտեպնդուած՝ տոկացին այդ բոլորին: Այն ատեն Մինասին դիւանադպիրը՝ Գրափոս, որ նոյնպէս քրիստոնեայ էր, սկսաւ նախատել կուսակաշտութիւնը եւ հեգնել կայսեր անճարութիւնը եւ անյաջողութիւնը այս մարդիկը դարձի բերելու: Կայսրը զայրացած՝ տեղն ու տեղը սպաննեց զայն: Իսկ Մինասն ու Երմոգինէսը հրամայեց գլխատել՝ չորրորդ դարուն սկիզբները:

Յոյնք եւ Լատինք՝ Դեկտ. 10, Հայք՝ Գ. Յիս. Բշ:

11. ԱԴՈՎՏՈՍ ԴՈՒՔՍ

Մտուելով Եփեսոսի է, հաւատքով՝ ծածուկ քրիստոնեայ եւ ժամանակակից՝ Մաքսիմինոս կուսակաշտ եւ հալածիչ Կայսեր: Ունէր գեղեցիկ աղջիկ մը, զոր թագաւորը ուզեց կնուութեան առնել: Հայրը գաղտնաբար արեւելք փախցուց զայն: Երեւան ելաւ իր քրիստոնեայ ըլլալը, շնորհազուրկ եղաւ եւ ինչքերը յարքունիս գրաւուեցան եւ աքսորուեցաւ ընտանեօք Միջագետք: Տեղւոյն կառավարիչը հրահանգ ստացաւ դարձի բերել զայն: Սակայն դատաւորին ջանքերը ի դերեւ ելան. ծանր չարչարանքներէ յետոյ գլխատմամբ սպաննուեցաւ եւ պատուով թաղուեցաւ իր կնոջ եւ միւս աղջկան կողմէ: Փախստական աղջիկը պաշտպանութիւնը վայելելով Լիկիանոս Կայսեր կնոջ Կոստանդիայի, որ քրիստոնեայ եղած էր՝ կրցաւ գտնել իր մայրն ու քոյրը Միջագետքի մէջ, եւ առնելով իրենց հօր նշխարները՝ փոխադրեցին Եփեսոս, ուր խաղաղութեամբ կնքեցին իրենց կեանքը:

Յոյնք՝ Հոկտ. 4, Հայք՝ Բ. Խաչ. Եբ., Ա. Գեորգի հետ, Լատինք՝ չունին:

12, 13. ԱՆԻԿՏՈՍ ԵՒ ՓՈՏԻՆՈՍ

Երկուքն ալ Նիկոմիդացի ազնուականներ էին: Անիկտոս կոմսու-
թեան տիտղոսով պատուուած էր, իսկ Փոտինոս իր եղբորորդին էր:
303ին Դիոկղետիանոս հանած էր իր ընդհանուր հալածանքի հրովար-
տակը եւ կարգալ կու տար զայն Նիկոմիդիոյ հրապարակին վրայ,
ինքն ալ դատական աթոռ բազմած՝ մահ կը սպառնար բոլոր քրիս-
տոնէից կամ կուռքերուն զոհ չմատուցանողներուն: Այն ատեն Անիկ-
տոս, Հետն առած Փոտինոսը, ճեղքեց բազմութիւնը եւ կայսեր առջեւ
ելաւ ու ըսաւ բարձրաձայն. «Ահաւասիկ ես քրիստոնեայ եմ եւ Քրիս-
տոս Աստուածը կը պաշտեմ»: Եւ սկսաւ քարոզել քրիստոնէութիւնը՝
ցոյց տալով անոր մեծութիւնը եւ վար զարնելով կռապաշտութիւնը եւ
յիշելով դիքերու վերագրուած զրոյցներու յիմարութիւնը: Երկուքը
միասին ենթարկուեցան ահռելի չարչարանքներու եւ բանտ նետուե-
ցան: Երեք տարի յետոյ կրկին հրաւիրուեցան ուրանալ իրենց կրօնքը.
երբ հաստատ մնացին իրենց հաւատքին վրայ, այրուելով ողջակէզ
եղան ի սէր անուանն Քրիստոսի, բազմաթիւ ուրիշ նահատակներու
հետ:

Յոյնք եւ Լատինք՝ Օգոստ. 12, Հայք՝ Դ. Հոգ. Բշ.:

14. ԴԵՄԵՏՐԻՈՍ ԵՆԹԱՀԻՒՊԱՏՈՍ

Ծնած է Սելանիկ, ազնուական ընտանիքէ: Առաքիւնի եւ քաջ երի-
տասարդ մըն էր՝ սնած քրիստոնէական դաստիարակութեամբ: Հա-
մարձակ կը քարոզէր Աւետարանը ամէնուրեք եւ շատերը դարձի բե-
րած էր արդէն: Ամբաստանեցին զայն Մաքսիմիոս հալածիչ կայսեր
առջեւ: Երբ հաւատքը չուրացաւ, տէգի հարուածով սպաննեցին 303
թուականին: Յոյնք եւ Լատինք անոր հետ միասին կը յիշեն նաեւ
Նեւտոր անունով մարտիրոս մը, որ նահատակուեցաւ՝ Մաքսիմիոսի
սիրելի հսկայ ըմբիշ մը, որ քրիստոնեաներուն ասպարէզ կը կարգար
Գողիաթի պէս՝ մէկ հարուածով սպաննած ըլլալուն համար:

Դեմետրիոս Յունաց մէջ մեծ ժողովրդականութիւն վայելող սուրբ
մըն է:

Յոյնք՝ Հոկտ. 26, Լատինք՝ Հոկտ. 8, Հայք՝ Թ. Խաչ. Գշ.:

Գ. ԶՕՐԱՎԱՐՆԵՐ ԵՒ ԶՕՐԱԿԱՆՆԵՐ

1, 2, 3. ԵՒՍՏԱՔԷՆՈՍ ԵՒ ԻՐ ԵՐԿՈՒ ՈՐԴԻՆԵՐԸ
ԱԳԱՊԻՈՍ ԵՒ ԹԷՆՈՊԻՍՏՈՍ

Յոյներ այս սուրբը Եւստաթէոս կը կոչեն, իսկ Լատինք՝ Եւստա-
թէոս, որուն պատմութիւնը կը յիշեցնէ Յոբ երանելին եւ կարծես
կրկնութիւնն է անոր կեանքին, քրիստոնէական շրջանակին մէջ: Իր
վարքը կը պատկերացուի ամենահետաքրքրական եւ հրաշալի պայ-
մաններու եւ պարագաներու մէջ:

Յոբի պէս ան ալ մեծահարուստ ազնուական մըն էր, որ երջանիկ
բոյն մը կազմած կ'ապրէր Հոովմի մէջ իր կնոջ եւ իր երկու մատաղ
մանուկներուն հետ: Հեթանոս ըլլալով հանդերձ՝ առաքիւնի անձ մըն
էր եւ անուն հանած էր իբրեւ քաջ զօրավար Հոովմէական բանակին
մէջ: Որսորդութեան մը ընթացքին նշմարեց հրաշալի եղջերու մը եւ
հետապնդեց զայն: Երբ իր խումբէն հեռացած ու առանձնացած էր,
ապշանքով տեսաւ, որ կենդանիի եղջիւրներուն վրայ ճառագայթար-
ձակ խաչելութեան պատկեր մը կար: Երբ յափշտակուած կը դիտէր
զայն, յանկարծ ձայն մը եկաւ խաչելութենէն, որ կը թելադրէր իրեն
դարձի գալ եւ քրիստոնեայ ըլլալ: Երբ տեսիլքը եւ եղջերուն աներե-
ւութեացան ու տուն վերադարձաւ, պատմեց իր կնոջ ամէն բան: Կինն
ալ նման տեսիլք մը ունեցած էր: Ուստի մկրտուեցան ամբողջ ընտա-
նեօք եւ նոր անուններ ստացան: Ամուսինը կոչուեցաւ Եւստաթէոս,
կինը՝ Թէոպիստէ, որ կը նշանակէ Աստուածահաւատ, անդրանիկ որ-
դին՝ Ագապիոս, այսինքն Սիրունի, կրտսերը՝ Թէոպիստոս, որ արա-
կան ձեւն է մօրը անունին:

Ասոր վրայ շնորհագուրկ եղան օրուան կայսրէն եւ կորսնցուցին
ամբողջ իրենց հարստութիւնը, ուստի որոշեցին հեռանալ Հոովմէն:
Երբ նաւ պիտի առնէին օտար երկիր երթալու, նաւապետը տեսնելով,
որ կինը գեղեցիկ է, հազիւ թէ ան նաւին մէջ ոտք դրած էր, հրեց
միւսները ցամաք եւ հրամայեց, որ նաւը ճամբայ հանեն: Յամաքէն
շատ չէին հեռացած, երբ նաւապետը սրտի կաթուած ունեցաւ ու մե-
ռաւ: Նաւաստիներ հասկնալով, որ կնոջ պատճառով եղաւ այս պա-
տահարը, չեն համարձակիր վնաս հասցնել անոր, կը տանին բարբա-

րոսներու երկիրը եւ պատուով կը յանձնեն նաւապետի ընտանիքին, որոնք եւս ամէն բան իմանալով՝ պատուով կը պահեն զայն՝ միաժամանակ օգտուելով անոր իմաստութեանէն եւ այլազան կարողութիւններէն:

Իսկ Եւստաքէոս խորապէս սրտաբեկ՝ կ'առնէ իր երկու զաւակները եւ կ'ուղղուի ուրիշ կողմ: Սակայն գետէ մը անցած պահուն կը կորսնցնէ իր երկու ձագուկները, որոնցմէ մէկը հազիւ 7, իսկ միւսը հազիւ 9 տարեկան էր: Աստուծոյ նախախնամութեամբ երկու փոքրիկները գետին երկու տարբեր եզերքներէն դուրս կու գան, եւ երկու տարբեր հովիւներ տէր կ'ըլլան ասոնցմէ իւրաքանչիւրին:

Իսկ Եւստաքէոս երբ գրեթէ հրաշքով միւս ափը կ'ելլէ, լաւհառաջ ինքզինքը գետին կը նետէ՝ երկրի վրայ ունեցած իր վերջին միտքարութեանէն ալ՝ իր զաւակներէն զրկուած ըլլալուն համար: Սակայն ի վերջոյ կը խոստովանի Աստուծոյ առջեւ, թէ Ան է տէրը ամէն բանի, ներառեալ իր ընտանիքին եւ իր կեանքին: Թէեւ ցաւատանջ՝ բայց մեծ համբերութեամբ տոկաց այս կորուստներուն եւ Աստուծոյ դէմ չգանգատեցաւ: Ի վերջոյ իր ցաւը մոռնալու համար ազարակապանի մը մօտ ծառայութեան մտաւ եւ երկար ատեն մնաց այնտեղ: Երբ իր համբերութիւնը այսպէս փորձի ենթարկուեցաւ եւ յաղթական դուրս եկաւ, Աստուած ալ վարձատրեց զայն ամէնէն անակնկալ կերպով:

Օրուան կայսրը, որ նախապէս օգտուած էր Եւստաքէոսի զինուորական տաղանդէն բարբարոսները ընկճելու գործողութեան մէջ, երբ կայսրութեան սահմանները կրկին վտանգուեցան անոնցմէ, յիշեց նախկին կորովի եւ երիտասարդ զօրավարը եւ ամէն կողմ փնտնել տուաւ զայն: Ի վերջոյ գտան ու բերին զայն կայսեր, որ վերստին իրեն յանձնեց բարբարոսներու հոսանքը կեցնելու պարտականութիւնը: Իրեն յանձնուած բանակը անբաւարար նկատելով՝ նոր զինուորներ վարձելու հրաման ուղեց կայսրէն, որ շնորհեց խնդրանքը: Զինուոր արձանագրուելու ներկայացողներու մէջէն էին նաեւ երկու երիտասարդներ, որոնց կերպարանքը իր վրայ դրական տպաւորութիւն ձգելով՝ իբրեւ պարկեշտ եւ վստահելի անձեր՝ իրեն թիկնապահ կարգեց: Երբ պատերազմը սկսաւ, բարբարոսները նահանջեցին: Այդ միջոցին բարբարոսներուն կողմէն կին մը Հռովմէական բանակը անցաւ՝

ըսելով, որ ինքն ալ Հռովմայեցի է եւ բարբարոսներէն գերի տարուած է ժամանակին: Հանեցին զայն զօրապետի ներկայութեան: Երկուքն ալ չկրցան հաւատալ իրենց աչքերուն, երբ իրար կորսնցուցած այր եւ կին դէմ յանդիման եկան իրարու: Ծուռկի ինկաւ Թէոպիստէ, կին զէմ յանդիման եկան իրարու: Ծուռկի ինկաւ Թէոպիստէ մեր ձեռքերը երկինք բարձրացուց եւ ըսաւ «Փառք եւ գոհութիւն մեր Փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ զիս անաղարտ պահեց այն բոլոր փորձանքներէն, որոնց մէջէն թոյլ տուաւ որ անցնիմ: Փառք նախախնամութեան, որ արժանի ըրաւ զիս ամուսնոյն ներկայանալու այնպէս, ինչպէս բաժնուած էի իրմէ»: Այր եւ կին ողջագուրուեցան անհուն երջանկութեամբ ի մեծ զարմացումս բոլոր ներկաներուն: Աղօթեցին, որ Աստուած արժանի ընէ զիրենք գտնելու նաեւ իրենց զաւակները:

Յաջորդ օրերուն երբ Թէոպիստէ վրանին մէջ էր, դուրսէն լսեց, որ ամուսնոյն երիտասարդ թիկնապահներէն մէկը կ'ըսէ ընկերոջը՝ «Երանի թէ ես ալ գտնէի հայրս ու մայրս, զորս կորսնցուցած եմ մանկութեանս. հիմակուան հայրս զիս ջուրէն հանելով որդեգրած է, եղբայր մըն ալ ունեցած եմ, ան ալ կորսնցուցած եմ»: Ընկերը զարմանքով կ'ըսէ, որ իր պատմութիւնն ալ գրեթէ նոյնն է. ինքն ալ գետէն ազատուած է: Թէոպիստէ իր լսածները ամուսնոյն կը պատմէ, որ իր թիկնապահները հարցուփորձելով՝ համոզում կը գոյացնէ, որ անոնք իրենց կորսուած կարծուած զաւակներն են: Իրենց երջանկութիւնը կատարեալ կ'ըլլայ, երբ ընտանիքի բոլոր անդամները զիրար կը վերագտնեն այսպէս՝ նախախնամութեան անիմանալի տնօրէնութեամբ:

Դժբախտաբար սակայն իրենց երջանկութիւնը երկար չտեւեց: Եւստաքէոս բարբարոսները ամբողջապէս սանձահարելէ եւ սահմաններուն վրայ պահակախումբեր դնելէ յետոյ կը վերադառնայ Հռովմ եւ կ'արժանանայ մեծ պատիւներու: Սակայն երբ հրաւիրուեցաւ յաղթութեան աստուածին մեհնանը՝ կրօնական արարողութեան մասնակցելու, Եւստաքէոս խստիւ մերժեց՝ յայտարարելով, որ ինք քրիստոնեայ է եւ իր յաղթութիւնը կը պարտի երկինքի եւ երկրի արարիչ Աստուծոյ, զոր կը պաշտէ, եւ Յիսուս Քրիստոսի, Որուն կը հաւատայ եւ Որ յաղթած է աշխարհի: Այս յայտարարութեան վրայ կայսրը հրամայեց, որ ամբողջ ընտանեօք նետուին առիւծներու առջեւ, որոնք

սակայն չվնասեցին անոնց: Ի վերջոյ պղինձէ ցուլի մը մէջ ներփակեցին չորսն ալ, որ չարչարանքով այրին: Սակայն, կ'ըսէ վկայաբանութիւնը, անոնք տանջանքի հնոցը աղօթարանի վերածեցին եւ իրենց հոգիները աւանդեցին խաղաղութեամբ ու երջանկութեամբ, որ այս անգամ պիտի տեւէր յաւիտեան: Նահատակուած կը նկատուին 120 թուականին:

Յոյնք եւ Լատինք՝ Սեպտ. 20, Հայք՝ Գ. Խաչ. Գշ.:

4. ՎԱՐՈՍ ԶՕՐԱԿԱՆ

Հռովմայեցի զինուոր մը, որ կը ծառայէր Եգիպտոսի մէջ Մաքսիմիոս Կայսեր օրով Գ. դարու վերջերը: Երբ եօթը միայնակեացնեք բռնուեցան ու բանտարկուեցան, անոնցմէ մէկը մեռաւ նոյն գիշերը եւ Վարոս մեռնողին տեղը գրաւեց, որպէսզի ինքն ալ մարտիրոսանայ, որուն վրայ զայրանալով՝ դատաւորը չարաչար տանջանքներով սպաննել տուաւ զայն:

Յոյնք եւ Լատինք՝ Հոկտ. 19, Հայք՝ Է. Խաչ. Բշ.:

5. ՄԵՐԿԻՒՐԻՈՍ ԶՕՐԱՎԱՐ

Մերկերիոս կամ Մերկիւրիոս ծագումով Սկիւթացի մըն է, որ կը ծառայէր Կապադովկիոյ կայսերական բանակին մէջ Դեկոս Հայածիչ Կայսեր օրով 250ական թուականներուն: Գաղտնի քրիստոնեայ մըն էր: Բարբարոսներու դէմ իր ցոյց տուած քաջագործութեան համար բարձրացաւ զօրավարութեան աստիճանին: Իր նախկին պաշտօնակիցները նախանձելով մատնեցին զայն կայսեր, թէ քրիստոնեայ է: Ենթարկուեցաւ ահաւոր չարչարանքներու, որոնց տոկաց հրաշալի համբերութեամբ: Ի վերջոյ շղթայակապ տարին զայն Կեսարիա եւ այնտեղ նահատակեցին 259 թուին:

Յոյնք եւ Լատինք՝ Նոյ. 25, Հայք՝ Բ. Յիս. Բշ.:

6. ԱՆԴՐԷ ԶՕՐԱՎԱՐ ԵՒ ԻՐ ԲԱՆԱԿԸ

Կիլիկեցի է Անդրէաս եւ գաղտնի քրիստոնեայ եղած բարձաստիճան զինուորական մը՝ Սուրբոյ կայսերական բանակին մէջ, Դիոկղետիանոս Կայսեր օրով: Պարսիկներու դէմ պատերազմի մը ընթացքին,

երբ իր բանակը՝ շուրջ 600 հոգի, նահանջելու վրայ էր, քաջալերեց զանոնք այս անգամ Յիսուս Քրիստոսի անունով, վերադարձուց զանոնք, եւ յաղթական դուրս եկան պատերազմէն: Ասոր վրայ ամբողջ բանակը քրիստոնեայ եղաւ: Իր սպարապետը իմանալով ասիկա՝ երբ անոնք Տաւրոսի կիրճերէն կ'անցնէին, զօրք զրկեց եւ ամէնքն ալ նահատակել տուաւ կիրճին մէջ 300 թուականին:

Յոյնք եւ Լատինք՝ Օգոստ. 19, Հայք՝ Ե. Վարդ. Գշ.:

7. ԳԷՈՐԳ ԶՕՐԱՎԱՐ

Ծնունդով Կապադովկիացի է Ս. Գէորգ, այսինքն այսօրուան Կեսարիոյ շրջանէն: Մեծցած է քրիստոնեայ ընտանիքի մէջ: Ապա զինուորագրուելով՝ կարճ ժամանակին բարձրացաւ զօրավարութեան աստիճանին՝ Հռովմէական բանակի մէջ: Սիրելի դարձաւ օրուան կայսեր Դիոկղետիանոսի: Երբ այս վերջինս քրիստոնէից հալածանքի հրովարտակը պիտի հանէր, նախ խորհրդակցեցաւ իր մեծամեծներուն հետ, որոնց մէջ էր նաեւ Գէորգ: Ամէնքը համաձայն եղան գաղափարին, բացի Գէորգէն, որ նախ հաստատեց, թէ նման որոշում մը անարդարութիւն պիտի ըլլար կայսրութեան խաղաղ քաղաքացիներուն: Ամէնքն ալ կռահեցին, որ Գէորգ քրիստոնեայ է, եւ փորձեցին զինքը դարձի բերել: Բայց Գէորգ ըսաւ «Ես կ'ուզէի զձեզ ամէնքդ քրիստոնեայ տեսնել եւ երկինքի եւ երկրի Արարչին մատուցանել այն պաշտամունքը, զոր կը մատուցանէք ձեռագործ կուռքերուն»: Որուն վրայ Գէորգ բանտարկուեցաւ ու ենթարկուեցաւ ահաւոր չարչարանքներու, որոնց քաջաբար տոկաց: Ի վերջոյ հաւանութիւն յայտնեց տեսնելու կուռքերը: Կայսրը ուրախութեամբ առաջնորդեց զայն մեհեան, ուր սակայն Ս. Գէորգ աստուածային նախանձայուզութեամբ լեցուած՝ մի առ մի կործանեց զանոնք: Այս յանդուգն արարքին վրայ անմիջապէս գլխատել տուաւ զայն Դիոկղետիանոս:

Առհասարակ բոլոր նշանաւոր սուրբ զօրավարներու պատկերները կը ներկայացուին ձիի վրայ եւ վիշապ մը սպաննելու դիրքին մէջ: Կրնայ ըլլալ, որ անոնցմէ մէկը կամ միւսը արդարեւ նման քաջագործութիւն մը ըրած ըլլայ, բայց այդչափ բաւական չէ, որ ան սուրբործութիւն մը ըրած ըլլայ, բայց այդչափ բաւական չէ, որ ան սուրբ բերու կարգը անցնէր: Այս պատկերները աւելի խորհրդանշական իմաստ ունին, քան պատմական: Վիշապը կը ներկայացնէ աշխարհի

չարութիւնը, դիւական գորութիւնը եւ բռնակալութիւնը, որոնց դէմ արդարեւ պայքարեցան Քրիստոսի այս քաջարի նահատակները անվախօրէն: Ա. Գէորգ նահատակուած կը նկատուի 303 թուականին Նիկոմիդիոյ մէջ: Իսկ ըստ այլոց՝ Պաղեստինի Ռամլէ կամ Լիւզ քաղաքաւանը՝ ոչ շատ հեռու այսօրուան Թէլավիլի օդակայանէն, եւ ուր արդարեւ Հայեր, Յոյներ եւ Լատիններ Ա. Գէորգի անունով եկեղեցիներ ունին: Ա. Գէորգ Անգլիոյ պաշտպան սուրբն էր:

Յոյնք եւ Լատինք՝ Ապրիլ 23, Հայք՝ Բ. Խաչ. Շք.:

8. ԿԱԼԻՍՏՐԱՏՈՍ ԶՕՐԱԿԱՆ ԵՒ 49 ԸՆԿԵՐՆԵՐԸ

Մանդեամբ Քաղկեդոնացի (Գատըքէօյ), որ կը ծառայէր Հռովմի մէջ: Զերբակալուեցաւ իրբեւ քրիստոնեայ եւ ենթարկուեցաւ անտանելի չարչարանքներու, ի վերջոյ տոպրակի մը մէջ դրուելով ծով նետուեցաւ, որմէ սակայն Աստուծոյ հրաշքով ողջ դուրս եկաւ, զոր տեսնելով իր 50 ընկերները՝ իրենք ալ դարձի եկան եւ միասնաբար նահատակուեցան 304 թուականին:

Յոյնք՝ Սեպտ. 27, Լատինք՝ Սեպտ. 26, Հայք՝ Ե. Հոգ. ԲԶ.:

9. ԱԴՐԻԱՆՈՍ ՎԵՐԱԿԱՑՈՒ

Բարձր պաշտօնատար մըն էր Հռովմէական բանակի մէջ, Մաքսիմինոս Կայսեր օրով: Նախապէս հեթանոս էր եւ հալածած՝ քրիստոնեաները: Սակայն տեսնելով անոնց քաջութիւնը եւ համբերութիւնը եւ հաւանաբար նաեւ աղօթքովը եւ աշխատանքներովը իր քրիստոնեայ կնոջ՝ Անատոլիայի՝ ի վերջոյ քրիստոնեայ եղած էր: Իր նոր հաւատքին համար նախ բանտարկուեցաւ եւ ապա սաստիկ չարչարանքներու ենթարկուեցաւ: Ի վերջոյ սրունքները ջարդուելով՝ մահացաւ այս պատուական վկան 310ին:

Յոյնք՝ Օգոստ. 26, Լատինք՝ Սեպտ. 8, Հայք՝ Ե. Վարդ. ԵԶ.:

10. ԹԷՈՂՈՐՈՍ ԶՕՐԱԿԱՆ

Երկու Թէոդորոսներ կան, երկուքն ալ գինուորական եւ իրարու գրեթէ ժամանակակից եւ ազգակից, որով յաճախ շփոթուած են իրարու հետ թէ՛ Արեւելքի եւ թէ՛ Արեւմուտքի մէջ: Անուններու նոյնու-

թենէն եւ շփոթութիւններէն ոմանք ալ ենթադրած են, որ Թէոդորոս անունով մէկ զօրական կայ միայն՝ վարքի երկու տարբերակներով:

Բայց քանի որ մեր օրացոյցին մէջ յիշատակուած են նոյն անունով երկու սուրբեր, մենք եւս պիտի ներկայացնենք երկու տարբեր Թէոդորոսներու պատմութիւնները:

Առաջինը կը ներկայացուի որպէս քեռին երկրորդին եւ օտար շրջանակներու մէջ ծանօթ է «Տիւսօն» մականունով, որ կը նշանակէ յունարէնով «նոր արձանագրուած» կամ «նորեկ» գինուոր. հաւանաբար այդպէս կոչուած է, որովհետեւ ըստ իր վարքագրութեան, երբ առաջարկուած է իրեն աստիճանի բարձրացում, ինք մերժած է՝ ըսելով, որ կը նախընտրէ երկնաւոր թագաւորին պարզ գինուոր մնալ, քան երկրաւոր թագաւորին՝ զօրավար:

Մնած է Ամասիա քաղաքի գիւղերէն մէկը քրիստոնեայ ծնողքէ: Կանուխէն կորսնցուցած է իր մայրը եւ մեծցած է հօր խնամքին տակ: Եղաւ առաքինի եւ ուժեղ երիտասարդ մը, զոր տեսնելով շրջանի զօրապետը՝ իր բանակին մէջ առաւ: Բուն վիշապասպան Թէոդորոսը աս կը նկատուի, եւ դէպքը կը պատմուի ըստ հետեւեալի: Ծամբորդութեան մը ընթացքին, երբ գետի մը քով եւ ծառի մը ներքեւ կը հանգստանար, հսկայ վիշապ օձ մը իր վրայ եկաւ: Թէոդորոս վերցատկեց եւ իր սրով երկու կտոր ըրաւ զայն եւ սատկեցուց:

304 թուին Ելաւ Դիոկղետիանոսի հալածանքի հրովարտակը: Թէոդորոս, հաստատելու համար, որ կուռքերը քարէ եւ մարմարէ տարբերութիւն չունին, նոյն օրերուն կրակ ձգեց իր քաղաքի մեհնանին մէջ եւ կուռքերը փոշիի վերածուեցան: Իր այս սխրագործութեան համար դատաւորի առջեւ հանուեցաւ եւ խոստովանեցաւ իր կրակ ձգած ըլլալը՝ փաստելու համար, որ կռապաշտներուն պաշտածները սովորական մարմարէ տարբեր չեն եւ յիմարութիւն է անշունչ քարը եւ մարդուն ձեռքով շինուած կուռքը աստուած նկատել: Ենթարկուեցաւ ծանր չարչարանքներու եւ բանտարկուեցաւ: Բանտին մէջ, ձեռքերը եւ ոտքերը կաշկանդուած վիճակի մէջ, չէր դադրեր Աստուծոյ օրհնութեան սաղմոսներ երգելէ: Ի վերջոյ դատաւորը այրելով մահացնելու վճիռը տուաւ, քանի որ ան ալ այրած էր իրենց մեհնանը: Նահատակուեցաւ 306 թուականին: Գրիգոր Նիւսացին հրաշալի ներբողական մը գրած է այս Թէոդորոսի մասին: Ու այս Թէոդորոսն է.

որ շփոթմամբ «Զորավար» անուան տակ մենք կը տօնենք Մեծ Պահլավ առաջին Երաթ օրը. իսկ Յոյնք՝ Փետր. 17ին, այսինքն նոյն օրերուն, Լատինք՝ Նոյ. 9ին:

11. ԹԷՆՈՂՈՐՈՍ ՍՏՐԱՏԵԼԱՏ

Այս Թէնոզորոսը մեր եկեղեցին կը տօնէ Վարդավառի Է. Կիրակիի յաջորդ Հինգշաբթին «Թէնոզորոս վկայ» անուան տակ, ուրիշ քանի մը սուրբերուն հետ, որոնք սեւէ կապ չունին իրեն հետ: Իսկ Յոյն եւ Լատին եկեղեցիներ կը յիշատակեն «Ստրատելատ» անուան տակ, որ զօրավար կը նշանակէ:

Ծնած է Պոնտոսի Հերակլիա քաղաքին մէջ: Զօրավար է Հռովմէական բանակի մէջ՝ Լիկիանոս Կայսեր ժամանակ: Այս վերջինը թէեւ Կոստանդիանոսի հետ քրիստոնէից ազատագրման հրովարտակը ստորագրած էր, բայց ետքէն միտքը փոխած եւ սկսած էր քրիստոնեաները հալածել: Լիկիանոս իրագեկ դառնալով, որ Թէնոզորոս ոչ միայն ինք քրիստոնեայ է, այլ նաեւ ուրիշները քրիստոնեայ կը դարձնէ՝ կը հրահանգէ անոր հրաժարիլ քրիստոնէութենէ եւ դառնալ հին կրօնքին: Թէնոզորոս զօրացած Աստուածային քաջալերութեամբ՝ պատրաստակամութիւն յայտնեց ամէն տեսակ չարչարանքներու ենթարկուիլ, քան թէ ուրանալ Քրիստոսը: Զաղեցին զայն արջառաջիլով, մինչեւ իսկ կապեցին զայն խաչափայտին ձեռքերէն եւ կախեցին: Թէնոզորոս տոկաց բոլոր չարչարանքներուն: Ի վերջոյ գլխատուութեամբ արժանացաւ մարտիրոսական պսակին 319ին:

Յոյնք եւ Լատինք՝ Փետր. 8ին:

12, 13, 14, 15. ԵՒՂՈՒՔՍԻՈՍ, ԶԵՆՈՆ, ՄԱԿԱՐԻՈՍ ԵՒ

ՌԱՄԵԼԱՍ

Միասնաբար կը տօնուին ասոնք ինչպէս մեր, նոյնպէս Յունաց մօտ: Մենք կը յիշատակենք զանոնք Զ. Խաչ. Գշ.ին, Յոյնք՝ Սեպտ. 6ին: Իսկ Լատինք առաջին երեքը միասնաբար կը յիշատակեն «եւ իրենց 1104 ընկերները» յաւելադրութեամբ եւ նահատակուած կը նկատեն Դիոկղետիանոսի օրով Մալաթիոյ մէջ: Իսկ Ռամելասը՝ «Հռոմոլոս» անուան տակ, նահատակուած կը նկատեն Տրայիանոսի

օրով (97-117) Հռովմի մէջ: Կացութիւնը շատ շփոթ է նաեւ մեր Յայրմաւուրքներու մէջ: Իսկ Թորգոմ Պատրիարքի «Սուրբք եւ Տօնք»ին մէջ (էջ 71) Ռամելասի տեղ աւելցած է «Անդրէաս», ինչ որ մենք կ'ենթադրենք կամ ձեռքի վրիպում եւ կամ իր ձեռագրի սխալ ընթերցում: «Լիակատարը» ընդարձակ վկայաբանութիւն ունի եւ դոքսիոսի մասին (էջ 724)՝ հետեւելով լատինական տարբերակին եւ լոկ պատահաբար յիշելով, որ իր հետ նահատակուած են նաեւ Զենոնը եւ Մակարիոսը, զոր կը նկատէ իր որդին: Իսկ Ռամելասը առանձին եւ Մակարիոսը՝ հետեւելով լատինականին: Մենք ի հարկէ պիտի կը յիշատակէ՝ հետեւելով լատինականին: Մենք ի հարկէ պիտի ընդունինք յունական տարբերակը, քանի որ անոնց խոզովակով միայն մուտք գործած կրնան ըլլալ անոնք մեր մէջ: Ըստ այսմ ասոնք գլխաւորներն են բանակի մը, որ կը գտնուի Գաղղիոյ մէջ: Երբ սա-կայն յայտնի կ'ըլլայ, որ բանակին մէջ գրեթէ ամէնքը քրիստոնեայ եղած են, կը զրկուին Մալաթիա, ուր տեղւոյն կայսերական ներկայացուցիչը կը հրահարէ գիրենք դառնալ կոապաշտութեան: Միասնաբար կը մերժեն եւ միասնաբար կը նահատակուին Բ. դարու սկիզբները:

16. ՄԻՆԱՍ ԵԳԻՊՏԱՅԻ

Քրիստոնեայ առաքինի գինուորական մը, որ կը պաշտօնավարէ Փոքր Ասիոյ Կուտինա (Քէօթահիա) քաղաքի Հռովմէական բանակի մէջ: Սակայն տեսնելով շրջապատի ապականութիւնը եւ կոապաշտութիւնը ու աշխարհի մէջ տիրող անարդարութիւնը եւ չարութիւնը՝ կ'որոշէ նուիրուիլ անապատական կեանքին: Ատեն մը ճգնել է եւ հոգեւոր կեանքի մէջ զարգանալէ յետոյ երբ կ'իմանայ, որ արդէն հոգեւոր կեանքի մէջ զարգանալէ յետոյ երբ կ'իմանայ, որ արդէն իսկ ելած է Դիոկղետիանոսի հալածանքի հրահանգը եւ հարիւրներով կախեցնուած իր վերջոյ կը գլխատուի 303ին եւ մարմինը կ'այրուի: Իր ոսկերիութիւնը կը հաւաքուի եւ կը դրուի յատուկ դամբարանի մէջ, որուն վրայ ապա կանգնուեցաւ փառաւոր եկեղեցի եւ դարձաւ մեծ ուխտատեղի:

Յոյնք եւ Լատինք՝ Նոյ. 11, Հայք՝ Թ. Խաչ. Բշ.:

17. ԳՈՐԴԻՈՍ ՀԱՐԻԻՐԱՊԵՏ

Կեսարացի Հարիւրապետ մը, քրիստոնեայ ծնողաց զաւակ, որ կը պաշտօնավարէ կայսերական բանակի մէջ Դիոկղետիանոսի օրով: Սակայն տեսելով, որ ամէն օր բազմաթիւ մարդիկ չարչարանքներու կ'ենթարկուին եւ ինք ոչինչ կրնայ ընել անոնց օգտակար ըլլալու, ուստի կ'որոշէ ժամանակի ոգիին եւ մտայնութեան անսալով՝ անպատ քաշուի՝ հեռու աշխարհի չարիքներէն եւ փորձութիւններէն, եւ ինքզինքը ամբողջապէս աստուածամերձ կեանքի նուիրել: Դիոկղետիանոսի եւ իր յաջորդներու հալածանքները հագիւ խաղաղած էին, երբ Լիկիանոս Կայսր վերստին սկսաւ հալածանքի: Այն ատեն Գորդիոս Աստուածային նախանձով վառուած՝ իջաւ իր քաղաքը՝ Կեսարիա, եւ հեթանոսական տօնակատարութեան մը ընթացքին, երբ քաղաքին մեծամեծները եւ բոլոր բնակիչները թատրոն հաւաքուած էին, մէջտեղ եկաւ եւ հրապարակեց իր քրիստոնեայ ըլլալը եւ սկսաւ քարոզել ճշմարտութիւնը: Իշխանը հրամայեց ձերբակալել եւ բանտ նետել զայն: Յաջորդ օր հրամայեց զոհել կուռքերուն: Գորդիոս պատասխանեց, որ կը նախընտրէ պաշտել երկնաւոր թագաւորը եւ յաւիտենական ու անմահ կեանքին արժանանալ, քան թէ անցաւոր պատիւներու տիրանալ անմուռնչ կուռքերուն զոհ մատուցանելով: Ենթարկուեցաւ բազմաթիւ եւ ծանր չարչարանքներու, որոնց բոլորին տոկաց զարմանալի համբերութեամբ: Ի վերջոյ կրակի մահով մեռնելու դատապարտուեցաւ եւ ինք յօժարակամ մտաւ կրակի մէջ եւ աղօթելով ու Աստուած օրհնելով՝ աւանդեց իր հոգին 320ին: Քրիստոնեաներ հաւաքեցին ոսկորները եւ պատուով թաղեցին: Բարսեղ Հայրապետ տարիներ յետոյ եկեղեցի շինեց անոր շիրմին վրայ եւ հոյակապ ներքող մը արտասանեց սուրբ զօրականի յիշատակին:

Յոյնք եւ Լատինք՝ Յնվր. 3, Հայք՝ Դ. Վարդ. Բշ.:

18. ՔԱՌԱՍՈՒՆ ՄԱՆԿՈՒՆՔ

Քառասուն զինուորներ էին ասոնք Կապադովկիոյ կայսերական բանակին մէջ եւ բոլորն ալ քրիստոնեայ եղած: Լիկիանոս շեղելով Կոստանդիանոսի հետ իր ստորագրած ազատութեան հրովարտակի տրամադրութիւններէն՝ կրկին սկսած էր հալածել քրիստոնեաները իր սահմաններուն մէջ: Շրջանի դատաւորը իր ներկայութեան կանչեց

այս զինուորները, գովեց եւ գնահատեց անոնց անցեալի քաջագործութիւնները եւ խոստացաւ աւելի մեծ փառք ու պատիւ, եթէ հնազանդին կայսերական հրահանգին եւ հրաժարին քրիստոնէութենէ: Քաջարի զօրականներուն խօսնակը Կանդիտոս պատասխանեց. «Եթէ ձեր ըսածին պէս այնքան քաջութեամբ պատերազմեցանք երկրաւոր թագաւորին համար, կը կարծէ՞ք, որ նոյնը պիտի չընենք մեր երկնաւոր թագաւորին համար»: Դատաւորը խիստ չարչարանքներու ենթարկելու սպառնալիքներ ըրաւ ու մտածելու ժամանակ տալու համար բանտ դրկեց զանոնք, ուր անոնք սկսան երգել «Համբարձի զայս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն» սաղմոսը: Նոյն գիշերը Փրկիչը երեւցաւ իրենց բանտի մէջ եւ ըսաւ «Լա՛ւ սկսաք, ջանացէ՛ք լաւ աւարտել, շարունակեցէ՛ք Ձեր հաւատքը մինչեւ ծայրը: Յաղթութեան պակը մինչեւ վերջը համբերողին է. մի՛ վախնաք, ես Ձեզի հետ եմ»: Յաջորդ օր իրենց զօրապետը եկաւ եւ յորդորեց, որ ձգեն քրիստոնէութիւնը եւ վերադառնան բանակ, ուր իրենց մեծ ապագայ կը սպասէ: «Մեր ապագան արդէն իսկ որոշուած է երկինքին մէջ», - պոռացին բոլորը միաբերան: Զօրավարը, դաս մը տալու համար, քովիններուն հրամայեց զարնել անոնց բերնին՝ ակոսները փշրելու համար: Զարնողներուն ձեռքերը փշրուեցան: Քառասուն վկաներուն առաջնորդը արտասանեց եւ խումբը կրկնեց Քրիստոսի սա խօսքը. «Ով որ ինձի կը հաւատայ, թէ եւ կը մեռնի, բայց պիտի վերապրի»: Ու շարունակեց՝ խօսքը ընկերներուն ուղղելով. «Ամո՛ւր պահենք մեր հաւատքը եւ չվախնա՛նք չարչարանքներէն, որոնք կարճատեւ են. պայքարի՛նք քաջաբար յաւերժական պսակին արժանանալու համար»:

Յաջորդ օրը կանչուեցան դատաւորի առջեւ: Երբ այս վերջինը տեսաւ, որ զինուորները ամուր կը մնան իրենց հաւատքին մէջ, նետել տուաւ զանոնք Սեբաստիոյ մօտիկ լիճի մը մէջ, որ սկսաւ սառիլ գիշեր ատեն: Լճին մօտիկը պատրաստել տուած էր նաեւ տաք-տուն մը, որպէսզի միտքը փոխողները այնտեղ վազեն: Արդարեւ իրենցմէ մէկը, չդիմանալով իրենց մարմինները ջարդող ցուրտին եւ սառին, ելաւ լիճէն եւ վազեց տաք-տունը: Սակայն նոյն ժամուն մահացաւ խեղճը՝ զրկուելով այսպէս թէ՛ երկրաւոր եւ թէ՛ երկնաւոր կեանքէն: Գիշերը լիճը ողողուեցաւ հրաշալի լոյսով մը, եւ թագեր երեւցան իւրաքանչիւր նահատակի գլխուն վերեւ: Պահապաններէն մէկը այն-

քան տպաւորուեցաւ այս հրաշալի երեւոյթէն, որ հաւատաց քրիստոնէական կրօնքի ճշմարտութեան, հանեց իր գգեստները, վազեց լիճին մէջ ու գրաւեց տեղը դասալիքին եւ պոռաց. «Ես ալ քրիստոնեայ եմ եւ Քրիստոսը կը պաշտեմ»:

Յաջորդ օրը, երբ ամէնքն ալ մահացած էին, հրամայեց դատարարը, որ այրեն զանոնք եւ մոխիրն ու մնացորդ ոսկորները գետը նետեն: Քառասունին մէջէն ամէնէն երիտասարդը դեռ հոգին չէր աւանդած. ուստի խնայեցին անոր՝ խորհելով, որ եթէ վերապրի, կրնայ ըլլալ որ դարձի գայ: Անոր մայրը, սակայն, որպէսզի իր գաւակը չգրկուի մարտիրոսական փառքէն եւ պսակէն, շալկեց զայն եւ հետեւեցաւ մարմինները այրելու տանող սայլին: Ճամբան իր որդին ալ հոգին աւանդեց, որով խառնուեցաւ միւսներուն, եւ ամէնքը միասին այրեցին եւ մնացորդները գետը նետեցին: Քաղաքին եպիսկոպոսը գիշերանց երազին մէջ տեսաւ, որ աճիւնները իրարմէ չէին բաժնուած եւ հաւաքուած կը մնային գետին եզերքը ապահով տեղ մը: Գիշերանց գացին, հաւաքեցին զանոնք եւ թաղեցին պատուով 320ին: Ներբողներ գրած են ասոնց մասին Ա. Բարսեղ, Գր. Նիւազի եւ Եփրեմ Ասորին:

Յոյնք եւ Լատինք՝ Մարտ. 9, Հայք՝ Մեծ Պահոց չորրորդ Շաբաթ օրը:

19. ՔԱՌԱՍՈՒՆՀԻՆ Գ ՄԱՆՈՒԿՆԵՐ

Ասոնք կը պատկանէին կայսերական այն գունդին, որ կը կոչուէր «Հայկական լեգէոն», Փոքր Հայքի Նիկոպոլիս քաղաքին մէջ, Լիկիանոս Կայսեր ժամանակ: Իբրեւ շարունակութիւնը վերոյիշեալ հակաքրիստոնէական հրահանգին եւ հալածանքին՝ «Հայկական լեգէոնն» ալ քննութեան ենթարկուեցաւ, եւ գտնուեցան 43 զինուորներ, որոնք արիաբար ըսին, որ քրիստոնեայ են եւ վճռած են քրիստոնեայ մնալ: Երբ հարցուեցաւ թէ ո՞րտեղացի են, անոնց խօսնակը Ղեւոնդ պատասխանեց.

- Ոմանք այս քաղաքէն եւ ուրիշներ՝ շրջակայ գաւառներէն. բայց ամէնքիս հայրենիքն ալ երկիրքն է, ուր ունինք մեր երկնաւոր Հայրը եւ մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս: Ան է, որ սորվեցուց մեզի չպաշտել կուռքերը:

Դատարարը ըսաւ.

- Ձեր այդ Քրիստոսը շատոնց խաչուած ու մեռած է այլեւս:

Ղեւոնդ պատասխանեց.

- Դուն Անոր մա՛հը միայն լսեր ես, սորվէ նաեւ, որ յարութի՛ւն առաւ եւ այժմ ողջ է երկիրքի մէջ:

- Ի՞նչպէս կրնայ ողջ մնալ մէկը, որ մեռած է երեք հարիւր տարիներ առաջ:

- Շիտակ է, մեզի համար յանձն առաւ մեռնիլ, որպէսզի զմեզ ազատէ մեր մեղքերէն եւ կուսպաշտութենէն, սակայն կրկին կեանքի եկաւ եւ յաւիտեանս կ'ապրի: Մեզի ալ սորվեցուց, որ մեռնինք իրեն համար, որպէսզի մենք ալ Անոր պէս վերակենդանանանք եւ յաւիտեան ապրինք:

Եւ այսպէս երկար խօսակցութիւն մը տեղի ունեցաւ երկուստեք, ուր Ղեւոնդ մէջտեղ հանեց կուսպաշտութեան ծիծաղելութիւնը եւ քրիստոնէական կրօնքի վսեմութիւնը: Ի վերջոյ դատարարը սպառնալիքներով զանոնք բանտ ղրկեց, ուր շարունակ կ'աղօթէին: Ենթարկուեցան ծանր չարչարանքներու: Հայ կին մը իրենց ջուր կը հայթայթէր: Օր մը կինը արգիլուեցաւ անոնց ջուր տալ: Այն ատեն Ղեւոնդ հայերէն լեզուով ըսաւ կնոջ, որ առջեւի պատուհանէն բերէ ջուրը, որ ընկերները չսկարանան եւ չգրկուին մարտիրոսական փառքէն: Անոնց պահապաններէն երկուքը տեսնելով ասոնց քաջութիւնը եւ լոյսը, որ ծագած էր բանտին մէջ՝ վազեցին ներս եւ ըսին. «Մենք ալ քրիստոնեայ ենք եւ Քրիստոսի զինուոր կ'ուզենք ըլլալ»: Որով ասոնց թիւը բարձրացաւ 45ի: Ի վերջոյ դատարարը վճիռ արձակեց, որ այրելով մեռնին: Նախ ասոնց ոտքերը ջարդեցին, որ կրակ նետուած ատեն չփախին: Երբ կրակ նետեցին ամէնքը, անոնցմէ մէկը, որ մոռցուած էր հեռուն, պոռաց ամբողջ ոյժով. «Ես հոս եմ, ես հոս եմ»: Այն ալ բռնեցին եւ կրակ նետեցին, ուր բոլորը միասին Աստուծոյ անունը օրհնելով՝ աւանդեցին իրենց հոգիները 317ին: Ասոնց ոսկորներն ալ գետ նետուեցան, բայց Աստուծոյ խնամքով անկորուստ պահուեցան եւ քրիստոնեաներու կողմէ հաւաքուելով թաղուեցան:

Յոյնք եւ Լատինք՝ Յուլիս 10, Հայք՝ Բ. Վարդ. Բ2.:

Ականաւոր զօրական մըն է Սեբաստիոյ շրջանի արքունի բանակին մէջ Լիկիանոս Կայսեր օրով: Երբ վերոյիշեալ քառասուն զինուորներ բանտին մէջ էին, կ'այցելէր անոնց եւ ամէն տեսակ հոգածութիւն ցոյց կու տար: Անոնց նահատակութենէն յետոյ կը շարունակէր իր պաշտպանութիւնը քրիստոնեաներուն եւ քննադատութիւնը օրուան իշխաններուն, որ անտեղի եւ անիրաւ կերպով կը հալածէին անմեղ քրիստոնեաները: Ի վերջոյ Հրաւիրուեցաւ Սեբաստիոյ կայսերական դուքսին կողմէ հաշիւ տալու իր հակապետական գործերուն եւ խօսքերուն համար: Սեւերիանոս ներկայացաւ դուքսին առջեւ եւ ընդունեց, որ կը պաշտպանէ քրիստոնեաները, որովհետեւ ինք ալ նոյն կրօնքին կը պատկանի, եւ հաստատեց, որ կայսեր հալածանքի հրովարտակը անիրաւ է եւ հակառակ՝ կայսրութեան լաւագոյն շահերուն: Դուքսը հրամայեց ծեծի ենթարկել զայն արջառաջիլով: Եւ ապա աւելցուց. «Յանդգնութեանդ պտուղը քաղեցիր, այժմ ձեռք առ խոհեմութիւնդ եւ պետական կրօնքի՞ն դարձիր»: Անօգուտ անցան իր սպառնալիքները կամ խստութիւնները, որոնց բոլորին դէմ համարձակ պատասխաններ կու տար Սեւերիանոս: Ի վերջոյ դուքսը հրամայեց քաղաքի պարիսպներէն վար կախել զայն՝ պարանոցին եւ ոտքերուն ծանր քարեր կապուած: Ու դատաւորը հեգնելով կ'ըսէր. «Հիմա վարձքդ կ'առնես երկնաւոր Հօրմէդ»: Իսկ Սեւերիանոս չպատասխանեց. այլ կ'աղօթէր. «Աստուած յաւիտեանական, Քեզի կը կանչես, Դու, որ կեանքի եւ մահուան տէրն ես, շնորհէ՛ ինծի երկնային յաղթութիւնը, որպէսզի չպարծենայ վրաս անօրէն թշնամին. ամէն ինչ Քու փառքիդ համար եւ կամքիդ համաձայն ըլլայ»: Ու շարունակեց աղօթել նաեւ հալածուող քրիստոնեաներուն համար՝ յանձնելով զանոնք Աստուածային օգնականութեան. «Տո՛ւր անոնց համբերութիւն եւ համարձակութիւն փառաւորելու համար Քու սուրբ անունդ»: Ապա աւանդեց հոգին: Մարմինը մաս առ մաս վար թափուեցաւ պարիսպէն, որուն տէր կանգնելով՝ քրիստոնեաներ խնամքով հաւաքեցին եւ իր գիւղը տանելով՝ պատուով թաղեցին:

Յոյնք եւ Լատինք՝ Սեպտ. 9, Հայք՝ Բ. Խաչ. ԳԶ.:

Գաղտնի քրիստոնեայ զինուորական մըն էր Մաքսիմիոս Կայսեր արքունիքի մէջ, հաւատարիմ Աստուծոյ եւ մարդոց հանդէպ, որով աստիճանի բարձրացում ունենալով եղաւ մագիստրոս եւ պալատի գլխաւոր իշխաններէն մէկը: Երբ Անտիոք կը գտնուէր Մաքսիմիոս, հրաման հանեց, որ ըլլայ բանակի եւ ըլլայ արքունիքի մէջ՝ ոչ մէկ հրաման հանեց, որ ուստի ըսաւ կայսրը. «Ով որ քրիստոնեայ քրիստոնեայ պիտի մնար. ուստի ըսաւ կայսրը. «Ով որ քրիստոնեայ է, թող իրեն տրուած կայսերական գօտին յանձնէ եւ հեռանայ իր պաշտօնէն»: Ասոնց մէջն էր նաեւ Հիւաիքոս, որ անձամբ ներկայացաւ կայսեր եւ յանձնեց իր գօտին՝ յայտարարելով, որ քրիստոնեայ էր: Մաքսիմիոս զայրացաւ եւ անարգելու համար իր երբեմնի հաւատարիմ պաշտօնեան՝ հրամայեց հանել տալ իր ազնուականի զգեստները եւ հագցնել կանացի զգեստներ եւ զրկեց որ պալատին սպասուհիներուն հետ կանացի գործ ընէր: Քրիստոսի սիրոյն համար Հիւաիքոս համակերպեցաւ այս նուաստացումին եւ նախատինքին: Երբ կայսրը իմացաւ, որ անտրտունջ կը տանի այս անարգանքը, իր առջեւ կանչեց եւ յանդիմանելով ըսաւ.

-Ո՛վ երբեմնի Մագիստրոս, ամօթ չէ՞ քեզի այդպիսի անպատուութեան ենթարկել ինքզինքդ: Ինչո՞ւ լքեցիր պալատական պատիւը քրիստոնէից կրօնքին հաւատալով: Անոնք կրնա՞ն քեզի տալ այն դիրքը եւ պատիւը, որ ինձմէ ստացար եւ տակաւին աւելի բարձր պատիւներու պիտի արժանանայիր:

Հիւաիքոս պատասխանեց.

- Քու տուած եւ տալիք փառքերդ ժամանակի մը համար են, բայց կորուստը՝ յաւիտեանական: Իսկ Քրիստոսի խոստումը անսպառ եւ անմահական կեանք է:

Ասոր վրայ դառնութեամբ լեցուած՝ հրամայեց թագաւորը ծանր քար կապել անոր վզին եւ նետել Որոնդէս գետը: Այսպիսի վախճան ունեցաւ երանելի վկան եւ ժառանգեց երկնաւոր պսակը Դ. դարու սկիզբները:

Յոյնք՝ Մարտ 2, Լատինք՝ Նոյ. 18, Հայք՝ Թ. Խաչ. ԵԶ.:

22. ԱՐՏԵՄԻՍ ԴՈՒՔՍ

Մեծն Կոստանդիանոսի ժամանակէն սկսեալ՝ երիտասարդ տարիքէն արդէն իսկ առաքինի զօրական մըն էր Արտեմիս կայսերական բանակին մէջ եւ բարձրացած էր մինչեւ պատուիրակութեան աստիճանին: Նոյն հաւատարմութեամբ ծառայեց անոր յաջորդին, երբ նշանակուած էր ընդհանուր հրամանատար Եգիպտոսի բանակին: Երբ Յուլիանոս Ուրացող Պարսից դէմ արշաւելու համար Անտիոք հասած էր, մարդ զրկեց եւ իր մօտ հրաւիրեց Արտեմիսը, որ հասաւ այն օրերուն, երբ Յուլիանոս կը չարչարէր Եւգինէոս եւ Մակարիոս քահանաները: Համարձակեցաւ Արտեմիս յանդիմանել կայսրը՝ ըսելով, որ ըրածը մարդկային եւ Աստուածային օրինաց դէմ էր: Եւ որովհետեւ Յուլիանոս Ուրացող քրիստոնէից դէմ պաշտօնական հալածանք էր հանած, ուստի Արտեմիսը պատժելու համար դրոգ Աղեքսանդրիացիներէն ոմանք, որ ամբաստանեն զայն, որպէս թէ պետական գործերու մէջ անհաւատարիմ եղած է: Այն ատեն Յուլիանոս զայն դրաւ երկրնտրանքի առջեւ՝ կա՛մ քրիստոնէութենէ հրաժարիլ եւ կա՛մ՝ իր պետական պաշտօնէն: Արտեմիս նախ համարձակօրէն յանդիմանեց անոր նենգութիւնը եւ ապա սիրայօժար հրաժարեցաւ իր պաշտօնէն եւ ենթարկուեցաւ գանակոծման: Երբ հաստատ մնաց ազնուական ծերունին իր հաւատքին մէջ, հրամայեց Յուլիանոս գլխատել զայն 362ին:

Յոյնք եւ Լատինք՝ Հոկտ. 20, Հայք՝ Զ. Խաչ. Եջ.:

23. ՔՐԻՍՏԱՓՈՐ ՎԿԱՅ

Արեւմուտքի ամէնէն ժողովրդական սուրբերէն մէկը իբրեւ պաշտպան ճամբորդներու: Իր պատկերները կամ մետալները կ'երեւէին շատ մը կաթոլիկ ինքնաշարժի վարորդներու կառքերուն մէջ: Իր ապրած ժամանակի մասին երկուութիւն կայ. ոմանք ապրած կը նկատեն զայն Գ. դարու կէսերուն՝ Դեկոս հալածիչ Կայսեր օրով, իսկ ուրիշներ՝ Ուրացող Յուլիանոսի օրով: Մեր ձեռքին տակ եղած Յայսմաւուրքները, ինչպէս նաեւ յունական եւ կաթոլիկեան աղբիւրները Դեկոսի օրով կը ներկայացնեն զայն. միայն «Լիակատարը» եւ հաւանաբար անոր հետեւելով Թորգոմ Պատրիարքն է, որ ապրած կը նկատեն զայն Յուլիանոսի օրով:

Ազգով բարբարոսներէն է Քրիստափոր, որ գերի իյնալով կը ծառայէր Հռովմէական բանակի մէջ: Կերպարանքով հսկայ եւ ահագնատեսիլ անձ մըն էր՝ յիշեցնելով մեր պատմութեան Տորք Անգեղը, բայց սրտով բարի էր: Անտիոքի մէջ ծառայած ատեն քրիստոնեայ բայց սրտով բարի էր: Անտիոքի մէջ ծառայած ատեն քրիստոնեայ կ'ըլլայ: Տեսնելով իր հաւատակիցներուն չարչարանքները՝ զօրաւոր ցանկութիւն կը ծնէր իր մէջ յանդիմանելու հեթանոսները եւ քարոցանկութիւն կը ծնէր իր մէջ յանդիմանելու հեթանոսները եւ քարոզելու ճշմարտութիւնը, բայց յունարէն չէր գիտեր, ինչ որ զինք շատ կը նեղէր: Կ'աղօթէ Աստուծոյ, որ տայ իրեն յունարէն խօսելու շնորհը, ինչպէս տուած էր առաքելոց Հոգեգալստեան օրը այլազան լեզուներով խօսելու պարգեւը: Եւ արդարեւ Աստուածային հրաշքով լեզուներով խօսելու եւ սկսաւ յստակօրէն յունարէն խօսիլ: Օրին բացուեցաւ իր լեզուն եւ սկսաւ յստակօրէն յունարէն խօսիլ: Օրին մէկը տեսաւ, որ զինուորներ քրիստոնեայ մը կը չարչարէին: Յանդիմանեց հալածիչները եւ ազատեց քրիստոնեան: Ջինուորներէն մէկը համարձակեցաւ զայն ապտակել: Քրիստափոր ըսաւ ազնուութեամբ. «Կրնայի ես ալ քեզ ապտակել եւ ոչ ոք կրնար ազատել քեզ ձեռքէս, ոչ իսկ քու թագաւորդ, բայց կը համբերեմ Քրիստոսի սիրոյն, որ ինքեա ապտակուեցաւ, բայց չփոխադարձեց»: Ջինուորները Քրիստափորի արարքը եւ խօսքերը փոխանցեցին քաղաքի դատաւորին, որ 200 զինուոր զրկեց զայն ձերբակալելու եւ իրեն բերելու: Ասոնք գիտնալով Քրիստափորի ամեհի ոյժը՝ մեղմութեամբ ըսին, որ դատաւորը զինք կ'ողգէ: Ընկերացաւ անոնց. ճամբան խօսեցաւ Յիսուսի օրը զինք կ'ողգէ: Ընկերացաւ անոնց. ճամբան խօսեցաւ Յիսուսի մասին իր գիտցածը եւ ապա իր մօտ եղած ուտելիքը բազմացուց հրաշքով եւ բաշխեց անոնց: Մարդիկը տեսնելով այն հրաշքը եւ խորապէս տպաւորուելով Քրիստափորի ազնիւ վերաբերմունքէն՝ համոզուեցան՝ եւ քրիստոնեայ դարձան: Քրիստափոր նախ առաջնորդեց զանոնք քաղաքի եպիսկոպոսին, որ մկրտեց ամէնքն ալ: Երբ հանուեցան դատաւորին առջեւ, շատ իմաստուն եւ յանդիմանախառն պատասխաններ տուաւ անոր հարցումներուն եւ պնդումներուն, որոնցմով կը հրահանգուէր իրեն ձգել քրիստոնէութիւնը եւ դառնալ կռապաշտութեան, ինչ որ Քրիստափոր բնականաբար մերժեց. որուն վրայ սաստիկ չարչարանքներու ենթարկուեցաւ: Մինչեւ իսկ զայն բարոյապէս աւրելու եւ մոլորեցնելու համար, երկու կիներ զրկեցին իր մօտ բանտին մէջ. սակայն Քրիստափոր իր քարոզութեամբ եւ աղօթքով դարձի բերաւ զանոնք: Ասոր վրայ աւելի զայրացաւ դատա-

տրը եւ նախ չարաչար մահուամբ նահատակեց երկու կիները եւ ապա իր դառնութիւնը դարձուց Քրիստափորի վրայ եւ ըսաւ

- Մինչեւ ե՞րբ դէմ պիտի կենաս թագաւորի հրամանին եւ մեր աստուածներուն:

Պատասխանեց Քրիստափոր.

- Ես կը հնազանդիմ երկնաւոր թագաւորիս հրամանին եւ զԱյն միայն կը պաշտեմ, որուն անունը սուրբ է եւ օրհնեալ յաւիտեանս եւ յաւիտենից:

200 զինուորները միաբերան պոռացին «ամէն» ու յայտարարեցին, որ իրենք ալ քրիստոնեայ են: Հրամայեց դատաւորը մի առ մի կոտորել զանոնք սուրով: Վերստին ենթարկեց Քրիստափորը տանջանքներու եւ ի վերջոյ հրամայեց գլխատել զայն:

Շատ զրոյցներ յօրինուած են Քրիստափորի մասին, որոնցմէ ամէնէն գողտրիկը իր անունէն հանուած է: Քրիստափոր կը նշանակէ Քրիստոսակիր: Եւ կը պատմուի, որ օրին մէկը մանուկ մը խնդրեց իրմէ գետին միւս կողմը անցընել: Քրիստափոր գրկեց մանուկը եւ ուսին վրայ դնելով՝ սկսաւ յառաջանալ գետին մէջ. բայց ամէն քայլափոխին իր քաղցր բեռը աւելի ու աւելի կը ծանրանար, այնպէս որ երբ հասաւ գետին մէջտեղը, գրեթէ ուժաթափ եղած էր եւ ընկղմելու վտանգին ենթարկուած: Այդ պահուն զգաց, որ ուսին մանուկը մագնիսի պէս վեր կը քաշէր զայն ու կ'ազատէր: Երբ ցամաք ելան, ըսաւ մանուկը անոր, թէ ինքն ալ աշխարհին մեղքը կրած է իր ուսերուն վրայ, եւ աներեւոյթ եղաւ:

Յոյնք՝ Մայիս 9, Լատինք՝ Յուլիս 25, Հայք՝ Զ. Խաչ. Եշ.:

24-27. ԲԱՍՈՍ, ԵԻՍԵՐ, ԵԻՏԻՔ ՈՒ ԲԱՍԻԼԻԴԵՍ

Չորս զօրականներ են ասոնք, որոնք պահակ կարգուած էին Թէոփոմպա Եպիսկոպոսին (տես գլխ. Ա., թիւ 15) ու տեսնելով անոր համբերութիւնը եւ քաջութիւնը նեղութեանց համբերելու՝ այնքան տպաւորուեցան, որ իրենք ալ քրիստոնեայ եղան: Իր ներկայութեան կանչեց զանոնք Դիոկղետիանոս եւ նախ զրկեց զանոնք իրենց զինուորական պատիւէն եւ ապա հարստութենէն եւ բանտ նետել տուաւ: Բասոս նահատակուեցաւ մարմինը սրակոտոր ըլլալով: Եւսեբի

մարմինը մուրճով ջարդեցին: Եւտիքէսը չորս ցիցի կապելով եւ չորս կողմէն քաշելով կտոր կտոր ըրին: Իսկ Բասիլիդէսի փորը ճեղքեցին եւ փորոտիքը դուրս թափեցին: Այսպէս չարաչար տանջանքներով մարտիրոսացան Քրիստոսի քաջարի զինուորները:

Յոյնք՝ Յնվր. 20, Լատինաց մօտ չհանդիպեցանք, Հայք՝ Դ. Յիս. Գշ.:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ԿՈՅՍԵՐ

Թէեւ կոյս բառը տառապէս կը նշանակէ չամուսնացած կին մարդ, սակայն Եկեղեցին առհասարակ այս բառով կը ճանչնայ իր տօնացոյցին անցած բոլոր իգական սեռի սրբուհիները, որոնց մէջ արդարեւ շատ քիչ եւ աննշան է թիւը ամուսնացած կիներու:

1. ԹԵԿՂԱ ԿԱՄ ԹԵԿՂԻ

Հայաստանեայց Եկեղեցիին Համար Քրիստոնէական Եկեղեցիի իգական սեռի առաջին սրբուհին նոյնինքն Ս. Սանդուխտ կոյսն է. իսկ միւս Եկեղեցիներու Համար, որոնք չունին Ս. Սանդուխտի տօնակատարութիւնը, առաջին իգական սեռի սրբուհին Թեկղին՝ կամ աւելի շիտակ ձեւով՝ Թեկղան է:

Այս սրբուհիին մասին մեր ունեցած տեղեկութիւնը կը քաղենք «ԳՈՐԾՔ ՊԱԽՂՈՍԻ ԵՒ ԹԵԿՂԱՅ» անուն գրքէ մը, որ ըստ բանասիրաց գրուած կը նկատուի Բ. դարուն վերջերը: Այս գիրքը շատ ժողովրդական եղած է քրիստոնէական Հին շրջաններու մէջ եւ յունարէն բնագրէն թարգմանուած է Հին ժամանակի բոլոր կարեւոր լեզուներուն, Աստուածաշունչին պէս. օրինակ՝ լատիներէնի, ասորերէնի, արաբերէնի, հայերէնի եւ այլ լեզուներու: Ըստ այդ գրքին՝ Թեկղա Գոնիացի է եւ դարձի եկած է Պօղոս Առաքեալի քարոզութեամբ, երբ ան իր առաջին առաքելական ճամբորդութեան ընթացքին Հանդիպեցաւ նաեւ այս քաղաքը, Բառնարասի Հետ (Գործք Առաքելոց ԺԳ. 51):

Դարձի պարագաները կը պատմուին ըստ Հետեւեալի: Գոնիայի մէջ Պօղոս Առաքեալ իր քարոզութեան կեդրոն ըրած էր իր աշակերտներէն եւ Հաւատարիմ բարեկամներէն Մնոսիփորոսի (Բ. Տիմ. Ա 16) տունը, որ կից եղած է Թեկղայինց տան: Ս. Պօղոսի քարոզութեանց ընթացքին Թեկղա, նստած իրենց տան պատուհանին առջեւ, մտիկ ըրած է Պօղոսի բոլոր խօսքերուն եւ տպաւորուելով անոնցմէ՝ դարձի եկած եւ որոշած է ինքզինքը նուիրել մշտնջենական կուսու-

թեան: Մայրը, որ այրիացեալ մեծահարուստ կին մըն էր, մտադրած էր զայն նշանել քաղաքին ազնուական ընտանիքներէն մէկին տղուն Հետ: Երբ վերահասու եղաւ իր աղջկան որոշումին, սաստիկ նեղացաւ եւ ի գործ դրաւ իր մայրական ամբողջ Հեղինակութիւնը ետ կեցնելու Համար իր աղջիկը նման որոշումէ մը, սակայն իր յորդորները, սպառնալիքները եւ ծեծերը անօգուտ անցան փոխելու իր աղջկան միտքը: Ի վերջոյ իմանալով, որ Պօղոս Առաքեալն է որ ներշնչած էր իր աղջկան այս անդառնալի որոշումը՝ իբրեւ ազդեցիկ կին՝ կը դրդէ քաղաքին մեծամեծները, որոնք Պօղոսը պատժի կ'ենթարկեն ու քաղաքէն կը վտարեն: Իսկ Թեկղա երբ Հաստատ կը մնայ չամուսնանալու իր որոշման վրայ, կը դատապարտուի կրակով մահուան: Սակայն հրաշքով կ'ազատի կրակէն եւ կ'երթայ Պիսիդեան Անտիոք քաղաքը, որ Հեռի չէր Գոնիայէն, ուր գացած էր Պօղոս Առաքեալ Գոնիայէն վտարուելէն յետոյ (Գործ. ԺԳ. 14):

Իր ընտանեկան պարագաները կը Հետապնդեն զայն եւ այնտեղ ալ կը մատնեն իրենց Հարազատը դատական իշխանութեան: Այստեղ կ'որոշուի գազաններուն առջեւ նետելով մէջտեղէն վերցնել զայն: Գազաններ սակայն չեն վնասեր իրեն, որուն վրայ կը շնորհուի իր կեանքը, զոր անկէ յետոյ ամբողջութեամբ կը նուիրէ Աւետարանի քարոզութեան: Իր Աւետարանչական երկարամեայ եւ արդիւնաւոր գործունէութեան Համար Յոյն Եկեղեցիին մէջ ծանօթ է որպէս «Հաւասար առաքելոց»: Մեր Յայսմաւուրքն ալ արդարեւ կը Հաստատէ, որ «Հեթանոսներէն անբաւ բազմութիւն լուսաւորեց մեծ սքանչելագործութիւններով... Մկրտել կու տար զանոնք քահանաներու ձեռքով, Հիւանդները կը բժշկէր աղօթքով եւ դեւերը կը Հալածէր Քրիստոսի անունով»:

Ի վերջոյ կը Հաստատուի Կիլիկիոյ Սելեւկիա քաղաքը, ուր կը վախճանի խաղաղ մահուամբ շուրջ 90 տարեկան:

Յոյնք կը տօնեն Սեպտ. 24ին, Լատինք՝ Սեպտ. 23ին, Հայք՝ Խաչի Դ. Կիրակիին յաջորդող Գշ.ին:

2. ԵՐՄՈՆԷ

Յունական ձեւն է Երմիոնի, որ դուստրն է Փիլիպպոս «Աւետարանիչի»՝ առաջին Եկեղեցիի եօթը սարկաւազներէն մէկին, որ

«ուռնէր չորս կոյս աղջիկներ՝ օտտուած մարգարէական շնորհքով» (Գործ. ԻԱ. 9): Ըստ աւանդութեան՝ անոնցմէ երկուքը՝ Երմոնէ եւ Եւտիքա, որոշեցին երթալ Եփեսոս, այնտեղ «աշակերտեցան» Պետրոս քահանայի մը, «որուն հետ կը քարոզէին Աւետարանը եւ շատերը Քրիստոսի կը դարձնէին»: Երմոնէ ուռնէր նաեւ բժշկութեան ճիրք եւ շնորհ, որով շատեր կը բժշկէր ձրի:

Կը պատմուի, որ Հռովմի Տրայանոս Կայսրը, երբ Եփեսոս եկաւ Պարսից դէմ արշաւելու համար, իմացաւ Երմոնէի համբաւը իբրեւ ազդեցիկ քարոզիչ եւ մարդ ղրկեց զայն գտնելու եւ իրեն բերելու: Երկար փնտռուածքէ յետոյ կայսեր մարդերը առանց ճանչնալու իրեն հանդիպեցան գիւղի մը մէջ եւ իր մասին հարցուցին: Նախ հիւրասիրեց զանոնք եւ ապա յայտնեց, թէ ինք էր իրենց փնտռածը: Մարդիկ անակնկալի եկան. այնքան գոհ մնացած էին անոր հիւրասիրութենէն, որ չուզեցին տանիլ զայն կայսեր. սակայն ինք յօժարութեամբ հետեւեցաւ անոնց: Երբ ներկայացաւ կայսեր, վերջինս ողորջեցով թելադրեց անոր հրաժարիլ Քրիստոսէ: Սրբուհին հաստատ մնաց իր համոզումին վրայ եւ յայտնեց, որ կը ցանկար մինչեւ իսկ մեռնիլ Քրիստոսի սիրոյն: Ենթարկուեցաւ դառն չարչարանքներու, զորս կրեց աներկիւղ եւ արիւթար: Ի վերջոյ մարգարէացաւ, որ կայսրը յաղթութեամբ պիտի վերադառնար իր յառաջադրած պատերազմէն: Կայսրը հիանալով կոյսի ցուցաբերած արիւթեան վրայ եւ գոհ մնալով անոր կանխագուշակութենէն՝ ազատ արձակեց զայն: Սակայն իր յաջորդը Ադրիանոս դառնագոյն չարչարանքներու ենթարկեց կոյսը, որոնց բոլորին զարմանահրաշ արիւթեամբ տոկաց ան: Երբ կուռքերուն զոհել տալու համար կուստուն տարին զայն, սրբուհիին աղօթքով կուռքերը կործանեցան, որուն վրայ հրամայեց կայսրը զլխատել զայն:

Յոյնք՝ Սեպտ. 4ին, Լատինք չուռնին, Հայք՝ Գ. Խաչ. Գշ.:

3, 4. ԵՒԳԻՆԷ ԵՒ ԿՂՕԴԻԱ

Դուստր եւ մայր են այս երկուքը, որոնց ընտանիքի բոլոր անդամները նահատակուած կամ չարչարուած են Քրիստոնէական կրօնքի համար եւ հետեւաբար ամէնքն ալ անցած են տօնացոյցի: Ընտանիքի հայրը՝ Փիլիպպոս, Հռովմէացի ազնուական մըն էր, որ

երբ Եգիպտոսի կառավարիչ նշանակուեցաւ (Պլ. Գ. Թիւ 2), իր կնոջ Կրօդիայի եւ դստեր Եւգինէի եւ երկու մանչ զաւակներուն հետ փոխադրուեցաւ Աղեքսանդրիա՝ Եգիպտոսի այն ժամանակի մայրաքաղաքը: Այս քաղաքը իր ժամանակին գիտութեան մեծ կեդրոն մըն էր, ուստի Եւգինէ հօրը թելադրանքով հետեւեցաւ բարձրագոյն ուսման: Իր ընթերցումներու ընթացքին բարեդէպ գուգադիպութեամբ իր ձեռքն անցաւ Պոդոս Առաքեալի թուղթերու հաւաքածոն, զորս մեծագոյն հետաքրքրութեամբ կարդաց եւ համոզում գոյացուց այնտեղ արտայայտուած գաղափարներու ճշմարտութեան եւ որոշեց քրիստոնեայ ըլլալ: Համոզեց նաեւ իրենց տան երկու ներքինիները, եւ [անոնց հետ] ինք ալ քրիստոնեայ մկրտուեցաւ: Եւգինէ չուզելով [անոնց հետ] ալ վերադառնալ՝ երկու ներքինիներով, միշտ իբրեւ այր ծպտուած, ապաստանեցաւ վանք մը: Ի բնէ ընթերցող մը լինելով՝ կարդաց ամբողջ Աստուածաշունչը եւ խորապէս հմտացաւ անոր՝ ամէնքի սքանչացումը իր վրայ հրաւիրելով իր Ս. Գրքի գիտութեամբ: Վանահօր մահէն յետոյ, Եւգինէ, որ Եւգինէնոս անունը ուռնէր վանքին մէջ, վանահայր կ'ընտրուի իբրեւ ամէնէն գիտնական եւ հոգեւոր անձնատրուութիւնը վանքին մէջ: Ժամանակ մը յետոյ կին մը բուռն կերպով սիրահարեցաւ նոր վանահօր, ու երբ վերջինը մերժեց անոր անպարկեշտ առաջարկները, կինը վրէժ լուծելու համար ամբաստանեց զայն իբրեւ զինք բռնաբարող՝ Աղեքսանդրիոյ եպարքոսին առջեւ, որ նոյնինքն Եւգինէի հայրը Փիլիպպոսն էր, որ իր «կորսուած» աղջիկը փնտռելէն բոլորովին յուսաբեկ՝ զայրոյթով լեցուած էր քրիստոնէից հանդէպ, որոնց կը վերադրէր իր աղջկան «կորսուած» ըլլալու պատասխանատուութիւնը: Ուստի մեծ ատեան մը կազմեց խայտառակելու եւ չարաչար պատժելու համար այս «անբարոյ» վանահայրը: Երբ ատեան հանուեցաւ Եւգինէ վանական տարագով, խիստ անարգանքի ենթարկուեցան ինք եւ իր կրօնքը եւ վանականութիւնը: Ի վերջոյ Եւգինէ հարկադրուեցաւ խոստովանիլ իր ինքնութիւնը, ինչ որ ամօթահար ըրաւ անպարկեշտ կինը եւ հաւատքի թշնամիները եւ անհուն ուրախութեամբ լեցուց իր ընտանիքը: Եպարքոսը երբ մանրամասնօրէն իրագեկ եղաւ իր աղջկան պատմութեան, խորապէս ազդուելով անոր հաւատքէն եւ իմաստութենէն՝ քրիստոնեայ դարձաւ ինք, եւ ամբողջ իր ընտանիքը, եւ պաշտպան կանգնեցաւ քաղաքի քրիստո-

նեաներուն: Կայսրը երբ իմացաւ այս, պաշտօնանկ ըրաւ եւ իր յաջորդին Հրահանգեց սպանել զայն: Իրենց հօր նահատակութենէն յետոյ ընտանիքի միւս անդամները վերադարձան Հռովմ, ուր ձերբակալուեցան իբրեւ քրիստոնեայ: Նախ նահատակուեցան երկու ներքինիները եւ ապա՝ նոյնինքն եւգիինէ Կոյսը 200ական թուականներուն ըստ լատին վկայաբանութեանց, կամ 180ական թուականներուն ըստ յոյն վկայաբանութեանց, կամ 80ական թուականներուն ըստ մեր Յայսմաւուրքին:

Յոյնք՝ Դեկտ. 24, Լատինք՝ Դեկտ. 25, Հայք՝ Դ. Վարդ. Գշ՝ ամբողջ ընտանիքին հետ: Կղօղիայի անունին չհանդիպեցանք մեր ձեռքին տակ գտնուած յոյն եւ լատին տօնացոյցներուն մէջ:

5, 6, 7, 8. ՍՈՓԻԱ, ՊԻՍՏԻՍ, ԵՂ ՊԻՍ ԵՒ ԱԳԱՊԻՍ

Սոփիա մայրն է, իսկ միւս երեքը իր դուստրերն են: Բոլորին անուններն ալ խորապէս քրիստոնէական են եւ իմաստալից. ՍՈՓԻԱ կը նշանակէ իմաստութիւն, ՊԻՍՏԻՍ՝ հաւատք, ԵՂ ՊԻՍ՝ յոյս եւ ԱԳԱՊԻՍ՝ սէր:

Սոփիա ազնուական ընտանիքէ էր, ազգով Իտալացի եւ կը բնակէր Հռովմի մօտ: Այրի մնացած ըլլալով՝ վերստին չամուսնացաւ, այլ ինքզինքը ամբողջութեամբ նուիրեց Աստուծոյ եւ իր երեք աղջիկներու քրիստոնէական դաստիարակութեան: Հեթանոս երիտասարդ մը աղջիկներէն մէկը իրեն կնութեան ուզեց մօրմէն, մայրը մերժեց՝ ըսելով. «Մենք քրիստոնեայ ենք եւ կուտուրիւնը ոսկիէն եւ մարգարիտէն աւելի թանկարժէք կը նկատենք»: Երիտասարդը Ագրիանոս Կայսեր (118-138) բողոքեց: Կայսրը իր ներկայութեան կանչեց մանկամարդ աղջիկները եւ յորդորեց զանոնք զոհել կուռքերուն: Հաստատ մնացին իրենց հաւատքին վրայ: Այն ատեն կայսրը հրամայեց մի առ մի գլխատել անմեղ մանկամարդ կոյսերը: Մայրը տէր մնաց անոնց մարմիններուն ու պատուով թաղեց զանոնք ու տապան շինեց անոնց վրայ: Ապա ինքն ալ Աստուծոյ խնդրեց, որ իր հոգին առնէ, որպէսզի օր առաջ միանար իր սիրասուն զաւակներուն: Իր խնդրանքը ընդունուեցաւ, եւ իր հոգին աւանդեց խաղաղութեամբ:

Յոյնք՝ Սեպտ. 17, Լատինք՝ Սեպտ. 30, Հայք՝ Գ. Վարդ. Եշ.:

9. ԹԷՈՎԻՍՏԷ

Թէոպիստէ Հռովմայեցի տիկին մըն է, որ ամբողջ ընտանիքով նահատակուեցաւ Տրայանոս Կայսեր օրով: Տեսանք ընտանիքի հօր Եւստաթէոսի եւ իր երկու որդւոց Ագապիոս եւ Թէոպիստոսի վարքը եւ նահատակութիւնը (գլ. Գ., թիւ 1), որոնցմէ անբաժան է Թէոպիստէի կեանքը: Նախ կազմած էին քրիստոնէական երջանիկ ընտանիք մը: Ապա կ'ենթարկուին Յոբին պատմութիւնը յիշեցնող փորձի եւ նեղութեանց: Թէոպիստէ գերի կ'իյնայ բարբարոսներուն ձեռքը, ուր սակայն հրաշալի պարագաներու տակ անաղարտ կը պահուի: Որդիները գետը կը տանի, որոնք սակայն կ'ազատին: Հայրը տառապանքներով լի կեանք կ'անցընէ: Ի վերջոյ անակնկալ պայմաններու ներքեւ կը վերամիանան, սակայն չորսը մէկ ջեռուցեալ «պղնձի ցուլ» կոչուած հնոցի մը մէջ արգելափակուեցան իբրեւ քրիստոնեաներ, ուր անոնք աղօթելով աւանդեցին իրենց հոգիները:

Յոյնք եւ Լատինք՝ Սեպտ. 20, Հայք՝ Գ. Խաչ. Գշ.:

10. ՔՐԻՍՏԻՆԷ

Քրիստինէ Կոյսը Տուր քաղաքէն է, զոր Արեւելեան Եկեղեցիները կը նոյնացնեն Փիւնիկէի (այժմ՝ Լիբանան) Տիրոս նշանաւոր քաղաքին հետ եւ [Քրիստինէն] ապրած կը նկատեն Բ. դարու սկիզբները: Իսկ Արեւմտեան Եկեղեցին Տուրը կը նկատէ Իտալիոյ աննշան քաղաքներէն մէկը եւ այս կոյսի վարքը կը դնէ Գ. դարու վերջերը: Երկու պարագային ալ հայրը կառավարիչն է իրենց քաղաքին, որ իր միամօր թարմատի դուստրը, 10-12 տարեկանին, աստուածներուն կ'ընծայէ՝ բարձր աշտարակ մը շինելով ու այնտեղ համադրելով իր աստուածներուն ոսկի եւ արծաթ կուռքերը, որոնց քրմուհի կը կարգէ իր աղջիկը Քրիստինէն՝ 12 նաժիշտներով: Քրիստինէ երկնային ներշնչումով լուսաւորուած՝ կամաց կամաց վերահասու կ'ըլլայ կուռքերու ոչնչութեան, եւ իր մանկութեան օրերուն Քրիստոսի մասին լսածները աւելի պայծառ լոյսով իրեն կը ներկայանան, եւ համոզում կը գոյացնէ Քրիստոնէական կրօնքի ճշմարտութեան եւ կը դառնայ ինքնաբերաբար քրիստոնեայ: Կուռքերը կը փշրէ եւ միջոցը կը գտնէ զանոնք իբրեւ ոսկի եւ արծաթ դուրսը ծախել տալու եւ փոխարժէքը աղքատներուն բաշխելու: Հայրը երբ կ'իմանայ պատահածը, տառա-

պէս կը կատարի եւ կ'ենթարկէ իր անմեղ աղջիկը աննկարագրելի չար-
չարանքներու ու բանտ նետել կու տայ, այն պայմանով, որ եթէ յա-
ջորդ օրն ալ աղջիկը չփոխէ իր միտքը եւ չդառնայ Հին աստուած-
ներուն, չարաչար սպաննել պիտի տայ: Նոյն գիշերը սակայն Հայրը
զայրոյթէն յանկարծամահ կ'ըլլայ: Յաջորդ օրը դատաւորը կամ կա-
ռավարիչը աւելի սաստիկ չարչարանքներու կ'ենթարկէ մատաղատի
կոյսը: Երբ կը տեսնէ, որ ամուր կը մնայ իր կրօնքին վրայ, կը հրա-
մայէ սուրով սպաննել զայն: Ըստ արեւմտեան աւանդութեան՝ մարմի-
նը կը փոխադրուի ժամանակ մը վերջ Սիկիլիոյ Բալիբոս քաղաքը, ուր
Հոյակերտ եկեղեցի մը կը շինուի անոր գերեզմանին վրայ, եւ
Քրիստինէ Կոյսը առարկայ կը դառնայ մեծ բարեպաշտութեան:

Յոյնք եւ Լատինք՝ Յուլիս 24, Հայք՝ Բ. Վարդ. Բշ.:

11. ԱՆՆԱ

Մայրն է Երուսաղէմացի Յուդա-Կիւրեղին, որ խաչին թաղուած
տեղը ցուցնողը եղաւ Հեղինէ Թագուհիին: Ապրեցան երկար երկուքն
ալ, մինչեւ Յուլիանոս Ուրացողի ժամանակ՝ 360ական թուականները,
եւ երկուքն ալ ենթարկուելով անտանելի չարչարանքներու՝ ստացան
մարտիրոսութեան պսակը:

Յունաց եւ Լատինաց մօտ Աննայի յիշատակութեան հետքին
չհանդիպեցանք: Մենք կը տօնենք երկուքը միասին Մեծ Պահքի
երկրորդ Շաբաթ օրը:

12. ՄԱՐԻԱՆԷ

Այս կոյսը Յունաց մօտ ծանօթ է Մարինէ, իսկ Լատինաց մօտ
Մարգարիտա անուններով: Կ'ապրի Գ. դարու մէջ տեղերը Գոնիայի
մօտիկ Պիսիդեան Անտիոքի մէջ. մէկ հատիկ դուատրն է քուրմի մը,
մօրմէ որբ մնացած՝ մատաղ տարիքին: Հայրը զայն յանձնեց ստնտուկ
մը, որ քրիստոնեայ էր: Երբ մանուկը չափահաս եղաւ, Հայրը ուզեց
իր աստուածներուն նուիրել իր աղջիկը իբրեւ քրմուհի: Սակայն Մա-
րիանէ Համոզուած ըլլալով Քրիստոնէական կրօնքի ճշմարտութեան՝
ըսաւ իր հօրը, որ անմուռնչ կուռքերու սպասուհի չէր ուզեր ըլլալ:
Հայրը տունէն վտարեց զայն, որ սիրով իր ստնտուկն քով գնաց եւ
անոր ոչխարները կ'արածէր: Ձերբակալուեցաւ իբրեւ քրիստոնեայ եւ

սաստիկ չարչարանքներու ենթարկուեցաւ, որոնց տոկաց մեծ քաջու-
թեամբ: Ի վերջոյ գլխատմամբ նահատակուեցաւ շուրջ 275ին:

Յոյնք՝ Յուլիս 17, Լատինք՝ Յուլիս 20, Հայք՝ Բ. Խաչ. Գշ.՝ Փեք-
րոնիայի հետ:

13. ՅՈՒՍՏԻԱՆԷ

Տեսանք, թէ այս կոյսին վարքը սերտօրէն կապուած էր Կիւրիա-
նոս Եպիսկոպոսին հետը եւ միասին ալ կը տօնախմբուին (գլուխ Ա,
թիւ 18): Անունին յունական ձեւն է Յուատինա: Թէեւ կուսպաշտու-
թեան մէջ մեծցած՝ սակայն քրիստոնեայ դարձաւ Անտիոքի մէջ եւ
գարձի բերաւ նաեւ իր ծնողքը եւ ինքզինքը նուիրեց սովորականէն
վեր սրբութեան կեանքի մը: Երիտասարդ մը սիրահարեցաւ անոր,
բայց խստիւ մերժուեցաւ: Երիտասարդը գիմեց Կիւրիանոս մոգին, որ
իր դեւերու միջոցաւ ի զուր փորձեց փոխել կոյսին միտքը: Իր կա-
խարգութիւնները ոչ մէկ ներգործութիւն ըրին անոր վրայ: Կիւրիա-
նոս տեսնելով, որ Յուատինան տէր է աւելի մեծ գերբնական ոյժի մը,
քան ինչ որ ինք ունենալ կը կարծէր՝ ուստի դարձի եկաւ եւ մկրտուե-
ցաւ: Երկուքը միասին նուիրուեցան Աւետարանի քարոզութեան,
ենթարկուեցան չարչարանքներու, որոնցմէ հրաշքով ազատեցան: Ի
վերջոյ զրկուեցան Նիկոմիդիա, ուր Դիոկղետիանոս հրամայեց գլխա-
տել զանոնք 300ական թուականներուն:

Յոյնք՝ Հոկտ. 2, Լատինք՝ Սեպտ. 26, Հայք՝ Բ. Վարդ. Բշ.:

14. ՎԱՌՎԱՌԷ

Անունին լատինական ու եւրոպական ձեւն է Պարպարա:

Կ'ապրի Գ. դարու վերջերը Մաքսիմիանոս Կայսեր օրով: Հայրը
հեթանոս է, բայց ինք ձեւով մը քրիստոնեայ եղած էր: Հայրը իրենց
պարտէզին մէջ բաղանիք մը շինած էր երկու պատուհաններով: Հօրը
բացակայութեան Վառվառէ երրորդ մը շինել տուած էր խաչանիշ
ձողերով: Հայրը երբ նկատեց զայն, բացատրութիւն ուզեց: Վառվառէ
ըսաւ, որ իր հաւատացած Ս. Երրորդութեան խորհրդով ըրած էր
զայն: Իսկ խաչը այն փրկարար գործիքն էր, որուն վրայ Քրիստոս
Իր արիւնը թափած էր մարդոց փրկութեան համար: Այսպէս մէջտեղ

ելաւ իր քրիստոնեայ ըլլալը, որուն վրայ Հայրը սաստիկ զայրացած՝
չարչարանքի ենթարկեց իր դուստրը: Երբ ամուր մնաց իր կրօնքին
վրայ, բանտարկեց իր տան մէջ: Ապա Հանեցին զայն դատաւորի
ատենանի առջեւ, ուր եւս հրաւէր եղաւ իրեն հեռանալ քրիստոնէու-
թենէն եւ դառնալ իրենց աստուածներուն: Կոյսը մերժեց: Յետ բա-
զում եւ անկարագրելի չարչարանքներու գլխատուեցաւ, կ'ըսէ վար-
քագրութիւնը, նոյնինքն հօրը ձեռքով, որ ապա կայծակնահար ըլլա-
լով՝ մոխիրի վերածուեցաւ:

Յոյնք եւ Լատինք՝ Դեկտ. 4, Հայք՝ Դ. Խաչ. Գշ.:

15. ՊԵՂԱԳԻԱ

Առնուազն երեք կոյս վկաներ կան այս անունով եւ դժուար է
ճշդել, թէ ասոնցմէ ո՞րն է մեր Եկեղեցիին մէջ տօնուածը, ուստի կը
ներկայացնենք երեքն ալ համառօտիւ:

1. Առաջինը Տարսոնցի է եւ ժամանակակից Դիոկղետիանոսի
(284-305) եւ բարձր ընտանիքի աղջիկ: Տեսիլքէ մը առաջնորդուած՝
կը մկրտուի իր քաղաքի եպիսկոպոսէն, իր թանկարժէք զգեստները
կը ծախէ ու աղքատներուն տալով՝ ինք աղքատի զգեստով կը վերա-
դառնայ տուն: Իբրեւ քրիստոնեայ մատուցաւ Դիոկղետիանոսի
ատենանին: Երբ ամուր մնաց հաւատքին վրայ, պղինձէ հրաշէկ հնոցի
մէջ փակեցին զայն, ու այրելով ստացաւ նահատակութեան պսակը
304ին:

Յոյնք եւ Լատինք՝ Մայիս 4ին:

2. Երկրորդը Անտիոքցի պոռնիկ մըն է: Զղջումի գալով սրտանց
ապաշխարեց, իր ունեցածը բաշխեց աղքատաց ու մկրտուեցաւ եւ
ապա իբրեւ այր ծպտուելով՝ գնաց Երուսաղէմ եւ Զիթենեաց լեռան
վրայ ճգնողական վարքով կնքեց իր կեանքը:

Յոյնք եւ Լատինք՝ Հոկտեմբեր 8ին:

3. Երրորդն ալ Անտիոքցի մըն է, որ մատաղ տարիքին քրիստո-
նեայ եղած եւ ինքզինքը կուսական կեանքին նուիրած էր: Երբ քրիս-
տոնեաներ որոնող զինուորներ երեւցան իր տան մէջ, խորհելով որ
կու գան զինք բռնաբարելու՝ ինքզինքը պատուհանէն վար նետեց եւ
մահացաւ: Թէեւ անձնասպանութիւնը ծանր մեղք է, բայց նկատի

ունենալով, որ մատաղատի Պեղագիա այս քայլը առած էր իր
անմեղութիւնը եւ կուսութիւնը պահպանելու գովելի նկատումով,
Եկեղեցին իր արարքը համազօր նկատած է նահատակութեան եւ
արժանի՝ յիշատակութեան:

Յոյնք՝ Հոկտ. 8, Լատինք՝ Յնս. 9, Հայք՝ Դ. Խաչ. Գշ.:

16. ԹԷՈՂԻՏԷ

Կամ Թէոդոտէ: Գոնիացի այրիացեալ բարեպաշտ կին մըն է իր
երեք զաւակներով, զորս կը դատարարակէ աստուածապաշտութեան
մէջ: Հեթանոս ազնուական մը կը սիրահարի իրեն եւ կ'ուզէ ամուս-
նանալ իր հետ. Թէոդոտէ կը մերժէ: Ասոր վրայ կը չարչարեն իր աչ-
քին առջեւ իր զաւակները, որոնք սակայն արիութեամբ կը դիմանան
եւ չեն ուրանար իրենց կրօնքը: Ի վերջոյ բոլորը մէկ կրակը կը
նետուին Դիոկղետիանոսի օրով 300ական թուականներուն:

Յոյնք՝ Յուլիս 29, Լատինք՝ Օգոստ. 2, Հայք՝ Է. Խաչ. Բշ.:

17. ՂԱՄՊԷՈՒՀԻ

Յունական ձեւով Եւամբիա, Նիկոմիդիա քաղաքէն: Իր պատմու-
թիւնը անբաժան է իր եղբորմէն, որ կը կոչուի Ղամպէոս կամ Եւամ-
բիոս: Նախ եղբայրը ձերբակալուեցաւ իբրեւ քրիստոնեայ եւ ենթար-
կուեցաւ չարչարանքներու, ապա իրեն միացաւ Ղամպէուհի եւ երկու-
քը միասին արիաբար պաշտպանեցին Ս. Կրօնքը եւ անարգեցին կուռ-
քերը: Մանր չարչարանքներու ենթարկուելէ յետոյ գլխատուեցան
միասնաբար 303 թուականին:

Յոյնք եւ Լատինք՝ 10 Հոկտ., Հայք՝ Դ. Խաչ. Բշ.:

18. ԵՕԹՆ ԿՈՒՍԱՆՔ

Անգարացի են ասոնք: Դիոկղետիանոսի հալածանքներու ատեն
ձերբակալուեցան եւ ամէն տեսակ փորձանքներու եւ փորձութեանց
ենթարկուեցան, որոնց բոլորէն Աստուած փրկեց զանոնք: Այն ատեն
դատաւորը հրամայեց անոնց պարանոցներէն ծանր քարեր կախելով
լրամոյն ընել: Թէոդիտոն Գաղատացի անունով անձ մը, ուրիշ քրիս-
տոնեաներու հետ, անոնց մարմինը ջուրէն հանեց՝ պատուով թաղելու

Համար, որուն Համար ինք ալ նահատակուեցաւ 303ին, եւ կը տօնուի նախ կոյսերուն Հետ միասնաբար:

Յոյնք եւ Լատինք՝ Մայիս 18, Հայք՝ Գ Հոգ. Եջ.:

19. ԵՒՓԻՄԷ

Քաղկեդոնացի քրիստոնեայ մեծահարուստ ընտանիքի մը աղջիկն էր Եւփիմէ, որ աճած էր ամէն տեսակ առաքինութեանց մէջ: Ամբողջութեամբ Աստուծոյ նուիրուելու Համար կուուութեան ուխտ ըրած էր: Այս միջոցին քաղաքին մէջ Հեթանոս աստուածներէն մէկին ի պատիւ Հանգիստութիւն մը սարքուած էր, որուն Հրակիրուած էին քաղաքին բոլոր բնակիչները: Աչքի զարկաւ Եւփիմէի բացակայութիւնը: Մարդ զրկեցին զայն փնտռելու Համար, գտան ուրիշ 49 հոգիներու Հետ թաքստոցի մը մէջ աղօթելով զբաղուած: Բոլորին Հրամայուեցաւ, որ մասնակցին տօնակատարութեան: Բոլորն ալ ըսին, որ իրենք քրիստոնեայ են եւ նման սուտ ու սխալ պաշտամունքներէ իսպառ Հրաժարած են: Ասոր վրայ 49 հոգին ալ տեղւոյն վրայ սպաննուեցան: Իսկ Եւփիմէ ենթարկուեցաւ ծանր չարչարանքներու, որոնց բոլորէն վերադրեցաւ Հրաշքով: Ի վերջոյ գազաններուն առջեւ նետուեցաւ: Թէեւ սկիզբէն ասոնք շուններու պէս իր ոտքերը եւ ձեռքերը կը լզէին, բայց սրբուհին աղօթեց Աստուծոյ, որ կը նախընտրէր գազաններու ծանիքներով մահանալ, քան մարդոց չարութեամբ, ուստի արջի մը խծուածքով հոգին աւանդեց: Գազանները չՀամարձակեցան ուսկ սրբասնեալ մարմինը, որ գաղտնի վերցուելով քրիստոնեաներու կողմէ՝ պատուով թաղուեցաւ 303ին կամ 307ին:

Յոյնք եւ Լատինք՝ Սեպտ. 16, Հայք՝ Բ. Վարդ. Բջ.:

20. ՅՈՒՂԻՏԱ

Գոնիացի աստուածասէր այրի կին մըն էր, երեք տարեկան միակ զաւակով՝ Կիրակոս անուն: Երբ իր շրջանին մէջ Հալածանքը սաստկացաւ՝ անցաւ Տարսոն: Այստեղ ալ տարածուած էր Հալածանքը, ուստի ձերբակալուեցաւ եւ ատեն Հանուեցաւ ու խիստ չարչարանքներու ենթարկուեցաւ: Կիրակոս մանուկը կու լար ու կը ճշար ի տես մօրը չարչարանքներուն եւ Հակառակ գատաւորի ցոյց տուած փաղաքշանքներուն՝ կը կրկնէր ինչ որ իր մայրը կ'ըսէր. «Ծն քրիստո-

նեայ եմ եւ Տէր Յիսուսը կը պաշտեմ»: Կ'ուզէր ազատիլ դատաւորի ձեռքէն եւ մօրը քով երթալ: Ի վերջոյ ձեռքով ոտքով զարկաւ դատաւորին եւ այնչափ շատ նեղեց զայն, որ դատաւորը զայրացած՝ սանդուխներէն վար նետեց փոքրիկը, որուն գլուխը քարին գալով ջախջախուեցաւ, ու մահացաւ: Յուդիտա Աստուծոյ փառք տուաւ, որ իրմէ առաջ իր հոգեհատորը նահատակութեան պսակին արժանացաւ: Ապա քաղարի մայրը ենթարկեցին ահաւոր չարչարանքներու, որոնց տակաց Հիանալի Համբերութեամբ: Ի վերջոյ զլիստամամբ նահատակուեցաւ 305ին:

Յոյնք՝ Յուլիս 15, Լատինք՝ Յունիս 16, Հայք՝ Դ. Վարդ. Բջ.:

21. ԱՆԱՏՈՒԱ

Յունաց եւ Լատինաց մօտ ծանօթ է Նատալիա անունով: Կինն է աւելի նշանաւոր մարտիրոսի մը՝ Ագրիանոսի, որ իր կնոջ ջանքերով քրիստոնեայ եղած էր: Երբ վերջինս ձերբակալուեցաւ Դիոկղետիանոսի Հալածանքներու ատեն, Անատոլա իրեն եւ այլոց զօրավիգ եղաւ, որ չտկարանան իրենց Հաւատքին մէջ, այլ քաջութեամբ ստանան մարտիրոսութեան պսակը: Այն աստիճան անձնուէր եղած է ձերբակալեալ եւ բանտարկեալ քրիստոնեաներու ծառայութեան մէջ, որ կոչուած է «քոյր մարտիրոսաց»: Իր ամուսնոյն նահատակութեան ներկայ եղաւ իբրեւ այլ ծպտուելով, քանի որ կիններուն արգելուած էր ասոնց չարչարանաց եւ նահատակութեան ներկայ լինելը: Իր ամուսնոյն մահէն յետոյ քաշուեցաւ Բիւզանդիոն եւ իր կեանքը կնքեց առաքինի վարքով ու խաղաղ մահուամբ:

Յոյնք կը տօնեն Օգոստ. 26ին, Լատինք՝ Դեկտ. 1ին, Հայք՝ Ե. Վարդ. Եջ.:

22. ԴՈՄՄՆԱ

Նիկոմիդացի կոյս մը, որ կայսերական պալատան կուռքերուն քրմուհի կարգուած էր Ինդոս ներքինիի Հսկողութեան ներքեւ: Գոզոս Առաքեալի թուղթերը եւ Գործք Առաքելոց զիրքը ձեռք ձգած ըլլալով Դոմնա կարգաց զանոնք պարծով, եւ քրիստոնեայ եղան երկուքն ալ: Բանտ նետուեցան եւ ի վերջոյ երկուքն ալ նահատակուեցան այն օրերուն, երբ Նիկոմիդիոյ մէջ երկու բիւր ժողովուրդ նահա-

տակուեցան՝ այրուելով այն եկեղեցին, ուր հաւաքուած էին աղօթքի համար, 303ին:

Յոյնք եւ Լատինք՝ Դեկտ. 28, Հայք՝ Դ. Յիս. Եշ:

23. ՓԵՐՐՈՆԻԱ

Մծբին քաղաքէն է Փերրոնիա եւ մատաղ տարիքէն վանք մտաւ եւ կրօնաւորեցաւ: Մեր Ս. Հռիփսիմէի ժամանակակից է եւ իր վարքը կը յիշեցնէ անորինը: Այս ալ ունի հոգեւոր մայր մը յանձին Վրէնի կամ Բրիտնիայի, ինչպէս Հռիփսիմէ ունէր Գայիանէն, եւ անձամբ ալ կը ներկայացուի գեղեցիկ ու բարձրահասակ, ինչպէս Հռիփսիմէ եղած է: Դիոկղետիանոսի հայածանքները հասան մինչեւ Մծբին: Կոյսերը, որպէսզի հեթանոսներու ձեռքը չիյնան, բարեկամներու թելադրանքով պարպեցին վանքը: Իսկ Փերրոնիա հիւանդ ըլլալով չկրցաւ եւ չուզեց հեռանալ: Իր հետ մնացին նաեւ իր հոգեւոր առաջնորդը Բրիտնիա եւ Թուամայիս անունով քոյր մը, որ վերջէն գրած է Փերրոնիայի նահատակութիւնը, որ գեղեցիկ դիւցազներգութիւն մըն է: Զօրքերը պաշարեցին վանքը եւ լոկ Փերրոնիան հանեցին երկու դատաւորներու առջեւ, որոնք կայսեր կողմէ զրկուած էին քրիստոնէութիւնը Արեւելքի մէջ բնաջնջելու համար: Ասոնցմէ մէկը Լիւսիմաքոսն էր, որուն մայրը քրիստոնեայ ըլլալուն՝ գաղտնի բարեացակամ էր քրիստոնէից հանդէպ, միւսն էր ասոր հօրեղբայրը՝ Սեղիսոս, որ սրտանց հալածիչ էր քրիստոնէից: Երբ Լիւսիմաքոս հարցուց կոյսին, թէ ինչ էր իր անունը, պատասխանը եղաւ՝ «խոնարհ քրիստոնեայ»: Սեղիսոս ինք ձեռք առաւ հարցաքննութիւնը եւ տեսնելով Փերրոնիայի հեղուքիւնը եւ գեղեցկութիւնը՝ ուզեց հայրաբար համոզել զայն, որ հրաժարի իր կրօնքէն, եւ խոստացաւ զինք հարսնացնել իր կողքին նստող ազնուական եղբորորդիին՝ Լիւսիմաքոսի, եւ զիրենք ժառանգորդ կարգել իրեն, քանի որ ինք որդի չունէր: Գեղեցիկ պատասխաններ տուաւ Փերրոնիա՝ ըսելով, որ ինք արդէն իսկ հարսնացեալ է Քրիստոսի: Յետ բազում եւ անտանելի չարչարանքներու Սեղիսոս նախ հրամայեց կտրել անոր ձեռքերը եւ ոտքերը եւ ապա՝ գլուխը: Ու այսպէս անմեղ գառնուկի պէս զոհուեցաւ «անարատ եւ մաքուր կոյսը Փերրոնիա՝ բազմաչարչար եւ բազմայաղթ նահատակը»: Սեղիսոս դատաւորը ազդուելով անմեղ կոյսի մը այս քաջարի

գիմարդութենէն ու մահէն՝ գրեթէ խելագարուեցաւ եւ գլուխը սիւնի մը զարնելով՝ գանկը ճեղքուեցաւ ու մահացաւ: Իսկ Լիւսիմաքոս ընդհակառակը հաւատքի եկաւ եւ հրամայեց պատուով թաղել Ս. Կոյսը վերջնոյս ճգնած վանքին մէջ, ի ձեռն Ս. Յակոբ Մծբնացոյ, յամի Տեառն շուրջ 305ին:

Յոյնք եւ Լատինք՝ Յունիս 25, Հայք՝ Բ. Խաչ. Գշ:

24. ՎԱՍԻԼՈՒՀԻ

Այս անունով եւս բազմաթիւ վկայուհիներ կան Յունաց եւ Լատինաց տօնացոյցներուն մէջ: Մեր տօնացոյցին մէջ յիշատակուածը կ'ենթադրենք որ Նիկոմիդացի է եւ փոքր տարիքին քրիստոնեայ եղած է, որուն համար չարչարուեցաւ կայսեր կողմէ նշանակուած դատաւորին ձեռամբ: Ազատ ու անվնաս դուրս եկաւ բոլոր չարչարանքներէն ու ապրեցաւ ճգնողական կեանք մը եւ առ Աստուած փոխեցաւ մաքուր սրբութեամբ 309 թուականին:

Յոյնք եւ Լատինք՝ Սեպտ. 3, Հայք՝ Ա. Յիս. Բշ:

25. ԿԱՏԱՐԻՆԷ

Յունաց մէջ ծանօթ է որպէս Եկտարինէ, իսկ մեր մէջ նաեւ՝ Նեկտարինէ կամ Նեկտարինէ: Մնած է Աղեքսանդրիա, Եգիպտոս, քրիստոնեայ ազնուական ընտանիքէ: Ըլլալով ի բնէ ուշիմ աղջիկ մը՝ ստացած է բարձրագոյն իմաստասիրական ուսմունք: Մաքսիմիսոս կամ Մաքսենտիոս, որ թէեւ զահակից էր Մեծն Կոստանդիանոսի, բայց չէր բաժներ անոր բարեացակամութիւնը հանդէպ քրիստոնէից, 307 թուին Աղեքսանդրիա եկաւ եւ հրաման հանեց, որ բոլոր իր հպատակները պաշտէին պետական աստուածները՝ մահ սպառնալով անաստողներուն: Ու օրինակը ինք տուած ըլլալու համար մեծ ու հանդիսաւոր արարողութիւն մը սարքեց ի պատիւ պետական աստուածներուն:

Կատարինէ նախ յորդոր զրկեց բոլոր քրիստոնեաներուն, որ չմանակցին այս անբարիշտ արարողութեան, եւ ինք ներկայացաւ կայսեր, երբ ան ամբողջ իր մեծամեծներով պատրաստուած էր սկսելու կուսապաշտական արարողութիւնը, ու ըսաւ անոր. «Եթէ մինչեւ իսկ խորհուրդ հարցուցած ըլլայիք Ձեր պարզագոյն բանականութեան լոյ-

սին, ան պիտի ըսէր Ձեզի Ձեր ըրածին յիմարական ու անտրամաբանական լինելը, թող թէ՛ փիլիսոփաներուն, որոնցմէ մեծագոյնները կ'ուսուցանեն, որ մէկ է Աստուած»: Արդարեւ իր գիտութեամբ, իմաստութեամբ եւ պերճախօսութեամբ ափիբերան ձգեց ամէնքը: Ի վերջոյ կայսրը կանչեց իր փիլիսոփաներէն նշանաւորագոյն 50 Հոգիները եւ Կատարինէի դէմ Հանեց վիճաբանելու Համար: Իւրաքանչիւր կողմ իր թէ՛ղը պաշտպանեց. փիլիսոփաներ՝ բազմաստուածութիւնը եւ Կատարինէ՛ միաստուածութիւնը: Յաղթանակեց Կատարինէի կողմը, եւ իմաստասէրներէն ոմանք ընդունեցին քրիստոնէական տեսակէտը իբրեւ ճշմարտութիւն եւ դարձի եկան: Որուն վրայ կատղեցաւ Մաքսիմինոս եւ կրակի մէջ նետել տուաւ զանոնք, ինչ որ իրենց Համար նկատուեցաւ մաքրիչ մկրտութիւն:

Ու վարքագրութիւնը կ'աւելցնէ, որ կայսրը գրաւուելով Կատարինէի գեղեցկութենէն, Համարձակութենէն, պերճախօսութենէն եւ ուրիշ առաւելութիւններէն՝ բուռն կերպով սիրահարեցաւ կոյսին եւ առջարկեց ամուսնանալ իրեն հետ: Սակայն Կատարինէ ըսաւ, թէ ինք արդէն կապուած է սրտով եւ Հոգիով Քրիստոսի: Կատղեցաւ Մաքսիմինոս եւ ենթարկեց զայն ամենախիստ չարչարանքներու եւ բանտ նետեց, որպէսզի մեռնի անսուազութենէ եւ իր մարմնի վրայ բացուած վէրքերու արիւնահոսութենէն: Սակայն բանտին մէջ հրաշքով բոլորովին առողջացաւ եւ նիւթական սնունդի պէտք չգգաց: Կայսեր կինը, որ Պորփիր անունով զօրավարի մը հետ բանտ այցելած եւ տեսած էր անոր բժշկուած ըլլալը եւ դարձի եկած էր, յանձնարարեց բռնակալին, որ ինք ալ այլեւ ընդունի Քրիստոնէական կրօնքին գերազանցութիւնը եւ Քրիստոսի Աստուածութիւնը: Ասոր վրայ անգութ բռնակալը հրամայեց սպաննել իր կինը եւ զօրավարը, եւ ուրիշ բազմաթիւ գինուորներ, որոնք եւս Հաւատքի եկած էին Պորփիր զօրավարի քարոզութեամբ եւ վկայութեամբ: Իսկ Կատարինէի կեանքին վերջ տուաւ գլխատուութեամբ: Աւանդութիւնը կ'ըսէ, որ հրեշտակները անոր մարմինը տարին Սինա լեռան վրայ, որուն ստորոտը ժամանակի ընթացքին շինուեցաւ նշանաւոր Ս. Կատարինէի վանքը, որ մինչեւ օրս գոյութիւն ունի՝ իբրեւ Յոյն Եկեղեցիի ամէնէն կարեւոր վանքերէն մէկը:

Յոյնք եւ Լատինք՝ Նոյ. 25, Հայք՝ Գ. Խաչ. Գշ.:

Այս անունով շատ մը սրբուհիներ կան թէ Լատինաց եւ թէ Յունաց տօնացոյցներուն մէջ: Իսկ մեր Յայսմաւուրքի մէջ առնուազն երկու Հատ կան: Մեր տօնացոյցին անցածը մենք կ'ենթադրենք որ Նիկոմիդացի Յուլիանէն է, որ ապրած ու նահատակուած է Դ. դարու սկիզբները, Դիոկղետիանոսի Հալածանքներու շրջանին: Մատաղ տարիքին քրիստոնեայ եղած է արդէն Յուլիանա եւ ինքզինքը նուիրած է կուսական կեանքին եւ հետեւաբար կը մերժէ ամուսնական առաջարկը Հեթանոս երիտասարդի մը: Կը մատնուի դատարան եւ կ'ենթարկուի ահաւոր չարչարանքներու եւ ի վերջոյ բանտ կը նետուի: Այնտեղ ալ այս անգամ կ'ենթարկուի բարոյական փորձութիւններու, երբ չարութեան ոգին հրեշտակի մը կերպարանքով կը մօտենայ իրեն՝ ըսելու, որ Աստուած չ'ուզեր, որ ան աւելի չարչարուի, եւ պէտք է ենթարկուի կայսեր կամքին եւ չվարանի կուտքերուն զոհելու: Այս բոլոր փորձութեանց մէջէն ալ յաղթական դուրս կու գայ: Բանտէն երբ Հանեցին կրակին մէջ նետելու Համար, կրակը մտրեցաւ: Այս հրաշքը տեսնելով՝ շատեր դարձի եկան եւ տեղւոյն վրայ նահատակուեցան: Ի վերջոյ գլխատմամբ մահացաւ շուրջ 311ին, 19 տարեկանին:

Յոյնք՝ Դեկտ. 21, Լատինք՝ Փետր. 16, Հայք՝ Ա. Յիս. Բշ.:

27, 28. ԱԿԻՒԼԻՆԷ ԵՒ ԿԱԼԻՆՈՒԿԷ

Երկու պոռնիկ կիներ էին ասոնք, որոնք ղրկուեցան Քրիստափորի (տես գլուխ Գ., մասն Գ. եւ թիւ 23) բանտը՝ զայն աւրելու եւ ճամբէ Հտնելու Համար: Սակայն Քրիստափոր աղօթեց անոնց փրկութեան եւ մեղաց թողութեան Համար՝ ըսելով. «Քուկդ են, Տէր, բոլոր արարածները, ըրէ, որ այս կիներն ալ Քեզի երկրպագու ըլլան՝ սրբելով զանոնք իրենց մեղքերէն Հաւատքով եւ արեան մկրտութեամբ՝ Քու փառքիդ Համար»: Ապա անոնց քարոզեց Աւետարանը եւ սրբութեան մեծութիւնը: Կիները Հաւատացին, զղջացին ու լացին իրենց մեղքերուն Համար եւ յանձն առին սրբութեան կեանքը եւ Քրիստոսի սիրոյն Համար մահը. «Միայն թէ, - կ'ըսէին, - ընդունի ողորմած Աստուած զմեզ մեղաւորներս»: Կիները, երբ ետ կանչուեցան ստուգելու Համար թէ կրցա՞ն ճամբէ Հանել Քրիստափորը, ըսին. «Ոչ թէ ան

ճամբէ ելաւ, այլ մենք գտանք ճշմարտութեան ճանապարհը եւ Քրիստոս Աստուածը ու մենք ալ հիմա կ'արհամարհենք կուռքերը»։ Կատրեցաւ դատաւորը եւ հրամայեց ենթարկել զանոնք ամենախիստ չարանքներու։ Երանելի կիները սիրայօժար կրեցին չարչարանքները, որոնց մէջ աւանդեցին իրենց հոգիները։ Այսպէս օրինակ Հանդիսացան բոլոր անոնց, որոնք, հոգ չէ թէ որքան ծանր մեղանչած են, ունին Հնարաւորութիւնը փրկութեան արժանանալու Հաւատքով, ապաշխարանքով եւ Քրիստոսի սիրոյն յանձն առնելով ամէն դժուարութիւն։ Ասոնց արեան Հեղուճը իրենց Համար մկրտութիւն Համարուեցաւ, եւ արժանի եղան յաւիտեանական կեանքի եւ Եկեղեցւոյ մէջ տարեկան յիշատակութեան, իրենց փրկութեան պատճառ եւ առաջնորդ Հանդիսացող Քրիստափորին հետ։

Յոյնք՝ Մայիս 9, Լատինք՝ Յու. 24 (միայն թէ Կալիսիէէ անուան տեղ ունին Նիկիտէ անուանը), Հայք՝ Զ. Խաչ. Եջ.:

29. ՆՈՒՆԷ

Լուսաւորիչը Վրաստանի, ուր իր անունը ընդհանրացած է Նինօ ձեւով։ Կը նկատուի Հռիփսիմեանց Կոյսերէն մէկը, որ հրաշքով կ'ազատի անոնց նահատակութեան ատեն եւ երկնային ազդուումով կ'երթայ Վրաստանի մայրաքաղաքը Մծխիթա, ուր կը շարունակէ այն բարեպաշտական ու ճգնողական կեանքը, զոր կ'ապրէին ինք եւ իր ընկերները Հայոց Վաղարշապատ մայրաքաղաքին մօտակայքը։ Ինքզինք կը ներկայացնէ ճորտերու կամ ստրուկներու դասակարգին պատկանող կին մը եւ իր բարեգործութիւններով Համակրանքը կը շահի իր շրջապատի ժողովուրդին։ Իր հռչակը եւ կրօնական գործունէութիւնը կը սկսի, երբ կին մը իր անբուժելի հիւանդ որդին անոր կը բերէ՝ խնդրելով, որ եթէ դեղ ու դարման մը գիտէ, կիրարկէ իր գաւազին վրայ։ Նունէ կ'ըսէ, որ ինք նիւթական դեղ ու դարման մը չի գիտեր, բայց կը հաստատէ, որ իր պաշտած Աստուծոյ Որդին՝ Յիսուս Քրիստոս, այսպիսիներուն վրայ շատ բժշկութիւններ կատարած է, եւ կը հաւատայ, որ այս տղան ալ կը բուժէ։ Ուստի կը սկսի աղօթել, ու արդարեւ փոքրիկը յանկարծ կը բուժուի ի մեծ ուրախութիւն մօրը եւ մօտականերուն։ Լուրը կը հասնի նաեւ ականջը Վրաստանի Նաւնա Թագուհիին, որ ծանրապէս հիւանդ էր։ Իր մօտ կը հրաւիրէ ստրուկ

ճանչցուած կինը, որ կ'ըսէ, թէ ինք չի կրնար ձգել իր ճգնողական վայրը՝ Թափառելու Համար նման փարթամ տեղեր։ Անոր մօտ կը փոխադրեն Թագուհին, որ իրաւամբ կը բուժուի Նունէի աղօթքով։ Թագուհին խորապէս երախտապարտ զգալով՝ կը փորձէ թանկագին նուէրներ տալ, զորս Նունէ կը մերժէ, բայց կը սկսի Աւետարանը քարոզել՝ Հաստատելով, թէ ոչ թէ ինք, այլ Քրիստոս բժշկած էր զայն, եւ թէ Քրիստոս պատրաստ է բժշկելու զայն նաեւ հոգիի հիւանդութիւններէն, եթէ ան քրիստոնեայ ըլլար։ Թագուհին յօժարակամութիւն կը յայտնէ։

Երբ պալատ կը վերադառնայ, իր Թագաւոր ամուսինը՝ Միհրան, չափազանց կ'ուրախանայ եւ կը հրամայէ, որ թանկագին նուէրներ դրկեն օտարուհիին։ Թագուհին կ'ըսէ, որ այդ կինը նուէրներ չ'ընդունիր, «բայց մեր երախտագիտութիւնը յայտնած կ'ըլլանք իրեն, եթէ երկուքս ալ պաշտենք իր քարոզած Աստուածը, որուն զօրութեամբ, կ'ըսէր թէ, բժշկուած էի ես»։ Թագաւորը այդ պահուն շատ լուրջի չ'առնեց Թագուհիին առաջարկը։ Սակայն օրին մէկը, որսորդութեան մը ընթացքին, յանկարծ ինք եւ իր Հետեւորդները թանձր մառախուղով մը կը պաշարուին եւ սարսափած այս ու այն կողմ կը սկսին փախչիլ։ Թագաւորը կը կորսնցնէ իր ճամբան եւ ուղղութիւնը։ Իր աստուածները օգնութեան կը կանչէ. ոչ մէկ տարբերութիւն կը նշմարէ կացութեան մէջ։ Յանկարծ միտքը կու գայ իր Թագուհին բժշկող Աստուածը. Անոր կը դիմէ եւ կ'ուխտէ Հաւատալ ու Հետեւիլ Անոր, եթէ ազատէ զինքը այս թանձր խաւարէն։ Եւ յանկարծ անթափանց մշուշը, ինչպէս սկսած էր, նոյն արագութեամբ կը փարատի, եւ ինք կը յաջողի ապահով վերադառնալ պալատ։ Կը պատմէ Թագուհիին պատահարը եւ միասին կ'երթան Նունէին մօտ։ Կը խնդրէ Թագաւորը, որ իրեն ալ պատմէ իր Աստուծոյն եւ Անոր Որդի Յիսուս Քրիստոսի մասին։ Նունէի քարոզութիւնը ունկնդրելէ յետոյ Թագաւորն ալ կը յայտնէ իր պատրաստակամութիւնը քրիստոնեայ ըլլալու։ Պալատ վերադարձին իր մօտ կը հրաւիրէ երկրի բոլոր մեծամեծները. անոնց պատմելէ յետոյ Թագուհիին բժշկութիւնը եւ իր հրաշալի պատահարը, իր կարգին կը քարոզէ անոնց իր ստրկած Քրիստոսի մասին։ Կը հաստատէ իր Համոզումը, թէ Քրիստոս է ճշմարիտ Աստուածը եւ Քրիստոնէութիւնն է ճշմարիտ կրօնքը։ Կը Համոզուին

ու կը հաւատան նաեւ մեծամեծներէն շատեր: Նուենէի խորհրդով պատգամաւորութիւն մը կը ղրկեն Կոստանդիանոս Թագաւորին՝ ըստ վրացական վկայաբանութեան, կամ Ս. Գրիգոր Լուսաւորչին ու Տրդատին՝ ըստ հայկական աղբիւրներու, որ հոգեւորականներ ղրկուին իրենց, որոնք արդարեւ կը հասնին շուտով եւ իր լրումին ու պատկուտին կը բերեն Նուենէի սկսած գործը՝ մկրտելով Թագաւորը, Թագուհին եւ ամբողջ արքունիքը եւ մեծամեծները, ինչպէս նաեւ հազարաւոր ժողովուրդ Կուր գետին մէջ: Կը շինեն վրացական առաջին եկեղեցին Մծխիթայի մէջ: Այս դէպքերէն յետոյ Նուենէ կը շարունակէ իր առաքելութիւնը երկրին ամէն կողմերը եւ ի վերջոյ խաղաղ մահուամբ կը վախճանի, եւ իր գերեզմանին վրայ կը կառուցուի փառաւոր եկեղեցի, որ Վրաստանի մեծ ուխտավայրերէն մէկը կ'ըլլայ:

Մեր ձեռքին տակ գտնուած օտար աղբիւրներէն ոչ մէկին մէջ հանդիպեցանք ոեւէ հետքի, որ հաստատէր, թէ Նուենէ անցած ըլլայ նաեւ յոյն եւ լատին տօնացոյցներուն: Միայն «ԲԱՌԱՐԱՆ ՍՐԲՈՑ»-ի մէջ յիշատակուած է ան՝ որպէս թէ մեռած ըլլայ 340 թուականին եւ որպէս թէ կը տօնուի Դեկտ. 15ին: Իսկ մեր ձեռքին տակ եղած երեք Յայտմաւորքներուն մէջ ալ հանգամանօրէն կը յիշուի ան՝ Հոկտ. 28ին: Վրացական վկայաբանութիւնը սակայն անոր տօնը կը նշանակէ Յունուար 14ին: Իսկ ներկայիս Հայց. Եկեղեցին կը յիշատակէ զայն Տօն Կաթողիկէին յաջորդող Երեքշաբթի օրը, ՄԱՍԷ կոյսին հետ, որ ապրած ու վախճանած ըլլալով Հայաստանի մէջ՝ պիտի յիշատակենք Հայազգի սուրբերու կարգին:

30. ԵՒՊՐԱՔՍԷ

Յունական ձեւն է Եւպրաքսիա, որ վերջինն է մեր Եկեղեցիի համար համաքրիստոնէական կոյս վկայուհիներուն: Մինչեւ հիմա յիշուածները կ'ապրէին հալածանքի դարերուն եւ ամէնքն ալ ենթարկուած են ահռելի չարչարանքներու եւ քանի մը բացառութեամբ՝ իրենց կեանքը կնքած են նահատակութեամբ: Եւպրաքսէով կը սկսի շարքը բացառիկ բարեպաշտութեամբ օժտուած այն կիներուն, որոնք իրենքզիրենք կ'ենթարկեն կամաւոր զրկանքներու, չարչա-

բանքներու եւ ճգնողութեան ու կը հանդիսանան ամբողջական նուիրումի եւ աստուածասիրութեան տիպարներ:

Եւպրաքսէ բախտաւոր եղած է ունենալով բարեպաշտ հայր մը եւ նոյնքան ու աւելի բարեպաշտ սրբուհի մայր մը, որուն անունը եւ ոգին ծառանգած էր ինք: Իր ծնողքը մեծահարուստ եւ ազնուական տոհմէ էին, ազգական Թէոդոս կայսրերուն, որոնցմէ «Մեծն» կոչուածին օրով ծնած է 381ին ու «Փոքր» կոչուածին (408-450) օրով վախճանած է Եւպրաքսէ: Հայրը մեռաւ, երբ ինք հազիւ հինգ տարեկան էր: Իր մօրը հետ փոխադրուեցան Եգիպտոս, ուր ապրեցան մեծ բարեպաշտութեամբ՝ յաճախ այցելելով Թեբայիղի կուսանոցները: Տպաւորուած կուսանաց վանքերու մաքուր մթնոլորտէն՝ փոքր Եւպրաքսէ որոշեց մտնել կուսանոց, մօրը քաջալերութեամբ: Մայրը այլեւս վստահ ըլլալով, որ իր հոգեհաստորը ապահով ձեռքերու մէջ է՝ ինքզինքը ամբողջութեամբ նուիրեց բարեգործութեան՝ օգնութեան հասնելով ամէն տեղ աղքատներուն, դժբախտներուն եւ հիւանդներուն մինչեւ իր մահը: Կայսրը իմանալով մայր Եւպրաքսէի մահը՝ Բիւզանդիոն հրաւիրեց փոքր Եւպրաքսէն՝ ամուսնացնելու համար զայն բարձրաստիճան ազնուական իշխանաւորի մը հետ: Կոյսը Թախանձեց կայսեր, որ ազատ կացուցանէ զինքը երկրաւոր հարսնութենէ, քանի որ ինք արդէն իսկ հարսնացեալ է Երկնաւոր Փեսային: Խնդրեց միաժամանակ, որ իր ամբողջ իշխանական ժառանգութիւնը դրամի վերածուի եւ բաշխուի աղքատներուն, իսկ իրենց տան գերիները եւ պաշտօնեաները ազատ արձակուին վարձատրութեամբ: Կայսրը ընթացք տուաւ Եւպրաքսէի խնդրանքներուն եւ ձգեց, որ շարունակէ ան իր կուսական կեանքը վանքի մէջ: Կուսարանի մօր արունակէ ան իր կուսական կեանքը վանքի մէջ: Կուսարանի մօր արունակէ ան իր կուսական կեանքը վանքի մէջ: Տասներկու տարեկանին հասնելէ յետոյ օրական մէկ ժում միայն կերակուր կ'առնէր: Քանի մը տարի յետոյ երկու օրը միայն կերակուր կ'առնէր, մինչեւ որ սովորութիւն շինեց շաբաթը մէկ անգամ միայն ուտելու: Իշխանական ծագումով այս կոյսը կը սիրէր կատարել ամէնէն հասարակ գործերը վանքին մէջ՝ ալելի, սրբել, ջուր կրել եւ այլ նմանները: Ունեցաւ ներքին զօրաւոր պայքարներ, որոնց բոլորին յաղթեց ազօքօքով ու պահքով: Ունեցաւ նախանձորդներ, որոնց սիրով

ներեց ու աղօթեց անոնց դարձին համար: Հրաշագործութիւններ ալ կատարուեցան իր ձեռքով: Այսպէս ճգնողական կեանքով ու աղօթքով հոգեւորապէս կատարելագործեց ինքզինքը եւ առ Աստուած փոխեցաւ խաղաղութեամբ երեսուն տարեկանին եւ թաղուեցաւ իր վանքին մէջ, իր մօրը քով:

Յոյնք՝ Յուլիս 25, Լատինք՝ Մարտ 13, Հայք՝ Դ. Խաչ. Եջ.:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՄԱՐՏԻՐՈՍՆԵՐ

Այս գլուխին ներքեւ կը համադրենք մեր օրացոյցին անցած այն համաքրիստոնէական վկաները, որոնք նախորդ գլուխներու մէջ յիշուած դասակարգերուն չեն պատկանիր: Առհասարակ սովորական հաւատացեալներ են ասոնք, որոնք իրենց արիւնը թափած են վասն Քրիստոսի եւ այդ իսկ պատճառով արժանի եղած են տարեկան յիշատակութեան:

1. ԱՐԵԻԵԼԵԱՆ ՎԿԱՆԵՐ

Ասոնք Եգէական շրջանի քրիստոնեաներ են, որոնք Իզմիրի մէջ նահատակուեցան 150ական թուականներուն, Իզմիրուհիոյ Հայրապետ Պողիկարպոսէն քիչ առաջ:

Յոյնք՝ Փետր. 23, Լատինք՝ Յնվր. 26, Հայք՝ Բ. Յիս. Գշ.:

2, 3. ՊՐՈՍՏՈՍ ԵՒ ՅԱԿԻՆԹՈՍ

Առաջին անունին յունական եւ լատինական ձեւն է Պրովտոս: Երկու ներքինի ծառաներն են ասոնք Եւգինէ Կոյսին, որուն հետ քրիստոնեայ եղան Եգիպտոսի մէջ եւ որուն հետ վանք մտան (գլուխ Դ թիւ 3-4): Երբ Եւգինէ Կոյսը, իր հօրը նահատակութենէն յետոյ, Հռովմ դարձաւ իր մօրը եւ եղբայրներուն հետ, ասոնք ալ ընկերացան իրենց: Հռովմին մէջ ձերբակալուեցան իբրեւ քրիստոնեաներ. Գաղղիանոս Կայսեր օրով, եւ մերժած ըլլալով կռուքերուն զոհել՝ նախ անգթօրէն ձաղանքի ենթարկուեցան եւ ապա գլխատուեցան 262ին: Պրովտոսի եւ Յակինթոսի գերեզմանները իրենց տապանագրերով, հնագոյն արձանագրութեամբ, անաղարտ գտնուած են Հռովմի մէջ 1845ին: Յակինթոսի գերեզմանին մէջէն ելած են անխացած նշխարները մարտիրոսին, իսկ Պրովտոսի գերեզմանը գտնուած է պարապ վիճակով:

Յոյնք՝ Դեկտ. 24, Լատինք՝ Սեպտ. 11, Հայք՝ Դ. Վարդ. Գշ.:

4. ԲԱՐԱՂԱՄ

Յունական եւ լատինական ձեւն է Բարլամ, իսկ մեր նախնաց մօտ՝ Բարղամ պատուական ծերունի մը, որ ըստ արեւելեան վկայաբանութեան՝ կ'ապրի Անտիոքի շրջանի մէջ Գ. դարուն: Իսկ ըստ արեւմտեանին՝ Կեսարիոյ շրջանէն է եւ կը նահատակուի Դիոկղետիանոս Կայսեր օրով 304ին: Գիւղացի մըն էր, բայց լեցուն հաւատքով եւ աստուածապաշտութեամբ: Իբրեւ քրիստոնեայ ձերբակալուեցաւ եւ հանուեցաւ կայսերական ատեանին առջեւ, որ հրամայեց զոհել կուռքերու: Մերժումին վրայ կայսրը հրամայեց խուճկ դնել իր ափին մէջ եւ վրան ալ կրակ. եթէ խուճկը թափէր կուռքին առջեւ, խուճկ մատուցած պիտի համարուէր ու ազատ պիտի արձակուէր: Առաքելի ծերունին սակայն անշարժ պահեց ձեռքը, մինչեւ որ այրեցաւ ամբողջ ձեռքը, ու այս տանջանքին ներքեւ աւանդեց իր մաքուր հոգին:

Յոյնք եւ Լատինք՝ Նոյ. 19, Հայք՝ Բ. Խաչ. Եշ.:

5. ԱՆՏՈՆԻՆՈՍ

Բազմաթիւ Անտոնինոսներ կան թէ յոյն եւ թէ լատին վկայաբանութեան մէջ: Սա հաւանաբար Աղեքսանդրացին է, որ կ'ապրի Գ. դարու մէջ: Ձերբակալուեցաւ հաւատքի համար եւ համարձակութեամբ յայտարարեց իր քրիստոնեայ ըլլալը: Կախեցին զայն փայտէ եւ չարաչար քերեցին մարմինը երկաթէ ճանկերով, որոնց համբերեց արիաբար: Ի վերջոյ հրաման արձակուեցաւ կրակով վերջ տալ անոր կեանքին: Երբ կրակին քով մօտեցաւ, խօսքը ուղղելով ներկայ բազմութեան՝ ըսաւ «Յիշեցէք, որ Աստուծմէ տրուած հոգի մը ունիք, նայեցէք, որ զայն անաղարտ ներկայացնէք Աստուծոյ առջեւ»: Ապա յօժարութեամբ ու քաջութեամբ մտաւ կրակի մէջ եւ հոգին աւանդեց հրեշտակներու ձեռքը:

Յոյնք՝ Օգոստ. 9.: Աղեքսանդրացի Անտոնինոսի մը հետքին չհանդիպեցանք լատին տօնացոյցին մէջ: Հայք՝ Դ. Հոգ. Բշ.:

6. ՏՐԻՓՈՆ

Փոխաբերութեամբ քրիստոնեայ ընտանիքի զաւակ էր եւ կ'ապրէր Գ. դարու մէջ: Որք մնաց հօրմէն կանուխ տարիքէն. անեցաւ բարեպաշտ

մօրը խնամքին եւ բարեպաշտութեան ներքեւ: Մտաղ տարիքէն գերբնական շնորհներու արժանացաւ եւ բժշկութիւններ կը կատարէր աղօթքով: Դեկոս Կայսեր հալածանքներու ժամանակ ձերբակալուեցաւ եւ ահաւոր չարչարանքներու ենթարկուեցաւ, որոնց տոկաց հրաշալի համբերութեամբ: Ի վերջոյ գլխատուով տիրացաւ մարտիրոսական պսակին:

Յոյնք՝ Փետ. 1, Լատինք՝ Նոյ. 10, Հայք՝ ճգնաւորներու հետ Ա. Մննդ. Բշ.:

7. ԵԼԵԻԹԵՐԻՈՍ (ԵԼԵԻԹԻՐՈՍ)

Յիշուած է իբրեւ վկայ մեր օրացոյցի մէջ, սակայն այս անունով վկայի մը չհանդիպեցանք ոչ մեր Յայսմաւուրքներու մէջ եւ ոչ ալ Յունաց եւ Լատինաց մօտ: Թորգոմ Պատրիարք կը կարծէ, որ ասոր անունը աւելի ճշդիւ պէտք է գրուի Թիւրոս: Արդարեւ այս անունով վկայ դոյութիւն ունի մեր Յայսմաւուրքներէն Մարգուանցիի հրատարակածին մէջ, ինչպէս նաեւ կայ թէ՛ յոյն եւ թէ՛ լատին տօնացոյցներուն մէջ, ըստ որոնց՝ Բիւթանիացի է ան հայրենիքով եւ կը նահատակուի ծանր չարչարանքներով Դեկոսի հալածանքներու ընթացքին Գ. դարու կիսուն: Իրեն հետ կը նահատակուին նաեւ Լիլկոս անուն պատուական քրիստոնեայ մը եւ Կալիմիկոս անուն քուրմը, որ դարձի եկած էր տեսնելով Թիւրոսի չարչարանքներու ատեն պատահած հրաշքերը: Ասոնք երեքը միասին կը տօնուին Յոյն եւ Լատին Եկեղեցիներու մէջ:

Յոյնք՝ Դեկտ. 4, Լատինք՝ Յնվր. 28, Հայք՝ Դ. Վերփոխ. Գշ.:

8. ԿՈՂԻՍԻՆՈՍ

Կողրատիոս կ'ենթարկուի այնպիսի ահաւոր եւ բազմաթիւ չարչարանքներու, որոնցմէ մէկը միայն աւելի քան բաւարար էր մահացնելու ունէ սովորական մահկանացու: Նիկոմիդիա քաղաքէն է եւ չարչարանքի ենթարկուած է Դեկոսի հալածանքներու ընթացքին: Ուրիշ քրիստոնեաներու հետ կ'ելլեն օրուան դատաւորի ատեանին առջեւ: Երբ իրենց անունները կը հարցուի՝ Կողրատիոս առաջ կը նետուի եւ ամէնքի անունով կ'ըսէ, թէ իրենց անունները երկինքը

գրուած են, իրենց քաղաքը Վերին Երուսաղէմն է եւ թէ իրենք Երկնաւոր Թագաւորի ծառաներ են:

Կ'ենթարկուի ահաւոր ճաղանքի՝ այն աստիճան, որ մորթը կ'ուսի եւ կ'արիւնի ամէն կողմէն: Քրիստոնեաներէն ոմանք կը տկարանան տանջանքի ատեն եւ կը զոհեն կուռքերու: Կողբատիտս կը պոռայ անոնց երեսին. «Ի՞նչ պատասխան պիտի տաք, ո՛վ թշուառականներ, Քրիստոսի փառաւոր գալստեան օրը»: Եւ շատ մը յորդորներով կրկին ճշմարիտ հաւատքի կը բերէ զանոնք, որոնք լացով ու կոծով կը զղջան իրենց տկարացումին համար եւ դարձի կու գան: Կողբատիտ կ'աղօթէ անոնց համար: Կրկին անգամ բանտ կը նետուին ու երբ ամուր կը մնան իրենց հաւատքին մէջ, կրակով կը քաւեն իրենց տկարացումը:

Իսկ Կողբատիտս, հակառակ իր ծանր վէրքերուն, տեղէ տեղ կը փոխադրուի. կ'ենթարկուի նաեւ քարկոծման, «սակայն Աստուծոյ խնամքով քարերը իրեն չէին դպնար»: Այլուր, քացախի մէջ աղ խառնելով, կը թափեն վէրքերուն վրայ, հրաշէկ շամփուրներով կողբը կ'այրեն: Ու երբ կը հարցնէին, թէ պիտի զոհէր կուռքերուն, նա կը պատասխանէր. «Տղայութենէս քրիստոնեայ եղած եմ եւ իմ Տէր Յիսուս Քրիստոսէն զատ ուրիշ Աստուած չեմ ճանչցած ու չեմ ճանչնար»: Ձեռուցուած կասկարայի վրայ կը պառկեցնեն, որու ընթացքին ինք սաղմոս կը կարդար եւ չէր զգար այրուցքի կսկիծը: Ի վերջոյ դատաւորը հրամայեց գլխատել զայն:

Յոյնք եւ Լատինք՝ Մայիս 7, Հայք՝ Բ. Հոգ. Բշ.:

9. ՄԱՄԱՍ

Մամասի ծնողքը Պապղագոնիա նահանգի Գանգրա (այժմ Չանդրա) քաղաքէն էին. աղքատ եւ աննշան, բայց քրիստոնեայ եւ բարեպաշտ, որուն համար ալ ձերբակալուեցան ու զրկուեցան Կեսարիա, ուր բանտ նետուեցան: Իր հայրը բանտի մէջ մեռաւ, իսկ մայրը ծնունդ տուաւ Մամասի, բանտի մէջ, ու կարճ ատեն յետոյ մայրն ալ առ Աստուած փոխեցաւ:

Քրիստոնեայ կին մը որդեգրեց Մամասը, սնոյց եւ ուսմունքի դրաւ: Տասնհինգ տարեկանին արդէն իսկ համոզուած քրիստոնեայ

մըն էր եւ քարոզիչ իր կրօնքին, որուն համար ձերբակալուեցաւ ու ենթարկուեցաւ չարհարանքներու, որոնցմէ ազատելով ապաստանեցաւ Արգէոս լեռ, ուր ապրեցաւ ատեն մը ճգնողական առաքինական կեանքով: Որովհետեւ ուրիշ քրիստոնեաներ ալ ապաստանած էին նոյն լեռը, անոնց բնական առաջնորդը դարձաւ իր քարոզչական շնորհին հետ ունէր նաեւ քաղցր ձայն, որով կը խաղաղեցնէր մարդոց հոգիները: Անմեղ կենդանիներն անգամ իր շուրջը հաւաքուեցան, ոչ միայն որովհետեւ առատ ջուր կար իր բնակած վայրը, այլ նաեւ կը պաշտպանէր զանոնք վայրի գազաններէն եւ որսորդներէն: Եղնիկներ իրենց ձագերը իր շրջանակին մէջ կը բերէին. կը կթէր անոնց կաթը, պանիր կը շինէր ու կը բաշխէր աղքատներուն: Կրկին մատնուեցաւ դատաւորին եւ ենթարկուեցաւ խիստ չարհարանքներու: Ի վերջոյ երեքժանի երկաթ գործիքով խոցուեցաւ եւ մարտիրոսացաւ Աստուծոյ ծառան Մամաս, Աւրելիանոս Կայսեր օրով 273ին:

Յոյնք՝ Սեպտ. 2, Լատինք՝ Օգոստ. 17, Հայք՝ Բ. Խաչ. Բշ.:

10. ԹԱԼԵԼԸՈՍ ԲԺԻԾԿ

Կիլիկեցի էր Թալելէոս եւ ճարտար բժիշկ: Ձերբակալուեցաւ Անարզաբա քաղաքին մէջ ու հանուեցաւ ատեան իբրեւ քրիստոնեայ. երբ չուրացաւ իր հաւատքը, իր ոտքերու պնդունքները ծակեցին ու կախեցին ոչխարի պէս: Դահլիճներէն երկուքը տեսնելով անոր հաւատքին ամրութիւնը՝ իրենք ալ քրիստոնեայ դարձան ու անմիջապէս նահատակուեցան եւ կը յիշատակուին իր հետ Լատին Եկեղեցւոյ մէջ Աղեքսանդր եւ Աստերիոս անուններով: Ապա ծով նետեցին Թալելէոսը, ուրկէ հրաշքով ազատեցաւ ու վերստին ելաւ դատական ատեան: Ի վերջոյ տարին զայն Եղեսիա, ուր գլխատուեցան մարտիրոսացաւ Նուամերիանոս Կայսեր օրով 284ին:

Յոյնք եւ Լատինք՝ Մայիս 20ին, Հայք՝ Գ. Հոգ. Եշ.:

11. ՓԻԼԻԿՏԻՄՈՆ

Յոյն եւ լատին վկայաբանութեանց մէջ ծանօթ է իբրեւ Յիլոմենոս, որ կ'ապրի Աւրելիանոս Կայսեր ժամանակ (270-275): Իբրեւ ցորենի վաճառական՝ Անկիւրա (Անգարա) ճամբորդութեան ընթացքին ձերբակալուեցաւ, դառն տանջանքներու ենթարկուեցաւ, հուսկ ապա

ոտքերը իրարու եւ ձեռքերը գլխին գամելով՝ նահատակեցին զայն 274ին:

Յոյնք եւ Լատինք՝ Նոյ. 29ին, Հայք՝ Բ. Խաչ. Բշ.:

12. ԿԻՐԱԿՈՍ ՄԱՆՈՒԿ

Տեսանք իր մօր՝ Յուդիտայի նահատակութիւնը (գլխ. 7, թիւ 20), որմէ անբաժան է ինչպէս ըստ մարմնոյ եւ հոգւոյն, նոյնպէս նահատակութեամբ իր հարազատը՝ Կիրակոս Մանուկը: Իր մայրը դատող ու չարչարող դատաւորը միւս կողմէն կը փաղաքշէր Կիրակոսը զայն սիրաշահելու մտքով, սակայն մանուկը շարունակ կը կրկնէր մօրը ըսածը. «Ես քրիստոնեայ եմ եւ Քրիստոսը կը պաշտեմ», եւ միւս կողմէն կը նեղէր դատաւորը եւ կ'ողջէր միանալ չարչարող մօրը: Այն ատեն դատաւորը նետեց Կիրակոս Մանուկը դատարանի սանդուխներէն վար, որուն գլուխը ջախջախուելով՝ հոգին թեւ առաւ դէպի երկինք՝ խառնուելու համար Բեթղեհէմի Անմեղներու խումբին: Եկեղեցին պատուած է Ս. Կիրակոսը յատուկ շարականով:

Յոյնք՝ Յլս. 15, Լատինք՝ Յնս. 16, Հայք՝ Դ. Վարդ. Բշ.՝ միշտ մօրը հետ միասին:

13-16. ՎԱՂԵՐԻՈՍ, ԿԱՆՏԻՏՈՍ, ԱԿԻՒՂԱՍ ԵՒ ԵՒԳԻՆԷՈՍ

Նահատակակից այս մարտիրոսները Տրապիզոնցի են, որոնք Դիոկղետիանոսի եւ Մաքսիմիանոսի հալածանքներու ընթացքին ապաստանած էին քաղաքի մօտակայքի լեռները: Ի վերջոյ ձերբակալուեցան ու հանուեցան ատենան: Երբ չուրացան իրենց կրօնը, նախ բանտարկուեցան ու ենթարկուեցան անօթութեան ու ծարափ տառապանքներու, ապա ձողանքի եւ այլ բազմաթիւ չարչարանքներու, որոնց սիրով եւ համբերութեամբ տոկացին Աստուծոյ այս ծառաները: Չորսը մէկ նախ կրակի փորձէն անցնելէ յետոյ գլխատմամբ ընդունեցին նահատակութեան անթառամ պսակը:

Յոյնք՝ Յնվր. 21, Լատինաց մօտ ասոնց յիշատակութեան չհանդիպեցանք, Հայք՝ Ե. Վարդ. Բշ.:

17. ՊՂԱՏՈՆ ՎԿԱՅ

Մնած Անկիւրա ազնուական եւ քրիստոնեայ ընտանիքէ: Մտողքը իրեն ներշնչեցին օրօրոցէն բարեպաշտութեան սէրը: Մատաղ տարիքին որբ մնաց. իրեն ինկած ժառանգութիւնը աղքատներուն բաշխեց եւ եռանդով նուիրուեցաւ հեթանոսները դարձի բերելու եւ տկարները պաշտպանելու սրբազան գործին: Ի վերջոյ ամբաստանուեցաւ իբրեւ քրիստոնեայ եւ այսպէս պատասխանեց իրեն եղած հարցումներուն. «Քրիստոնեայ եմ. կը պաշտեմ մէկ Աստուած՝ արարիչը երկինքի եւ երկրի. կ'արհամարհեմ կուռքերը, որոնք մարդոց ձեռագործերն են, կը նողկամ դեւերէ, որոնք երբեմն այս կուռքերու միջոցաւ կը խօսին: Ես պատրաստ եմ արիւնս թափելու Քրիստոսի սիրոյն համար»: Դատաւորը զայրացած հրամայեց ձաղկել զայն արջառաջիլով, որուն տոկաց հրաշալի համբերութեամբ, ապա բանտ նետուեցաւ: Այնտեղ եւ ենթարկուեցաւ ահաւոր չարչարանքներու: Խօսքն ուղղելով անագորոյն դատաւորին՝ ըսաւ. «Գիտցած եղիր, որ Աստուած պիտի վերադարձնէ ինձի այս մարմինը, զոր կ'աշխատիս եղծել ու փչացնել. իսկ քու մարմինդ պիտի այրի անշէջ կրակով»: Տասնըութ օր անսուղ բանտարկութենէ յետոյ, երբ վերահասու եղաւ դատաւորը, որ անկարելի պիտի ըլլար ստիպել զայն, որ զոհէ կուռքերուն, հրաման հանեց, որ չարչարալից կեանքին վերջ տրուի գլխատութեամբ՝ 304ին:

Յոյնք՝ Նոյ. 18, Լատինք՝ Յուլիս 22, Հայք՝ Ը. Խաչ. Գշ.:

18. ԹԷՈՂԻՏՈՆ

Յունաց եւ Լատինաց մօտ ծանօթ է Թէոդոտոս անուամբ: Այստեղ նոյնութեամբ յառաջ կը բերենք Թորգոմ Պատրիարքի գրածը իր մասին:

«Գաղատիոյ Անկիւրա քաղաքէն, եւ գինեվաճառութիւն կ'ընէր, երբ 303ին Դիոկղետիանոսի հալածանքը հրատարակուեցաւ քրիստոնէից դէմ: Օգտուելով իր արհեստին այն հանգամանքէն, որ նուազ կասկածելի կը դարձնէր զինքը հալածողներուն առջեւ, ամէն կերպ օգնութիւն կը հասցնէր բանտարկուած քրիստոնեաներուն. կը թաղէր անոնց մարմինները, հաց եւ գինի կը հայթայթէր Ս. Խորհուրդին համար, իր տունը եկեղեցի եւ ապաստարան կը դարձնէր հալածուած-

ներուն: Երբ Գաղատիոյ Թէոդեկնոս Կուսակալը ջրամոյն մահուամբ նահատակեց վերոյիշեալ եօթը կոյսերը [տե՛ս այստեղ գլ. Դ, թիւ 18- խմբ.], որոնցմէ առաջինը իր մօրաքոյրն էր, եւ անոնց պարանոցին կամ ոտքերուն քարեր կապելով՝ լիճի մէջ խորասոյգ ըրաւ անոնց մարմինները, որպէսզի իրենց հաւատակիցներուն երկիւղածութեան առարկայ չըլլան, ինքը քանի մը ուրիշ քրիստոնեաներու օգնութեամբ ամէն հնարք ի գործ դնելով՝ ջուրէն դուրս հանեց եւ նահապետաց եկեղեցիին մօտ թաղեց զանոնք: Իրողութիւնը յայտնուելով՝ քաղաքին բոլոր քրիստոնեաները ենթարկուեցան ծանր նեղութեանց: Թէոդիտոն ինքնամատոյց եղաւ այն ատեն եւ ամենածանր տանջանքներէ հրաշքով ազատելէ վերջ նահատակուեցաւ գլխատուելով» (ՍՈՒՐԲՔ ԵՒ ՏՕՆՔ, Բ. տպ., էջ 117-118):

Յոյնք եւ Լատինք՝ Մայիս 18, Հայք՝ Գ. Հոգ. Եշ.:

19, 20, 21. ՏԱՐԱԳՈՍ, ՊՐՈՌՈՍ, ԱՆԴՐՈՆԻԿՈՍ

Երեք սրտակից քրիստոնեաներ, որոնք զիրար գտան Տարսոնի մէջ Դիոկղետիանոսի հալածանքներու ժամանակ: Մատնուեցան քաղաքի դատաւորին իբրեւ քրիստոնեաներ եւ ենթարկուեցան բարբարոս տանջանքներու թէ՛ Տարսոն եւ թէ՛ Անարզաբա քաղաքներուն մէջ, ուր ի վերջոյ գլխատմամբ արժանացան մարտիրոսական մահուան:

Յոյնք եւ Լատինք՝ Հոկտ. 12, Հայք՝ Ա. Յիս. Բշ.:

22. ԲԱՐՈՒԼԱ

Դիոկղետիանոսի հալածանքներու շրջանին ՌՈՄԱՆՈՍ կրօնաւորը երբ ձերբակալուած կը դատուէր իր կրօնքին համար, ըսաւ դատաւորին. «Մինչեւ իսկ եթէ ոեւէ մանկան մը հարցնես, թէ ո՞րն է շիտակը՝ երկինքի եւ երկրի արարիչ միակ Աստուածը պաշտելը, թէ շատ մը աստուածներ, քեզի շիտակ պատասխան պիտի տայ»: Արդարեւ կանչեցին պատահական մանուկ մը, որ եղաւ նոյնինքն Բարուկան, որուն երբ ըրին վերոյիշեալ հարցումը, պատասխանեց. «Մարդոց Աստուած կոչածը մէկ պէտք է ըլլայ. մեր պաշտած Աստուածը միածին Որդի մը ունի, որ Հօրը հետ մէկ է: Շատ աստուածներ պէտք

չէ ունենալ, մանուկներ անգամ չեն հաւատար»: Կատղեցաւ դատաւորը եւ տեղնուտեղը սպաննել տուաւ անմեղ մանուկը 303ին:

Յոյնք եւ Լատինք՝ Նոյ. 18, Հայք՝ Թ. Խաչ. Եշ.:

23-27. ԵՒՍՏՐԱՏԻՈՍ, ՕԳՍԵՆՏԻՈՍ, ԵՒԳԷՆԻՈՍ, ՈՎՐԵՍՏԷՍ ԵՒ ՄԱՐԴԱՐԻՈՍ

Թէեւ յուճական անուններով, բայց հայազգի վկաներ են ասոնք Սերաստիոյ շրջանէն, որոնք Դիոկղետիանոսի հալածանքներու ընթացքին իրենց արիւնը թափեցին Քրիստոսի համար:

Եւստրատիոս բարձր դասակարգի պատկանող զօրական մըն էր եւ ծածուկ քրիստոնեայ: Երբ հալածանքի հրովարտակը կարգացուեցաւ հրապարակի վրայ, յայտնեց նաեւ իր քրիստոնեայ ըլլալը: Նախ իշխանական պատիւներէ մերկացուցին զայն, գանակոծեցին եւ բանտարկեցին: Եւստրատիոսի բարեկամներէն մէկը Եւգէնիոս եւս հրապարակեց, որ ինք ալ քրիստոնեայ է, եւ բանտակից եղաւ իր բարեկամին: Եւստրատիոսի ծառաներէն մէկը՝ Մարդայր կամ Մարդարիոս, եւս միացաւ իր տիրոջ՝ յայտարարելով, որ ինք ալ քրիստոնեայ է: Իսկ ուրիշ զինուորի մը՝ Ովրեստէս անուն, վզէն կախուած խաչը նշմարուելով՝ ան ալ խառնուեցաւ անոնց խումբին: Երբ հասաւ նահատակութեան ժամը, նախ գլխատեցին Եւստրատիոսի երէցը՝ Օգսենտիոսը: Իսկ Մարդարիոսի ոտքերուն պճեղները ծակելով գլխիվայր կախեցին եւ ականջներէն շամփուր մխելով նահատակեցին: Եւգէնիոսի ձեռքերը եւ լեզուն կտրեցին, եւ այնպէս աւանդեց իր հոգին: Ովրեստէս երկաթէ հրացեալ մահիճի վրայ այրուելով աւանդեց հոգին: Իսկ Եւստրատիոսը կրակով այրեցին 302ին: Հայց. Եկեղեցին պատուած է այս խումբը յատուկ շարականով:

Յոյնք եւ Լատինք՝ Դեկտ. 13, Հայք՝ Գ. Յիս. Եշ.:

28. ՊԱՆՏԱԼԷՈՆ ԲԺԻԾԿ

Նիկոմիդացի է, որդի հեթանոս հօր եւ քրիստոնեայ մօր: Մայրը, հազիւ քրիստոնէական սերմը ցանած անոր մատաղ սրտին մէջ, մեռաւ: Մանուկը անեցաւ հեթանոս հօր կրօնքին մէջ: Ստացաւ բարձր ուսմունք եւ նուիրուեցաւ բժշկութեան եւ արժանացաւ օրուան կայ-

սեր՝ Մաքսիմինոսի ուշադրութեան, որ յանձնեց զայն իր բժշկապետի խնամքին: Աստուծոյ նախախնամութեամբ հանդիպեցաւ Երմողայոս Քահանային, որ ծլեցուց եւ աճեցուց անոր մէջ բարեպաշտ մօրը նետած սերմերը, ու ան համոզում գոյացուց Քրիստոնէական կրօնքի ճշմարտութեան վրայ: Իր նոր հաւատքին մէջ աւելի ամրացաւ հրաշքով մը: Օր մը շրջագայութեան մը ընթացքին հանդիպեցաւ մանկան մը, որ մեռած էր օձէն խայթուելով, եւ օձն ալ՝ անոր քով: Ներշնչումը ունեցաւ վերահասու դառնալու Քրիստոսի գորութեան եւ ըսաւ. «Ո՛վ մեռեալ մանուկ, ոտքի՛ ելի՛ր յանուն Յիսուսի Քրիստոսի. իսկ դո՛ւն, չար գազան, պատիժը ստացի՛ր քու չարիքիդ, որ գործեցիր այս մանկան»: Նոյն վայրկեանին մանուկը յարութիւն առաւ եւ օձը մահացաւ: Վազեց Երմողայոսի մօտ, պատմեց դէպքը եւ մկրտուիլ խնդրեց անկէ: Իր մէջ արթնցաւ բուռն փափաքը իր հեթանոս հայրը դարձի բերելու ինչ որ յաջողեցաւ իրեն, երբ հօրը ներկայութեան կոյրի մը աչքերը բժշկեց. երկուքն ալ դարձի եկան: Հօր մահէն յետոյ ամբողջ իր ժառանգութիւնը չքաւորներուն համար գործածեց: Իր գործունէութեամբ երեք տեսակ չարիքներու առաջը կ'առնէր Պանտալէոն՝ աղքատութեան, հիւանդութեան եւ մեղքի. վասնզի թէ՛ հիւանդները կը բժշկէր Քրիստոսի անունով, թէ՛ չքաւորներուն կը հասնէր եւ թէ՛ հոգիները դարձի կը բերէր:

Բնական է, որ իր համբաւը եւ ժողովրդականութիւնը արծարծէր նախանձը միւս բժիշկներուն, որոնք ամբաստանեցին զայն Մաքսիմինոս Կայսեր առջեւ (286-305): Հակառակ այն իրողութեան, որ կայսեր ներկայութեան անբուժելի հաշմանդամի մը կատարեալ բժշկութիւն պարգևեց ազօթքով, սակայն կայսրը չբուժուեցաւ իր հոգեկան հաշմանդամութենէն, ընդհակառակը՝ Պանտալէոնը ենթարկեց իր ժամանակի գրեթէ բոլոր ծանօթ չարչարանքներուն, որոնցմէ հրաշքով ազատեցաւ Աստուծոյ ծառան: Մաքսիմինոս, հասկնալէ յետոյ, թէ անոր դարձին պատճառ եղած է Երմողայոս քահանան, նախ նահատակել տուաւ զայն: Ի վերջոյ հրամայեց կայսրը գլխատել Պանտալէոնը: Վկայարանութիւններ կ'ըսեն, թէ արեան տեղ կաթ հոսեցաւ անոր կտրեալ պարանոցէն: Կոչուած է նաեւ Պանտալէիմօն, որ կը նշանակէ «ամենողորմած»՝ իր կատարած անթիւ բարիքներուն հա-

մար, որոնցմէ վերջինը եղած է զինք չարչարողներուն համար թողութիւն խնդրելը:

Յոյնք եւ Լատինք՝ Յլս. 27, Հայք՝ Դ. Խաչ. Ե2.:

29, 30. ԿՈԶՄԱՍ ԵՒ ԴԱՄԻԱՆՈՍ «ԱՆԱՐԾԱԹ»

ԲԺԻՇԿՆԵՐ

Երկու եղբայրներ են ասոնք, որոնք ծնած են Արարեալ եւ կ'ապրին Գ. դարու վերջերը: Իրենց մայրը՝ Թէոդոտիա (Աստուածապարզեւ), շատ առաքինի քրիստոնեայ կին մըն էր, զոր Յոյն Եկեղեցին անցուցած է իր տօնացոյցին: Հակառակ այրիացեալ վիճակին՝ շատ լաւ խնամեց ու դաստիարակեց իր հինգ զաւակները, որոնցմէ վերջին երկուքն էին Կոզմաս եւ Դամիանոս, որոնք հետեւեցան բժշկական արուեստին: Իրենց գիտութեան վրայ աւելցուց Աստուած բժշկութեան շնորհը: Մայրը կրկնեց անոնց Աւետարանի խօսքը. «Զրի առիք, ձրի պիտի տաք»: Արդարեւ կը շրջէին քաղաքէ քաղաք եւ կոյրերուն աչքերուն լոյս կու տային, կաղերը կը քալեցնէին, հաշմանդամները կ'առողջացնէին, դեւերը կը հալածէին եւ ամէն կողմ ուրախութիւն, առողջութիւն եւ խաղաղութիւն կը տարածէին: Եւ որովհետեւ այս բոլորը առանց որեւէ վարձքի կ'ընէին, անոր համար կոչուեցան «Անարծաթ բժիշկներ»: Ձերբակալուեցան իբրեւ քրիստոնեաներ եւ ենթարկուեցան խստագոյն չարչարանքներու, ի վերջոյ գլխատմամբ ստացան մարտիրոսութեան պսակը 285ին՝ Դիոկղետիանոսի իշխանութեան առաջին տարիներուն: Թէ՛ մեր եւ թէ՛ այլոց Յայսմաւուրքներուն մէջ կը յիշուին նաեւ ուրիշ համանուն գոյգ բժիշկ եղբայրներ՝ Եգիպտոս եւ Հուովմ, որոնք կրնան շփոթուած ըլլալ ասոնց հետ կամ ըլլալ անոնց պատմութեան ուրիշ տարբերակները:

Յոյնք՝ Նոյ. 1, Լատինք՝ Սեպտ. 27, Հայք՝ Ե. Յիս. Բ2.:

31. ՀԻՊԻՐԻՔԵԱՆՔ

Եօթը վկաններ են ասոնք Երրորդ Հայք կոչուած Հարաւ Հայաստանի Սամոսատ քաղաքէն, Գաղերիոս կամ Մաքսիմինոս Դած Կայսեր օրով Գ. դարու վերջերը կամ Դ. դարու սկիզբները: Իրենց քաղաքին մէջ կուռքերու ի պատիւ սարքուած տօնակատարութեան մը ըն-

Թացքին Հիպերիքոս եւ իր ընկերը Փիլոթէոս իրենց տունը քաշուած կ'աղօթէին: Ասոնց բարեկամներէն Հինգ Հոգի, որոնք հեթանոս էին, այցելութեան եկան իրենց երկու բարեկամներուն եւ տեսնելով անոնց՝ օրուան տօնին ուրախութեան չմասնակցիլը՝ պատճառը հարցուցին: Անոնք ալ յայտնեցին իրենց քրիստոնեայ ըլլալը եւ սկսան խօսիլ կուռքերուն ոչինչ ըլլալու մասին եւ Քրիստոսը քարոզել: Մարդիկ համոզուեցան, հաւատացին եւ մկրտուեցան: Բոլորը միասին հանուեցան դատական ատեան եւ ամուր մնացին իրենց քրիստոնէական հատքին վրայ: Գանադոնուեցան եւ բանտ նետուեցան: Երկար հարցաքննութեան եւ չարչարանքներու ենթարկուեցան, որոնց ընթացքին ժողովրդային համակրական արտայայտութիւններ եղան ի նպաստ սուրբերուն: Ի վերջոյ հրաման ելաւ խաչել զանոնք քաղաքէն դուրս, եւ յաջորդ օրը, երբ դեռ չէին մեռած, իւրաքանչիւրի գլուխին գամ մը գամելով՝ նահատակեցին:

Յոյնք՝ Յունուար 29, Լատինք՝ Դեկտ. 9, Հայք՝ Է. Խաչ. Գշ.:

32. ԿԱԼԻՆԻԿՈՍ

Գաղատացի քրիստոնեայ մը, որ իբրեւ ձէթի վաճառական տեղէ տեղ կը շրջէր եւ շատեր քրիստոնէական լոյսին կը բերէր: Ձերբակալուեցաւ եւ հրաւիրուեցաւ ուրանալ քրիստոնէութիւնը: Երբ մերժեց, ենթարկուեցաւ չարչարանքի, ի վերջոյ բեւեռալից կօշիկ հագցունելով վազցուցին մինչեւ Գանգուա քաղաքը, ուր կրակին մէջ նետելով՝ նահատակեցին զայն:

Յոյնք եւ Լատինք՝ Յիւ. 29, Հայք՝ Ե. Վարդ. Գշ. կամ Ժ. Խաչ. Բշ.:

33. ԴԻՈՄԵՏԷՍ (ԴՈՄԵՏԻՈՍ)

Տարսնցի քրիստոնեայ ազնուական ընտանիքի զաւակ եւ արուեստով բժիշկ է, ժամանակակից՝ Դիոկղետիանոս Կայսեր: Կը շրջէր կարօտեալ հիւանդներ բժշկելու համար որչափ շնորհիւ իր արհեստին, նոյնքան եւ աւելի՛ հաւատքով: Ծամբորդութեան ընթացքին հասաւ նաեւ Նիկիա, ուր յատկապէս կը սրտապնդէր հայածանքի ենթակայ քրիստոնեաները: Ձերբակալուեցաւ եւ տարուեցաւ Նիկոմիդիա դատուելու համար: Հակառակ մարտիրոսանալու բուռն փափաքին՝ նա-

խախնամութիւնը խնայեց իրեն չարչարանքները, բայց վարձատրեց զայն մարտիրոսական փառքով ու պատուով. զի շղթայակապ չարչարանքի տարուելու ատեն երբ միջոց մը կանգ առաւ աղօթելու համար, այդ վիճակի մէջ աւանդեց իր մաքուր եւ բարեսէր Հոգին 303ին:

Յոյնք եւ Լատինք՝ Օգոստ. 16, Հայք՝ Ժ. Խաչ. Բշ.:

34. ԻՐԱԿԱՓԱՌ

Իրաւափառ անունը Հայերէն թարգմանութիւնն է յունական Թեմիստոկլէս անուան եւ հետեւաբար այս վերջին յունական ձեւով յիշուած է ան Յոյն եւ Լատին եկեղեցիներու տօնացոյցներուն մէջ:

Հովիւ մըն էր ան Փոքր Ասիոյ Լիկիա գաւառէն, Միւռա քաղաքին մօտերը, Դեկտ. Կայսեր (249-251) օրերուն: Երբ վերջինիս հալածանքներու ժամանակ երեւելի քրիստոնեայ մը՝ Դիոսկորիտէս անունով լեռ փախած էր, փնտռողներ հանդիպեցան Թեմիստոկլէսի եւ հարցուցին, թէ տեսած էր փնտռուած մարդը, «Ես պահած եմ զայն եւ երբեք միտք չունիմ յայտնելու անոր թաքստեան տեղը», պատասխանեց համարձակ կերպով: Ձերբակալեցին ու հանեցին զայն օրուան դատաւորին առջեւ, որուն հարցումներուն քաջ պատասխաններ տուաւ: Ենթարկուեցաւ ծանր չարչարանքներու եւ ի վերջոյ երկաթէ փուշերու վրայ քաշկուտուելով՝ աւանդեց իր Հոգին Աստուծոյ ծառան Իրաւափառ 249ին:

Յոյնք եւ Լատինք (Թեմիստոկլէս անունով)՝ Դեկտ. 21ին, Հայք՝ Բ. Յիւ. Բշ.:

35. ԹԷՆՈՎՆԱՍ

Թէոփնաս նախապէս կախարդ մըն էր, որ կանչուեցաւ հակազդելու Թէոպոմպա Եպիսկոպոսին (տես գլխ. Ա. թիւ 15)՝ անսովոր կարողութեան չարչարանքներու տոկալու եւ կրակէն չազդուելու: Սակայն յաղթահարուելով Թէոպոմպա Եպիսկոպոսին իմացական ու բարոյական ոյժէն՝ ընդունեց քրիստոնէութիւնը եւ նահատակուեցաւ նոյն եպիսկոպոսին հետ 304ին:

Յոյնք՝ Յնվր. 5, Լատինք՝ Յնվր. 3, Հայք՝ Դ. Յիւ. Գշ.:

36. ԵՕԹՆ ՄԱՆԿՈՒՆՔ ԵՓԵՍՈՍԻ

Բացառիկ տեղ ունի այս երիտասարդներու պատմութիւնը սրբոց վկայաբանութեանց մէջ, քանի որ կը տարբերի միւսներէն:

Այս եօթը երիտասարդ գինուորները զաւակներն են Եփեսոսի բարձրաստիճան եօթը ընտանիքներու ու կ'ապրին Դեկոս (249-251) Հալածիչ Կայսեր օրերուն: Ասոնք գաղտնապէս քրիստոնեայ եղած էին, սակայն երեւան ելած ըլլալով իրենց քրիստոնեայ ըլլալը՝ Հանուեցան կայսերական ատեանի առջեւ եւ Հրամայուեցաւ իրենց զոհել կուռքերուն: Երիտասարդներ մերժեցին, որուն վրայ զրկուեցան իրենց գինուորական պատիւներէն, ապտակուեցան, անարգուեցան ու դանակոծուեցան: Կայսրը քաղաքէն հեռանալ ստիպուած ըլլալով՝ կը Հրամայէ զանոնք իրենց տունները ղրկել՝ յուսալով, որ կը զղջան եւ իրենց ծնողաց թելադրութեամբ դարձի կու գան: Ատեանէն ելնելէ յետոյ երիտասարդները կ'որոշեն տուն չվերադառնալ, այլ ապաստանիլ քաղաքի մօտակայ լեռան քարայրը եւ ճգնողական կեանք վարել:

Կայսրը վերադարձին կը հետաքրքրուի ասոնցմով եւ երբ կ'իմանայ, որ անյայտացած են, կը Հրամայէ ամէն կողմ փնտռուել կատարել: Ի վերջոյ կը գտնեն զանոնք իրենց քարայրին մէջ, ուրկէ սակայն չեն ուզեր դուրս գալ՝ նախընտրելով այնտեղ մահանալ: Այն ատեն կայսրը, խնայած ըլլալու Համար ասոնց բարձրաստիճան ծնողաց իրենց զաւակներուն չարչարալից ու անարգական մահը, կը Հրամայէ հիւսել քարայրին մուտքը ու ձգել, որ անոնք մեռնին անթոթութենէ եւ օդի պակասէն: Երիտասարդներ խորունկ քուն կը մտնեն: Կ'անցնին տարիներ: Ժամանակները կը փոխուին: Քրիստոնէութիւնը կը յաղթանակէ ու պետական կրօնք կը դառնայ: Մեծն Թէոդոս Կայսեր օրերուն՝ 389ին, այս քարայրի մօտակայ կալուածատէրը կը Հրամայէ բանալ քարայրին մուտքը իր ոչխարներուն իբրեւ փարախ գործածելու Համար զայն: Յաջորդ առաւօտ կ'արթնան քնացող երիտասարդները, որպէս թէ երէկ քնացած ըլլային, երբ իրականին մէջ շուրջ 140 տարի անցած էր իրենց քուն մտնելէն ի վեր: Իրենցմէ մէկը քաղաք կը ղրկեն Հաց բերելու Համար: Դուրս ելլողը տեսնելով, որ ամէն բան փոխուած է իր շուրջը, կը Հարցնէ առաջին Հանդիպած մարդուն, թէ արդարեւ Եփեսոս քաղաքն էր իր տեսածը, թէ տեսիլք մը: Թէեւ դրական պատասխան կը ստանայ, բայց ինքզինքը աւելի

տեսիլքի մը կամ Հրաշքի մը առջեւ գտած կարծելով՝ ի վերջոյ երբ դրամը Հացագործին կու տայ, վերջինս զարմանալով չ'ուզեր ստանալ զայն, քանի որ գործածական դրամ մը չէր տուածը: Ասկէ կը սկսի կծիկին քակուիլը: կը Հանուի կուսակալին եւ քաղաքի եպիսկոպոսին առջեւ, որոնց կը պատմէ, թէ իրենք Դեկոսի Հալածանքներէն ազատուելու Համար լեռ քաշուած են ընկերներով եւ ըսածին ստուգութիւնը Հաստատուելու Համար կը Հրաւիրէ զանոնք միասին երթալ ու տեսնել նաեւ միւս ընկերները:

Այս արտասովոր դէպքին լուրը կը տարածուի ոչ միայն ամբողջ քաղաքին մէջ, այլ նաեւ կը Հասնի օրուան քրիստոնեայ կայսերականին, որ Եփեսոս կու գայ եւ անձամբ կը ստուգէ եղելութիւնը, եւ ամէն ոք փառք կու տայ Աստուծոյ՝ պատահած Հրաշքին Համար, որ Հասարակաց յարութեան մէկ մանրանկարը եւ անոր իրականութիւնը Հաստատող փաստը ըլլալ կը թուէր: Եօթը երիտասարդներ եւս Աստուծոյ գոհութիւն կը մատուցանեն, որ արժանի ըրած էր զիրենք մարմնական աչքերով տեսնելու Հալածուած քրիստոնէութեան յաղթանակը: Այնուհետեւ օրհնութիւնը կը խնդրեն քաղաքի եպիսկոպոսին եւ կ'աղաչեն, որ արտօնուին շարունակելու իրենց առանձնական կեանքը իրենց քարայրին մէջ, քանի որ թէեւ ամէնքի կողմէ յարգանքի եւ սիրոյ առարկայ էին, բայց բոլորովին օտարական կը զգային իրենք՝ զիրենք այս նոր միջավայրին մէջ: Հազիւ Հասած իրենց քարայրը՝ կրկին քուն կը մտնեն ու կ'աւանդեն իրենց Հոգիները: Այնտեղ ալ կը թաղուին, եւ փառաւոր եկեղեցի մը կը կառուցուի քարայրին վրայ: Երիտասարդներուն անուններն են Մաքսիմիանոս, Մարտիանոս, Ամդիբոս, Դիոնեսիոս, Կոստանդիանոս, Անտոնիոս եւ Յովհաննէս:

Յոյնք՝ Օգոստ. 4, Լատինք՝ Յլու. 27, Հայք՝ Թէոդոս Կայսեր հետ՝ Ա. Մանդ. Եշ.:

37. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱՄԱԽՈՐ ԱՂՔԱՏ

Մեծահարուստ իշխանի որդի էր Յովհաննէս եւ իր ծնողքին հետ կ'ապրէին Կ. Պոլսոյ մէջ: Երբ կարգալ սորվեցաւ, ծնողքը անոր տուին Աւետարան մը, որուն տուփը ոսկեգօծ եւ թանկագին քարերով զարդարուած էր: Մատաղ տարիքին ծնողքէն գաղտնի վանք մտաւ. ուր այնքան յառաջացաւ կրօնաւորական ճգնութեան մէջ, որ ամէնքին հիւ-

ցումը իր վրայ հրաւիրեց: Սակայն ժամանակ մը վերջ իր ծնողաց կարօտով ֆիզիքապէս սկսաւ մաշիլ: Վանահայրը արտօնեց, որ երթայ տեսնէ իր ծնողքը: Ծամբան իրմէ աւելի աղքատ հագուստներ հագած մէկու մը հանդիպելով՝ փոխանակեց իր զգեստները անոր հետ եւ իբրեւ մուրացիկ եկաւ, իրենց տանը դիմացի անկիւնը խղիկ մը հաստատելով՝ այնտեղ բնակութիւն հաստատեց: Աստուծոյ փառք կու տար երբեմն երբեմն իր ծնողաց երեսը տեսնելով, որոնց սակայն չէր յայտնած իր ինքնութիւնը: Ծնողքը ողորմելով իր խղճալի երեւոյթին՝ անոր կը ղրկէին իրենց սեղանէն աւելցած կերակուրները, որմէ փոքր մաս մը վերցնելէ յետոյ մնացեալը ուրիշ աղքատներուն կու տար: Զարաչար հիւանդացաւ, մարմինը որդնալից եղաւ եւ այնքան ժահահոտ դարձաւ, որ մայրը հրամայեց հեռացնել զայն այնտեղէն: Երբ դռնապանը եկաւ հեռացնելու, Յովհաննէս խնդրեց անկէ, որ գէթ ժամանակ մը թոյլատու ըլլայ, որովհետեւ շուտով պիտի մեռնէր արդէն: Դռնապանը ծնողաց դուրս ելնելու ատեն կ'ազդարարէր իրեն եւ ինք այդ պահուն կը հեռանար իր խուղէն:

Երբ զգաց, որ պիտի մեռնի, կանչեց դռնապանը, շատ շնորհակալ եղաւ իր թոյլտուութեան համար եւ խնդրեց անկէ, որ ըսէ տանտիկնոջ, թէ իրենց տան դիմացի աղքատը մեռնելու վրայ է եւ կը խնդրէ զինք տեսնել երկու խօսք ընելու համար: Իր ժահահոտութեան համար մայրը նախ չուզեց գալ: Յովհաննէս դարձեալ խնդրեց դռնապանէն, որ երթայ ըսէ անոր, թէ Յիսուս անգամ կ'ըսէ. «Երանի աղքատաց, զի այնպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը», եւ թերեւ Աստուած ալ ողորմի իրեն՝ աղքատի մը այցելելու իր այս բարիքին համար:

Երբ եկաւ մայրը, իր Աւետարանը հանելով անոր տուաւ: Կինը ճանչցաւ Աւետարանը, կանչեց նաեւ իր ամուսինը եւ ուզեց գիտնալ, թէ ուրիշ ստացած էր զայն: Յովհաննէս ըսաւ. «Երդում ըրէք, որ ըսածս պիտի գործադրէք, այն ատեն կ'ըսեմ ձեզի ամէն բան»: Ծնողքը խօսք տուին: Յովհաննէս ըսաւ. «Շատ պիտի խնդրեմ, որ զիս թաղէք այս խուղին մէջ, վրաս եղած մազեղէն ցնցոտիներով. ոչ նոր զգեստ եւ ոչ ալ փառաւոր թաղում. ես ձեր որդին Յովհաննէսն եմ», ու աւանդեց հոգին: Ու կ'աւելցնէ վկայաբանութիւնը. «Անուշ հոտ մը բուրեց անկէ»: Մայրը իմանալով ասիկա՝ ինկաւ ու նուազեցաւ: Լուրը տարածուեցաւ ամբողջ քաղաքին մէջ: Ծնողքը ուզեցին մեծագին

զգեստներ հագցնելով՝ փառաւոր թաղում կատարել, սակայն իրենց խոստումը յիշելով՝ իր եղածին պէս թաղեցին զայն իր խուղին մէջ եւ իրենք ալ բարեպաշտութեամբ ու բարեգործութեամբ կնքեցին իրենց կեանքը:

Թէեւ մեր մէջ Յովհաննէս Գրեցին (տես գլխ. Բ., թիւ 8) եւ Յովհաննէս Կամաւոր Աղքատը իբրեւ տարբեր անձեր կը տօնուին, բայց ըստ երեւոյթին մէկ եւ նոյն անձն են երկուքը եւ երկու պատմութիւնները տարբերակներն են նոյն անձի վարքին:

Յոյնք եւ Լատինք՝ Յնվր. 15 «խղաբնակ» անուամբ, Հայք՝ Գ. Յիս. Բշ.:

38. ԻՆԴՈՍ

Ներքինի մըն էր Դիոկղետիանոսի արքունիքին մէջ, ի նիկոմիդիա, որ Դոմնա քրմուհիին հետ (տես. գլխ. Դ., թիւ 22) քրիստոնեայ լինելով նախ բանտարկուեցան, եւ ապա Ինդոսի պարանոցը երկանաքար կապելով՝ ծով նետեցին, եւ այս կերպով ընդունեց մարտիրոսական պսակը 303ին:

Յոյնք եւ Լատինք՝ Դեկտ. 28, Հայք՝ Դ. Յիս. Եշ.:

39. ԵՐԿՈՒ ԲԻԻՐՔ

Դիոկղետիանոսի հալածանքի օրերուն, երբ Քրիստոսի Ծննդեան տօնին օրը նիկոմիդիոյ քրիստոնեաները հաւաքուած էին իրենց եկեղեցիին մէջ պաշտամունքի համար, կայսրը կուռք մը դնել տուաւ եկեղեցիի դրան առջեւ՝ հրամայելով, որ դուրս ելլողը երկրպագէ կուռքին: Ջերկրպագողներ մահուամբ պիտի պատժուէին: Ոչ ոք հնազանդեցաւ այս հրամանին: Այն ատեն կայսրը հրամայեց հրդեհել եկեղեցին, որուն մէջ այրեցաւ ամբողջ ներկայ ժողովուրդը, որ մեր օրացոյցին անցած է «երկու բիւր», այսինքն «քսան հազար» անուան տակ:

Յոյնք եւ Լատինք՝ Դեկտ. 28, Հայք՝ Դ. Յիս. Եշ.:

40. ՂԱՄՊԷՈՍ

Յունական ձեռով եւամպիրոս, որուն վարքը եւ մարտիրոսութիւնը անբաժան է իր քրոջմէն՝ Ղամպէուհի կամ եւամպիրա կոչուած (տես գլխ. Դ, թիւ 17): Կ'ապրին Մաքսիմինոս հալածիչ Կայսեր օրերուն (284-305) Նիկոմիդիա քաղաքը: Ձերբակալուեցաւ իբրեւ քրիստոնեայ եւ կը բռնադատէին զայն, որ զոհէ կուռքերուն: Երբ մերժեց, մերկացուցին եւ արջառաջիլով ձաղկեցին զայն ու բանտարկեցին: Ապա կրակի եւ այլ տանջանքի փորձերէն ազատելով՝ սուրով ստացաւ նահատակութեան պսակը:

Յոյնք եւ Լատինք՝ Հոկտ. 10, Հայք՝ Բ. Վարդ Բշ.:

41, 42. ՄԱՐԿԻՍԱՆՈՍ ԵՒ ՄԱՐՏԻՐՈՆ

Երկու աւագ դպիրներ են ասոնք, որոնք միաժամանակ կը կատարէին նոտարութեան պաշտօն Կ. Պոլսոյ Պատրիարքարանի մէջ եւ սերտօրէն կապուած էին օրուան Պօղոս ուղղափառ Պատրիարքին Դ դարու կէսերուն: Օրուան կայսրը՝ Կոստանդինոս, որ Արիոսական եղած էր, պաշտօնանկ ըրաւ Պօղոսը եւ աքսորեց Բիւզանդական Հայաստանի Կոկիսոն քաղաքը: Իր Արիոսական յաջորդները երբ իմացան, որ Պօղոս այդ շրջաններու մէջ ալ կը վերահաստատէ Նիկիոյ դաւանանքը, հրաման ղրկեցին, որ Պօղոսը մէջտեղէն վերցնեն: Իր պահակները խեղդեցին սուրբ Հայրապետը: Ասիկա իմանալով՝ իր նոտարները՝ Մարկիանոս եւ Մարտիրոն, ժողովուրդին մէջ տարածեցին, թէ Նիկիոյ հաւատքի պաշտպան ու քարոզիչ ըլլալուն համար սպանուեցաւ Պօղոս Պատրիարքը: Որուն վրայ քաղաքին Արիոսական եպարքոսը հրամայեց գլխատել զանոնք 350ական թուականներուն:

Յոյնք եւ Լատինք՝ Հոկտ. 25, Հայք՝ Ը. Խաչ. Եշ.:

43. ԱԼԵՔՍԻՈՍ ԿԱՄԱԽՈՐ ԱՂՔԱՏ

Հռովմայեցի ազնուական ու բարեպաշտ ծնողաց որդին էր Ալեքսիոս, որ իր ամուսնութեան գիշերը գաղտնաբար փախաւ արեւելք եւ Եդեսիա քաղաքի մէջ ինքզինքը ճգնողական կեանքի նուիրեց Ե. դարու առաջին քառորդին: Իր սրբութեան համբաւը ամէն կողմ տարածուած ըլլալով՝ այս անգամ ալ ետ՝ արեւմուտք փախաւ եւ իբրեւ մու-

րացիկ ապրեցաւ իր հօրենական տան սանդուխներուն տակ առանց ինքզինքը յայտնի ընելու: Մահէն յետոյ իր վրայէն ելած գրութիւնէ մը հասկցուեցաւ անոր ինքնութիւնը, եւ հայրն ու մայրը ինկան անոր վրայ ու դառնօրէն լացին, որ այսքան տարի իրենց յարկին տակ ապրած էր իրենց կորսնցուցած միակ որդին եւ իրենք չէին ճանչցած եւ մուրացկանի տեղ դրած էին զայն: Ապա մատուռ շինուեցաւ իր ճգնած տեղին վրայ:

Յոյնք՝ Մարտ 17, Լատինք՝ Յուլիս 17, Հայք՝ Գ. Յիս. Բշ.:

44. ՈՐՄՁԴԱՆ

Պարսիկ քրիստոնեայ նախարար մըն է Պարսկական արքունիքին մէջ Յազկերտ Ա ի օրով: Անուան պարսկական ձեւն ըլլալ կը թուի Որմիզդ կամ Հիւրմիզ: Երբ մերժեց հրաժարիլ Քրիստոնէական կրօնքէն, պաշտօնանկ եղաւ եւ զրկուեցաւ իր դասակարգի բոլոր պատիւներէն եւ զրկուեցաւ արքունիքի ուղտերը արածելու: Ժամանակ մը վերջը, երբ Որմիզդ աղքատութեան եւ թշուառութեան մէջ կը տուայտէր, թագաւորը ազնուականի շապիկ մը ղրկեց իրեն՝ ըսելով. «Յիշէ՛ նախկին ազնուականութիւնդ եւ վերադարձի՛ր մեր կրօնքին»: Որմիզդ շապիկը կտոր կտոր ըրաւ եւ ետ ղրկեց թագաւորին՝ ըսելու համար, որ իրեն համար աւելի փառաւոր պատմուճան վերապահուած էր երկինքի արքայութեան մէջ: Ասոր վրայ թագաւորը հրամայեց գլխատել զայն:

Ասոր տօնակատարութեան հետքին չհանդիպեցանք յոյն եւ լատին վկայաբանութեանց մէջ: Թէեւ իր տօնակից Բենիամին Սարկաւազը յիշուած է երկու Եկեղեցիներէն ալ Մարտ 31ին, մենք կը յիշատակենք Գ. Մննդ. Բշ.:

45. ՍԱՅԻՆ

Այս ալ ազգով Պարսիկ է և քրիստոնեայ եղած բարձրաստիճան պաշտօնատար մըն է: Շատ անգամ ստիպումներ եւ բռնութիւններ ի գործ դրուեցան իր վրայ վերստին կրակապաշտութեան դարձնելու, ինչ որ խստիւ մերժեց Սային: Ինք ունէր աւելի քան հազար ծառաներ: Նոյն Յազկերտ Առաջին թագաւորը հրամայեց պատուազուրկ ընել զայն, իր դիրքը եւ պաշտօնը, ինչպէս նաեւ իր կինը իր ծառաներէն ամէնէն անարգին տրուեցան եւ հրամայուեցաւ, որ ինք անոր ծա-

ուան ըլլայ: Աստուծոյ ծառան սիրով յանձն առաւ այս նուաստութիւնը՝ յիշելով իր Տէրը, որ ծառայէն ապտակուած էր: Ի վերջոյ ինք ալ սուրով ստացաւ նահատակութեան պսակը 418ին:

Ասոր ալ յիշատակութեան չհանդիպեցանք Յունաց կամ Լատինաց մօտ: Իսկ մեր մէջ կը տօնախմբուի վերոյիշեալ Պարսիկ սուրբերուն հետ Գ. Ծննդ. Բշ.:

46. ՅԱԿՈՎԻԿ

Ազնուական մը Պարսիկ արքունիքին մէջ Յագկերտ Ա.ի օրով, քրիստոնեայ եղած ամբողջ տունով: Այնքան սիրով կապուած էր իր թագաւորին հետ, որ վերջինիս թախանձանքներուն չդիմանալով՝ տկարացաւ ու վերադարձաւ Պարսիկ դեմին: Մայրը եւ կինը ուժգնորէն յանդիմանեցին զայն իր այս տկարութեան համար, որուն վրայ զղջաց Յակովիկ եւ բոլոր սրտով կրկին վերադարձաւ ճշմարիտ հաւատքին: Թագաւորը երբ լսեց, փորձեց կրկին կրակապաշտութեան առաջնորդել զայն, բայց այս անգամ անկարելի եղաւ խախտել Յակովիկը իր հաւատքէն. որուն վրայ թագաւորին նախկին համակրանքը զայրոյթի փոխուեցաւ, եւ հրամայեց կտոր կտոր ընել զայն: Սկսելով իր մատներէն՝ մէկիկ մէկիկ կտրեցին զանոնք, ապա ամբողջ ձեռքերը եւ բազուկները եւ հուակ ապա նոյն կարգով կտրեցին նաեւ ոտքին մատները, ոտքերը եւ սրունքները: Այս պատճառով ալ կոչուեցաւ «Բազմահատ»: Այս բոլոր խժոճով չարչարանքներու մէջ ինք շարունակ կ'աղօթէր Աստուծոյ եւ կը բարեխօսէր աշխարհի համար: Ի վերջոյ գլուխն ալ կտրելով՝ արժանացուցին զայն յաւերժօրէն միանալու իր յաւիտենական Զօրագլուխին՝ Յիսուս Քրիստոսի, 421ին:

Յոյնք եւ Լատինք՝ Նոյ. 27, Հայք՝ Բ. Յիս. Բշ.:

47. ԱԲԴԼՄՍԵՀ

Ծագումով Հրեայ է. կ'ապրի Պարսկաստանի մէջ. նախկին անունը Ասեր եղած է. մկրտութեան ատեն ընկերները կու տան իր նոր անունը՝ Աբդմաննի կամ Ապտիւ-Մեսիհ, որ կը նշանակէ Ծառայ Քրիստոսի: Իր ծնողքը մեծահարուստ Հրեաներ են եւ ունին բազմաթիւ զաւակներ, որոնց կրտսերն է Ասեր, որ Դաւթի պէս կ'արածէ հօրը ոչխարները եւ արջառները: Իր հօտին ջուր տալու համար կու գար որոշ տեղ

մը, ուր կը հաւաքուէին նաեւ միւս հովիւները, քրիստոնեայ տղաք մէկ խումբ կը կազմէին եւ Պարսիկ կրօնքին հետեւող տղաք ալ՝ տարբեր խումբ մը, իսկ Ասեր առանձինն կը մնար, քանի որ իրմէ զատ Հրեայ խաշնարած տղայ չկար: Ինք կը փափաքէր քրիստոնեայ խումբին հետ ըլլալ, ուստի օրին մէկը ուզեց միանալ անոնց: Անոնք ըսին, որ մինչեւ քրիստոնեայ չըլլար, չէր կրնար իրենց խումբին խառնուիլ: Ասեր ընդունեց քրիստոնեայ ըլլալ: Որովհետեւ մօտակայքը քահանայ կամ եկեղեցի չկար, Ասեր խնդրեց, որ իրենցմէ մէկը կատարէր մկրտութիւնը: «Եթէ ճշմարիտ է ձեր ըսածը, թէ Քրիստոս մարդասէր է», - ըսաւ Ասեր, - «պիտի ընդունի իմ յօժարութիւնս եւ ինք պիտի մկրտէ զիս ձեր ձեռքով»: Տղաք տեսելով իր սիրայօժար փափաքը եւ հաւատքը՝ մտցուցին զայն ջրհորի քովի աւազանը եւ «Ծառայն Քրիստոսի (իրենց բարբառով՝ «Աբդլ-Մեսիհ») կը մկրտուի յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ» ըսելով՝ մկրտեցին զայն, ու այդ վայրկեանէն անունը մնաց Աբդլմեսիհ: Ուրախութեամբ ողջագուրուեցան տղաք նոր մկրտեալին հետ եւ եղբայրացան անոր հետ եւ նստան ու միասին կերան իրենց կերակուրը:

Քրիստոնեայ ընկերները սակայն մտահոգուած էին, թէ ի՞նչ ընեն, որ Աբդլմեսիհ անգամ մըն ալ չդառնայ Հրէութեան: Ի վերջոյ որոշում տուին, իբրեւ մշտնջենական յիշատակ Քրիստոսի ծառայութեան եւ Հրէութենէ բաժնուած ըլլալուն, ծակել նոր մկրտեալին ականջի բլթակը եւ գինդ մը անցունել, ինչ որ հաճոյ թուեցաւ նաեւ Աբդլմեսիհի: Երբ այս կերպով տուն վերադարձաւ Աբդլմեսիհ, պատմեց մօրը ամէն անցած դարձածը: Իմաստուն ու բարի մայրը այնպէս մը ըրաւ, որ հայրը չիմանար պատահածը: Գիշեր մը երբ Աբդլմեսիհ քունին մէջ կը խօսէր, մայրը արթնցուց զայն եւ հարցուց, թէ որո՞ւ հետ կը խօսէր. պատանին պատմեց, որ Քրիստոսը տեսած էր երագին մէջ, որ գինքը կը հանէր խաւարին գուբէ մը եւ կը խառնէր մատաղ պատանիներու խումբի մը հետ, որ փառքով պսակուած՝ զԱստուած կ'օրհնէին մեծ ուրախութեան ու երջանկութեան մէջ: Եւ սկսաւ պատմել մօրը իր գիտցածը Քրիստոսի մասին եւ մանաւանդ նկարագրել այն անպատում փառքը եւ երջանկութիւնը, զոր կը վայելէին Քրիստոսի հետեւողները երկինքի մէջ. ուստի եղբակացուց պատանին. «Դու՛ն ալ հաւատա, մայր իմ, որուն որ ես հաւատացի, որպէսզի յաւիտեան

միասին ըլլանք»։ Աստուծոյ լոյսը ծագեցաւ նաեւ այս բարի կնոջ սրտին մէջ, եւ ինք ալ ճշմարիտ հաւատքի եկաւ։

Հրէական տօնի մը ընթացքին հայրը մարդ դրկեց ու կանչեց նաեւ Ասերը։ Երբ վերջինս երեւցաւ իր ականջին գինդով, զարմացաւ ու զայրացաւ հայրը իր զակի ականջին ծառայութեան նշանը տեսնելով։ «Մի՛ խոռովիր, հայր իմ, - ըսաւ տղան, - ես զիս Քրիստոսի ծառայ դարձուցի եւ այժմ քրիստոնեայ եմ»։ Կատղեցաւ հայրը, սկսաւ ապ- տակել տղան, գետին նետեց եւ ոտքի կոխան ըրաւ զայն բազմութեան մէջ։ Ի վերջոյ երբ անկարելի եղաւ դարձի բերել իր տղան, հայրը մոռնալով հայրական սէրը՝ քաշեց դաշոյնը եւ մխեց որդւոյն սրտին՝ խառնելով զայն այն պսակաւոր ու երջանիկ երիտասարդներուն գունդին, զորս տեսած էր Աբդմսեհ երազին մէջ։

Իր յիշատակութեան հետքին չհանդիպեցանք յոյն եւ լատին տօնացոյցներու մէջ։ Հայք՝ Բ. Յիս. Բշ.։

48. ԱԿԱԿԻՈՍ ՎԿԱՅ

Լատին Եկեղեցիի մէջ մէկ Ակակիոս կը յիշուի, ան ալ երէց մըն է. կայ նաեւ Ակաթիոս զօրավար մը՝ Բիւզանդիոն նահատակուած, կան նաեւ Ակատիոս անունով սուրբեր։ Իսկ Յոյն Եկեղեցոյ մէջ կան բազմաթիւ Ակակիոսներ. ասոնցմէ որո՛ւն հետ պէտք է նոյնացնել մեր մէջ տօնուող Ակակիոսը՝ դժուար է ըսել։ Յունաց մօտ կայ Ակակիոս մը, որ Կողբատիոսի հետ տօնելի է, ինչպէս է պարագան մեր մէջ։ Ասոր մասին սակայն ոչինչ ըսուած է յոյն վկայաբանութեան մէջ, բացի յիշուելէ, որ կը տօնուի Մարտ 4ին։

Մենք պիտի նոյնացնենք Փեշտիմալճեանի խմբագրած Յայսմա- ւուրքի Յունիս 11ի եւ Մարզուանցիի հրատարակածին Յունիս 10ի մէջ յիշուած Ակակիոսի հետ, որ Յունաց եւ Լատինաց մէջ յիշուած է Յունիս 28ին, լատիներէն Ակակիոս եւ Ֆրանսերէն Ակակ ձեւով։ Ըստ ասոնց՝ Ակակիոս «մանուկ էր հասակաւ» եւ կ'ապրի Լիկիանոս (307-323) Կայսեր օրով։ Ենթարկեցին զայն գանակոծումի, ապա յանձնեցին Տերենտիոս Եպարքոսին, որ նախ ձէթով եւ ճարպով տաքցուած կաթնային մէջ նետեց, որմէ Աստուծոյ հրաշքով անվնաս ազատեցաւ, ապա տարուեցաւ բազին եւ բռնադատուեցաւ զոհել կուռքերուն, որոնք սակայն սուրբին աղօթքով կործանեցան։ Գազաններուն առջեւ

նետուեցաւ, գազաններ իրեն չվնասեցին։ Ի վերջոյ տարուեցաւ Մելի- տինէ քաղաքը, ուր բանտարկուեցաւ ոտքերը փայտի մէջ առնուած։ Երբ տակաւին շարունակեց ամուր մնալ իր կրօնքին վրայ, հրա- մայուեցաւ գլխատել զայն 310ին։

49. ԱՐԵԹԵԱՆՔ ԿԱՄ ԽԱՐԵԹԵԱՆՔ

Վերջինն է սուրբերու այս խումբը, զոր հիւրընկալած է Հայոց եկեղեցին իր տօնացոյցին մէջ՝ առնելով քոյր եկեղեցիներէ։ Ազգով Հապէշ են ասոնք, Եթովպիոյ Նեգրան քաղաքէն, եւ կ'ապրին Յուս- տինիանոս (518-527) Կայսեր օրով։ Այդ դարուն Հրեաներ զօրացած էին Եթովպիոյ մէջ եւ իրենցմէ մին ինքզինքը թագաւոր հռչակած էր Ոմերիտ քաղաքին եւ օր մը ուզեց տիրել նաեւ Նեգրանին։ Պաշարեց, բայց չկրցաւ գրաւել զայն. ուստի խոստացաւ, որ ոչ ոքի պիտի վնասէ, եթէ քաղաքի դռները բանան եւ իրեն հպատակին։ Մարդիկ հաւա- տացին իր խօսքին եւ քաղաքը յանձնեցին։ Դրժեւով իր խոստումին՝ Հրեայ յափշտակիչը հրամայեց, որ քաղաքի քրիստոնեայ բնակիչնե- րը Մովսիսական կրօնքը ընդունին։ Քրիստոնեաներ միահամուռ մեր- ժեցին ու նահատակուեցան։ Լատին վկայաբանութիւնը անոնց թիւը կը նկատէ 340, զոր մեր Յայսմաւուրքը լոկ Խարեթասի հետ նահատա- կուողներուն թիւը կը նկատէ, իսկ ամբողջ քաղաքի նահատակուողնե- րուն թիւը 10,200 կը բարձրացնէ։ Խարեթաս քրիստոնեայ քաղաքին կառավարիչն էր, նախքան նահատակուիլը համարձակութեամբ Հրեայ իշխանաւորին երեսին զարկաւ անոր խոստումնադրուծ ըլլալը եւ մարդարէացաւ, թէ կարճ ժամանակէն Աստուած պիտի ջնջէ անոր իշխանութիւնը, ինչ որ արդարեւ կատարուեցաւ, քանի որ Հապէշ ուրիշ քրիստոնեայ իշխան մը՝ Ելեսբովամ անուամբ, յարձակելով Հրեայ բռնակալին վրայ՝ սպաննեց զայն ու վերջ տուաւ անոր բռնա- կալութեան։

Յոյնք եւ Լատինք՝ Հոկտ. 24, Հայք՝ Զ. Խաչ. Եշ.։

50. ԲԱԲԵԼԱՍ ԾԵՐՈՒՆԻ ԵՒ 84 ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Թորգոմ Պատրիարք Գուշակեան հետեւեալը կ'ըսէ ասոնց մասին. «Բաբելլաս Մաքսիմիանոս Կայսեր օրով ձեր ուսուցիչ մըն էր Բիւթանա- կան քաղաքի մը մէջ, ուր քրիստոնէից մանուկները կը կրթէր Ս. Գրոց

ուամամբ՝ Հեթանոսներուն եւ քարոզելով Աւետարանի հաւատքը: Կայսրը իր մասին տեղեկութիւն առած ըլլալով՝ երբ հարցուց իրեն, թէ ինչու օտարը կը սորվեցնէ եւ ոչ՝ իրենցը, ծերունին պատասխանեց. «Որովհետեւ քրիստոնէիցն է ճշմարիտ կրօնը»: Ասոր վրայ խորտակեցին անոր ծնօտն ու ատամները եւ ապա գլխատեցին զայն, իրեն հետ նաեւ, իբրեւ անարատ գառնուկներ, ութսունչորս մանուկները, որոնց ծնողքները երբ տրտմալից խնդութեամբ կը թաղէին զանոնք իրենց վարդապետին հետ, կը հաւատային անարատ որոջներ ընծայել Աստուծոյ»:

Հայք՝ է. Խաչ. Գշ.:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՏԻԵՋԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Կ'ենթադրենք, որ Հայ Եկեղեցիին միայն յատուկ է տարեկան տօնախմբութեամբ յիշատակել տիեզերական ժողովներու մասնակցող հայրապետները հաւաքաբար:

Քրիստոնէական Եկեղեցին, հետեւելով Գործք Առաքելոցի մէջ տրուած սքանչելի օրինակին (գլ. ԺԵ), իր վիճելի մեծ խնդիրները փորձած է լուծել Եկեղեցիի առաջնորդող ղէմքերու հաւաքական խորհրդակցութեամբ: Այս հաւաքոյթներէն ոմանք կոչուած են «ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ», որովհետեւ գումարուած են լուծելու համար որոշ շրջանի մը վերաբերեալ հարցերը, իսկ ուրիշներ՝ «ՏԻԵՋԵՐԱԿԱՆ», որովհետեւ գումարուած են հարթելու համար այնպիսի խնդիրներ, որոնք կը շահագրգռէին Ընդհանրական Եկեղեցին, եւ հետեւաբար այս ժողովներուն հրաւիրուած են առհասարակ Քրիստոնէական Եկեղեցիի բոլոր եպիսկոպոսները: Այս ժողովները, ըլլան տեղական կամ տիեզերական, միշտ բաղկացած են եպիսկոպոսներէ, ներառեալ բնականաբար արքեպիսկոպոսները կամ պատրիարքները, ինչպէս նաեւ յայտնի աստուածաբան վարդապետները. ուրիշ խօսքով՝ բացի հրաւիրող կայսրերէն, այսպէս կոչուած աշխարհական հաւատացեալներ չեն մասնակցած: Այնպէս որ արդարապէս կրնանք կոչել ասոնք տեղական կամ տիեզերական Եկեղեցիին «եպիսկոպոսական ժողովները»:

Ասոնց որոշումները՝ վարդապետական, ծիսական, կարգապահական ու կանոնական բոլոր հարցերուն մասին, միշտ պարտադիր ճանչցուած են իրենց շրջանին հաւատացեալներու կամ Եկեղեցիի ընդհանրութեան կողմէ, նայած թէ գումարուած ժողովը տեղակա՞ն է, թէ տիեզերական: Չանոնք չընդունողները նկատուած են հերետիկոս կամ հերձուածող եւ Եկեղեցիի մարմինէն դուրս յայտարարուած են: Տեղական ժողովները հրաւիրած են շրջանի պատրիարքները կամ մետրոպոլիտները, իսկ տիեզերական ժողովները, առ ի չգոյ՛ն ընդհանու-

րին կողմէ ճանչցուած ՄԻԱԿ հոգեւոր գլուխի մը, հրաւիրուած են ամէնքի կողմէ ընդունուած աշխարհական պետին, այսինքն Բիւզանդիոնի կայսրերու կողմէ, որոնք միաժամանակ նշանակած են նախագահող հոգեւորականը:

Բիւզանդական կամ Օրթոտոքս Եկեղեցին կ'ընդունի ԵՕԹԸ տիեզերական ժողովներ, բոլորն ալ գումարուած Արեւելքի մէջ, առհասարակ Բիւզանդիոնի կամ անոր շրջակայ քաղաքներու մէջ: Իսկ Հռովմէական Եկեղեցին այս եօթի վրայ յաւելուածաբար կ'ընդունի նաև 14 ուրիշ ժողովներ, զորս եւս «տիեզերական» կը կոչէ: Այս յաւելուածականները բոլորն ալ գումարուած են Արեւմուտքի մէջ. բացի առաջինէն, որ տեղի ունեցած է Կ. Պոլսոյ մէջ 869-70ին. մնացեալ 13 ժողովները առհասարակ հրաւիրուած ու նախագահուած են Հռոմի պապերուն կողմէ, եւ ժողովին մասնակցողները ընդհանրապէս բաղկացած են Հռոմի ենթակայ եպիսկոպոսներէ, հետեւաբար կրնան նկատուիլ Հռովմէական Եկեղեցիի «տեղական ժողովները»: Իսկ եթէ ասոնցմէ ոմանց արեւելքցիներն ալ մասնակցած են, այդ ըրած են քաղաքական ակնկալութիւններով կամ եղած են Հռովմի գերիշխանութիւնը ընդունած եպիսկոպոսներ. ամէն պարագային մասնակցած են իրենց անհատական հանգամանքով եւ ո՛չ որպէս ներկայացուցիչները իրենց իրապէս կամ անուանապէս պատկանած Եկեղեցիներուն:

Իսկ Հայց. Եկեղեցին, ինչպէս նաև Արեւելեան առաքելական ու ազգային միւս Եկեղեցիները, այսինքն Եգիպտական, Եթովպական, Ասորական եւ Մալապարի Հնդկական Եկեղեցիները, կ'ընդունին լոկ ԵՐԵՔ տիեզերական ժողովներ, որոնց կ'անդրադառնանք այս գլուխով:

1. ՆԻԿԻՈՅ ԺՈՂՈՎԸ 325ԻՆ

Առաջին Տիեզերական ժողովը գումարուած է առաջին քրիստոնեայ կայսեր՝ Կոստանդինոսի հրաւերով՝ հարթելու համար ԱՐԻՈՍԱԿԱՆ խնդիրները:

Արիոս (250-336) Աղեքսանդրիոյ կարեւոր Եկեղեցիներէն մէկին երէցն էր. անուն հանած էր իր գրաւիչ քարոզներով եւ խստակեաց կեանքով: Այս անձը սկսաւ քարոզել թէ Որդին՝ Յիսուս Քրիստոս, Հօր

Աստուծոյ ՀԱԻԱՍԱՐ ՈՒ ՅԱԻԻՏԵՆԱԿԻՑ Ձէ, այլ ՍՏԵՂԾՈՒԱԾ է Հօր կողմէն, որպէսզի իր կարգին ստեղծէ տիեզերքը, որով ԱՆԲՆՈՒԹԵԱՄԲ Աստուած չէ, այլ «արարած». այսպէս կը հաւատան ու կը քարոզեն նաև այսօրուան Եհովայականները: Այս ուսուցումը հակառակ էր Աւետարանին եւ Ուղղափառ Եկեղեցիի հաւատքին. որովհետև Աւետարանի մէջ ըսուած էր. «Ի ՍԿԶԲԱՆԷ էր Բանն... եւ ԱՍՏՈՒԱԾ էր Բանն»: Իսկ Քրիստոս ըսած էր Իրեն համար. «Ես եւ Հայր Իմ ՄԻ ԵՄՔ»: Արիոսի մոլար ուսուցումը նախ դատապարտուեցաւ Աղեքսանդրիոյ իր պատրիարքին կողմէ 320ին գումարուած տեղական ժողովով մը: Արիոս սակայն չենթարկուեցաւ ժողովի որոշումներուն. ընդհակառակը՝ աշխատեցաւ, որ իր տեսակէտները տարածուէին նաև Աղեքսանդրիայէն դուրս՝ թեր ու դէմ վիճաբանութիւններ ստեղծելով հաւատացեալներու եւ հոգեւորականներու մէջ ամէնուրեք:

Կոստանդինոս Կայսրը, որ դեռ նոր միացուցած էր բաժանեալ կայսրութիւնը, նոր բաժանումներ չէր ուզեր բնականաբար կայսրութեան սահմաններուն մէջ: Ուստի կրօնական այս վէճերը հարթելու համար նախ Աղեքսանդրիա ղրկեց Սպանիոյ Գորտովա քաղաքի Ոսիոս եպիսկոպոսը, որ իր անձնական խորհրդականն էր կրօնական գործերու մասին: Ոսիոս կայսեր կողմէ յանձնարարուած էր հաշտեցնել ի գին ամէն բանի Աղեքսանդրիոյ պատրիարքը եւ Արիոսը, որպէսզի վերջ տրուէին կրօնական այս վէճերուն: Արիոս սակայն պնդեց իր տեսակէտներուն վրայ եւ անկարելի եղաւ հաշտութիւնը: Այն ատեն կայսրը ընդհանրական ժողովի մը հրաւիրեց Եկեղեցիի ԲՈԼՈՐ եպիսկոպոսները ՆԻԿԻԱ քաղաքը 325ին:

Ժողովի պաշտօնական բացումը կատարեց Կոստանդինոս Կայսրը ճառով մը՝ միութեան ու միասնականութեան հրաւիրելով ամէնքը՝ հրաժարելով անձնական ու մանր վէճերէ: Ապա ժողովին ատենապետութիւնը յանձնեց իր հետ բերած Գորտովայի Ոսիոս Եպիսկոպոսին:

Ժողովին ներկայ եղողներուն թիւը առհասարակ ընդունուած է 318, որոնց հազիւ 220ին անունները մեզի հասած են, որոնց մէջ կարեւոր դեր կատարողները եղան Անտիոքի Եւստաթէոս Պատրիարքը (ոմանք կը կարծեն, որ ասոր յանձնուած ըլլայ ժողովին նախագահութիւնը), Աղեքսանդրիոյ Աղեքսանդր Պատրիարքը, Երուսաղէմի Մա-

կար Եպիսկոպոսը, Պաղեստինեան Կեսարիոյ Եւեբքիոս Եպիսկոպոսը: Արիոսականներուն խօսնական էր Նիկոմիդիոյ Եւեբքիոս Եպիսկոպոսը. իսկ Նիկողայոս Միւռայ եւ Յակոբ Մծբնայ եպիսկոպոսները յարգ վայելեցին կայսրէն ու ժողովականներէն իրենց սրբութեամբ: Արեւմտաքէն ներկայ էին լոկ 8 հոգեւորականներ. բացի վերոյիշեալ Գորտովայի եպիսկոպոսէն, ներկայ էին նաեւ Կարթագինէի, Միլանի եւ Տիօսի եպիսկոպոսները եւ այլ երկու քահանաներ: Ժողովին ամէնէն ժիր ու գործօն անձը եւ ուղղափառներուն խօսնական էր նոյնինքն Աթանաս Աղեքսանդրացին, որ ընկերացած էր իր պատրիարքին իբրեւ անոր սարկաւազը եւ որ յանուն իր պատրիարքին՝ գլխաւոր դերը կատարեց ժողովին հաւատոյ հանգանակը պատրաստելուն մէջ:

Ժողովի հրաւիրուած էր նաեւ մեր Ս. Գրիգոր Լուսաւորիչը. սակայն ինք ձերացած ըլլալուն զրկեց իր որդին Արիստակէսը, որուն անունը արգարեւ կ'երեւի ժողովական հայրերու ցանկին մէջ:

Ժողովը ի վերջոյ պատրաստեց «Հաւատամք» մը, ուր շեշտուած էր Աստուծոյ Որդիին յաիտեճակից, Բաւասարակից ու Բնութեճակից ըլլալը Հօր Աստուծոյ:

«Հաւատամք եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս՝

յՈրդին Աստուծոյ՝ ծնեալն յԱստուծոյ Հօրէ, Միածին,

այսինքն յէութենէ Հօր (այսինքն Աստուծոյ էակից կամ բնութենակից):

Աստուած յԱստուծոյ, Լոյս ի Լուսոյ (այսինքն հաւասար Հօր),

ԱՍՏՈՒԱԾ ՃՇՄԱՐԻՏ՝ յԱստուծոյ ճշմարտէ,

ԾԵՈՒՆ Դ ԵՒ ՈՋ ԱՐԱՐԱԾ...

Արիոս եւ քանի մը համախոհներ չընդունեցին այս բանաձեւը. ուստի նզովուեցան ու աքսորուեցան: Ժողովը սահմանեց նաեւ 20 բարեկարգական կանոնները:

Արիստակէս Հայրապետ Հայաստան բերաւ Նիկիոյ հաւատոյ հանգանակը եւ կանոնները: Ս. Գր. Լուսաւորիչ ուրախանալով Ուղղափառութեան յաղթանակին վրայ՝ աւելցուց անոր վերջաւորութեան «Իսկ մեք փառաւորեսցուք»ը, որ իրականին մէջ կարճագոյն եւ խտացեալ հաւատոյ յայտարարութիւն մըն է՝ զերծ աստուածաբանա-

կան մանրամասնութիւններէ եւ բժախնդրութիւններէ, հաստատելու համար կրօնական սա խոր ճշմարտութիւնը, թէ Աստուածութիւնը իր Եռեակ Անձերով պէտք է փառաւորուի ու պաշտուի եւ ոչ թէ վիճաբանութեամբ առարկայ ըլլայ:

Ժողովը սկսած է Մայիս 20ին եւ աւարտած Յուլիս 25ին: Մարզունցիի հրատարակած Յայտաւորքին մէջ կը յիշատակուի Սեպտ. 7ին, իսկ Փեշտիմալճեանին մէջ Մայիս 29ին՝ հետեւեալ հաւաստումով՝ գրութեան վերջաւորութեան. «Այս տօնը կը կատարուի անփոփոխելի կերպով Քրիստոսի Համբարձումին յաջորդող Կիրակի օրը, քանզի այդ Կիրակին ժողովեցան, որ էր Մայիսի 29»:

Իսկ ներկայիս մենք անփոփոխ կերպով կը կատարենք Խաչվեբացի Բարեկենդանին նախորդ Շաբաթ օրը, որ կը համապատասխանէ Սեպտ. 7ին՝ շաբաթական դրութեան վերածուած:

2. 4. ՊՈՒՍՈՅ ԺՈՂՈՎԸ 381ԻՆ

Այս ժողովը հրաւիրեց Մեծն Թէոդոս Կայսրը (379-395), գրեթէ նոյն նպատակով, որով գումարուած էր Առաջին Տիեզերական ժողովը. այսինքն վերամիացնել կրօնական զանազան վէճերով պառակտուած Եկեղեցին: Այս ժողովը արդարեւ իր լրումին հասցուց այն նպատակը, զոր իրականացնելու համար գումարուած էր Նիկիոյ ժողովը եւ դժբախտաբար չէր կրցած, վասնզի Արիոսական վէճերը եւ պառակտումը շարունակուած էին նաեւ Նիկիոյ ժողովէն յետոյ:

Կ. Պոլսոյ ժողովին ներկայ եղան 150 ուղղափառ հայրապետներ եւ 36 աղանդաւոր եպիսկոպոսներ: Կայսեր հրաւերով ժողովին նախագահեց Անտիոքի Մելիտոս ծերունազարդ Պատրիարքը (ծնունդով Մալաթիացի, ծագումով հաւանաբար Հայ. տես. գլ. Ա., թիւ 38), որ սակայն ժողովի սկզբնական նիստերէն յետոյ կնքեց իր մահկանացուն, եւ նախագահութիւնը շարունակեց նախ Կ. Պոլսոյ Պատրիարք Գրիգոր Նազիանզացի եւ ապա՝ վերջնոյս Պատրիարքական Աթոռէն ինքնակամ հրաժարումով՝ իր յաջորդը՝ Նեկտարիոս Կ. Պոլսոյ Պատրիարքը:

Ամբողջութեամբ արեւելքցի եպիսկոպոսներէ բաղկացած ժողով մը եղաւ ասիկա: Արեւմտեան Եկեղեցիէն ոչ մէկ ներկայացուցիչ կար

այս ժողովին մէջ: Հակառակ այս իրողութեան՝ Արեւմտեան Եկեղեցիէն ալ ընդունուած է իբրեւ Երկրորդ Տիեզերական ժողով: Վերոյիշեալ նշանաւոր հայրապետներու կարգին ներկայ են նաեւ Աղեքսանդրիոյ Տիմոթէոս եւ Երուսաղէմի Կիւրեղ պատրիարքները եւ Գրիգոր Նիւսացի: Ազգային աւանդութեան մը համաձայն՝ այս ժողովին ներկայ եղած է նաեւ մեր Մեծն Ներսէս Հայրապետը. սակայն պատմական պարագաներ չեն թոյլատրեր այս մասնակցութիւնը, քանի որ Մեծն Ներսէս արդէն իսկ վախճանած կը նկատուի 373ին:

Ժողովի գլխաւոր որոշումները եղան հետեւեալները.

1.- Նզովեցիին անձը եւ ուսուցումը Մակեդոն կոչուած աղանդապետին, որ Կ. Պոլսոյ պատրիարք եղած էր 342ին եւ մեռած 364ին եւ որ քարոզած էր այն տեսակէտը, թէ Սուրբ Հոգին հաւասար ու համագոյակից չէր Հօր եւ Որդիին. ուրիշ խօսքով՝ կ'ուրանար Ս. Հոգիին աստուածութիւնը: Այս առթիւ մերժեցին նաեւ Ապողինար կոչուած այլապէս ուղղափառ եպիսկոպոսին այն տեսութիւնը, թէ Որդին Աստուծոյ իր մարդեղութեան թէեւ առած էր «մարմին եւ հոգի», բայց ոչ՝ «միտք», որուն տեղը գրաւած էր Աստուծոյ Բանը՝ Լոգոսը:

2.- Բանաձեւեցիին աւելի ընդարձակ եւ ընդհանրական «Հաւատամք» մը՝ հիմնուած Նիկիական Հանգանակին վրայ, յատկապէս ընդլայնելով Ս. Հոգիի վերաբերեալ մասը եւ աւելցնելով վերջամաս մը «Եկեղեցիի, Մկրտութեան, Ապաշխարութեան, Մեռելոց Յարութեան եւ Դատաստանի» մասին: Թէեւ ներկայիս Ս. Պատարագի ընթացքին մեր գործածած Հաւատամքը ծանօթ է «Նիկիական Հանգանակ» անուան տակ, բայց իրականին մէջ աւելի նման է, գրեթէ նոյն է, Կ. Պոլսոյ ժողովոյն մէջ բանաձեւուած հաւատամքին հետ:

3.- Սահմանեցին կարգ մը կանոններ, որոնց թիւը սակայն կը մնայ անորոշ. որովհետեւ Յոյն Եկեղեցիին կ'ընդունէր եօթը կանոններ, Լատին Եկեղեցիին՝ չորս, իսկ մեր ԿԱՆՈՆԱԳԻՐՔԻՆ մէջ կան երեք կանոններ միայն: Երրորդ կանոնը յատկանշական է, որովհետեւ անով պաշտօնապէս հիմքը կը դրուի Կ. Պոլսոյ պատրիարքութեան՝ սա տողով. «Կ. Պոլսոյ եպիսկոպոսը աւագութեան պատիւ պիտի ունենայ Հռովմի եպիսկոպոսէն յետոյ, որովհետեւ սա (Կ. Պոլիսը) նոր Հռոմ է»:

Համադրելով՝ ըստ բանին Յայսմաւուրքի՝ «սահմանեց Ս. Ժողովը ուղղափառ դաւանութիւնը եւ յայտարարեց կենդանարար եւ ամենասուրբ Հոգին հաւասարապատիւ եւ փառակից ու համագոյական Հօր եւ Որդւոյ»:

Այս ժողովն ալ գումարուեցաւ Մայիսի մէջ եւ տեւեց մինչեւ Յուլիսի վերջերը: Մարզուանցիի Յայսմաւուրքի մէջ այս ժողովը կը յիշատակուի Թէոդոս Կայսեր վարքին մէջ Յունուար 18ին: Փեշտիմալճեանի մէջ յիշատակուած է Յուլիս մէկին: Իսկ ներկայիս անխփան կերպով կը յիշատակենք սոյն ժողովի 150 Հայրապետները Մեծ Բարեկենդանի նախորդ Շաբաթ օրը:

3. ԵՓԵՍՈՍԻ ԺՈՂՈՎԸ 431ԻՆ

Այս ժողովը գումարուեցաւ հրաւերովը միւս Թէոդոս Կայսեր (401-450), որ պատմութեան մէջ ծանօթ է «Փոքր» մակդիրով՝ հակադրաբար իր մեծ հօր՝ Մեծն» Թէոդոսի, կարգադրելու համար Ընտրակալի վէճերը:

Նեստոր ալ, Արիոսի պէս, քաջ քարոզիչ Հոգեւորական մըն էր Անտիոքի շրջանէն, որ 428ին Կ. Պոլսոյ պատրիարք ընտրուեցաւ: Սկիզբները ինքզինքը ախոյեան յայտարարելով ուղղափառութեան՝ եռանդագին նուիրուեցաւ մայրաքաղաքը մաքրելու հերետիկոսներէ եւ հերձուածողներէ, յատկապէս Արիոսականներէ եւ Նովատեան կոչուած աղանդաւորներէ: Սակայն իր կարգին ինկաւ նոր մոլորութեան մը մէջ, երբ սկսաւ քարոզել, թէ Ս. Կոյսին համար պէտք չէր գործածել «ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ» բառը, որ նուիրականացած էր եւ ընդհանուր ընդունելութեան արժանացած տիտղոս մըն էր Ս. Կոյսին համար: Հռովմի պապը եւ Աղեքսանդրիոյ պատրիարքը դէմ արտայայտուեցան Նեստորի այս նորոյթին: Մինչեւ իսկ Աղեքսանդրիոյ պատրիարքը Կիւրեղ 12 նզովքներ պարունակող գրութեամբ մը դատապարտեց զայն եւ պահանջեց յետս կոչել իրեն վերաբրուած այս մոլորութիւնները: Նեստոր կայսեր դիմեց՝ խնդրելով, որ ընդհանուր ժողովի հրաւերէ կայսրութեան եպիսկոպոսները եւ ինք պատրաստ է ինքզինքը պաշտպանել այդ ժողովին մէջ:

Ժողովը գումարուեցաւ Յունիս 22ին Եփեսոսի մէջ: Անտիոքի պատրիարքը եւ իր եպիսկոպոսները, որոնք Համակիր էին Նեստորի, դեռ չէին Հասած: Ձէին ժամանած նաեւ պապի պատգամաւորները: Ժողովականներէն ոմանք խնդրեցին, որ ատեն մը յետաձգուի ժողովին գումարումը, մինչեւ բացականերուն Հասնիրը: Սակայն Կիւրեղ ենթադրելով, որ գալիքները մասնաւոր կերպով կ'ուշացնեն իրենց ժամանումը՝ պնդեց, որ ժողովը գումարուի: Եփեսոսի մետրոպոլիտին Կիւրեղի կողմնակից ըլլալը գործերը աւելի դիւրացուց: Կայսրը անձամբ չէր եկած, այլ կոմս մը ղրկած էր, որ ի վերջոյ իր Հաւանութիւնը տուաւ ժողովի գումարման: Նախագահեց նոյնինքն Կիւրեղ Պատրիարքը: Երեք անգամ Նեստոր ժողովի հրաւիրուեցաւ: Առաջին հրաւերին մերժեց ժողովին ներկայ ըլլալ Անտիոքցիներուն բացակայութիւնը պատճառելով: Յաջորդ երկու հրաւերներուն պատասխան չտուաւ եւ մինչեւ իսկ հրաւիրակները չընդունեց:

Ժողովին ներկայ եղան 200 Հայրապետներ, որոնց մէջ էր նաեւ Երուսաղէմի պատրիարքը: Ժողովը գրեթէ միաձայնութեամբ դատապարտեց Նեստորը եւ իր ուսուցումը ու պաշտօնանկ հռչակեց զայն Կ. Պոլսոյ պատրիարքութենէն: Վերահաստատեց Նիկիոյ Հանգանակը եւ «Աստուածածին» տիտղոսը՝ Ս. Կոյսին Համար:

Նեստոր դատապարտութենէն յետոյ նախ քաշուեցաւ իր նախկին վանքը Անտիոքի շրջանին մէջ: Ապա 436ին աքսորուեցաւ՝ ըստ արեւմտեան աղբիւրներու՝ Եգիպտոսի անապատային մէկ շրջանը, իսկ ըստ մեր աղբիւրներու՝ Պարսկաստանի Խուժաստան նահանգը: Աքսորին մէջ ալ մեռաւ Ե. դարու կէսերուն: Իր մահուամբ իր աղանդը չանյայտացաւ, ընդհակառակը՝ լայն տարածում գտաւ Ասորոց մէջ, Եգիպտոսի, Մծբին, մինչեւ Պարսկաստանի խորերը: Միջին դարերուն ասոնք քրիստոնէութիւնը տարած են Կեդրոնական Ասիա եւ մինչեւ Չինաստան: Ներկայիս արդարեւ գոյութիւն ունի Ասորական կրօնական Համայնք մը, որ ինքզինքը կը կոչէ Նեստորական:

Ժողովը սահմանեց նաեւ 8 կանոններ, որոնցմէ վեցը միայն մուտք գործած են մեր Կանոնադիրքին մէջ: Այս կանոններէն մէկով Կիւրեղի Եկեղեցին կը յայտարարուի ինքնազուտօ՝ իբրեւ Աթոռը Բառնաբաս Առաքեալի:

Մեր Ս. Սահակ Հայրապետն ալ հրաւիրուեցաւ Եփեսոսի ժողովին. բայց այդ օրերուն ինք Պարսկաստան կը գտնուէր, կէս կալանաւոր ու ամբաստանեալ վիճակի մէջ, որով չկրցաւ մասնակցել: Սակայն ժողովին որոշումները Ս. Սահակին ձեռքը Հասան յաջորդ տարին, Հայ Թարգմանիչ վարդապետներու միջոցաւ, որոնք Կ. Պոլսի կը գտնուէին ուսումնական նկատումներով, եւ որոնց յանձնեց ժողովին որոշումները Մաքսիմիանոս Կ. Պոլսոյ Պատրիարքը, որ յաջորդած էր Նեստորի:

Մեր ձեռքին տակ գտնուած զոյգ Յայմատուրքներուն մէջ երեքական անգամ յիշուած է Եփեսոսի ժողովը, բայց տարբեր թուականներով: Մարգուանցիի Յայմատուրքին մէջ նախ կը յիշատակուի Հոկտ. 14ին, ուր կը տրուի ժողովին լրիւ պատմութիւնը: Այստեղ յիշուած են նաեւ 7 նզովքներ՝ առհասարակ «Եթէ ոք ոչ խոստովանի» սկզբնաւորութեամբ, զորս որպէս թէ Կիւրեղ Պատրիարք արտասանած ըլլայ ժողովին մէջ, որոնք կը շեշտեն Բրիստոսի անձին եւ բնութեան միութիւնը. «Մի Տէր, Մի Բրիստոս, Մի Որդին՝ Աստուած եւ մարդ կատարեալ. Որդի Աստուծոյ եւ Որդի մարդոյ»՝ ընդդէմ Նեստորի ստեղծած երկուութեան՝ «Երկու դէմք, երկու անձ, երկու բնութիւն»:
Երկրորդ յիշատակութիւնը Փետ. 5ին է, ուր եւս կը տրուի ժողովին լրիւ պատմութիւնը առանց նզովքներու: Իսկ երրորդը՝ Օգոստ. 3ին՝ «Ս. Հօրն Դաղմատիոսի» խցաբնակ ճգնաւորի վարքը ներկայացնելու ընթացքին: Որպէս թէ Նեստոր այցելութեան կու գայ Դաղմատիոսի, որ սակայն չ'ընդունիր զայն՝ նախատեսելով այն չարիքը, զոր Նեստոր պիտի Հասցնէր Եկեղեցիին: Ու Հաստատելու Համար ըսուածը՝ կը ներկայացուի Եփեսոսի ժողովին պատմութիւնը՝ երեք նզովքներով:

Իսկ Փեշտիմալճեանի Յայմատուրքին մէջ եւս երեք թուականներուն կը յիշուի Համառօտիւ: Առաջինը՝ Փետ. 6ին, երկրորդը՝ Յունիս 27ին, ուր տրուած է խտացումը Նեստորի մոլորութեան՝ սա ձեւով. «ԶԲրիստոս Հերձէր եւ բաժանէր. բարձրացեալ մարդ զնա ասէր եւ ոչ՝ Աստուած մարմնացեալ. երկուս որդիս ի վերայ միոյ Բրիստոսի ասէր եւ երկուս անձնաւորութիւն. եւ ոչ՝ Աստուածածին զՍուրբ Կոյսն Մարիամ (խոստովանէր), այլ՝ Բրիստոսածին դաւանէր զայն, որ ծնաւ զԱստուած եւ Տէրն մեր Յիսուս Բրիստոս» (Ա. Հտր., էջ 272,

Բ. սիւնակ): Երբորդ յիշատակութիւնը Սեպտ. 9ին է, ուր կայ ժողովի դաւանութեան խտացումը. «Որք դաւանեցին զՏէր մեր Յիսուս Քրիստոս Աստուած ճշմարիտ, զնոյն եւ մարդ կատարեալ, միով անձնաւորութեամբ, մի Որդի, մի Տէր, մի Քրիստոս՝ անբաժանելի եւ անշփոթ միաւորութեամբ: Որով՝ եւ ճշմարիտ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ զՍուրբ Կոյսն Մարիամ քարոզեցին» (Բ. Հտր., էջ 133, Բ. սիւնակ):

Ներկայիս մեր Եկեղեցին կը յիշատակէ Եփեսոսի ժողովի 200 Հայրապետները Աստուածամօր Վերափոխման Բարեկենդանի Կիրակիին նախորդ Շաբաթ օրը:

ՅԱԻԵԼՈՒԱԾ

ՄԵԾԱՆՈՒՆ ՍՈՒՐԲԵՐ, ՈՐՈՆՔ ԶԵՆ ԱՆՑԱԾ ՄԵՐ ՏՕՆԱՑՈՅՑԻՆ

Բացի նախորդ էջերուն մէջ յիշուած աւելի քան 200 անուն սուրբերէն, Յոյն եւ Հռովմէական Եկեղեցիները կը յիշատակեն (միասնաբար կամ անջատաբար) տակաւին բազմաՀարիւր ուրիշ սուրբեր: Ասոնց մեծագոյն մասը որքան ալ կարեւորութիւն ունենայ վերոյիշեալ Եկեղեցիներուն մէկին կամ միւսին Համար միայն, կան սակայն ուրիշներ, որոնք իրաւամբ Համաքրիստոնէական նշանակութիւն ունին եւ արժանի են ցարդ յիշուածներու կարգին դասուելու:

Ասոնք մեր տօնացոյցին չեն անցած պարզ այն պատճառով, որ մենք գրեթէ Ե. դարու կէսէն ասդին, այսինքն Քաղկեդոնի ժողովէն ի վեր, դադրած ենք սուրբեր Հիւրընկալել Արեւմտեան վերոյիշեալ մեծ Եկեղեցիներէն՝ տօնակատարութեան կամ տարեկան յիշատակութեան Համար: Հակառակ այս իրողութեան սակայն, բազմաթիւ արեւմտեան սուրբեր տեղ գրաւած են մեր Յայսմաւուրքներու մէջ վերոյիշեալ դարէն ասդին, մինչ եւ ուշ միջնադարը:

Մենք ալ Հետեւելով մեր Յայսմաւուրքներու օրինակին, աւելի շիտակ՝ մեր Յայսմաւուրքին զլիաւոր յօրինիչ եւ սրբոց վարքերու մեր Հաւաքիչ Գրիգոր Վկայասէր Հայրապետի բացած ուղիին, յարմար դատեցինք սոյն ՅԱԻԵԼՈՒԱԾՈՎ ներկայացնել գէթ խումբ մը սուրբեր, որոնցմէ ոմանք արդարեւ մեծագոյններէն են Քրիստոնէական Եկեղեցիի գործիչներուն եւ աւետարանական սրբութեան եւ կատարելութեան նշանաւորագոյն տիպարներէն են:

ՅԱԻԵԼՈՒԱԾԻ սուրբերը կը ներկայացնենք ժամանակագրական կարգով: Իսկ յատուկ անուններու տառադարձութիւնները առհասարակ կը կատարենք դասական Հայերէնի օրէնքով՝ Հին շրջանի սուրբերուն Համար, իսկ վերջին ժամանակներու սուրբերուն անունները կը

պահենք այն ձեւով, որ ծանօթ են անոնք միջազգային շրջանակներուն կամ մեր մէջ:

1. ՅՈՒՍՏԻՆՈՍ ՄԱՐՏԻՐՈՍ (100-165)

Յուստինոս կարեւորագոյնն է եւ թերեւ առաջինը քրիստոնեայ «Ջատագով»ներուն, այսինքն այն գրողներուն, որոնք պաշտպանած, ջատագոված ու բացատրած են քրիստոնէական Հիմնական ճշմարտութիւնները Հռովմէական պետութեան, Հեթանոս ընկերութեան, յոյն իմաստասիրութեան եւ Հրէութեան համար՝ միաժամանակ Հերքելով այն նախապաշարումները, որոնք տգիտաբար կամ դիտումնաւոր կերպով տարածուած էին քրիստոնեաներու մասին:

Յուստինոս ծնած է Պաղեստինի այսօրուան Նապլուս քաղաքը, շուրջ 100 թուականին, Յոյն Հեթանոս ընտանիքէ: Ուսումնասիրելէ յետոյ յունական գրեթէ բոլոր իմաստասիրական դրութիւնները, ի վերջոյ Պլատոնական իմաստասիրութեանէն անցաւ Քրիստոնէութեան, երբ 33 տարեկան էր: Թէեւ եկեղեցական կարգ չստացաւ, բայց ինքզինքը նուիրեց Քրիստոնէական կրօնքի ուսուցման ու քարոզութեան, որովհետեւ կ'ըսէր ան. «Մեր պարտականութիւնն է մեր կրօնքը ծանօթացնել ամէնքին»: Այս նպատակով կատարեց ընդարձակ ճամբորդութիւններ կայսրութեան զանազան քաղաքները՝ ատեն մը Հաստատուելով Եփեսոս:

Երկիցս այցելած է Հռովմ, ուր վերջին այցելութեան կրօնա-իմաստասիրական դպրոց մը բացաւ՝ սորվեցնելու համար քրիստոնէական ճշմարտութիւնները Հեթանոս մտաւորականներու: Այստեղ իրեն աշակերտներուն մէջ էր նաեւ ՏԱՏԻԱՆՈՍ՝ ուրիշ քրիստոնեայ իմաստասէր մը եւ ջատագով մը, որ հռչակ հանած է եկեղեց. պատմութեան մէջ՝ չորս Աւետարանները համադրելով եւ վերածելով մէկ Աւետարանի՝ «Դիատեսարօն» անուան տակ:

Հռովմի մէջ է, որ գրեց իր «Առաջին ջատագովականը»՝ 155ին, ուղղուած օրուան կայսեր՝ Անտոնինոս Պրոսին: Ասկէ քիչ յետոյ հրատարակեց «Տիալոկ Տրիպոյի Հետ», որ քրիստոնէական ջատագովական մըն է ընդդէմ հրէից: Իսկ «Երկրորդ ջատագովականը» ուղղեց Հռովմէական ծերակոյտին, 161 թուականին, երբ օրուան կայսրն էր Մարկոս Աւրելիոս: Ի վերջոյ 165 թուականին ինք եւ իր

աշակերտներէն 5-6 հոգի ձերբակալուեցան իբրեւ քրիստոնեայ եւ պաշտօնական հարցափորձի ենթարկուեցան: Ասոնց հարցաքննութեան եւ իր մարտիրոսութեան ժամանակակից արձանագրութիւնը պահուած է մինչեւ օրս եւ կը նկատուի քրիստոնեայ մարտիրոսագրութեան Հնագոյն, հարազատ եւ կարեւոր վաւերագիրներէն մէկը: Այդ հարցափորձութեան ընթացքին, երբ ի վերջոյ հրամայուեցաւ Յուստինոսին զոհել Հռովմի աստուածներուն, պատասխանեց. «Ոչ մէկ խեղճ գլուխը մարդ կը փոխանակէ ճշմարտութիւնը ստութեան հետ»: Իսկ աշակերտները եւ ընկերները ըսին. «Ըրէ մեզի ինչ որ կը կամենաս. մենք քրիստոնեայ ենք եւ չենք կրնար զոհել կուռքերուն»:

Յուստինոս առաջին քրիստոնեայ խորհողն է, որ Հետամուտ եղած է Հաշտեցնել Հաւատքը բանականութեան հետ: Յայտնած է այս տեսակէտը, թէ մինչեւ իսկ Հեթանոս խորհողներու մօտ կը հանդիպինք ճշմարտութեան Հետքերուն, բայց Քրիստոնէութիւնը միայն կը պարունակէ գերագոյն բանաւոր Հաւատքը, որուն մէջ Հիմնական ճշմարտութիւնը այն է, թէ Աստուծոյ Բան-Որդին մարմին առաւ՝ մարդոց սորվեցնելու համար ճշմարտութիւնը եւ փրկելու համար զանոնք դեւերու տիրակալութենէն:

Յուստինոսի գրութիւնները մեծ արժէք կը ներկայացնեն նաեւ այն պատճառով, որ ընդարձակ ու կարեւոր տեղեկութիւններ կը պարունակեն Բ. դարու քրիստոնէական Հաւատալիքներու եւ սովորութեանց մասին. օրինակ՝ Մկրտութեան եւ Ս. Հաղորդութեան խորհուրդներու ուսուցման եւ կատարման մասին: Իսկ «Տիալոկ Հրեայ Տրիպոյի Հետ» գրութեան մէջ կը շեշտուին երեք գաղափարներ. ա) Հին Ուխտը ժամանակաւոր էր, որ պիտի փոխարինուէր Նոր Ուխտով: Նոր Կտակարանի Բանը նոյն է Հին Կտակարանի մէջ յայտնուած Աստուծոյ Հետ. գ) Հեթանոս Հաւատացեալները տեղը պիտի բռնեն Իսրայէլին՝ իբրեւ Աստուծոյ ժողովուրդը:

Հատինք կը տօնեն Ապրիլ 14ին, Յոյնք՝ Յունիս 1ին: Մեր ձեռքին տակ գտնուած կրկնակ Յայսմաւուրքներու մէջ յիշատակուած է ան Յուստինոս (ոչ Յուստինոս) Փիլիսոփայ անունով Մայիս 4ին: Սակայն երկուքին մէջ ալ իր վարքը ներկայացուած է Հազիւ 10 տողերով եւ գրեթէ նոյն բառերով:

2. ՊԵՐՊԵՏՈՒԱ ԵՒ ՓԻԼԻԿԻՏԱՏԷ ՄԱՐՏԻՐՈՍՈՒՆԻ ԵՒ ԻՐԵՆՑ ԶՈՐՍ ԸՆԿԵՐՆԵՐԸ (203)

Անշուշտ պիտի չակնկալէինք, որ հեռաւոր Ափրիկէի մէջ նահատակուած այս համեստ կիրնբու եւ նոյնքան անծանօթ իրենց ընկերներուն յիշատակը մուտք գործէր Հայ Եկեղեցիի սոնացոյցէն ներս, երբ անդին իրենցմէ շատ աւելի նշանաւոր եկեղեցական հայրեր, նոյն երկրէն, մուտք չեն գտած մեր օրացոյցին մէջ: Սակայն հակառակ իրենց, այսպէս ըսենք, աննշան լինելուն, աւելի շիտակ՝ այդ իսկ պատճառով՝ կ'արժէ անդրադառնալ նաեւ անոնց. որովհետեւ քրիստոնէական մարտիրոսագրութեան մէջ ասոնց նահատակութեան պատմութիւնն ալ մեզի հասած է ժամանակակից գրութեամբ մը իր ամբողջական հարազատութեան մէջ, մինչդեռ բացայայտ է, թէ միւս սուրբերու մեծ մասին վարքագրութիւնները ետքէն գրի առնուած եւ խճողուած են հրաշալիքի չափազանցութիւններով: Ասոնցինը մեզի եկած է մարդկային սրտագրաւ տարբերով լեցուն: Աւելի կարեւոր պարագայ մը. ասոնց պատմութեան սկիզբի մեծ մասը գրուած է նոյնինքն նահատակներու երկուքին կողմէ, իսկ վերջաւորութիւնը լրացուած է ժամանակակից ուրիշ ձեռքէ մը, անոնց մարտիրոսութենէն անմիջապէս յետոյ: Ասոնց պատմութիւնը նկատուած է «հին ժամանակներու քրիստոնէայ մարտիրոսութեան փառաւոր պատերազմի ամէնէն սրտագրաւ պատմուածքներէն մէկը»:

Սեպտիմոս Սեւերոս (193-211) Կայսեր հանած հրահանգով կ'արգիլուէր կայսրութեան բոլոր քաղաքացիներուն համար քրիստոնէայ ըլլալը: Անաստողները պիտի ենթարկուէին ծանր պատիժներու: Այս հրովարտակին իբրեւ հետեւանք՝ Ափրիկէի Կարթագինէ (Թունուզ) քաղաքին մէջ կը ձերբակալուէին հինգ հոգիներ, որոնք թէեւ քրիստոնէութիւնը ընդունած էին, բայց դեռ չէին մկրտուած եւ պատրաստութեան շրջանի մէջ էին Ս. Մկրտութիւնը ընդունելու համար: Ասոնք էին ՎԻԲԻԱ ՊԵՐՊԵՏՈՒԱ՝ երիտասարդ ամուսնացեալ կին մը ազնուական ընտանիքէ, մանուկով մը իր գիրկը, ՓԻԼԻԿԻՏԱՏԷ՝ ստրուկ դասակարգէ երիտասարդ կին մը, յառաջացած յղութեան շրջանի մէջ, ՌԵՎՈԿԱՏՈՍ՝ նոյնպէս գերի մը, ՍԱՏՈՒՌԻՆՈՍ եւ ՍԵԿՈՒՆ ԴՈՒԼՈՍ՝ երկու ազատորեարներ: Ասոնց վրայ աւելցաւ ՍԱՏՈՒՐՈՍ անուն մէկը, որ կամաւորապէս դատաւորին առջեւ ելաւ եւ

ինքզինքը քրիստոնէայ յայտարարեց եւ միացաւ այս խումբին: Հինգ «երախաները», այսինքն դեռ չմկրտուած այս քրիստոնէաները, հնարք գտան մկրտուելու, նախքան բանտ նետուիլը:

Պերպետուայի հայրը հեթանոս էր եւ շատ կապուած իր աղջկան: Քանիցս բանտ եկաւ տարհամոզելու իր դուստրը, որ իր հայրենի աստուածներուն վերադառնայ: Պերպետուա սակայն ամուր մնաց իր հատաքին վրայ: Իսկ իր մայրը եւ երկու եղբայրները քրիստոնէայ էին. երրորդ եղբայր մը մանկութեան մեռած էր հեթանոսութեան մէջ, որուն փրկութեան համար շարունակ կ'աղօթէր:

Իրենց չարչարանքները բանտին մէջ, Պերպետուայի հօր ճիգերը իր դուստրը ուրացողութեան մղելու, Սատուրոսի եւ Պերպետուայի տեսիլքները բանտին մէջ՝ ամէնքն ալ հաւատարմօրէն գրի առնուած են այս վերջին երկուքին կողմէ: Բանտին մուայլ մթութիւնը եւ ճնշող մթնոլորտը սարսափազու էին Պերպետուայի համար, որոնց վրայ կ'աւելնար անձկութիւնը, որուն մատնուած էր երիտասարդ այս մայր կ'աւելնար անձկութիւնը, որուն մատնուած էր երիտասարդ այս մայրը գրկի երեխային համար: Երկու սարկաւազներ, «հաճեցնելէ» յետոյ բանտապահները, կը յաջողին բանտ այցելել եւ մասամբ մը թետոյ բանտապահները, կը յաջողին բանտ այցելելու նաեւ Պերպետուայի մայրը եւ «երեխայ» (չմկրտուած) եղբայրը, որոնք բանտէն բաժնուելու ատեն իրենց հետ տարին Պերպետուայի մանկիկը՝ ազատելով զայն կարեւոր մտահոգութենէ մը:

Այս շրջանին Պերպետուա հետեւեալ տեսիլքը ունեցաւ վեր կը բարձրանար սանդուխէ մը, որ թէեւ եզերուած էր չարչարանքի գործիքներով, բայց կ'առաջնորդէր դաւարազուարճ արօտավայր մը, ուր ոչխարներու հօտ մը խաղաղ ու երջանիկ կ'արածէր: Հասկցաւ, որ մօտ էր իր մարտիրոսացման եւ երկինքի երանութեան արժանացման օրը:

Արդարեւ յաջորդ օրը վեց վկաներ հանուեցան կուսակալին առջեւ: Բոլորն ալ ամուր մնացին իրենց կրօնքին վրայ. ուստի դատաւարտուեցան վայրի գազաններուն առջեւ նետուելով մահապատիժի ու ետ զրկուեցան բանտ՝ սպասելու մինչեւ գազանամահ լինելու նշանակուած օրը: Այս միջոցին ալ տեսիլք մը ունեցաւ Պերպետուա. իր հեթանոսութեան մէջ մեռած 7 տարեկան եղբայրը նախ տխուր եւ ցաւատանջ, բայց քիչ յետոյ երջանիկ ու առողջ երեւոյթ մը ստացած էր: Ինք այն համոզումը ունեցաւ, թէ արդէն իսկ փրկութեան արժա-

նացած էր իր եղբայրը: Ուրիշ տեսիլքի մէջ ինք կը պայքարէր կատաղի Եթովպացիի մը դէմ եւ պարտութեան կը մատնէր զայն, որ կը նշանակէր, թէ իր պայքարը վայրի գազաններուն հետ չէր, այլ նոյնինքն սատանայի հետ: Իսկ Սատուրոս տեսիլք մը ունեցաւ, որ ինք եւ ընկերները չորս հրեշտակներու կողմէ կը տարուէին գեղեցիկ պարտէզ մը, ուր կը տեսնեն այն չորս ծանօթ Ափրիկեցի քրիստոնեաները, որոնք նոյն հալածանքի ընթացքին մարտիրոսացած էին արդէն:

Քանի մը օր վերջ փոխադրուեցան բանակի բանտը, քանի որ բանակատեղիին մէջ է, որ վայրի գազաններուն առջեւ պիտի նետուէին: Այստեղի բանտապահը բարեացակամ եղած է քրիստոնեաներու հանդէպ և արտօնած է, որ ուրիշ քրիստոնեաներ այցելին իրենց: Այս ատեն է, որ Պերպետուայի հայրը վերջին ապարդիւն փորձը ըրաւ իր աղջիկը տարհամոզելու: Խոստովանող վկաններէն մէկը մեռաւ բանտին մէջ՝ իր քաշած չարչարանքներէն մաշելով: Փիլիկիտատէ մտահոգուած էր, որ մարտիրոսութեան պսակին արժանի պիտի չըլլար իր ընկերներուն հետ, քանի որ օրէնքը կ'արգիլէր յղի կիներուն մահապատիժը: Աղօթեց Աստուծոյ, որ ինքն ալ արտօնուի մեռնելու իր ընկերներուն հետ: Երջանկութիւնը ունեցաւ արդարեւ երկու օր յետոյ ծնունդ տալու աղջիկ զաւակի մը, որ անմիջապէս որդեգրուեցաւ կրօնակից կնկան մը կողմէ:

Մարտ 7ին հինգ վկաներ առաջնորդուեցան ամփիթատրոն: Նախ ամէնքի առջեւ ձաղանքի ենթարկուեցան: Ապա վայրի խոզ մը, արջ մը եւ վարազ մը արձակեցին երեք այրերուն վրայ եւ կատաղի կով մը՝ երկու կիներուն վրայ: Ամէնքն ալ վիրաւորուած էին վայրի կենդանիներէն, բայց չէին մահացած. իրարու մօտեցան եւ ողջագուրուեցան խաղաղութեան սուրբ ողջոյնով: Ապա դահիճ մը մի առ մի խրեց իր սուրը անոնցմէ իւրաքանչիւրի կողորդին: Այսպէս թուան դէպի անմահութիւն եւ յաւիտենական երանութիւնը Քրիստոսի այս պարզ ու քաջարի նահատակները: Իրենց մարմինները թաղուեցան Կարթագինէ: Հոյակերտ պազելիք մը կանգնուեցաւ անոնց գերեզմաններուն վրայ աւելի քան դար մը յետոյ:

Լատինք կը տօնեն զանոնք Մարտ 6ին կամ 7ին, Յոյնք՝ Փետ. 1ին կամ 2ին: Մեր Յայսմաւուրքներէն Մարզուանցիի Հրատարակածին մէջ յիշուած են Փետ. 23ին Պեռպետուա, Ռեւկատոս, Սատուրիլոս,

Սատուրիլոս եւ Սեկունդոս անուններով: Իսկ ՓեշտիմայԵեանի Յայսմաւուրքի մէջ՝ Փետ. 25ին՝ անուններու փոքր սրբագրութեամբ: Երկուքին մէջ ալ ներկայացուած են մէկ սիւնակ մարտիրոսագրութեամբ, աննշան տարբերակներով: Փիլիկիտատէ առաջինին մէջ յիշուած է յիշուած, իսկ երկրորդին մէջ յիշուած է իբրեւ դուտոր Պերպետուայի:

3. ԿԻՊՐԻԱՆՈՍ ԱՓՐԻԿԵՑԻ (200-258)

Արեւմտեան Եկեղեցիի նշանաւոր հայրերէն մէկն է, եպիսկոպոսը Կարթագինէ (Գարթաթ) քաղաքին, որ այս ատենները Հիւաիս Արեւմտեան Ափրիկէի մայրաքաղաքը եւ քրիստոնէական մեծ կեդրոն մըն էր: Մենդեան թուականը անորոշ կը մնայ. կ'ենթադրուի, որ ծնած է Բ. դարու վերջերը կամ Գ. դարու սկիզբները: Կու գայ հեթանոս բարձր ընտանիքէ: Նախքան քրիստոնեայ ըլլալը եղած է նշանաւոր հոգեւոր եւ օրէնագէտ եւ տէր՝ նշանակելի Հարսուութեան. ազդեցիկ անձ մը՝ Ափրիկէի այս լատինացած մայրաքաղաքին մէջ:

Քրիստոնեայ եղաւ 246ին: Երկու տարի յետոյ ընտրուեցաւ Կարթագինէի եպիսկոպոսը՝ իբրեւ վարչագէտ եւ Ս. Գրոց Հմուտ անձնաւորութիւն մը: Երբ Դեկոս Կայսրը 249ին հալածանքի հրովարտակը արուստեցաւ: Կիպրիանոս քաջուեցաւ հրապարակէն եւ իր թաքստեան տեղէն սկսաւ կառավարել իր հօտը նամակներով եւ գրաւոր հրահանգներով՝ տագնապալի այդ օրերուն: Դեկոսի մահէն յետոյ Եկեղեցին անհրաժեշտ պայմաններով վարչապետներ նահատակուած կերպարան վիճակի մը մատնուած էր: Հաւատարիմներ նահատակուած էին, տկարներ ուրացած եւ կուռքերուն գոհած էին, իսկ ուրիշներ ալ՝ անոնց զոհելու՝ դրամի զօրութեամբ տիրացած էին տոմսակներու որոնց մէջ կ'ըսուէր, որ զոհած են աստուածներուն: Ուրիշներ ալ թէ եւ ձերբակալուած, չարչարուած կամ աքսորուած էին իրենց հաւատքին համար, բայց մի կերպ չէին նահատակուած: Անոնք կը կողուէին ԽՈՍՏՈՎԱՆՈՂՆԵՐԻ եւ մեծ համարով եւ ժողովրդականութիւն կը վայելէին:

Ուրացողներ զղջալով կը փափաքէին վերադառնալ Եկեղեցիի ծոցը: Ուստի կը դիմէին խոստովանողներուն եւ անոնցմէ հաստատագիրներ ձեռք կը ձգէին առ այն, թէ զղջումով վերընդունուած են Եկեղեցիի ծոցը: Իր թաքստոցէն դուրս եկաւ Կիպրիանոս ու աշխատեց Եկեղեցիի ծոցը:

տեցաւ անկերպարան Եկեղեցիին ղեկը ձեռք առնել, բախեցաւ մեծ դժուարութեանց, յատկապէս այս խոստովանողներուն կողմէ, որոնք գործնականապէս ձեռք առած էին արդէն Եկեղեցիի ղեկը: Ի վերջոյ տէր դարձաւ կացութեան եւ յատուկ օրէնքներ ու պայմաններ սահմանեց ուրացողները Եկեղեցիի ծոցը ընդունելու համար: Ուրիշ խմբակ մը, որ աւելի մոլեռանդ ու մաքրակրօն էր, բոլորովին հակառակ էր ուրացողներու՝ Եկեղեցիի ծոցը վերընդունման: Անոնց դէմ ալ պայքար մղեց Կիպրիանոս:

252 թուականին Կարթագինէի մէջ ժանտախտ տարածուեցաւ: Կիպրիանոս նիւթապէս ու բարոյապէս օգնութեան հասաւ ժանտախտէ բռնուածներուն, առանց կրօնքի խտրութեան: Անդուլ անդադար աշխատեցաւ հիւանդներուն վիճակը ամօքելու: Հակառակ բարեսիրական իր այս օժանդակութեան՝ քաղաքին հեթանոս բնակչութիւնը ամբաստանեց «ամբարիշտ քրիստոնեաները» եւ իրենց առաջնորդը՝ իբրեւ պատճառ այս վարակիչ հիւանդութեան: Իր հօտէն շատ սիրուած եւ բռնուած անձնաւորութիւն մըն էր, որովհետեւ իրեն համար սովորութիւն ըրած էր վճիռ չտալ նախքան խորհրդակցելը իր հոգեւորական դասուն հետ եւ նախքան ստանալը իր ժողովուրդին հաւանութիւնը:

258 թուին նոր հալածանքի հրովարտակ մը հանուեցաւ Վաղերիանոս Կայսեր կողմէ: Կիպրիանոս առաջին զոհերէն մէկը եղաւ այս հալածանքին: Քաղաքին կուսակալը քաղաքավարութեամբ իր մօտ հրաւիրեց զայն: Կիպրիանոս գիտնալով հանդերձ հրաւիրին դրդապատճառը՝ ներկայացաւ կուսակալին, որ քննութեան ենթարկեց զայն իր հաւատքի մասին: Կիպրիանոս յայտարարեց, որ կը հաւատայ մէկ ճշմարիտ Աստուծոյ միայն, կը մերժէ զոհել կուռքերուն եւ կը մերժէ նաեւ տալ անունները իր քահանաներուն: Նախ աքսորուեցաւ երբ կուսակալը փոխուեցաւ, կանչուեցաւ Կարթագինէ երկրորդ անգամ դատուելու: Դարձեալ մերժեց զոհել Հռովմէական աստուածներուն, ուստի մահուան դատապարտուեցաւ: Առաջնորդեցին զայն մահավայրը. հսկայ բազմութիւն մը կը հետեւէր իրեն: Նախ հանեց իր արտաքին եկեղեցական զգեստները ու տուաւ իր սարկաւազներուն, որոնք իբրեւ «բարեկամներ» արտօնուած էին հետեւիլ իրեն: Անոնց պատուիրեց նաեւ 25 կարմիր ոսկի տալ իր անձնական ստացուածքէն՝

զինքը սպաննող դահիճին: Անձամբ կապեց իր աչքերը, ապա ծունկի դալով աղօթեց եւ սպասեց սուրբի հարուածին, որ չուշացաւ կտրել անոր թանկագին գլուխը, որ Աստուածային իմաստութեամբ ու շնորհքով լեցուած էր: Մարմինը իր ինկած տեղը մնաց ամբողջ օրը՝ գոհացքով լեցուած էր: Մարմինը իր ինկած տեղը հետաքրքրութիւնը: Գիշերը նելու համար հեթանոսներու վատաւորող հետաքրքրութիւնը: Գիշերը հաւատացեալներ եկան ջահերով ու լապտերներով եւ վերցուցին իրենց կորովի եւ սրբացած եպիսկոպոսի մարմինը եւ թաղեցին պատուով:

Մեծ է Կիպրիանոսի գրական վաստակը, որ կը բաղկանայ նախ ճամնակներէ (թիւով 65), որոնցմով ոմանց պատասխաններն ալ (16 հատ) պահուած են ասոնց հետ: Այս նամակները մեծ լոյս կը սփռեն ժամանակակից եկեղեցական պատմութեան եւ կրօնական խնդիրներու մասին: Իր գրական գործերուն մէջ են նաեւ բազմաթիւ ճանօնք, որոնք որչափ ալ գործնական ոգիով գրուած ըլլան, իրենց մէջ մեծ մթերք կը պարունակեն կրօնաբարոյական ու աստուածաբանական հարցերու: Կիպրիանոս երկրորդ մեծ ու նշանաւոր եկեղեցական հայրն է Ափրիկէի՝ առաջինը ըլլալով Տերտուլիանոսը (160-220) ու երրորդը՝ աւելի նշանաւոր՝ Ս. Օգոստինոս:

Թէեւ Կիպրիանոս գլխատուած էր Սեպտ. 14ին, բայց այդ օրը յետոյ վերապահուած ըլլալով Խաչվերացի՝ Լատին Եկեղեցիին կը տօնախմբէ զայն Սեպտ. 16ին: Իսկ Յոյն Եկեղեցին շփոթած է զայն Անտիոքացի Կիպրիանոսի հետ, զոր կը տօնէ Հոկտ. 2ին (տես գլ. Ա., թիւ 18): Մեր Յայսմաւուրքներուն մէջ եւս տեղ չունի Ափրիկեցի Կիպրիանոսը:

4. ԱԼԲԱՆՈՍ (305)

Առաջին ծանօթ մարտիրոսը Բրիտանիոյ՝ Հին Անգլիոյ: Ներկայիս իր անունը կրող (Սենթ Ալպանդ) քաղաքի հեթանոս բնակիչներէն էր Ալբանոս, որ ազնուաբար տունը ընդունեց քահանայ մը, որ կը փախչէր հալածանքէ: Ազդուելով անոր քարոզութենէն՝ քրիստոնեայ մկրտուեցաւ նոյն քահանայի ձեռքով: Երբ օրեր յետոյ զինուորներ երեւցան իր տունը խուզարկելու համար, Ալբանոս անմիջապէս իր քաղքենի հագուստները փոխանակեց քահանայի կղերական զգեստներով եւ ինքզինքը յանձնեց զինուորական քահանայի փոխարէն:

Երբ բարձրացաւ դատաւորի առջեւ եւ մերժեց ուրանալ Քրիստոնէութիւնը, ենթարկուեցաւ ուժգին ճաղանքի: Ու երբ շարունակեց անդըր-դուելի մնալ իր նոր կրօնքին վրայ, գլխատուութեամբ նահատակուեցաւ: Բազմաթիւ զրոյցներ հիւսուած են իր նահատակութեան շուրջ, որոնք ժողովրդական սուրբ մը ըլլալը կը հաստատեն: Իր նահատակութեան տեղւոյն վրայ ետքէն կառուցուեցաւ Հոյակապ արքայարան մը, որ ատեն մը առաջին գիծի վրայ էր Անգլիոյ բազմաթիւ արքայարաններու մէջ: Շփոթութիւն կը տիրէ իր նահատակութեան ժամանակի մասին. ընդունուած եւ աւանդական տեսակէտը այն է, որ նահատակուած է Դիոկղետիանոսի հալածանքի շրջանին՝ 305ին: Իսկ ներկայիս ոմանք դար մը ետ կը տանին անոր նահատակութիւնը եւ կը դնեն 209ին:

Լատին եւ Անգլիկան Եկեղեցիները կը յիշատակեն զայն Յունիս 22ին: Ձէ անցած յունական տօնացոյցի եւ ոչ ալ՝ մեր Յայսմաւուրքներուն:

5. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՄԻԼԱՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ (340-397)

Տրուած ըլլալով, որ Ամբրոսիոս նախաքաղկեդոնական շրջանի պատկանող սրբակենցաղ ու բազմարդիւն եկեղեցական հայր մըն է, եւ միւս կողմէ՝ ընդարձակ տեղ գրաւած է ան մեր Յայսմաւուրքներու մէջ՝ առաջին հարցումը, որ կը ծագի մտքերուն մէջ, բնականօրէն այն պիտի ըլլայ, թէ ինչո՞ւ է անցած մեր տօնացոյցին: Թերեւս միակ բանաւոր ենթադրութիւնն այն է, որ Ե. դարու առաջին կէսին, երբ մեր եկեղեցական կարգերը, ներառեալ տօնացոյցը, վերջնական ձեւ առած էին արդէն, Ամբրոսիոս դեռ չէր անցած տօնացոյցին, քանի որ վախճանեցաւ Դ. դարու վերջին տարիները: Բաց աստի, այդ թուականներուն առհասարակ տօնական յիշատակութեան կ'արժանանային լոկ մարտիրոսները, այսինքն հաւատքի համար արիւն թափողները, կամ ճգնողական վարքով մարմնի ցանկութիւնները եւ կիրքերը մեռուցանողները: Ներկայիս սակայն Ամբրոսիոս անցած է յունական տօնացոյցին եւ կարեւոր տեղ կը գրաւէ անոր մէջ:

Ամբրոսիոս ծնած կը նկատուի Գաղղիոյ մէջ, որուն կառավարիչն էր իր հայրը՝ Լոռովէն նշանակուած: Ստացաւ Լոռովէական ազնուական ընտանիքներու յատուկ բարձրագոյն ուսմունք եւ մասնագիտա-

ցաւ օրէնսդիտութեան մէջ: Երբ իբրեւ օրէնսգէտ կը պաշտօնավարէր Լոռովի մէջ, կառավարիչ նշանակուեցաւ Հիւս. Իտալիոյ, որու մայրաքաղաքն էր ՄիլԱն: Ու երբ այդ քաղաքին եպիսկոպոսական աթոռը թափուր մնաց 374ին, ամէնքին մտածումները եւ փափաքները կեդրոնացան նոյնինքն Ամբրոսիոսի վրայ՝ հակառակ այն իրողութեան, որ թէեւ քրիստոնէութիւնը հիմնապէս սորված ու կիրարկող էր, բայց դեռ մկրտուած չէր, ըստ ժամանակի սովորութեան, որով յաճախ կ'ուշացնէին մկրտութիւնը, յատկապէս պետական մարդիկ: Կոստանդիանոս Կայսր մկրտուեցաւ իր մահուան անկողինին մէջ. Թէոդոս Կայսրը երբ հիւանդ ինկաւ, այն ատեն որոշում տուաւ մկրտուիլ: Ընտրութենէ անմիջապէս յետոյ մկրտուեցաւ Ամբրոսիոս եւ Լոռովմ ղրկուեցաւ եպիսկոպոս ձեռնադրուելու համար: Ընդարձակ է Ամբրոսիոսի վարքը. մենք պիտի յիշենք քանի մը դրուագներ միայն, որոնք պիտի հաստատեն, թէ որքան բարձր հեղինակութեամբ ու գիտակցութեամբ ստանձնած էր ան իր եպիսկոպոսական պաշտօնը:

1.- Լոռովի հեթանոսամիտ ծերակուտականներէն ոմանք ուզեցին յաղթութեան դիցուհիին արձանը վերականգնել կայսրութեան Մերակոյտի շէնքին վրայ: Ամբրոսիոս զօրաւոր կերպով ընդդիմացաւ այս որոշման եւ համոզեց Վաղենտիանոս երիտասարդ Կայսրը, որ ի վերջոյ չարտօնեց այս ծրագրի իրականացումը:

2.- Վերոյիշեալ կայսեր մայրը՝ Յուստինա, որ Արիոսական մըն էր, հրամայեց Ամբրոսիոսին աղօթաւայր մը յանձնել Արիոսականներուն: Ամբրոսիոս մերժեց:

3.- Սելանիկի մէջ 390 թուականին ըմբոստութիւն մը ծագած էր, որու ընթացքին սպաննուած էր կայսերական կառավարիչը: Թէոդոս Կայսրը, պատժելու համար ըմբոստները, հրամայեց անգլխաբար ջարդել քաղաքի բնակչութիւնը: Այս ջարդին զոհ գացին որքան մեղաւոր, նոյնքան ալ անմեղ քաղաքացիներ՝ շուրջ 7000 հոգի: Ամբրոսիոս, հակառակ այն իրողութեան, որ սերտ բարեկամն էր կայսեր, նախ գրեց շատ խիստ նամակ մը՝ Հաստատելով ու ազդարարելով, որ նման մեծ ոճիր մը պէտք էր քաւուէր կայսեր կողմէ հրապարակային խոստովանանքով, զղջումով եւ ապաշխարանքով: Ու երբ Միլան եկաւ կայսրը, Ամբրոսիոս արգիլեց անոր մուտքը եկեղեցիէ ներս: Համակայսրը, Ամբրոսիոս արգիլեց անոր մուտքը եկեղեցիէ ներս: Համակայսրը ու մերկանալով իր կայսերական պատմուճանէն՝ կերպեցաւ կայսրը ու մերկանալով իր կայսերական պատմուճանէն՝

Հրապարակաւ լացաւ զղճում յայտնեց ու ենթարկուեցաւ ութ ամսուան ապաշխարանքի, երբ արգիւրուած էր իրեն ոեւէ եկեղեցի մտնելը:

4.- Ամբրոսիոսի կարեւոր գործերէն մէկը եղաւ դարձի բերել ու մկրտել մեծ մտաւորական մը, որ մինչեւ այդ կը խարխափէր Մանիքէութեան եւ Պղատոնական փիլիսոփայութեան բաւիրներուն մէջ: Այդ անձը եղաւ նոյնինքն մեծահռչակ Ս. Օգոստինոսը:

Ամբրոսիոսը եղաւ առաջին եկեղեցականներէն մէկը Արեւմուտքի մէջ, որոնք տեսան կարեւորութիւնը շարականներուն, Հաւատացեալներուն հոգեւոր շինութեան համար. ուստի շարադրեց բազմաթիւ հոգեւոր երգեր, որոնցմէ ոմանք մինչեւ այսօր կը գործածուին Լատին եկեղեցիին մէջ:

Շինել տուաւ Միլանի մեծ պագիլիկան՝ մայր եկեղեցին, որ մինչեւ օրս կը պահէ իր գոյութիւնը, անշուշտ դարերու ընթացքին վերանորոգութիւններով. եւ կը կրէ իր անունը: Հռովմէական եկեղեցիին մէջ շատ մը կարգաւորութիւններ կան, որոնցմէ ոմանք եթէ իր կողմէ ալ հաստատուած չըլլան, բայց ծանօթ են իր անունով, ինչ որ նշան է իր ժողովրդականութեան ու կարողութեան՝ այդ մարզերու մէջ: 1.-Ամբրոսեան պատարագ ու ծէս: 2.-Ամբրոսեան շարականք: 3.-Ամբրոսեան երգեցողութիւնք կամ եղանակք: 4.-Ամբրոսեան Գրատուն: 5.-Ամբրոսեան Միաբանութիւն, եւլն. եւլն:

Ամբրոսիոս արդարեւ եղած է եպիսկոպոսի կատարեալ տիպարը իր ուժեղ հեղինակութեամբ, արդիւնաւոր գործունէութեամբ, անձնորի սրբութեամբ եւ ժողովրդանուէր սիրով, այն աստիճան, որ Մեծն Թէոդոս Կայսր ըսած է իր մասին. «Չեմ ճանչցած եպիսկոպոս մը, որ ամբողջապէս արժանի եղած ըլլայ այդ անունին, որքան եղած է Ամբրոսիոս»: Անոր անձին մէջ ներդաշնակուած էին Հռովմայեցի ազնուականի մը մեծանձնութիւնը եւ քրիստոնեայ սուրբի մը հեղութիւնը, բարեխառնուած էին իր մէջ վարչական մեծ կարողութիւն մը՝ կրօնական բարձր գիտութեան, մեծ հմտութեան ու սրբակենցաղ վարքին հետ:

Ըստ մեզի՝ այն կարեւոր դիրքը, որ Հռովմի Սեղբեստրոս Հայրապետը կը գրաւէ մեր եկեղեցիի մէջ, պարզապէս Ս. Գր. Լուսաւորիչի

հետ ունեցած իր աւանդական կամ առասպելական կապին համար, արժանի էր որ գրաւէին Ս. Ամբրոսիոս եւ Ս. Օգոստինոս՝ իբրեւ անդամք Քրիստոնէական եկեղեցիի «երկոտասան վարդապետներու»: փառաւոր խումբին, որուն երրորդ տեղը կը գրաւէ Սեղբեստրոս: փառաւոր խումբին, որուն երրորդ տեղը կը գրաւէ Սեղբեստրոս: Հայրապետը Հռովմի եկեղեցիի կողմէ՝ Նախ՝ որովհետեւ Սեղբեստրոս Հայրապետը «վարդապետ եկեղեցոյ». քանի որ աստուածաբանական կամ այլ գրութիւններ չէ ձգած: Իսկ Ս. Ամբրոսիոս ու Ս. Օգոստինոս, ինչպէս տեսանք եւ քիչ յետոյ պիտի տեսնենք, ձգած են բազմաթիւ կրօնական, բարոյական ու աստուածաբանական գործեր, որոնցմով անոնք տիրացած են Հռովմէական եկեղեցիի մէջ բարձրագոյն դիրքի՝ իբրեւ Լատին եկեղեցիի չորս մեծագոյն վարդապետներէն երկուքը (միւս երկուքն են Յերոնիմոս՝ լատին Աստուածաշունչի մեծ թարգմանիչը եւ հմուտ աստուածաբանը, եւ Մեծն Գրիգոր Պապը՝ հաւանաբար մեծագոյնը պապերուն, իր խիզախ գործունէութեամբ, հաւանաբար մեծագոյնը պապերուն, իր խիզախ գործունէութեամբ, Եւրոպայի ամբողջական քրիստոնէացումով, սրբակենցաղ վարքով ու առատ գրական արտադրութեամբ): Դժբախտաբար Ամբրոսիոսի գործերէն հազիւ թէ մէկ երկու հատուկորներ թարգմանուած են Հայերէնի, հաւանաբար ետքի ժամանակներուն: Այս իրողութիւնն ալ կարելի է նկատել ուրիշ պատճառ մը անոր անծանօթ մնալուն մեր մէջ եւ հետեւաբար տօնելի սուրբ մը չըլլալուն:

Փեշտիմալճեանի խմբագրած Յայսմաւորքի մէջ Ամբրոսիոսի վկայաբանութիւնը կը սկսի այսպէս. «Այր իմաստուն եւ հանճարեղ, հմուտ Աստուածաշունչ Գրոց եւ արտաքին իմաստութեան...», ու կը վերջացնէ այսպէս, զոր թարգմանաբար յառաջ կը բերենք. «Իբրեւ լուսաւոր ջահ փայլեցաւ Աստուծոյ եկեղեցիին մէջ: Նախանձաւոր էր ուղղափառ հաւատքի եւ տապալիչ հերձուածողներու, յատկապէս Արիոսականներու եւ այլ չարափառներու, զորս փոշիի պէս անյայտացուց եկեղեցիէն: Գրեց շատ ճառեր ուղղափառ հաւատքի մասին, զորս ձգեց իբրեւ յաւիտենական յիշատակ: Եւ ինքը խոր ծերութեան հասնելով՝ ննջեց խաղաղութեամբ ի Յիսուս Քրիստոս Դեկտեմբերի 7ին ու թաղուեցաւ Միլան քաղաքի եկեղեցիին մէջ»: Արդարեւ Լատին եւ Յոյն եկեղեցիներ ալ կը տօնեն զայն Դեկտ. 7ին: Իսկ Մարտոնի հրատարակած Յայսմաւորքը կը նշանակէ զայն Դեկտ. 12ին:

6. ՅԵՐՈՆԻՄՈՍ (342-420)

Մեծագոյն եկեղեցական Հայրերէն մէկն է Լատին Եկեղեցիին եւ մեծագոյնը անցեալի Ս. Գիրքի մասնագէտներուն: Իր կողմէ կատարուած Աստուածաշունչի լատիններէն թարգմանութիւնը ցարգ գործածական ու պաշտօնական Ս. Գիրքն է Հռովմէական Եկեղեցիին՝ «Վուկաթա» անունով:

Մնած է 342ին Ստրիգօ կոչուած գիւղաւանը, Դաղմատիա նահանգի մէջ, Ադրիականի հիւսիս արեւելեան եզերքը: Բարձրագոյն ուսմունքը ստացաւ Հռովմի մէջ: Թէեւ ծնած ու մեծցած էր քրիստոնեայ ընտանիքի մը մէջ, սակայն մկրտուեցաւ 18 տարեկանին, ինչպէս յիշեցինք վերեւ՝ ըստ ժամանակի սովորութեան, որ կ'ուշացնէր մկրտութիւնը առհասարակ մինչեւ չափահասութեան տարիքը, երբեմն անկէ ալ անդին:

374 թուականին անցաւ արեւելք, ուր անցուց 4-5 տարիներ ճգնողական կեանքով, Անտիոքի արեւելքը տարածուող անապատի ճգնաւորներուն հետ: Այստեղ է, որ հրեայ ռաբբիէ մը սորվեցաւ եբրայեցերէն լեզուն, որ այնքան անհրաժեշտ պիտի ըլլար իրեն Ս. Գրքի իր թարգմանչական մեծ գործին մէջ: Վերադարձի ճամբուն վրայ՝ Անտիոքի մէջ քահանայ ձեռնադրուեցաւ, գրեթէ հակառակ իր փափաքին, ու այդ իսկ պատճառով շատ չկիրարկեց զայն՝ ինքզինքը գրեթէ ամբողջութեամբ նուիրած ըլլալով ուսումնական եւ թարգմանչական գործին: Անտիոքէն անցաւ Կ. Պոլիս, ուր ժամանակ մը ուսանեցաւ «առ ոտս» Ս. Գրիգոր Նազիանզանցի: 382ին վերադարձաւ Հռովմ, ուր մինչեւ 385 իբրեւ քարտուղար ծառայեց Դամասոս Պապին, որ թիւադրեց իրեն վերանայումի ենթարկել Նոր Կտակարանի Հին լատիններէն թարգմանութիւնը: Այս աշխատանքի ընթացքին է, որ իր մէջ ծնաւ գաղափարը եւ ծրագիրը ամբողջ Աստուածաշունչը ի նորոյ թարգմանելու լատիներէնի: Այս հսկայական գործին ձեռնարկեց Դամասոս Պապի մահէն յետոյ, երբ կրկին ճամբորդութեան ելաւ արեւելք՝ Անտիոք, Եգիպտոս ու Պաղեստին, եւ վերջնականորէն հաստատուեցաւ Բեթղեհէմ, ուր աւարտեց Աստուածաշունչի ամբողջական թարգմանութիւնը, առաւելաբար եբրայեցերէնի վրայէն, բայց պահելով Սօթանասնից թարգմանութեան գիրքերու շարքը եւ թիւը եւ անունները: Այս կոթողական գործը վերջացուց 404ին, երբ նոր պիտի

սկսէր Աստուածաշունչի Հայերէն թարգմանութիւնը Ս. Մեսրոպի ձեռքով:

Յերոնիմոս եղաւ նաեւ խիստ դաստիարակը եւ հոգեւոր առաջնորդը Հռովմայեցի կարգ մը բարձրաստիճան տիկիւններու, որոնցմէ ոմանք Հետեւեցան իրեն մինչեւ Բեթղեհէմ, եւ այնտեղ ասոնցմէ ամէնէն նշանաւորը Պապ իր ծախքով շինել տուաւ երկու վանքեր, մին այրերու եւ միւսը՝ կիներու համար. առաջինին մեծաւորը եղաւ Յերոնիմոս, իսկ երկրորդին՝ ինք:

Բացի Աստուածաշունչի թարգմանութեան հսկայ գործէն, Յերոնիմոս ունի բազմաթիւ գրութիւններ՝ մեծ մասամբ Ս. Գրքի մեկնողական աշխատանքներ, ճառեր եւ հակաճառութիւններ՝ ընդդէմ Արիոսականութեան, Պեղագեանութեան եւ Որոգիւնէսի, որոնց մէջ յատկապէս երեւան կու գայ Յերոնիմոսի բուռն, խիստ, երբեմն մինչեւ իսկ զայրացկոտ բնաւորութիւնը: Ունի նաեւ թղթակցութիւններ, որոնք մեծ արժէք կը ներկայացնեն հոգեւորական ու պատմական տեսակէտէ: Իր կրօնական եւ ճգնողական իտէալները շատ բարձր էին: Որքան տէ՛ր կրօնական եւ ճգնողական իտէալները շատ բարձր էին: Որքան խիստ էր Հերետիկոսներու եւ մարդկային բարոյական տկարութիւններու հանդէպ, նոյնքան զիջող ու բարեացակամ եղած է խոնարհներու եւ պարզ հոգիներու հանդէպ: Եկեղեցական Հայրերու մէջ առաջինը եղաւ տեսնելու կարեւորութիւնը Աստուածաշունչի այսպէս կոչուած «երկրորդականոն» կամ «ապոկրիֆ» կոչուած գիրքերուն, որոնք չկային եբրայական բնագրին մէջ: Ու հակառակ այն իրողութեան, որ իր թարգմանութիւնը կատարեց եբրայական բնագրի վրայէն՝ բայց պահեց երկրորդականոնները: Ոչ մէկ թարգմանութիւն այնքան լայն չափով բարերար դեր կատարած է Բրիտանական Եկեղեցիի մէջ, որքան Յերոնիմոսինը, որովհետեւ Հինգերորդ դարէն սկսեալ միակ գործածական Ս. Գիրքը եղած է ամբողջ Արեւմուտքին մէջ եւ անով սնած են Արեւմուտքի բոլոր մեծ միտքերը մինչեւ ու ժիջնադարը եւ Բողոքականութեան ծագումը:

Յերոնիմոս վախճանեցաւ 420ին Բեթղեհէմի մէջ եւ այնտեղ ալ թաղուեցաւ: Լատինք կը տօնեն զայն Սեպտ. 30ին, Յոյնք՝ Յունիս 15ին: Մարգուանցի Յայամաւորքի մէջ չ'է յիշուած: Իսկ Փեշաբ-մալճեանի մէջ յիշուած է Սեպտ. 30ին, լոկ երեք ու կէս տողով: Իր

գործերէն ունէ մէկին Հայերէնի Թարգմանուած ըլլալու յիշատակութեան չհանդիպեցանք:

7. Ս. ՕԳՈՍՏԻՆՈՍ (354-430)

«Սուրբ» բառը այնքան ամուր փակած է իմաստասէր ու հոգեւոր խոր խառնուածքով այս եկեղեցականի անունին, որ առհասարակ անբաժան կը գործածուի իր անուան հետ:

Մնած է 354ին Հիւսիսային Ափրիկէի Թագաստ քաղաքը, Նումիտիա երկրամասին մէջ, այսօրուան Ալճերիոյ Հիւսիս արեւելքը: Իր հայրը հեթանոս մըն էր, ու մայրը՝ Մօնիքա, շատ բարեպաշտ քրիստոնեայ կին մը, որուն աղօթքներուն՝ եւ իր դարձին համար կատարած աշխատանքներուն շատ բան կը պարտի Օգոստինոս: Իր մօր հոգածութեամբ թէեւ ստացած էր քրիստոնէական կրթութիւն, բայց չէր մկրտուած մինչեւ իր վերջնական դարձը 33 տարեկանին: Տասնըվեց տարեկանին, բարձր ուսմունք ստանալու համար ղրկուեցաւ Կարթագինէ քաղաքը, որ այդ շրջանի քաղաքական, մտաւորական ու կրօնական կեդրոնն էր Ափրիկէի: Համալսարանի մէջ ուսանեցաւ հռետորութիւն՝ օրէնսգէտ դառնալու նպատակով: Այստեղ է, որ ծանօթացաւ երիտասարդ կնոջ մը, որուն հետ ապրեցաւ, արտաքոյ Ս. Պակի, 15 տարիներ, ինչ որ մեծ ցաւ պատճառեց մօրը, եւ ունեցաւ զաւակ մը, որուն շատ կապուած էր Օգոստինոս: Համալսարանը աւարտելէն յետոյ, փոխանակ օրէնսգէտ դառնալու, փնտռտուքի ելաւ իմաստասիրական կամ կրօնական դրութեան մը, որուն կարենար կապել իր կեանքը: Այդ առթիւ յարեցաւ Մանիքէական աղանդին, որ խառնուրդ մըն էր Քրիստոնէական, Զրադաշտական ու Հնդկական կրօնքներու, եւ որուն հիմնական ուսուցմունքը սա էր. մարդուն մէջ բարիի եւ չարի, լոյսի եւ խաւարի յաւիտենական պայքարը կայ. կրօնքին նպատակն է ցուցնել մարդուն կերպերը եւ միջոցները բարիին կողմը բռնելու եւ չարին դէմ պայքարելու: Յիսուս, Զրադաշտ, Պուտոս եւ այլ մարգարէներ ղրկուած էին լոյսի եւ բարութեան Աստուծո՛մէ՝ օժանդակելու մարդոց, որ իրենց պայքարը յաղթութեամբ պսակեն: Աղանդին հիմնադիրը՝ Մաճի, կը քարոզէր, որ ինք գտած է այդ ճամբան, ինչպէս նաեւ կերպերը եւ միջոցները, որոնք մարդիկը անպայման պիտի առաջնորդէին փրկութեան, այսինքն չարութեան ոյժերու

տիրակալութենէն ազատագրումի. այդ նպատակը կ'իրագործուէր խիստ ճշնոդական կեանքով, որուն մաս կը կազմէր բուսակերութիւնը: Շուտով եւ լայնօրէն տարածուեցաւ Պարսկաստանի մէջ ծնունդ առած այս կրօնքը, թէ՛ Հռովմէական եւ թէ՛ Պարսկական կայսրութեանց մէջ՝ հասնելով արեւելքէն Ջինաստան եւ արեւմուտքէն Հռովմ եւ Հիւս. Ափրիկէ: Օգոստինոս շուրջ տասը տարի կապուած մնաց այս աղանդին: Սակայն տեսնելով, որ իր միտքը չարչարող բոլոր խնդիրներուն լուծում չի կրնար տալ այդ կրօնքը՝ յուսախաբ եղած ձգեց զայն ու յարեցաւ Նորպղատոնական իմաստասիրական դրութեան, որուն հոգեւոր ու բարոյական ուսուցումները շատ մօտ կը նկատուէին Քրիստոնէութեան:

383ին անցաւ Հռովմ, ուր հաստատեց հռետորութեան դպրոց մը: Այստեղ ալ յուսախաբ ըլլալով իր աշակերտներու ընթացքէն՝ փոխադրուեցաւ Միլան, ուր ինկաւ ազդեցութեան տակ այդ քաղաքի հռչակաւոր եպիսկոպոսին՝ Ամբրոսիոսի, որուն քարոզները արդարեւ կը փարատէին իր միտքը չարչարող շատ մը կրօնաբարոյական խնդիրները: Այստեղ է, որ տեղի ունեցան իր հոգեկան վերջին եւ մեծ պայքարները ընդմէջ աշխարհիկ պատիւի, գիրքի, հարստութեան ու սեռային ցանկութեան՝ մէկ կողմէն, ու ամբողջութեամբ Աստուծոյ ընծայուած կեանք մը ապրելու տենչին՝ միւս կողմէն: Իր վերջնական որոշումը տրուեցաւ պարտէզի մը մէջ, ուր այս ներքին պայքարներու տարուբերումի մը ընթացքին ձայն մը լսեց, որ կ'ըսէր իրեն. «Ա՛ն եւ տարուբերումի մը ընթացքին ձայն մը լսեց, որ կ'ըսէր իրեն. «Ա՛ն եւ կարդա՛»: Չեւք առաւ իր Սուրբ Գիրքը, բացաւ զայն, ու աչքերը յանկարծ ինկան Պօղոս Առաքեալի հետեւեալ խօսքերուն վրայ.

«Ժամանակն է քունէն արթննալու որովհետեւ այժմ աւելի մօտ է մեզի փրկութիւնը, քան երբ հաւատացինք առաջին անգամ: Գիշերը անցաւ, ցերեկը մերձեցաւ: Հանենք ու նետենք մեր վրայէն խաւարի գործերը եւ հագնինք լոյսի զրահը: Զգաստ ու պարկեշտ ընթացք ունենանք, օր-ցերեկով ապրող մարդու մը պէս: Այլեւս մեր վրայ չտիրանանք, օր-ցերեկով ապրող մարդու մը պէս: Այլեւս մեր վրայ չտիրակալենք, որ-ցերեկով ապրող մարդու մը պէս: Այլեւս մեր վրայ չտիրակալենք, որ-ցերեկով ապրող մարդու մը պէս: Այլեւս մեր վրայ չտիրակալենք, որ-ցերեկով ապրող մարդու մը պէս: Այլեւս մեր վրայ չտիրակալենք, որ-ցերեկով ապրող մարդու մը պէս: Այլ Բրիստոս ըլլայ ձեր զէնքն ու զրահը: Մարմնի խնամք մի՛ տանիք ցանկութիւնները գոհացնելու համար» (Հռովմ. ԺԳ. 11-14):

Քանի մը ամիսներու առանձնացումէն եւ պահչոյ՞ ու աղօթքով պատրաստութեանէն յետոյ 387 թուականի Զատիկի ճրագայոյցին մկրտուեցաւ Օգոստինոս իր քանի մը մտերիմ ընկերներով, ձեռամբ Միլանի Եպս. Ամբրոսիոսի, ի մեծ մխիթարութիւն եւ երջանկութիւն իր մօրը, որ միասին էր այս միջոցին: Իր ոչ-օրինական կնոջմէ շատոնց բաժնուած ու ազատագրուած էր. իրենց չափահաս զաւակը ուզած էր հօրը հետ մնալ եւ քրիստոնեայ մկրտուիլ անոր հետ:

Յաջորդ տարին վերադարձաւ Ափրիկէ իր ծննդավայրը՝ Թագաստ, ուր կազմակերպեց տեսակ մը հաւաքական հոգեւոր կենցաղ իր առաջնորդութեան ներքեւ: Օր մը երբ այցելած էր իրենցմէ ոչ շատ հեռու Հիպպօ քաղաքը, տեղացիներ այնքան լաւ տպաւորուեցան իրմէ, որ գրեթէ բռնի տարին զայն իրենց եպիսկոպոսին ձեռնադրութեան համար: 391ին քահանայական կարգ ստացաւ, իսկ 395ին եպիսկոպոս ձեռնադրուեցաւ իբրեւ օգնականը Հիպպոյի ծերունի առաջնորդին, որուն մահէն յետոյ առանձինն հովուեց այդ քաղաքի քրիստոնեաները 35 տարիներ, մինչեւ իր մահը, որ տեղի ունեցաւ 430ին:

Ս. Օգոստինոս Արեւմտեան Եկեղեցիի մեծագոյն հայրերէն մէկն է: Իր մեծութիւնը կը կայանայ իր իմաստասիրական վերլուծող միտքին եւ կրօնական նոյնքան խորունկ խառնուածքին մէջ, որով կրցած է թափանցել քրիստոնէական ճշմարտութեանց էութեան մէջ ու զանոնք ներկայացնել գրաւոր երկասիրութիւններով: Պարտաւորուեցաւ պայքարիլ իր ժամանակի երեք մեծ հերետիկոսութեանց դէմ՝ Մանիքէութեան, Դոնատեաններու եւ Պեղագեաններու, ու այս հակաճառութեանց ընթացքին կազմաւորուեցան ու յստակացան իր աստուածաբանական ու եկեղեցաբանական տեսութիւնները, որոնք մինչեւ օրս ալ կը պահեն իրենց կարեւորութիւնը եւ հեղինակութիւնը Լատին Եկեղեցիի մէջ:

Անձնուէր, անվեհեր ու բազմաշխատ եպիսկոպոսն էր Ս. Օգոստինոս, որ շարունակ զբաղուած էր իր հօտին հոգեւոր, բարոյական ու նիւթական բարեկեցութեան համար: Եարունակեց ապրիլ գրեթէ այն վանական դրութեամբ, զոր ստեղծած էր դարձէն յետոյ, նաեւ իր եպիսկոպոսարանին մէջ՝ իր մայր եկեղեցիի բազմաթիւ հոգեւորական պաշտօնեաներու հետ, խիստ կարգապահական կանոններով, անխափան գլխաւորելով ամէնօրեայ պաշտամունքները, քարոզելով ամէն

կիրակի եւ տօնական օրեր ու պատրաստելով չափահաս երախաները մկրտութեան համար: Մինչեւ իսկ իր ձայնը լսելի կը դարձնէր իր քաղաքի «սիվիլ» գործերու եւ ընկերային խնդիրներու մէջ՝ միշտ ի նպաստ արդարութեան եւ ընկերային բարօրութեան: Ու շարունակ գրեց: Մեծ է Օգոստինոսի գրական վաստակը, բախտաւոր է, որ հակառակ վրայէն աւելի քան 1550 տարիներ անցնելուն՝ վերապրած են անոնց մեծագոյն մասը եւ կը պահեն ցայժմ իրենց կրօնական արժէքը: Իրմէ մնացած են 113 գրքոյկներ ու ճառեր զանազան նիւթերու մասին, աւելի քան 200 նամակներ եւ 500է աւելի քարոզներ: Այս բոլորին մէջ սակայն ծաւալով եւ կրօնաբարոյական արժէքով մեծագոյններն են «ԽՈՍՏՈՎԱԼԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ» եւ «ԱՍՏՈՒԾՈՅ ՔԱՂԱՔԸ» գործերը, որոնք մինչեւ այսօր ալ կը կարդացուին ոչ միայն հոգեւորականներու եւ աստուածաբաններու կողմէ, այլ նաեւ հազարաւոր այլ ընթերցողներէն: Առաջինը իր ինքնակենսագրութիւնն է մինչեւ իր դարձը, իսկ երկրորդը՝ բաղկացած 22 մասերէ եւ զբաղած երկար տարիներու ընթացքին՝ 413-426, իրեն թելադրուած է Հռովմի գրաւումէն Գոթերու ձեռքով, առաջնորդութեամբ Ալարիկի: Երբ Արեւմուտքի կարեւորագոյն եւ սուրբ նկատուած քաղաքը բարբարոսներու ձեռքը կ'իյնար ու կը թալանուէր, Ս. Օգոստինոս կը գրէր «Աստուծոյ քաղաքին» վրայ, այսինքն Քրիստոնէական Եկեղեցիի եւ Աստուծոյ թագաւորութեան մասին, որ պիտի մնար անկործանելի եւ յաւիտենական:

Իր աստուածաբանութիւնը անսահման ազդեցութիւն ունեցած է Արեւմուտքի հոգեւոր մտածողութեան վրայ: Ս. Օգոստինոս եղած է նաեւ հոգեւոր կեանքի եւ սրբութեան տիպար մը եւ տիտան մը իր դարձէն յետոյ եւ օրինակ հանդիսացած է դարերու ընթացքին բազմաթիւ հաւատաւոր հոգիներու: Իսկ իր վանական կամ հաւաքական կենցաղի դրութիւնը ընդունուած ու կիրարկուած է բազմաթիւ վանական ու կէսվանական միաբանութիւններէ, որոնք կը կրեն ցայսօր իր անունը: Նախքան Կաթոլիկ Եկեղեցիի դէմ բողոքի դբօշ բարձրացնելը, Լուսիւր այսպիսի Օգոստինոսեան միաբանութեան մը անդամ էր:

Լատինք կը տօնեն Օգոստ. 28ին, Յոյնք՝ Յունիս 15ին: Իր անունը չ'երեւիր մեր Յայսմաւուրքներուն մէջ, ոչ ալ ուեւէ հին թարգմանութիւն՝ իր գործերէն:

8. ՊԱՏՐԻԿ (385-461)

«Իրլանտայի Լուսաւորիչը»: Արդարեւ նմանութիւններ կան Իրլանտայի այս ժողովրդական սուրբին եւ մեր Ս. Գր. Լուսաւորչին միջեւ: Երկուքն ալ թէեւ իրենց լուսաւորած երկրին բնիկներէն չեն, բայց նոյնացած են այլեւս իրենց դարձի բերած ժողովուրդին հետ: Երկուքն ալ իրենց քարոզած երկրին թագաւորը դարձի բերած եւ ատով պահպանուած են երկրի գրեթէ ամբողջական դարձը: Երկուքն ալ իրենց ձեռնադրութիւնը ստացած են դուրսէն եւ եղած են առաջին պաշտօնական հայրապետները իրենց հաստատած Եկեղեցիներուն: Վերջապէս երկուքն ալ շինած են նշանաւոր մայր եկեղեցիներ, որոնք եղած են իւրաքանչիւր երկրին մտաւորական, հոգեւոր ու վարչական կեդրոնները եւ որոնք իրենց գոյութիւնը եւ դիրքը կը շարունակեն ցայսօր:

Պատրիկ ծնած կը նկատուի 385ին Հռովմա-Բրիտոն ծնողքէ Բանավէմ կոչուած անծանօթ գիւղականի մէջ, ի Գաղղիա կամ ի Մեծն Բրիտանիա կղզին: Իր հայրը քաղաքային պաշտօնեայ ըլլալով հանդերձ՝ եղած է նաեւ սարկաւազ, իսկ մեծ հայրը՝ քահանայ: 16 տարեկանին գերի բռնուած եւ տարուած է Իրլանտա, ուր հովուութիւն ընելու դատապարտուած է: Այս շրջանին է, որ աստուածային շնորհը կը սկսի զօրաւոր կերպով գործել իր մէջ եւ կը դառնայ կրօնասէր հաստացեալ եւ ջերմեռանդ աղօթքի մարդ: Վեց տարի յետոյ յաջողեցաւ փախչիլ եւ վերադառնալ իր հայրենի տունը: Սակայն երազին մէջ իրեն յայտնուեցաւ, որ ինք սահմանուած է վերադառնալ Իրլանտա եւ երկրին առաքեալը լինել: Այդ լուրջ գործին ինքզինքը պատրաստելու համար վառք մը մտաւ Գաղղիա եւ սարկաւազ ձեռնադրուեցաւ 417ին: Ի վերջոյ 431ին Իրլանտա ղրկուեցաւ նախ իբրեւ օգնական Պալլատինոս Եպիսկոպոսին, որ վախճանեցաւ տարի մը յետոյ, եւ Պատրիկ յաջորդեց անոր՝ եպիսկոպոս ձեռնադրուելով ի Գաղղիա, կամ ի Բրիտանիա, Գերմանոս Եպիսկոպոսէն, որ իր վարդապետը եղած էր պատրաստութեան շրջանին:

Ս. Պատրիկէն առաջ թէեւ քրիստոնեաներ կային Իրլանտայի մէջ, բայց այդ երկիրը իր ամբողջական դարձը կը պարտի իրեն, որ գրեթէ 30 տարիներ Աւետարանը քարոզեց կղզիին գրեթէ ամբողջ տարածքին վրայ եւ մէջտեղ բերաւ Իրլանտայի կազմակերպեալ Եկեղեցին: Դար-

ձի բերաւ Լասկեր կոչուած թագաւորը եւ անոր արքունիքը, պայքարեցաւ եւ լուսթեան դատապարտեց Դրուիդները, որոնք տեղական քորմերն էին: Բազմաթիւ եւ գրեթէ ամէն տեսակ հրաշքներ կը վերագրուին Ս. Պատրիկին իր քարոզութեան ընթացքին: Մեծագոյն հրաշքը բնականաբար գրեթէ կիսաբարբարոս ժողովուրդ մը քրիստոնեայ դարձնել ու քաղաքակրթութեան ճամբու մէջ դնելն էր:

Իրլանտացիներ ալ մեզի նման քիչ մը դիւրագրգիռ, կռուազան, բայց բարեպաշտ ու ընտանեակը ժողովուրդ են: Ուրիշ նմանութիւն մը իրենց եւ մեր միջեւ այն է, որ խաչին մեծ կարեւորութիւն կ'ընծայեն: Անոնք ալ ունին, իւրայատուկ ոճով, շատ գեղեցիկ ու գեղաքանդակ խաչքարեր, որոնք սակայն միշտ բնական ու քառաթեւ խաչեր են եւ ոչ թէ մերինին նման միակտոր ժայռի մը վրայ փորագրուած բարձրաքանդակ խաչեր: Իրլանտական խաչերու թեւերը երկրորդ օղակով մըն ալ իրարու հետ բռնուած են փրկելու համար զանոնք դիւրաւ բեկանելու վտանգէն: Այս խաչերուն սկզբնաւորութիւնն ալ կը կապուի Ս. Պատրիկին, որ անսահման յարգանք ունեցած է, կ'ըսուի, խաչի նշանին հանդէպ իբրեւ յուշարարը Յիսուսի փրկագործութեան ու մանաւանդ իբրեւ հալածիչը դեւերու:

444ին հաստատեց երկրի մայր եկեղեցին Արմակ քաղաքին մէջ, որ անկէ յետոյ դարձաւ Իրլանտայի Եկեղեցիին մտաւորական ու վարչական կեդրոնը: Իր կեանքի վերջին տարիները, Մովսէսի, Եղիայի եւ մեր Փրկչին նմանողութեամբ, քառասուն օրեր ծոմ պահած է ամայի տեղ մը, որ այսօր ուխտատեղի է:

Ս. Պատրիկն ալ, Ս. Օգոստինոսի պէս, գրած է իր «ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ» եւ նամակ մը առ «ԿՈՐՈՏԻԿՈՍ», որոնք երկու կարեւորագոյն վաւերագիրներն են իր կեանքի մասին՝ իր ժամանակէն: Իրմէ յետոյ իր մասին գրուած վարքերը առհասարակ լեցուն են զրոյցներով եւ այնքան ալ արժանահաւատ չեն նկատուիր: Վախճանած է 461ին:

Լատինք կը տօնեն Մարտ 17ին, Յունաց մօտ չհանդիպեցանք իր տօնակատարութեան, չէ յիշուած նաեւ մեր Յայսմաւուրքներու մէջ:

Սաբա նշանաւոր դէմքերէն մէկն է Արեւելեան վանականութեան եւ Օրթոտոքս եկեղեցիին. իր օրինակը եւ ուսուցումը կարեւոր դեր կատարած է Արեւելեան վանականութեան զարգացման եւ բարգաւաճումին մէջ: Մնած է 439ին Կապադոկիեան Կեսարիոյ շրջանին մէջ: Երիտասարդ տարիքին ինքզինքը նուիրեց մենակեցութեան: Ապա անցաւ Պաղեստին, ուր աշակերտեցաւ ու Հետեւեցաւ Մելիտիների եւ Հայագգի Մեծն Եւթիմէոսի, որ ուրիշ տիտան մըն է Պաղեստինեան վանականութեան մէջ: 478ին շինեց իր նշանաւոր ճգնաւորական վանքը Երուսաղէմի եւ Մեռեալ ծովի կէս ճամբուն վրայ, Երուսաղէմէն դէպի Հարաւ արեւելք: Այս վանքը՝ դարերու ընթացքին աւելի մեծցած եւ բերդանման ձեւ ստացած, մինչեւ օրս գոյութիւն ունի եւ կը գործէ ՄԱՐ ՍԱԲԱ անուան տակ եւ կը նկատուի աշխարհի Հնագոյն վանքերէն մէկը, որ միշտ բնակուած է խստակենցաղ վանականներէ:

491 թուին գրեթէ յակամայն քահանայ ձեռնադրուեցաւ, ինչ որ անհրաժեշտ չէր նկատուեր իր ժամանակին՝ վանական կենցաղին համար: Քանիցս Պոլիս գացած է իբրեւ ներկայացուցիչը Երուսաղէմի պատրիարքին: 493ին Երուսաղէմի պատրիարքը ընդհանուր արքահայր նշանակեց զայն Պաղեստինի բոլոր վանքերուն եւ մենակեացներուն, որոնց թիւը հազարներու կը հասնէր: Իր վարքը գրուած է Կիւրեղ Սկիւթոպոլսեցիի կողմէ, որ իր պատանութեան ճանչցած է զայն եւ անջնջելի տպաւորութիւն կրած է անկէ: Կարեւոր դեր ստանձնած է իր ժամանակի եկեղեցական վէճերու եւ պայքարներու մէջ իբրեւ ջերմ պաշտպաններէն մէկը Քաղկեդոնական երկարակութեան՝ ընդդէմ Եւտիքեան միաբնակութեան: Պայքարած է մինչեւ իսկ Որոգինէսի տեսակէտներու պաշտպաններուն դէմ: Վախճանած է 532ին իր վանքին մէջ:

Յոյնք եւ Լատինք կը տօնեն Դեկտ. 5ին: Յիշուած է մեր ձեռքին տակ եղած երեք Յայսմաւուրքներուն մէջ Դեկտ. 5ին կամ 4ին՝ ըստ բաւականին ընդարձակ վարքագրութեամբ մը:

Հայրը եւ Հիմնադիրը Արեւմտեան վանականութեան: Մնած կը նկատուի 480ին Իտալիոյ Նորսիա գիւղաքաղաքին մէջ, ազնուական ընտանիքէ: Իր տղայութիւնը անցաւ Հռոմի մէջ, ուր կ'ապրէր իր ծնողաց Հետ եւ կը յաճախէր տեղական դպրոցները: Երիտասարդութեան, այսինքն շուրջ 20 տարեկանին, երբ սկսած էր ստանալ իր բարձրագոյն ուսումնքը, զգուելով Հռոմի մէջ տիրող բարոյական ապականութենէն՝ յանկարծ փոխեց իր միտքը եւ ձգելով իր գիրքերն ու Հօրեմական տունը եւ Հարստութիւնը՝ Հետամուտ եղաւ գտնել տեղ մը, ուր կարենար ամբողջութեամբ Աստուծոյ նուիրուիլ: Քաշուեցաւ Սոքիակօ կոչուած վայրը եւ այնտեղ ճգնաւորական կեանք ապրեցաւ երեք տարիներ քարայրի մը մէջ: Մօտակայ վանքէ մը վանահայր ընտրուեցաւ. յակամայս ընդունեց. բայց տեսնելով, որ վանականներ չեն ուզեր ապրիլ Համաձայն իր խիստ կանոններուն՝ Հրաժարեցաւ ու վերադարձաւ իր քարայրը: Սուրբի եւ Հրաշագործի իր Հռչակը, Ս. Անտոնին պէս, ամէն կողմ տարածուեցաւ, եւ կատարելութեան կեանքի ծարաւի Հոգիներ ինքնաբերաբար իր շուրջ Հաւաքուեցան, որոնց համար վանքեր շինել տուաւ ու վանահայրեր նշանակեց, անոնցմէ մէկին ալ վանահայրը ինք եղաւ՝ աւելի խոստովանալիցները Հաւաքելով իր շուրջը: Կազմեց իր նշանաւոր վանական ԿԱՆՈՆը, որ ի վերջոյ տեղը գրաւեց Արեւմուտքի մէջ կիրարկուող այլ վանական կանոններուն եւ մինչեւ ԺԲ դար միակ ծանօթ գործադրուող ԿԱՆՈՆն էր վանական կեանքի եւ կատարելութեան՝ ամբողջ Արեւմուտքի մէջ, եւ ամէնէն զօրաւոր ազդակներէն մէկը եղած է Արեւմտեան վանականութեան Հիմնական նկարագրի կազմութեան մէջ, որ գրեթէ նոյն է ցայսօր իրենց գոյութիւնը շարունակող կրօնական բազմաթիւ կարգերուն մէջ: Իր ԿԱՆՈՆի յառաջաբանի մէջ կ'ըսէ ան. «Իմ խօսքերս կ'ուղղուին քեզի, ով որ ըլլաս դուն, որ Հրաժարելով քու կամքէդ՝ վրադ առած ես Հնազանդութեան Հօր ու պայծառ զրահը, որպէսզի կարենաս պայքարիլ մեր ճշմարիտ թագաւոր Տէր Քրիստոսի Համար»: Այս կանոնի մէջ զօրաւոր շեշտ դրուած է ԳՈՐԾի կամ ԱՇԽԱՏԱՆՔի վրայ. ծովութիւնը կամ անգործութիւնը նկատուած է կեանքի ամէնէն աւերիչ եւ աղարտիչ ազդակը: Իր ԿԱՆՈՆին նպատակն է «ետ բերել մարդը Աստուծոյ Հնազանդութեան, որմէ հեռացած է ան անհնազան-

դուժեամբ եւ ծուլութեամբ»։ Աշխատանքը կը նկատէր նախապայմանը ամենայն կատարելութեան։ Իր ժամանակի մտայնութեամբ՝ աշխատիլը գերիններու միայն յատուկ կը նկատուէր։ Ս. Բենեդիկտոս զայն կը բարձրացնէ աղօթքի հաւասար դիրքի, որ անհրաժեշտ է մարդկային ընդհանուր բարեկեցութեան եւ հոգեւոր ու Ֆիզիքական առողջութեան համար։

Շեշտ կը դրուի նաեւ հաւաքական կենցաղին, այսինքն միաբանական ու վանական կեանքին վրայ՝ հակադրուած մենակեաց ճգնաւորութեան։ Աստուծոյ այս մարդն ալ ատեն մը վարած էր ճգնողական ու առանձնական կեանք։ Հիմնուած իր անձնական փորձառութեան, ինչպէս նաեւ վանական եւ ճգնողական կեանքի մասին իր ունեցած մեծ հմտութեան վրայ՝ եկած էր այն եզրակացութեան, թէ անհատի կատարելութիւնը կամ վերածնունդը, բացի բացառիկ եւ գերբնական պարագաներէ, կարելի չէ իրագործել առանձնութեան ուղիով, ոչ ալ՝ խստակեաց ճգնողութեամբ, այլ՝ արդարութիւն ընկելով մարդուն Ընկերակցութեան քանի որ մարդը ի վերջոյ ընկերային արարած մըն է։ Եւ թէ՛ ոչ մարմինը եւ ոչ ալ միտքը կրնան երկար ատեն տոկալ չափազանց խստութեանց, առանց վտանգի ենթարկելու իրենքզիրենք՝ դուրս նետելու համար մարդու մէջ գործող չարութեան հակումը։ Այնպէս որ Սուբիակոյի վերջին բնակութեան ընթացքին այլեւս չենք հանդիպիր սովորական ճգնաւորներու եւ ճգնարաններու, այլ՝ կազմակերպեալ հաւաքականութիւններու, որոնք կ'ապրին վանքերու մէջ։ Այս կացութենէն կը ծագէր անհրաժեշտութիւնը նաեւ Հ.Ն.Ա.Ձ.Ա.Ն.ԴՈՒԹ.ԵԱՆ, որ ԱՇԽԱՏԱՆՔԻ հետ յաջորդ հիմնական յատկանիշն էր վանական այս նոր դրութեան։ Իւրաքանչիւր վանք ունէր իր մեծաւորը՝ ընտրուած վանականներու կողմէ, եւ որուն կատարեալ եւ ամբողջական հնազանդութիւն կը պարտէին վանքին բոլոր բնակիչները։ Մեծաւորին իշխանութիւնը ամբողջական էր, այսինքն հայրական կամ նահապետական, միշտ ԿԱՆՈՆԻ սահմաններուն մէջ։ Ինչ որ չէր նախատեսուած այդ ԿԱՆՈՆԻ մէջ, ձգուած էր մեծաւորի հայեցողութեան եւ տնօրինութեան, որուն պարտէին անայլայլ հնազանդիլ բոլոր վանականները։

Ամէն մարդ վանքի մէջ անպատճառ գործ մը պէտք էր ընէր՝ իր գիտցածը եւ կրցածը. օրինակ՝ ջուր կրել, տնական աշխատանքներ

կատարել, գետին սրբել, աման լուալ, կերակուր եփել, պարտէզ աշխատել, ուսուցանել, ուսուանասիրութիւն կատարել, քարոզել, ձեռագիր ընդօրինակել, հիւրընկալութիւն ընել։ Բայց ամէնքն ալ պարտաւոր էին կարդալ եւ ուսանիլ՝ հաւաքաբար կամ առանձնաբար՝ օրական աւսուագն չորս ժամ։ Ամէնքն ալ պարտաւոր էին ներկայ գտնուիլ հաւաքական կանոնական պաշտամանց՝ օրական քանի մը անգամ։

Սակայն Սուբիակոյի վանականներու մէջ ալ ներքին նախանձներ եւ արտաքին հալածանքներ սկսան ցոյց տալ իրենց օձի գլուխները։ Իր վանականները փրկելու համար այս կացութենէն, Բենեդիկտոս փոխադրուեցաւ ՄՈՆՏԷ ԿԱՍՍԻՆՕ կոչուած լեռը, ուր կուսապաշտական մեհանիկ մը կը գտնուի եղբր եւ ուր մինչեւ այդ օրերը կը պաշտուի եղբր Ապոդոնը։ Բենեդիկտոս կործանեց կուռքը, փլցուց բազիլը եւ տեղը շինեց վանք եւ եկեղեցի. ու իր քարոզութեամբ կուսապաշտներու այդ շրջանի մնացորդացը քրիստոնեայ դարձուց։ Սուբիակօ ակելի մեկուսացեալ եւ անմատչելի վայր մըն էր. Մոնտէ Կասսինօ ակելի մատչելի եւ բնակութեանց մօտ դիրք մը ունէր, ինչ որ առիթ մը եղաւ, որ այստեղ վանականներ ակելի յաճախ շփում ունենան արտաքին աշխարհի հետ, ու այս՝ յօգուտ շրջապատին եւ ոչ՝ ի վնաս վանքին։ Այս մայրավանքը դարձաւ առողջ ազդեցութեան կեդրոն մը։ Աշխարհի մէջ գործող հոգեւորականներ կու գային խորհուրդ առնելու իրմէ կամ իր վանականներէ եւ հոգեւորապէս կազդուրուելու վանքին մէջ տիրող կարգ-կանոնէն եւ հոգեւոր մթնոլորտէն։ Ամէն դասակարգի մարդիկ կ'այցելէին, որոնց մէջ անպակաս էին ազնուականներ, եպիսկոպոսներ, մինչեւ իսկ թագաւորներ։ Վանքը եղաւ աղքատներու պաշտպան, հիւանդներու ապաստանարան, փորձի ու փորձանքի, արվարձան, հիւանդներու ապաստանարան, փորձի ու փորձանքի, արվարձան եւ չքաւորութեան մատնուածներու ապաստան։ Վանականներ կ'ուսուցանէին որքան գեղջկական աղքատ դպրոցներու, նոյնքան նաեւ համալսարաններու մէջ։ Իրենցմէ ոմանք արհեստաւորներ եւ արուեստագէտներ էին, իսկ ուրիշներ՝ Հողագործներ. այս մարդերու մէջ ալ օգտակար կը հանդիսանային իրենց շրջապատին։ Այնպէս որ ոչ մէկ գործ կամ ձիրք անտեսուած էր Բենեդիկտոսի վանքերու մէջ։ Սուբիակոն նպատակն էր ստեղծել պայմաններ, ուր ընկերութեան բոլոր խաւերէն մարդիկ կարենային գալ եւ վանքին մէջ ապրիլ, աշխատիլ ու աղօթել՝ օգտակար ըլլալով իր վանքին ու շրջապատին, ու այդ-

պէսով փրկել նաեւ իրենց հոգին, որ բուն նպատակն էր ստեղծուած վանական այս կենցաղին:

Զգալով իր մահուան մօտենալը՝ հրահանգեց, որ փոխադրեն զինք վանքին մատուռը, ուր հաղորդուեցաւ ու երբ բազուկները բարձրացուցած՝ Աստուծոյ գոհութիւն կը մատուցանէր, աւանդեց իր հոգին ոտքի վրայ՝ իր վանականներէն բռնուած: Թաղուեցաւ այն գերեզմանը, ուր թաղուած էր նոյնքան սրբակենցաղ իր քոյրը, որ կ'ապրէր մօտակայ կուսանոց մը, որուն մահէն յետոյ բերել տուած էր անոր մարմինը եւ թաղած իրեն համար պատրաստած գերեզմանին մէջ: Քրոջ անունն է Աքոյաւստիկա, որ իբրեւ սրբուհի կը յիշատակուի Հռովմէական Եկեղեցիին մէջ: Ս. Բենեդիկտոս որքան խաղաղ, ազնիւ ու ծանրագլուխ անձ մըն էր, նոյնքան ալ ուժեղ, կորովի եւ գործունեայ հոգի մը: Կը սիրէր ամէնքը եւ կը սիրուէր ամէնքէն: Իր նկարագրին կեդրոնական գիծը խոհականացումն է. որքան կը շեշտէր անհրաժեշտութիւնը վանական կարգապահութեան, նոյնքան յարգանք ունէր մարդկային անձնաւորութեան եւ անհատականութեան, որ պէտք է խորտակուի կանոններու խստագոյն գործադրութեամբ:

Լատիններ կը տօնեն Մարտ 21ին, Յոյներ՝ Մարտ 14ին: Փեշտի մայրճեանի Յայսմաւուրքին մէջ յիշուած է Մարտ 21ին, իսկ Մարգուանցիին մէջ՝ Մարտ 22ին՝ «Պարկեշտ եւ հրեշտակակրօն բարեհամբաւ ՀԱՅՐՆ ՄԵՐ սուրբն Բենեդիկտոս» սկզբնաւորութեամբ, եւ կը յատկացուին անոր վարքին լման երկու խոշոր էջեր: Մահուան թուականը անստոյգ կը մնայ. Կաթողիկէ Համայնագիտարանը կու տայ 543 թուականը, «Բառարան սրբոցը»՝ 547, իսկ «Օքսֆորտեան բառարանը»՝ 550: Բենեդիկտոսի նշանաւոր վանական «Կանոնը» թարգմանուած է հայերէնի Ներսէս Լամբրոնացիի կողմէ, Անտիոքի մէջ՝ «ՍՐԲՈՑ ՀՕՐՆ ԲԵՆԵԴԻԿՏՈՍԻ ՍԱՀՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԱՑԻՑ ԿՐՕՆԱԻՈՐԱՑ» անուամբ: Իսկ Մխիթար Աբբան թէեւ իր միաբանութիւնը հիմնած է «յանուն կարգի Սրբոյն Անտոնի Աբբայի», ընտրեց նաեւ Բենեդիկտոսի ԿԱՆՈՆը իբրեւ հիմունք իր միաբանութեան (Լիակատար Վարք Սրբոց, էջ 1114):

11. ՄԵԾՆ ԳՐԻԳՈՐ ՊԱՊ (540-604)

Արդարեւ մեծագոյններէն մէկը Հռովմի մեծ պապերուն: Ծնած է 540ին Հռովմի մէջ ազնուապետական ընտանիքէ: Նախքան եկեղեցական ասպարէզ մտնելը եղած է ատեն մը Հռովմի քաղաքապետը, երբ 35 տարեկան էր: Բայց «Աստուծոյ քաղաքին» ծառայելու կոչում զգալով իր մէջ՝ ծախեց իր հսկայ հարստութիւնը եւ յատկացուց չքաւորներու եւ այլ բարեսիրական եւ կրօնական նպատակներու: Իր ծախքովը հիմնեց եօթը վանքեր՝ վեցը՝ Սիկլիլոյ մէջ, մէկը՝ Հռովմի մէջ, ուր մտաւ նաեւ ինքը իբրեւ վանական 574ին եւ նուիրուեցաւ խստակեաց կեանքի: Սակայն օրուան պապը ստիպեց զինքը ելնել վանքէն եւ ըլլալ Հռովմի եօթը աւագ սարկաւագներէն մէկը: Քանի մը տարի յետոյ պապական նուիրակ նշանակուեցաւ Բիւզանդական կայսերական արքունիքին մօտ: 585ին վերադարձաւ Հռովմ եւ մեծաւոր կարգուեցաւ իր նախկին վանքին: Հռովմի պապ ընտրուեցաւ 590ին, իր գուեցաւ իր նախկին վանքին: Հռովմի պապ ընտրուեցաւ 590ին, իր ոյժերու եւ փորձառութեանց լիութեան եւ տարիքի հասունութեան մէջ: Պաշտօնավարեց 14 տարիներ եւ եղաւ Հռովմի Աթոռին ամէնէն կորովի, ամէնէն գործունեայ, սրբակենցաղ եւ բարերար պապերէն մէկը՝ ստեղծելով կարեւոր հանգրուան մը Հռովմէական Եկեղեցիի պատմութեան մէջ:

Երբ քահանայապետ եղաւ, Իտալիան կը պարզէր անփառունակ կացութիւն մը գրեթէ ամէն մարզի մէջ: Երկիրը շատ դժուար ու թշուառ վիճակի մասնուած էր ողողումներով, սովով, ժանտախտով եւ բարբարոսներու արշաւանքներով: Հռովմէական Եկեղեցիին դիրքն ալ վտանգուած էր Բիւզանդական կայսրերու պահանջներով եւ միջամտութիւններով: Այս դժուարութիւնները գրեթէ ամէնքն ալ յաղթահարուեցան նորընտիր պապի ձեռներէցութեամբ, որուն անձին մէջ բարեխառնուած էին հաստատակամութիւնը եւ նկարագրի տոկունութիւնը՝ մէկ կողմէն եւ ազնուութիւնն ու բարութիւնը՝ միւս կողմէ: Նախ բարեկարգեց եկեղեցական կալուածներու տնտեսումը եւ անոնց եկամուտներէն խոշոր գումարներ յատկացուց այն չքաւորներուն, որոնք պատերազմներու, սովերու, ժանտախտներու զոհեր եղած էին, որոնք պատերազմներու, սովերու, ժանտախտներու զոհեր եղած էին, ինչպէս նաեւ փրկանաւորելու համար գերիները: Ապահովեց Եկեղեցիի անկախութիւնը Բիւզանդիոնի ալիկար քաղաքական իշխանութեանէն եւ ինք ստանձնեց տնօրէնութիւնը շատ մը քաղաքային գործերու,

որոնց մէջ անտարբեր կամ անկարող եղած էին Բիւզանդիոնի ներկայացուցիչները (Իտալիան այս շրջանին Կ. Պոլսոյ Կայսրութեան իշխանութեան տակ էր եւ կայսեր ներկայացուցիչներուն կեդրոնն էր Ռափնենա՝ Հռովմէ հեռու Ադրիականի եզերքին): Օրինակ՝ ինքնագլուխ դաշինքներ կնքեց եւ բարւոք յարաբերութիւններ սկսաւ մշակել հետը Լոմպարտացիներու, որոնք գրաւած էին Իտալիոյ հիւսիսային մասը, Ֆրանքներու՝ որոնք տէր եղած էին Գաղղիոյ, Գոթերու՝ որոնք ողողած էին Սպանիան ու Հիւս. Ափրիկէն: Այս երկիրները բոլորն ալ կայսերական հողեր էին: Այս կերպով զօրացուց իր Եկեղեցիին դիրքը վերոյիշեալ կիսաբարբարոս ժողովուրդներու մօտ եւ տակաւ առ տակաւ դարձի բերաւ զանոնք:

Հետաքրքրական է Անգլիա առաքելութիւն ղրկելու միջադէպը: Օրին մէկը կը տեսնէ Հռովմի հրապարակներու վրայ իբրեւ գերի ծախու հանուած շիկահեր պատանիներ. «Ասոնք ի՞նչ ազգ են», կը հարցնէ պապը. «Անկլներ» կ'ըլլայ պատասխանը. ու պապը բառախաղով մը կ'ըսէ. «Նօն Անկլի, սէտ անկելի» (ոչ Անգլիացիներ, այլ հրեշտակներ): Ու փոքրիկները ազատագրելէ յետոյ առաջին գործը կ'ըլլայ միսիոնարական առաքելութիւն մը ղրկել ասոնց երկիրը 40 հոգեւորականներէ բաղկացած, որոնց զլխաւորը կը կոչուէր Օգոստինոս, որ կ'ըլլայ արդարեւ Անգլիոյ լուսաւորիչներէն մէկը եւ Բենեթըրբրիի առաջին արքեպիսկոպոսը:

Գրիգոր Պապին անկախ գործունէութեանց հետեւանքով իր յարաբերութիւնները առհասարակ ձգտուած եղան Արեւելքի կայսեր եւ Կ. Պոլսոյ պատրիարքին հետ, որոնց պահանջներուն դէմ նախանձախնդրօրէն բարձր պահեց Հռովմի Աթոռին գերազահութիւնը, մերժեց ճանչնալ Կ. Պոլսոյ պատրիարքներուն վերջերս որդեգրած «Տիեզերական պատրիարք» տիտղոսը:

Գրիգոր Պապ ոչ միայն վարչապէտ ու դիւանագէտ մեծ աթոռակալ մըն էր Հռովմի Եկեղեցիին, այլ նաեւ չորս մեծագոյն վարդապետներէն մէկն է Արեւմտեան Եկեղեցիին՝ միւսները լինելով Ամբրոսիոս, Օգոստինոս եւ Յերոնիմոս: Եղած է բեղուն գրիչ մը աւելի գործնական-կրօնական հարցերու շուրջ, քան Հայեցողական խնդիրներու մասին: Իր գրութիւնները կը հետապնդեն առհասարակ քրիստոնէական կեանքը զօրացնել եւ անձնդիր հովիւներ կազմաւորել:

Ասոնցմէ մէկն է, օրինակ. «Հոգք հովուականը» կոչուած գիրքը, որ կը խօսի առհասարակ հովուական պարտականութեանց մասին եպիսկոպոսի մը, զոր կը նկատէ ամէնէն առաջ հոգիներու հովիւ եւ առաջնորդ: Այս գիրքը միջին դարերու առձեռն առաջնորդը եղած է բոլոր եպիսկոպոսներու եւ մինչեւ այսօր ալ կը պահէ իր կրօնական արժէքը: Իսկ իր «Տիալոկը» կը ներկայացնէ հրաշքներով լեցուն կեանքը կարգ մը Լատին նշանաւոր սուրբերուն, որոնց մէջ առաջին գծին վրայ կու գայ Բենեդիկտոսը: Իրմէ մնացած են աւելի քան 800 նամակներ, որոնք մեծ լոյս կը սփռեն ժամանակակից անցքերու եւ դէմքերու վրայ, ինչպէս նաեւ այս պապի նկարագրին եւ բազմակողմանի գործունէութեանց մասին: Արեւմտեան Եկեղեցիի պաշտամանց ճոխացնողներէն եւ բիւրեղացնողներէն մէկը եղած է: Զերմ պաշտպաններէն ու զօրացնողներէն էր Բենեդիկտեան կրօնաւորութեան: Իր աստուածաբանութեան մէջ հետեւող մըն է Ս. Օգոստինոսի, որուն գաղափարները աւելի ժողովրդականացուցած եւ յարմարացուցած էր ժամանակի մտայնութեան: Ինք յօրինած է «Գրիգորեան ծիսարանը» կամ «խորհրդարանը», որ տարածուեցաւ առաւելաբար Ֆրանսայի մէջ, եւ «Գրիգորեան երգերը», որով աւելի պարզ եւ վերջին ձեւը տուած է Հռովմէական Եկեղեցիի հոգեւոր երգեցողութեան: Շնորհիւ իր տեսակէտներու եւ անհատականութեան՝ մտքերու մէջ սկսաւ արմատ բռնել այն գաղափարը, թէ պապականութիւնը բարձրագոյն հեղինակութիւնն էր ամբողջ Բիւստոնէական Եկեղեցիի մէջ: Գրիգոր Պապին կեանքը եւ գաղափարները դարերով ներշնչող առաջնորդը եղան Արեւմուտքի լաւագոյն եւ մեծագոյն հոգեւորականներուն: Հայրը եւ յարացոյցը եղաւ Հռովմի մեծ պապերուն, որոնք այս Աթոռը հանեցին իր բարձրագոյն կատարին միջին դարերուն, նախքան անոր անկումը աշխարհիկ ախորժակներու եւ իշխանապետական ձգտումներու հետեւանքով: Գրիգոր Պապին որքան անկեղծ խոնարհութիւնը, նոյնքան ալ աւետարանական խորագիտութիւնը կ'արտայայտուի իր որդեգրած տիտղոսին մէջ, որ ցարդ կը գործածուի Հռովմի պապերուն կողմէ. «Ծառայ Ծառայիցն Աստուծոյ»:

Վախճանեցաւ 604ին. եւ իր մահէն անմիջապէս յետոյ ժողովրդային միաձայն հաւանութեամբ սուրբ յայտարարուած է, ինչ որ

բացառիկ է Հոովմի Աթոռի գահակալներուն մէջ: Լատինք եւ Յայք կը տօնեն Մարտ 12ին:

Մեր ձեռքին տակ գտնուած երկու Յայսմաւուրքներու մէջ ալ յիշուած են՝ շուրջ երկու էջնոց համանման վարքագրութեամբ՝ Գրիգոր Հոովմայ Հայրապետը եւ իր աշակերտը՝ Պետրոս Աւագ Սարկաւազը՝ Մարտ 13ին: Իսկ իր գործերէն Հայերէնի թարգմանուած են չորս գիրքեր հետեւեալ անունով. «Գրիգորի Սրբազան Պապու երիցուն Հոովմայ Բանք պատմողականք առ Պետրոս Նախասարկաւագ իւր վասն քաղաքավարութեան զանազան հարցն որք յիտալիա փայլեցին, ի չորս գիրս»: Թարգմանիչն է նոյնինքն Ներսէս Լամբրոնացի Արքեպիսկոպոսը: Այս գործը ամենայն հաւանականութեամբ Գրիգոր Պապի «Տիպլոկն» է՝ Իտալացի նշանաւոր սուրբերու հրաշխսուն կենսագրութիւնը:

12. ՅՈՎՀԱՆ ՆԷՍ ԴԱՄԱՍՍԿԱՑԻ (675-749)

Յոյն աստուածաբան եւ «վարդապետ Եկեղեցւոյ» թէ՛ Օրթոտոքս եւ թէ՛ Կաթոլիկ Եկեղեցիներու համար: Ծնած է Դամասկոս 675ին մեծահարուստ ընտանիքէ եւ յաջորդած է իր հօրը իբրեւ ներկայացուցիչը քրիստոնէից իւլամական խալիֆայի մօտ: Կոչուած է նաեւ արաբերէնով Մանուր: 716ին հարկադրուեցաւ ձգել իր պաշտօնը եւ քաշուեցաւ Ս. Սաբայի վանքը, Երուսաղէմի հարաւ արեւելքը, եւ կեանքին մնացեալ մասը անցուց այդ վանքին մէջ իբրեւ կուսակրօն քահանայ-վանական: Պատկերամարտութեան պայքարներու ընթացքին զօրաւոր պաշտպանը եղաւ պատկերայարգութեան՝ գրելով երեք ջատագովականներ այս նիւթի մասին 726-730 թուականներուն: Վախճանած կը նկատուի 749ին:

Իր կարեւորագոյն գրական գործն է ԱՂԲԻԻՐ ԳԻՏՈՒԹԵԱՆ՝ բաժնուած երեք մասերու. ա) Յաղագս ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ. բ) Ընդդէմ ՀԵՐԵՏԻԿՈՍԱՑ. գ) Յաղագս ՈՒՂՂԱՓԱՌ ԶԱՒԱՏՈՑ: Փիլիսոփայութեան մասին ունեցած իր տեսութիւնները գրեթէ նոյն են Արիստոտէլի, մասամբ նաեւ Պլատոնի հետ: Հերետիկոսներու դէմ գրածները մեծագոյն մասամբ վերարտադրութիւնն են Եպիփան Կիպրացիի համանուն գործին: Իսկ ՈՒՂՂԱՓԱՌ հաւատքի մասին գրածը, որ գործին կարեւորագոյն մասն է, ուրիշ բան չէ, եթէ ոչ

համադրութիւնը յոյն եկեղեցական Հայրերու տեսութեանց՝ քրիստոնէական գլխաւոր վարդապետութեանց մասին, յատկապէս Ս. Երրորդութեան, Արարչագործութեան եւ Մարդեղութեան, ինչպէս նաեւ հրեշտակներու, Ս. Կոյսի (զոր կը նկատէ զերծ մեղքի բոլոր արտոնբէ եւ վերափոխեալ յերկինս) պատկերներու եւ այլ նման կրօնական նիւթերու մասին:

Ուրիշ մէկ գործն է Սրբազան Զուգահեռականութիւն, որ կը գորունակէ Դամասկացիի բարոյական ու Հոգեւոր կեանքի վերաբերեալ տեսութիւնները: Այդպէս կոչուած է, որովհետեւ առաջինութեանց մասին խօսած ատեն կը ներկայացնէ նաեւ անոնցմէ իւրաքանչիւրին հակադիր մոլութիւնը: Երրորդ գիրքն է Համադրական մեկնաբանութիւնը Ս. Պօղոսի թուղթերուն, ինչպէս նաեւ զանազան ճառեր Այլակերպութեան, Աւագ Շաբաթի, Վերափոխումի եւ նման նիւթերու մասին՝ միշտ ներկայացուած աստուածաբանական տեսութիւններով: Գրած է նաեւ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ, որոնք ցարդ կը կիրարկուին յունական պաշտամունքի մէջ: Յոյն Եկեղեցիի վերջին հեղինակաւոր եկեղեցական հայրն է Դամասկացին: Լատին Եկեղեցին ալ 1890ին յայտարարած է զայն «վարդապետ Եկեղեցւոյ», որոնց թիւը այսօր կը հասնի 20-25ի:

Յոյնք կը տօնեն Դեկտ. 4ին, Լատինք՝ Մարտ 27ին: Մեր Յայսմաւուրքներու մէջ չէ յիշուած՝ հակառակ այն իրողութեան, որ իր գործերը չափով մը թարգմանուած են Հայերէնի, ինչ որ կրնայ մինչեւ իսկ Հայ Հոռոմներու կամ Հայ Հոովմէականներու կողմէ եղած ըլլալ: Այդ թարգմանութիւններէն մէկը կը սկսի սա տողերով. «Սրբոյ եւ աստուածահաճոյ ՀՕՐԵՄԵՐՈՒՄ Յովհաննու Դամասկացւոյն համառօտեալ բան ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆՑ Հոնտորիցն»: Իսկ իր աստուածաբանական գիրքը՝ «Յաղագս ՈՒՂՂԱՓԱՌ ԶԱՒԱՏՈՑ», կը պարունակէ «հարկուր գլուխք բանից», որոնցմէ 40-42 նիւթերը միայն կը յիշուին ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ ՆԱՆԵՆԱՑ գրքին մէջ (էջ 576-578). «Թարգմանեալ Սիմէոնի վրաց լեզուէ ի Հայ բարբառ»: Կը յիշուին նաեւ Դամասկացիին վերագրեալ բազմաթիւ այլ գործերու թարգմանութիւնները, նոյն գրքին մէջ (էջ 580):

13. ԿԻՒՐԵՂ (826-869) ԵՒ ՄԵԹՈՏԻՈՍ (824-885)

Իրարմէ անբաժան երկու եղբայրներ են ըստ մարմնոյ եւ ըստ հոգւոյ, որոնք եղան առաջին Առաքեալները Հարաւ Սլաւներու: Ծնած են Յոյն ծերակուտական ընտանիքէ մը, Սեւանիկի մէջ, Մեթոտիոս 824ին (ոմանք կը նշանակեն 815), իսկ Կիւրեղ՝ 826ին, որուն աւագանի անունը եղած է Կոստանդին. Կիւրեղ անունը առած է եկեղեցական ըլլալէ յետոյ: Չափահասութեան միասնաբար Կ. Պոլիս գացին, ուր Կիւրեղ Այա Սոֆիայի գրադարանապետը եղաւ, իսկ Մեթոտիոս՝ պետական պաշտօնեայ: Ապա միասնաբար կուսակրօն քհն. ձեռնադրուեցան 862ին եւ յաջորդ տարին իբրեւ քարոզիչ ղրկուեցան Մորափա եւ Պոհեմիա՝ այսօրուան Չեխո-Սլովաքիա: Կիւրեղ սլաւական լեզուի համար այբուբենք հնարեց եւ եղաւ հիմնադիրը սլաւական գրականութեան: Թարգմանեց Աւետարանը եւ եկեղեցական պաշտամունքը սլաւերէնի, ինչ որ հաճելի չթուեցաւ Գերման եպիսկոպոսներու, որոնք լատիներէն պաշտամունքը կ'ուզէին պարտադրել նաեւ Սլաւներուն, ինչպէս էր սովորութիւնը ամբողջ Արեւմուտքի մէջ: Երկու եղբայրներ Հռովմ գացին, ուր վախճանեցաւ Կիւրեղ 869ին, իսկ Մեթոտիոս եպիսկոպոս ձեռնադրուելով՝ վերստին ղրկուեցաւ Մորափա՝ պապէն լիազօրուած՝ սլաւերէնով շարունակելու իր առաքելութիւնը եւ եկեղեցական պաշտամունքը: Գերման եպիսկոպոսները բռնութեան դիմեցին եւ բանտարկեցին զայն: Պապը յաջողեցաւ ազատ արձակել տալ Մեթոտիոսը, որ շարունակեց իր առաքելութիւնը մինչեւ իր մահը 885ին:

Երկու եղբայրներու յիշատակը յատկապէս կը յարգուի Չեխերու, Խորուաթներու, Սերպերու եւ Պուլկարներու կողմէ՝ իբրեւ իրենց լուսաւորիչները եւ Հարաւ արեւմտեան Սլաւ եկեղեցիներու հիմնադիրները:

Հատինք կը տօնեն Յուլիս 7ին: Յունաց ներկայ տօնացոյցին մէջ չհանդիպեցանք: Ի Հնումն տօնած են Մայիս 11ին: Մեր Յայսմաւորքներու մէջ չեն յիշուած:

14. ԱԹԱՆԱՍ ԱԹՈՆԱՑԻ ԿԱՄ ԱԹՈՍԵՑԻ (920-1003)

Կը յիշենք այս պատուական կրօնաւորը ոչ այնչափ իր անձնական կատարելութեան կամ իր մեծագործութեանց համար, որքան այն իրողութեամբ, որ հիմնադիրը եղաւ Աթոս Լեւի կամ «Սուրբ Լեւ» (Այիոն Օրոս) կոչուած վանաստանին, որ կարեւոր տեղ կը գրաւէ Օրթոտօքս եկեղեցիի մէջ իբրեւ վանական կեանքի նշանաւորագոյն կեդրոններէն մէկը եւ ժողովրդական մեծ ուխտավայր մը:

Աթանաս ծնած է 920ին Տրապիզոնի մէջ: Ատեն մը Կ. Պոլսոյ մէջ սուրբ չուրիւն ընելէ յետոյ մտաւ Բիւթանիոյ վանքերէն մէկը: 958 թուին գաղթեց Աթոս Լեւ, ուր բազմացած էին մենակեաց ճգնաւորներ, առանց ուրիշ վանական կամ կարգապահական դրութեան, իւրաքանչիւր ձգուած իր անհատական նախաձեռնութեան կամ շնորհաց: Իսկ Աթոս Լեւ ըստուածը արեւելեանն է այն երեք մատնածեւ թերակղզեակներուն, որոնք հիւսիսային Եգէական ծով կ'երկարին ուրիշ ակի մեծ թերակղզիէ մը, որուն արեւմտեան պարանոցին վրայ շինուած է ծանօթ Սեւանիկ քաղաքը: Թերակղզին իր անունը կ'առնէ այն լեռնէն, որ դէպի ծով երկարած ծայրամասին վրայ յանկարծ վեր կը սլանայ 6,000 ոտք բարձրութեամբ:

Աթանաս օրուան Բիւզանդիոնի կայսեր նիւթական ձեռնտուութեամբ կը շինէ թերակղզիին առաջին վանքը, վերոյիշեալ լեռան ստորոտը, եւ որուն նաւակատիքը կը կատարուի 963 թուին: Այս վանքը մինչեւ օրս գոյութիւն ունի եւ ծանօթ է «Լավրա» Հասարակ անունով, որ պարզապէս մայրավանք կը նշանակէ: Սկիզբէն տեղացի ճգնաւորներ զօրաւոր ընդդիմութիւն ցոյց տուին նորեկ Աթանասի վանական ձեռնարկներուն, որովհետեւ կը նախատեսէին, թէ պիտի խանգարէր իրենց աւանդական ու Հանգիստ կենցաղը. սակայն Չմշկիկ Կայսր միջամտեց ի նպաստ Աթանասի, եւ ճգնաւորներ ի վերջոյ Համակերպեցան Աթանասի Հաստատած վանական կարգերուն՝ հիմնուած Ս. Բարսեղի վանական կանոններուն վրայ: Կարճ ժամանակի մէջ Աթանաս շինել տուաւ նաեւ երեք վանքեր, որոնք դարերու ընթացքին բազմանալով՝ ի վերջոյ Հասած են այսօր 20 ինքնավար մայրավանքերու եւ անոնցմէ իւրաքանչիւրին կապուած մեծ ու փոքր բազմաթիւ այլ վանքերու եւ ճգնարաններու, որոնց թիւը կը հասնի Հարիւրի:

Այսպէս մէջտեղ եկաւ վանական մանրանկար Հանրապետութիւն մը, որուն Հասարակաց գործերը կը ղեկավարուին 20 մայրավանքերէն ընտրուած մէկական ներկայացուցիչներէ բաղկացած ժողովով մը: Այս թերակղզին բնակուած է միայն վանականներէ, արգելուած է ունէ աշխարհիկ անձի բնակութիւնը կամ մուտքը առանց արտօնութեան: Իբրեւ ուխտաւոր, «թուրխթ» կամ ուսումնական այցելու Համար յատուկ արտօնութիւն պէտք է ստանալ Սելանիկի Յոյն պետական ներկայացուցիչէն եւ մետրոպոլիտէն: Կանանց մուտքը խստիւ արգելուած է: Արգելուած է նաեւ իգական կենդանիներ պահել թերակղզիին վրայ՝ կով, ոչխար կամ հաւ: Դաշտային եւ այլ փոխադրական գործերը կը կատարուին ջորիներով եւ եզներով: Ելեքտրականութիւն կամ քաղաքակրթական ոչ մէկ դիւրութիւն մուտք գործած է այնտեղ: Միջնադարը կանգ առած կը շարունակէ այսօր իր գոյուցիւնը Աթոս Լեռան վրայ:

Յոյն վանքերու եւ վանականներու կողքին ժամանակի ընթացքին եկան աւելնալ նաեւ Սերպական, Ռուսական, Գուկարական, Ռումանական ու Վրացական վանքեր ու վանականներ: Այնպէս որ դարու սկիզբը այնտեղ կային աւելի քան 7,500 վանականներ՝ կլորցուած թիւերով՝ 3,200 Յոյներ, 3,500 Ռուսեր, 300ական Գուկարներ եւ Ռումանացիներ, 200 Սերպեր, Վրացիներ եւ ուրիշներ: Դարերու ընթացքին կայսրեր, իշխաններ, մեծահարուստներ ճոխացուցած են այս վանքերը թանկագին ձեռագիրներով, թանկարժէք եկեղեցական զգեստներով եւ սպասներով: Այնպէս որ իրական թանգարան մըն է այս վանատանը: Եկեղեցիներու ներքինը ամբողջութեամբ որմնանկարուած է, որոնցմէ ոմանք շատ հին են եւ գեղարուեստական մեծ արժէք կը ներկայացնեն: Քիչ չէ թիւը նաեւ սրբոց մասունքներու, որոնց կարգին մասնաւորներու միայն կը ցուցադրուին կարգ մը շատ թանկարժէք քարերով ընդելուզուած պահպանակներու մէջ դրուած մասունքներ, որոնց մէջ է նաեւ դանկ մը, զոր կը վերագրեն Հայոց Ս. Գրիգոր Լուսաւորչին: 1963ին մեծագոյն Հանդիսաւորութեամբ տեղի ունեցաւ «Այիոն Օրոսի» առաջին վանքին Հիմնարկութեան Հազարամեակը նոյնինքն այդ վանքին մէջ, հրաւէրով ու Հանդիսապետութեամբ բարեյիշատակ Աթենակորաս Տիեզերական Գատրիարքին, քանի որ Սուրբ Լեռան այս վանատանը, ըստ Հնաւանդ սովորութեան, դեռ կը

բռնուի Կ. Գոլտոյ Տիեզերական Գատրիարքի հոգեւոր իրաւասութեան ներքեւ: Այս Հանդիսութեանց ներկայ եղան Օրթոտոքս Եկեղեցիի պատրիարքները, բազմաթիւ մետրոպոլիտներ, Յունաստանի Թագաւորը, դահաժառանգ իշխանը՝ բազմաթիւ բարձրաստիճան զինուորականներով, ինչպէս նաեւ Կաթոլիկ ու Անգլիկան Եկեղեցիներու ներկայացուցիչներ, որոնց կարգին նաեւ Հայ Եկեղեցիի ներկայացուցիչները՝ յանձին Թուրքիոյ Հայոց Գատրիարքի, Թէ՛ իբրեւ անձնապէս հրաւիրեալ եւ Թէ՛ իբրեւ ներկայացուցիչը Ամենայն Հայոց Հայրապետին:

Այսօր նուազած է վանականներուն թիւը, հինին հետ անբաղաւորելիորէն նսեմացած է նաեւ վանական կենցաղը. շիջած կ'երեւի կրակը հոգեւոր կեանքի. վանական կենցաղի շարունակուող միակ երեւոյթը ամէնօրեայ կանոնական ժամասացութիւններն են, որոնք անփոփոխ կերպով կը կատարուին ըստ Հնաւանդ սովորութեանց եւ ժամերուն կէս դիշերին, կէսօրին, երեկոյին եւլն:

Աթանաս ապրեցաւ այստեղ, իբրեւ առաջին մեծաւորը այս վանատանին, աւելի քան 40 տարիներ: Վախճանեցաւ 1003ին, արկածով, երբ շինուելու վրայ եղող վանքի մը գմբէթը փոռ եկաւ եւ ինք փրատակին տակ մնացողներէն եղաւ:

Յոյներ, Հաւանաբար նաեւ այլ բոլոր Օրթոտոքս Եկեղեցիներ կը յիշատակեն զայն Յուլիս 5ին: Լատինաց մօտ չհանդիպեցանք իր յիշատակութեան: Ձ'երեւիր նաեւ մեր Յայսմաւուրքներու մէջ:

15. ՎԼԱՏԻՄԻՐ (956-1015)

Վլատիմիրի կը պատկանի շնորհը եւ փառքը Քրիստոնէութիւնը պետական կրօնք դարձնելու Ռուս ժողովուրդին եւ Հաստատած ըլլալու Ռուսական փառաւոր Եկեղեցին: Թոռն է Օլկա այրիացեալ Թագուհիին, որ քրիստոնեայ եղած ու մկրտուած էր 955 թուին Կ. Գոլտոյ այցելութեան ընթացքին, օրուան պատրիարքին ձեռամբ, եւ կը նկատուի Ռուս Եկեղեցւոյ առաջին տօնելի սրբուհին: Երբ Օլկա Կ. Գոլտոյ սէն վերադարձաւ իր մայրաքաղաքը՝ Քիէվ, աշխատեցաւ քրիստոնէացնել նաեւ իր ժողովուրդը, բայց չյաջողեցաւ: Մինչեւ իսկ չկրցաւ դարձի բերել իր որդին եւ յաջորդը՝ Սվեաթուլաւը, որուն

զաւակն էր Վլատիմիր, որ իր կարգին մեծցաւ եւ հօրը գահին տիրացաւ իբրեւ Հեթանոս իշխան մը:

Նմանութիւններ եւ զուգահեռականութիւններ կան մէկ կողմէն իր նկարագրին ու վարքին եւ միւս կողմէ մեր Տրդատ Թագաւորին եւ Կոստանդիանոս Կայսեր միջեւ: Երեքն ալ ուժեղ անձնաւորութիւններ եւ կարող զօրավարներ են: Երեքն ալ դուրսէն եկած եւ տակաւ առ տակաւ յաղթահարած են իրենց մրցակիցները կամ թշնամիները եւ տիրացած իրենց գահին: Երեքն ալ պատուուած են «Մեծն» տիտղոսով: Երեքն ալ իրենց երկիրներու քրիստոնէական եկեղեցիի ազատագրման եւ անոր պետական ու պաշտօնական կրօնք մը ըլլալուն մէջ վճռական դեր կատարած են՝ նոր Հանգրուան մը բանալով իրենց կառավարած երկիրներու պատմութեան մէջ: Երեքն ալ անցած են տօնելի սրբոց կարգը:

Վլատիմիր ծնած կը նկատուի 956ին: Իր Հայրը երբ ծերացաւ՝ իր ընդարձակ երկիրը բաժնեց իր երեք որդիներուն միջեւ: Անդրանիկ որդին սպաննեց իր երկրորդ եղբայրը եւ տիրացաւ նաեւ անոր բաժնին: Եղբայրը՝ Վլատիմիր, խորհելով, որ նման ճակատագիր մը կը սպասէ նաեւ իրեն, ձգեց երկիրը եւ Սքանտինափիա փախաւ: Այնտեղէն ուժեղ բանակով մը վերադարձաւ, յաղթեց եւ սպաննեց իր երէց եղբայրը եւ տակաւ առ տակաւ գրաւեց անոր երկիրը. այնպէս որ 980ին արդէն տէր եղած էր Քիէվին՝ այդ շրջանին Ռուսիոյ կարեւորագոյն քաղաքին եւ ամբողջ Ռուսիոյ մայրաքաղաքին: Բազմակին էր, ունէր 10 մանչ եւ 2 աղջիկ զաւակներ:

Քրիստոնէութիւնը, որ տարածուած էր Եւրոպայի կեդրոնի եւ Հարաւի Սլաւներու մէջ, Կիւրեղի եւ Մեթոտիոսի առաքելութեամբ, տակաւ առ տակաւ կը թափանցէր նաեւ դէպի արեւելք Ռուսիոյ մէջ. այնպէս որ ըստ երեւոյթին Քիէվի եւ Համայն Ռուսիոյ մէջ բաւական թիւով քրիստոնեաներ կային արդէն: Բայց Վլատիմիր կռապաշտ իշխան մըն էր եւ Քիէվի մէջ կանգնած էր արդէն իրենց ազգային բոլոր աստուածներուն կուռքերը: Մինչեւ 986 թուականը արշաւած ու տիրացած էր Պալմիրի ծովի արեւելեան եզերքի բոլոր երկիրներուն եւ միւս Սլաւ ժողովուրդներուն: Յաջորդ տարին ծրագրեց արշաւել Բիւզանդական Կայսրութեան վրայ: Այս շրջանին է, որ Հետաքրքրուեցաւ Քրիստոնէութեամբ եւ այլ կրօնքներով: Զրոյցի մը

Համաձայն պատգամաւորներ ղրկած է ուսումնասիրելու օրուան տիրող կրօնական դրութիւնները: Պատգամաւորները աննպաստ տեղեկութիւններ բերած են Հրէութեան, Մահմետականութեան ու Կաթոլիկութեան մասին, բայց շատ նպաստաւոր արտայայտուած են Կ. Պոլսոյ մէջ տիրող կրօնքին մասին, քանի որ ներկայ եղած են Այս Սոփիայի մէջ կատարուած փառաւոր պաշտամունքի մը, որ զիրենք խորապէս տպաւորած է: Ասոնք յիշեցուցած են նաեւ, որ իր մեծ մայրը՝ Օլկա, այս կրօնքը ընդունած էր:

Վլատիմիր իր աշխարհակալական ծրագիրները յառաջ տանելով՝ պաշարեց ու գրաւեց Խրիմի Քերսոն քաղաքը, որ Բիւզանդական Կայսրութեան մաս կը կազմէր: Ապա պատգամ ղրկեց Բիւզանդիոնի կայսեր՝ Վասիլ Բին (976-1025), որ իր քոյրը՝ Աննան, իրեն կնութեան տայ՝ սպառնալով, որ Կ. Պոլսոյ վրայ պիտի քալէր, եթէ իր պահանջքին ընթացք չտար: Կայսրը պատասխանեց, որ ինք Հակառակ չէ իր առաջարկին, բայց ըստ իրենց օրէնքին՝ քրիստոնեայ իշխանուհի մը չի կրնար ամուսնանալ Հեթանոս իշխանի մը հետ. եթէ Վլատիմիր քրիստոնեայ ըլլար, սիրով պիտի տար իր քոյրը անոր կնութեան: Վլատիմիր պատասխանեց, որ ինք ալ խորհած է արդէն այդ մասին եւ պատրաստ է ընդունելու քրիստոնէութիւնը: Կայսրը ղրկեց իր քոյրը փարթամ նուէրներով եւ պալատական պաշտօնեաներու եւ հոգեւորականներու փառաւոր շքախումբով մը: Վլատիմիր մկրտուեցաւ Քերսոնի մէջ, տեղւոյն Յոյն մետրոպոլիտի ձեռամբ, ամուսնացաւ Աննայի հետ, ետ դարձուց Քերսոնը կայսեր ու Քիէվ վերադարձաւ Հետեւորդներու եւ հոգեւորականներու աննախընթաց թափօրով մը՝ մեծապէս տպաւորելով Քիէվի բնակչութիւնը: Վլատիմիրի առաջին գործը եղաւ կործանել իր կանգնած կուռքերը ժողովուրդի աչքին առջեւ՝ քարեղէնները կտոր կտոր ընելով, փայտեղէնները այրելով, իսկ մեծագոյնը ցեխերու մէջ քաշկուտել տալէ յետոյ գետը նետել տուաւ: Այս հոգեբանական տեսարաններն ալ դրական տպաւորութիւն գործեցին ժողովուրդին վրայ, որոնք Համոզում գոյացուցին, որ ցարդ իրենց իբրեւ աստուած պաշտած կուռքերը անճար անօգնական ձեռագործներ են եղեր: Ասկէ յետոյ Վլատիմիր նուիրուեցաւ ամբողջ իր երկիրը քրիստոնեայ դարձնելու սրբազան աշխատանքին՝ հրաշալի յաջողութեամբ: Ժողովուրդը Հազարներով դիմեց գետերը՝ մկրտու-

Թիւն ստանալու թագաւորին Հետ եկած Բիւզանդացի Հոգեւորականներէն: Ապա շինեց Քիչփի մայր եկեղեցին եւ այլ բազմաթիւ եկեղեցիներ ու վանքեր: Մեկուսացուց իր նախկին կիները. փոխեց ամբողջ իր ընթացքը. հրաժարեցաւ իր պատերազմասէր բնատրուիթենէն: Դարձաւ խաղաղասէր անձ մը եւ նուիրուեցաւ իր ժողովուրդի բարօրութեան: Շինեց դպրոցներ, Հաստատեց եկեղեցական դատարաններ ու մեծ եռանդ ցոյց տուաւ քրիստոնէական Հաւատքը տարածելու իր երկրին ամէն կողմերը:

Վլատիմիրի վերջին տարիները սակայն դառնութեամբ անցան. իր Հեթանոս կիներէն ունեցած որդիները իր դէմ ապստամբեցան: 1015 թուին, երբ ճամբայ ելած էր զսպելու անոնցմէ մէկը, Հիւանդացաւ ու մեռաւ: Ժառանգած է «Հաւասար առաքելոց» տիտղոսը իր երկիրը դարձի բերած ըլլալուն համար:

Ռուսերը եւ սլաւածէս Ռուսներու կաթողիկոսներ կը ստենն Յուլիս 15ին, բայց իր յիշատակութեան ոչ մէկ Հետքին Հանդիպեցանք Յունաց կամ Լատինաց մօտ: Չէ յիշուած նաեւ մեր Յայրմաւուրքներու մէջ:

16. ԲԵՌԵԱՐԴՈՍ (1090-1153)

Նշանաւոր վանահայր եւ միաթիք մեծ աստուածաբան Հռովմէական Եկեղեցիի: Մնաւ 1090ին Յրանսայի Յօնտէն գիւղաքաղաքը, ոչ շատ Հեռի այսօրուան Տիթօնէն: Իր ծնողքը Բուրգունդի նահանգին բարձրագոյն ազնուականներէն էին: Ստացաւ բարձր եւ խնամեալ ուսմունք: Իր մատաղ տարիքին իսկ յատուկ հակում ցոյց տուած էր վանական կենցաղին, ուստի իր չափահասութեան, այսինքն քսաներեք տարեկանին, իրեն տարեկից ու դասակարգակից երեսուն երիտասարդներով մտաւ այդ շրջանին Հռչակ Հանած ՄիՏՈՅԻ վանքը, որ եղած է մայրավանքը ՄիՍՏԵՐՍԵԱՆ* կրօնաւորական կարգին: Միստերսեանները բարեկարգեալ Բենեդիկտեաններ էին, որոնք նպատակադրեցին գործադրել անոր կանոնը իր սկզբնական խստութեան եւ ամբողջական հարազատութեան մէջ: Իրենց վանական տարազը սպի-

* ՄիՍՏԵՐՍԵԱՆ կրօնաւորական կարգը իր անունը ստացած է իր մայրավանք ՄիՏՈՅԷՆ, որուն լատիներէնն է ՄիՍՏԵՐՍԻՈՒՍ

տակ էր, որուն համար ալ ժառանգեցին «Սպիտակ Հայրեր» ժողովրդական կոչումը: Ասոնք իրենց կարգին եղան նախահայրերը «Տրապիստ» միաբանական կարգին, որ վանական կրօնաւորութիւնը Հացուց իր ծայրագոյն խստութեանց:

Միտօ մտնելէն երկու տարի յետոյ, երբ վանքը խճողուած էր արգէն նորանոր անդամներով, վանահայրը հրահանգեց Բեռնարդոսին նոր վայր փնտռել նոր վանքի մը համար: Ու ան եւ իր ընկերները դառն շատ ամայի վայր մը նոյն նահանգին մէջ եւ Հաստատեցին չորրորդ Միստերսեան վանքը եւ կոչեցին զայն «Գլէր Վալէ» կամ ԳլեՐՎՕ՝ Պայծառ Հովիտ, որուն վանահայրը եղաւ ինք Բեռնարդոս, եւ անկէ յետոյ այս երկու անունները իրարմէ անբաժան մնացին, եւ Բեռնարդոս, զանազանուելու համար իր բազմաթիւ անուանակից սուրբերէն կամ նշանաւոր դէմքերէն, ծանօթ է պատմութեան մէջ իբրեւ «Գլերվոյի Բեռնարդոս»: 40 տարի վանահայրութիւն ըրաւ այստեղ՝ դառնալով իր ժամանակին ամէնէն Հռչակեալ դէմքը ամբողջ Եւրոպային, եւ իր վանքն ալ իր օրերուն եղաւ ոչ միայն Միստերսեան Միաբանութեան, այլ նաեւ ամբողջ Արեւմտեան Եւրոպայի ամէնէն մեծանուն վանքը: Մինչեւ իսկ իր ալեւորեալ հայրը (մայրը մեռաւ, երբ Բեռնարդոս 19 տարեկան էր) եւ վեց եղբայրները մտան Գլերվոյի վանքը: Իր միակ քոյրը թէեւ ամուսնացած էր, բայց ի վերջոյ համաձայնելով իր ամուսնոյն Հետ՝ կուսանոց մտաւ: Յաճախ կը հարկադրուէր Հեռանալ իր վանքէն կարեւոր համակեղեցական գործերով, որոնք կ'ընդհատէին իր Հիմնական գրադմունքները, այսինքն հոգեւոր գրական պարապմունքները եւ նորընծաներու դաստիարակութիւնը:

1119ին դուրս եկաւ իր վանքէն մասնակցելու համար ՄիՍՏԵՐՍԵԱՆ Միաբանութեան առաջին ընդհանուր ժողովին: Հակառակ դեռ 30 տարեկան չըլլալուն՝ ժողովին ամէնէն տիրական անդամն էր, որուն կ'ունկնդրէր ամէն ոք մեծ ուշադրութեամբ եւ յարգանքով մանաւանդ երբ կ'արտայայտէր իր տեսութիւնները վանական կեանքի կանոնաւորութեան եւ կատարելութեան մասին: Այս ընդհանուր ժողովն էր, որ վերջնական ձեւը տուաւ այս միաբանական կարգի կանոնադրութեան, որ վաւերացուեցաւ օրուան պայէն նոյն տարին:

Երկրորդ անգամ դուրս եկաւ իր վանքէն՝ մասնակցելու Համար Տրոյի ժողովին (Բարիզի եւ Տիժօնի մէջ տեղը), որուն ատենադպիրը ընտրուեցաւ իսկ նախագահը քարտինալ մըն էր: Այնտեղ ժողովին ընդունելի տուաւ նաեւ նոր Տաճարական Ապետներու կանոնագրութիւնը, զոր ինք պատրաստած էր:

1130ին, օրուան պապին մահուան վրայ, երկու Հոգիներ պապ ընտրուեցան եւ ատեն մը այս պաշտօնը կոռուախնձոր եղաւ երկուքին միջեւ: Բեռնարդոս Ինովկենտիանոս Բ.ի կողմը բռնեց, որ ի վերջոյ յաղթական դուրս եկաւ այս պայքարէն: Ի վարձատրութիւն՝ նոր պապը շնորհներով ճոխացուց Միստերսեան կրօնաւորական միաբանութիւնները ամէնուրեք: Իր ազդեցութիւնը ամբողջ Հռովմէական եկեղեցիին մէջ աւելի մեծցաւ, երբ իր միաբանութենէն եւ իր աշակերտներէն մէկը պապ ընտրուեցաւ 1145ին Եւգենիոս անունով: 1139ին մասնակցեցաւ Բ. Լատերանի ընդհանուր ժողովին, զոր Հռովմէական եկեղեցին կը նկատէ իր Տասներորդ Տիեզերական ժողովը:

Խիստ ու խորապէս Համոզուած ուղղափառ մը ըլլալով՝ պայքար մղեց իր ժամանակի մեծ կամ փոքր ոչ-ուղղափառ նկատուած տեսակէտներուն դէմ. օրինակ՝ Լոզանցի Հենրիի մը այն Հերետիկոսութեան դէմ, որով կ'ըսէր, թէ խորհրդակատարութեանց ազդուութիւնը կախեալ է խորհրդակատարին արժանիքէն. որով ըսել կ'ուզուէր, թէ անարժաններուն խորհրդակատարութիւնները արժէք չէին ներկայացներ: Պայքարեցաւ նաեւ Աբելարդի դէմ, որ իրմէ յետոյ Եւրոպայի ամէնէն ուսեալ միտքը եւ պերճախօս անձն էր: Երբ Բեռնարդոս դատապարտեց անոր կարգ մը տեսութիւնները, Աբելարդ ասպարէզ կարդաց իրեն վիճաբանիլ իր Հետ այդ Հարցերուն մասին Հրապարակաւ եւ այդ նպատակով Հաւաքուած ժողովին առջեւ: Բեռնարդոս սակայն այնքան յատուկ կերպով եւ ուժեղ տրամաբանութեամբ ցոյց տուաւ անոր սխալները, որ վերջինս անկարող եղաւ ունէ պատասխան տալ: Համակերպեցաւ ժողովի դատապարտողական վճիռին ու մեկուսացաւ ու մեռաւ երկու տարիներ յետոյ:

Քրիստոնեայ Եղեսիոյ մահամտականներուն ձեռքը իյնալէն յետոյ, 1144ին, լուրեր կը հասնէին, թէ շուրջ 50 տարիներէ ի վեր Արեւելքի սրբավայրերու մէջ արմատ բռնած քրիստոնեայ իշխանապետութիւններ բնաջնջուելու վտանգին ենթարկուած էին: Ուստի Եւգէ-

նոս Պապը Բեռնարդոսին յանձնեց պարտականութիւնը քարոզելու Երկրորդ ԽԱՉԱԿՐՈՒԹԻՒՆԸ: Յաջողեցաւ ան ոտքի հանելու Ֆրանսայի եւ Գերմանիոյ թագաւորներէն եւ իշխաններէն ոմանք, որոնք սրգարեւ Հսկայ բանակ կազմած ճամբայ ելան 1146ին: Սակայն անկարգութեանց, ներքին պառակտումներու, Արեւելքի նախկին խաչակիրներու «էնթրիք»ներու եւ Բիւզանդական Կայսրութեան յարուցած դժուարութիւններու Հետեւանքով ձախորդութեամբ վերջացաւ այս խաչակրութիւնը, ինչ որ մեծ ցաւ պատճառեց Բեռնարդոսին եւ դառնացուց անոր վերջին տարիները: Եւգէնիոս Պապին վախճանումն ալ բարոյական Հարուած մը եղաւ իրեն, քանի որ առաջին օրէն իր բարոյական Հարուած մը եղաւ իրեն, քանի որ առաջին օրէն իր բարոյական զօրաւոր նեցուկը եղած էր ան: Մեռաւ 63 տարեկանին, 1153ին: Իր հրահանգով միայն՝ իր աշակերտները Հաստատած են 163 վանքեր Եւրոպայի զանազան մասերուն մէջ՝ Ֆրանսա, Գերմանիա, Շուեդիա, Անգլիա, Իրլանտա, Բորթուկայ, Չուիցերիա եւ Իտալիա: Իր մահուան՝ Միստերսեան Միաբանութեան վանքերու թիւը Հասած էր 343ին, ԺԲ. դարու վախճանին այդ թիւը բարձրացած էր 530ին, անկէ յետոյ ալ աւելցած են 150 նոր վանքեր:

Բեռնարդոս թէեւ այս կարգին հիմնադիրը չեղաւ, բայց ոչ ոքի հմայքը եւ աշխատանքը այնքան ուժեղ թափ տուած է անոր զօրացման ու տարածման, որչափ Բեռնարդոսին սրբակենցաղ վարքը եւ ուժեղ անձնաւորութեան հմայքը:

Բեռնարդոս գերազանց վանական մը ըլլալով Հանդերձ՝ եղած է նաեւ բազմապատակ գրող: Ս. Գրքի մասնագէտ է ծայրէ ի ծայր: Իր գրական գործերը 15-20 Հատորներու կը Հասնին, որոնցմէ ոմանք բարձրագոյններէն են Միջին դարու Հոգեւոր ու դասական գրականութեան մէջ, յատկապէս Միսթիսիզմի եւ Հոգեւոր կեանքի վերաբերեալ նիւթերու մէջ: Երգ երգոցի առաջին երկու գլուխներու մասին միայն 63 քարոզներ գրած է: Ունի նաեւ նոյնքան մը «քարոզներ ամբողջ տարուան Համար»:

Իր նամակները կը Հասնին 530ի: Իր ծանօթ գործերէն «Յաղագս սիրոյն Աստուծոյ» գրքին մէջ կը շեշտէ այն իրողութիւնը, թէ Աստուած պէտք է սիրել առանց ունէ ակնարկութեան. սիրել Զայն պարզապէս անոր Համար, որ Աստուած է: Իսկ իր «Յաղագս շնորհաց եւ ազատ կամաց» գործին մէջ կ'աշխատի Հաշտեցնել այս երկուքը՝

ազատ կամքը եւ Աստուծոյ շնորհը՝ հակելով անլի Ս. Օգոստինոսի վարդապետութեան, որ կ'ուսուցանէր, թէ Աստուծոյ շնորհքը անդիմադրելի է: Աստուծոյ սէրը եւ շնորհը մէկ կողմէն եւ մարդուն սիրա-յօժար ընդունելութիւնը եւ համակերպումը ասոնց՝ միւս կողմէն՝ կը կազմեն ուղն ու ծուծը Բեռնարդոսի պատգամին, որ տուած է իր ժամանակի մարդոց եւ կու տայ բոլոր դարերու սերունդներուն: Ու կը պնդէր. աղօթքը ու Աւետարանի քարոզութիւնը մէկ կողմէն, ինքնա-մոռաց եւ ինքնամատոյց կեանքը եւ հաւաքական պաշտամունքը միւս կողմէն՝ պէտք է կազմեն Եկեղեցիի, պետութեան, վանականին ու աշխարհականին «գինտուրութիւնը»՝ իր բառով՝ «միլիցիան»:

Բեռնարդոս սուրբ յայտարարուեցաւ իր մահէն 20 տարի յետոյ 1174ին: Իսկ Հռովմէական Եկեղեցիի վարդապետ յայտարարուեցաւ 1830ին: Լատինք կը կատարեն իր յիշատակը Օգոստ. 20ին, Յոյնք չուենին: Մուտք չէ գտած նաեւ մեր Յայսմաւուրքներէ ներս: Ոչ մէկ հայերէն թարգմանութիւն իրմէ:

17. ԴՈՄԻՆԻԿՈՍ (1170-1221)

Հիմնադիրը քարոզիչներու եղբայրութեան մը, որ սակայն անկի ծանօթ է իր անունով՝ Դոմինիկեան Միաբանութիւն: Ծնած է 1170ին Սպանիոյ Կալարուեզա քաղաքը: Մանկութենէն իսկ բնական բերում ցոյց տուաւ եկեղեցական ուսմանց եւ բարեպաշտական կրթութեանց: 26 տարեկանին քահանայ ձեռնադրուեցաւ ու մաս կազմեց Հոգեւոր դասուն իր պատկանած թեմին՝ Օսմա քաղաքի մայր եկեղեցոյ, ուր իր եպիսկոպոսը խիստ կրօնական, կարգապահական ու հաւաքական կեանք մը ստեղծած էր՝ հետեւելով Ս. Օգոստինոսի կանոններուն: Այստեղ նախ ուսուցչական պաշտօն վարեց, ապա եղաւ վերոյիշեալ հաւաքական եղբայրութեան գլխաւորը: 1206ին ընկերացաւ իր եպիսկոպոսին քարոզչական առաքելութեան Ալիքիզեան աղանդներուն, որոնք իրենց անունը առած են Հարաւային Յրանսայի Ալիքի քաղաքէն: Ասոնք կատաղի հակա-եկեղեցական հերետիկոսներ էին մեր Պաղիկեաններու նման, որոնցմէ ծագում առած կը կարծեն ոմանք այս աղանդը: Դոմինիկ տարիներով իր գործունէութիւնը կեդրոնացուց ասոնց վրայ՝ դարձի բերելու նպատակով զանոնք: Այս միջոցին իրեն դադափարակից ընկերներ գտաւ վարժարան բացին

աղանդաւորներու տղաքը դաստիարակելու: Ի վերջոյ 1215ին շուրջը հաւաքուած ընկերներով ձեռնարկեց իրականացնել իր մտքին մէջ հաստատ ձեւ առած գաղափարը. այսինքն հաստատել կրօնաւորական կարգ մը, որուն անդամներուն միակ գործը պիտի ըլլար քարոզչու-թիւնը, յատկապէս հերետիկոսներու եւ հեթանոսներու մէջ: Յաջորդ տարին Հռովմ գնաց եւ ձեռք ձգեց պապական վաւերացումը իր նոր կարգին, գոր պաշտօնապէս կոչեց «ԲԱՄՈՁԻՁ ԵՂԱՅՐՆԵՐ»:

Ասկէ յետոյ Դոմինիկոսի մնացեալ կեանքը անդու անդադար ճամբորդութիւն մը եղաւ յատկապէս Իտալիոյ, Յրանսայի եւ Սպա-նիոյ մէջ՝ քարոզիչ երբայրներու միաբանութիւնները հաստատելու եւ դաստիարակելու զանոնք՝ կեդրոն ունենալով Իտալիոյ Պոլոնիա քա-ղաքը, որ մեր մէջ ծանօթ է Բոնոնիա ձեւով: Հաստատած է նաեւ կու-սանաց կարգեր: Իրենց տարազն է ձեռմակ կապայ, վրան սեւ կրկնոց: 1220ին ներկայ եղաւ իր միաբանութեան առաջին համագումարին, Պոլոնիա քաղաքի մէջ: Յաջորդ տարին ճամբայ ելաւ Հունգարիոյ հեթանոսներու մէջ քարոզելու ճամբան ծանրապէս հիւանդացաւ հարկադրուեցաւ վերադառնալ իր կեդրոնը՝ Պոլոնիա, ուր աւանդեց իր Հոգին ու թաղուեցաւ եկեղեցիի մը մէջ, որ ցայսօր կը կրէ իր անունը: Սրբոց կարգ անցաւ իր մահէն 13 տարիներ յետոյ՝ 1234ին: Լատինք միայն կը տօնեն Օգոստ. 4ին, ուրիշներ՝ ոչ:

Որչափ ալ Դոմինիկոս եղած է ուժեղ նկարագրի եւ լայն տեսիլքի տէր մէկը, որ մարդոց Հոգեւոր բարիքը միայն ի մտի ունենալով կազ-մած է իր միաբանութիւնը, այսինքն դարձի բերել մտքով մոլորած-ները Աւետարանի եւ Եկեղեցիի ուղիղ վարդապետութեան, սակայն իր յաջորդները չմնացին անտարանական առողջ լայնախոհութեան այս սահմաններուն մէջ. ընդհակառակը՝ եռանդուն ջահակիրները եղան «Արտաքոյ Հռովմէական Եկեղեցիի չիք փրկութիւն» կարգախօսին: Այնպէս որ 1229ին երբ Գրիգոր Թ. Պապը աղանդաւորներու դէմ պայ-քարելու համար հաստատեց Հաւատաքննական Ատեաններ, այդ գոր-ծը վստահեցաւ Դոմինիկեաններուն:

Հաւատաքննութիւնը, ինչպէս ծանօթ է, վատ համբաւ ձգած է պատմութեան մէջ՝ իբրեւ հակաքրիստոնէական ու հակամարդկային միջոցներ ի գործ դնող կազմակերպութիւն մը՝ Լատին Եկեղեցիէն տարբեր դաւանանք ունեցող քրիստոնեաներու կամ այլակրօններու

վրայ, ներառեալ Հրէական կրօնքը: Դժբախտաբար բաժանաբար դեռ կատարեց այս կարգը նաեւ Հայաստանեայց Եկեղեցիի մէջ: Որովհետեւ ասոնցմէ խուճբ մը քարոզիչ եղբայրներ եկան նաեւ Հայաստան, ԺԳ եւ ԺԴ դարերուն, որոնց զլիաւոր գործիչը եղաւ Բարթողոմէոս Բոնոնիացին, այսինքն Պոլոնիացին, որ Հայերէն լեզուի ալ տիրանալով՝ Հայ վարդապետներէն ոմանք իրեն քաշեց, տակաւ առ տակաւ «Ունիթոր» (միարար) կոչուած խմբակ մը ստեղծեց, որոնց միակ նպատակն էր Հռովմի Եկեղեցիին դաւանանքը քարոզել Հայոց մէջ՝ ազարտելով ոչ միայն Հայոց լեզուն, այլ նաեւ ու մանաւանդ մեր հոյակապ կարգաւորութիւն ունեցող ծէսերը եւ դաւանանքը, Օրմանեանի բառերով՝ «անարգելով ինչ որ Հայածէս սովորութիւն էր, մորտութիւն Համարելով ինչ որ Հայագաւան վարդապետութիւն էր, մինչեւ իսկ անվաւեր եւ չեղեալ նկատելով ինչ որ Հայ Եկեղեցիէ պաշտուած (այսինքն ի գործ դրուած) խորհուրդ էր: Դոմինիկեան Բարթողոմէոս եղաւ այդ սկզբունքներուն հիմնադիրը...» (Ազգապատում, էջ 1844-1846, հատուած 1273, 1274, 1275. մէջբերումը այս վերջին հատուածէն է):

18. ՖՐԱՆՉԻՍԿՈՍ (1181-1226)

Հիմնադիր իր անունը կրող միաբանութեան եւ միջազգային հռչակի եւ համալրանքի տիրացած ՍՈՒՐԲ մը, որուն անունէն եւ գրեթէ անբաժան է այդ մակդիրը, յատկապէս իտալական ձեւի տակ՝ Սան Ֆրանչիսկոս: Ծնած է 1181ին Իտալիոյ գրեթէ կեդրոնը գտնուող ԱՍՍԻՉԻ քաղաքը, որ իբրեւ մականուն կը գործածուի այս սուրբին՝ զանազանելու համար զայն բազմաթիւ այլ համանուններէն: Իր ծնողըը հարուստ ու բարձր դասակարգէ են, բայց ինք բարձր կրթութիւն չէ ստացած: Երիտասարդութեան՝ ատեն մը օգնական եղած է հօրը կերպասի վաճառականութեան մէջ, սակայն սիրտը գործին մէջ չէ դրած, այլ հաճոյքի եւ վայելքի հետամուտ եղած է: Բնաւորութեամբ անհանդարտ, կտրիճ ու առատաձեռն էր:

Երբ իր քաղաքը կռուի բռնուած էր դրացի քաղաքի մը հետ, Ֆրանչիսկոս, իբրեւ ամէնէն առաջ նետուողներէն մէկը, գերի բռնուած եւ ակլի քան տարի մը բանտարկուած է: Այս առթիւ ենթարկուեցաւ նաեւ հիւանդութեան մը. այս երկու պարագաները իր

մտածումները տակաւ առ տակաւ հոգեւոր եւ յաւիտենական Հարցերու վրայ կեդրոնացնելու ծառայեցին: Երբ բանտէն ելաւ, արդէն իսկ փոխուած էր իր կեցուածքը կեանքի հանդէպ. աշխարհ կորսնցուցած էր իր հրապոյրը իրեն համար. ուստի աղօթքի եւ առանձնութեան մէջ սխաւ փնտռել իր հոգեկան խաղաղութիւնը:

Օր մը երբ կ'աղօթէր Աստիգիի մօտակայ Ս. Դամիանոս լքուած ու փրկած եկեղեցիին մէջ, ձայն մը լսեց, որ կ'ըսէր. «Ֆրանչիս, նորոգէ՛ փրկած տունս»: Կարծեց, որ խօսքը կը վերաբերէր իր աղօթած եկեղեցիին: Ուստի անմիջապէս գնաց հօր խանութը, կրցածին չափ կերպաս վերցուց հօրը բացակայութեան ու տարաւ ծախելու մօտակայ քաղաք մը՝ ձեռք ձգելու համար նորոգութեան անհրաժեշտ մօտակայ քաղաք մը: Խուսափելու համար կծծի հօրը բարկութենէն, ամիս մը պահուած մնաց: Երբ մէջտեղ ելաւ, հայրը փառաւոր ծեծ մը քաշեց իրեն, բանտարկել տուաւ եւ մինչեւ իսկ դատարան յանձնեց՝ վերստանալու համար կերպասներուն փոխարժէքը: Ի վերայ այսր ամենայնի զրկեց զայն իր ժառանգութենէն, որմէ դժգոհ չմնաց Ֆրանչիսկոս եւ ըսաւ հօրը. «Մինչեւ հիմա քեզ կը ճանչնայի իբրեւ հայր, ասկէ յետոյ իմ հայրս Աստուած է»: Ապա դառնալով դատաւորներուն՝ ըսաւ «Ես այլեւ քաղաքին ունէ իշխանութեան ենթակայ չեմ. որովհետեւ մտած եմ Երկնաւոր Թագաւորի ծառայութեան մէջ»: Ու հեռացաւ քաղաքէն՝ ապրելու համար բնութեան ազատ ու մաքուր ծոցին մէջ՝ Աստուծոյ փառքը երգելով ու աղքատներուն, յատկապէս բորոտներուն, ծառայութեան նուիրուելով:

1208ին դարձեալ Աստիգիէն ոչ շատ հեռի Բորձիուկուլա կոչուած տեղի եկեղեցին Ս. Պատարագին ներկայ էր, լսեց օրուան Աւետարանը, որ կը վերաբերէր այն յորդորներուն եւ հրահանգներուն, զորս Յիսուս տուած էր իր աշակերտներուն զանոնք քարոզչական առաքելութեան զրկելու ատեն. «Ձեր հետ ոսկի, արծաթ կամ պղինձ դրամ մի՛ վերցնէք, ոչ ալ ճամբորդութեան յատուկ պարի, ոչ երկու զգեստ, ոչ ալ կոշիկ կամ գաւազան. զի մշակն արժանի է իր վարձքին» (Մտթ. Ժ. 9-10): Այս հրահանգները ուղղուած նկատեց նաեւ իրեն, ուստի անմիջապէս անցաւ անոնց տառական գործադրութեան: Ուխտեց ամբողջական աղքատութիւն, հազաւ քուրճ կապայ մը՝ չուանէ գօտիով մը բռնուած, բոկոտն եւ բացգլուխ նուիրուեցաւ ակտա-

րանական առաքինութիւններ, խաղաղասիրութիւն, եղբայրութիւն ու սպաշխարանք քարոզելու խօսքով եւ կեանքի օրինակով:

Շուտով իր շուրջ հաւաքուեցան բազմաթիւ գաղափարակից մարդեր՝ ամէնքն ալ իրեն պէս աղքատութիւն ուխտած, բոկոտն ու բաց գլուխ: Ասոնցմով կազմեց եղբայրութեան մը կորիզը՝ կեդրոն ունենալով վերոյիշեալ Բորձիուճկուլա վանքը, եւ վաւերացնել տուաւ պապէն: Այս նոր միաբանութիւնը կոչեց «ԿՐՏՍԵՐ ԵՂԱՅՐՆԵՐ» բայց ժողովրդական շրջանակներու մէջ սկսաւ կոչուիլ իր անունով ՅՐԱՆՁԻՍԿԵԱՆ Միաբանութիւն, որ կարճ ժամանակին մէջ տարածուեցաւ ամբողջ Եւրոպա: Այնպէս որ 1219ին գումարուած ընդհանուր ժողովին ներկայ էին աւելի քան 5000 կրօնաւորներ՝ ՀՀաշուելով անշուշտ անոնք, որոնք բանաւոր պատճառներով չէին կրցած ներկայ ըլլալ: Ժամանակի ընթացքին այս միաբանութեան յանձնուեցաւ Ս. Երկրի սրբավայրերուն պաշտպանութեան ու պահպանութեան գործը, զոր մինչեւ այսօր կը շարունակեն եւ իրենց այդ հանգամանքով միշտ շփման մէջ են Երուսաղէմի Հայոց Սրբոց Յակոբեանց Միաբանութեան Հետ՝ աւելի բարեկամական, քան թշնամական, բայց միշտ մրցակցական ոգիով՝ իւրաքանչիւրը պահպանելով Ս. Տեղեաց իր բաժինը մեծ նախանձախնդրութեամբ եւ չափազանց բծախնդրութեամբ:

1212ին իր հաստատած նոր հոգեւոր կեանքի ու աղքատութեան իտէալները ընդունուեցան նաեւ ԿԼԱՐԱ (Պայծառ) կոչուած ազնուական տիկնոջ մը կողմէ, որ ծախելով իր ունեցածը՝ բաշխեց աղքատներուն եւ փափաքեցաւ Հետեւիլ Յրանչիսկոսի կանոնին: Սուրբը նախ տեղաւորեց զայն Բենեդիկտեան կուսանաց վանք մը, ապա երբ ուրիշ կիներ ալ ուզեցին որդեգրել ամբողջական աղքատութեան ուխտը, այն ատեն Յրանչիսկոս ասոնց տրամադրեց իր նորոգած Ս. Դամիանոս եկեղեցին ու վանքը՝ Կլարան մայրապետ նշանակելով անոնց: Այսպէս հաստատուեցաւ նաեւ Յրանչիսկեան կանանց միաբանութիւնը, որ նոյնպէս մեծ տարածանք գտաւ ամբողջ Եւրոպայի մէջ: Կլարան եւս սրբոց կարգ դասած է Հռովմ. Եկեղեցին:

Երկիցս ձեռնարկեց քարոզչական առաքելութեան մահմտական Արաբներու մէջ, բայց երկու անգամին ալ հիւանդանալով՝ չկրցան իրագործել իր փափաքը: Ի վերջոյ յաջողեցաւ մի կերպ միանալ 1219ի խաչակրութեան, որ զբաւած էր Եգիպտոսի Դամիէտ ծովեզերեայ քա-

ղաքը: Այնտեղէն անցաւ Արաբական շրջանը՝ միշտ անոնց մէջ քարոզելու նպատակով: Ձերբակալուեցաւ ու հանուեցաւ սուլթանի ներկայութեան, զոր փորձեց քրիստոնեայ դարձնել: Սուլթանը սակայն անփաս խենթ նկատելով զայն՝ արձակեց. ուրիշ անցաւ Ս. Երկրի՝ գէթ խաչակիրներու անկարգ կեանքը կարգի բերելու դիտումով, սակայն դժբախտաբար ինչպէս չէր յաջողած իսլամաց քարոզելու իր փափաքին մէջ, չյաջողեցաւ նաեւ խաչակիրները բարոյապէս բարեկարգելու իր առաքելութեան մէջ: Դարձաւ ետ՝ Իտալիա:

1224ին, երբ կ'աղօթէր Ապիսինեան լեռներու վրայ հաստատուած Մոնտէ Լա Վեռն կոչուած մենաստանին մէջ, իր մարմնին վրայ երեւցան Փրկչի խաչելութեան նշանները՝ ձեռքերուն, ոտքերուն եւ կողին վրայ: Գերբնական այս երեւոյթը ծանօթ է եւրոպական լեզուներու մէջ «սթիկմաթա» բառով, զոր կրնանք թարգմանել վէրքի ճշման: Այս նշանները երբեմն ահաւոր տառապանքներ կը պատճառէին իրեն, հաւանաբար համապատասխան այն ահաւոր ցաւին ու կսկիծին, զոր Տէրը զգաց խաչելութեան իր վէրքերէն: Ասոնք իր վրայ մնացին մինչեւ իր մահը, որ տեղի ունեցաւ 1226ին 45 տարեկանին: Սուրբերու կարգ անցաւ մահէն երկու տարի յետոյ:

Լատինք կը տօնեն իր յիշատակը երկիցս. մահուան յիշատակը Հոկտ. 4ին, «Սթիկմաթայի» երեւման յիշատակը՝ Սեպտ. 17ին: Յոյներ չեն տօներ: Ձէ մտած մեր Յայսմաւուրքներու մէջ:

Գերազանցապէս հոգեւոր եւ նոյնքան հետաքրքրական դէմք մըն է Սան Յրանչիսկոս: Պարզ ու անսեթեւեթ է իր հաւատքը: Չափ ու սահման չունի իր նուիրումը Աստուծոյ փառքին ու մարդոց բարիքին: Բնական ու բացառիկ է իր խոնարհութիւնը: Լայն ու համատարած է իր սէրը հանդէպ բնութեան, որուն երեւոյթները՝ արեգակ, լուսին, իր սէրը հանդէպ բնութեան, որուն երեւոյթները՝ միջատները, չորքոհով, փոթորիկ եւլ, եւ բնակիչները՝ թռչունները, միջատները, չորքոհով, փոթորիկ եւլ, եւ եղբայր»՝ ներառեալ «իշուկ եղբայրը» եւ «գայլ եղբայրը»: Սրտայոյզ են Սան Յրանչիսկոսի պարզամտութիւնը, միամտութիւնը եւ ուղղամտութիւնը: Մանր հիւանդութենէ մը ապաքինելէ յետոյ իր առաջին քարոզը այսպէս սկսաւ «Նախ պէտք է խոստովանիմ ամէնքիդ առջեւ, թէ այս Մեծ Պահքի ընթացքին իւրով եփուած կարկանդակներ կերայ»: Ուրիշ առթիւ՝ պաշտպանելու համար զայն պաղաւթեան դէմ՝ իր շատ մաշած կապային կոնակը,

ներսի կողմէն, աղուէսի մորթ մը կարել պէտք տեսնուեցաւ: Սուրբ Համակերպութիւն յայտնեց պայմանով, որ Հատ մըն ալ դուրսէն կարուէր, որպէսզի ամէն մարդ տեսնէր, թէ ինք Հակառակ իր ուխտին՝ փափկակեցութեան մեղքը կը գործէր...:

Սան Յրանչիսկոս Հասած էր Հոգեկան այնպիսի պարզութեան, այսինքն բարձրութեան, ուր այլեւս վարդապետական Հարցեր կորսնցուցած էին այն նշանակութիւնը եւ կարեւորութիւնը, զոր անոնք ունեցած են իր ժամանակակից սերունդին: Վարդապետական խնդիրներ իրեն Համար մտքի մարզանքներ չէին, այլ անձէն եւ Հոգիէն մարսուած եւ իւրացուած ու ապրուած իրականութիւններ էին, որոնց մասին որոնալու կարիք չէր մնացած այլեւս: Այս է պատճառը իր քարոզներուն աւելի բարոյական ու գործնական բնոյթ ունենալուն, քան աստուածաբանական տարողութիւն: Այս իսկ պատճառով ամբողջութեամբ դարձած էր աւետարանական պարզ, վճիտ ու գործնական ուսուցումներուն: Իր մէջ գերբնականը եւ բնականը այնպէս մը շաղուած էին, որ այլեւս կարելի չէր որոշ սահման մը քաշել: Թէ ուր կը վերջանար բնականը եւ ուրկէ կը սկսէր գերբնականը: Կրօնքը իրեն Համար ոչ Հաւատալիքներու Համադրութիւն էր եւ ոչ ալ բարոյական պատուէրներու շարք մը, զոր մարդիկ կամաւ կամ ակամայ պարտաւոր էին գործադրել: Իրեն Համար կրօնքը՝ մէկ կողմէն՝ Աստուծոյ ճանաչումին ու սիրոյն բարձրանալ էր բնութեան միջոցաւ, ուր կրնար տեսնել Աստուծոյ մեծութիւնը, արարչագործ գորութիւնը, իմաստութիւնը եւ նախախնամութիւնը, այսինքն սէրը, եւ անոնցմով երգել Աստուծոյ փառքը ու երջանկանալ, ու միւս կողմէն՝ կրօնքը իրեն Համար Աստուծոյ ներհայեցողական ըմբռնումէն, այսինքն միտքով զԱյն Հասկնալէն յետոյ իջնել մըն էր այս անգամ մարդոց եւ բնութեան մէջ՝ սիրելու Համար զանոնք իբրեւ Աստուծոյ ձեռքին գործերը եւ Հոգածութեան եւ սիրոյն առարկաները եւ ի վերջոյ նոյնացնելու Համար ինքզինքը բոլոր արարածներուն Հետ, ըլլան անոնք շնչաւոր կամ անշունչ: Բոլոր ստեղծուածներուն մէջ, Հոգ չէ թէ որքան աննշան թուին անոնք, Ս. Յրանչիսկոս կրնար զգալ, տեսնել եւ դուրս բերել Աստուծոյ զգալի ներկայութիւնը, գեղեցկութիւնը, կատարելութիւնը, իմաստութիւնը եւ նախախնամութիւնը: Ասկէ կը ծագէին իր մանկանման սովորութիւնը՝ ամէն տեղ իր Հօրը տան մէջ

զգալու երջանկութիւնը, եւ ամէն ոք ու ամէն ինչ իր եղբայրը կամ քոյրը նկատելու անկեղծ տրամադրութիւնը: Իր կեանքը արդարեւ Համակերպ ու երջանկութիւն էր, երկինքի թռչուններուն պէս, որոնց Հանգէպ մանաւանդ մասնաւոր սէր ու յատուկ Հոգածութիւն կը ասծէր: Այս չէր նշանակել բնականաբար, թէ տրտմութեան մշուշը երբք չէր նստել իր Հոգիի շուշանագարդ Հովիտներուն մէջ: Մարդոց մէջ, մանաւանդ իր Հիմնած եղբայրութեան մէջ, ծնունդ առած կագ ու կռիւները, նախանձները եւ բաժանումները ամէնէն աւելի կ'ողողէին իր Հոգին խոր տխրութեամբ: Սակայն զայն կը պարպէր Աստուծոյ ներկայութեան՝ յափշտակեալ աղօթքով եւ առատ արցունքով, վասն մեղաւորաց, այնպէս, որ մարդոց առջեւ պարպելիք տրտմութեան կամ գանգատի պաշար չէր մնար իր մէջ. այլ տոգորուած կը զգար միայն զանոնք աւելի սիրելու, իբրբու մօտեցնելու եւ Հայտեցնելու դրական տրամադրութեամբ եւ անդիմադրելի զօրութեամբ:

Սան Յրանչիսկոս ետքէն ու տակաւ առ տակաւ միայն Հասկցաւ բուն իմաստը այն ճայնին, որ իրեն եկած էր Ս. Դամիանոսի փրկիւած եկեղեցիին մէջ աղօթած պահուն՝ «նորոգէ՛ տունս»: Աստուծոյ այս տունը նոյնինքն Ընդհանրական Եկեղեցին էր: Ու Յրանչիսկոս ամբողջ իր կեանքը յատկացուց նորոգչական այդ աշխատանքին ու լիովին յաղողեցաւ այս մարդին մէջ՝ նոր ոգի, նոր թարմութիւն, նոր երիտասարդութիւն, նոր աւիշ ու նոր կեանք ներարկելով Եկեղեցիին: Այս էր արդէն Աստուծմէ իրեն յանձնուած բուն առաքելութիւնը, որուն Համար Աստուած օտած էր զինքը անհրաժեշտ բոլոր շնորհներով: Ու Սան Յրանչիսկոսի գերազոյն փառքը կազմեց իր տառական Հնազանդութիւնը աստուածային այս առաւելութեան եւ արդարութիւն ընելն ու արժեցնելը՝ աստուածատուր իր շնորհաց:

Անցնող վերջին Հարիւրամեակի ընթացքին Սան Յրանչիսկոսի Հռչակը եւ իր մասին տածուած Համակրանքն ու Հիացումը յորդած է Հռովմէական Եկեղեցիի սահմանները եւ ողողած է նաեւ բոլոր բարի կամեցողութեամբ ու ազնիւ տրամադրութիւններով լեցուն Հոգիները՝ դարձնելու աստիճան զայն մեր ժամանակներու ամէնէն սիրուած ժողովրդային ու Համամարդկային սուրբը: Համատարած այս Հիացման վերագարթումին մէջ դեր ունեցած են իր վարքի մասին գրուած

անաչառ գրքոյկներ, որոնց առաջիններէն մէկն է Սթրասպուրկի Կալվինական-բողոքական հոգեւորականի մը՝ Բ. Սապաթիէյի մէկ գիրքը՝ հիմնուած սկզբնական աղբիւրներու վրայ եւ գրուած ջերմ համակրանքով: Այս համակրանքին մէջ կարեւոր դեր ունեցաւ նաեւ մատչելի դառնալը «Ս. Յրանչիսկոսի փոքրիկ ծաղիկները» կոչուած գրքոյկին, ուր կը պատմուին գողտրիկ մանրավէպեր սուրբի մասին. ինչպէս նաեւ Հանրութեան տրամադրութեան տակ դրուած ըլլալը նոյնինքն Ս. Յրանչիսկոսի «Երգ արեգական» կոչուած քնարերգութեան, որ պարզ գովերգութիւն մըն է Աստուծոյ, որ ինքզինքը կը յայտնէ բնութեան բոլոր երեւոյթներու մէջ. «Գովեալ ես, Տէր, բոլոր արարածներէդ, մանաւանդ Արեգակ եղբօրմէն»:

Հակառակ հիմնադրին համբուրելի այս ոգիին՝ իր հետեւորդները անխուսափելիօրէն եւ կարեւոր չափով շեղեցան «Յրանչիսկեան ոգիէն»: Վնասակար եղաւ, օրինակ, իրենց գործունէութիւնը առնուազն Հայոց մէջ: Երբ Դոմինիկեանները իրենց գործունէութեան դաշտ ընտրած էին պատմական Հայաստանը՝ Մեծ Հայքը, Յրանչիսկեաններ թափանցեցին Կիլիկիա, Փոքր Հայաստանը, խաչակիրներու վերջին շրջաններուն, յատկապէս ԺԳ դարուն: Այս մասին խօսքը տանք Օրմանեանին. «Փրանկիսկոսի նպատակը ոչ-քրիստոնեաներու քարոզութիւնն էր միայն, երբ Եւրոպայէ դուրս քարոզութեան ձեռնարկեց. սակայն իր աշակերտները առաւելապէս զբաղուեցան արեւելեան քրիստոնեաները Հռովմէադաւանութեան դարձնելու եւ պապական իշխանութեան ձեռքը զօրաւոր գործիք եղան Հռոմի ազդեցութիւնը տարածելու... Կիլիկիոյ Հայ թագաւորութեան մէջ ալ լատինականութեան տարածուելուն մեծ միջնորդը Փրանկիսկեան կրօնաւորները եղան, որոնք նոյնինքն արքունեաց մէջ գործ եւ պաշտօն ստանձնեցին եւ օգտուելով լատիններու խնամութիւններէն ու լատին տիկիներու գործակցութենէն՝ հետզհետէ լատինասիրութիւնը աճեցուցին Կիլիկիոյ արքունիքին եւ ժողովուրդին մէջ՝ վերջէն ուղղակի Հայ Եկեղեցիի մէջ մտնելու համար» (Ազգապատում, էջ 1712): Այն աստիճան յառաջ տարին իրենց գործունէութիւնը, որ Հայոց Հեթում Բ. գահաժառանգը Յրանչիսկեան կրօնաւոր եղաւ եւ այդ վիճակի մէջ ալ թագաւորեց (1289-1297): Հեթում թշնամացաւ օրուան Հայոց սրբակեաց Կաթողիկոս Տ. Կոստանդին Բ. Կատուկեցիի հետ. ի վերջոյ գահ-

ընկէց ընել տուաւ զայն՝ զրպարտութիւններով, որովհետեւ կաթողիկոսը իբրեւ հաւատարիմ պաշտպան Հայց. Եկեղեցիին՝ լատինական փոփոխութեանց հակառակ դիրք բռնած էր: Ու լատինական այս ազդեցութիւնը շարունակուեցաւ ամբողջ դար մը՝ պատճառ դառնալով մեծ խռովութեանց եւ Կիլիկեան թագաւորութեան կործանման:

Այս բոլորով հանդերձ մենք կ'ուզենք Ս. Յրանչիսկոսի վարքի մասին սովորականէն աւելի երկարած գրութիւնը վերջաւորութեան բերել իր մէկ աղօթքով, որ յաճախ կ'երեւի իր պատկերովը Ամերիկեան Ս. Մտենդի շնորհաւորական քարոզերուն մէջ: Ու այս աղօթքը ամէնէն աւելի կը բարացուցէ անոր համամարդկային սիրով օծուն ոգին:

Տէ՛ր, ըրէ՛ գիս գործիքը Բու խաղաղութեանդ:

Ուր կայ ատելութիւն, սէր ցանեմ ես այնտեղ.

Ուր կայ անիրաւութիւն, ցանեմ ներողամտութիւն.

Ուր կայ կասկած, ցանեմ հաւատք.

Ուր յուսահատութիւն՝ յոյս.

Ուր խաւար՝ լոյս.

Եւ ուր որ տրտմութիւն կայ, տարածեմ ուրախութիւն:

Շնորհէ՛, Տէ՛ր, որ ես աւելի հետամուտ ըլլամ

մխիթարելու, քան մխիթարուելու.

Հասկնալու ուրիշները, քան հասկցուելու ուրիշներէ.

Սիրելու, քան սիրուելու.

Որովհետեւ - Դուն գիտես, Տէ՛ր -

Տալով մենք կը ստանանք.

Ներելով կը ներուինք

Ու մեռնելով է, որ կը ծնինք յաւիտենական կեանքին:

19. ԱՆՏՈՆ ԲԱՏՈՒԱՅԻ (1195-1231)

Դժուար է կոչել այս սուրբը Բատուացի. որովհետև ոչ ծնած, ոչ ապրած եւ ոչ ալ մեռած է Բատուա քաղաքին մէջ, որուն անունը աշխարհածանօթ դարձած է կցուած ըլլալուն համար այս աշխարհահոգեւոր սուրբի անունը: Այս քաղաքի անունը իբրեւ մականուն տրուեցաւ Ս. Անտոնին, երբ իր մարմինը Բատուա փոխադրուեցաւ իր մահէն աւելի քան 30 տարիներ յետոյ, եւ վրան փառաւոր տաճար մը կանգնուեցաւ ու դարձաւ Եւրոպայի ամէնէն հռչակեալ ուխտավայրերէն մէկը, քանի որ ինք ալ հետզհետէ դարձած էր ամէնէն ժողովրդական սուրբերէն մէկը Արեւմուտքի մէջ:

Մնած է 1195ին Բորթուկալի մայրաքաղաք Լիզպոնի մէջ, բարեպաշտ ու ազնուական ընտանիքէ: Մկրտուած է Ճերտինանտ անունով: Կրթութիւնը ստացած է իր քաղաքի մայր եկեղեցիի վարժարանին մէջ, որ հեռու չէր իրենց տունէն: 15 տարեկան մտաւ Օգոստինեան կրօնաւորներու վանքը մը, որ կը գտնուէր Լիզպոնի պարիսպներէն դուրս: Ազատուելու համար ազգականներու եւ բարեկամներու յաճախակի այցելութիւններէն, որոնք կը խանգարէին ինքնամփոփ եւ կեղրոնացեալ հոգեւորականի իր կենցաղը, երկու տարի յետոյ փոխադրուեցաւ նոյն կարգի աւելի հեռաւոր մէկ վանքը, ուր մնաց ութ տարի: Իր գլխաւոր զբաղումն էր աղօթել եւ ուսանիլ: Ունենալով բնականէն սուր յիշողութիւն եւ ուշիմ միտք՝ կրցաւ ամբարիւ իմացական հսկայ պաշար. միւս կողմէն՝ լեցուած ըլլալով հոգեսէր տրամադրութիւններով՝ հսկայաքայլ յառաջդիմեց աստուածամերձ կենցաղի մէջ:

1220ին իր վանքը բերուեցան մարմինները Յրանչիսկեան առաջին մարտիրոսներուն, որոնք նահատակուած էին Մարօքի մէջ Աւետարանը քարոզելու ընթացքին: Անտոն ալ վարակուեցաւ մարտիրոսանալու ջերմ փափաքով եւ որոշեց Յրանչիսկեան միաբան ըլլալ, որ պէսզի կարենայ քարոզութեան համար Մարօք երթալ ու չարչարուիլ եւ ի հարկին մեռնելու համար Քրիստոսի սիրոյն: Երբ կարգ մը Յրանչիսկեաններ եկան իրենց վանքը՝ ողորմութիւն ուզելու համար, յայտնեց անոնց իր փափաքը եւ իր մեծաւորին արտօնութեամբ ստացաւ անոնց ձեռքէն Յրանչիսկեան միաբանութեան տարազ եւ այս առթիւ է, որ իր աւագանի անունը փոխեց Անտոնի:

Կարճ ժամանակէն ճամբայ ելաւ դէպի Մարօք: Ծանրապէս հիւանդացաւ այնտեղ: Հարկադրուեցաւ նաև առնել Բորթուկալ վերադառնալու համար, երբ սաստիկ այլեկոծութիւն մը քշեց իր նաւը դէպի Սիկիլիա: Հազիւ ցամաք ելած ու քշիկ մը կազդուրուած էր, երբ իմացաւ, որ Յրանչիսկեան Միաբանութեան ընդհանուր ժողովը կը գումարուի նոյն տարի Մայիսի վերջը նոյնինքն Ասիզիի մէջ: Հազիւ հասաւ ժողովին, ուր բոլորովին աննշմարելի մնաց: Ժողովէն յետոյ զրկուեցաւ Հիւսիս-արեւելեան Իտալիա, Ռավեննայի շրջանին մէջ ճգնարան մը, իբրեւ պատարագիչ՝ կարգաւոր եկեղեցական չունեցող միաբանութեան մը: Այս ատեններն էր, որ Աստուծոյ նախախնամական տնօրէնութեամբ ի յայտ եկան Անտոնի թաքուն հանճարը եւ իսկական կոչումը:

Կը պատմուի, որ կարգ մը Դոմինիկեան ու Յրանչիսկեան եղբայրներ զրկուեցան իր վանքի առաջնորդանիստ քաղաքը՝ Յլորի՝ ձեռնադրութեան համար: Անտոն ալ ներկայ եղաւ այս ձեռնադրութեան իբրեւ ընկերացող իր վանքի մեծաւորին: Երբ ձեռնադրութեան սկսան՝ անդրադարձան, որ օրուան քարոզիչ չէր նշանակուած: Առաջնորդը առաջարկեց ներկայ Դոմինիկեաններուն՝ «քարոզիչ եղբայրներուն», որ իրենցմէ մէկը տայ քարոզը: Անոնք հրաժարեցան՝ առարկելով, որ պատրաստութիւն չունին: Այն ատեն մեծաւորը հրամայեց Անտոնին խօսիլ «ինչ որ Աստուծոյ Հոգին կը դնէ իր բերանը»: Անտոն պարզապէս հրամանին հնազանդ ըլլալու համար սկսաւ խօսիլ նախ կամաց կամաց եւ երկչոտօրէն, ապա շարունակեց մեծ եռանդով ի յայտ բերելով Ս. Գրքի այնպիսի խոր հմտութիւն եւ աստուածաբանական այնպիսի բարձր գիտութիւն, որ զարմանքի մատնեց բոլոր ներկաները:

Ցանապարաստից այս քարոզով սկսաւ տարածուիլ Անտոնի հռչակը ամէնուրեք: Երբ Սան Յրանչիսկոս լսեց այս մասին, գրեց անոր հետեւեալ կարճ նամակը 1224ին.

«Եղբայր Անտոնին՝ սրբազան գիտութեան ուսուցչին, եղբայր Յրանչիսկոս կը դրկէ իր ողջոյնները: Իմ փափաքս է, որ դուն աստուածաբանութիւն սորվեցնես մեր եղբայրութեան՝ պայմանով, սակայն, որ ինչպէս մեր կանոնը կը նախատեսէ, աղօթքի եւ բարեպաշտութեան հոգին չմարի: Ո՛ղջ եղիբ»:

Եւ սկսաւ ուսուցանել Գոլոնիա, Մոնթէբելլիէ եւ ապա Թուլուզ, Տրանսա:

Սակայն աւելի իբրեւ պերճախօս քարոզիչ քան ուսուցիչ քաղեց Ս. Անտոն իր ամէնէն հարուստ հունձքը: Ունէր լաւ քարոզիչէ մը պահանջուած բոլոր յատկութիւնները՝ բարձրագոյն ձայն, յստակ առողջանութիւն, գրաւիչ արտայայտութիւն, հիանալի յիշողութիւն ու խոր հմտութիւն: Ասոնց վրայ Աստուած աւելցուցած էր մարգարէական շնորհը:

Առաքեալի մը խանդով ձեռնարկեց բարեկարգելու իր ժամանակի բարքերը՝ պայքարելով յատկապէս, իւրայատուկ եղանակով, ընդդէմ հեշտ ու զեղխ կեանքի, ազահուրութեան ու բռնակալութեան: Կ'ըսէ կենսագիր մը. «Իր քարոզներուն պտուղը այնքան հրաշալի էր, որքան իր պերճախօսութիւնը ինքնին»:

Նոյն եռանդով պայքար կը մղէր ընդդէմ հերետիկոսներու, որոնք այն օրերուն վարակած էին Կեղրոնական ու Հիւսիսային Իտալիան: Հերետիկոսներու դարձին ու ջնջումին մէջ իր ձեռք ձգած յաջողութիւնները իրեն շահեցուցին «Հերետիկոսներու հարուածող» փառաւոր տիտղոսը:

Բազմաթիւ հետաքրքրական հրաշքներ կը վերագրուին իրեն, որոնք եթէ ոչինչ կ'աւելցնեն գերազանց սրբութեան եւ անձնդիր քարոզութեան վրայ, գէթ կը վկայեն շատ սիրուած անձ մը ըլլալուն ժողովուրդի հասարակ խաւերուն մէջ: Կը խօսէր որքան խոհականութեամբ, նոյնքան ալ անվերապահ համարձակութեամբ եւ առանց խտրականութեան հարուստին ու աղքատին, հասարակ ժողովուրդին ու իշխաններուն: Կը պատմուի, որ քարոզի մը ընթացքին, ի ներկայութեան բարձրաստիճան հոգեւորականներու եւ ժողովուրդի բազմութեան, այնպիսի խստութեամբ ու «թաքթով» յանդիմանեց քաղաքին արքեպիսկոպոսը, որ դարձի եկաւ, ապաշխարեց ու իր ընթացքը փոխեց:

1230էն յետոյ քաշուեցաւ Բատուայի մերձակայ վանք մը, զոր ինք հիմնած էր: 1231ի Մեծ Գահքի իր վերջին քարոզին, կ'ըսուի, որ ներկայ եղած է շուրջ 30 հազար ժողովուրդ՝ եկած ամէն կողմերէ: Իր վերջին քարոզները ընդհանրապէս խօսուած են ատելութեան ու թշնա-

մութեան դէմ եւ պսակուած են սքանչելի յաջողութեամբ: Բազմաթիւ մարդիկ հաշտուած են իրարու հետ, պարտքեր ներուած են, բանտարկեալներ արձակուած են ու մեծ գայթակղութիւններ հարթուած են, բոլորն ալ՝ ապաշխարանքով եւ խոստովանանքով: Արդարեւ Բատուայի հոգեւորականները այնքան յոգնած ու մաշած են տեւականօրէն խոստովանանքներ լսելէ, որ լուր դրկած են մեծ քարոզիչին, որ խնայէ իրենց եւ քչիկ մը առիթ տայ հանգստանալու եւ կազդուրուելու...:

Ս. Անտոնի դիմումներով, Բատուայի քաղաքապետութիւնը օրէնք մը անցուց 1231 Մարտ 15ին՝ ի նպաստ այն պարտականներուն, որոնք չեն կրնար վճարել իրենց պարտքերը: Այս օրէնքին մէկ պատճէնը մինչեւ օրս կը պահուի Բատուայի Թանգարանին մէջ: Ասկէ կը հետեւցուի, որ սուրբը մեծ ազդեցութիւն ունեցած է նաեւ քաղաքային ու ընկերային շրջանակներու մէջ: Մեռաւ 1231 Յունիս 13ին, 36 տարեկանին, Բատուայէն ոչ շատ հեռու վանքի մը մէջ: Իր մահէն տարի մը յետոյ տօնելի սուրբ յայտարարուեցաւ Գրիգոր Թ. Գապին կողմէ, որ անձամբ ճանչցած էր զայն եւ անոր մէկ քարոզը ունկնդրելէն յետոյ կոչած էր զայն «Տապանակ Կտակարանաց»՝ Սուրբ Գրոց խորունկ գիտութեան համար:

Գրած է Ս. Գրոց բազմաթիւ մեկնաբանութիւններ ու քարոզներ:

1263ին իր մարմինը փոխադրուեցաւ Բատուա եւ իր գերեզմանին վրայ շինուեցաւ փառաւոր տաճար մը: Կը պատմուի, որ երբ բացին իր հին գերեզմանը, տեսան, որ իր մարմինը թէեւ հողի վերածուած էր, բայց իր լեզուն կը մնար անաղարտ եւ կը պահէր իր Թարմութիւնն ու կարմրութիւնը: Ս. Գօնավենթիւրա, որ այդ շրջանին Տրանսիսկեան Միաբանութեան ընդհանուր մեծաւորն էր եւ կը հսկէր փոխադրութեան այս գործողութեան, ի տես այս հրաշալիքին, առաւ լեզուն իր ձեռքերուն մէջ, համբուրեց ու գոչեց. «Ո՛վ օրհնեալ լեզու, դուն, որ փառաւորեցիր Տէրը եւ պատճառ եղար, որ բազմաթիւ ուրիշներ ալ փառաւորեն գԱյն, հիմա բացայայտ կ'երեւի, թէ որքան մեծ արժանիք ունիս առաջի Աստուծոյ»:

Ինչպէս իր կենդանութեան, այնպէս ալ իր մահէն յետոյ, երբեք չէ դադրած մեծագոյն հրաշագործի համբաւ վայելելէ եւ հրաշագործութիւններ կատարելէ: Մասնաւորաբար իրեն կը դիմուի կորսուած

առարկաներուն վերաբերողին համար: Կը տօնուի Հռովմէական Եկեղեցիին մէջ Յունիս 13ին:

20. ԺԱՆ Տ՝ԱՐՔ (1412-1431)

Բատուայի Անտոնի մահէն (1231) մինչեւ Ժան Տ՝Արքի մահը (1431)՝ լման երկու հարիւր տարիներու ընթացքին, ե՛ւ անկէ յետոյ՝ Բրիտանոնէական Եկեղեցին բազմաթիւ սուրբեր ծնած է՝ ներառեալ Արեւմտեան Եկեղեցիի պարծանքները եղող Պօնափենթիւրան, Թովմաս Ագուլինացին, Մեծն Աբերդոս եւ ասոնց նման շատ մը ուրիշներ: Բայց մենք պիտի չկրնանք կանգ առնել անոնց վրայ, որքան ալ արժանի եղած ըլլան անոնք մեր ուշադրութեան, պարզապէս աւելի չուեցնելու համար արգէն իսկ ըստ բաւականին ընդլայնուած այս գործը: Ուստի մեծ ուսումներով պիտի ուզենք իր վերջաւորութեան բերել զայն՝ ներկայացնելով ժողովրդական քանի մը ծանօթ սուրբեր, առաջին հերթին՝ «Լա Բուչեմլէն»՝ «Օրլէանի Կոյսը»:

Ժն դարուն սկիզբները կը շարունակէին տակաւին Անգլիոյ եւ Ֆրանսայի մէջ ծայր տուած այն պայքարները, որոնք ծանօթ են պատմութեան մէջ «Հարիւրամեայ պատերազմներ» անունով, առհասարակ միշտ ի նպաստ Անգլիոյ: 1420ին Թրոյի դաշինքով գրեթէ ամբողջ Ֆրանսան ինկած էր Բրիտանական լուծի տակ: Մէջտեղ մնացած էր Ֆրանսայի յուսաբեկ գահաժառանգ իշխանը, որ անապահով եւ նեղ պայմաններու ներքեւ կ'աշխատէր գէթ վառ պահել Ֆրանսական անկախութեան գաղափարը: Ահաւասիկ այս տխուր եւ նկուն օրերուն, գրեթէ գերբնական պայմաններու ներքեւ, հրապարակ կ'իջնէ Ժան Տ՝Արք՝ կատարելու համար ազատարար դեր մը իր ժողովուրդի կեանքին մէջ:

Մնած է ան 1412ին գիւղացի բարեկեցիկ ընտանիքէ մը, Հիւսիսարեւելեան Ֆրանսայի Լորէն նահանգի Տոմբէմի գիւղին մէջ: Թէեւ գրեւ կարդալ սորվելու առիթ չէր ունեցած, բայց բնականէն ուշիմ, արթուն, քաջ, բարեսէր ու բարեպաշտ աղջիկ մըն էր, որ երբեմն ժամերով կը յամենար իր գիւղի եկեղեցիին մէջ աղօթքով յափշտակուած: 13 տարեկանին է, որ կը սկսի լսել իր հոգեկաւոր «ձայները», որոնք կը թելադրէին իրեն Ֆրանսայի ազատագրական շարժումին գլուխ անցնել: Ասոր վրայ կ'ուխտէ կոյս մնալ եւ աւելի բարեպաշտ

կեանք ապրել: Ամբողջ հինգ տարի այս «ձայները» լսեց ան շաբաթը երկու երեք անգամ: Տակաւ առ տակաւ ծանօթացաւ, որ այդ «ձայները» իրեն կու գային Ս. Կատարինէ եւ Ս. Մարգարիտ կոյսերէն եւ յաճախ Ս. Միքայէլ Հրեշտակապետէն: Այս տեսիլքները գինքը աւելի լրջացուցին եւ աւելի յաճախակի աղօթքի մղեցին: Իր «ձայները» յառկապէս ուժգնօրէն կը թելադրէին իրեն վերցնել Օրլէան քաղաքի պաշարումը, որ սկսած էր Անգլիացիներու կողմէ 1428ին, երբ Ժան Տ՝Արք 16 տարեկան չափահաս աղջիկ մըն էր: Երկար վարանումներ ունեցաւ անսալու այս «ձայներուն»։ «Ի վերջոյ ես գիւղացի տղէտ եւ ոչ ալ տկար աղջիկ մըն եմ. ի՞նչ կրնամ ընել. ոչ ձի հեծնել գիտեմ եւ ոչ ալ պատերազմի», կ'առարկէր ան իր «ձայներուն», որոնք կը պատասխանէին իրեն. «Աստուած պիտի առաջնորդէ քեզի»:

Ի վերջոյ որոշեց հնազանդիլ «ձայնին»: Հետն առնելով իր մէկ ազգական երիտասարդը՝ ներկայացաւ իր գիւղի մօտաւորագոյն Ֆրանսացի հրամանատարին՝ Ռուպէր Պոտրիգորին, 1428ի Մայիսին, երբ Անգլիայէն բանակ մը ճամբայ ելած էր գրաւելու նաեւ գահաժառանգին ձեռքը մնացած փոքր երկրամասը: Ըսաւ հրամանատարին. «Աստուծմէ թելադրուած եկած եմ. կը խնդրեմ, որ երկտող մը գրես գահաժառանգին՝ ըսելով, որ Աստուծոյ կամքով պիտի առաջնորդեմ զայն իր թագադրութեան»: Հրամանատարը կոպիտ ընթացք ունեցաւ եւ անոր ընկերացող ազգականին ըսաւ. «Տար այս աղջիկը իր մօրը. թող լաւ ծեծ մը քաշէ անոր, որպէսզի խելքը գլուխը գայ»:

Սակայն գահաժառանգին կողմնակիցներու կացութիւնը օրէ օր աւելի կը վատթարանար: Օրլէան բանալի քաղաքի պաշարումը աւելի դժուարացած էին Անգլիացիները: Վերադարձին Ժան Տ՝Արքի «ձայները» աւելի ուժգին, սպառնական ու անդիմադրելի դարձան: Մինչ այդ դրացի Շամբայն նահանգի անգլիասէր կառավարիչը գրաւեց իրենց շրջանի հողամասերը, եւ իր ծննդավայրի բնակիչները ձգեցին գիւղը եւ փախան. գիւղը հիմնայատակ այրուեցաւ: Ի վերջոյ Ժան Տ՝Արք կրկին ներկայացաւ վերոյիշեալ հրամանատարին եւ կրկին հանդիպեցաւ մերժումի: Այս անգամ սակայն Ժան Տ՝Արք չհեռացաւ հրամանատարի քաղաքէն. ի վերջոյ իր յարատեւութիւնը եւ յամառութիւնը կոտորեցին անոր չկամութիւնը: Տուաւ պահանջուած յանձնարարականը եւ սուր մը՝ ըսելով. «Պնա՛, տեսնենք ի՞նչ պիտի ընես»:

Տեղոյն մարդիկը իրեն ձի մը ապահովեցին եւ զինուորական զգեստ մը: Ներկայացաւ գահաժառանգին, որ ծպտուած ու խառնուած էր իր պալատականներուն՝ փորձելու համար զայն, թէ արդարեւ Աստուծայ՝ կու գար: Ժան Տ'Արք առանց վարանելու մօտեցաւ ուղղակի գահաժառանգին, խոնարհութիւն ըրաւ ու պարզութեամբ եւ հեզութեամբ ըսաւ «Ազնի՛ւ գահաժառանգ, եկած եմ օգնելու քեզի, որ թագաւոր պսակուիս Ֆրանսայի»: Աւելի քան երկու ժամ տեւեց իրենց առանձնակի խօսակցութիւնը: Պալատականները համաձայնեցան ընթացք տալ իր փափաքին: Հագաւ իր «ճերմակ զրահը», բերել տուաւ Ֆիէր-պոլա քաղաքի Ա. Կատարինէի եկեղեցիի Ա. Սեղանին ետեւ պահուած սուրը:

Բանակի ուրիշ հրամանատարներու պէս ինքն ալ շինեց իրեն յատուկ դրօշակ մը, որուն վրայ Քրիստոսի պատկերը կար օրհնութիւն տալու դիրքին մէջ՝ երկու կողմը ծնրադիր երկու հրեշտակներով, եւ որուն վրայ գրուած էր «Յիսուս, Մարիա»: Դրօշակին բաց մնացած դաշար լեցուած էր շուշաններով: Ի վերջոյ յաջողեցաւ մտնել Օրլէան պաշարուած քաղաքը: Ժան Տ'Արքի ներկայութիւնը հրաշք գործեց պաշարուած քաղաքացիներու մէջ. ամէն ոք լեցուեցաւ նոր յոյսով եւ նոր եռանդով:

Ժան Տ'Արք նախ հրաւիրեց Անգլիացիները, որ վերցնեն պաշարումը եւ հեռանան քաղաքէն: Այս համարձակութիւնը ակելի կատողացուց Անգլիացի հրամանատարները: Պաշարումը վերցնելու երկրորդ ապարդիւն թելադրանքէն յետոյ՝ 1430 Մայիս 5ին, Ժան Տ'Արք եւ իր հետեւորդները ուժգին յարձակում գործեցին Անգլիացիներու ամրութիւններու դէմ եւ գրաւեցին զանոնք: Թէեւ քաջարի աղջիկը վիրաւորուած էր իր ուսէն նետէ մը, բայց Օրլէան ազատուած էր: Մայիս 8ին գոհաբանութեան աղօթք եղաւ ու մեծ թափօր մը կազմուեցաւ: Շարժուման մը ընթացքին Ֆրանսացիք գրաւեցին շրջակայ քաղաքները եւ գերի բռնեցին Անգլիացի բարձրաստիճան հրամանատար մը եւ պարտութեան մատնեցին ուրիշ մը: Գահաժառանգը միացաւ իրենց: Ժան Տ'Արք գրեթէ ստիպեց զայն, որ բանակին գլուխը անցած քալէ Ռէյմսի վրայ: Ծամբան գրաւեցին Թրոյը, ուր կնքուած էր տխրահռչակ դաշինքը, որով ամբողջ Ֆրանսան կը դրուէր Անգլիական լուծի տակ: Յունիս 14ին մտան Ռէյմս, եւ երկու օր յետոյ թագաւոր

ծուեցաւ գահաժառանգը՝ իբրեւ Շարլ Է., Ռէյմսի հռչակաւոր Մայր Տաճարին մէջ, կրնանք ըսել՝ կնքաւորութեամբ Ժան Տ'Արքի, որ անոր աջ կողմը կեցած էր թագադրութեան հանդէսին՝ իր դրօշակը ձեռքին եւ այր մարդու զինուորական զրահով: Թագադրութեան հանդէսի աւարտումին, թագաւորին առջև ծունկի եկաւ աղջիկը եւ ըսաւ «Ազնի՛ւ արքայ, այժմ կատարուեցաւ Աստուծոյ կամքը, որ ես վերցնէի Օրլէանի պաշարումը եւ առաջնորդէի քեզ Ռէյմս քաղաքը՝ ստանալու համար սուրբ թագադրութիւնը, հաստատելու համար, թէ արդարեւ դուն ես թագաւորը եւ օրինական տէրը Ֆրանսայի պետութեան»: Ու թելադրեց քալել ուղղակի Բարիզի վրայ: Թագաւորը սակայն ժամավաճառ եղաւ ուրիշ մանր խնդիրներով, եւ չկրցան օգտագործել ստեղծուած հոգեբանական նպաստաւոր կացութիւնը՝ ամբողջ երկիրը վերագրաւելու:

Այս կէտին Ժան Տ'Արք իր առաքելութիւնը աւարտած նկատելով՝ ուզեց տուն վերադառնալ. բանակը չձգեց զայն. թագաւորը ազնուականութեան բարձրացուց զայն եւ իր ընտանիքը ու իր գիւղը տուրքէ դեբձ կացուց: Ժան Տ'Արք դարձաւ պալատական ազնուականներէն մէկը՝ միշտ այր մարդու գէն ու զարդով գրահուած:

Իր ազատագրած քաղաքներէն մէկը դարձեալ պաշարուած էր Անգլիացիներու ու անոնց դաշնակից Պուրկուտիցիներու կողմէ: Ժան Տ'Արք պաշարուած քաղաքին օգնութեան վազեց եւ յաջող յարձակում գործեց պաշարողներու դէմ: Իր մարդիկը սակայն իրենք գիւրեմք կողոպտուի տուին, որմէ օգտուելով՝ նահանջող բանակը ետ դարձաւ եւ հալածեց զանոնք ետ դէպի քաղաք: Ժան Տ'Արք իր բանակին ետեւն էր. յաճախ ետ կը դառնար ու յարձակում կը գործէր թշնամիին վրայ, որ ժամանակ տար իր բանակին պաշտպանուած քաղաքը մտնելու: Հազիւ մտած էին, երբ գետին վրայ ձգուած շարժական կամուրջը, առանց իրենց սպասելու, վեր առնուեցաւ եւ Ժան Տ'Արք քանի մը ընկերներով դուրս մնաց եւ գերի ինկաւ ու տարուեցաւ Պուրկուտիի դուքսին, որուն կողմէ ծախուեցաւ Անգլիացիներուն: Անգլիացիներ կրնային սպաննելով մէջտեղէն վերցնել զայն, ինչ որ պիտի ծառայէր սակայն ակելի հերոսացնելու աղջիկը: Ուստի ուզեցին զայն վարկաբեկել կրօնական դատարանով մը, ինչ որ ստուեր պիտի բերէր նաեւ Ֆրանսայի նորապսակ թագաւորին վրայ:

Այս վերջինը ոչինչ ըրաւ ազատագրելու ժան Տ'Արքը. ուստի ինք փորձեց ազատել ինքզինքը՝ բանտի պատուհանէն վար ցատկելով բայց նորէն բռնուեցաւ ու աւելի խիստ կապանքի տակ դրուեցաւ:

Անգլիացիները փոխադրեցին զինքը Ռուան՝ իրենց զինուորական կեդրոնը Ֆրանսայի մէջ: 1231ին յանձնուեցաւ կրօնական դատարանին, որուն նախագահն էր Բիէր Քօշօն անունով եպիսկոպոս մը, որուն թեմը գրաւուած էր ժան Տ'Արքի գլխաւորած ոյժերէն եւ եպիսկոպոսը փախած էր իբրեւ անգլիասէր: Այս դատավարութեան արձանագրութիւնները պահուած են մինչեւ օրս եւ կը կրեն Քօշօնի կնիքը: Դատական մարմինը, որ մասնաւոր ընտրութեամբ նշանակուեցաւ Քօշօնի կողմէ, բաղկացած էր Բարիզի համալսարանի 10 անդամներէն, ամէնքն ալ, ինչպէս Բարիզի ամբողջ համալսարանը, անգլիասէր էին ու մոլեռանդ աստուածաբաններ, 22 հոգի Ռուանի հոգեւորականներէն եւ կարգ մը վանականներէ՝ զանազան միաբանութիւններէ, ամէնքն ալ թէեւ Ֆրանսացիներ, բայց Անգլիացոց մարդերն էին: Դատաւոր մը, որ յայտարարեց, թէ անկանոն էր այս կերպ դատավարութիւնը, բանտ նետուեցաւ: Եղաւ ձեւական դատավարութիւն մը, որուն միակ նպատակն էր ի գին ամէն բանի եւ հակառակ ժան Տ'Արքի տուած պարգ, անվախ եւ ուշիմ պատասխաններուն՝ դատաւարտել անմեղ զոհը կախարդութեամբ ու հերետիկոսութեամբ մեղքերով, որպէսզի կարենային խարոյկով վերջ տալ անոր կեանքին: Դատավարութեան ու բանտարկութեան ընթացքին հոգեկան ու ֆիզիքական շատ տանջանքներու ենթարկուեցաւ անգուժ դատաւորներու եւ կոպիտ զինուորներու կողմէ: Դատավճիռը տրուեցաւ Մայիս 29ին: Ժան Տ'Արքի արտօնուեցաւ Հաղորդութիւն ստանալ բանտին մէջ: Յաջորդ օրը երբ խարոյկի ցիցին կը շղթայէին զինքը, խաչ խնդրեց բերին մօտակայ եկեղեցիին խաչը, զոր համբուրեց ջերմեռանդութեամբ: Երբ խարոյկը բռնկեցաւ եւ թանձր մուխին մէջ թաղուեցաւ իր գէմքը, բարձր ձայնով «Յիսուս» կանչեց ու աւանդեց իր հոգին: Իր աճիւնները եւ մոխիրները Սէն գետը նետուեցան Ռուանի կամուրջէն:

1456ին իր դատավարութիւնը վերանկատարութեան ենթարկուեցաւ 1431ի դատավարութիւնը ապօրէն հռչակուեցաւ ու ժան Տ'Արք անմեղ յայտարարուեցաւ: Իսկ 1920ին տօնելի սուրբերու կարգ անցաւ՝ ոչ այնքան իր հայրենասիրութեան ու մարտական հրաշագործու-

թեանց համար, որքան իր առաքինի կեանքին եւ Աստուածային ազդեանքներու հնազանդութեան ու հաւատարմութեան համար: Կը տօնուի Մայիս 30ին Հռովմէական եկեղեցիին մէջ:

21. ԻԳՆԱՏԻՈՍ ԼՈՅՈՒԱ (1491-1556)

Հիմնադիրը Յիսուսեան Միաբանութեան, ժողովրդական բառով՝ «ձէզուիթներու»: Մնաւ ազնուական Պասք ընտանիքէ 1491ին, Բիրենեան լեռներու Սպանական կողմի Լոյոլա քաղաքին մէջ, որուն անուը իր վրան մնաց իբրեւ մականուն: Մտաւ զինուորական ասպարէզ եւ իբրեւ վայելուչ ու կենսուրախ անձնաւորութիւն մը ինքզինքը տուաւ աշխարհիկ վայելքներու: Ֆրանսացիներու կողմէ պաշարուած քաղաքի մը պաշտպանութեան ընթացքին լրջօրէն վիրաւորուեցաւ սրունքներէն, երբ լրիւ 30 տարեկան էր: Հարկադրուեցաւ բոլորել հիւանդանոցի մը մէջ կազդուրման երկար շրջան մը, երբ առիթ ունեցաւ կարգաւ Յիսուսի կեանքը եւ սրբոց վարքերը, որոնք հիմնովին փոխեցին իր տրամադրութիւնը եւ տեսակէտները կեանքի մասին: Ու որոշեց այս անգամ դառնալ Յիսուսի զինուոր: Գիշեր մը, ինչպէս ինք պատմած է իր ինքնակենսագրութեան մէջ, տեսած է «յստակօրէն» Ս. Կոյսը եւ Մանուկ Յիսուսը, այս տեսիլքը լեցուցած է իր սիրտը մէկ կողմէն անհուն քաղցրութեամբ եւ միւս կողմէն արթնացած է իր մէջ զօրաւոր զգուանք իր մեղքերուն նկատմամբ: Այս կէտէն կը սկսի գործնական դարձը Իգնատիոսի եւ ամբողջական նուիրումը կրօնական կեանքի:

Առողջանալէն յետոյ՝ 1522ին, մեկնեցաւ Մօնթէրրադ կոչուած հռչակաւոր սրբավայրը, ուր ընդհանուր ու հիմնական խոստովանանք եղաւ: Երեք օր ինքզինք նուիրեց ներքին խորունկ քննութեան եւ խորհրդածութեան: Իր ճոխ հազուատները տուաւ աղքատներուն, հազաւ կրօնաւորական երկար քուրձէ պարեգօտ մը: Իր սուրը եւ դաշոյնը նուիրեց նոյն սրբավայրին եւ ամբողջ գիշերը անցուց հսկումով եւ աղօթքով՝ Աստուածամօր Ս. Սեղանին առջեւ: Յաջորդ օրը՝ Աւետման տօնին, Ս. Հաղորդութիւն առաւ ու հեռացաւ վանքէն:

Այնտեղէն անցաւ Մանրեսա կոչուած քաղաքը, որուն մերձակայքը քարայրի մը մէջ լման տարի մը անցուց ամենախիստ ճանդուրութեամբ եւ մշտական աղօթքով ու խորհրդածութեամբ: Այս առթիւ էր,

որ գրեց, Հիմնուելով իր հոգեւոր փորձառութեանց ու խորհրդածութեանց վրայ, իր ամէնէն նշանաւոր գործը՝ «Հոգեւոր մարդանքներ», զոր սրբաբարոյութեանց ու վերանայումի ենթարկելով ամբողջ իր կեանքի տեւողութեան՝ վերածեց զայն հոգեւոր կեանքի կարեւոր դասագիրքի մը, որուն ազդեցութիւնը շատ հզօր եղած է կաթողիկ միսթիքներու եւ հոգեւոր կեանքի տիտաններու վրայ անցնող աւելի քան 400 տարիներու ընթացքին:

Այստեղէն ալ ճամբայ ելաւ, ուխտագնացութեան նպատակով, դէպի Հռովմ ու Երուսաղէմ, ինչ որ գրեթէ տարի մը տեւեց: Ամբողջ ճամբու ընթացքին իր ուտելիքը եւ անհրաժեշտ պիտոյքները կը ճարէր երբեմնի հպարտ այս ազնուական հրամանատարը ողորմութիւն խնդրելով, չըսելու համար՝ կրօնական նկարագիր հագած մուրացկանութեամբ: Ճամբու ընթացքին բախեցաւ ահաւոր դժուարութեանց ու նեղութեանց, որոնց բոլորին տոկաց ու յաղթահարեց իր հաւատքով ու կամքի զօրութեամբ:

Երուսաղէմէն Սպանիա վերադարձին ինքզինքը ամբողջութեամբ ուսմունքի տուաւ լման 11 տարիներ՝ 1524-1535: Նախ լատիներէն քերականը սորվեցաւ Պարսելոնայի մէջ դպրոցական տղաներու հետ: Շարունակեց չորս տարի Ալքալա եւ Սալմանաքա եւ ապա անցաւ Բարիդ, ուր ուսանեցաւ եօթը տարիներ: Այստեղ է, որ 1534ին Հիմքերը դրաւ իր ապագայ հռչակաւոր միաբանութեան, երբ իրեն կապեց վեց հոգիներ, որոնց մէջ էր Յրանսիս Քասպիէ՝ ապագայ մեծ առաքեալը դէպի Հնդկաստան, Ճաբոն ու Չինաստան: Եօթը միասին ուխտեցին աղքատութիւն, ժուժկալութիւն եւ ուխտագնացութիւն մը դէպի Երուսաղէմ՝ նպատակ ունենալով հաստատուիլ այնտեղ ու նուիրուիլ Աւետարանի քարոզչութեան մահմետականներու մէջ:

1537ին անցան Իտալիա, բոլորն ալ քահանայական կարգ ստացան ու գացին մինչեւ Վենետիկ՝ այնտեղէն նաւ առնելու համար դէպի Երուսաղէմ: Սակայն տիրող պատերազմական վիճակը եւ այլ աննպաստ պայմաններ պարտադրեցին իրենց վերադառնալ Հռովմ եւ իրենքզիրենք դնել պապի տրամադրութեան ներքեւ՝ գործածելու համար զիրենք յարմար դատուած ունէ նպատակի: 1540ին Իգնատիոսին հիմնած միաբանութիւնը պաշտօնապէս վաւերացուեցաւ Պօղոս Գ Պապին կողմէ՝ «Յիսուսի Ընկերակցութիւն (Սօսիէթէ)» անունով:

Միաբանութեան հիմնական երկու նպատակներն էին. 1-նեցուկ եւ զօրավիգ կանգնիլ պապականութեան եւ Հռովմէական Եկեղեցիին դաւանած կրօնական հաւատալիքներու՝ ընդդէմ Հերետիկոսութեանց. 2-քարոզչական առաքելութիւն կատարել Հեթանոսներու մէջ:

Վանական հիմնական երեք ուխտերու՝ աղքատութեան, ժուժկալութեան եւ հնազանդութեան վրայ աւելցուցին չորրորդ մը՝ երթալ, անյապաղ եւ առանց ունէ առարկութեան, հոն, ուր պապը կը ղրկէր զանոնք: Միաբանութեան կազմութիւնը գինուորական ու միապետական էր. «կեներալը» միաբանութեան կողմէ ընտրուելէ յետոյ բացարձակ իշխանութեան տէր էր, ենթակայ միայն պապին: Ոչ մէկ «ճէզովիթ» արտօնուած էր եկեղեցական բարձր կարգ կամ պաշտօն ստանալ առանց պապական պարտադրանքի: Կարճ ժամանակի մէջ այս միաբանութիւնը տարածուեցաւ Եւրոպայի ամէն կողմերը եւ յաջող առաքելական գործունէութիւն ունեցաւ Ամերիկա, Ափրիկէ եւ Ասիա: Ջօրաւոր շեշտ դրին ուսման վրայ եւ հասցուցին մեծ աստուածաբաններ ու դաստիարակներ, որոնք կը դասախօսէին Համալսարաններու ու կրթական բարձր յարկերու մէջ: Սակայն ժամանակի ընթացքին իրենց ի գործ դրած յախուռն եւ ուժեղ գործունէութիւնը գրեթէ ամէն ասպարէզի մէջ՝ ժխտական անդրադարձ ունեցաւ միաբանութեան վրայ: Ամէն կողմէ դիտուեցան իբրեւ պապական գործակալներ, որոնք ուրիշ երկիրներու ներքին ու քաղաքական գործերու մէջ ալ կը խառնուէին յօգուտ պապականութեան, որ մեծ պետութիւն մըն էր այն օրերուն՝ իբրեւ մայրաքաղաք ունենալով ամբողջ Հռովմը: Կասկածելի, մինչեւ իսկ ատելի դարձան իբրեւ մարդիկ, որոնք կը հաւատային «նպատակը կ'արդարացնէ միջոցը» սկզբունքին եւ արդարեւ կը դիմէին ամէն ներելի եւ աններելի միջոցներու, «Աստուծոյ եւ Եկեղեցիին փառքին համար», իրենց յանձնուած նպատակներուն յաջողութեան համար: Այնպէս որ 18րդ դարէն սկսեալ մի առ մի վտարուեցան նոյնիսկ կաթողիկոսութեան ամէնէն զօրաւոր պաշտպան նկարուած երկիրներէ՝ Յրանսայէն, Սպանիայէն եւ Բորթոնկայէն, ու այս երեքին եւ կարգ մը Իտալական պետութեանց պահանջով կղեմէս ԺԴ Պապը գրեթէ խափանեց միաբանութիւնը 1753ին յատուկ կոնդալով մը: Միաբանութիւնը սակայն վերստին սկսաւ կազմակերպուիլ, եւ

1814ին «Ընկերակցութիւնը» պաշտօնապէս վերահաստատուեցաւ Գրոս է. Գապին կողմէ:

Այսօր Յիսուսեանները տարածուած են գրեթէ աշխարհի ամէն կողմերը: Ունին բազմաթիւ համալսարաններ ու գոլէճներ, որոնց գլխաւորն է Հռովմի Գրիգորեան Համալսարանը, իսկ Արեւելքի մէջ իրենց ունեցած 9 համալսարաններէն մեզի ամէնէն ծանօթը եւ կարեւորներէն մէկն է Պէյրութի Յիսուսեան Ծրանսական Համալսարանը: Կը հրատարակեն աշխարհի ամէն կողմերը աստուածաբանական ու եկեղեցագիտական բարձրագոյն եւ հմտագոյն թերթերէն ոմանք:

Իգնատիոս Լոյոլա եղաւ Յիսուսեաններու առաջին «կենեարը». իր գլխաւոր նպատակը, ջանքը եւ իրագործումն էր բարեկարգել Հռովմէական Եկեղեցին Անքուէն, ի հեճուկա Բողոքականներու, որոնք իր օրերուն ծնունդ առին եւ որոնք Եկեղեցին բարեկարգելու իրենց առաջադրութեան մէջ նախընտրեցին դոյրս գալ Հռովմէական Եկեղեցիէն: Վերոյիշեալ նպատակը ի գլուխ հանելու համար Իգնատիոս շեշտը կը դնէր հետեւեալ միջոցներու վրայ՝ 1-կրթութիւն՝ համալսարաններու ու ամէն տեսակ դպրոցներու միջոցաւ. 2-յաճախակի գործածութիւն Ս. Խորհուրդներու, յատկապէս Ապաշխարանքի եւ Ս. Հաղորդութեան. 3-քարոզել Աւետարանը նորագիտ երկիրներու հեթանոս ժողովուրդներու մէջ՝ Ամերիկա, Ափրիկէ եւ Ասիա. 4-պայքարել ընդդէմ հերետիկոսներու եւ հերձուածողներու եւ բնաջնջել զանոնք: Հերձուածող եւ հերետիկոս կը նկատուէին Հռովմէական Եկեղեցիէն դուրս գտնուող բոլոր քրիստոնէաւորը, որոնց կարգին նաեւ Հայաստանեայց Եկեղեցին, զոր դարձի բերելու եւ Հռովմի միացնելու համար զօրաւոր գործունէութեան անցան 19րդ դարու առաջին կէսին, յատկապէս Իսթանպուլի մէջ՝ ստեղծելով «էրմէնի միլլէթի» մէջ «Կաթոլիկ միլլէթ» մը՝ օժանդակութեամբ Եւրոպայի կաթոլիկ դեսպտաներու:

Իգնատիոս Լոյոլա մեռաւ 1556ին Հռովմի մէջ: Սուրբերու կարգ անցաւ 1622ին. փառաւոր տաճար մը կանգնուեցաւ իր շիրիմին վրայ: Կը տօնուի Հռովմէական Եկեղեցիի մէջ Յուլիս 31ին:

22, 23. ԵՐԿՈՒ ԹԵՐԵԶԱՆԵՐ (1515-1582)(1873-1897)

Յաճախ կը նոյնացուին այս երկու համանուն սրբուհիները ու մէկի կը վերածուին միտքերուն մէջ անոնց, որոնք անունը միայն իմացած ըլլալով՝ յարգանք ու համակրանք ունին այդ անունը կրող սուրբին հանդէպ: Հռովմէական Եկեղեցին արդարեւ ունի երկու սրբուհիներ Թերեզա անունով՝ երկուքն ալ շատ սիրուած, շատ դիմուած եւ շատ ժողովրդական դարձած: Երկուքն ալ աստուածային սիրոյ սեղանին վրայ մատուցուած ողբակէզներ եւ ամբողջական նուիրումի տիպարներ եղան: Երկուքն ալ հասան այնպիսի հոգեկան կատարելութեան, որ քիչերուն տրուած շնորհ մըն է: Երկուքն ալ յաջող սերունդներուն ձգած են՝ իբրեւ թանկագին ժառանգութիւն՝ իրենց «ԿԵԱՆՔԵՐԸ»՝ ոչ միայն իբրեւ օրինակելի տիպարներ, այլ նաեւ իբրեւ ինքնակենսագրութիւններ: Երկուքն ալ Ֆիզիքապէս տկար եւ հիւանդկախ եղած են, բայց օժտուած են հոգեւոր պաղպաղուն առողջութեամբ եւ կամքի մեծ կարողութեամբ: Երկուքն ալ կոյսեր են, բայց ծնունդ տուած են բազմաթիւ հոգիներու՝ իրենց ողջութեան եւ մահէն ալ յետոյ: Տարբերութիւնը այն է, որ կ'ապրին տարբեր դարերու մէջ՝ մէկը միւսէն 300 տարիներու անջրպետով անջատուած: Տարբեր են «քաղաքաւ եւ ազգաւ», բայց նոյն եւ նման են հոգիով եւ համաքաղաքացիներ՝ երկինքի: Տարբեր է թիւը տարիներու, զորս ապրեցան երկրի վրայ, բայց երկուքն ալ յաւիտենականութիւնը ժառանգեցին: Վերջապէս տարբեր են գործերը եւ առաքելութիւնը երկուքին՝ նոյն ըլլալով անոնք իրենց նպատակին մէջ՝ Աստուծոյ փառքը, իրենց եւ ուրիշներու հոգիներու փրկութիւնն ու կատարելութիւնը եւ Եկեղեցիին բարիքն ու պայծառութիւնը: Մէկը անվարան կարելի է կոչել «Մեծն Թերեզա»՝ 300 տարիներու իր երէցութեամբ, կեանքի համեմատաբար երկարութեամբ եւ կատարած գործերու մեծութեամբ, իսկ միւսը ինքն իսկ պիտի սիրէր կոչուիլ «Փոքրիկն Թերեզա»՝ ոչ միայն իր Ֆիզիքական մանրութեամբ ու կեանքի կարճութեամբ, այլ առաւելաբար պզտիկ նկատուած գործերու իր տուած կարեւորութեամբ, բայց մանաւանդ այդ բառին Աւետարանին մէջ ստացած իմաստով (Ղկ. Թ. 48):

Առաջինը կը կոչուի «ԱՎԻԼԱՅԻ ԹԵՐԵԶԱ»՝ ծնած ըլլալով Սպանական Ավիլա քաղաքը 1515ին ազնուական ընտանիքէ մը: Մայրը

կորսնցուց 12 տարեկանին: Ուսանեցաւ իր քաղաքը Օգոստինեան քոյրերու դպրոցը: 18 տարեկանին մտաւ իր քաղաքի Կարմեղեան կուսանաց վանքը: Բայց տեսնելով, որ այս վանքին մէջ թուլացած եւ անտեսուած էին այս կարգին նախնական եւ աւելի Հոգեւոր կեանք ու կարգապահութիւն պահանջող կանոնները՝ որոշեց հեռանալ այնտեղէն եւ հիմնել նոր վանք մը, ուր պիտի կրնար լրիւ գործադրել Հին կանոնը, որ իր համոզումով աւելի աստուածամերձ ու աւելի կատարեալ կեանք ապրելու պիտի նպաստէր: Բախեցաւ զօրաւոր հակառակութեան եւ հանդիպեցաւ ծանր դժուարութեանց, որոնց բոլորին յաղթահարեց ի վերջոյ եւ 1562ին, երբ 47 տարեկան հասուն կին մը եւ Հոգեւոր գործիչ մըն էր, երջանկութիւնը ունեցաւ բանալու իր երազի վանքը յանուն Ս. Յովսէփ «ԱստուածաՅօր», որուն հանդէպ մասնաւոր նուիրուածութիւն մը ունէր: Իր նպատակն էր չխճողել իր նոր վանքը նախորդին պէս. ուստի բաւականացաւ 12 նուիրեալ քոյրերով, որոնց ինքնաբերաբար մայրը եւ առաջնորդը եղած էր: Ամբողջական աղքատութիւնը, խիստ ճգնողութիւնը, վանքի մէջ փակուած կեանքը, միսէ եւ աշխարհէ լրիւ հրաժարումը, ամէնօրեայ բազմիցս պաշտամունքը եւ իմացական առանձնական աղօթքը մաս կը կազմէին իրենց ԿԱՆՈՆին եւ Հոգեւոր կեանքին:

Բայց տեսնելով, որ դիմումները անընդհատ կը շատնան, իր կեանքի մնացեալ 20 տարիները նուիրեց տակաւ առ տակաւ հիմնելու նման փոքր Հոգեւոր տուններ՝ մանրանկար կուսանաց վանքեր, որոնց թիւը իր մահէն քանի մը շաբաթներ առաջ բարձրացած էր 17ի: Իր ազդեցութեամբ ու նախաձեռնութեամբ շարժումը տարածուեցաւ նաեւ այրերու մէջ, որոնց գլխաւոր ու առաջնորդ կարգեց ԽԱՉԻ Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍը (Սէյնթ Ճօն օվ Քրօս)՝ ուրիշ մը Հռովմէական Եկեղեցիի մեծ ու միաթիք սուրբերէն, որ Թերեզայի քաջալերութեամբ ու ԿԱՆՈՆովը բացաւ 14 վանքեր այրերու համար:

Քսան տարուան ընթացքին գրեց քառեակ մը գիրքեր՝ ամէնքն ալ զօրաւոր Հոգեւոր տարողութեամբ: 1. ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝ Թելադրութեամբ իր խոստովանահայրերուն, որոնք առհասարակ եղած են իր շրջանի ու ժամանակի ամէնէն նշանաւոր Հոգեւորականները: Այստեղ յատկապէս կը ծանրանայ իր աղօթելու ատեն ունեցած յայտնութեանց եւ գերբնական երեւոյթներու, վերացումի, յափշտա-

կութեան եւ Աստուծոյ հետ ամենասերտ հաղորդութեան: Գիրքը կ'ընդգրկէ վաղ մանկութենէն մինչեւ 1562 թուականը՝ իր առաջին վանքի հաստատութիւնը: 2. ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ. կերպով մը շարունակութիւնը իր կենսագրութեան՝ շեշտը դնելով իր հիմնարկած յաջորդ 16 վանքերու վրայ, ներկայացնելով իր հանդիպած դժուարութիւնները եւ Հոգեւոր փորձառութիւնը: 3. ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ ՃԱՄԲԱՆ՝ իբրեւ դասագիրք եւ առաջնորդ իր Հոգեւոր զաւակներու հոգեկան կատարելութեան: 4. ՄԻՋՆԱԲՐԴԸ. բարձրօրէն միաթիք գիրք մը, ուր հեղինակը կու տայ արդիւնքը իր պրպտումներուն հոգեւոր մարզերու մէջ. ներքին կատարելութեան ճամբուն մէջ իր ըրած գիտերուն եւ Հոգեւոր սկզբունքներուն հիանալի հանդիսարան մը: Իր մահէն յետոյ հրատարակուած է նաեւ իր շատ հետաքրքրական ու հոգեշահ նամակներու մէկ հաւաքածոյն:

1582ին՝ իր վերջին վանքը հաստատելէն գրեթէ անմիջապէս յետոյ, մարմնով յոգնած ու մաշած, վախճանեցաւ խաղաղ պայմաններու տակ: Երեք տարիներ յետոյ, երբ մարմինը այլուր փոխադրելու համար դադարը բացին, զարմանքով նկատեցին, որ մարմինը գրեթէ անեղծ մնացած էր. եւ կ'ըսուի, թէ մինչեւ օրս ալ կը մնայ այնպէս: Երկու կարեւոր դեր կատարեց «Մեծն Թերեզա». ա. բարեկարգեց Կարմեղեան կրօնաւորական կարգը, որ բազմաթիւ յայտնի եւ անյայտ սուրբեր պարգեւած է Հռովմէական Եկեղեցիին. բ. անփոխարինելի եւ ինքնատիպ գրականութիւն մը ձգեց Հոգեւոր կատարելութեան մասին, որ անսպառ սնունդը կազմեց իրմէ յետոյ եկող մեծ միաթիքներու եւ սրբակենցաղ անձերու:

Ավիլայի Թերեզան օտուած էր, բացի ներքին հայեցողական ու աղօթանուէր բարձր շնորհներէն, նաեւ գործնական կարողութիւններով. այնպէս որ կը ներկայանայ մեծագոյն տիպարներէն մէկը, որ կրնար իրարու հետ ներդաշնակել փակուած վանքի աղօթազգած վերացեալ կեանքը ամէնօրեայ եւ յարաճուն գործունէութեան հետ՝ այսպէս միացնելով Աւետարանի Մարթան ու Մարիամը իր անձին մէջ: Ունէր, օրինակ, կառավարելու եւ սիրտերը գրաւելու շնորհալի կարողութիւն մը: Երբ ի վերջոյ, հակառակ իր կամքին, իր եպիսկոպոսին կողմէ մեծաւորուհի նշանակուեցաւ սկզբնական այն վանքին, ուրկէ բաժնուած էր պարզապէս կրօնաւորական կարգապահութեան թուլա-

ցած ըլլալուն համար, վանքին 80 քոյրերը չուզեցին Հնազանդիլ իրեն: Ինք պարզապէս ըսաւ անոց. «Ձեռ եկած հրամայելու կամ իմ անձնական տեսակէտներս ձեզի պարտադրելու եկայ ծառայելու ձեզի եւ գործակցելու ձեզի, որ առաւել չափով իրագործէք ձեր այս վանքը մտնելու նպատակը՝ իմ կարգիս սորվելով միաժամանակ շատ բաներ ձեր ամէն մէկէն, մինչեւ իսկ ամէնէն պզտիկէն»: Իրեն յատուկ մայրական քաղցրութեան եւ կրօնաւորական հեղութեան դիմաց տակաւ առ տակաւ հալեցան բոլոր չկամութիւնները, ու շատցան համակերպութիւնները եւ սիրայօժար Հնազանդութիւնները, ու ինք ի վերջոյ վերահաստատեց նաեւ այս վանքէն ներս Կարմեղեան կատարելութեան ԿԱՆՈՆԸ: Ու երբ երեք տարիներ յետոյ պէտք եղաւ փոխադրել Մայր Թերեզան ուրիշ պաշտօնի, քոյրերը չէին ուզեր բաժնուիլ անկէ:

Բացի իր բացառիկ քաղցրութենէն, խոնարհութենէն եւ սիրազեղ ու անսեթեւեթ վարմունքէն, ունէր նաեւ աշխոյժ սրամտութիւն՝ բարեխառնուած առողջ դատողութեամբ, որոնցմով ի վերջոյ կը սիրաշահէր ամէնքի սէրը եւ յարգանքը, ուր որ ալ երթար, որքան ալ կարծր կարծուէին իր հակառակորդները, որոնք անպակաս եղան ամբողջ իր կեանքի ընթացքին: Իր պարզութիւնը, ճշմարտասիրութիւնը, անկեղծութիւնը եւ սրբութիւնը կը ճառագայթէին իր լուսաւոր դէմքէն:

Տօնելի սուրբերու կարգ անցաւ մահէն 40 տարիներ յետոյ 1622ին: Իբրեւ մեծագոյն մեկնաբաններէն մէկը աղօթքի եւ հոգեւոր բարձրագոյն կեանքի եւ իբրեւ նոր ճամբաներ բացող մը այդ կեանքի գիտութեան եւ կիրարկումին մէջ՝ կին ըլլալով հանդերձ՝ բարձրացաւ «վարդապետ Եկեղեցւոյ» նախանձելի դիրքին Պօղոս Զ. Պապին կողմէ 1970ին:

Մահը թէեւ պատահեցաւ Հոկտ. 4ի գիշերը, բայց որովհետեւ օրուան պապը՝ Գրիգոր ԺԳ, որոշած ըլլալով բարեկարգել Տոմարը, տնօրինած էր, որ Հոկտ. 4ին յաջորդէր Հոկտ. 15, ուստի իր տօնն ալ 15ին կը կատարուի Կաթողիկ Եկեղեցիի մէջ:

Իսկ միւսը կը կոչուի ԼԻԶԻԷՕՅԻ ԹԵՐԵԶԱ՝ ծնած Ֆրանսա, նոր ման բարեպաշտ ծնողքէ, 1873ին՝ իբրեւ վերջինը 5 աղջիկներու: Հայրը բարեկեցիկ գոհարարվածաւ մըն էր, որուն սակայն ամէնէն թանկագին գոհարն էր իր կրտսեր աղջիկը, որուն կապուած էր մասնաւոր

սէրով մը եւ գոր մշտնջենապէս ընծայեց Աստուծոյ եւ իր Եկեղեցիին: 4 տարեկանին կորսնցուց մայրը: Իր մանկութենէն իսկ լեցուած էր բարեպաշտ ու հոգեւոր հակումներով՝ օժտուած ըլլալով միաժամանակ հեշտակային գեղեցկութեամբ եւ ճառագայթող անմեղութեամբ: Ինք ալ իր մեծ անուանակցին ու մտատիպարին պէս պիտի գրէր իր անսեթեւեթ ինքնակենսագրութիւնը, որուն մէջ պիտի ըսէր. «Երեք տարեկանէս ի վեր ոչինչ մերժած եմ Աստուծոյ»:

Հայրը ստիպուեցաւ փոխադրուիլ ԼԻԶԻԷՕ, որպէսզի ի մօրէ որբացած իր փոքրիկ աղջիկը կարենար վայելիլ հոգածութիւնը իր մօրաքրոջ, որ ունէր երկու անչափահաս աղջիկներ, որոնց հետ եղբայրացաւ Թերեզա եւ որոնք եւս ետքէն իրեն պէս կուսանոց մտան: Իր կրօնական դաստիարակութիւնը ստացաւ իր Բոլին քրոջմէ: Տոյց տուաւ կանխահաս ուշիմութիւն եւ ութ տարեկանին սկսաւ յաճախել Բենեդիկտեան քոյրերու վարժարանը: 9 տարեկանին երբ իր Բոլին քոյրիկը Կարմեղեան կուսանոց մտաւ, ինք ալ համարձակութիւնը ունեցաւ խնդրելու մայրապետէն, որ զինք ալ ընդունի. «Ապասէ, մինչեւ աղուտը մը մեծնաս», եղաւ յուսադրական պատասխանը: Ատեն մը յետոյ լրջօրէն հիւանդացաւ՝ տարուբերուելով կեանքի ու մահուան միջեւ: Իր ընտանիքը եւ կոյսերը կ'աղօթէին իր տան մէջ, ուր կար Աստուածամօր արձան մը: Անդրադառնալով այս դէպքին՝ Թերեզա պիտի գրէր իր ինքնակենսագրութեան մէջ. «Յանկարծ արձանը կենդանացաւ՝ վերածուելով գեղեցիկ եւ սիրազեղ Աստուածամօր մը, որուն դէմքը կը ճառագայթէր քաղցրութեամբ: Յանկարծ ցաւերս անյայտացան: Ս. Կոյսը յառաջացաւ դէպի ինծի եւ ժպտեցաւ... լեցուած էի անպատմելի երջանկութեամբ... Ոչ ոքին ոչինչ պատմեցի տեսիլքի մասին՝ վախնալով, որ կը կորսնցնեմ զգացած երջանկութիւնս...»:

1886ին երիցագոյն քոյրիկն ալ վանք մտաւ, ինչ որ վերարժարածեց կուսանոց մտնելու իր փափաքը: Իր միտքը պարզեց բարի հայրիկին, որ արգելք չեղաւ՝ գիտնալով հանդերձ, թէ մեծ զրկանք պիտի ըլլար իրեն համար ամենասիրելի աղջիկէն բաժնուիլը: Սակայն իր դիմումները տեղւոյն մայրապետին ու եպիսկոպոսին ապարդիւն անցան, որովհետեւ կանոնական օրէնքը կ'արգելէր 16 տարեկանէն առաջ կուսանոց մտնելը, իսկ Թերեզան հազիւ 13-14 տարեկան էր այն ատեն: Յաջորդ տարին Ֆրանսայէն մեծ ուխտաւորութիւն մը կ'երթար

Հռոմ: Հայր ու աղջիկ միացան խումբին: Վատիկանի մէջ, ուխտաւորութեան շնորհուած ունկնդրութեան ընթացքին, պարմանուհի Թերեզա համարձակութիւնը ունեցաւ ճեղքելու բազմութիւնը, բարձրատիճան եկեղեցականներու շարքը եւ պապական պահակները եւ ծունկի դալու պապին առջեւ՝ խնդրելով, որ արտօնէ իրեն վանք մտնելու այդ տարիքին: Պապը թէեւ ժպիտով մը տուաւ իր օրհնութիւնը իր առջեւ ծունկի եկած անմեղ աղջկան, բայց յուսադրեց միայն, թէ ի պատեհ ժամուն իր խնդրանքը պիտի կատարուէր: Թերեզա շարունակեց յուսալ եւ աղօթել:

Աստուծոյ նախախնամութիւնը ի վերջոյ շնորհեց իր թախանձանքը, զոր մարդիկ անկարելի կը նկատէին: Ի վերջոյ կարելի եղաւ ապահովել տեղւոյն եպիսկոպոսի մասնաւոր արտօնութիւնը, եւ Թերեզա Լիզիէօյի Կարմեղեան վանքը մտաւ իրրեւ նորընծայ՝ 14 տարեկանին: Արագ յառաջդիմեց. կուսական տարագ հազաւ 16 տարեկանին, իսկ յաջորդ տարին իր ուխտը կատարեց իբրեւ «Քոյր Թերեզա Մանուկ Յիսուսի»: Կուսանաց այս վանքը, ուր մտած էր, իր մեծ անուանակցին ու մտատիպարին հաստատած խստակենցաղ Կարմեղեան միաբանութեան վանք մըն էր: Իր առաջին մաղթանքը եղաւ «Թող Յիսուս շնորհէ ինձի սրտի կամ մարմնի մարտիրոսութիւն, կամ երկուքն ալ»: Այնքան արագ յառաջդիմեց իր կարգի խիստ կանոններու դործադրութեան մէջ, որ ապագային պիտի գրէր իր կենսագրութեան մէջ. «Հասած էի այնպիսի վիճակի մը, ուր այլեւ չէի կրնար տառապիլ. որովհետեւ ամէն տեսակ տառապանք՝ ճգնողական խստութիւն եւ մարմնի մեռուցում, ինձի հաճոյք կը պատճառէին»:

Քսաներկու տարեկանին արդէն նորընծաներու ուսուցիչ եւ հսկիչ նշանակուած էր, երբ աղօթեց. «Տէ՛ր, ես դեռ շատ փոքր եմ սնուցանելու Քու զաւակներդ. եթէ կ'ուզես, որ անոնցմէ իւրաքանչիւրին տրուի անհրաժեշտը, պէտք է նախ Դուն ինձի տաս»: Հակառակ բնականէն իր տկար կազմին՝ կը պահէր իրենց կանոնին տրամադրած բոլոր պահեքերը եւ սահմանած խստութիւնները: 1896ին մէջտեղ եկան ախտանշանները իր անողորմ հիւանդութեան, որ պիտի խլէր իր կեանքը: Թերեզա բռնուած էր թոքախտէ, որ այն օրերուն անբուժելի կը նկատուէր այսօրուան քաղցկեղին պէս: Հիւանդութեան ախտանշանները ոչ միայն չէին մտահոգելու զինքը, այլ աւելի կ'ուրախացնէին՝

խորհելով, որ աւելի կը մօտենար իր յաւիտենական երջանկութեան: Իր իրական տառապանքները եւ անձկութիւնները եղան այն միւս փորձերը եւ փորձութիւնները, որոնց յաճախ կ'արտօնէ Աստուած, որ պարբերաբար ենթարկուին իր ընտրելագոյն զաւակները: Ասոնցմէ էին, օրինակ, հաւատքի մասին տարակոյսները, որոնք բրբեմն կը սողոսկէին իր մտքին մէջ, խորունկ թախիծը, որով երբեմն կը համակուէր իր հոգին, ու մանաւանդ չորութիւնը, որուն տիրակալութեան ներքեւ կ'իյնար յաճախ աղօթելու ատեն: Ասոնք իր Գեթսեմանին ներքեւ սիրով տոկաց ու համբերեց զզազուն մարմինով այս քոյեղան, որոնց սիրով տոկաց ու համարտած էր 25րդ տարիքը, մտաւ իր յաւիրը: 1897ին, երբ դեռ աւարտած էր 25րդ տարիքը, մտաւ իր յաւիր տենական հանգիստը եւ երանութիւնը: Իր վերջին խօսքերը եղան պարզ՝ իրեն պէս. «Աստուած իմ, կը սիրեմ Քեզ»:

Ինչպէս ակնարկեցինք, հնազանդելով իր մեծաւորներու թելագրանքին՝ իր մահէն ամիսներ առաջ սկսած էր գրել իր կենսագրութիւնը, զոր իր աւարտին բերաւ մահէն քանի մը օրեր առաջ, եւ որ մահէն յետոյ հրատարակուեցաւ «Հոգիի մը պատմութիւնը» անուան տակ («Իսթուար տ'իւն ամ»): Այս գրքոյկը զգայացունց ընդունեց լութիւն գտաւ Հանրութենէն. ունեցաւ բազմաթիւ տպագրութիւններ ու թարգմանուեցաւ գրեթէ բոլոր ծանօթ լեզուներուն: Ոմանք արժանի տեսան զայն քովիկը դրուելու իր մեծ անուանակիցին՝ Ավիլայի Թերեզային ու մեծ մատենագիր Ս. Օգոստինոսի Համանման ինքնակենսագրութեանց: Երիցական եկեղեցական մը ըսած է այս մասին. «Բացի գրքոյկը պատահաբար Հոս ու Հոն եւ անմիջապէս զբաւուեցայ արտայայտուած մտածումներու գեղեցկութենէն ու թարմութենէն: Չեղբերու մէջ ինչպէս էր Հանճարեղ մէկի մը՝ մեծ աստուածաբանի մը ու առաջին կարգի բանաստեղծի մը գիրքը»:

Այս գրքոյկի տարածումով, գրեթէ իր մահէն անմիջապէս յետոյ, Համատարած Համակրանքի, յարգանքի եւ սիրոյ բացառիկ հետաքրքրութիւն մը արթնացաւ Հանդէպ այս «Փոքր Ծաղիկին», ինչպէս փաղաքականորէն կը կոչուէր ան ժողովրդային խաւերուն մէջ: Տասնեակ մը տարիներ յետոյ այս խանդը հսկայ Համամատութիւններու հասած էր: Առաջին մեծ պատերազմի ընթացքին, հազարաւոր կաթոհասած էր: Առաջին մեծ պատերազմի ընթացքին, հազարաւոր կաթոլիկ զինուորներ՝ ոչ միայն Ֆրանսացի, Անգլիացի ու Ամերիկացի, այլ լիկ զինուորներ՝ ոչ միայն Ֆրանսացի, Անգլիացի ու Ամերիկացի, այլ ամէն ազգերէ, կը դիմէին պաշտպանութեան իրենց «երկնային Փոք»

դիմաց կը հարցնէր. «Աստուծո՞ւ է, թէ մեզմէ՞». ըստ ստացած պատասխանին կը դիրքաւորէր ինքզինքը եւ դարման կը փնտռէր ու կը տնօրինէր պատշաճը:

Ի վերջոյ բարեսիրական ձեռնարկներուն մէջ իր ցոյց տուած անշեղ հաստատակամութիւնը եւ բացառիկ կարողութիւնը եւ մեծ իրագործումները յարգանք եւ համակրանք պարտադրեցին իր անձին նկատմամբ ամէն կողմ: Իր բարեսիրական գործը, որ սկսուած էր Իտալացի ներգաղթողներու մէջ, տարածուեցաւ ամէնքի վրայ, առանց ոեւէ խտրութեան, ներառեալ Սինկ-Սինկի վատահամբաւ բանտարկեալները: Ի վերջոյ եղաւ Ամերիկեան քաղաքացի եւ մեռաւ 1917ին Շիգակոյի մէջ: Եղաւ առաջին Ամերիկացին, որ տօնելի սուրբերուն կարգը անցաւ 1946ին՝ Կաթոլիկ Եկեղեցիի կողմէ: Իսկ Պիոս ԺԲ. Պապը 1950ին յայտարարեց զայն իբրեւ պաշտպան սուրբը Ամերիկա ներգաղթողներու, որոնց նիւթական ու բարոյական բարեկեցութեան համար այնքան նուիրեալ աշխատանք կատարած էր այս գեղջուկ ծագումով ու հաւատքով մեծ կիներ: Կը տօնուի Կաթոլիկ Եկեղեցիի մէջ Նոյ. 13ին:

25. ՍԱՏՈՒ ՍՈՒՆՏԱՐ ՍԻՆԿՂ (1889-1929)

Քրիստոնէական կրօնքի ճշմարտութեան համար վկայողներու եւ իրենց կեանքը ընծայաբերողներու այս շարքը իր վերջաւորութեան կը բերենք մեզի ժամանակակից սուրբով մը, որ կու գայ աշխարհի ամէնէն քիչ ակնկալուած մէկ մարզէն՝ Հեթանոս Հնդկաստանէն:

Սոււնտար գրեթէ ինքնաբոյս եւ գտարիւն Հնդիկ քրիստոնեայ մը եղաւ, որ սերտ նմանութիւններ ունեցաւ Պօղոս Առաքեալի հետ: Երկուքն ալ իրենց նախկին կրօնքին նախանձայոյց պաշտպանները եւ հետեւողներն էին, երկուքն ալ դարձի կու գան Քրիստոսի ուղղակի միջամտութեամբ, երկուքն ալ իրենց դարձին յետոյ հաւատաւոր հետեւողները եւ անձնդիր քարոզողները կ'ըլլան իրենց նոր կրօնքին, երկուքն ալ աշխարհներ կը շրջին Աւետարանի քարոզութեան համար: Վերջապէս երկուքն ալ խորապէս կը թափանցեն Քրիստոնէական կրօնքի խորին խորհուրդներուն եւ կ'արտայայտեն զանոնք բանիւ, գործով եւ գիրով:

Սոււնտար ծնաւ 1889ին, Հիւսիս-արեւմտեան Հնդկաստանի Բուն-ճապ նահանգին մէջ, մեծահարուստ ընտանիքէ մը, որ կը պատկանէր հնդկական Սիխ ցեղախումբին, որոնց կրօնքը կարելի է ըսել թէ ազնուագոյնն էր Հնդկաստան բազմաթիւ կրօնքներու խառնիճաղանձին մէջ: ՍԻՆԿՂ բառը, որ առիւծ կը նշանակէ, մականունն է իր գերդաստանին, որ մինչեւ օրս կը շարունակէ իր գոյութիւնը: Ենորհիւ իր շատ բարեպաշտ եւ կրօնասէր մօրը՝ Սոււնտար իր սեպհական կրօնքին մէջ լաւ դաստիարակուած ու լաւ կազմաւորուած պատանի մըն էր: 14 տարեկանին դժբախտութիւնը ունեցաւ կորսնցնելու իր մայրը, որ մահուան անկողինին մէջ ըսաւ իրեն. «Սոււնտար, եղբայրներուդ պէս հաճոյասէր եւ անհոգ մի՛ ըլլար, այլ փնտէր ՀՈԳԻԻ ԽԱՂԱՂՈՒԹԻԻՆԵԸ եւ սիրտի բարութիւնը: Պէտք է որ ուշ կամ կանուխ ՍԱՏՈՒ մը ըլլաս»: Այս խօսքերը պատգամի պէս գամուած մնացին իր միտքին մէջ: ՍԱՏՈՒ կը նշանակէ ամբողջութեամբ Աստուծոյ նուիրուած սուրբ մարդ:

Սոււնտար «Հոգիի խաղաղութիւնը» գտնելու համար սկսաւ ուսումնասիրել հնդկական նուիրական գիրքերը եւ մինչեւ իսկ Ծաքիրիզմի հետեւեցաւ: Խօսքը իրեն տանք այս մասին:

«Փորձեցի խաղաղութեան տիրանալ բոլոր միջոցներով, զորս Հնդկական կրօնքները՝ Հինդուիզմը, Պուտտայականութիւնը եւ Մահ-մետականութիւնը, կը թելադրէին: Հոգեկան ազատութիւն գտնելու համար շարունակ եւ լրջօրէն ուսումնասիրեցի մեր նուիրական գիրքերը. խաղաղութիւն ունենալու համար բարի գործեր ըրի. վերջապէս ըրի ամէն ինչ, որ կը խորհէի թէ կրնար ինձի տալ խաղաղութիւնը. ի վերջոյ համոզում գոյացուցի, որ իմ մէջէս չէի կրնար ստեղծել զայն»:

Միսիոնարական դպրոցին մէջ, ուր կը կարդար, Նոր կտակարան մը տրուեցաւ իրեն. հպարտ շարժումով մը մերժեց զայն. «Մենք Սիխ ենք. մեր նուիրական գիրքերն ունինք. այդ գիրքը կրնայ լաւ բաներ պարունակել իր մէջ, բայց մեր նուիրական գիրքէն աւելի բարձր չի կրնար ըլլալ»:

Քրիստոնէութեան դէմ իր ունեցած հակառակութիւնը արտայայտելու համար օր մը Նոր կտակարան մը պատուեց եւ գետին նետեց իր դասընկերներուն առջեւ: Սակայն ետքէն ողջմտութիւնը իրեն թելա-

դրեց նախ կարգաւ, յետոյ մերժել: Ընթերցումի ընթացքին զեփուփ զովութիւն մը բերաւ իրեն Բրիտանոսի աս խօսքը. «Ինձի՛ եկէք, ո՛վ բոլոր յոգնածներ եւ ծանրաբեռնուածներ, ծառայեալս հանգստացնեմ...» (Մտթ. ԺԱ. 28-29): Յիսուսի անձը եւ ուսուցումը թէեւ զինք գրաւեց, բայց տարակոյսները շարունակ կը խուժէին իր ուղեղը. «Բրիտանոս եթէ չկրցաւ ազատել ինքզինքը խաչէն, ուրիշները ինչպէ՞ս կրնար փրկել»: Այդ խաղաղութիւնը բերել խոստացող, բայց իր ներաշխարհը ակելի խոռովող գիրքը՝ Նոր Կտակարանը, կրկին պատուեց ու այս անգամ կրակը նետեց: Հայրը յանդիմանեց. «Տղա՛ս, ինչո՞ւ այս յիմարութիւնը կը գործես. այդ գիրքն ալ գէշ գիրք մը ըլլալու չէ»: Սուստար մեծամտութեամբ պատասխանեց. «Արեւմուտքի կրօնքը սխալ է, հայրի՛կ, պէտք է ոչնչացնել զայն»:

Տեսնելով, որ փնտուած հոգեկան խաղաղութիւնը չի կրնար գտնել՝ որոշեց անձնասպան ըլլալ: 1904ին Դեկտ. 18ի գիշերը ժամը 3ին արթնացաւ: Ըստ իրենց կրօնական սովորութեան՝ պաղ ջրով լողանք մը առաւ ու աղօթքի կայնեցաւ. «Ո՛վ Աստուած, եթէ իսկապէս կաս, ցո՛յց տուր ինձի ուղիղ ճամբան, որ գտնեմ ներքին խաղաղութիւնս. այլապէս պէտք է ինքզինքս սպաննեմ»: Սպասեց պատասխանի. չստացաւ: Իջաւ վար՝ ինքզինքը նետելու համար իրենց տունին մօտէն անցնող շողեկառքի ներքեւ, որ պիտի հասնէր առտուան ժամը 5ին: Երբ շողեկառքը երեւցաւ հեռուէն, Սուստարի մէջ փափաք արթնցաւ վերջին անգամ իրենց տունին նայելու: Զարմանքով նշմարեց, որ իր սենեակը լուսաւորուած էր. կարծեց, որ հրդեհ մը ծագած էր իրենց տան մէջ: Գրեթէ բնազդաբար վազեց տուն՝ լուր տալու տնեցիներին, որ զոհ չեղածն էր: Բարձրացաւ սենեակը, որ արդարեւ լոյսերու մէջ ողողուած էր, բայց հրդեհ չկար, եւ յայտնի չէր այս լոյսին աղբիւրը: Յանկարծ այդ լոյսին մէջ տակաւ առ տակաւ նկատուեցաւ ակելի լուսաւոր եւ սիրազեղ դէմք մը, որ հնդկերէն լեզուով կ'ըսէր. «Մինչեւ ե՞րբ պիտի հալածես զիս. ծառայեալս համար մեռայ, իմ կեանքս քեզի համար զոհեցիք»: ու նշմարեց Յիսուս նազովրեցիի վէրքերուն տեղերը: Ինք, որ կը կարծէր, թէ Յիսուս երկու հազար տարի առաջ մեռած մարդ մըն էր, եւ կ'ատէր զԱյն, ահա այդ պահուն իր դէմը կեցած էր, առանց բարկութեան նշոյլի՝ զինքը ատած եւ իր Գիրքը այրած ըլլալուն համար. ընդհակառակը՝ Անոր մեղմ աչքերէն սէր ու քաղցրու-

թիւն միայն կը հոսէին: Մունկի եկաւ ու երկրպագութիւն ըրաւ այն իրողութիւնը, թէ Բրիտանոս կենդանի էր, կ'ապրէր եւ իրեն հետ կը խօսէր՝ իր փնտուածը գտած ըլլալու երջանկութեամբ կը լեցնէր իր սիրտը: Երբ գլուխը վեր առաւ, տեսիլքը անհետացած էր, բայց մնացած էր Յիսուսի ներկայութեան բերած խաղաղութիւնը. իր իսկ բառերով՝ «Երկինքը փոխադրուած էր սիրտիս մէջ»: Ու այս խաղաղութիւնը երբեք չլքեց Սուստարը ամբողջ իր կեանքի ընթացքին, հոգ չէ թէ ինչ ահաւոր հալածանքներու եւ կացութեանց մատնուած ըլլար ան:

Հետեւեալն է Սուստարի վկայութիւնը այս դէպքի մասին:

«Տեսածս ՅՆՈՐԲ չէր. նախ որովհետեւ Բրիտանոսը կ'ատէի. Պուտտայի մասին կրնայի թերեւս ցնորքի մը ենթակայ ըլլալ, որովհետեւ զայն կը սիրէի: Տեսածս ԵՐԱԶ ալ չէր. վասնզի պաղ լողանքէ մը յետոյ մարդ չի կրնար երազել: Տեսածս ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ էր... Ինչ որ ուրիշ կրօնքներ չկրցան տալ՝ Հակառակ անոնց մէջ իմ կատարած պրպտումներու եւ անոնց օրէնքներուն հետեւելու, Բրիտանոս քանի մը վայրկեանի մէջ ու գրեթէ Հակառակ իմ կամքիս տուաւ ինձի: Ան իմ սիրտս անվերջ խաղաղութեամբ լեցուց: Հիմնուելով ինձի մեղքէ հեռու մնալու եւ Աստուծոյ կամքը կատարելու: Հպարտ էի իմ կրօնքովս եւ հնդկական փիլիսոփայութեամբ: Բայց այդ կրօնքը եւ փիլիսոփայութիւնը չկրցան մեղքերս քաւել եւ ինձի խաղաղութիւն պարգեւել: Յուսահատ խնդրեցի Աստուծմէ, որպէսզի շնորհէր ինձի փրկութեան ճամբան: Ու այդ աղօթքիս պատասխանը այն եղաւ, որ եՍ ՓՐԿԻՉՍ ՏԵՍԱՅ, ԱՆՈՐ ՓԱՌԲԸ ՏԵՍԱՅ եւ գիտցայ, թէ Ան յաւիտենապէս ապրող Բրիտանոսն է»:

Սուստարի դարձէն յետոյ իր ընտանիքի անդամները աղաչանքներ, խոստումներ եւ սպառնալիքներ ըրին, որ այս «անպատուութիւնը» չբերէ իրենց գերդաստանին վրայ: Սուստար անդողուելի մնաց: Ի վերջոյ տունէն վտարման որոշում տրուեցաւ՝ յանգէտս իրեն կերակուրին մէջ թոյն խառնելէ յետոյ: Իր քայլերը ուղղեց մօտակայ գիւղ մը, ուր իրեն ծանօթ Հնդկի քրիստոնեաներ կային: Հազիւ քանի մը խօսք ըրած էր իր դարձի մասին, երբ յանկարծ գետինը տապալեցաւ: Կանչուած բժիշկը հաստատեց ՄԱՀԱՑՈՒ կերպով թունաւորուած ըլլալը: Բրիտանոսայ բարի ընտանիքը ամբողջ գիշերը հսկեց ու

աղօթեց մահուան ու կեանքի միջև տարուբերուող Սուևտարի սնարին վերև: Յաջորդ օրը մեծ եղաւ բժիշկին զարմանքը, երբ տեսաւ, որ պատանին թէև ուժասպառ՝ բայց վտանգը անցուցած էր:

Յաջորդ տարին, 1905 Սեպտ. 3ին, կրօնափոխ ըլլալու պաշտօնական տարիքին թեւակոխած ըլլալով՝ Սուևտար քրիստոնեայ մկրտուեցաւ: Իր ունեցած սակաւ ինչքերը չունեցողներուն տուաւ հազաւ Սատուի դեղնորակ զգեստը եւ ձեռնարկեց քարոզութեան: Հնդկական Սատուի տարազ հագնելով՝ Սուևտար ըսել կ'ուզէր, որ ոչ մէկ քրիստոնեայ յարանուանութեան կը պատկանէր, եւ թէ՛ իր նպատակն է Բրիստոնէութիւնը ներկայացնել իր ժողովուրդի հասկնալի եւ ընդունելի ձևով, թէ՛ իրական Բրիստոնէութիւնը, անկախաբար յարանուանութեանց ներկայացուցած ձեւէն, օտար չէ հնդիկ մտածողութեան եւ հաւատքին:

Աս թուականէն սկսեալ՝ Սուևտարի կեանքը ամբողջ գրքի մը նիւթ է*: Երջեցաւ Հնդկաստանի ամէն կողմերը՝ սառուցեալ Հիմալայներէն մինչեւ կիզիչ Սէյլան, Պենկալի դաշտերէն մինչեւ Պելուճրիստանի (այսօր՝ Բաքիստան) սարահարթները, մտաւ Աֆղանիստան, Թիպէթ եւ Նեփալ, ուր տեղեր գրեթէ արգելուած էր օտարներու մուտքը: Կրեց գրեթէ այն նոյն չարչարանքները, որոնց ենթարկուեցաւ Պօղոս Առաքեալ իր ճամբորդութիւններու ընթացքին՝ «վիշտեր գետերէ, վիշտեր աւազակներէ, վիշտեր իր ազգէն, վիշտեր հեթանոսներէ (իր պարագային՝ մահմետականներէ եւ թիպէթցիներէ), վիշտեր քաղաքներու մէջ, վիշտեր անմարդաբնակ վայրերու մէջ, վիշտեր ծովերու վրայ, վիշտեր սուտ եղբայրներէ (հաւատակից քրիստոնեաներէ), յոգնութիւններ, տքնութիւններ, անօթի, ծարաւ, մերկ, ցուրտին ենթակայ, թող ուրիշ նեղութիւնները» (Բ. Կորնթ. ԺԱ 26-28):

Սատուի շրջիկ կեանքի դրուագները շատ են՝ հրաշալի դէպքերով եւ անտանելի չարչարանքներով լեցուն: Ներկայացնենք մէկ հատը միայն, ուր չարչարանքը եւ հրաշալին միախառնուած են:

* Արդարեւ գրուած է այդ գիրքը ման Բայերէն լեզուով. «ՍԱՏՈՒ ՍՈՒՆՏԱՐ ՍՈՒՆԿԸ - իր կեանքն ու վկայութիւնը». 160 էջոց. Մարտէլի Հայ Աւետ. Եկեղեցոյ Հովի Թ.Ն. Ղազարոսեանի կողմէ եւ տպուած 1927ին ի Մարտէլ: Այս գիրքէն եւ Օքսֆորտեան բարսարանէն օգտուած ենք այս գլուխի պատրաստութեան ընթացքին:

Սուևտար 1908 թուին առաջին անգամ մտաւ անհիւրընկալ Թիպէթ. ատեն մը քարոզելէ յետոյ ձերբակալուեցաւ երկու յանցանքներով. անհրաման երկիր մտած էր եւ օտար վարդապետութիւն մը կը քարոզէր. երկուքն ալ պատժելի էին մահով: Նետեցին զայն խոր վերապ մը, ճիշդ մեր Լուսաւորիչին պէս: Ինկած ատեն թեւն ալ կտորած էր: Ներսը լեցուն էր իրմէ առաջ մահացածներու նեխած ոսկորներով: Երբ արդէն կափարիչը ծանրօրէն գոցուեցաւ տիբեց անթափանց խաւար: Սուևտար սկսաւ աղօթել եւ ինքզինքը պատրաստել մահուան: Գրեթէ երեք օր մնաց այս նեխած միջավայրին մէջ անօթի, ծարաւ եւ թեւին ցաւէն տառապելով. տառապէս իրականացած էր իր վրայ սաղթի սպաննէն տառապելով. «Զիս ամէնէն խորունկ գուբին մէջ նետեցին, եւ խամոսին խօսքը. «Զիս ամէնէն խորունկ գուբին մէջ ինկայ». (Սղմ. 9Ը. 6): Իր շրթներուն արային անդունդներուն մէջ ինկայ». (Սղմ. 9Ը. 6): Իր շրթներուն եկան ինքնաբերաբար Բրիստոսի խօսքերը. «Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ գիս լքեցիր»: Բրիստոսի խաղաղութիւնը այդ պահուն անելի ջերմօրէն պարուրեց իր հոգին: Ատեն մը յետոյ յանկարծ կափարիչը բացուեցաւ վերէն, Աստուծոյ արեւին աղօտ ցոլքերուն հետ յոյսի շողն ալ կաթեց վար: Չուան մը երկարեցաւ վերէն. մարդկային յորատը ձայն մը ըսաւ. «Սուևտար, բռնէ՛ չուանը»: Սատուն իր մնաջօրաւոր ձայն մը ըսաւ. «Սուևտար, բռնէ՛ չուանը»: Սատուն իր մնաջօրաւոր ձայն մը ըսաւ. «Սուևտար, բռնէ՛ չուանը», որ սկսաւ յուշիկ յուշիկ վերցած ոյժերը հաւաքեց ու բռնեց չուանը, որ սկսաւ յուշիկ յուշիկ վերքաշուիլ: Հագիւ ելած՝ երբ զբաղուած էր թարմ օդ շնչելով՝ քիչ մը կազդուրուելու համար, զգաց, որ կափարիչը կը գոցուէր ինքնաբերաբար, եւ ձեռք մը իր կտորած թեւին կը դպէր: Ետեւ դարձաւ, որ շնորհակալ ըլլայ իր ազատիչին, ոչ ոք տեսաւ: Չգաց, որ թեւն ալ լաւացած էր: Մօտակայ գիւղը երթալով՝ քանի մը օրէն կազդուրուեցաւ եւ վերստին սկսաւ քարոզութեան: Ամբողջ գիւղը, որ ակնաստես եղած էր իր վիրապ նետուելուն, տակնուվրայ եղաւ, թէ ով կրնար ազատած ըլլալ զայն: Կրկին հանեցին ներկայութեան լամային, որ կատաղութենէ վրկերեցաւ, թէ ո'վ համարձակած էր վերցնել վիրապին խոշոր բանալին, որ կը պահուէր իր մօտ: Ստուգուեցաւ, որ բանալին իր տեղն էր՝ կնիքի տակ: Լամայի բարկութիւնը սարսափի փոխուեցաւ, ու քաղաքավարօրէն խնդրեց, որ հեռանայ իր սահմաններէն նախքան իր քարոզած Աստուծոյն պատժին արժանանալը զինք մահուան մատնած ըլլալուն համար:

Սունտարին ամէնէն երջանիկ պահերէն մէկը եղաւ 1919ին օր մը, երբ հայրը իրեն ներկայացաւ ըսելու, որ ինք ալ քրիստոնեայ դարձած էր. ողջագործուեցան իրարու հետ ոչ միայն իբրեւ հայր ու որդի, այլ նաեւ եղբայրներ ի Բրիստոս:

Սատու մեծ փափաք ունէր Երուսաղէմ եւ Եւրոպա այցելելու կը խորհէր, որ Աստուծոյ թագաւորութիւնը կը տիրապետէր այն տեղեր: 1920 Փետրուարին ոտք դրաւ Անգլիա: Քարոզեց շատ քաղաքներ լման երեք ամիսներ: Մայիսին անցաւ Ամերիկա, այնտեղէն՝ Ափրիկէ եւ Աւստրալիոյ վրայով վերադարձաւ իր երկիրը եւ անմիջապէս կրկին Թիպէթ անցաւ աւետարանելու...:

1922ին այցելեց Պաղեստին, անկէ անցաւ Ֆրանսա, Զուիցերիա, Գերմանիա, Հոլանտա եւ Սքանտինաւեան երկիրներ, որոնց քրիստոնեայ հաւաքականութիւններէն հրաւերներ ստացած էր: Սունտար Սինկհի ազգեցուցիւնը երբեմն սարսող եղած է Եւրոպացիներու վրայ: Այս մասին շատ են վկայութիւնները եւ դէպքերը: Սքեփթիք Անգլիոյ մէջ, օրինակ, իր քարոզներէն մէկին վերջաւորութեան բոլոր ներկաները գրեթէ ինքնաբերաբար ծունկի եկած՝ կ'աղօթէին...: Կը գրէ Անգլիացի մը. «Իր ներքին կեանքը արտայայտուած է իր դէմքին վրայ, որ միշտ երկնային լոյսով ու խաղաղութեամբ պարուրուած է. սուրբ մըն է ան»: Սակայն ինք Սատուն վերջին ծայր յուսախաբ եղած էր Եւրոպացիներէն. «Հեթանոսները հեթանոս են, որովհետեւ կուռք կը պաշտեն. սակայն Արեւմուտքի մէջ աւելի գէշ հեթանոսութիւն մը տեսայ. մարդիկ այստեղ իրենց անձը կը պաշտեն», ըսաւ առիթով մը: Իսկ ուրիշ առթիւ հետեւեալ առակը պատմեց. «Նստած էի Հիմալայի վճիտ գետերէն մէկին եզերքը. կլոր գեղեցիկ քար մը ուշադրութիւնս գրաւեց գետին մէջէն. վերցուցի եւ կոտորեցի զայն. մէջը չոր էր: Այդ քարը թերեւս դարերով մնացած եւ ողորկուած էր այդ գետին մէջ, սակայն ջուրը ներս չէր թափանցած: Այնպէս տեսայ նաեւ Արեւմուտքի ժողովուրդները: Ու ասիկա արդիւնք է Բրիստոնէութեան տկարութեան, այլ՝ սիրտերու կարծրութեան: Նիւթապաշտութիւնը, գիտական կոչուած մտաւորականութիւնը եւ անձնասիրութիւնը կարծրացուցած են սիրտերը: Հետեւաբար չեմ զարմանար, երբ այս երկրի մարդիկ չեն հասկնար Բրիստոսի ով ըլլալը»:

Հակառակ որ Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ Սատու մեծ պատիւներու արժանացաւ, սակայն իր քարոզները աւելի ու աւելի մարգարէական շեշտ ստացան՝ հրաւիրելով ամէնքը անկեղծ ապաշխարանքի: Նա յաճախ սուր բառերով խարազանեց Արեւմուտքի քրիստոնէից կրօնական անտարբերութիւնը, դրամասիրութիւնը եւ հաճոյապաշտութիւնը:

«Ես կը խորհէի, թէ քրիստոնեայ կոչուած երկիրներու բնակիչները Աստուածաշունչ կը կարդան եւ հրեշտակներու նման մարդիկ են. բայց երբ այս երկիրները այցելեցի, իմ սխալած ըլլալս հասկեցայ: Ասոնք թէեւ ճերմակ դէմքեր ունին, սակայն անոնցմէ շատերուն սիրտերը սեւցած են: Հեթանոս երկիրներու մէջ գոնէ մարդիկ իրենց մեհանները կը յաճախեն. այստեղ սակայն տեսայ, որ մարդիկ հաճոյքի վայրեր միայն կը փնտռեն:

Արեւմուտքի մարդիկ քրիստոնէութեան պատճառով իրենց ընդունած օրհնութիւնները հետզհետէ կը կորսնցնեն, վասնզի իրենց յոյսը դրած են տեսանելի բաներու վրայ՝ Հանգստասիրութեան, դրամի, փառքի եւ աշխարհային վայելքներու վրայ: Դատաստանին օրը ոչ քրիստոնեաներ պակաս սաստկութեամբ պատիժ պիտի կրեն. քանզի Բրիստոսի մասին լսելու առիթ չեն ունեցած. իսկ քրիստոնեայ երկիրներու բնակիչները սաստիկ պատիժներու պիտի ենթարկուին, վասնզի Աստուծոյ պատգամը լսեցին ու մերժեցին զայն...»:

«Ժամանակը մօտ է, երբ մեր Տէրը դարձեալ պիտի գայ իր հրեշտակներով եւ այն ատեն պիտի դառնայ քրիստոնեայ կոչուածներուն եւ պիտի ըսէ. «Ես ձեզ չեմ ճանչնար... դուք կը ճանչնայիք իմ անունս, գիտէիք ով ըլլալս, գիտէիք իմ կեանքս եւ գործս, բայց չուզեցիք զիս անձամբ ճանչնալ. Ես ալ ձեզ չեմ ճանչնար...»: Բրիստոս Դատաստանին օրը պիտի ըսէ. «Հեթանոս աշխարհէն մարդ մը զրկեցի ձեզի, ան իմ մասին վկայութիւն տուաւ իբրեւ կեն ԴԱՆԻ ԱՍՏՈՒՄՈՅ, որովհետեւ իմ զօրութիւնս եւ փառաւորութիւնս վայելած էր, բայց դուք դարձեալ չհաւատացիք»: Երբ Տէրը իր փառքովը գայ... ու տեսնենք երկինքի սուրբերը եւ հաւատքի վկաները Տիրոջ փառքին մէջ, այն ատեն որքա՞ն պիտի ամչնանք մենք, որ Անոր համար բան մը չըրինք: Դեռ ժամանակ կայ մեզի խորհելու եւ գոր-

ծելու: Հետեւաբար, սիրելի բարեկամներս, գէթ այսօր գացէ՛ք Անոր այգին աշխատելու, թէ իսկ ըլլայ մետասաներորդ ժամուն»:

Հուսկ ապա Սունտար թօթուեց իր ոտքի փոշին եւ հայրենիք վերադարձաւ՝ որոշած ըլլալով անգամ մըն ալ չվերադառնալ Արեւմուտք: Սունտար հասկցաւ, որ Արեւմուտքը դրամապաշտութեան մէջ ընկղմած է եւ այլեւ դուրս չի կրնար գալ անկէ: Մարդ երկու տիրոջ չի կրնար ծառայել նոյն հաւատարմութեամբ: Եւրոպան Մամոնային տուած էր նախապատուութիւնը:

Զուիցերոյ մէջ իր վերջին քարոզներէն մէկին մէջ ըսած էր.

«Այն գաղափարը, թէ օր մը Թիպէթի մէջ պիտի մարտիրոսանամ, ինծի երկիւղ չի պատճառեր, ընդհակառակը՝ ուրախութեամբ պիտի ողջունեմ այդ օրը: Ամէն տարի պիտի շարունակեմ հոն երթալ: Ու թերեւ օր մը լսէք, թէ Սատու եւ մարտիրոսացած է: Սակայն խորհեցէք, թէ Սատուն մեռած չէ, հապա երկինքը յափտեանս ապրելու գացած է: Անիկա Քրիստոսի քովն է, կատարելութեան կեանքին մէջ»:

Վերադարձէն յետոյ շարունակեց իր քարոզչական ճամբորդութիւնները Հնդկաստանի զանազան կողմերը: Գրած է երկու գիրքեր. «Տիրոջ ոտից ընդ առաջ» եւ «Խորհրդածութիւններ հոգեւոր կեանքի զանազան կէտերու մասին»:

1925 Սեպտ.ին երբ աւետարանչական ճամբորդութենէ մը կը վերադառնար, բռնուեցաւ աչքի ցաւատանջ հիւանդութենէ մը, երբ գրեթէ բոլորովին կորսնցուց մէկ աչքին տեսողութիւնը եւ ատեն մը ընդհատեց առաքելութիւնը: Այս մասին ի մէջ այլոց այսպէս գրեց բարեկամի մը. «Եթէ աչքիս լոյսը բոլորովին ալ կորսնցնեմ, դարձեալ պիտի չտրտմիմ. վասնզի Տէրը բացած է արդէն իմ հոգիիս աչքերը, որոնք բնաւ պիտի չմթազնին, ու ես փառք կու տամ Անոր այս շնորհքին եւ օրհնութեանց համար...»: Ապա բռնուեցաւ կուրծքի հիւանդութենէ եւ նոյն կամ յաջորդ տարին գրած նամակին մէջ իր «օրերը համրուած» կը նկատէր: Հակառակ այս բոլորին՝ շարունակեց իր տքնաջան գործը: Վերջին անգամ մարդիկ տեսած են զայն 1929 Ապրիլին: Անկէ յետոյ ոչ ոք լսած է անոր ողջ ըլլալու մասին: Մեռած կամ նահատակուած է յանձանօթս եւ մնացած է առանց գերեզմանի: Իր անունը սակայն անջնջելիօրէն գրուած է «ի դպրութիւն Կենաց Գառինն»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

| | |
|---|-----|
| Մուտք | 7 |
| Ներածութիւն - ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ..... | 15 |
| Գլուխ առաջին - ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ..... | 39 |
| Ա. ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐ ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ..... | 40 |
| Բ. ՔԱՀԱՆԱՅՔ..... | 95 |
| Գ. ՍԱՐԿԱՒԱԳՈՒՆՔ..... | 103 |
| Գլուխ երկրորդ - ՃԳՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ..... | 106 |
| ՃԳՆԱՒՈՐՆԵՐ | 118 |
| Գլուխ երրորդ - ՊԵՏԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ..... | 139 |
| Ա. ԹԱԳԱՒՈՐՆԵՐ..... | 139 |
| Բ. ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐ, ՊԱԼԱՏԱԿԱՆՆԵՐ ԵՒ ԱՅԼ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԱՏԱՐՆԵՐ..... | 145 |
| Գ. ԶՕՐԱՎԱՐՆԵՐ ԵՒ ԶՕՐԱԿԱՆՆԵՐ..... | 151 |
| Գլուխ չորրորդ - ԿՈՅՍԵՐ..... | 170 |
| Գլուխ հինգերորդ - ՄԱՐՏԻՐՈՍՆԵՐ..... | 191 |
| Գլուխ վեցերորդ - ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ..... | 215 |

ՅԱԻԵԼՈՒԱԾ

| | |
|---|-----|
| ՄԵԾԱՆՈՒՆ ՍՈՒՐԲԵՐ, ՈՐՈՆՔ ԶԵՆ ԱՆՑԱԾ ՄԵՐ ՏՕՆԱՑՈՑԻՆ..... | 225 |
|---|-----|

ԱՅԲՈՒԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ ՄԵՐ ՏՕՆԱՑՈՅԾԻՆ
ԱՆՑԱԾ ՍՈՒՐԲԵՐՈՒ

| | |
|--------------------------------------|-----|
| Աբղիմսեհ Վկայ..... | 210 |
| Աբիրաս Սարկաւագ | 103 |
| Աբիսողոմ Սարկաւագ..... | 103 |
| Ագապիոս | 151 |
| Ագապիս Կոյս..... | 174 |
| Ադոկտոս Դուքս..... | 149 |
| Ադրիանոս Վերակացու..... | 156 |
| Աթանագինէս Եպս. եւ 10 աշակերտք | 62 |
| Աթանաս Հայրապետ | 74 |
| Ալեքսիոս Կամաւոր Աղքատ | 208 |
| Ակակիոս Վկայ..... | 212 |
| Ակիլիէնէ Կոյս..... | 185 |
| Ակիւղաս Վկայ..... | 196 |
| Ակիփսիմոս Եպս. | 72 |
| Աղեքսանդրոս Հայրապետ | 68 |
| Այիթալա Սարկաւագ..... | 104 |
| Անաստաս Քաւանայ..... | 101 |
| Անատոլա Կոյս | 181 |
| Անդրէ Զօրավար..... | 154 |
| Անդրոնիկոս Վկայ..... | 198 |
| Անթիմոս Եպս..... | 58 |
| Անիկտոս..... | 150 |
| Աննա..... | 176 |
| Անտոն Ճգնաւոր | 118 |
| Անտոնինոս Վկայ..... | 192 |
| Ապիտոն (Փիլիպպոս Եպարք.)..... | 145 |
| Արեթեանք (Խարեթեանք)..... | 213 |

| | |
|--|-----|
| Արեւելեան Վկաներ..... | 191 |
| Արսէն Ճգնաւոր..... | 129 |
| Արտեմիս Դուքս..... | 166 |
| Բաբելաս Ծերունի եւ 84 աշակերտներ | 213 |
| Բաբելաս Հայրապետ Անտիոքի..... | 54 |
| Բագարատ Տօռոմենոյ Եպս..... | 43 |
| Բագոս Զօրական..... | 148 |
| Բասիլիդէս Վկայ..... | 168 |
| Բասիլիսկոս (Բասիլիոս) Քաւանայ..... | 101 |
| Բասոս Վկայ..... | 168 |
| Բարաղամ Վկայ..... | 192 |
| Բարուլա Մանուկ Խոստովանող | 198 |
| Բարսեղ Կեսարացի Հայրապետ..... | 76 |
| Բենիամին Սարկաւագ..... | 104 |
| Բուրաս Քաւանայ..... | 101 |
| Գենարիոս Եպս..... | 59 |
| Գէորգ Զօրավար..... | 155 |
| Գղերիկոս Երէց..... | 97 |
| Գորդիոս Հարիւրապետ..... | 160 |
| Գուրիաս Քաւանայ..... | 96 |
| Գրափոս կամ Եւգրափոս..... | 148 |
| Գրիգոր Նազիանզացի Աստուածաբան..... | 79 |
| Գրիգոր Նիւսացի..... | 78 |
| Գրիգոր Աքանչեւագործ..... | 56 |
| Դամիանոս Անարծաթ Բժիշկ..... | 201 |
| Դանիէլ Մենակեաց | 131 |
| Դեմետրիոս Ենթաշիւկատոս | 150 |
| Դիոմետէս (Դոմետիոս) | 202 |
| Դիոնեսիոս Արիսպագացի | 40 |

| | |
|----------------------------------|-----|
| Դոմնա Կոյս..... | 181 |
| Ելեւթիւրոս Վկայ..... | 193 |
| Ելպիս Կոյս..... | 174 |
| Եպիփան Կիպրացի..... | 85 |
| Երանոս Եպս. Լիոնի (Իրենիոս)..... | 51 |
| Երանոս Եպս. Սերմինայի..... | 58 |
| Երկու Բիւրք..... | 207 |
| Երմոգինէս..... | 148 |
| Երմողայոս Քաջանայ..... | 102 |
| Երմոնէ Կոյս..... | 171 |
| Եւագր Ճգնաւոր..... | 125 |
| Եւգէնիոս Վկայ..... | 199 |
| Եւգինէ Կոյս..... | 172 |
| Եւգինէոս Քաջանայ..... | 100 |
| Եւգինէոս..... | 196 |
| Եւդոքսիոս..... | 158 |
| Եւպրաքսէ Կոյս..... | 188 |
| Եւսեբ Վկայ..... | 168 |
| Եւստաքէոս..... | 151 |
| Եւստրատիոս..... | 199 |
| Եւտիք Վկայ..... | 168 |
| Եւփիմէ Կոյս..... | 180 |
| Եփրեմ Խոլրի..... | 72 |
| Եօթն Կուսանք..... | 179 |
| Եօթն Մանկունք Եփեսոսի..... | 204 |
| Զենոն Զինաւոր..... | 158 |
| Թալելէոս Բժիշկ..... | 195 |
| Թեկղա (Թեկղի) Կոյս..... | 170 |
| Թէոդոտէ Կոյս..... | 179 |

| | |
|--|-----|
| Թէոդիտոն (Թէոդորիտոս) Քաջանայ..... | 99 |
| Թէոդիտոն Գաղատացի Վկայ..... | 197 |
| Թէոդոս Կայսր..... | 143 |
| Թէոդորոս Զօրական..... | 156 |
| Թէոդորոս Ստրատելատ..... | 158 |
| Թէոպիստէ Կոյս..... | 175 |
| Թէոպիստոս..... | 151 |
| Թէոպոմպոս Եպս..... | 59 |
| Թէոփնաս..... | 203 |
| Թէոփիլոս Սարկաւագ..... | 103 |
| Իգնատիոս Հայրապետ Անտիոքի..... | 46 |
| Ինդոս..... | 207 |
| Իրաւափառ..... | 203 |
| Խարեթեանք (Արեթեանք)..... | 213 |
| Կալինիկէ Կոյս..... | 185 |
| Կալինիկոս..... | 202 |
| Կալիստրատոս Զօրական եւ 49 ընկերները..... | 156 |
| Կանտիտոս..... | 196 |
| Կատարինէ (Նեկատարինէ) Կոյս..... | 183 |
| Կիպրիանոս Եպս. Անտիոքի..... | 61 |
| Կիրակոս Մանուկ..... | 196 |
| Կիւրեղ Աղեքսանդրացի..... | 91 |
| Կիւրեղ Երուսաղէմացի..... | 80 |
| Կիւրեղ Սարկաւագ..... | 104 |
| Կղեմէս Հռոմի Հայրապետ..... | 44 |
| Կղօզիա Կոյս..... | 172 |
| Կողբատիոս Վկայ..... | 193 |
| Կողմաս Անարծաթ Բժիշկ..... | 201 |
| Կոստանդիանոս Կայսր..... | 139 |

| | |
|--|-----|
| Հեղինէ Թագուհի (Կոստանդնուպոլսու)..... | 140 |
| Հիպիոթիքեանք | 201 |
| Հիւսիքոս Զինուոր | 165 |
| Ղամպէոս..... | 208 |
| Ղամպէուհի..... | 179 |
| Ղուկիանոս Քհնյ. Անտիոքի..... | 95 |
| Մակար Անապատականներ..... | 123 |
| Մակարիոս Քաջանայ..... | 100 |
| Մակարիոս Զինաւոր | 158 |
| Մամաս..... | 194 |
| Մարգարիոս..... | 199 |
| Մարիանէ Կոյս..... | 176 |
| Մարկիանոս Վկայ..... | 208 |
| Մարկոս Աբբայ..... | 133 |
| Մարկոս Եպս. Արիթուսայ..... | 71 |
| Մարուգէ Ճգնաւոր..... | 137 |
| Մարութա Եպիսկոպոս..... | 90 |
| Մարտիրոն Վկայ..... | 208 |
| Մելիտոս Հայրապետ Անտիոքի..... | 81 |
| Մելիտոս (Մելէս) Եպս..... | 71 |
| Մետրոփանէս Հայրապետ Կ. Պոլսոյ..... | 65 |
| Մերկիւրիոս Զօրավար..... | 154 |
| Մինաս..... | 148 |
| Մինաս Եպիսկոպոս | 159 |
| Միւռոն Եպս. Կրետէի..... | 53 |
| Մովկիմոս Քաջանայ..... | 98 |
| Յակիմոս Վկայ..... | 191 |
| Յակոբ Մծբնայ Հայրապետ..... | 69 |
| Յակովիկ Վկայ..... | 210 |

| | |
|-------------------------------------|-----|
| Յովհաննէս Գրեցի..... | 125 |
| Յովհաննէս Կամաւոր Աղքատ..... | 205 |
| Յովհաննէս Կարճահասակ | 126 |
| Յովհաննէս Հայրապետ Երուսաղէմի | 89 |
| Յովհաննէս Ոսկեբերան Հայրապետ..... | 86 |
| Յովսէփ Քաջանայ..... | 98 |
| Յուդա Կիւրեղ | 69 |
| Յուլիանէ (Յուլիանա) Կոյս..... | 185 |
| Յուդիտա Կոյս..... | 180 |
| Յուստիանէ Կոյս..... | 177 |
| Նեղոս Աբբա..... | 128 |
| Նիկողայոս Հայրապետ Միւռայ..... | 65 |
| Նունէ Կոյս..... | 186 |
| Շէն (Շինու) Սարկաւագ..... | 104 |
| Ոնոփրիոս Ճգնաւոր..... | 122 |
| Ովրեստէս..... | 199 |
| Որմզդան կամ Որմիզդ | 209 |
| Պանտալէոն Բժիշկ..... | 199 |
| Պարսամ Եպս. Եդեսիոյ..... | 60 |
| Պեղազիա Կոյս | 178 |
| Պետրոս Հայրապետ Աղեքսանդրիոյ..... | 64 |
| Պիմէն Անապատական..... | 132 |
| Պիոն Քաջանայ..... | 102 |
| Պիստիս Կոյս..... | 174 |
| Պլատոն Վկայ..... | 197 |
| Պողիկարպոս Զմիւռնիոյ Հայրապետ..... | 50 |
| Պողիկտոս | 146 |
| Պրոբոս Վկայ | 198 |

| | |
|---------------------------------|-----|
| Պրոստոս Վկայ | 191 |
| Պօղ Անապատական | 122 |
| Պօղոս Թերապիզցի..... | 121 |
| Պօղոս Հայրապետ Կ. Պոլսոյ..... | 68 |
| Ռամելաս..... | 158 |
| Ռամելաս Հազարապետ..... | 145 |
| Ռեթէոս Աթենացի..... | 40 |
| Ռոմանոս Երզնցոյ..... | 105 |
| Ռոմանոս Մենակեաց (Բարուլա)..... | 198 |
| Սամոնաս Քազանայ..... | 96 |
| Սային | 209 |
| Սարգիս Վկայ..... | 148 |
| Սեղբեստրոս Հայրապետ..... | 67 |
| Սերգիոս (Փիլիպպոս Եպարք)..... | 145 |
| Սեւերիանոս Սեբաստացի..... | 164 |
| Սիմէոն Սիւնակեաց..... | 134 |
| Սիսիանոս Ճգնաւոր..... | 130 |
| Սոփիա Կոյս..... | 174 |
| Ստեփանոս Հռովմայ Հայրապետ..... | 55 |
| Սրապիոն Անապատական..... | 131 |
| Վաղերիոս..... | 196 |
| Վառվառէ Կոյս..... | 177 |
| Վասիլուհի Կոյս..... | 183 |
| Վարոս Զօրական..... | 154 |
| Վլաս Եպիսկոպոս..... | 63 |
| Տարազոս..... | 198 |
| Տրիփոն..... | 192 |
| Փեբրոնիա Կոյս..... | 182 |

| | |
|-----------------------------|-----|
| Փիլիկտիմոն | 195 |
| Փիլիպպոս Եպարքոս..... | 145 |
| Փոկաս Հայրապետ..... | 52 |
| Փոտինոս..... | 150 |
| Քառասուն Մանկունք..... | 160 |
| Քառասունհինգ Մանուկներ..... | 162 |
| Քրիստափոր Վկայ..... | 166 |
| Քրիստինէ Կոյս..... | 175 |
| Օգսենտիոս..... | 199 |

ԱՅՐՈՒԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ
ՄԵԾԱՆՈՒՆ ՍՈՒՐԲԵՐՈՒ, ՈՐՈՆՔ ՉԵՆ ԱՆՑԱԾ ՄԵՐ
ՏՕՆԱՑՈՅՑԻՆ

| | |
|--|-----|
| Աթանաս Աթոնացի կամ Աթոսեցի..... | 257 |
| Ալբանոս Բրիտանացի..... | 233 |
| Ամբրոսիոս Միլանի Եպս..... | 234 |
| Անտոն Բատուլայի..... | 276 |
| Բենեդիկտոս..... | 247 |
| Բեռնարդոս..... | 262 |
| Գրիգոր Մեծն Պապ..... | 251 |
| Դոմինիկոս..... | 266 |
| Թերեզյաներ..... | 289 |
| Ժան Տ'Արք..... | 280 |
| Իգնատիոս Լոյոլա..... | 285 |
| Կիլլորիանոս Ափրիկեցի..... | 231 |
| Կիւրեղ եւ Մեթոտիոս Առաքեալք Սլաւներու..... | 256 |
| Յերոնիմոս..... | 238 |
| Յովհաննէս Դամասկացի..... | 254 |
| Յուստինոս Մարտիրոս..... | 226 |
| Պատրիկ..... | 244 |
| Պերպետուա..... | 228 |
| Սաբա..... | 246 |
| Սատու Սանտար Սինկէ..... | 298 |
| Վլատիմիր..... | 259 |
| Փիլիկիտատէ..... | 228 |
| Օգոստինոս..... | 240 |
| Յրանչիսկոս..... | 268 |
| Յրանսիս Կապրիւնի..... | 296 |

« Գանձասար » մատենաշար

| | |
|--------------------------|--|
| Մակեաղ՝ | Արա Ստեփանեանի |
| Շապիկը՝ | Արմէն Քիրքէեանի |
| Տիտղոսաթերթը՝ | Արեգ Ասատրեանի |
| Սրբագրիչ | Սեդա Ստամբուլցեան |
| Շարուածքը՝ | «ԳԱՆԶԱՍԱՐ» աստուածաբանական կենտրոնի համակարգչային ծառայութեան |
| | |
| Տպագրութեան պատասխանատու | Միսաք Քանուզեան |
| | |
| Տպագրիչ | Յարութիւն Սմարեան |
| Կազմարարներ | Մալաք Արամեան Սվետլանա Մարտիրոսեան |
| | |
| Ծալող վարպետ | Սամուէլ Կանուզեան |
| Կաղապարագործ | Ռուբէն Սմարեան |

«Գանձասար» աստուածաբանական կենտրոնի տպագրատուն